

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Գ Ի Տ Ա Կ Ա Ն  
Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր**

**V**  
2002

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---

Գ յ ու մ ր ի 2 0 0 2

ԴՏՀ 008+902 / 904+800  
ԳՄԴ 71+63. 4+80  
Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի և ՇՀՀ կենտրոնի համատեղ  
որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝  
Ս. Հայրապետյան  
Ս. Հարությունյան  
Ս. Պետրոսյան  
Ֆ. Տեր-Մարտիրոսով

Խմբագրությամբ՝ Ս.Հայրապետյանի

Գ - 602      Գիտական աշխատություններ. 5,  
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,  
2003, 224 էջ:

Գ  $\frac{4400000000}{703(02)-2003}$  2003  
ISBN 5-8080-0504-3

ԳՄԴ 71+ 63,4+80

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2003

*Республика Армения  
Национальная академия наук  
Центр арменоведческих исследований Ширака*

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

V

EDITION

# RESEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia*

Издательство "Гитутюн" НАН РА

"Cuitutiun" Publishers NAS RA

---

ГЮМРИ 2002 GYUMRI

*Публикуется по совместному решению Ученого совета  
Института археологии и этнографии и совета Ширакского  
Центра АИ НАН РА*

*Редакционная коллегия:*

*С. Айрапетян  
С. Арутюнян  
С. Петросян  
Ф. Тер-Мартirosов*

*Под редакцией С. Айрапетяна*

*Published by arrangement of the Scientific Council  
at the Institute of Archeology and Ethnography and the Council  
of Shirak's Research Centre NAS RA*

*Editing stuff:*

*S. Hairapetyan  
S. Harutiunyan  
S. Petrosyan  
F. Ter-Martirossov*

*Edited by S. Hairapetyan*



*Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ*

**ԵՌՅԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ԱՆՈՒՐՅԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ**

Հասարակության երեք իրավահավասար դասերից բաղկացած լինելու հնդեվրոպական ավանդույթը այնքան խոր արմատներ էր նետել հայ իրականության մեջ, որ պայմանավորել էր անգամ հայկական բնակավայրերի հասարակական կառույցի եռակենտրոն համակարգը: Ծառ տեղերում այն իր ուրվագիծը պահպանել էր անգամ 20-րդ դարի սկիզբը: Հայկական շատ գյուղերի ավանդական կենտրոնում՝ գյուղամիջին, որպես կանոն, գտնվում էր աղբյուրը կամ ամենահարգի ծառը (հաճախ երկուսը միասին): Ինչպես աղբյուրը, այնպես էլ ծառը նախաքրիստոնեական դարերում համարվում էին խորհրդանիշ-առարկայացումները Մայր դիցուհու (կամ նրա հետնորդ աստվածության), որը պտղաբերությունն ու բերրիությունն անճնավորելով՝ հանդես էր գալիս որպես բարիքներ արտադրող դասի հովանավոր աստվածություն: Ըստ այդմ, դրանց մոտ էին տեղի ունենում բնության բարիքների և արհեստագործական արտադրանքի փոխանակում-վաճառքի գործընթացները: Գյուղամիջին էին գտնվում նաև գյուղապետի նստավայրը՝ գյուղի վարչական կենտրոնը, և եկեղեցին՝ հոգևոր կենտրոնը: Մեր դյուցազնավեպի առանձին պատումների համաձայն՝ Ծովհնարի երկվորյակ որդիները հիմնադրել էին նախ Սասուն բնակավայրը՝ բարիքներ արտադրողների կենտրոնը, ապա Սասնա բերդը՝ զինվորական դասի կենտրոնը, ի վերջո՝ եկեղեցին կամ վանքը՝ հոգևոր դասի կենտրոնը:

Ըստ ամենայնի, այս դեպքում մենք գործ ունենք եռյակ բնակավայրերի (իրենց տնտեսական, հոգևոր ու ռազմական բնույթներով) համակարգի հետ: Նույնը կարելի է ասել նաև Արարատյան դաշտի (ուրարտական արձանագրությունների «Aza երկրի») երեք տարաբնույթ կենտրոնների՝ Էրեբունիի, Արգիշտիխիսիի և Թեյշեբախի մասին: Այս բնակավայրերի նախորդները ևս ունենալու էին ռազմական, պաշտամունքային և տնտեսական ընդգծված ֆունկցիաներ: Էրեբունի-Երևանը իրագործելու էր առավելապես ռազմական, Արգիշտիխիսի-Արմավիրը՝ պաշտամունքային, իսկ Թեյշեբախին (Կուառլինի դաշտով)՝ տնտեսական ֆունկցիաներ: Ուրեմն, Էրեբունին կենտրոնատեղի է եղել «Aza երկրի զինվորական դասի, Արգիշտիխիսիի՝ քրմական դասի, իսկ Թեյշեբախին՝ բարիքներ արտադրողների դասի համար:»<sup>1</sup> Բնակավայրերի եռյակ համակարգի ականատեսներն ենք նաև հետագա Արշարունիքում: Այստեղ Երվանդ Վերջին (մ.թ.ա. 3-րդ դարի վերջեր) թագավորին է վերագրվել Արաքսի և Ախուրյանի գետախառնի շրջանի երեք բնակավայրերի կառուցումը: Դրանք էին թագավորանիստ Երվանդաշատը՝ զինվորական դասի կենտրոնատեղին, քրմապետի նստոց Բագարանը՝ քրմական դասի կենտրոնատեղին, և արքայական դաստակերտ Երվանդակերտը՝ արտադրողների դասի կենտրոնատեղին: Առաջին երկուսի բնույթի վերաբերյալ ուղղակի վկայություններ կան պահպանված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, իսկ երրորդի բնույթը կռահվում է պատմահոր արած շքեղ նկարագրությունից: Ահա դրանք.

Արմավիր մայրաքաղաքում ջրի պակասություն է զգացվում. «Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա եւ ամրագունի ևս տեղոյ ելեալ ի խնդիր՝ փոխտ գարքունիսն յարեւմուտս կոյս, ի քարեկտուր մի բլուր, գորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն

<sup>1</sup> Ս. Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն, *Երեք դասերը և եռյակ բնակավայրերը հին Հայաստանում*, «ՀՀ քաղաքաշինության նախարարության հայ ճարտարապետության ազգային թանգարան, Տարեգիրք 1994», Եր., 1995, էջ 14-16, *Նույնի, Երեք դասերը և Ազա երկրի քաղաքների եռյակը, Գյուղում պետական մանկավարժական ինստիտուտի հանրապետական գիտական նստաշրջանի (29-30 հոկտեմբերի 1998թ.) զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1999, էջ 16-17:*

հոսի գետ: Պարսպ է զբլուրն, եւ... զմիջմաքերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, եւ դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, եւ ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցրտունն. եւ ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մեջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեցի՝ եթէ որ գաղտ ելանելով դատել կամիցի զարքայն»:<sup>2</sup>

«Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմարայ, ուրոյն ի կոռցն... այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, եւ անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. եւ փոխեաց անդր զամենայն զկուտսն որ յԱրմարի: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»:<sup>3</sup>

«Քաղցր է ինձ ասել եւ յաղագս զեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ զեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբագնութիւն այգեստանոյ՝ իբր զարտեանանց խիտ եւ զեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածեալ՝ արդարեւ զեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան զեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակել շրթունս: Եւ այսպիսի զեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն զոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն»:<sup>4</sup>

«Տնկել եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, եւ որմովք ամրացուցանէ, արզելով ի ներքս այծեմունս երագունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարագս. որք ի բագնութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն Վննդոց»:<sup>5</sup>

Բերված առաջին երկու վկայություններից ուղղակի բխում է, որ Երվանդաշատ քաղաքը կառուցվել է որպէս զինվորների դասապետ արքայի նստոց, իսկ Բագարանը՝ որպէս քրմապետի՝ քրմերի դասապետի, նստոց: Վերջին երկու վկայություններից կարելի է կռահել, որ Երվանդակերտ դաստակերտը և Վննդոց անտառը ձևավորված են եղել Մայր դիցուհուն: Իսկ նա հովանավորն էր արտադրողների (հողագործների և անասնապահների) դասի, ուրեմն նաև՝ նրանց դասապետ արքունի տնտեսի (հետագա հագարապետի նախորդի):

Երվանդակերտի Մայր դիցուհուն ձևավորված բնակավայր լինելու մասին է խոսում նրա մյուս անունը՝ *Մարմէտ*-ը: Որ Երվանդակերտը (ոչ թե Երվանդաշատը) նաև *Մարմէտ* է կոչվել, բխում է Մովսես Խորենացու վկայությունների համադրումից: Երվանդակերտի կառուցման նկարագրությունը պատմահայրը, ինչպէս տեսանք, սկսում էր հետևյալ նախադասությամբ. «Քաղցր է ինձ ասել եւ յաղագս զեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ զեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք»: Հաջորդ շարադրանքում նա Երվանդակերտը ուղղակի «Երվանդի դաստակերտ» է կոչում, երբ Երվանդաշատը կոչում է «Երվանդի քաղաք»: Ըստ Խորենացու՝ Երվանդին պարտության մատնած Արտաշեսը «ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ (այսինքն՝ Երվանդաշատ) յառաջ քան զմիջօրեայ հասեալ ի դաստակերտն Երուանդայ (այսինքն՝ Երվանդակերտ), եւ միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատ», որ թարգմանի Մարս եկն... Յայս ի տոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտ»:<sup>6</sup> Պատմահայրը բերում է նաև բնակավայրի վերանվանումի պատճառը. «յիշեցուցանելով զթշնամանսն, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից եւ առ Սմբատ, Մար զնա (այսինքն՝ Արտաշեսին) կոչելով»:<sup>7</sup> Անշուշտ գործ ունենք ոչ թե *մար*

<sup>2</sup> Մովսէսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, Զննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Եր., 1981, Բ, 18:

<sup>3</sup> Մ. Խ ո ռ Ե ն ա գ ի, Բ, խ:

<sup>4</sup> Նույն տեղում, Բ, խբ:

<sup>5</sup> Նույն տեղում, Բ, խա:

<sup>6</sup> Նույն տեղում, Բ, խգ:

<sup>7</sup> Մ. Խ ո ռ Ե ն ա գ ի, Բ, խ:

ցեղանունով, այլ *մայր* (հոգնակին՝ մայր) բառով կազմված բառաբարդի հետ. *Մարմէտ* (<\*Մար-մէտ: Այս տեղանվան երկրորդ բաղադրիչը նույնն է, ինչ *Արտամէտ* (<\*Արտա-մէտ) տեղանվան երկրորդ բաղադրիչը: Նրանց հիմքում \*մէտ «շեն» իմաստով չլսահպանված բառն է՝ ծագած հ.-ե. \*mei -«ամրացնել» արմատից –մ- ածակաձևով: Թրակերեն «գյուղ, շեն» նշանակող midne բառը բխեցվում է կամ հնդեվրոպական հիշյալ արմատից, կամ հ.-ե. \*meit(h) - «բնակատեղի» նախածկից:<sup>8</sup> Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում մեր բառն ազգակիցն է համարվելու թրակերեն բառի և ըստ այդմ *Մարմէտ*-նշանակելու է «մայրաշեն», «մայրավան»:

Համալիր շինությունների նման մի եռյակ էին նախապես ներկայացնելու հին Շիրակի կենտրոնում Ախուրյան - Արփաչայի և Ախուրյան – Կարսաչայի գետախառնի շրջանում գտնված Շիրակավանը, Երազգավորսը և Տիգնիսը: Սրանցից առաջին երկուսը այնքան մոտ են գտնվել միմյանց, որ հասուն միջնադարում դարձել էին մի բնակավայր՝ *Շիրակաւան* և *Երազգաւորս* կրկնակի անուններով: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին *Շիրակաւանը* նույնիսկ Երազգավորսի նոր անունն էր համարում, չնայած այն վկայված է դեռևս 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի երկում: Դրանք նախապես երկու տարբեր բնակավայրեր լինելով, անգամ IX դարի վերջին այդպիսիք են ընկալվել: Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու վկայությամբ, Սմբատ արքայորդին իր հոր՝ Աշոտ I թագավորի (885-890թթ.), մահվան լուրն առնելով, շտապում է Երազգավորսից հասնել Շիրակավան: Նա գրում է. «Իսկ զկնի այտրիկ չուէ գայ հասանէ ըստ համբաւոյն հասելոյ՝ Սմբատ որդի արքային ի սեպհական կալումս Երազգաւորից Շիրակական բազում վշտահար հեծութեամբ»:<sup>9</sup> Հին Շիրակավանի՝ արտադրողների դասի կենտրոնատեղին լինելու մասին են խոսում ինչպես նրա անվան ստուգաբանությունը,<sup>10</sup> այնպես էլ հետևյալ հանգամանքները: Այս բնակավայրը տեղադրված էր հարթավայրում: Ջրառատ էր, շրջապատված սևահողային արգավանդ դաշտերով: Այն հայաբնակ էր և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ուներ 1220 բնակիչ, որոնք զբաղվում էին հիմնականում հացահատիկի մշակությամբ և մասամբ անասնապահությամբ:<sup>11</sup> Հետագայում *Բաշ–Շորագյալ* կոչված այս բնակավայրից հյուսիս գտնվում էին Բանձրեղ սարահարթի քարանձավները: «Շորագյալցիների ասելով, այս քարայրները եղել են շատակեր Շարայի ամբարները, որը ապրել է Ղարսա - չայի և Արփա - չայի միջև ընկած բարեբեր հարթության վրա»:<sup>12</sup>

Երազգավորս բնակավայրի քրմանիստ լինելու իրողությունը հաստատվում է նախ և առաջ նրա անվան ստուգաբանությամբ: Մ.Երեմյանի կարծիքով, այս տեղանվան մեջ առկա է Երվանդունիների տոհմական անուններից մեկը՝ *Երուագը*:<sup>13</sup> Իսկ այդ անունն, ըստ Խորենացու, կրում էր Երվանդ Վերջինի երկվորյակ եղբայր՝ քրմապետ Երվազը: Երազգավորսի միջնադարյան կառույցներից ամենահայտնին Մուրբ Փրկիչ (Ամենափրկիչ) եկեղեցին էր՝ կառուցված Բագրատունի Սմբատ I (890-914թթ.) թագավորի կողմից: Հենց այստեղ էլ Գևորգ կաթողիկոսի ձեռամբ նա օծվել էր Հայոց թագավոր: Բնականաբար, եկեղեցին կառուցված էր լինելու հիշյալ տարածքի այն մասում, որն հնուց ի վեր համարվել է նրա հոգևոր – մշակութային կյանքի կենտրոնը:

*Երազգաւորս* տեղանվան առաջին բաղադրիչը իրենից ներկայացնում է *Երուագ* անվան հապավված ձևը (Երագ-<Երուագ), իսկ նրա երկրորդ բաղադրիչը՝ *-գաւոր*-ը, լինելու է *գահուր II գահաւոր* բառը՝ առաջացած միջնաձայն *հ-ի* (*հա-ի*) անկումով (տեղանվան երրորդ բաղադրիչը հոգնակիակերտ *ս-ն* է՝ *ք-ի* համարժեքը): *Գահաւոր II գահաւոր* բառն առաջինն օգտագործել է Մովսես Խորենացին: Աբեղյան տոհմի հիմնադիր Աբելին տրված պաշտոնը նա բնութագրում է «սպասարար եւ գահաւոր» բառե-

<sup>8</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն , Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 61 և ծան. 45:

<sup>9</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, Յառաջաբան պատմութեան, Եր., 1996, էջ 146:

<sup>10</sup> Մ. Պ ե տ ր ո ս յ ա ն , «Շիրակայ ամբարքի» շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, քիվ 8, էջ 75-76:

<sup>11</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն , Մո. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն , Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն , Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988, էջ 210:

<sup>12</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն , Ավանդապատում, Եր., 1969, էջ 39:

<sup>13</sup> Մ. Ե ր ե մ յ ա ն , Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 74:

րով»:<sup>14</sup> Նոր հայկազյան բառարանի հեղինակները *գահատր*-ը հասկանում են «պաշտօնեայ արքունի գահի»,<sup>15</sup> Հ. Աճառյանը բացատրում է «արքունի մի պաշտոնյա» (<պահլ.\*gahvar // gahvar «մի բարձր աստիճան»),<sup>16</sup> իսկ Ստ. Մալխասյանցը՝ «գահ ունեցող, անձանոթ մի պաշտոնի անուն»:<sup>17</sup> Մրանից «գահ ունեցող» բացատրությունը ճիշտ համարել չի կարելի, որովհետև գահ ունեին ոչ միայն Արեղյան նախարարական տոհմի նահապետները, այլև մյուս նախարարական տոհմերինը, ինչպես նաև բարձր-աստիճան հոգևորականները: Այս դեպքում խոսքն արքայական գահին առնչվող ինչ-որ սպասարկու ծառայության մասին է, ինչը ցույց է տալիս նաև նախորդ *սպասարար* բառը (նշանակում է «սպասահարկու, պաշտօնեայ, կամակատար»):<sup>18</sup>

*Երազգատրս*-ի ստուգաբանության առթիվ ի նկատի է առնվելու մնան մի իմաստի անկայությունը: Հայտնի է, որ քրմապետական տիրույթներում ապրում և աշխատում էին երկու կարգի մարդիկ՝ քրմերը և տաճարների ազատ սպասավորները մի կողմից, անազատ ծառաները՝ մյուս կողմից:<sup>19</sup> Երազգավորում բնակված «Երվազի գահավորները» չէին կարող լինել ոչ «գահ ունեցողներ», ոչ էլ անազատ ծառաներ: Նրանք կարող էին լինել միայն քրմապետի սրբազան գահի ինչ-ինչ սպասարկումներն իրականացնող պաշտոնյաներ, գուցե թե առանձին կարգավիճակ ունեցող քրմեր: Մրանք խոսում են հին Երազգավորսի՝ քրմական դասի կենտրոնատեղին լինելու մասին:

Հասուն միջնադարի Ծիրակավան - Երազգավորսն ուներ իր պաշտպանությունն ապահովող ամրությունների համալիր: Այն բաղկացած էր սեփական պարսպապատ բերդից, բնակավայրին արևելքից հարող Ախուրյանի վտակ Ղարախան գետակի ձախ ավի ամրություններից (ավերակները կան), ինչպես նաև բնակավայրից 3կմ հեռավորության վրա, Ախուրյանի աջ ափին գտնվող Տիգնիս ամրոցից: Միջնադարյան անառիկ ամրոցներից մեկը՝ Տիգնիսը, աչքի էր ընկնում պատերի արտակարգ բարձրությամբ: «Քառանկյունի պարագծով ու սրբատաշ քարերով կառուցված կրկնակի պարիսպներն անկյուններում և կենտրոնական մասում ունեն հզոր բուրգեր: Ամրոցի ներսում, ուղղանկյուն բակի շուրջը, երկու հարկ դասավորությամբ տեղավորված էին *կայազորին* (ընդգծ. Ս. Պետրոսյանի) սպասարկող շինությունները»:<sup>20</sup>

Տիգնիսի ռազմական բնույթով, այստեղ մշտական կայազորի անկայությամբ էլ պայմանավորված է նրա անվան «զինվորական» ստուգաբանությունը: Մեր կարծիքով՝ *Տիգնիս* < \**Տիգունիս* < \**տեգ-ունի-ս*: Այս դեպքում տեղանվան երրորդ բաղադրիչը հայցական հոլովի հոգնակի թվի ս ցուցիչն է՝ համարժեքը ուղղական հոլովի հոգնակի թվի ք ցուցիչի, երկրորդ բաղադրիչը – ունի վերջածանցն է (հմմտ. *տէր – ունի, արք – ունի, տիկն – ունի* < \**տիկին - ունի*), իսկ առաջին բաղադրիչը՝ *տեգ* բառն է: *Տեգ* նշանակում է «արդն, գեղարդն, միզակ, գայիսուն»<sup>21</sup>: Սա ծագումով իրանական բառ է, բայց շատ վաղուց կիրառում գտած նաև հայերենում:<sup>22</sup> Նրանից ածանցյալ *տիգատր* բառը նշանակում է «ունօղ՝ կրօղ գտեզ, որպէս եւ գտուին, միզակատր»:<sup>23</sup> Այս նույն իմաստն էր պարունակելու նաև չավանդված \**տիգունի* (հոգն.\**տիգունիք*/\**տիգունիս*) բառը, որով և նշվելու էին Տիգնիսի ամրոցին իրենց անվանումը տված (Տիգնիս < \**Տիգունիս*) տեղական կայազորի մարտիկները:<sup>24</sup> Տիգնիսի ռազմական բնույթը և անվան ստուգաբանությունը խոսում են նրա՝ զինվորական դասի կենտրոնատեղին լինելու մասին:

<sup>14</sup> Մ. Խոսրոսյան, Բ, Է:  
<sup>15</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ., Ա, Եր., 1979, էջ 523:  
<sup>16</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 502:  
<sup>17</sup> Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Եր., 1944, էջ 406:  
<sup>18</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Եր., 1981, էջ 737:  
<sup>19</sup> Մ. Կրկյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 141, 179:  
<sup>20</sup> Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ Գ-Ա հրատ., հ. III, Եր., 1976, էջ 378:  
<sup>21</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 871:  
<sup>22</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. IV, Եր., 1979, էջ 400:  
<sup>23</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 873:  
<sup>24</sup> Մ. Պետրոսյան, Գ. Պետրոսյան, Տիգնիս ամրոցի դերը համալիր շինությունների եռյակում, ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնարկում, Գյումրի, 2000, էջ 30-32:

Ախուրյանի ավազանում բնակավայրերի երրորդ եռյակը, մեր կարծիքով, կազմել են Անին, Մաղազբերդը և Երեբունյքը: Երվանդունյաց դարաշրջանում իր գոյությունը պահպանած այս եռյակի նախորդը, ըստ երևույթին, ձևավորվել էր ավելի վաղ ժամանակներում՝ լինելով կրողը եռադասության հնդեվրոպական ավանդույթի: Անիի հին բնակավայր լինելու հանգամանքը կասկած չի հարուցում: Ն. Մառի կարծիքով այստեղ հայտնաբերված երկաթե կապերի հետքերով բազալտե զանգվածեղ և խորանարդաձև որմնաքարերը սերտ աղերս են բացահայտում տեղի և ուրարտական շինարվեստի միջև:<sup>25</sup> Ի նկատի առնելով այդպիսի քարերի առկայությունը Երվանդունյաց դարաշրջանի շինությունների որմնաշարվածքում՝ Հ. Մանանդյանը դրանք համարում է նույն այդ դարաշրջանում Անիում ծավալված շինարարական աշխատանքների վկաներ: Անիում ժամանակին գոյություն ունեցած շինություններին համաժամանակյա այլ շինությունները, ինչպես նա է գրում. «կարող են նոր լույս սփռել նաև Անիի Կամսարական կոչվող պարսպի հնագույն որմնաքար վրա: Այս վերջինը ևս, ինչպես և Արմավիրի վերահիշյալ պարսպներն ու աշտարակը, վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին, այսինքն՝ 3-րդ դարին կամ 2-րդ դարի սկզբներին մեր թվարկությունից առաջ... Բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից նույն այս հնագույն ժամանակաշրջանի ամրացված կենտրոնավայրեր են եղել նաև Գառնին և Անին»:<sup>26</sup> Անիի հին շինություններին համաժամանակյա հիշյալ բնակավայրերի հին շինությունների թվագրման վերաբերյալ ժամանակին իշխած այն թյուր կարծիքը, թե դրանք վերաբերում են Արշակունյաց դարաշրջանին, Հ. Մանանդյանը մերժում է՝ դա բացատրելով նրանով, որ այդ կարծիքն առաջադրած ուսումնասիրողները գտնվել են «ավանդական հայ պատմության ազդեցության տակ և համարելով Երվանդաշատի հիմնադիր Երվանդ Վերջինին Արշակունյաց ցեղից՝ թյուրիմացաբար կարծել են, որ Երվանդյան շրջանի հայկական հնությունները վերաբերում են մեր թվարկության առաջին դարին, այսինքն՝ Արշակունյաց ժամանակաշրջանին»:<sup>27</sup>

Արմավիրում, Անիում և Գառնիում շինարարություն ծավալած Երվանդունի թագավորը Երվանդ Վերջինը չի եղել, որովհետև Մովսես Խորենացին սրան վերագրում է միայն Երվանդաշատի, Բազարանի և Երվանդակերտի կառուցումը: Ուրեմն, այն կարող էր լինել նրա նախորդ Երվանդը՝ Հայաստանի նախկին սատրապը և մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո նրա անկախությունը վերականգնողը: Նա (և ոչ թե Երվանդ Վերջինը) պետք է լիներ իր անունը կրած Երվանդավանը կառուցապատողը: Մովսես Խորենացու հաղորդումներից պարզվում է, որ Երվանդավանը գտնվել է Ախուրյան գետի ափին, Մարաց մարզ հովտում:<sup>28</sup> Սատրապ-թագավոր Երվանդի կառուցապատումների առարկա դարձած երեք բնակավայրերից՝ Արմավիր, Գառնի, Անի, միայն վերջինիս է այն համապատասխանում: Մեր այս կարծիքը հիմնավորում ենք նրանով, որ Խորենացին, Ախուրյանի ափին՝ Երվանդաշատից հյուսիս, տեղադրելով թե՛ Բազարանը, թե՛ Երվանդավանը, սրանցից առաջինի համար նշում է Երվանդաշատից ունեցած 40 ասպարեզ հեռավորություն, իսկ երկրորդի համար՝ 300 ասպարեզ հեռավորություն:<sup>29</sup> Այսինքն՝ Երվանդավանը 7,5 անգամ ավելի հեռու է գտնվել Երվանդաշատից, քան Բազարանը: Իսկ այս հեռավորությունը համապատասխանում է Ախուրյանի արևմտյան ափին գտնվող Անիի Երվանդաշատից ունեցած հեռավորությանը: Ուրեմն, Անին նույն Երվանդավանն է: «Ի վերայ գետոյն Ախուրեան» գտնված Երվանդ Վերջինի բանակատեղին գրավելով, հաղթանակ տարած Արտաշեսը, ըստ Խորենացու, «անուանեաց զհովիտն... Մարաց մարզ, եւ գտեղի ճակատուն՝ Երուանդավան, որ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»:<sup>30</sup> XIII դարի մեզ հայտնի երեք արձանագարություններից մեկում է, որ հովտի անունը բերված է *Մարաց մարզ*

<sup>25</sup> H. M a p p, Ану, А., 1934, сmp. 15,49.

<sup>26</sup> Հ. Մ ա ն մ ու ղ յ ա ն, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33-34:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>28</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, խզ:

<sup>29</sup> Նույնը:

<sup>30</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, խզ:

ձևով, մյուս երկուսում՝ *Մարանց մարգ* ձևով է: Ինչպես Գ.Սարգսյանն է գրում, սա «արդեն միանգամայն այլ ստուգաբանություն է պահանջում. այն է՝ «մայրերի մարգ» և ցույց է տալիս, որ մարերի հետ այս տեղանունը հազիվ թե կապ ունենա»<sup>31</sup>: Ըստ երևույթին, Երվանդավան // Անիի մերձակայքում գտնված Մարա(ն)ց մարգը Մայր դիցուհու պաշտամունքային արգելանցին է եղել՝ նման Երզնկայի դաշտի Անահիտ դիցուհու պաշտամունքային արգելանցին և Մարմետ-Երվանդակերտի մոտ գտնված Ծննդոց անտառին: Մրանցից առաջինի նկարագրությունից, որն անում է Պլուտարքոսը, պարզվում է, որ այնտեղ ազատության մեջ շրջել են Արտեմիս // Անահիտին ձուցված սրբազան կովերը (երինջները),<sup>32</sup> իսկ երկրորդում, ըստ Մովսես Խորենացու, կային «այծենմունս երազունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն»:<sup>33</sup>

Այս տեսանկյունից ուշագրավ են նաև հետևյալ իրողությունները: Անիում ևս գոյություն է ունեցել Անահիտ դիցուհուն ձուցված հեթանոսական տաճար, որն ավանդության համաձայն կործանել էր Գրիգոր Լուսավորիչը և տեղը քրիստոնեական եկեղեցի կառուցել:<sup>34</sup> Ընդ որում, ոչ միայն Անահիտի տաճար ունենալու հանգամանքով, այլև իր անվամբ ևս Անին բացահայտում է Մայր դիցուհու պաշտամունքի հետ իր ունեցած սերտ կապը: *Անի* տեղանվան հիմքում հ.-ե. \* an-// \* Han- արմատն է առկա նաև հայերեն *հան*, *հանի*, *հանիկ* «տատ, մեծ մայր» բառերում:<sup>35</sup> Այս առթիվ հիշենք, որ Դարանաղի գավառի Անի բնակավայրի անունը մեր պատմահայրը հիշում է նաև *Հանի* տարբերակով<sup>36</sup>: Այս ամենին կարելի է ավելացնել նաև Անիի արվարձաններից մեկի *Իզաձոր* անունը՝ \*էզ-ա-ձոր պարզ ստուգաբանությամբ<sup>37</sup> (հմմտ. *իզական*, *իզաբար*): Ուրեմն, կասկած չի կարող, որ Անի // Երվանդավանը եղել է Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոններից մեկը, իսկ որպես այդպիսին, Մարա (ն) ց մարգ հովտի հետ միասին, նա համարվելու էր նաև Մայր դիցուհու հովանավորյալ բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի:

Ինչպես *Անի*-ն, այնպես էլ *Մարմետ*-ը լինելու էին Մայր դիցուհու պաշտամունքի այդ վայրերի ավելի հին անունները, քան *Երուանդաս*-ն ու *Երուանդակերտ*-ը: Բնակավայրերի այս նոր պաշտոնական անունները մոռացության էին մատնվել Արտաշեսյան դարաշրջանում: Երվանդակերտի պաշտոնական անվան մոռացության պատճառը բացահայտված է Մովսես Խորենացու հետևյալ տողերում. «անուանեցաւ դաստակերտն Մարմետ, իբր ի կամաց Արտաշեսի՝ բառնալ զանուն Երուանդայ ի տեղոջէն»:<sup>38</sup> Այդ ճակատագրին էր արժանացել նաև Անիի պաշտոնական անվանումը՝ *Երուանդաս*-ը: Այդ ճակատագրից կարողացել էր խուսափել միայն Երվանդ Վերջինի մայրաքաղաքի *Երուանդաշատ* անունը:

Բնակավայրերի Անի-Մաղազբերդ-Երերույք եռյակի երկրորդ անդամը Մաղազբերդն էր: Մաղազբերդի միջնադարյան ամրոցը գտնվում է Անիի ավերակներից մոտ 5կմ հարավ, Ախուրյանի արևմտյան ափին, անդրդալտոր կիրճի եզրի ժայռին, որը երեք կողմից շրջապատված է Ախուրյանի ջրերով: «Բնականից անառիկ լինելով հանդերձ, ամբողջ պարագծով (ներառյալ կիրճի կողմից) շրջապատված է կրկնակի պարիսպներով, որոնցից արտաքինը ավելի բարձր էր, իսկ ներքինը՝ ցածր: Բրգավոր այդ նախապարսպի և կրկնապարսպի միջև գոյություն ունեւ ջրով լցվող խրամ»:<sup>39</sup> Որ միջնադարյան այս ամրոցը ունեցել է իր նախորդը, վկայում է նրա *Մաղազբերդ* անունը: Նրա

<sup>31</sup> Գ. Ս ա ռ ց ս յ ա ն, *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին*, Եր., 1966, էջ 226:

<sup>32</sup> *Plut. Lucull., XXIV (Плутарх, Избранные жизнеописания, т. II, М., 1987, стр. 134-135)*.

<sup>33</sup> *Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, խա:*

<sup>34</sup> *Լ. ե ռ, Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը*, Եր., 1963, էջ 267:

<sup>35</sup> *Լ. Պ ե տ ը ո ս յ ա ն, Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 100:*

<sup>36</sup> *Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, խք, Գ, խե:*

<sup>37</sup> *Լ. Պ ե տ ը ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 98-99:*

<sup>38</sup> *Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, խզ:*

<sup>39</sup> *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 377:*

նախատիպը *\*Մաղխազաբերդ, \*Մաղխազ-բերդ* է:<sup>40</sup> *Մաղխազ* տերմինը հայտնի է Արշակունյաց դարաշրջանից: Մովսես Խորենացին համապատասխան գործակալության հիմնադրումը վերագրում է ավանդական Վաղարշակին,<sup>41</sup> իսկ ավանդական «Վաղարշակը հավաքական անձ է, բաղկացած Արտաշես Ա-ի, Տրդատ Ա-ի և այլ հայ իշխողների առանձին գծերից», - գրում է Գ.Սարգսյանը:<sup>42</sup> «Այլ հայ իշխողներից» մեկը, եթե ոչ նրանցից ամենանշանավորը, եղել է Օրոնտես // Երվանդ սատրապը՝ Երվանդունյաց նոր թագավորության հիմնադիրը:<sup>43</sup> Պատահական չէ, որ Մովսես Խորենացին ավանդական Վաղարշակի հակառակորդներ համարում է մակեդոնացիներին՝ և միայն նրանց:<sup>44</sup> Բնակամարար, դրանք լինելու էին Ալեքսանդր Մակեդոնացու հետնորդ դիադոքոսները, որոնցից ոչ միայն Հայաստանի նորանկախ թագավորությունը, այլև հարևան Կասպադովկիան պաշտպանողը եղել է հենց այս Օրոնտես // Երվանդը:<sup>45</sup>

*Մաղխազ* տերմինը հնության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նրա հիմքում ընկած բառը կամ համարվում է ասորերենից՝ ասորեստանյան աքքադերենից, կատարված փոխառություն (<malxazu «տեր, իշխան, թագավոր»),<sup>46</sup> կամ ասորերեն (արամեերեն) բառաբարդ է՝ «հսկողություն անող, դիտող, հետևող» իմաստով: Վերջին կարծիքի հեղինակ Հ. Մելքոնյանը գրում է. «Եվ եթե դա այդպես է, ուրեմն հասկանալի կլինի, թե ինչու «թիկնապահական գործակալությունը» կոչվել է «մաղխազություն»:<sup>47</sup> Անկախ այն բանից, թե այս երկու կարծիքներից որն է համապատասխանում իրականությանը, մի բան պարզ է, երկու դեպքում էլ *մաղխազ* («թագավորական թիկնապահ գնդի հրամանատար») տերմինը նախաարշակունյան և, հավանաբար, նաև նախահելլենիստական ծագում ունի: Եթե միշտ են մեր արած դիտողություններն ու դատողությունները, ապա պետք է ընդունել, որ *մաղխազ* տերմինն իր հիմքում ունեցող *Մաղխազաբերդ* տեղանունը վկայությունն է այն կրած տարածքում հին բերդի, իսկ նրանում թագավորական թիկնապահ գնդի և նրա հրամանատարի առկայության: Ըստ երևույթին, թիկնապահ գունդը պատկանել է այն նույն Օրոնտես// Երվանդին, որը դիադոքոսների պայքարի ժամանակ անվտանգության նկատառումներով տեղափոխվել էր Այրարատ, կառուցապատել էր և մայրաքաղաք դարձրել Արմավիրը՝ զուգընթացաբար կառուցապատելով Անի // Երվանդավանը և ամրացնելով թագավորական ապաստարան Մաղխազբերդը: Այս դեպքում կասկած լինել չի կարող, որ Անի-Մաղազբերդ-Երեբունյք եռյակի երկրորդ անդամը՝ Մաղազբերդը, եղել է զինվոր-արքայի նստավայրերից և զինվորական դասի կենտրոնատեղիներից մեկը:

Բնակավայրերի այս նույն եռյակի երրորդ անդամը լինելու էր Ախուրյանի արևելյան ափին՝ Անիպենզա ավանի մոտ գտնված Երեբունյքը (Երեբունյք, Երեբունաց գիւղ): Վաղմիջնադարյան այս գյուղն հայտնի էր IV դարի բասիլիկ տաճարով, որը գտնվում է Գյումրի-Երևան երկաթուղու Անի կայարանից մոտ 2 կմ հարավ- արևմուտք: Պետք է ենթադրել, որ IV դարում Երեբունյքի տաճարի նման մեծ ու հոյակապ քրիստոնեական տաճար ունեցած հետագա գյուղը նախորդ դարերում ավելի մեծ բնակավայր էր լինելու և ունենալու էր համապատասխան հեթանոսական սրբավայր: Այս տեսանկյունից ուշադրություն են գրավում Գառնիի հոյակապ հեթանոսական տաճարը և գյուղի մոտակայքում գտնվող հինավուրց գյուղատեղիի *Երեբունք* անունը:<sup>48</sup> Դրանք նույնպիսի փոխադարձ կապի մեջ էին լինելու միմյանց հետ, ինչպիսի կապի մեջ էին լինելու *Երեբունյք* անունը և Երեբունյքի քրիստոնեական տաճարի նախորդ հեթանոսական սրբա-

<sup>40</sup> Ս.Երեմյան, «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.)» քարտեզը, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1979:

<sup>41</sup> Մ. Խոնրենցի, Բ, է:

<sup>42</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1971, էջ 674:

<sup>43</sup> Ըստ Լ. Պետրոսյանի բանավոր հաղորդման:

<sup>44</sup> Մ. Խոնրենցի, Բ, դ-է:

<sup>45</sup> *Diodori Bibl. Hist.*, XXXI, 19, 4-5 (Հ.Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Եր., 1944, էջ 96-97):

<sup>46</sup> Н. А г о н ц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 400.

<sup>47</sup> Հ. Մելքոնյան, Աղիաբենի պետությունը և Հայաստանը, Եր., 1980, էջ 137:

<sup>48</sup> Ա. Ասլյանյան, Հ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 69:

վայրը: *Երեր-ոյք* և *Երեր-ոնք* տեղանունների վերջին բաղադրիչները համարժեք են, որովհետև հոգնակի-հավաքականի իմաստ ունեն և նշում են մարդկանց ինչ-ինչ խմբեր: Սրանց *\*երեր-* հիմքը, մեր կարծիքով, բաղկացած է *\*երի-*արմատից և *-ար* վերջածանցից: Վերջինս առկա է հայերենի *արդար, կերպար, մղար* և այլ բառերում և հնդեվրոպական ծագումով վերջածանց է:<sup>49</sup> Ուրեմն, մնում է պարզել *\*երի-ար-ոյք* (>*Երեր-ոյք* հմմտ. *Կաղանկատ-ոյք*) տեղանվան առաջին բաղադրիչի ծագումն ու իմաստը:

Տեղանվան *երի-* բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *\*rē-/\*rei* - «գոչել, մոնչալ» արմատից, որի *\*rū-* տարբերակից է սերում մեր *ռոնալ* բառը. *\*rū-ո->* հայ. *\*որուն*, որից՝ *\*որունալ>\*որնալ>ռոնալ*:<sup>50</sup> Արմատի այլևայլ տարբերակներն են առկա ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հին. հնդ. *rāuti*, *ruvati* «ռոնալ, մոնչալ, աղաղակել», հուն. *ῥοῦμα* «ռոնալ, մոնչալ, ցավից կամ ուրախությունից աղաղակել», ռուս. *рвать* «հնչել», անգլ.-սաքս. *arian* «հնչյուն», *rēon* «ողբ», մրգ. *rienen* «ողբալ, զանգատվել», լատին. *ravus* «խռպոտ», *rūmor* «համբավ, հռչակ»:<sup>51</sup> Այսիմաստ արմատի քրմերի գործունեության ոլորտին առնչվող տերմինի վերածվելու տեսանկյունից հմմտ. հնդեվրոպական միևնույն արմատներից ծագած ռուսերեն *орать* «գոռալ, բղավել, աղաղակել» և լատիներեն *ōrāre* «խոսել, խնդրել, աստվածներին աղոթել», կամ լատիներեն *mugio* «բառաչել» և խեթերեն *mugai* «աղոթել», *mugayar* «աղոթք», կամ հայերեն *գոգել* «ասել»>*գոգելով* «գոչելով» և հին հնդկ. *vāghāt* «աղոթավոր, ուխտավոր, զոհարար» բառերը:<sup>52</sup> Հայերեն *ռոնալ* բառի հնդեվրոպական ազգակիցներից են նաև հրգ. *rūnen* «փախալ», գոթ.*rūna*, անգլ.-սաքս., հին իռլ. *rūn* «զաղոտիք» բառերը, որոնք ավել են քրմերի մտավոր գործունեության ոլորտին առնչվող և «ռոնական նշանագրեր» նշանակող նույնահունչ տերմինը:<sup>53</sup> Այսպիսով, բացառված չէ, որ *\*երեր <\*երի-ար* տերմինով հնագույն Շիրակի բնակիչները նշել են քրմերի ինչ-որ խավի, որոնց անունով է բնակավայրը կոչվել է *Երերոյք*: Սա լինելու էր Շիրակի տվյալ շրջանի քրմական դասի կենտրոնատեղին՝ եռյակ կազմելով բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի Անիի և զինվորական դասի կենտրոնատեղի Մաղազբերդի հետ: Ուշագրավ է այն հանգամանքը ևս, որ եթե Անին և Մաղազբերդը գտնվում էին Ախուրյանի արևմտյան ափին, ապա Երերոյքը գտնվում էր նրա *արևելյան* ափին՝ Անիից և Մաղազբերդից նույն հեռավորության վրա: Իսկ արևելյան ափ // արևելք // արևածագի վայր // աղոթքան:

Նույն *\*rē-/\*rei*- արմատից, բայց հ.-ե. *\*men* վերջածանցով է կազմված ուրարտական *Erimena* անունը, որը *Erimenahi* ձևով, որպես հայրանուն կամ տոհմանուն կրում էր Ռուսա III թագավորը (մ.թ.ա. 625-610թթ.):<sup>54</sup> «Այս անունը հնդեվրոպականում կազմում էր գերագանցապես գործողության անուններ՝ հազվադեպ, նաև գործողության առարկայի և արդյունքի նշումով. հանդիպում են նաև գործողության անձի անուններ», - գրում է Գ. Ջահուկյանը:<sup>55</sup> *Erimena* անվան տարբերակներն են ներկայացնելու միջմաղարյան հայկական *Երեմեն* և *Երեմինայ* անձնանունները, որոնք հնչյունական տեսքով մոտ լինելով հրեական ծագում ունեցող *Երեմիա* անվանը, բխեցվել են վերջինիցս:<sup>56</sup> Բայց այս դեպքում անբացատրելի է մնում «ավելորդ» *և-*ի առկայություն նախորդ անձնանուններում: Պիտի ենթադրել, որ ընդհակառակը այդ անձնանունների գոյությամբ և ազդեցությամբ է պայմանավորված հրեական անվան ստացած հայկական տեսքը. եբրայերեն *iramayā* (hu) > հուն. *Ιεζεμίας* > հայ. *Երեմիա*: *Erimena* // *Երեմեն* // *Երեմին* -այ < հ.-ե. *\*rei-men-/\*rē-men*, որն ավելի հավանական է (իսկ *Երեմին-*

<sup>49</sup> Գ. Ջահուկյան, *հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Եր., 1987, էջ 234-235, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. II, Եր., 1975, էջ 90:

<sup>50</sup> Հ. Աճառյան, *նշվ. աշխ.*, հ. III, Եր., 1977, էջ 565:

<sup>51</sup> Նույնը:

<sup>52</sup> Т. Г а м к р е л и г з е, В. И в а н о в, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, стр. 803, Հ. Աճառյան, *նշվ. աշխ.*, հ. I, Եր., 1971, էջ 570:

<sup>53</sup> Նույն տեղում, հ. III, էջ 565:

<sup>54</sup> Ըստ Հ. Կարազոյրյանի, Ռուսա III-ը զանակալել է մ.թ.ա. 620-610թթ. միջև [Յ. Կարազոյրյան, *Մեթազոյր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում)*, Եր., 1998, էջ 68]:

<sup>55</sup> Գ. Ջահուկյան, *նշվ. աշխ.*, էջ 239:

<sup>56</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. II, Եր., 1944, էջ 136:



այ հմնտ. *արք-այ, մոր-այ, յոր-այ* և այլ)։<sup>57</sup> Բացառված չէ, որ թագավոր դարձած Ռուսա III-ը եղել է քրմական վերնախավի ներկայացուցիչ կամ, մույնիսկ քրմապետի որդի։

Հիշյալ բնակավայրերի դասային եռյակներ կազմելու տեսանկյունից պակաս ուշագրավ չէ այն հանգամանքը, որ պատմական Շիրակի հին նախարարական տոհմերը և երեքն էին՝ գահերեց Կամսարականը, Դիմաքսյանը (Շիրակյա Դիմաքսեան) և Սահառունին։ Մրանք ևս ժամանակին դասային եռյակ են կազմել։<sup>58</sup> Պատմական և նախապատմական Շիրակի տարածքում դասային եռյակ կազմած բնակավայրերի գոյության հետ միասին այս հանգամանքը հնարավոր է դարձնում Շիրակի ուրարտական դարաշրջանի Eriahi անվան քննարկումը՝ մույն եռադասության տեսանկյունից։ Հայտնի, որ Eriahi կոչվել է ոչ միայն երկիրը, այլև նրա բնակչությունը,<sup>59</sup> ընդ որում, նախանական համարվում է սրանցից երկրորդի անվանումը։<sup>60</sup> Անվան հիմքում հնդեվրոպական ծագումով հայերեն *\*երի* «երեք» արմատն է։ *Երեք* բառը ածանցման մեջ է մտնում նաև *\*երի-* տեսքով. հմնտ. *երիցս, երիր, երրորդ* (<\*երիր-որդ) և այլն։<sup>61</sup> Eriahi // *Երիախես* անվան *-ahi* // *-ախես* բաղադրիչի վերաբերյալ Հ.Կարազոյազյանը գրում է, որ նրա «բառավերջի «Ե» հնչյունը եղել է կիսաձայն «Ը» կամ, թերևս, չի էլ ընթերցվել»։<sup>62</sup> Այս դեպքում Eriahi // *\*Երիախս(ը)* անվան երկրորդ բաղադրիչը մույնամուտ է Հայկական լեռնաշխարհի այնպիսի տեղանունների *-ախս* բաղադրիչների հետ, ինչպիսիք են *Արցախս-ը, Կարծախս-ը, Կամախս-ը, Քաշախս-ը* և այլն,<sup>63</sup> իսկ անունն ամբողջությամբ ստուգաբանվում է որպես «երեք դասերի (երկիր)» կամ «երեք դասերով (ցեղ)»։

Այսպիսով, Ախուրյանի ավազանի հիշյալ բնակավայրերի մասին մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները, դրանց անունների ստուգաբանությունների հետ միասին, ամբողջական պատկերացում են տալիս առ այն, որ Ախուրյանի ավազանի հնագույն բնակչությունը հնդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքից եկող ավանդույթի համաձայն էր կառուցել (կամ եղածներն այդ ավանդույթին հարմարեցրել) դասային եռյակների տեսքով հանդես եկած այնպիսի բնակավայրեր, ինչպիսիք էին միջնադարյան Շիրակական, Երազգավորս, Տիգնիս և Անի, Երեբունյք, Մաղազբերդ բնակավայրերի նախորդները։ Այդ հնագույն բնակավայրերից առաջինները հանդիսացել են բարիքներ արտադրողների դասի, երկրորդները՝ քրմական դասի, իսկ երրորդները՝ զինվորական դասի կենտրոնատեղիներ։ Եռադասության հնդեվրոպական ավանդույթի հետևությանը է Երվանդ Վերջին թագավորը մ.թ.ա. III դարի վերջին Ախուրյանի և Արաքսի գետախառնի շրջանում կառուցել բնակավայրերի մի եռյակ և՛ արտադրողների դասի կենտրոնատեղի Երվանդակերտ դաստակերտը, քրմական դասի կենտրոնատեղի «քաղաք կոռց» Բագարանը և երկրի նոր մայրաքաղաքը՝ զինվորական դասի կենտրոնատեղի Երվանդաշատը։

## СИСТЕМА ПОСЕЛЕНИЙ— ТРОИЦ В БАСЕЙНЕ РЕКИ АХУРЯН

Резюме

С. Петросян

*Трехсословность индоевропейского общества гала основу галеким предкам армян в бассейне реки Ахурян основать такие поселения—троицы, какими являлись предшественники средневековых поселений Ширакаван, Еразговорс, Тигнис и Ани, Ереруйк, Магазберг.*

<sup>57</sup> Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, էջ 88-89:

<sup>58</sup> Ս. Պ ե տ ռ ը յ ա ն, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Գյումրի, 2001, էջ 47-49:

<sup>59</sup> Н. А р у т ю н я н, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 258.

<sup>60</sup> И. М е щ а н и н о в, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, стр. 365.

<sup>61</sup> Հ. Ա ճ ա ը յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 49-50:

<sup>62</sup> Յ. Կ ա ռ ա զ ե յ ա ն, Նշվ. աշխ., էջ 240:

<sup>63</sup> Гр. К а п а н ц я н, Историко—лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 435—436.

*Из них предшественники Ширакавана и Ани были центрами сословия производителей, Еразгаворс и Ереруйк—жрецов, а Тигнис и Магазберг—воинов. Исходя из этой традиции царь Ерванд Последний (конец III в. до н.э.) в районе слияния рек Ахурян и Аракс построил три поселения: центр сословия производителей—гастакерт Ервандакерт, центр сословия жрецов — “город идолов” Багаран, новая столица Армении и центр сословия воинов—город Ервандашат. Значит и в Ервандидскую эпоху социальная структура общества древних армян обнаруживает тесное соотношение с социальным делением общества их далеких индоевропейских предков.*

## Հայկազ ՀԱԿՈՒՋԱՆՅԱՆ

### ԿԱՐԱՊԵՏ ՏՈՂՐԱՍԱՃՅԱՆ

(ՎԱՀԱՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ. 1864-1904)

Անվանի արձակագիր, հրապարակախոս, մշակութային ու քաղաքական գործիչ Կարապետ Տողրամաճյանը ծնվել է 1864թ. դեկտեմբերի 30-ին, Պոլսի մոտակայքում գտնվող Ռոդոստո քաղաքում: Մանկությունն անցել է ծննդավայրի դիմաց տարածվող Նիկիո ջրնաղ լճակի ափին. ըստ ավանդության Արիստակես Հայրապետը իր հրաշագործությունը ցույց տալու նպատակով արորով հերկեց լճի ալիքները, այդ պատճառով շրջակա հայերը «Ընտանեկան լիճ» անունը կապրեցին: Ամռան գիշերները երագող պատանին իր ընկերներով պտտվում էր լճի պտղաբեր ափերին, եթերային ջրերի մեջ նայում աստղերի հմայիչ խաղին, հիանում լուսնի դանդաղ ընթացքով և երգում իմացած քնքուշ երգերը: Չգայուն բնավորություն ուներ և նվիրված էր բոլորին, դրա համար բռնորդ սիրում էին նրան: Բանաստեղծական հոգի ուներ, զգացմունքներն էին կառավարում մարմինը: Հայրը բարեկեցիկ տնտեսություն ուներ և որդուն խորհուրդ էր տալիս սովորել: Այդ կողմերում վատ սովորություն կար ամեն տարի, նույնիսկ տարին երկու անգամ դասատու փոխելու: Գյուղի վարժարանում թերի կրթություն ստանալուց հետո, պակասը լրացնում է ինքնաշխատությամբ, ինքնուրույն սովորեց ֆրանսերեն: Շուտով փափագը կատարվում է, ընկերների օգնությամբ տեղափոխվում է Պոլիս, քաղային վարժարանում ստանձնում ուսուցչի պաշտոն: Այստեղ զինվորագրվում է ազգային-ազատագրական շարժմանը՝ դառնալով Հայ հեղափոխական դաշնակցության անդամ: Նրա նվիրվածության և անկաշառության մասին պատմում են հետևյալը. Երբ Վառնայում ման է գալիս ծակ կոշիկներով, մեկը հարցնում է.

«- Վահան, միթե՞ Դաշնակցությունը չօգնեք քեզի, քանի որ դու անոր անձնվեր և հավատարիմ զինվորն ես եղած:

-Դաշնակցության պարտականությունն է,-պատասխանում է նա,- ընկերներին վառող ու զնդակ հասցնել, ոչ թե փորեր կշտացնել, սրիկայություն է հեղափոխական ըլլալ հեղափոխության կռնակեն ապրելու համար»<sup>1</sup>:

1896թ. հուլիսի 14-ին, Բանկ Օթոմանի դեպքերից հետո, հետապնդումներից խույս տալու համար Վ.Մանվելյանը մեկնում է Բուլղարիա, ապրում և դասավանդում Վառնայում: Մակայն հայրենիքը ձգում է նրան և 1902-ին վերադառնում է Երկիր՝ «անոր հողը ու ավերակները համբուրելու, անոր արյունոտ կուրծքի վրա իր երիտասարդ տարիները զոհաբերելու»: Ծնողներին գրած նամակով հայտնում էր, թե իբր Ամերիկա է գնում, սակայն իր հին բարեկամներին ուղարկում է մի նամակ-կտակ, ուր գրում էր.

«Խաղաղ, ինքնամոխի կյանքը կը թողում և կերթամ հորձանքին մեջ նետվելու սիրով, ինքնաբերաբար հանձն առի ինքնզինքս ենթարկելու անորոշ, չարչարանքներով լեցուն կյանքի մը պայմաններում. պիտի կըրնա՞նամ մաքուր և հաղթական դուրս ելլել անկից, հաստատապես համոզված եմ, որ մեռնող և ապրող ընկերներու սուրբ և ազնիվ հիշատակը պիտի ուժովցնե գիս և գերծ պիտի պահե ամեն տեսակ սայթաքումներէ:

Բավական ապրեցա արդեն ինձի համար. կուզեմ ասկե ետքը ապրիլ Գործին համար և նույնիսկ մեռնիլ, բայց չէ թե ապարդյուն մահով, այլ օգտակար դառնալով:

Եթե երբեք չվերադառնամ, և դու քաջաբուն ունենաս ավելի երկար ապրելու և այցելես մեր գյուղն օր մը, սիրելիներուս, ծանոթներուս, մեր սարերուն ու ձորերուն, լճակին հաղորդե իմ վերջին բարևներս...»<sup>2</sup>:

Հայրենիքի ու զաղափարի նվիրյալը անցնում է Մասուն, ուր ծավալում է հեղափոխական գործունեություն, դրան զուգընթաց հավաքում և ուսումնասիրում է Մասնագրույցները, դյուցազնական պատմությունները, բանահյուսությունը: Երկու տարում կուտակել էր մի ձեռագրերի մեծ սնդուկ, որը դժբախտաբար հետո ընկնում է թուրքերի ձեռքը:

<sup>1</sup> Կ. Տողրամաճյան, Նշխարներ, Ֆիլիպե, 1907, էջ 14:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 1,5:

1904 թվի Սասունի կռվի հերոսական օրերն էին: Ապրիլի 14-ին, կռվի թեժ պահին, հակառակ ընկերների հորդորներին, Մանվելյանը ճանփա է ընկնում՝ Անդրանիկի մոտ գնալու: Չորերի հովտում՝ Եղկարդա կամրջից քիչ հեռու, նկատվում է թշնամու կողմից և երկու ընկերների հետ միասին, անհավասար գոտեմարտում սպանվում: Ազգային գաղափարի փշուռ և արյունալից ճանապարհին նա կատարեց իր ուխտը՝ մնալով մեր ողբերգորեն հերոսական պատմության համակրելի նվիրյալը և հայ գրականության ինքնատիպ դեմքերից մեկը:

Մամուլում Կ. Տողրամաճյանը հանդես է եկել Վահան Մանվելյան կեղծանունով:

1890-ական թվականների կեսերից Կ. Տողրամաճյանը տպագրում է պատմվածքներ, բանաստեղծություններ, պատկերներ՝ նվիրված գավառի կյանքին ու խնդիրներին, 1898թ. Վառնայում լույս է ընծայել «Կաղանդներ» գրքույկը, «Շավիղ» պարբերականում տպագրել «Լեռջալուսին» նորավեպը, 1907թ. Ֆիլիպետում իր երախտագետ սաների միջոցներով հրատարակվում է «Նշխարներ» ժողովածուն:

Արևմտահայ գյուղը, որքան էլ ծանր էին տնտեսական ու քաղաքական պայմանները, այնուամենայնիվ, ուներ իր գյուղական անդորր կյանքը, ուրախություններն ու հոգսերը, իր ողբերգությունը, սերն ու ծիծաղը: Սա մի յուրատիպ աշխարհ է, ծանր ու հոգսաշատ, հովվերգական ու դրամատիկ, սիրելի ու անփոխարինելի: Կյանքն այնտեղ շարունակվում էր հանդարտ, առանց խոր ցնցումների, հաճախ ծուլորեն, որ կողքից նայողին թվում է անշարժ: Որոշ գրողների ձգում էր գյուղական բնանկարի գեղարվեստական վերարտադրությունը, մյուսները դրա տակ այլաբանորեն մատնանշում էին երկրի իշխանություններին, դրանց վարած հակաժողովրդական ու հատկապես հակահայկական քաղաքականությունը, երրորդները տարված էին գյուղի հովվերգական պատկերման գաղափարներով, որի մեջ հաճախ առկայծում էր սոցիալական անհավասարության միտքը և դրա բերած ողբերգությունը:

Վերջին տեսակի մի գեղեցիկ պատմվածք է Կ. Տողրամաճյանի «Հովվերգություն» ստեղծագործությունը, որ ավելի շատ հիշեցնում է գեղարվեստական-հոգեբանական էությունը. տպավորության անմիջականություն, զննումի հոգեբանական հավաստիություն, հանդարտ, բայց հուզական, մինչև հոգու խորքերը թափանցող պատում, լիրիկական տրամադրություն, որ հաղորդվում է ընթերցողին ու երկար ժամանակ չի լքում:

Հազիվ քսաներկու-քսաներեք տարեկան է գյուղի հոտաղ Մարտիկ այսպարը՝ ջլապինդ, լայն հզոր ուսերով, խիտ մազերով, արևահար դեմքով երիտասարդ, որին գյուղը վստահել է ողջ հոտը: Գյուղում նրանից շուտ միայն մայրը՝ Մարթա ապլան է արթնանում, տան մանր ու մեծ գործերն անում, ապա արթնացնում որդուն: Տնտեսն շրջելով, Մարտիկը դուրս է հանում անասունները, ստացած ուտելիքների մեծ մասը թողնում սորը և հո՛ հո՛ անելով, նախիրը քշում արոտ: Գյուղից հեռու, ծովակի մոտերքի արոտավայրը Շնագայլի Անտառակ է կոչվում, իսկ նշանավոր հսկա կաղնին, որի շուքի տակ կարող են հազարավոր կովեր ու ոչխարներ մակաղել՝ Կեպե-Չնար անունով է հայտնի:

Մայիսյան մի գեղեցիկ օր, երբ շրջակա գյուղերի հովիվներն էլ այնտեղ էին, պանիրով էշների են եփում. գինին առատ էր, Մարտիկը սրինգ էր նվագում ու տխուր երգեր երգում.

*Ես այս առտու եարս տեսա փեմներեին դեմ նստած էր:  
Սըրմա մազերը գլխուն վրա՝ հովը թել թել կը տաներ,  
Աչուկները անանկ աղվոր. հուրի մեկը կըլմաներ.  
Հազարներու մեջ չը գտա ես աղվորիս նմանը:  
Թուշերն ըսեք լեցուն կարմիր, վարդը քովը բան մը չէ,  
Պրկունքները խեղք թոցնող՝ սանքի բացված կակաչ է,  
Միրտս անոր պարզև ըրի. ալ Մարտիկ իր տերը չէ:  
Հազարներու մեջ չը գտա ես աղվորիս նմանը:  
-Հասկցանք բա՞ն մը ունիս,- ըսին հովիվները...»  
Լույս երեսիդ հոգիս մատաղ, այ իմ աղվոր Չարուկս.  
Բաղեղ մ՛ըլլամ թող պըլլվիմ երկան բոլիդ, եարուկս.  
Քու կարոտեղ ալ հերիք լամ, քորցան երկու աչքունքս*

*Հագարներու մեջ չը գտա ես աղվորիս նրմանը:*

Հովիվները զարմացած նայում էին, մինչ Մարտիկը կանչում է թմայուլ հորթին, գրկում գլուխը, նայում անմեղ աչքերին ու կրկնում անվերջ.

«Ա՛յս, Չարուկս ալ ճիշտ քեզի պես աղվոր է»:

Ինքն էլ չիմացավ ինչպես սեր կապեց գյուղի հարուստներից մեկի թմայուլիկ աղջկան: Մարթա ապլան որդու տառապանքը տեսավ, գնաց ուզելու: Եկավ դատարկաձեռն ու անպատվություն ստացած: Կտորվեց Մարտիկ ախպոր սիրտը, հոտը մատնվեց անուշադրության, դժգոհությունը շատացավ, Չարուկենց թմայուլիկ հորթը ևս մորթեցին, հոտաղին ազատեցին աշխատանքից: Մարտիկը հեռացավ ուրիշ գյուղ: Ապերախտ գյուղը իր հինգ տարվա ծառայության փոխարեն մի աղջիկը իրեն շատ համարեց: Երեք տարի է արդեն, ինչ մեկի ազարակում հովվություն է անում...

«Ամեն անգամ, երբ կը մոտենա գյուղին արոտավայրի սահմանին, անմիջապես հոտի գլուխը կը դարձունե հարավ, սակայն չի կրնար բռնել զինքը, որ կարոտակից հայացք մը չը նետե հյուսիսի գառիթափին վրա փռված գեղին, և չը կրնա զսպել ներքին հառաչ մը, որ իր միաձայն երգին վերջին հանգը կը կազմե հիմակ.

-Հո՛ւ, հո՛ւ, օֆ...»<sup>3</sup>

Սոցիալական հենքի վրա հեղինակին հաջողվում է կատարել մարդկային հոգու ներքին ծալքերի զննումներ, հերոսի անհատական դրամայի միջոցով հասնել կենդանի իրականության զգացողության ճշգրիտ արտահայտմանը: Սոցիալական սանդուղքի ստորին աստիճանին կանգնած երիտասարդները սրտի թրթռով երազներ են հյուսում իրենց առաջին սիրո շուրջը, անգիտանալով, թե նա ավելի բարձր խավի տղայի է բաժին հասնելու: Նրանց անմեղ սերը բախվում է բիրտ իրականության գորշ պատին ու փշուր-փշուր լինում: Երկու ընկերով մեկ սեր ունեին, որը բաժին դարձավ անսեր մի երրորդի: (Հին օրերու հիշատակ, 1895):

«Այո, գրողները բախտավոր տառապողներն են, որովհետև ավելի լավ կը տառապին, որովհետև իրենց վիշտը հայտնելու համար պետք է ավելի արյունոտեն իրենց սիրտը, պետք է իրենց վերքը ավելի բրբրեն»:<sup>4</sup>

Ավելի հարմար բնորոշում դժվար է գտնել: Տողրամաճյանը մարդկային հասարակության մեջ տիրող սոցիալական անհավասարության երդվյալ հակառակորդ էր, երազում էր ներդաշնակ հասարակություն, ուր ազատորեն ծաղկեին լավագույն զգացմունքներն ու ցանկությունները: Այդ աններդաշնակության հետևանքը լինում է մարդու ստորացումը, նրա զգացմունքների ոտնահարումը և դրամատիկ վախճանը. «Գինին կտրած քացախը ավելի բարը կ'ըլլա,- ասում են հարուստները,- աղքատին ֆոտուլը ավելի գեշ»: Այս մտայնության հենքի վրա է կառուցված հեղինակի ինքնակենսագրական «Բողբջի աղջիկ» (Հայրենիք, 1894) վիպակը:

Այդ տարիներին շատ գրողներ կիրառում էին հայրենի բնության միթոսականացման սկզբունքը. բնության տեսարանների, երևույթների իդեալականացման մեջ փորձելով փնտրել մարդ արարածի և բնության ներքին կապը, պարզել՝ որտեղ են նրանք համաձայն և որտեղից է սկսվում խզումը նրանց միջև: Այս պահին գրողները կիրառում են հակառակ՝ ապամիթոսացման սկզբունքը: Միանգամայն իրավացի է գրականագետ Գր. Հակոբյանը, երբ այս հարցի մասին գրում է. «Միթոսականացում-ապամիթոսականացման բնագրային մասնատիպ ուղղորդվածությունը արևմտահայ նորավեպի ինքնության հաճախի դրսևորվող ընթացականությունից է»:<sup>5</sup>

Կ.Տողրամաճյանի «Ծովակին վրա» (Հայրենիք, 1984) նորավեպը միթոսականացում-ապամիթոսականացում ընթացականությունը դրսևորում է դիպաշարային հետաքրքիր հանգույցներում: Ծովակի միթոսացումը կատարվում է ոգևորության աննկարագրելի թափով, գրողական ներշնչվածությամբ. «Ծովակ մը ունինք մենք, որ ծովերու հետ չեն փոխեր:

Անհուն չէ ան, հեռու չի խառնվիր ամպերու հետ, ու ալիքները երբեք չեն զարփորհուն կատարով փշրիլ ափին մոտ՝ ավազները բրբրելով: Մեծամեծ նավեր իրենց առագաստները չեն ուռեցներ հոն, հսկա շոգեմավեր անոր կապույտը չեն ակոսեր կաթ-

<sup>3</sup> «Ծաղիկ», 1895, թիվ. 11, 12, 13:

<sup>4</sup> Կ. Տ ո ղ Ր ա մ ա ճ ե ա ն, Ն շ խ ա թ ն եր, էջ 22:

<sup>5</sup> Գ. Հ ա կ ո բ յ ա ն, Արևմտահայ նորավեպը, Եր., 1996, էջ 78:

նաթույր հետքերով, ու մեծակառույց տներու և ճոխ սալարանքներու խիտ շարքեր չեն նայիր անոր վրա:

Մեր ծովակալին սահմանները՝ դալարազվարճ դաշտերով եզերված, կրնաս չափել աչքովդ, ու նոր մանրիկ ու հեզասահ ալիքները ծաղկատի կնոջ մը շրջագգեստին ծալքերուն մնան կուգան փոթովի եզերքին մոտ: Լույս անապատ մըն է ան, որուն վրա փոքրիկ նավակ մը տերևի պես կը տատանի, և հոն ուր վտակը կուգա խառնվիլ ծովակին՝ կը նըշմարվի ձկնորսին խոնարհ խրճիթը մոխե սևցած»<sup>6</sup>: Բնության այս գողտրիկ անկյունը մոզական միջավայր է, իդեալական գոյակերպում, յուրօրինակ միթոս, ուր, սակայն, նորավեպի հերոս որք Տատիկը, որ ապաստանել էր մի որբևայրու մոտ, դաժանորեն խաբվում է նրանից, կորցնում ունեցվածքը, ամուսնանալու վերջին հույսը, կորցնում է բանականությունը, դառնում ձեռնասուն արարած, որը մի փոք հաց է վաստակում՝ ձկնորսներին օգնելով:

Թուրքական իրականության ստվերոտ կողմերը, հայաջինջ քաղաքականությունը Տողրամանյանը պատկերում է գաղթականությանը նվիրված բազում պատմվածքներում ու պատկերներում: Այստեղ անգիջում է նրա պահվածքը, զգայացումն են պատկերները, նկարագրությունները իրականության իսկական պատճենահանումներ ասես լինեն: Նյութի խորը իմացությունը, հայրենիքի թշվառության ակնառես լինելը օգնում են գրողին՝ երևութները պատկերել առանց ավելորդ գունագարդումների, որն էլ այնպես խոր ազդեցություն է թողնում ընթերցողի վրա:

Դանուբի հեռավոր մի անկյուն է նետված Լուսիկ խաթունը, որ ընդամենը քառասուն տարեկան է, բայց նայողը կկարծի ութսունին մոտ: Ինչեր չեն անցել այս դրժբախտի գլխով: Հիմա՝ ամեն առավոտ, մտնում է եկեղեցի, ծնրադրում ու աչքերը սրբապատկերներին հառած՝ հիշում իր երջանիկ օրերը հայրենիքում. հարսնության բերկրանքը, զավակների ծնունդը, ամուսնու պանդխտությունը և մահը: Ջարդի օրերին կորցրեց բոլորին. գյուղը մոխրի վերածեցին, որդիներին ու հարսներին սրի քաշեցին, բռնաբարեցին իր աչքի առաջ, չիմացավ՝ ինչպես ողջ մնաց, ինչպես հասավ այստեղ: Ու այս քայքայված մարմինը ոչ մի բան դեռ չի կորցրել. մի հեռավոր հույս, թե տուն կգնա ու կտեսնի զոնե թոռնիկին:

Դժբախտի լացը, սակայն, դուր չի գալիս մեծահարուստ տիկիններին: Ժամկոչը, նրանց նետած գրոշները գաղթականի ափի մեջ դնելով, նրան դուրս է հանում եկեղեցուց, որ Ջատիկի ուրախ օրը տիկնանց տրամադրությունը չփչացնի (Արցունքը, «Շարժում» 1898):

«Լուսնկա գիշերով» («Շարժում», 1898) վիպակը գաղթականության, ժողովրդի գլխին պայթած աղետի, դրա ահավոր հետևանքների իրական պատկերներն է ներկայացնում: Ավարտուն անհատականություն է հերոսուհին՝ Աստղիկը, շքեղ մի կին, որի հայացքից տոչորվել են ջահելները: Նա գտել է իր սերը, փարվել նրան հավատով ու հույսով, իր ու Տիրանի, երկու զավակների մեջ կենտրոնացրել կյանքի իմաստը: Բայց կարճ եղան այդ երջանիկ վայրկյանները, փութով ցնդեցին երազի մնան:

96-ի առաջին հարձակումը իրենց գյուղի վրա ու իրենց տան վրա եղավ: Տիրանը հրացանը ձեռքին՝ խնդրում էր կնոջը, որ հեռանա, փրկի երեխաներին: Չիմացավ՝ ինչպես բազում գաղթականների հետ լեռները ելան, ինչպես էր տան շեմին գնդակահար ընկել Տիրանը: Հաջորդ օրը նրանք նայում էին այրված գյուղին, ուր տակավին շարունակվում էր նախճիրը. «Ամբոխը, դարավերջիկ հրեշներու, վագրերու բորենիներու խառնուղ այդ ազգը, գինովցած գյավուրների արյունովը, խենթացած անոնց տապկվող միսերուն հոտովը, դիվական պար մը սարքած էր կրակին շուրջը, ու անոնց սանդարամետական քրքիջին մեջ կը խեղդվեին, կը հատնեին ողջ - ողջ եփվող զոհերու սրտապատառ աղաղակները, ու ածխացող ոգևարներու խրխռոցները »<sup>7</sup>:

Հարձակումը մասսայական էր, գաղթականների շվարած բազմությունը չգիտեր անելիքը. դիմել կառավարության պաշտպանությանը... բայց ինչ կարիք կար «օձեն խայթվելով՝ կարիճին ապաստանիլ»: Մնում էր երկրից հեռանալը. բայց ինչպե՞ս հեռանալ հայրենիքից, ուր դարերով ապրել ու աճել է մեր ժողովուրդը, ուր ամեն մի

<sup>6</sup> «Հայրենիք», 1894:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 86:

քարը արյունով է ներկված, հողը քրտինքով թրջված, ամեն անկյունը լեցուն է հիշատակներով: «Բայց ինչպե՞ս բաժնավեին անկե. հոն էին իրենց սրբարանները, հոն երգած էին, հոն աղոթած ու լացած, անոր վճիտ օդն էին ծծած, անոր զուլալ ջուրը խմած: Այս, աս երկրեն չի բաժանվելու համար ինչե՞ր էին ըրած. հանձն առած էին ամեն աշխատությունները, մարսած էին անարգանքներուն են դառը և գլուխնին ճկած էին ամեն կամքի առջև: Բայց աս բոլոր գոհողությունները չէին կրցած աս սև օրը իրենցմե հեռացնել:

Մեր ցեղը, որ գերազանցապես ազգասեր և հայրենասեր ցեղ մըն է, որ իր զգացումներուն բոլոր ուժովը, իր հոգիին բոլոր լարերովը, պլլված է իր ավանդություններուն, կապված է իր հայրենիքի սարին ու ձորին, լճակին ու գետակին, ամենածանր բույներուն, ամենաանտանելի պայմաններու տակ միայն կրնա հայրենիքը թողլու գաղափարը հղանալ»<sup>8</sup>:

Աստղիկը երկու երեխաների հետ հայտնվում է ուրիշ երկրում, կրում գաղթականին բաժին ընկած բոլոր անարգանքները. սով, աղքատություն, անպատվություն, նույնիսկ հայրենակիցների նախատինքներ, լպիռչ ակնարկներ ու առաջարկություններ, ստոր բանբասանքներ՝ իր անմեղությունը վիրավորող: Մարկոս աղայի նման անպատկառ հարուստի կեղծ հովանավորությունը հետին նպատակներ էր հետապնդում: Երեխաները սոված են. աղջիկը հիվանդ է, տանտիրուհին վճարը չմուծելու համար սպառնում է փողոց նետել: Հապա Մարկոս աղան ինչու՞ է առաջարկում իր «բարեկամությունը»: Ուրեմն աշխարհում չկա մարդկություն, խիղճ, հաշիվն է կառավարում այս աշխարհը, շահելու, օգտվելու, ուրիշներին սովորեցնելու բիրտ հաշիվը: Աստղիկը գիտեր, թե գաղթի երկար ճանապարհի գրկանքները չէին աղարտել իր գեղեցկությունը: Անքուն գիշերներին հիվանդ ու սոված երեխաների անկողնու մոտ նստած կինը հիշում է գյուղը, անցած երանելի օրերը: «Գյուղը, ուր կապրեր ինք հայրենիքին մեջ, մկրտված էր զինքը պարզապես աղվորիկը մակդիրով, և այդ մակդիրը իր ճկուն հասակին, փառփառ աչքերուն, կամ երեսին, նուռ բերանին ու ալապատրե լանջքին հետ աճած, լեցված, լայնցած ու կատարելագործված էր»<sup>9</sup>:

Ջրկանքը, կարիքը, երեխաների առողջական վիճակը սպառնալի վիճակ են ստեղծում և այլևս ելք չգտնելով՝ Աստղիկը հանձնվում է Մարկոս աղայի «խնամակալությանը», մի կերպ փրկում զավակների կյանքը: Մակայն դա շատ կարճ է տևում: Ներսում գլուխ էր բարձրացնում իր մաքուր և, սակայն, մորթված սերը, իր իղեալական և, սակայն, ցեխի մեջ նետված սերը. Տիրանի խռոված հայացքը հետապնդում է նրան, նույնիսկ սեփական Ես-ը դատապարտության խոսքեր է շարտում երեսին:

Աստղիկի ոգորումները առավել խտացնելու համար գրողը ստեղծում է խենթի կերպարը: Մա իրականում չափազանց խենթ ու բարեպաշտ անձնավորություն է, որին հպարտությունը ոչ մի գնով չզիջելու համար այստեղ խենթ հռչակեցին: Մարկոս աղայի մոտ Աստղիկին առաջնորդելիս շատ հետաքրքիր գրույց է տեղի ունենում խենթի ու Աստղիկի միջև: Մա աշխարհի անհրաժեշտ դրվածքի, մարդկանց դաժանության, սոցիալական անհավասարության և ընդհանրապես մարդու զագրելի էության մի տիպիկ քննադատություն է.

«- Ինչու՞ թողուցիք ձեր երկիրը, ինչու՞ հոս եկաք, հոն թուրք ու քուրդ կար չէ՛, որոնք ձեր պատիվը կը գողնային, և ձեր ունեցածը կը հափշտակեին, բայց հո՛ւս, հոս ինչ կընեն:

-Նայե՛, որչափ մեծ է աշխարհքը. քսան տարի է , որ անոր մեկ ծայրեն մյուսը քալած են ու կը քալեն. ամեն տեղ ամբոխն է, որ քրտինք, արցունք ու արյուն կը թափե, ամենեն քաղաքակիրթ ու լուսավորված սեպված երկրեն մինչև հետին վայրենի, մոռացված անկյունը. մարդը միշտ չար, եսասեր ու անգութ գտած են:

Մի կարծեր, թե միայն մեր հայրենիքին մեջն է, որ անիրավություն կը տիրե, գոհերը միմակ մենք չենք, ապականությունը ամեն տեղ է, աշխարք ողջ հիվանդ է, ահագին փտախտ մը անոր ընդերքը կը հատցնե, անհրաժեշտ է հիմեն վերանորոգել զանի, պետք է խոշոր անդամահատություններ կատարվեն անոր վրա:

<sup>8</sup> «Հայրենիք», 1894, էջ 92:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 81:

-Տե՛ս, մորուքս ու խելքս ճերմկեցան՝ կատարված անիրավությունները տեսնելով: Ուր որ ալ գացի, միշտ գտա մեծկակ ամբոխ մը, որ կը չարչրկվեր, կը զրկվեր քանի մը խելացիներուն հաճույքին ու հանգստութեանը համար :

Բայց այս շատ երկար չի կրնար տևել. չարչրկող, տանջվող ժողովուրդը հիմակ իրավ բան մը չի գգար, և ընդհակառակը կը քարկոծե, կը հալածե զինքը՝ գիտակցութեան առաջնորդող մարդիկը, բայց օր մը պիտի գա», և շատ հեռու չէ աս օրը, որ պիտի շատանան ինձի պէս խենթերը, և ան ատեն կռիվը պիտի սկսի»<sup>10</sup>:

Խենթը ինքը հեղափոխական գործիչն է՝ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսը. նրա բերանով խոսում է զրկված մարդկությունը, թալանված պատիվը, բռնաբարված խիղճը, բանտված ազատությունը: Հարուստները ապրում են խելացիների փողոցում, ուր հրացանավորներ չկան, չկան դաժան, սպառնացող դեմքեր, այլ բարձր շենքեր, բարեկեցիկ ընտանիքներ, շքեղություն, սակայն մարդն այստեղ ավելի է վտանգված, քան մութ լեռներում, անդունդն այստեղ ավելի է խոր ու անտակ, ուր ընկնողը այլևս ազատում չունի:

Աստղիկի պատիվը արատավորված է, Մարկոս աղան վայրենի մոլուցքով ծծում է նրա աղվորիկ հմայքաշատ մարմինը: Աստղիկը մատնված է հոգեկան անասելի տառապանքների, որոնք, ի վերջո, նրան հասցնում են խելագարության: Նրան ուղարկում են Պոլիս՝ Ազգային հիվանդանոց, որդուն՝ որբանոց, իսկ աղջիկը մեռնում է տարափոխիկ հիվանդությունից: Միայն Մարկոս աղայի հետ ոչինչ չի պատահում. նա բարերարության դիմակը հագած՝ շարունակում է իր վավաշոտ որսը. նրա լարված որոգայթն են շարունակվում ընկնել մանկահասակ չքմաղ հայուհիներ:

Ահա թե ինչ երեսներ ունի հայ գաղթականությունը, ինչ խորը ծայքեր...

Եթե այս վիպակում հեղինակը անխուսափելի կործանման է առաջնորդում հերոսներին, որովհետև այլ ելք չունի հայ գաղթականը, նա դեպքերի հորձանուտը նետված տաշեղի նման զարկվում է արեւելի՝ փրկություն որոնելու և, սակայն, չի գտնում: Կյանքի ու մարդկանց դաժանությունը կործանում է այդ խլակներին:

«Լուսնկա գիշերով» («Շարժում», 1898) պատմվածքում հազիվ քսաներեք տարեկան Միսակը, որ ջարդերից մազապուրծ՝ հայտնվել էր օտարության մեջ, զրկված ունեցվածքից, հարազատներից, հիմա էլ ստացել է նշանածի՝ Աննայի հուսահատական նամակը, ուր հայտնվում է, թե իրեն բռնի նշանել են, շուտով հարսանիքն է: Ժայռերի կատարից ծովի ալիքներին է նայում հուսահատ տղան և անդարձ որոշում ընդունում՝ նետվել փրփրահույզ ալիքների մեջ, ազատվել այս կյանք կոչվող մղձավանջից: Մահը իրենն էր, բաց էր անդունդը և սակայն...

...Ինչու՞ է ինքը թշվառ, ինչու՞ մյուսները երջանիկ են ու զվարթ: Ինչ էր արել ինքը, եթե ոչ միայն կատարել ճակատագրի քմայքները, դարձել իրադարձությունների գերին: Աննան տառապում է, նրա հետ տմարդի են վարվում, իսկ ինքը մտածում է սեփական մարմինը այս տառապանքից ազատելու մասին: Ով պետք է պատժի իրենց չարիք հասցնողներին, ով պետք է անմեղների արյան վրեժը լուծի, մի՞թե մահը վախկոտի ելք չէ, մեռնել ամեն ակնթարթ կարելի է, դժվարը արժանապատիվ ապրելն է: Այս անգամ ծնվում է աներեր որոշումը. գնալ հայրենիք, միանալ իր ընկերներին, որոնք հայոց լեռներում, զենքը ձեռքերին, կռվում են ազատության համար: «Ու այս վերջնական համոզումին մեջ անխախտ ոտքի ելավ, ուղղեց իր ճկած իրանը, ալ աչքին մեջ արցունք չկար, վրեժի գաղափարին կատարի ցուլը՝ միայն»<sup>11</sup>:

Կ. Տողրամաճյանի փնտրտուքները այնուհետև նրան տանում են զուտ կենցաղային երևույթների պատկերման ճանապարհով, մերթ հին հեթանոսական աստվածների ոգեկոչման, ուժի, ազատության ու գեղեցիկի պաշտամունքի վեհացմանը, ընկնում է պատմության մանվածապատ ուղիները, զբաղվում անցած փառքերի որոնումներով, ստեղծում սիմվոլիստական կերպարներ, արձաններ, ազատության մարտիկներ, մարդկության փրկիչ Միրարիներ և հանգում մի աներեր եզրակացության. «ուս է պետք սեփական անմահությունը, եթե չես կարող ձեռք մեկնել ընկածին ու բարձրացնել թշվառին, եթե չես կարող բռնել ոճրագործի ձեռքը և կանգնեցնել համատարած ար-

<sup>10</sup> «Հայրենիք», 1894, էջ 114:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 77:



յան գետերը: Հազար անգամ գերադասելի է մահը անպատիվ, անազատ կյանքից: Այս տեսակետից մի ինքնատիպ բողոք, սարկազմով լեցուն մի ելույթ, անողոք քննադատություն է պարունակում Տողրամաճյանի «Աղոթք» բանաստեղծությունը, ուր յուրատեսակ վեճի մեջ է մտնում աստծու հետ, բերում մեր ժողովրդի հավատարմության, կրոնասիրության, աստծուն երկրպագելու, վանքեր ու եկեղեցիներ կառուցելու, գրականություն ու արվեստ ստեղծելու, առաքինի վարքի բազում օրինակներ: Բայց աստված տեսնում է այս ամենը ու չի տեսնում: Մենք աղոթքներով նրա օգնությունն ենք հայցում, նրա փրկարար աջին ապավինում, իսկ նա մոռացել է մեզ, թողել ոճրագործի քմայքներին:

*«Չէ, Տե՛ր, չէ, մոռցար ալ մեզի իրավ,  
Դարձուցիր մեզմե երեսդ անդին.  
Ու թող տվիր, որ թուրքը անիրավ  
Մեր արյունին մեջ լվա գերանդին»<sup>12</sup>*

Եթե այս պարկեշտ, խաղաղասեր, աստվածավախ ժողովուրդը իր հողի վրա մարդուն վայել կյանքով չի կարող ապրել, ապա էլ որն է աստծուն երկրպագելու, նրան խաչքար ու մատյան ձուլելու իմաստը մոռացկոտ է աստված կամ՝ կույր...

Կարապետ Տողրամաճյանը գրական-մանկավարժական գործունեությունը հաջողությամբ զուգակցել է կրքոտ հրապարակախոսությանը: Նրա հրապարակախոսական գործունեությունը կարելի է բաժանել երեք ոլորտների.

Ա.- Հեղափոխական-ազգային հարցեր

Բ.- Կրթական-առաջադիմական

Գ.- Գրախոսական:

«Նոր բան գիտե՞ք» հոդվածում Մանվելյանը սքափության կոչ է անում ազգի դատարկամիտ երագողներին, որոնք քնից ելնելով՝ նոր թերթ են ստեղծում, փրփուրը բերաններին՝ անհամ ճառեր են արտասանում, մոռացած իրական կացությունը՝ ընկել են անմիտ երագների գիրկը, մեղադրում են հայ հեղափոխականներին, թե նրանք են ջարդերի ու հալածանքների պատճառը: Առաջարկում է սքափվել և ջուր չցնել թուրքի ջրաղացին, ճառի փոխարեն գործ անել, խրատվել պատմության դասերից: Այս և այլ հոդվածներում անողոք քննադատության է ենթարկում թուլամորթ հոգևորական գործիչներին, որոնք իրենց աթոռը չկորցնելու համար ստրկական համակերպությամբ տանում են ժողովրդին հասցրած անարգանքները, փոխանակ հոտի շահերի պաշտպաններ լինեն:

«Հոգիների տուրևա» (Շարժում, թիվ 99) հոդվածում իր բողոքի ձայնն է հնչեցնում կրոնական զանազան աղանդների ծավալած անարգել գործունեության դեմ: Հայտնի է, թե ազգերը, երբ հայտնվում են քաղաքական ծանր կացության առաջ, արտասահմանից սկսվում են աղանդավորական հարձակումներ, մարդորություն: Իսկ պատրիարքարանը և ազգային ժողովը չեն տեսնում այս ահավոր վտանգը, չեն պատկերացնում դրա հետևանքների ծանրությունը:

«Հերիք չէ, որ թուրք հասարակությունը՝ իր ճնշող, սպանող ուղղությունով, հայը իր հայրենիքի մեջ անտանելի պայմաններու կենթարկե, հերիք չէ, որ քյուրտն ու չերքեզը հայտնի կամ գաղտնի կանապատվեն, կը շարչրկեն անպաշտպան հայությունը, ու ահա անոնց վրա կավելանան այն խարդախ առաքյալները, որոնք Հռովմեն դրկված, ոչինչ առավելություն չունենալով մեզ հալածող այլակրոններեն՝ իրենց ծուղակները կը լարեն, ուռկանները կը մետեն ամբողջացնելու համար բռնապետության և բարբարոսության սկսած հայաջինջ գործը»<sup>13</sup>, - գրում է Տողրամաճյանը:

Ամեն անգամ, երբ հայը զենքը ձեռքին մետվում է ազատագրական կռվի, աչքը հառում եվրոպական երկրներին՝ օգնության հույսով, նրանց կողմից սկսվում է այս անարգ սակարկությունը, որ միշտ, խախտելով կրոնի ազատության միջազգային օրենքները, մեզ մոտ հասցնում են ծայրահեղությունների: Մենք միշտ աչքներս Եվրոպային ենք հառել, օգնություն հայցել: Այս սին պատրանքները ցրելու էր կոչված Տողրամաճյանի «Իճնչ պիտի ընե արտասահմանը» (Շարժում, թիվ 136) հոդվածը, ուր հան-

<sup>12</sup> «Հայրենիք», 1894, էջ 151:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 155:

գամանորեն քննության է առնում նրա կատարած դրական ու բացասական գործողությունները: Արձակելով թուրքերի ձեռքերը, ոճրագործության լայն ասպարեզ դարձնելով երկիրը՝ փոքրիկ օգնություններ է կազմակերպում՝ կեղծ արցունքներ աչքերին, առանց փորձելու դատապարտել ազգասպանությունն ու ոճիրները: Ժողովներ, միտինգներ, մի քանի ազնիվ մարդկանց ելույթներ և վերջ: Իսկ արտասահմանի հայությունը ի՞նչ է աճում: Վերջապես պիտի սրբագրել մեր սխալները, հույսներս մեզ վրա դնել:

«Հասկանալով, որ մինչև հիմա սխալ ուղղություն մը բռնած էինք, քաջությունը պիտի ունենա՞նք սրբագրելու այդ սխալը, ուղի տակ տալու բոլոր վայրերան բուերը, անամոք գնչուները, և մեր բոլոր ուժովը փաթովիլ այն գաղափարին, որ զենքը կը քարոզե. քանի որ առանց ատոր խաղաղասերներն ալ մեր ձայնը չեն լսեր:

«Հայրենիքը մեզի կը նայի:

Ի՞նչ պիտի ընե արտասահմանը»<sup>14</sup>:

Սեկ այլ՝ «Ինչ ընեն»(Շարժում, թիվ 250) հողվածում հեղինակը հարցադրումներով կարծես ամրապնդում է զենքին փարելու, սեփական տունը, ինչքը, անձը և պատիվը կռվով պաշտպանելու գաղափարը. ի՞նչ պիտի անի տղամարդը, երբ տեսնում է, որ թուրքը մտնում է իր տուն՝ կնոջն ու աղջկան պղծելու, ի՞նչ պիտի անի հայ այրին, երբ ամուսնուն սպանողը հիմա գալիս է իր պատիվը սևացնելու, ինչ պիտանի գյուղացին, երբ տեսնում է հարևան գյուղը բոցերի մեջ և այսպես շարունակ: Հետևում է հռետորական հարցը. «Ըսեք ձեր բարձր հանճարով և հեռատես մտքով, թե հայրենիքի մեջ տապկվող, չարչարվող, անարգվող, պղծվող այս հայերը ի՞նչ ընեն»<sup>15</sup>:

«Արյունոտ հորեյան» (Շարժում, թիվ 253) հողվածը մի ջախջախիչ ելույթ է՝ ուղղված Արյունոտ Սուրբանի արյունոտ հորեյանին: Մարդիկ գտնվեցին, ովքեր թերթերի ճակատները զարդարեցին պնակալեզի իրենց բաղաջանքներով, սակայն թող հիշեին, թե ինչ ճանապարհ է անցել այս սուրբանը: Ոչնչացնող, սպանիչ քննադատության ենթարկելով անմարդկային այդ ծիվաղի արարքները՝ նա գրում է.

«Կանչեցեք Պղոտոմնի արքունիքին ամբողջ սևագույն դահճապետները, տվե՛ք անոնց ձեռքը պուկարներու մորթերե շինված թմբուկներ, սերպերու ոսկորներե շինված փողեր, հելլենոսիներու մազերե պատրաստված սազեր, ժողվեցեք հայ մանուկները, անտեր անտիրական որբերը, ցցեցե՛ք Ելլտրզի չորս կողմը և վառեցե՛ք անոնց գլուխները, թող այդ մատղաշ խարույկներու լույսը իր ցուլերը փռե այդ հրեշային տոնին վրա: Օշարակի տեղ վազցուցեք մարդու արյուն, թող բոլոր շատրվանները արցունք ցայտեցնեն, հեծող, հեծկլտող հայատակներու արցունքը:

Ելլտրզի բացաստանը ծածկեցե՛ք անհամար նահատակներու գերեզմաներեն քաղված ծաղիկներով, մեջտեղը բարձրացուցե՛ք հսկա բուրգ մը գանկերով, և որուն գագաթը թող բազմի ինքը՝ Համիտ՝ իժերով հյուսված, ու անոր շուրջը եվրոպական քաղաքակիրթ մարդկության ներկայացուցիչները, ձեռք ձեռքի տված, թող պարեն դժոխսային, դիվային պար մը, արժանապես տոնելու համար ատ կարմիր հարսնիքը, ատ արյունոտ հորեյանը»<sup>16</sup>:

Շատ լայն է Տողրամաճյան հրապարակագրի գործունեության ոլորտը. կրթական գործ, լուսավորչական աշխատանք, մամուլի ընդարձակում, ազգապահպանության ձեռնարկումներ, արտասահմանի հայ գաղութների օրվա և սպազայի խնդիրներ և այլն, որոնց մեջ միշտ նշմարվում է զգաստ ու զգայուն մտավորականը, երդվյալ հայն ու հայրենասերը՝ գործով, գրչով ու անձնագոհության սեփական օրինակով:

Ազգային-քաղաքական գործընթացից հրապարակախոսը անընդունելի է համարում դուրս թողնել հայ կնոջ խնդիրը: Մա արդեն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակին ամենահասունացած, հրատապ լուծումներ պահանջող խընդիր էր, որին անդրադարձան այդ շրջանի տասնյակ գործիչներ, կին գրողներ:

1900 թվականին Ֆիլիպեի Ազգային վարժարանում կարդացած դասախոսության մեջ (հրատարակվել է Ռազմիկ շաբաթաթերթում, թիվ 92-94) հռետորը խոսքն սկսում է Մանթեկացայի հետևյալ մտքի մեջբերումով. «Ազգի բարոյական և քաղաքա-

<sup>14</sup> «Հայրենիք», 1894, էջ 160:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 166:

կրթական զարգացման աստիճանը ամենից ճիշտ և ամենից ուղիղ չափը կարող է լինել այն տեղը, որ այդ ազգը հատկացրել է կնոջը»:

Մանվելյանը իր դասախոսությունը սկսում է հետևյալ մտքով.

«Ազգի մը բարոյական վերակազմության և ազատագրության գործը այնքան արագ ու այնքան բնական կերպով կը կատարվի, որքան այդ ազգի մեջ արական ու իգական գիտակից ուժերը համընթաց ու ձեռք ձեռքի տված կը գործեն»<sup>17</sup>:

Բանախոսը այստեղ կարևորում է մի հանգամանք. այն է՝ թե կինը և թե տղամարդը, նախ, իրենք պիտի հասկանան հասարակական կյանքում իրենց վերապահված դերի կարևորությունը, գործունեության դաշտն ու պարտականությունները: Այդ ատումով նա գոհունակությամբ արձանագրում է դարի վերջերին այս ոլորտում եղած հաջողությունները:

Այս մի երկար պատմական ակնարկ է անում՝ հիշելով անցած դարերի իրադարձություններում կնոջ կատարած պատմական դերը: Անդրադառնալով իր ժամանակին՝ նա երախտիքի խոսքեր է ասում հայ ազգային-ազատագրական շարժմանը իրենց մասնակցությունը բերած հայտնիներին, Չեյթունի ու Վանի կանանց, Մասունցի Շաքեին, Աղբյուր Սերոբի կնոջը՝ Մոսեին, Վազգենի քույր Չարուհուն և շատ ուրիշների, արտերկրի կանանց միություններին, Պոլսի հայ վարժուհիներին և կանանց կազմակերպություններին: Կարևոր այս գործին խանգարում են այն ապագային ընտանիքները, որոնք փոխանակ ազգային դպրոց տալու իրենց աղջիկներին, կամավոր հանձնում են օտար միսիոներուհիների ձեռքը՝ դարձնելով նրանց աշխարհաքաղաքացի, որոնք ընդմիշտ կորցնում են ազգային պատկանելությունը: Հարկավոր է իրարից զատել անձնական շահն ու հասարակական շահը և կարողանալ անձնականը գոհել հասարակականին, անձը՝ հայրենիքին, եթե հարկը պահանջի: Կրթված կինը արդեն ազատ է, արդեն հայրենասեր է, արդեն ազգային մտածողություն ունի և հայրենիքի համար իր ուժը չի խնայի:

Ո՞վ պիտի իր զավակներին տա ազգային-հայրենասիրական վեհ դաստիարակություն, եթե ոչ հայ կինը.

«Եվ այս մեծ ճշմարիտ հայրենասիրությամբ միայն է, որ կարող պիտի ըլլանք ընթացնելու մեր ավերակ Հայրենիքի պահանջը, մեր չարչրվող եղբայրների ցավը և մեր կռվող եղբայրներու կռիւ և մեր անթիվ նահատակներու վրեժը լուծելով՝ հասնելու հայկական միակ նպատակը, որ է անկախ ու ազատ կյանքի մը տիրացումը՝ սեփական Հայրենիքի մը մեջ»<sup>18</sup>:

### ЖИЗНЬ И ЛИТЕРАТУРНО–ПУБЛИЦИСТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КАРАПЕТА ТОГРАМАДЖЯНА (ВААН МАНВЕЛЯН. 1864–1904)

\_\_\_\_ Резюме \_\_\_\_

\_\_\_\_ А. Акопджанян \_\_\_\_

Карапет Тограмаджян (1864-1904) -известный западноармянский писатель, публицист и культурный деятель, чья жизнь оборвалась в 1904 году в горах Сасуна. Был активным участником национально-освободительной борьбы, сторонником партии Дашнакцутюн, поэтому долгое время оставался в тени, не были оценены его произведения.

Литературно-педагогическую деятельность с успехом совмещал со страстной публицистикой. Он выступал против смирения, яростно критиковал весправие женщин-армянок, находил пути просвещения женщин, восстановления их прав.

Данная статья является первым опытом оценки литературного наследства писателя-публициста, что вызовет интерес к его личности и творчеству.

<sup>17</sup> «Ռազմիկ», 1900, քիվ 92:

<sup>18</sup> Նույն տեղում:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ  
Հ. ՔՈՉԱՐԻ ԵՎ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱՐՉԱԿՈՒՄ

20-րդ դարասկզբին հայ ժողովրդի դեմ նյութված ոճիրը երբեք անցյալ չդարձավ: Գրեթե անմիջապես սկսվեց «կրկնակի կյանքի» (Պ.Սևակ) դատապարտված սերնդի տանջալից վերապրումների ու հիշողությունների առատ հորձանքը, որն ստանալու էր գեղարվեստական բազմապիսի դրսևորումներ:

Երկրի թեման իր բնական հնչերանգով ու հոգեբանությամբ սկիզբ առավ «Մարութա բանձր սարի զավակ» բակունցյան Հազրոյից, շարունակվեց մի քանի այլ գողտրիկ պատմվածքներում՝ արտահայտելով ամանց կարոտ ու ցավ, նոր կյանքի տենչեր ու հույսեր, փայփայելով վերադարձի պատրանքներ (Ծիրանի փողը, Լառ-Մարգարը, Մուրոյի «Չրուցը»): Կորցրած հայրենիքի թեմայի հետագա զարգացումը մեզանում ընդհատվեց 30-ական թվականներին՝ կրկին հառնելով մոտ երկու տասնամյակից, այս անգամ ավելի լայն հունով ու հնարավորություններով: Վճռելով ազգային բախտ ու ճակատագրի գեղարվեստական մեկնության խնդիրները՝ առանձին գրողներ՝ Խ. Դաշտենցը, Հ. Քոչարը, Մ. Գալշոյանը, զիտակցորեն դիմեցին հենց ժողովրդական աշխարհազգացողությանը, նրա բառուբանին՝ մնալով, սակայն, բանահյուսության հետ ու նրանից վեր: Նրանց նորոթյա վիպասքերում ծայր էր առնում նաև մեր հարատև ցավը՝ կարոտախտը, անցյալ կյանքի պատկերները հարստանում էին ավելի խորունկ ժամանակային հեռանկարով ու զուգորդություններով: Ասենք, որ քսաներորդ դարում համաշխարհային գրական գործընթացում հատուկ իմաստ ու նշանակություն էր ստացել բանահյուսության միտումնավոր օգտագործումը ոչ միայն մոդեռնիստ, այլև դասական գրողների երկերում (Չոյս, Կաֆկա, Օ՛Նիլ, Կոկտո, Թոմաս Մանն, Մարկես): Սոցիալական ու քաղաքական կյանքի վայրիվերումները արևմտաեվրոպական մտավորականությանը մոլեցին այն եզրակացության, թե մշակույթի, քաղաքակրթության բարակ թաղանթի տակ գործում են հավերժական կործանիչ կամ արարիչ ուժեր, որոնց ակունքը մարդկային բնության, համամարդկային հոգեբանական ու մետաֆիզիկական հատկանիշների մեջ է:

Ասքի գեղարվեստական վերածնունդը, այսպիսով, պայմանավորված էր մարդկային հավերժական անանց արժեքների բացահայտման ձգտումով, թեև հաճախ շրջանցելով պատմական ու տարածական-ժամանակային ընդունված հայեցակետերը: Հայ գրականության մեջ այն ո՛չ նորություն էր, ո՛չ էլ անցողիկ հրապուրանք, այլ ավանդույթ, հզոր ու տիրական մի հուն, որ կոչված էր բացահայտելու ժողովրդական կեցության հիմքերը, նրա անցյալի ու ներկայի կապերը, անմահության գաղտնիքն ու խորհուրդները ոչ միայն անցյալում, որքան հենց մեր օրերի համար: Ուշագրավ է, որ տակավին տասնամյակներ առաջ՝ խորհրդային գրողների առաջին համագումարում ունեցած իր ելույթներում Ակսել Բակունցը հետևողականորեն առաջադրում էր ժողովրդական աղբյուրների, նրանց համակողմանի ուսումնասիրության, էպիկական տարերթի օգտագործման անհրաժեշտությունը:<sup>1</sup>

Վաղաժամ ընդհատված բակունցյան ավանդույթները հայ գեղարվեստական արձակում վերականգնվեցին միայն 60-80-ական թթ., երբ օգտվելով ժողովրդական աշխարհազգացման ու գեղարվեստական արտահայտչաձևերի կենդանի տարրերից՝ գրվեցին հայ ժողովրդի պատմական ճակատագրի մասին պատմող մի շարք խոր ու լիարժեք ստեղծագործություններ:

Հրաչյա Քոչարի ու Մուշեղ Գալշոյանի համար բանահյուսությունը ոչ միայն ստեղծագործական ընդհանուր ավանդույթ էր, այլև այն առանձնահատուկ ասպարեզը, ուր ի մի էին գալիս տառապանքի կենսագրությունն ու գեղարվեստական գնումների շրջանակները՝ հնարավոր դարձնելով գեղարվեստական գործընթացը հարստացնել բանահյուսական հարուստ նյութերով՝ սեփական նկարագրին ու ստեղծագործական

1 Մ. Բ ա կ ու ն ց, Երկեր, հ. 2, Եր., 1964, էջ 609:

նպատակներին համապատասխան: Հ. Քոչարի ստեղծագործության մեջ բանահյուսական շիթը երևան եկավ վերջին՝ «Մայիտակ գրքում»՝ որպես հայ ժողովրդի բախտի ու նրա պատմական ճակատագրի պատկերման առավել բնական ու արդյունավետ միջոց:

Քոչարը նույնպես «գալիս էր» մանկական իր տպավորություններից, որոնք զարմանալի ուժով խտացան նրա «Մայիտակ գրքում»: Ժողովրդական խոսքի պարզ ու բնական հնչեղանգով, հորդաբուխ անմիջականությամբ ու անկեղծությամբ գրողը ստեղծում է մեր ժողովրդի ապրած անօրինակ քաղաքական ողբերգության խորունկ, ցնցող պատկերը: Հ. Թամրազյանն այսպես գնահատեց Քոչարի հիանալի գիրքը. «Նուրբ է գրքի ընդհանուր խորագիրը: Մայիտակ գիրք: Մեր ժողովրդի բախտի մասին որքան հղացումներ են մնացել չիրագործված, որքան չգրված գրքեր ու չսաված խոսքեր կան դեռ...»

Եթե այդպես է, ապա այդ չգրված, «սպիտակ մնացած» սիրո և տառապանքի գրքերից մեկն էր Քոչարի նոր ժողովածուն, որը բերում է հայրենական շունչ ու հոգի, ժողովրդական բախտի ու կարոտի պայծառ պատկերները:<sup>2</sup>

«Կարոտ» (1964) վիպակը գրողն անվանել է ասք, որովհետև այն կարծես մանրանկար պատկերն է Արագի ափին մնացած մի էպիկական աշխարհի: Նոր եզերքում եկել հանգրվանել են Երկրի յոթանասուներեք վայրերից՝ բերելով անշեջ կարոտի ու կորուստների իրենց անվերջանալի պատմությունները: Հայրենիքը դեռ ծփում է նրանց հուսահատ աչքերում, հիշողության մեջ, անուններում՝ Վանքեցի Մուշեղ, Ոգնեցի Ենոք, Սասունցի Արսեն... Երկում հեղինակին հաջողվել է ապահովել վիպային այն բարձր որակը, որ արդյունք է անհատի ճակատագրում ժամանակների և իրադարձությունների խտացման-բեկման: Այս իմաստով, գրողի ստեղծագործական կարևոր նվաճումներից է դաշտապահ Առաքելի կերպարը՝ ամբողջական, գեղարվեստորեն լայնահուն, հայկական-ազգային որոշիչ դիմագծով ու հոգեբանությամբ: Բնական խելքով ու հոգու շոայլ վեհությամբ օժտված մարդու՝ Առաքելի կենսագրության մեջ արտահայտվել են ժողովրդական կարոտի ու մորմոքի, մեր ազգային գիտակցության ու կեցության ողբերգական երկվության ակունքները: Մեն-մենակ իր ահռելի կարոտների ու կորուստների հետ՝ նա այժմ, նոր վայրում, որը չի դարձել իր հայրենիքը, ապրում է բացառապես սրտով ու զգացմունքներով՝ տարօրինակ, անբացատրելի համարելով թե՛ ներկա վիճակը, թե՛ դրված-սահմանված սահման-կապանքներն ու գյուղացիների լռիկ համակերպումը: Գրեթե նախամարդ ու վայրենի՝ նա անընկալ է մնացել նորին՝ «աշխարհքեն բեխաբար, խեղճ ու կրակ Առաքելը»: Փոխվել է կյանքը. առօրյա հոգսերի հոլովումով գալիս էր մոռացումը. մոռանում էին տարազները, բարբառները, սովորությունները, սակայն նա «ո՛չ կորցնում էր որևէ բան ունեցած-չունեցածից», ո՛չ էլ գտնում նորը՝ «նորացած աշխարհում»: Մինչդեռ շատ մոտիկ, հենց աչքի առջև, Մասիսներն էին, Բարդուղյան լեռները՝ այնքան թանկ ու անհասանելի: Երկրի կարոտը դառնում է հետապնդող երազ, սևեռում միտք: Հուսահատ՝ բացվում է կնոջը. «Իմ սիրտ կցավե... Երկիր ինձի կկանչե...»: Չարմանալի սեղմ, տարրդունակ պատկերներում, մի քանի խիստ արտահայտիչ նրբագծերով Քոչարը կերտում է մի ամբողջ սերնդի տիպական, ռեալիստական ու հոգեբանական դիմագիծը: Վիպակի հերոսի հոգեկան դրաման նրան դարձնում է խորապես ողբերգական դեմք: Ականջալուր իր անպարագիծ կարոտին՝ մեկ օր էլ նա անցնում է սահմանը՝ իր «խորոտ» երազի հետևից՝ գյուղի համար դառնալով «կենդանի, ճյուղավորված հեքիաթի հերոս», իսկ հարևան պետությունների համար՝ դիվանագիտական խոսք ու պահանջի առարկա:

Լռություն է իջնում «տարազների ու բարբառների խառնարան» գյուղի վրա. «բարեկամություն կար պետությունների միջև, վերադարձից ու հույսից խոսելը դատվում էր ու դատապարտվում»: Իսկ պաշտոնական գրություններում Առաքել Էլոյանը կապվում էր անգլիական հետախուզության հետ, համարվում երկրի թշնամի...

Առաջին ձյան հետ վերադարձած դաշտապահը վերստին խռովում է գյուղական հասարակությանը: Գրողն ավելի է խորացնում իր հերոսի ապրած ցնցող դրաման. ծայր է առնում մի փոխադարձ անըմբռնողություն պաշտոնական տեսակետի և մարդ-

2 Հ. Թամրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր., 1975, էջ 153:

կային ամենաբնական մղումների միջև, մանավանդ որ «հանցանքը» վաղուց ապացուցված էր, մնում էր պարզել «մանրամասները»: «Կարոտը» Դաշտենցի վեպերին արձագանքում էր նաև 30-ական թվականների ողբերգական կամայականությունների թեմայով: Թեև Քոչարը լավատեսորեն է լուծում հարցը, սակայն կարևորը այն իրականության պատկերումն է, որի հետևանքները հաջորդ տասնամյակներում էլ ավելի կործատաբեր եղան հայ սերունդների համար:

Առաքելից պահանջում են մոռանալ, հրաժարվել իր կարոտից, որ այլևս իր շնչառությունն է ու սրտի զարկը. համոզում են, որ միևնույն է, նոր սերունդը այլևս չի անդրադառնա անցածին: «Կարոտ թո՛ղի մոխրի տակ մնացած անթեղ կրակ է: Կարծես հանգեր է, չի երևա: Թո՛ղի պաղեր է: Բայց որ մոխիր բացես, անթեղ կրակ կերևա, կկայծկլտա... Անթեղ կրակ չմարի, կապրի: ... Կարոտն լե չմարի կրակի պես: Նոր սերունդ կանաչ է, խակ է, քանի կանաչ է, արմատ լե թաց է, որ հասնի, կարմրի, կծարավնա... Կարոտ կրակ է, ծարավ է», - համոզված առարկում է Առաքելը:<sup>3</sup>

Կարծես Առաքելի մասին է գրել Մուշեղ Գալշոյանը. «Կարոտ տխրություն է, անուշ-անուշ տխրություն է: Ու էդ տխրություն մեծ բան կպտղե, մարդու հոգին կմեծացնե, մարդու կդարձնե աժդահա, հերոս»:<sup>4</sup>

Քոչարը հյուսում է ժողովրդական մի պարզ, բայց խորունկ բնավորություն, որին անանոթ կարոտն ու հայրենի հողի ամենի ուժը դարձրին «պետական հանցագործ»... Հիրավի, էպիկական չափումների դրամա է սա, որտեղ բյուրեղանում է մոտ անցյալի անցուղարձն իր ողբերգական հետևանքներով: Վիպակը պատասխանում էր այն հարցերին, թե մարդ ինչ չափով է հարմարվում պատմական հեղաբեկումներին, թե հոգևոր արժեքներն ինչպիսի փոփոխություններ են կրում, և թե ինչպես է աղավաղվում ու եղծվում մարդկային սրտառու շնչազանքը:

«Նամսով հայ իսկի՛ չծիծղա: ... Ձարդուց յետ հայ մարդ իրավունք չունի ծիծղալու: ... Մոռոց մարդ նամսով չէղնի»<sup>5</sup>, - ասում է գրող Ս. Միմոնյանի սասունցի հերոսներից մեկը. դիպուկ նկատված հոգեբանական մի նրբագիծ, որ շեշտում է նաև Քոչարը իր մյուս տաղանդավոր վիպակում՝ «Նահապետ»-ում (1964): «Մոխր անդունդ» աչքերով Նահապետը ժողովրդական ճակատագրի մյուս տարբերակն է և անցել է յուրայիններին նյութված բազում մահերի միջով: Նրա անհատակ աչքերը տեսել են կնոջ ու երեխաների սպանող, դուստրերի անպատվությունը: Գիշեր թե ցերեկ ծորում են հուշ ու հիշողություն, կոտորակում Նահապետի վիրավոր միտքն ու հոգին: Եթե ծխում է նրա մենավոր ու խորհրդավոր հոլիկը, ապա ծխախոտի դառը ծխով: Եթե աշխատում է, ապա միայն գիշերով՝ իր վրա շարունակ զգալով մահատակված մերձավորների լռին հանդիմանությունը: «Միրտ սպանվեր ի, սիրտ չունի: Ոտի վրա կքելի, կերթա, կիզա, բայց մեռեր ի, հոգով հեռացեր ի կյանքեն, աշխարհ էնոր համար պաղ գերեզման ի... մեղադրելու չի, կեծակ զարկեր, վառվիր ի, տեղ մոխիր ի մնացեր ...»<sup>6</sup>, - ասում է նրա մասին Ափրոն:

Աշխարհն արդեն պաղ գերեզման է նրա համար, միայն մղձավանջ ու հուշ: Սակայն գրողը չի բավարարվում այսքանով. վիպակում ծայր է առնում դարձյալ մի էպիկական թեմա՝ ժողովրդի կենսունակության, նրա առողջ արմատների վերընձյուղման, համազգային վշտի ու ողբերգության հաղթահարման հարցը: Այդ հույսի ու լավատեսության պատգամներն են բերում Ափրոն, Մովսեսը, Հակոբը. օրենք է ու իրավունք ապրելը, նոր հողը զարդարելը, մահերին բազմապատիկ ծնունդով ու հարսանիքներով դիմագրավելը: Բակունցի հերոսը երկրից փրկել էր մի բուռ ծիրանի կորիզներ, Դաշտենցի Կուրավա Ծնոն՝ ուրարտական ցորենի հատիկները, քավոր Հակոբը՝ Արտամետի համբավավոր խնձորի սերմերը: «Արտամետի այգիներ պետք չի որ չորման» արտահայտությունն էլ դառնում է այս վիպական հյուսվածքի հիմնական առանցքը: Բնավեր ու տարագիր ժողովուրդը, փոքրիշատե ուշքի գալուց հետո, հավատարիմ իր ստեղծող ու արարող նկարագրին, ձեռնամուխ է լինում նոր հայրենիքի բարգավաճմանը:

3 Հ. Քոչար, Կարոտը, Երկեր, Եր., 1980, էջ 327:

4 Մ. Գալշոյան, Չորի Միրտ, Եր., 1983, էջ 20:

5 Ս. Միմոնյան, Հայրս, Լեռ և ճակատագիր, Պեյրուք, 1972, էջ 174:

6 Հ. Քոչար, Նահապետը, Երկեր, Եր., 1980, էջ 371:

Երկու միայնակ ու խեղճ հոգիներ, իրենց անդարմանելի ցավերով ու կորուստներով, միանում են՝ վերստեղծելու իրենց բույնը: Մրտառուչ մտերմությամբ հողին կապված աշխատավորը գտնում է ինքն իրեն, քարքարոտ ու աղքատիկ գյուղը դարձնում սքանչելի պարտեզ՝ ամեն մի նորածնի կամ ամուսնացող զույգի տների առջև տնկվող խնձորենիներով:

Քոչարը «Նահապետը» անվանել է «իրական պատմություն՝ վիպացած»՝ կյանքի փաստը դարձնելով գեղարվեստական երկ, ժողովրդի կենսափիլիսոփայության բարձրարվեստ արտահայտություն: «Նահապետը» համաժողովրդական տառապանքների պատմությունն է, նրա բախտի տարեգրությունը և բնավեր մարդու հին ու նոր կյանքի հարցերը: Այն դառնում է արարման, դարավոր առողջ բնագոյների շարունակման մի գեղեցիկ քնարական հիմն, հայ մարդու հոգու վեհության աստվածացում, որ գոյատևել է հենց այդ՝ հոգևոր ներգործությունների շնորհիվ՝ հակառակ իր գլխին փվվող աղետների: Վիպակում երևան է եկել մի նրբերանգ էլ՝ ժողովրդական մաքառումների արժևորումը: Մթափումի օրերին Նահապետը ձևակերպում է անցած դժոխային փորձությունների հանրագումարը՝ «Լավ կլինեք, որ կովեին ու սպանվեին կովի մեջ, քան թե սրի քաշվեին. որտեղ զենք պահեր էին, փրկվեցին, որտեղ անգեն էին, կոտորվան»:<sup>7</sup>

Քոչարի երկու վիպակներն էլ առանձնանում են պարզ պոեմով, բնական ու անպաճույճ ժողովրդական պատմելաձևով: Հատկապես «Կարոտը» գրական մի կատարելություն է՝ միանգամայն զուսպ, հակիրճ ու խիտ, ենթատեքստով ու ոճական այլևայլ նրբերանգներով հարուստ: «Նահապետը» ժամանակային է՝ ավելի հարուստ ընդգրկումներ ունի, շատ ավելի «կենսական տարածքներ» նախորդի համեմատությամբ, սակայն, ինչպես իրավացիորեն նկատվել է, վիպակում առկա են որոշ ձգձգվածություն, սյուժետային ավելորդություններ (խոսքը վերջին էջերի մասին է):

«...Պատմում էին, պատմում, և նյութը չէր սպառվում, լցված սրտերը չէին թեթևանում վշտից ու տառապանքների ցավից»,- գրում էր Քոչարը իր հերոսների մասին:<sup>8</sup> Մուշեղ Գալշոյանը կարծես լրացնում էր. «Օրական ես ասիմ հարիր, դու ասա հազար մտքը էրզրի կերթա, ավեր ու անտեր Մասուն կերթա»:<sup>9</sup>

Հիրավի, մեր ազգային կյանքի ու մտահոգությունների հարցերը դեռ շատ հեռու են գեղարվեստորեն սպառվելուց. ապացույց՝ վաղամեծիկ հիանալի գրող Մուշեղ Գալշոյանի բառուբանը:

Լինելով «յաթաղանից մազապուրծ» ծնողների սերունդ՝ Գալշոյանը նույնպես իր ստեղծագործության մեծ ու փոքր ակունքներով «սկիզբ էր առնում» Մասունից ու նրա անմոռանալի բնակիչների ավանդությունների պահպանման ու շարունակման գիտակցությունից, որը կուտակվել, բյուրեղացել է անորակելի աղետի հետևանքների ամենատարբեր պատկերներում, «Չորի Միրոյից» մինչև «Մարութա սարի ամպերը» գիրքը: Նրա գրական վաստակը, չնայած փոքրածավալ ձևերի նախասիրությանը, ամենից ավելի է բավարարում ժամանակակից արձակին ներկայացվող գլխավոր պահանջներից մեկին՝ վիպայնությանը: Այս երևույթը հատուկ է վերջին տարիների հայ գրականությանն առհասարակ: Էպիկական հատկանիշները, վիպային մտածողությունը երևան են գալիս Գալշոյանի թե՛ նշված վիպակում, թե՛ պատմվածքներում ու նովելներում՝ ձգտելով երևույթների պատմա-փիլիսոփայական հայեցողության խորացման, ազգային փորձի ու համամարդկային հոգևոր արժեքների արդարամիտ վերագնահատման: Այդ մտածողությունը գրողի լավագույն երկերի որակային և աշխարհագրական հատկանիշն է, որի շնորհիվ հերոսների ճակատագիրը քննվում է պատմության կարևորագույն հանգույցներում՝ կենցաղից վերածվելով կեցության:

Ծիշտ այդպիսի խտացում էր Մ. Գալշոյանի «Չորի Միրոն» (1968), որը վիպում էր ժողովրդի հին, բայց չհնացող ցավի, նրա դժվարին բախտի մասին:

Նահապետի սերնդակիցն է Չորի Միրոն՝ երազը կորցրած մի մարդ՝ առհավետ գերված այն անդադար պատերազմին, որ վարել է արյան բոլոր հյուլներով, զոհաբե-

7 Հ. Քոչար, *Կարոտը, Երկեր, Եր.*, 1980, էջ 435:

8 Նույնը:

9 Մ. Գալշոյան, *Չորի Միրոն, Եր.*, 1983, էջ 454:

րելով ունեցածն ու ունենալիքը, քանի որ «կոտորածի գարնանից փախնել չի եղնի, չէ՛, մոռանալ չի եղնի...»:<sup>10</sup>

Գյուղերի «խռոված տան» բնակիչ Միրոն պատերազմ է ճանապարհում զինվորացու որդուն՝ երկրորդ Հարութին: Այս պատկերներում գործ ունենք Ստեփանի հայտնագործած «ժողովրդական ժամանակի» հետ, որ փաստերն ու վիճակագրական տվյալները շրջելով՝ նրանց ստիպում է հնչել նոր ուժով՝ հաղթահարելով տեսողության ու լսողության ինչ-ինչ բարոյական խաթարումներ:

Վիպակի դիպաշարի զգալի բաժինը կազմող այդ տեսարանը ամփոփում է կառուցվածքային երեք շիթ՝ Միրոն իր հուշերով ու խրատներով, Հարութն իր պարզունակ կենսահայացքով և սայլապան Արոն՝ իր պրոզայիկ միջամտություններով, որոնք «անցնում են» հոր և որդու գրույցի միջով՝ ավելի շեշտելով Միրոյի կերպարի ազնվական շաղախը, հոգու հարստությունը:

Ամեն մի ճանապարհ սովորաբար տրամադրում է մտորումների. սայլի հին ու նոր երկաթօղերը ճոճալով գլորում-տանում են Միրոյի հին ու նոր մտորումները, և անհա Միրոն «միտքն առած գնաց էր գիրք»: Ստեղծվում է համանվագայնության մի հազվագյուտ բնական ու ներդաշնակ որակ՝ իր գլխավոր ու երկրորդական մտիվներով, մեծ ու փոքր ժամանակների ազուցումով, որ լավագույն ձևով է բացահայտում հերոսի անչափելի սերն ու տազնապը: Դրանք դառնում են պատվիրաններ հողի ու մարդու միասնության, մարդկային հավերժական օրենքների, ընկերության ու բարեկամության մասին: Այլքվում է հարուստ կենսափորձի ժապավենը, իսկ հետևությունները ուղղվում են որդուն: Այդ «դասերից» շատերը հայտնություններ են Հարութի համար, որը միշտ մտածել է հոր մասին կարեկցական վերապահությամբ (որքան քիչ բան գիտի հայրը աշխարհից): «Հավերժական կարոտի ու հավիտենական պարտության ու կորստի տեր», ողջ աշխարհի կողմից մերժված ժողովրդի անցած ճանապարհների խտացումն է այն, որ այդ դրամատիկ պահերին հնչում է համամարդկային ցավ ու կորստի հնչերանգներով: «Պարան-պարան» հուշի ծվեցներից ամբողջանում են խլված հայրենիքի ու նրա մարդկայնության պատկերները՝ անպայման առնչվելով ազգային արժանապատվության ու մարդկայնության բարձր խորհուրդներին: Գալշոյանը ցույց է տալիս, որ Միրոն մինչև վերջ հավատում է արդարության հաղթանակին՝ «երգիր» վերադարձին: Նախկին ոգեշնչումով նա փորձում է հաշտվել նաև պատերազմի փաստի հետ՝ այն դիտելով որպես էրգիր դառնալու հնարավորություն: «Հողի կորուստ անդարձ կորուստ չէ,- Ձորի Միրոն հավատաց իր ասածին և մտքում նորից տարավ-բերեց,-գերմանացին կրպարավի. անարդար գործ միշտ է տապալվե, էս կովի հաղթող Սովետն է: Սովետն է, ու բարով-խերով մեր էրգրի ճամփեն կբացվի»:<sup>11</sup>

Վերստին հանգչում է Միրոյի դողահար լեզվակով մավթաճրագը, և ճժանչի նոր հույսով ու հավատով նա սերնդագործում է երրորդ Հարութին:

Գրողն անկարող է թաքցնել ողբերգական հնչերանգը. սերունդների միջև գնալով խորանում է անդունդը՝ ավելի խորընկա, քան Միրոյի տան քիկունքի ձորն է: Այլևս չկա այն սերտ փոխըմբռնումը, որ որդիներին թույլ էր տալիս կռահելու հայրերի նաև չասածը: Ուր է Առաքելի լուսավոր հավատն ու համոզումը: Գալշոյանի հերոսը լավատես չէ. սերունդների նահանջը ակներև է: Այդ նահանջն արտահայտվում է ոչ միայն գյուղը թողնել հեռանալու, այլև օրավոր խաթարվող ու աղավաղվող հոգեբանության մեջ: «Կետոճեր էին սկսվում իրենից, գնում դեպի հայրը, չէին հասնում՝ թափվում էին ձորը:

Կետոճեր էին սկսվում Մարինեից, գնում դեպի մայրը, չէին հասնում՝ թափվում էին ձորը:

Իսկ ձորի հատակում բոլոր կետոճերը խառնվում էին իրար և դառնում մի պտղունց հող»:<sup>12</sup>

Սերունդների օտարումն ու խորթացումը, հատվող ու խզվող «կետոճերի» փաստը դրամատիկ, բայց հաստատված իրողություն է արդեն թե՛ Մ. Գալշոյանի, թե՛ Ս. Միմոնյանի երկերում: «Հայրս» նովելաշարում Ս.Միմոնյանը գրում է. «Այս աշխարհը

10 Մ. Գալշոյան, Ձորի Միրոն, Եր., 1983, էջ 26:

11 Նույն տեղում, էջ 69:

12 Նույն տեղում, էջ 93:



մնան է անդնդախոր ձորի մը, որուն մեկ կողմը հավաքված են միայն Սասունցիներ, իսկ մյուս կողմը՝ երկրի մնացյալ մարդիկ»:<sup>13</sup> Մինչդեռ, ընդամենը մի տասնամյակ անաջ, Քոչարի հերոսը՝ Առաքելը, համոզված էր, թե նոր սերունդը դեռ գիտակցելու է կոռուստների ահեղությունը, թե շարունակվելու և անքակտելի է դառնալու սերունդների կապը: Իսկ չէ՞ որ մարդը բարի, ուժեղ ու կատարյալ դառնում է լոկ տան ու հողի, ժողովրդի կյանքի հետ ունեցած կապով ու միասնությամբ: Հարկավոր է պահել-պահպանել հայրերի հոգևոր ժառանգությունը, քանի որ նրա հետ ու նրա միջոցով է ապրում ու հարատևում ազգն ու ժողովուրդը:

Մ. Գալշոյանն օժտված է առանձնահատուկ պոետական մտածողությամբ, որի ավիշը խորապես յուրացված ժողովրդական բառարվեստն էր: Գերազանց իմանալով այն միջավայրը, որի մասին գրում էր, նա ոչ մի ճիգ ու ջանք չի գործադրում գեղեցկախոսելու. պարզապես աշխատում է հավատարիմ մնալ հայրերի լեզվամտածողությանը: «Ձորի Միրոն» ծայրից ծայր պահպանում է այդ լեզվամտածողությունը, մի հազվագյուտ իրողություն մույնիսկ ասքապատում արձակում: Վիպակում օգտագործվում է ներքին մենախոսության հնարքը, որ հոգեբանական զուգորդությունների շնորհիվ մեզ հաճախ տեղափոխում է Երկիր: Վերջինս Միրոնի բոլոր մտորումների հանգրվանն է, մի տեսակ հանգուցակետը, որի մասին Գալշոյանը գրում է. «Ձորի Միրոն թողեց՝ նրեն Երկիր գնաց...» (էջ 15), կամ՝ «Թափառում է իր ջահել օրերի հետ»: Ասենք՝ սայրապան Արոն դժգոհում է անձրևների սակավությունից, Միրոն մտովի նորից Երկրում է՝ «Էրգիր անձրև առատ էր» (էջ 7), ու կրկին արթնանում են հուշերը, նշանավոր տոհմիկ գերդաստանն իր նահապետով՝ Հարութ պապով: ...Հանդիպում է հովիվ Ավգիին, դարձյալ «Էրգրի չորան Ավեն» է մտքում: Ըստ էության՝ նա դեռ Երկրինն է, իսկ իր շուրջ տեղի ունեցողը անհարազատ է ու ժամանակավոր: Այստեղից էլ՝ նրա ապրած ամենօրյա դրաման, որը նրան դարձնում է խորապես ողբերգական անձնավորություն: Ակամա հիշում ենք Չ.Այթմաթովի «Կառափնարան» վեպի տողերը. «Պատմական համաժամանակայնությունը, երբ մարդ ընդունակ է ապրել մտովի միանգամից մի քանի ժամանակային մարմնավորումներով՝ երբեմն բաժանված հարյուրամյակներով ու հազարամյակներով, այս կամ այն չափով հատուկ է ամեն մի մարդու, որը գուրկ չէ երևակայությունից: Բայց նա, ում համար անցյալի իրադարձությունները մույնքան մոտ են, որքան այսօրվա իրականությունը, նա, ով անցածը վերապրում է, ինչպես իր այրյունը, իր ճակատագիրը, նա մարտիրոս է, ողբերգական անձնավորություն, քանզի նախօրոք իմանալով, թե ինչպես է վերջացել այս կամ այն պատմությունը, միևնույն է, նա տառապում է՝ անգոր ազդելու իրադարձությունների ընթացքի վրա և իրեն զոհաբերում է ի սեր այն արդարության, որը երբեք չի կայանալու»:<sup>14</sup>

Հայրենիքը միայն հափշտակվում է, բայց չի մոռացվում: Հայի սրտում մխում է անշիջելի կարոտի կրակը, այրում ու թովում անվանագործ դարձած Երկրի ու ծննդավայրի համար: Արդյունքում՝ կրկնակի կյանքի դատապարտված սերունդներ, որոնց հիշողությունը շարունակում է «ողջ ու կենդանի» կախված թռչնի պես անվերջ թափրտալ...

Գալշոյանի վիպական պատումներում իշխում էին առասպելն ու լեգենդը, մինչդեռ Գալշոյանի վիպակում իրականությունն է՝ անհավատալի չափով պարզ, բայց բանաստեղծական, որն արդյունք է աշխարհի յուրահատուկ քնարական տեսողության: Բնության նկարագրություններ են դրանք թե հոգեկան տարատեսակ ապրումներ, անչափ ինքնատիպ են, հայտնություններով լի: Վիպակում երևան է գալիս նաև Գալշոյանին բնորոշ հոմանիշային մտածողությունը, որի ակունքը ժողովրդական բանարվեստն է. գրականի կողքին նա բերում է բազմաթիվ երկրաբույր բառաձևեր, համեմատություններ՝ ըստ սաստկացող գործողության կամ հատկանիշի:

Առանձնահատուկ մի աշխարհ է նաև Գալշոյանի նովելապատումը՝ «Մարութա սարի ամպերը» (1980): Գրքի համար նախերգանքի, առաջատար, իշխող մտովի դեր է կատարում «Էս հին ու նոր օրեր» մուտք – ներդիրը: Այս, ինչպես նաև մյուս նովելներում ժամանակը յուրահատուկ հազեցած միավոր է, որը միշտ հանդես է գալիս իբրև

<sup>13</sup> Մ. Սիմոնյան, Հայրս, Լեռ և ճակատագիր, Պեյրութ, 1972, էջ 173:

<sup>14</sup> Կ. Այթմաթով, Плаха. Новый мир, 1986, ном. 8, стр.119.

ներկա, բայց անցյալի պարտադիր արձագանքներով: Իննսունամյա պապի համար վաղուց ի վեր միաձուլվել են «հին ու նոր օրերը», իսկ ինքը, տարիքն առաջանալու հետ, այլևս «չի վերադառնում» «Էրզրից»: Մեկ այլ՝ «Տարեմուտին» անավարտ վեպում գրելու էր իր հոր մասին. «...Հին ու նոր օրերը իրար խառնած, ժամանակի մեջ ճոճանակի պես տարուբեր, իր տեղն ու տարիքը կորցրած»:<sup>15</sup>

Այս շարքի բոլոր «ճամփորդների» (հեղինակի բնորոշումն է անցնող սերնդին) ընդհանրական դիմանկարն է՝ խաղաղության ու աշխարհի կարոտով, աչքը հեռու Մարտիկին:

Գրքի նովելները իրենց ներքին լարվածությամբ ու ավարտվածությամբ մի-մի դրամաներ են և վիպում են ցնցող արհավիրք անցած մարդկանց կյանքի վերջին էջերը: Միասնական է ասքի ներքին թեման, գործողության վայրը, որը պայմանականորեն գրողն անվանում է Քարագյուխ: Իրենք՝ հերոսները, ներկայանում են միմյանց հետ սերտ կապերով ու ազգակցությամբ՝ ոչ այնքան արյան, որքան՝ նկարագրի ու հոգու դրվածքի իմաստով: Շարքը շարունակում է ֆիդայիների մոտիվը, որը մերթ իրական ու շոշափելի անցյալի գոյամարտերն են, մերթ էլ՝ ժամանակակից ենթատեքստով, անաղարտ ապրելու, ազգային ակունքներից չկտրվելու, չարի դեմ պայքարելու մոտիվներն են, որ անցնում են պատմվածքից պատմվածք՝ «Ով գարկվի, դավաճան է» կենսական սկզբունքով: Այդ ծեղումներն իրենց հոգիներում միացող անկատար կամ թերատար երազներ ունեն, որ ջանում են իրականացնել՝ թեկուզև մնացած կյանքի գնով: Նովելները միասնական են նաև կառուցվածքով. որպես կանոն՝ հերոսի հոգեկան բարդ կնճռույթը պարզվում, զուլավում է. անսպասելիորեն «գտնվում է» ելքը՝ ազատվելու տանջալի մտասևեռումից, և նա մեռնում է պայծառ, խաղաղված, աշխարհի հետ այլևս հաշտ ու ներդաշնակ: «Էրզրիք» նրանց համար ամեն ինչի չափանիշն է՝ կեցության պայմանների թե բարոյական սկզբունքների՝ առաջին հերթին, դրա համար էլ, անհաշտ ու հետևողական, նրանք գրեթե չեն փոխվում, և դրա մեջ է նրանց ներքին ուժը:

Ահա «խոշորկեկ», «թավամազ» Չորոն, որը հիսունհինգ տարի անց գտնում է պառավ Ալեին, որին սիրել է «Էրզրի» մոտ «կապույտ ու փափուկ առավոտ», որը, սակայն, այժմ ուրիշի ծուխ է ծխացնում («Կանչը»):

Հնչում է աշխարհից դառնացած ծեղումն ու ջերմ աղոթք-կանչը՝ իր «Էրզրին», սիրուն, կորցրած կյանքին: Ի վերջո, նա վճռում է Ալեին համոզել բերել իր հին քողտիկը և գոնե կյանքի վերջում ապրել երջանիկ:

«Քեռի Թորոսը» նովելի հերոսը նույնպես ավելի՝ անցյալինն է, քան ներկայինը և մահից առաջ իրեն հասանելի միջոցներով փորձում է իրագործել այն, ինչ որ մշտական ցավի աղբյուր է եղել իր համար, մեխի պես ցցվել է իր սրտում տարիներ ու տարիներ: Խորացող անբուժելի հիվանդության ու տկարության ընթացքում նա բնագործն կապ է տեսնում կոկորդում ճյուղավորվող քաղցկեղի և դավադիր ժայտով ու անհաշիվ սև մագիկներով հին ոսոխի՝ Մեհմետ բեյի միջև: Հուսահատ մի պահի նա «գտնում է» ելքը, լավ հեսանված դաշույնով վերջ է տալիս նեղ թշնամուն՝ չթողնելով, որ նա խեղդի թեռի Թորոսին ու մնա անպատիժ: Մինչև վերջ մնալով ազատության զինվոր ու ֆիդայի՝ նա ինքնասպանություն է գործում. «Քեռի Թորոսը մեռնելու չէր գնում, այլ գնում էր կրքովի»:<sup>16</sup> Նույնպիսի կերպար է Դավոն՝ անխտոր ու շիտակ, միշտ իր ակունքներին հավատարիմ («Դավոն»): Հոգեվարքի դրամատիկ պահին, թիկունքը հողե հատակին տված՝ իր վերջին ժամերն է ապրում «Մարութա վանքում խաչի փոխարեն սուրը համբուրած» տալվորիկցի Դավոն: Այժմ նա այնքան հեռու է յուրայիններից ու տարեկիցներից. վերջապես ազատագրված՝ նա սուրում է դեպի թշնամու դիրքերը, դեպի «հեռու լեռների վրա փշոված արևը»՝ գոնե հիմա միանալու նվիրական երազին:

«Ծովասարցի Օհանը» նովելում հերոսին քաշում հրապուրում է հեռու Երկրից հնչող, վաղուց սպանված հոր ձայնը: Անթեղված կարոտն արտահայտություն է գտնում երազներում՝ արդեն քանի ու քանի անգամ: Ունկնդիր սրտի ձայնին՝ նա հրաժեշտ է տալիս ծանոթ ու անծանոթ ննջեցյալներին և պատրաստվում է գնալ Ծովասար՝ բնական ու հարգելի համարելով իր ցանկությունը. «Շիփշիտակ կգնա հենց սահմանա-

<sup>15</sup> Մ. Գ ա լ շ յ ա ն, *Չորի Միրոն, Եր., 1983, էջ 450:*

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 196:

պահների հրամանատարի մոտ, կբացատրի, կպարզի իր միտքը, և հենց հրամանատարը ուղեկից կլինի՝ կբռնի Օհանի թևից, Արաքսը կանցկացնի այն կողմ, թուրքին կհրամայի՝ թող էս հալտըրը գնա Ծովասարը տեսնի ու ետ գա»։<sup>17</sup>

«Էրզրի է կերթան» կրկնելով՝ նա ուրախ-ուրախ ու գոտեպինդ նստում է «Շտապ-օգնության» մեքենան՝ կարծելով, թե իսկապես Երկիր է գնում: Ակամա հիշում էս Գ. Սրվանձոյանցի տողերը. «Արդարև ժողովրդյան մը ու ազգի մը կյանքը հոգեկան կապեր ունի իր ծնած հողին ու արևին հետ, իր հորն ու մոր գերեզմանին հետ, գետին և արտին հետ... Դիտված է արդյոք, երբ մեկը առաջին անգամ իր ծնած տեղեն պանդխտության դիմն ուր որ լինի, զնացած տեղը հիվանդություն մը կունենա, և չբացատրվիր թե ո՞ր տեղը կը ցավի... Ու՞ր կը մնա հապա գաղթականությունը, որ ըսել է՝ անդարձ պանդխտությունը»։<sup>18</sup>

Խաչիկ Դաշտենցի մասին իր նշանավոր հոդվածում Գալշոյանը վավերացնում էր մի կարևոր պահ, խորաքափանցորեն առանձնացնում մի օրինաչափություն՝ ֆիդայությունն իբրև կեցության բարձրագույն սկզբունք առհասարակ: «Ֆիդայությունն սպրեելու սկզբունք էր: «Ռանչպարների կանչը» «նամակով» սա է մեզ ասում Խաչիկ Դաշտենցը: «Կհաղթես թե կպարտվես՝ չարի դեմ չարանալը առաքելություն է, կգտնես, թե ոչ՝ հայրենիքի երջանկության ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է»։<sup>19</sup>

Այդպիսին է դաշտապահ Մոսեսն, որը պաշտպան է կանգնում մինչև իսկ վիրավոր քարին (Դաշտապահը): Գալշոյանի բոլոր հերոսներն չարի դեմ մինչև վերջ ծառայող ֆիդայիներ են, որ աշխատում են կրոստերներին, հատկապես իրենց անվանակիր թռնիկներին փոխանցել «էրզրի» ավանդներն ու հոգևոր մասունքները: Նրանցով էլ «ասլում է» Երկիրը և կանգուն է դեռ նրանց շնորհիվ: Այս իմաստով հոգեբանական խորունկ ընդհանրացում է «Ներսեն»: Սկզբում, ընդդիմախոսելու ցանկությունից մղված, հաշվաչին աշխատող Ներսեն գնում է շրջկոտայի նախագահ Վիրաբ Եզորիչի ծննդյան տոնակատարությանը: Սակայն խնջույքի մթնոլորտն աստիճանաբար իր մեջ է առնում նաև նրան, մանավանդ, որ դիմացի նկարը հիշեցնում էր Մասնո Հազվե քաղաքի հայրենակցունիուն՝ պ. Կարապետի տիկին Արմենուհուն: Իր և բողոքի համար անսպասելի՝ նա Վիրաբ Եզորիչին բնորոշում է իբրև «արդար», «հայրենասեր մարդ» (ի միջի այլոց, այս բառերով է աստունցին բնորոշում մարդու բարոյական մեծությունը): Տանը, սթափվելով, նա հիշում է իր բաժակաճառը և կեսգիշերին վերադառնում է շրջկենտրոն՝ չսպասելով, որ սուտ ու կեղծ խոսքի վրա առավոտ բացվի:

«Մարութա սարի ամպերի» բնակիչներին վիճակված է ծանր ու տառապալից կյանք, նորանոր վտանգների ու աղետների մշտական նախազգացում: Ցնցող հոգեբանական պատկեր է «Աղորիքը»: Հերոսը՝ Խալեն, այնքան չար ու փորձանք է տեսել, որ հաղթանակի տարվա առատ բերքը, որի հետ այնքան շատ հույսեր է կապում («Ազնուն բոբիկ ու չըփախ»), «հարսնուկ բոբիկ» ...), նրան թվում է վտանգված: Քանդելով պատաշարը՝ անօրինակ տանջանքներով նա պարսպում է ամբարը հսկա քարերով: «Իսկ երկնքում գոնե աղավնաթև ամպ չկար...»։<sup>20</sup>

Վերադարձի հույսը չի խամրում նրանց մեջ, դրա համար էլ հաճախ տասնչորս-տասնհինգ տարի հետո էլ նրանք անկարող են մտապահել նոր վայրերի անունները (Թաթն): Իսկ եթե երբեմն հանդիպում են «հին ծանոթների», ապա էլ ավելի անտանելի է բաժանումը նրանցից (Գինարը ծաղիկը): Մանավանդ ծանր է այն մարդու վիճակը, ով համարձակվում է խտորվել ֆիդայական կենսակերպից ու չգրված օրենքներից. նա մնում է առանց հույս ու երազի, ինչպես «Միայնակ ծառը» նովելի հերոս Հազրուն: Կտրելով «դժվար ասլուած» միայնակ ծառը, որ հովանավորված էր միայն արեգակով, նա խաթարվում է բարոյապես, «կորցնում» իր ամրապինդ տեղն աշխարհում:

Գրողն ստեղծում է մի մեծ ասք՝ աշխարհը մաքրող ու մի ամբողջ աշխարհ արարող սերնդի մասին, որի յուրաքանչյուր անդամի մահի մեջ բազում մահեր կան ու անէացող աշխարհներ՝ լեզու, աղաթներ...

<sup>17</sup> Մ. Գալշոյան, *Չորի Միրուն*, Եր., 1983, էջ 223:

<sup>18</sup> Գ. Սրվանձոյան, *Երկեր*, Հ. 2, Եր., 1982, էջ 333:

<sup>19</sup> Խ. Դաշտենց, *Ռանչպարների կանչը*, Եր., 1984, էջ 529:

<sup>20</sup> Մ. Գալշոյան, *Չորի Միրուն*, Եր., 1983, էջ 259:

Մեծագույն ցավի ու կորստի, անտարբեր աշխարհի անտեղյակության դեմ բողոքի հնչեցումներով է պոռթկում «Մեղապարտը» պատմվածքը, որի հերոսը՝ Տիգրանը, անավի հուսահատությամբ հաղորդում է փակ ու արգելքի տակ դրված տառապանքի անտանելի ծանրությունը: «Ի՞նչ պահանջ էր, թե՛ մենք ու մեր ցավն քաժանվենք-հեռանանք իրարից ու անտեր թողնենք մեր խեղճ ու անտեր ցավն: Դուռն ու երդիկն ինչու՞ կողպեցին ցավի վրա...»:<sup>21</sup>

«Մամփրե արքան» շարքն ավարտող նովելն է, ինչ-որ չափով ծրագրային, քանի որ հեղինակի աչքին Մաշտոցի հորինած գրերը «գեղեցկադեմ, մաքուր, զուլալ և արի զինվորներ են», «արդարության, ճշարտության համար կռվող զինվորներ», «գեղեցիկն ու բարին պաշտպանող զինվորներ», - այսպես էր գիտակցում Գալշոյանը հայ գրողի իր մեծ առաքելությունը:

...Կյանքի վերջին օրերին ծերունի Մամփրեն վճռում է գրել-կարդալ սովորել ու հանկարծ հասկանում է, որ անսպասելիորեն, հայոց գրերի շնորհիվ, գորեղ դաշնակից է ձեռք բերել վաղեմի թշնամու՝ իր երագը խլած, նույնիսկ գյուղի ու նրա աղբյուրի անունը փոխած Օսմանի որդի Օսմանի նկատմամբ: Հայոց գրերը՝ արդար արեգակի ջերմությամբ թրծված ու սուրբ Մաշտոցի սրտի արյունից բխած, հարկ է, որ անարատ մնան ու ազգին ծառայեն ասպետորեն վսեմ: Իր առաջին ու վերջին գրով ծերունին պատգամում է ճշարտությունը Մեհրեաղբյուրի մասին:

«Մարութա սարի ամպերը» գիրքը իր առանձնակի ծուխն ունեցավ վերջին տարիների հայկական արձակում: Կրկին ապացուցվեց այն պարզ ճշարտությունը, թե միջավայրի ու մարդկանց լուրջ ճանաչողությամբ, նրանց հոգեկան աշխարհի վարպետ քափանցումներով միայն կարելի է հասնել հաջողության: Գերագանց իմանալով իր հերոսների աշխարհը՝ Գալշոյանը ձգտում է առաջին հերթին մտքի առավել ճշգրիտ, տարողունակ արտահայտության: Բնորոշ է նաև իր հերոսների ռոմանտիկական իդեալականացման սկզբունքը, որը գործում է առանց բացառության, ամբողջ գրքում: Կերպարները կոլորիտային են, հոգեբանորեն համոզիչ: Օրինակ՝ խոսելով հաշվային աշխատող Ներսեսի մասին, նրան ներկայացնում է իբրև ծանրաբարո, բծախնդիր մի մարդ, որը շարունակում է գրել որբանոցում սովորած «ճոթավոր» գրերով և որը ազատ ժամանակ սովորաբար կարդում է հայոց պատմություն...

Ուղղակի հրաշալի է հայկական գրերի ժողովրդական մեկնաբանությունը («Մամփրե արքա»):

Անուրանալի է ասքապատում արձակի դերն ու նշանակությունը, որտեղ առաջնային են ոչ այնքան տեքստային-բանահյուսական ուղղակի մերձեցումները, որքան ժողովրդական կեցության ու մտածողության հենց հիմքերի վերլուծությունը: Մյուս կողմից՝ Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպից սկսած՝ վերջնականապես հաստատվեց մի նոր հուն մեր արձակում, որը գնալով ճյուղավորվում է՝ բերելով ժողովրդի հերոսական մաքառումների նոր շրջանի պատմությունը՝ ազգային հերոսներով ու նրանց անձնուրաց պայքարով:

## ХУДОЖЕСТВЕННЫЕ ОТЗВУКИ ГЕНОЦИДА В ПРОЗАХ Г. КОЧАРА И М. ГАЛШОЯНА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. АКОПЯН \_\_\_

В армянской литературе связь с традициями народного творчества всегда являлась самой сильной и ведущей тенденцией, в русле которой раскрывались первоосновы народного бытия и бессмертия как в прошлом, так и в настоящем. Художественная проза Г. Кочара, а также М. Галшояна 60-80-х годов, тесно соприкасаясь с художественными традициями А. Бакунца, в простых и ясных, близких народу интонациях рассказывает свои “маленькие трагедии”. Проза обоих писателей, со свойственными им отлич-

<sup>21</sup> Մ. Գ. ա լ շ ը յ ա ն, Չորի Միրոն, Եր., 1983, էջ 355:

иями, проста, непосредственна, внутренне насыщена, богата подтекстом и тонкими стилистическими нюансами.

Г. Кочар в сборнике “Белая книга” (1965) создал неповторимый художественный мир, где люди действуют в роковых переломных ситуациях истории, и приходит к обобщениям общенационального значения. В повестях “Ностальгия”, “Наапет” воссоздан в миниатюре целый мир, оставшийся по ту сторону Араза. Удивительно проникновение Кочара в психологию целого поколения людей, у которых естественные повуждения тоски и ностальгии сталкиваются с законом. В повести М. Галсояна “Миро из Дзора” (1968) и сборнике новелл “Тучи горы Марута” (1980) также поднимаются животрепещущие проблемы человеческой личности, ее психической готовности воспринять политические и государственные катаклизмы. Овоих авторов объединяет то, что в их произведениях высвечиваются все оттенки и нюансы психологии национальной жизни в их конкретности и всеобщности. В данном случае им исследуются последствия геноцида, породившие устойчивые синдромы, непосредственно отражающиеся и на личном поведении людей и на жизни общества в целом. Пристрастие писателей к малым формам прозы не размывает в их творчестве углубленного, историко-философского осмысления явлений, их объективных переоценок.

ՍԻՐՈ ԱՌԵՂԾՎԱԾԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ «ԿԻՆՐ» ՎԻՊԱԿՈՒՄ

1912 թվականին Լևոն Շանթը գրում է «Կինը» խորագրով վիպակը: Հաջորդելով «Հին աստվածներ»-ին՝ «Կինը» լույս է տեսնում նրա հարուցած աղմուկի մեջ և գնահատանքի չի արժանանում: Մակայն այդ հանգամանքն ամենևին չի նսեմացրել վիպակի արժանիքը: Քննադատների մի մասը «Կինը» համարել է Շանթի լավագույն արձակ գործը,<sup>1</sup> որակել այն իբրև «ծաղիկ մը սեփական բուրմունքով ու թարմությամբ»,<sup>2</sup> իսկ Գ. Շահինյանն այն բնորոշել է որպես հեղինակի «հասունության վկայական»:<sup>3</sup> Վիճելի է Գ. Իփեկյանի մտտեցումը, ըստ որի «Կինը» և «Հոգիները ծարավի»-ն «ուշինչ նոր բան» չեն ավելացրել Շանթի վիպագրական վաստակին:<sup>4</sup>

«Կինը» յուրատիպ գործ է Շանթի ողջ ստեղծագործական աշխատանոցում: Գաղափարական բովանդակությամբ, հետապնդած գեղագիտական խնդիրներով այս կերտվածքն առանձնանում է արձակի մյուս նմուշներից:

Խորհրդանշական է վիպակի վերնագիրը՝ «Կինը»: Այն հեղինակի՝ կանացիության ըմբռնումի խտացումն է: Մերը և դրա լույսի ներքո կնոջ ներաշխարհի բացահայտումն իրենց գեղեցիկ արտահայտությունն են գտել Շանթի ամենատարբեր ստեղծագործություններում: Կնոջ դերի ու նշանակության հարցն արծարծվել է դեռևս նախորդ երկերում («Վերժին», «Իարձ», «Հին աստվածներ»), սակայն մինչ «Կինը» դա մի տեսակ տարերային բնույթ էր կրում և այնպես բացորոշ չէր արտահայտված: Շանթի այս երկը գրեթե ամբողջությամբ նվիրված է կնոջ առեղծվածի քննությանը: Այն ըստ էության կանացի հոգու պեղումն է, կին էակի ապրումների ներաշխարհի լուսաբանումը: «Կինը» վիպակում գրողն արտահայտել է այն, ինչ ակնկալում էր իր կոչումին ու դերին գիտակից կնոջից: Շանթի իդեալ-կինը առողջ դատող, աշխատանքի պաշտամունք ունեցող, զբասիրտ, անձնագոհ բնավորություն է: Իսկական կինը պետք է լինի այդ մարդու կամքը խթանող ազդակն ու գործակիցը, նպաստի իր սիրեցյալի ստեղծագործ աշխատանքին, մղի նրան գեղեցկություններ որոնելու ու ստեղծելու: Մինչ «Կինը» Շանթը ներկայացնում էր իդեալ սերը: Այստեղ նա իրապաշտ վերլուծումի փորձ է կատարում և պատկերում է կնոջը՝ որպես խորհրդանշիչ սիրո, ներշնչման ու գաղափարի:

«Կինը» վիպակում հեղինակն արտացոլել է նյութականի ու հոգևորի, իրականի ու իդեալականի, մարմնականի ու ռոմանտիկականի պայքարը և ցուցահանել է «հավերժական գեղեցիկի» իր իդեալը: Չուգահեռ անցկացնելով կյանքի ու արվեստի միջև՝ նա ակնբախ պարզել է իր կայուն դիրքորոշումը, ըստ որի արվեստն ավելի բարձր է ու մնայուն, քան իրականությունը: Էականը գաղափարի, կատարյալի հաղթանակն է, որն էլ իր գեղեցիկ արտահայտությունն է գտել վիպակում:

«Կինը» Շանթի միակ երկն է, ուր գործողությունները ծավալվում են ոչ թե Պոլսի գեղածիծաղ փառանքներին կամ Կովկասի գեղատեսիլ բնության գրկում, այլ եվրոպական միջավայրում՝ Գերմանիայի Մյունխեն քաղաքում: Հերոսներն էլ օտարազգի են. Մարգրիտը ֆիննուհի է, Մաքսը՝ գերմանացի, միայն Սուրենն է հայ, այն էլ կրում է գերմանական դաստիարակության կնիքը և պատկերված է ոչ թե ընդգծված ազգային հատկանիշներով, այլ որպես մարդ, որպես արվեստագետ:

Հեղինակի վկայությամբ՝ վիպակի նյութը վերցված է իր ուսանողական հուշերից: Հուշագրական հենքը բնորոշ է Շանթի գրեթե բոլոր արձակ պատումներին, սակայն եթե նախորդ երկերում գրողը վերարտադրում էր ժամանակային առումով երկի գրությանն անմիջապես նախորդող իրադարձությունները, ապա այստեղ դեպքերի կա-

<sup>1</sup> Գ. Բ ա ն յ ա ն, Լևոն Շանթ, «Հայրենիք», հ.1, 1952, էջ 26; Էդ. Ջրբաշյան, Հայ հասարակական կյանքը, մշակույթը և գրականությունը 20-րդ դարի սկզբին, Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Եր., 1979, էջ 125:

<sup>2</sup> Գ. Մ յ ի թ ա ռ յ ա ն, Քառորդ դար գրականություն, էջ 193:

<sup>3</sup> Գ. Շ ա հ ի ն յ ա ն, Չյուններն ի վեր, Բեյրութ, 1967, էջ 126:

<sup>4</sup> Գ. Ի փ է կ յ ա ն, Շանթի գրական վաստակը, «Ակոս», 1952, հ. 2-3, էջ 48:

տարման և երկի ստեղծման ժամանակաշրջանը մոտ մեկ տասնամյակ բաժանում է իրարից (Շանթը Մյունխենում ուսանել է 1897-98 թթ.):

Հեղինակը կարևորել է հերոսների ներաշխարհների պատկերումը: Նախնական բնութագրությունն անգամ, որին սակավ է դիմում Շանթը, նպատակաուղղված է հոգեվոր մաքառումների բացահայտմանը: «Կինը» հոգեբանական վիպակ է: Հետաքրքրական անցումներով գրողը ցուցահանել է սակավաթիվ հերոսների ներքին էությունները:

Վիպակի կերպարները հակառույտ խառնվածքի տեր մարդիկ են: Հայացքներից ու բարոյական ըմբռումներից բացի հակադիր է ներկայացված նաև հոգեբանական զարգացումը՝ Սուրենը գնում է դեպի իդեալականը, Մտեկնը, ընդհակառակը, զաղափարապաշտությունից անցնում է մարմնականության: Ընթերցողը Սուրենի հետ ծանոթանում է այն ժամանակ, երբ նա հոգևոր ճգնաժամի շրջան է ապրում: Ի տարբերություն նախորդ վիպակների հերոսների, Սուրենը որոշ կենսափորձ ունի: Ծիշտ է, իր եղբայրակիցների մեծ, նա մույնպես իդեալիստ է, սակայն ավելի սթափ հայացքով է նայում իրականությանը: Երեսուներես նկարչիկ պարուրել են անհուսությունն ու հռետտեսությունը, նրան համակել է պարասյի զգացումը: Աշխատանքից ձեռնհաս, ստեղծագործելու բերկրանքը կորցրած երիտասարդ արվեստագետն անձնատուր է եղել անքուն գիշերների ու օրգիաների և, զվարճություններից հարփած, ուրույն հայացք է կազմել կյանքի ու մարդու մասին: Ամեն ինչ իմաստագրելով է Սուրենի աչքին: Նա անխտիր բացասում է բարոյական ու գեղարվեստական արժեքները, մարդկային զգացմունքներն ու սրբությունները: Կար ժամանակ, երբ ինքն էլ պաշտում էր արվեստը, սակայն հիմա դա միայն անմիտ նախապաշարմունք ու ցնորք է թվում: Այլևս կորուսյալ անցյալ են հոգու թռիչքն ու քրմական հափշտակվածությունն արվեստի խորախորհուրդ հմայքներով. նա հրաժարվել է բոլոր կարգի պաշտամունքներից ու կյանքի հրապույրներից: Նրա կարծիքով, կյանքն իմաստավորող ամեն բան դատապարտված է կործանման. ճշմարիտը, իրականը ձանձրույթն է միայն, միակ կուռքը, որին արժե երկրպագել: Սուրենը «Հին աստվածներից» ծանոթ ունայնապաշտի հեզմանքով է վերաբերվում իրականությանը և ինքնախաբեությանը արժեքավորում է միայն մարդու կենդանական գոյությունը, ուժն ու ֆիզիկական հաճույքները: Մարդիկ նրա համար փոքրություն են, բանականությանը օժտված կենդանիներ՝ էգեր ու արուներ: Կյանքը դատարկ է ու ձանձրալի, մարդը ծիծաղելի է, երբ կարծում է, թե ինքը թռիչք ունի, իրականում նա լոկ «գետնամած մի անասուն» է: Գիտությունը, աշխատանքը, արվեստն ու ստեղծագործությունը՝ այն ամենը, որոնց առջև մարդը խոնարհվում է, գռեհիկ են ու ուղորմելի: Մերն ինքնախաբեություն է, կոպիտ ու տափակ բնագո, կինն իր «կաշուն զգացումներով ու թռչունի խելքով» ամենամեծ ունայնատությունը: Սուրենի այսօրինակ բոլոր դատողություններն ու կարծիքներն, ի վերջո, եզրափակում է «կեցցե՜ անասունը» ցինիկ լռումով:

Այս հոգեվիճակով ու աշխարհընկալումով էլ Սուրենը հանդիպում է օրիորդ Մտեկին: Ֆիննուհու անակնկալ հայտնությունը զարմացնում է կյանքի բազմատեսակ վայելքները ճաշակած երիտասարդին: Վերջինս անսովոր զգացում է ապրում: Օրիորդը լիովին տարբեր էր իր ճանաչած կանանցից: Իր անբասիր շարժումով, վճռական դիմագծերով ու հպարտ հայացքով նա առաջին իսկ հանդիպումից պատկառանք է ներշնչում Սուրենին, նրա աչքին ներկայանում որպես բացառիկ, անմատչելի մի էակ: Երիտասարդ նկարիչը հմայվում է Մարգրիտի հոգու գեղեցկությանը: Մտեկնի երևումով կնոջ վերաբերյալ ունեցած հայացքները բոլորովին այլ գունավորում են ստանում: Կինն ու կանացին նոր գծերով են ներկայանում, և նա ճանաչում է կնոջ իսկական արժեքը: Մինչ այդ կինը Սուրենի համար միայն բավականությունների աղբյուր էր եղել՝ «սիրուհի-տարփուհի»: Այժմ հառնում է զգայական հաճույքներից օտարված կինը՝ իր բարձր ու առաքինի էությանը:

Սովորության համաձայն, Սուրենը տիրելու ու խորտակելու մոլուցքով է մոտենում Մարգրիտին: «Ես կսիրեմ քաղաքը հարձակումով վերցնեմ»<sup>5</sup>, -ասում է նա: Սակայն Մտեկնի համար անընդունելի է Սուրենի տիրական պահվածքը: Նա զգում է, որ տղայի դատողությունները «սովորովի են», ժամանակավոր բնույթ են կրում և անհա-

<sup>5</sup> Լևոն Շանթ, *Երկեր*, Եր., 1989, էջ 326:

րիք են նրա իսկական էությանը. Սուրենն իրականում այնպիսին չէ, որպիսին ներկայանում է: Օրիորդը ջանում է դուրս բերել նրան հոգևոր ճգնաժամից, ձերբազատել պարտաճանաչ հիասթափությունից, սակայն նրա միջամտությունը զայրացնում է տղային, խոցում նրա այրական հպարտությունը: Նրան վրդովում է այն, որ «կնկան մը կտորը» առանց այլևայլության հանդգնում է խուժել «ինքն իրնով ապրող, ինքն իր մեջ փակված» իր հոգու խորքերը:

Մարգրիտի հավասարակշիռ կեցվածքն ու անսեփեթ պահվածքը հետզհետե կասեցնում են Սուրենի հաղթարշավը: Վերջինս չափավորում է իր հանդգնությունը: Նրա ցինիզմը տեղի է տալիս օրիորդի ողջամտության առջև: Սուրենն իրեն համար անծանոթ մի մղումով ձգվում է դեպի այդ «օտար հյուսիսի աղջիկը»: Նա, որ ինքնամոլոր էություն էր և սովորություն չուներ իր ներքին աշխարհի մասին ուրիշների հետ խոսելու, այժմ հանկարծ անդինադրելի հոգևոր պահանջմունք է զգում «այդ նոր տեսակի հոգիին» մոտիկ մնալու, նրան ամեն բան ասելու, իր անձնական դատումները նրա հետ կիսելու:

Խրոխտ, սևաչյա տղայի խոնարհումից Մարգրիտն այնպիսի հպարտություն է զգում: Ազդելու մեծ շնորհով օժտված օրիորդը Սուրենին հորդորում է վեր մնալ կյանքի գոեկություններից, առօրյա գորշությունից և հավատարիմ լինել հոգու անվերջ ձգտումին: Նա դրդում է տղային բացահայտելու իր հոգու հմայքները, որոնելու ու գտնելու գեղեցիկն ու վեհը. «Դուք պետք է աշխատիք... առիկա է ձեր միակ փրկությունը... Դուք պետք է միշտ վե՛ր, միշտ վե՛ր, հորիզոնե՛ հորիզոն, նոր ճիզերե՛ նորագույն ճիզեր: Ձեր հոգիին այդ անվերջ ձգտումն է ձեր ամեննե՛ մեծ գեղեցկությունը, ձեր հոգիին ամեննե՛ն աղվոր կողմը: Նկարեցե՛ք ձեր այդ ձգտումը, ձեր այդ ծարավը, ձեր խարխալումները, ձեր երազները...»<sup>6</sup>

Օրիորդն, ի վերջո, կարողանում է հոգևոր-բարոյական դարձի բերել բոլոր հետաքրքրությունները պարպած, աննպատակ գոյության մատնված երիտասարդ արվեստագետին, նրա մեջ վերստին արթնացնել արարման ոգին ու կյանքի կոչել: Մարգրիտի քաջալերիչ հորդորները փոթորկում են Սուրենի ներաշխարհը: Նկարիչը դառնորեն գիտակցում է անփոխարինելի հոգևոր էության կորուստը և տենչում է վերագրտնել իրեն երբեմն թևավորած երազները: Նա ակնածանքով է նայում բոլոր նրանց, ովքեր հավատ են տածում ապագայի, աշխատանքի ու իդեալի հանդեպ:

Հանգամանորեն պատկերելով Սուրենի հոգեվիճակն ու հոգեփոխությունները՝ հեղինակն ըստ արժանվույն կարևորում է նրա էության նոր զարթոնքը: Անցնելով ինքնաբացահայտման բովով՝ Սուրենը շրջադարձ է կատարում դեպի հոգևոր թռիչքն ու իդեալի վեհությունը: Նրա հոգում կրկին գլուխ են բարձրացնում կենսական առողջ հակումներն ու ստեղծագործական բնագործ: Երիտասարդ նկարիչը փոխակերպվում է, վերագտնում իր նախկին ոգևորությունն ու արարելու ծարավը: Անլությունը հաղթահարվում է, Սուրենը նորից համաշխարհային սկսում է ստեղծագործել: Կյանքն այլևս անխմաստ չի թվում նրան. սեփական ստեղծագործությունը գեղեցկացնում է իրականությունը. «Օրվա լույսին տակ ամեն ինչ շատ է պաղ ու տափակ. ուրիշ բան է կյանքը վատվող կրակի մը բոցերուն մեջեն: Հոս արդեն դուն ես աստվածը, մատն՝ ու ստեղծե՛ր՝ ավելի խորը ու ավելի գեղեցիկը...»<sup>7</sup>, - ասում է նա: Սուրենը ջերմությամբ է խոսում ստեղծագործական բերկրալից երկունքին նախորդող աստվածային ներշնչումի, արվեստի հմայքների մասին: Նրա ըմբռնումների մեջ դժվար չէ նկատել հեղինակի հայացքները: Սուրենը շարունակում է «Վերժինի» Էդվարդին (նույնն են մասնագիտությունը, խոր հիասթափությունից հետո արվեստին նվիրվելու հանգամանքը, դատողությունները կյանքի զանազան խնդիրների մասին):

Մարգրիտը լիովին գրավում է Սուրենին: Վերջինս իր համար բացահայտում է կնոջ մի բոլորովին նոր էություն. կինը ոչ թե իբրև մարմին, այլ որպես անզուգական ընկեր, անփոխարինելի ներշնչող ուժ: Ֆիննուսին ուրույն հմայք է հաղորդում Սուրենի կյանքին: Նա սկսում է նոր աչքերով նայել իրականությանը: Այդ հայացքն իր կատարյալ արտահայտությունը գտնում է Մարգրիտի նկարում: Երիտասարդ արվեստագետի

<sup>6</sup> *Լ և ն ն Շ ա ն թ, Երկեր, Եր., 1989, էջ 336:*

<sup>7</sup> *Նույն տեղում, էջ 335:*



գուխգործոց արարումը լույս դիմանկար չի դառնում: Անշունչ կտավի վրա Մուրենը ցանկանում է վրձնել կնոջ հոգեկան աշխարհը: Ստեկնի խոսումն աչքերի մեջ նա ամփոփում է իրեն պարուրած հույզերը, իր՝ տարիներով որոնած ու փայփայած իդեալը: Նա անասանունորեն սիրում է իր նոր ստեղծագործությունը: «Վեստալուհու» դիմանկարը ոչ այլ ինչ էր, եթե ոչ «տենչ մը դուրս գալու աշխարհայինն ու մարմնեղենն, սովորականն ու պայմանականն, որոնում մը ավելի տևական, ավելի մնայուն, ավելի արժեքավոր նոր բանի մը, բուռն կարոտ մը երազանքի ու հափշտակության»:<sup>8</sup>

Մարգրիտը նույնպես փոխակերպվում է: Անդուլ աշխատանքը, զուրթն ու անձնավիրությունը կլանել էին քսանվեցամյա բժշկուհու առօրյան: Ամբողջ կյանքը միայն մտային որոնումներով ցրած օրիորդը հանկարծ զգում է կանացի իր կոչումը: Գաղափարական էակի հոգում արթնանում է որպես կին ապրելու բնական մղումը (ինչպես մի ժամանակ «Դերասանուհու» Մինեի մոտ): Պարզվում է, որ արտաքուստ հոգևոր տարություններից ապահովագրված, անհողորդ ֆիննուհին ներքուստ փխրուն կանացի էություն է: Նա կին է, նրան խորթ չէ կանացի ոչ մի զգացում...

Հեղինակը բացահայտում է հերոսուհու ապրումները, ինքնագնմանն ու ինքնավերլուծության պահերը: Օրիորդը խռովքի մեջ է, կորցրել է հանգիստը, լրջորեն աշխատելու ունակությունը: Նրա հոգում խլրտում են երկար տարիների ընթացքում զավված կանացի ցանկությունները: Նա փորձում է գնահատել իրեն որպես կին և ցավով նշմարում է, որ իր անցած ճանապարհը միայն համառ աշխատանքն ու մաքառում է եղել. «Ապրե՞ր էր: Ո՛չ: Մորվե՞ր էր: Բարդ ու տարօրինակ մեքենա մը ինքը, սորվելու մեքենա մը»:<sup>9</sup> Ապրած կյանքը տաղտկալի է ներկայանում Մարգրիտին, և նա զոջում է անսեր կորված տարիների համար: Աշխարհիկը խուժել է այլևս նրա հոգին, և ապրելու տենչանքը, մի կողմ թողնելով ամեն պայմանականություն, գնալով ուժգնանում է նրա մոտ: Մուրենին տեսնելիս Մարգրիտի սիրտը կատաղի բաբախում է, իսկ դու-ով խոսելիս շրթունքներն այրվում են ախորժելի զգացումով: Օրիորդն անուրջների մեջ է և անհամբեր տենչում է Մուրենի զգվանքին ու խոստովանությանը: Աղջկային հպարտությունը թույլ չի տալիս նրան առաջինը քայլ անելու: Նրա հոգին փոթորկում են հակասական ապրումները: Ֆիննուհուն հատուկ են ինքնասահմանումն ու հպարտությունը, և պատահական չէ, որ Մուրենն ու Մաքսն արդարաբար վեստալուհու են նմանեցնում նրան:

Նկարն ավարտելուց հետո Մուրենը հրավիրում է Մարգրիտին իր սենյակը՝ նկարի պաշտոնական բացումին: Ստեկնի համար այդ հանդիպումը բոլորովին այլ նշանակություն ունի: Նա սրտատրոփ սպասում է «մախատոնակի» երեկոյին: Օրիորդին թվում է, թե դիմանկարի ավարտումը պատրվակ է միայն հրավերքի համար, սակայն նրա հոգու խորքում թաքուն փայփայած ակնկալիքներն իզուր են անցնում: Մուրենն այլ զգացումներ ունի: Նկարչի ոգևորությունն անասանուն է. նա գտել է իր կորցրած արժեքները և կարողացել է ստեղծել արվեստի իր իդեալը: Մարգրիտին առանձնացնելով բոլոր կանանցից՝ նա գերերկրային բնույթ է վերագրում նրան, աստվածացնում իբրև դեպի արվեստի բարձունքները տանող ուժ՝ անուշադրության մատնելով նրա հորդող կանացի զգացումները:

Ֆիննուհուն չի բավարարում Մուրենի հարգալից ակնածանքը: Նա ըմբոստանում է իր էության գերերկրային մեկնաբանության դեմ: Ոգևորողի իրեն վերապահված դերը խոցում է նրա կանացի ինքնասիրությունը: Օրիորդի կանացի էությունն ընդվզում է: Նրա համար արվեստի մուսա լինելը բավական չէ: Նա ցանկանում է ապրել որպես կին՝ սիրել ու սիրվել: Գորովի ջերմ զգացումով կերտված սեփական պատկերը տարօրինակ հույզեր է ներշնչում Մարգրիտին: Որքան էլ զարմանալի է, նա խանդում է նկարին, որովհետև Մուրենն ավելի շատ հափշտակված էր նկարով, քան իրենով. դրել էր այն լույսերի ու շրջանակների մեջ, դարձրել մտածումների, երազանքի առարկա: Մուրենն այլևս օտար է թվում նրան...

Ինքնատիպ է վիպակի հանգուցալուծումը: Մուրենի ու Ստեկնի հարաբերություններն անակնկալ վախճան են գտնում: Եթե մախորդ երկերում այդ հերոսներն էին ստանձնում հարաբերությունները խզելու դժվարին պարտականությունը («Դուրսեցի-

<sup>8</sup> Լ և ն ո շ ա ն թ, Երկեր, Եր., 1989, էջ 341:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 344:

ների» Բագրատը, «Վերծինի» Արշակը, մի պահ՝ «Դերասանուհու» Հրանտը, «Ճամբուն վրա»-ի Վահրամը, «Հին աստվածներ»-ի Վանահայրը, ապա այստեղ առաջնությունը պատկանում է օրիորդին: Մարգրիտն ուրիշների նման չի տրտնջում: Մեծության մի պահի, երբ նա բոլորովին անուշադրության է մատնվում որպես կին, անսպասելի ուժով ժայթքում է երջանկության ծարավը: Նախանձի խլիրտը վերածում է ատելության կատաղի պոթեկումի, և նա, հոգու ցավից առաջացած մռուկով դանակով պատռելով պատտառը (ինչպես «Հին աստվածներ»-ում իշխանուհին պատռեց եկեղեցու հատակագիծը), հեռանում է քաղաքից: Մարգրիտի բռնկումն ամբողջացնում է նրա կանացի անհատականությունը:

Ֆիննուհու անակնկալ վարքագիծը շվարեցնում է Սուրենին: Օրիորդի բարոյական աստակը ցավագին վերք է թողնում նրա սրտում: Նկարչի արվեստագետ հոգին խոր դրամա է ապրում: Այժմ մի պատռված նկար էլ ինքն էր. ո՛չ մի մտածում, ո՛չ մի հուզում, անշարժ ու քարացած՝ առանց կատարվածի ինչպեսն ու ինչուն ըմբռնելու ցանկության: Նա կորցրել էր երկա՛ր-երկա՛ր որոնած և ի վերջո գտած անգին այն կայծը, որը թևավորել էր իրեն: Այլևս պատռված էր ամեն ինչ՝ և՛ աշխատանքը, և՛ ջանքն ու հավատը, և՛ ոգևորությունն ու մտերմությունը:

Իրարամերժ մտածումները պարուրում են Սուրենին: Մի պահ նա իրեն դառնորեն խաբված ու հուսալքված է զգում, դատապարտում է Ստեկնին՝ անխնա ծխտելով կին էակի բոլոր առաքինությունները: Նրան թվում էր, թե գտել է իր երագած իդեալ-կնոջը՝ իզական բնագոյներից բացարձակ անմասն, անմարմին ու աննյութ: Հիմա պատրանքը փարատվել էր նրա աչքին... Մեղադրանքի ու ավստասանքի դառը զգացումը շուտով տեղի է տալիս աղջկա բարձրության ու բացառիկ ազնվության առջև խընկարկմանը: Վերլուծելով իրերի ընթացքը՝ Սուրենը կռահում է, որ Մարգրիտի պոթեկումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ չհասկացված սիրո ընդվզում: Ստեղծումի իր աշխատանքով կլանված՝ նկարիչն անտեսել էր օրիորդի կանացի էությունը, սիրվելու մեծ փափագը, կույրի պես անցել էր աղջկա մոտից ու չէր նկատել նրա ներաշխարհի ամենաթանկագինը: Սուրենը դատապարտում է իրեն և խոնարհվում Մարգրիտի զգացմունքների վեհության առջև. «Ի՞նչ ավելի ազնիվ ու ավելի վսեմ, քան այդ լիկ ու խորունկ սերը: Ի՞նչ ավելի բարձր ու հզոր, քան այդ լիկ ու հպարտ անջատումը»:<sup>10</sup> Զննադատ Ս. Փանոսյանը Լևոն Շանթին մվիրված իր արժեքավոր ուսումնասիրությունում իրավացիորեն որոշ աղերսներ է նշմարել «Կինը» վիպակի և «Կայսր» թատերգության միջև: Ըստ նրա, իրենց հոգեբանությամբ ու մղումներով Սուրենն ու Օհան Գուրգենը նկատելիորեն մերձեցնում են միմյանց, իսկ Մարգրիտ Ստեկնի կերպարում արդեն իսկ կռահվում է եթերային Հաննան:<sup>11</sup>

Վիպակի սեղմ ամփոփումը պատմում է Մյունխենի տարեկան ցուցահանդեսի մասին, ուր համընդհանուր ուշադրության առարկա էր դարձել երիտասարդ հայ նկարչի տաղանդավոր գործը: Հիացմունքի արժանացած դիմանկարը տարբեր մեկնությունների տեղիք է տալիս: Մեկն այնտեղ տեսնում է «գիշերվան խորհրդավորությունն ու քաշողությունը», մյուսը՝ «հայության տառապանքը», երրորդը՝ «գողոքի մարմնացումը»,... իսկ հեղինակն այն վերնագրել է ընդամենը մեկ խորհմաստ բառով՝ «Կինը»:

«Կինը» վիպակում Շանթը պատկերել է հերոսների հոգեկան մաքառումը, որը ոչ այնքան միմյանց դեմ է ուղղված, որքան սեփական հոգու: Հեղինակային միջամտություններն ավելի ցայտուն են դարձրել հոգեվերլուծումը: Գրողն ամեն մի մանրամասն կենտրոնացրել է իր հիմնական նպատակի հանգամանակից բացահայտմանը: Շրջապատող իրականության ու բնության ներդաշնակ, պատկերավոր նկարագրություններն անգամ ինքնանպատակ չեն, այլ ուղղված են կերպարների կենսաձևի, մտածումների ու ապրումների մեկնաբանությանը: Դրանցով Շանթը ճշտել է հերոսների նախասիրությունները, մտավոր հորիզոնն ու աշխարհընկալումը: Երաժշտությունն, օրինակ, նա դիտում է իբրև սովորականից, «ցածի մածուցիկ խավարից» դուրս, վեր ձգվելու մղում. «Վե՛ր, դեպի վեր... անվերջ ու անհաս տենչով մը... միշտ վե՛ր, պատրանքներում ան-

<sup>10</sup> Լ և ն ն Շ ա ն թ, Երկեր, Եր., 1989, էջ 358:

<sup>11</sup> Ս. Փ ա ն ո ս յ ա ն, Լևոն Շանթ. կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1987, էջ 147:

հուն կարոտովը, ունայնությունների անհազ ծարավովը...»<sup>12</sup> Ֆիննոիսու դիմանկարը նույնպես խորհրդանշիչ է: Մուրեմին, ինչպես և հեղինակին, հմայում է ձգտումը դեպի վեր, դեպի նորն ու լիակատարը, որը տիրում է մարդուն և մոռացնել տալիս աշխարհի ունայնությունը:

## МИСТИКА ЛЮБВИ В ПОВЕСТИ ЛЕВОНА ШАНТА «ЖЕНЩИНА»

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *О. Петросян* \_\_\_

Своим идеологическим содержанием и преследуемыми эстетическими проблемами повесть Левона Шанта «Женщина» отличается от его других произведений. Оно отражает восприятие автором женственности. Символично название повести-«Женщина». Эта работа Шанта полностью посвящена раскрытию тайны женщины. В сущности, эта повесть – исследование женской души, освещение чувственного мира женщины. В психологической повести «Женщина» автор делает попытку реалистического анализа и рисует женщину как символ любви, вдохновения и идеи. Здесь автор отразил борьбу между материальным и духовным, реальным и идеальным, плотским и романтическим и представил свой идеал «вечной красоты». Проводя параллель между жизнью и искусством, он явно разяснил свою четкую позицию, согласно которой искусство выше и долговечнее реальности. Для автора существенным является победа идеи и совершенства, что и нашло свое прекрасное отражение в повести.

---

<sup>12</sup> *Լևոն Շանթ, Երկեր, Եր., 1989, էջ 324-325:*

*Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ*

**ԵՌՅԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ԱՆՈՒՐՅԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ**

Հասարակության երեք իրավահավասար դասերից բաղկացած լինելու հնդեվրոպական ավանդույթը այնքան խոր արմատներ էր նետել հայ իրականության մեջ, որ պայմանավորել էր անգամ հայկական բնակավայրերի հասարակական կառույցի եռակենտրոն համակարգը: Ծառ տեղերում այն իր ուրվագիծը պահպանել էր անգամ 20-րդ դարի սկիզբը: Հայկական շատ գյուղերի ավանդական կենտրոնում՝ գյուղամիջին, որպես կանոն, գտնվում էր աղբյուրը կամ ամենահարգի ծառը (հաճախ երկուսը միասին): Ինչպես աղբյուրը, այնպես էլ ծառը նախաքրիստոնեական դարերում համարվում էին խորհրդանիշ-առարկայացումները Մայր դիցուհու (կամ նրա հետնորդ աստվածության), որը պտղաբերությունն ու բերրիությունն անճնավորելով՝ հանդես էր գալիս որպես բարիքներ արտադրող դասի հովանավոր աստվածություն: Ըստ այդմ, դրանց մոտ էին տեղի ունենում բնության բարիքների և արհեստագործական արտադրանքի փոխանակում-վաճառքի գործընթացները: Գյուղամիջին էին գտնվում նաև գյուղապետի նստավայրը՝ գյուղի վարչական կենտրոնը, և եկեղեցին՝ հոգևոր կենտրոնը: Մեր դյուցազնավեպի առանձին պատումների համաձայն՝ Ծովհնարի երկվորյակ որդիները հիմնադրել էին նախ Սասուն բնակավայրը՝ բարիքներ արտադրողների կենտրոնը, ապա Սասնա բերդը՝ զինվորական դասի կենտրոնը, ի վերջո՝ եկեղեցին կամ վանքը՝ հոգևոր դասի կենտրոնը:

Ըստ ամենայնի, այս դեպքում մենք գործ ունենք եռյակ բնակավայրերի (իրենց տնտեսական, հոգևոր ու ռազմական բնույթներով) համակարգի հետ: Նույնը կարելի է ասել նաև Արարատյան դաշտի (ուրարտական արձանագրությունների «Aza երկրի») երեք տարաբնույթ կենտրոնների՝ Էրեբունիի, Արգիշտիխիսիի և Թեյշեբախի մասին: Այս բնակավայրերի նախորդները ևս ունենալու էին ռազմական, պաշտամունքային և տնտեսական ընդգծված ֆունկցիաներ: Էրեբունի-Երևանը իրագործելու էր առավելապես ռազմական, Արգիշտիխիսի-Արմավիրը՝ պաշտամունքային, իսկ Թեյշեբախին (Կուառլինի դաշտով)՝ տնտեսական ֆունկցիաներ: Ուրեմն, Էրեբունին կենտրոնատեղի է եղել «Aza երկրի զինվորական դասի, Արգիշտիխիսիի՝ քրմական դասի, իսկ Թեյշեբախին՝ բարիքներ արտադրողների դասի համար:»<sup>1</sup> Բնակավայրերի եռյակ համակարգի ականատեսներն ենք նաև հետագա Արշարունիքում: Այստեղ Երվանդ Վերջին (մ.թ.ա. 3-րդ դարի վերջեր) թագավորին է վերագրվել Արաքսի և Ախուրյանի գետախառնի շրջանի երեք բնակավայրերի կառուցումը: Դրանք էին թագավորանիստ Երվանդաշատը՝ զինվորական դասի կենտրոնատեղին, քրմապետի նստոց Բագարանը՝ քրմական դասի կենտրոնատեղին, և արքայական դաստակերտ Երվանդակերտը՝ արտադրողների դասի կենտրոնատեղին: Առաջին երկուսի բնույթի վերաբերյալ ուղղակի վկայություններ կան պահպանված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, իսկ երրորդի բնույթը կռահվում է պատմահոր արած շքեղ նկարագրությունից: Ահա դրանք.

Արմավիր մայրաքաղաքում ջրի պակասություն է զգացվում. «Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա եւ ամրագունի ևս տեղոյ ելեալ ի խնդիր՝ փոխտ գարքունիսն յարեւմուտս կոյս, ի քարեկտուր մի բլուր, գորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն

<sup>1</sup> Ս. Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն, *Երեք դասերը և եռյակ բնակավայրերը հին Հայաստանում*, «ՀՀ քաղաքաշինության նախարարության հայ ճարտարապետության ազգային թանգարան, Տարեգիրք 1994», Եր., 1995, էջ 14-16, *Նույնի, Երեք դասերը և Ազա երկրի քաղաքների եռյակը, Գյուղում պետական մանկավարժական ինստիտուտի հանրապետական գիտական նստաշրջանի (29-30 հոկտեմբերի 1998թ.) զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1999, էջ 16-17:*

հոսի գետ: Պարսպ է զբլուրն, եւ... զմիջմաքերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, եւ դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, եւ ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցրտունն. եւ ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մեջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեցի՝ եթէ որ գաղտ ելանելով դատել կամիցի զարքայն»:<sup>2</sup>

«Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմարայ, ուրոյն ի կոռցն... այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրեմայ, եւ անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. եւ փոխեաց անդր զամենայն զկուտսն որ յԱրմարայ: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»:<sup>3</sup>

«Քաղցր է ինձ ասել եւ յաղագս զեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ զեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբագնութիւն այգեստանոյ՝ իբր զարտեանանց խիտ եւ զեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածեալ՝ արդարեւ զեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան զեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակել շրթունս: Եւ այսպիսի զեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն զոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն»:<sup>4</sup>

«Տնկել եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, եւ որմովք ամրացուցանէ, արգելով ի ներքս այծեմունս երագունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարագս. որք ի բագնութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն Վննդոց»:<sup>5</sup>

Բերված առաջին երկու վկայություններից ուղղակի բխում է, որ Երվանդաշատ քաղաքը կառուցվել է որպէս զինվորների դասապետ արքայի նստոց, իսկ Բագարանը՝ որպէս քրմապետի՝ քրմերի դասապետի, նստոց: Վերջին երկու վկայություններից կարելի է կռահել, որ Երվանդակերտ դաստակերտը և Վննդոց անտառը ձևավորված են եղել Մայր դիցուհուն: Իսկ նա հովանավորն էր արտադրողների (հողագործների և անասնապահների) դասի, ուրեմն նաև՝ նրանց դասապետ արքունի տնտեսի (հետագա հագարապետի նախորդի):

Երվանդակերտի Մայր դիցուհուն ձևավորված բնակավայր լինելու մասին է խոսում նրա մյուս անունը՝ *Մարմէտ*-ը: Որ Երվանդակերտը (ոչ թե Երվանդաշատը) նաև *Մարմէտ* է կոչվել, բխում է Մովսես Խորենացու վկայությունների համադրումից: Երվանդակերտի կառուցման նկարագրությունը պատմահայրը, ինչպէս տեսանք, սկսում էր հետևյալ նախադասությամբ. «Քաղցր է ինձ ասել եւ յաղագս զեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ զեղեցիկ եւ չքնաղ յօրինուածովք»: Հաջորդ շարադրանքում նա Երվանդակերտը ուղղակի «Երվանդի դաստակերտ» է կոչում, երբ Երվանդաշատը կոչում է «Երվանդի քաղաք»: Ըստ Խորենացու՝ Երվանդին պարտության մատնած Արտաշեսը «ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ (այսինքն՝ Երվանդաշատ) յառաջ քան զմիջօրեայ հասեալ ի դաստակերտն Երուանդայ (այսինքն՝ Երվանդակերտ), եւ միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատ», որ թարգմանի Մարս եկն... Յայս ի տոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտ»:<sup>6</sup> Պատմահայրը բերում է նաև բնակավայրի վերանվանումի պատճառը. «յիշեցուցանելով զթշնամանսն, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից եւ առ Սմբատ, Մար զնա (այսինքն՝ Արտաշեսին) կոչելով»:<sup>7</sup> Անշուշտ գործ ունենք ոչ թե *մար*

<sup>2</sup> Մովսէսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, Զննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Եր., 1981, Բ, 18:

<sup>3</sup> Մ. Խ ո ռ Ե ն ա գ ի, Բ, խ:

<sup>4</sup> Նույն տեղում, Բ, խբ:

<sup>5</sup> Նույն տեղում, Բ, խա:

<sup>6</sup> Նույն տեղում, Բ, խգ:

<sup>7</sup> Մ. Խ ո ռ Ե ն ա գ ի, Բ, խ:

ցեղանունով, այլ *մայր* (հոգնակին՝ մարք) բառով կազմված բառաբարդի հետ. *Մարմէտ* (<\*Մար-մէտ: Այս տեղանվան երկրորդ բաղադրիչը նույնն է, ինչ *Արտամէտ* (<\*Արտա-մէտ) տեղանվան երկրորդ բաղադրիչը: Նրանց հիմքում \*մէտ «շեն» իմաստով չլակահարմարված բառն է՝ ծագած հ.-ե. \*mei -«ամրացնել» արմատից –մ- ածականով: Թրակերեն «գյուղ, շեն» նշանակող midne բառը բխեցվում է կամ հնդեվրոպական հիշյալ արմատից, կամ հ.-ե. \*meit(h) - «բնակատեղի» նախածնից:<sup>8</sup> Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում մեր բառն ազգակիցն է համարվելու թրակերեն բառի և ըստ այդմ *Մարմէտ*-նշանակելու է «մայրաշեն», «մայրավան»:

Համալիր շինությունների նման մի եռյակ էին նախապես ներկայացնելու հին Շիրակի կենտրոնում Ախուրյան - Արփաչայի և Ախուրյան – Կարսաչայի գետախառնի շրջանում գտնված Շիրակավանը, Երազգավորսը և Տիգնիսը: Սրանցից առաջին երկուսը այնքան մոտ են գտնվել միմյանց, որ հասուն միջնադարում դարձել էին մի բնակավայր՝ *Շիրակաւան* և *Երազգաւորս* կրկնակի անուններով: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին *Շիրակաւանը* նույնիսկ Երազգավորսի նոր անունն էր համարում, չնայած այն վկայված է դեռևս 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի երկում: Դրանք նախապես երկու տարբեր բնակավայրեր լինելով, անգամ IX դարի վերջին այդպիսիք են ընկալվել: Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու վկայությամբ, Սմբատ արքայորդին իր հոր՝ Աշոտ I թագավորի (885-890թթ.), մահվան լուրն առնելով, շտապում է Երազգավորսից հասնել Շիրակավան: Նա գրում է. «Իսկ զկնի այտրիկ չուէ գայ հասանէ ըստ համբաւոյն հասելոյ՝ Սմբատ որդի արքային ի սեպհական կալումս Երազգաւորից Շիրակական բազում վշտահար հեծութեամբ»:<sup>9</sup> Հին Շիրակավանի՝ արտադրողների դասի կենտրոնատեղին լինելու մասին են խոսում ինչպես նրա անվան ստուգաբանությունը,<sup>10</sup> այնպես էլ հետևյալ հանգամանքները: Այս բնակավայրը տեղադրված էր հարթավայրում: Ջրառատ էր, շրջապատված սևահողային արգավանդ դաշտերով: Այն հայաբնակ էր և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ուներ 1220 բնակիչ, որոնք զբաղվում էին հիմնականում հացահատիկի մշակությամբ և մասամբ անասնապահությամբ:<sup>11</sup> Հետագայում *Բաշ–Շորագյալ* կոչված այս բնակավայրից հյուսիս գտնվում էին Բանձրեղ սարահարթի քարանձավները: «Շորագյալցիների ասելով, այս քարայրները եղել են շատակեր Շարայի ամբարները, որը ապրել է Ղարսա - չայի և Արփա - չայի միջև ընկած բարեբեր հարթության վրա»:<sup>12</sup>

Երազգավորս բնակավայրի քրմանիստ լինելու իրողությունը հաստատվում է նախ և առաջ նրա անվան ստուգաբանությամբ: Մ.Երեմյանի կարծիքով, այս տեղանվան մեջ առկա է Երվանդունիների տոհմական անուններից մեկը՝ *Երուագը*:<sup>13</sup> Իսկ այդ անունն, ըստ Խորենացու, կրում էր Երվանդ Վերջինի երկվորյակ եղբայր՝ քրմապետ Երվազը: Երազգավորսի միջնադարյան կառույցներից ամենահայտնին Մուրբ Փրկիչ (Ամենափրկիչ) եկեղեցին էր՝ կառուցված Բագրատունի Սմբատ I (890-914թթ.) թագավորի կողմից: Հենց այստեղ էլ Գևորգ կաթողիկոսի ձեռամբ նա օծվել էր Հայոց թագավոր: Բնականաբար, եկեղեցին կառուցված էր լինելու հիշյալ տարածքի այն մասում, որն հնուց ի վեր համարվել է նրա հոգևոր – մշակութային կյանքի կենտրոնը:

*Երազգաւորս* տեղանվան առաջին բաղադրիչը իրենից ներկայացնում է *Երուագ* անվան հապավված ձևը (Երագ-<Երուագ), իսկ նրա երկրորդ բաղադրիչը՝ *-գաւոր*-ը, լինելու է *գահուր II գահաւոր* բառը՝ առաջացած միջնաձայն *հ-ի* (*հա-ի*) անկումով (տեղանվան երրորդ բաղադրիչը հոգնակիակերտ *ս-ն* է՝ *ք-ի* համարժեքը): *Գահաւոր II գահաւոր* բառն առաջինն օգտագործել է Մովսես Խորենացին: Աբեղյան տոհմի հիմնադիր Աբելին տրված պաշտոնը նա բնութագրում է «սպասարար եւ գահաւոր» բառե-

<sup>8</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն , Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 61 և ծան. 45:

<sup>9</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, Յառաջաբան պատմութեան, Եր., 1996, էջ 146:

<sup>10</sup> Մ. Պ ե տ ր ո ս յ ա ն , «Շիրակայ ամբարքի» շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, թիվ 8, էջ 75-76:

<sup>11</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն , Մո. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն , Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն , Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988, էջ 210:

<sup>12</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն , Ավանդապատում, Եր., 1969, էջ 39:

<sup>13</sup> Մ. Ե ր ե մ յ ա ն , Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 74:

րով»:<sup>14</sup> Նոր հայկազյան բառարանի հեղինակները *գահատր*-ը հասկանում են «պաշտոնեայ արքունի գահի»,<sup>15</sup> Հ. Աճառյանը բացատրում է «արքունի մի պաշտոնյա» (<պահլ.\*gahvar // gahvar «մի բարձր աստիճան»),<sup>16</sup> իսկ Ստ. Մալխասյանցը՝ «գահ ունեցող, անձանոթ մի պաշտոնի անուն»:<sup>17</sup> Մրանից «գահ ունեցող» բացատրությունը ճիշտ համարել չի կարելի, որովհետև գահ ունեին ոչ միայն Արեղյան նախարարական տոհմի նահապետները, այլև մյուս նախարարական տոհմերինը, ինչպես նաև բարձր-աստիճան հոգևորականները: Այս դեպքում խոսքն արքայական գահին առնչվող ինչ-որ սպասարկու ծառայության մասին է, ինչը ցույց է տալիս նաև նախորդ *սպասարար* բառը (նշանակում է «սպասահարկու, պաշտոնեայ, կամակատար»):<sup>18</sup>

*Երազգատրս*-ի ստուգաբանության առթիվ ի նկատի է առնվելու մնան մի իմաստի անկայությունը: Հայտնի է, որ քրմապետական տիրույթներում ապրում և աշխատում էին երկու կարգի մարդիկ՝ քրմերը և տաճարների ազատ սպասավորները մի կողմից, անազատ ծառաները՝ մյուս կողմից:<sup>19</sup> Երազգավորում բնակված «Երվազի գահավորները» չէին կարող լինել ոչ «գահ ունեցողներ», ոչ էլ անազատ ծառաներ: Նրանք կարող էին լինել միայն քրմապետի սրբազան գահի ինչ-ինչ սպասարկումներն իրականացնող պաշտոնյաներ, գուցե թե առանձին կարգավիճակ ունեցող քրմեր: Մրանք խոսում են հին Երազգավորսի՝ քրմական դասի կենտրոնատեղին լինելու մասին:

Հասուն միջնադարի Ծիրակավան - Երազգավորսն ուներ իր պաշտպանությունն ապահովող ամրությունների համալիր: Այն բաղկացած էր սեփական պարսպապատ բերդից, բնակավայրին արևելքից հարող Ախուրյանի վտակ Ղարախան գետակի ձախ ավի ամրություններից (ավերակները կան), ինչպես նաև բնակավայրից 3կմ հեռավորության վրա, Ախուրյանի աջ ափին գտնվող Տիգնիս ամրոցից: Միջնադարյան անառիկ ամրոցներից մեկը՝ Տիգնիսը, այժի էր ընկնում պատերի արտակարգ բարձրությամբ: «Քառանկյունի պարագծով ու սրբատաշ քարերով կառուցված կրկնակի պարիսպներն անկյուններում և կենտրոնական մասում ունեն հզոր բուրգեր: Ամրոցի ներսում, ուղղանկյուն բակի շուրջը, երկու հարկ դասավորությամբ տեղավորված էին *կայազորին* (ընդգծ. Ս. Պետրոսյանի) սպասարկող շինությունները»:<sup>20</sup>

Տիգնիսի ռազմական բնույթով, այստեղ մշտական կայազորի անկայությամբ էլ պայմանավորված է նրա անվան «զինվորական» ստուգաբանությունը: Մեր կարծիքով՝ *Տիգնիս* < \**Տիգունիս* < \**տեգ-ունի-ս*: Այս դեպքում տեղանվան երրորդ բաղադրիչը հայցական հոլովի հոգնակի թվի ս ցուցիչն է՝ համարժեքը ուղղական հոլովի հոգնակի թվի ք ցուցիչի, երկրորդ բաղադրիչը – ունի վերջածանցն է (հմմտ. *տէր – ունի, արք – ունի, տիկն – ունի* < \**տիկին - ունի*), իսկ առաջին բաղադրիչը՝ *տեգ* բառն է: *Տեգ* նշանակում է «արդն, գեղարդն, միզակ, գայիսուն»<sup>21</sup>: Սա ծագումով իրանական բառ է, բայց շատ վաղուց կիրառում գտած նաև հայերենում:<sup>22</sup> Նրանից ածանցյալ *տիգատր* բառը նշանակում է «ունօղ՝ կրօղ գտեզ, որպես եւ գտուին, միզակատր»:<sup>23</sup> Այս նույն իմաստն էր պարունակելու նաև չավանդված \**տիգունի* (հոգն.\**տիգունիք*/\**տիգունիս*) բառը, որով և նշվելու էին Տիգնիսի ամրոցին իրենց անվանումը տված (Տիգնիս < \**Տիգունիս*) տեղական կայազորի մարտիկները:<sup>24</sup> Տիգնիսի ռազմական բնույթը և անվան ստուգաբանությունը խոսում են նրա՝ զինվորական դասի կենտրոնատեղին լինելու մասին:

<sup>14</sup> Մ. Խոսրոսյան, Բ, Է:  
<sup>15</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ., Ա, Եր., 1979, էջ 523:  
<sup>16</sup> Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 502:  
<sup>17</sup> Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Եր., 1944, էջ 406:  
<sup>18</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Եր., 1981, էջ 737:  
<sup>19</sup> Մ. Կրկյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 141, 179:  
<sup>20</sup> Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ Գ-Ա հրատ., հ. III, Եր., 1976, էջ 378:  
<sup>21</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 871:  
<sup>22</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. IV, Եր., 1979, էջ 400:  
<sup>23</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 873:  
<sup>24</sup> Մ. Պետրոսյան, Գ. Պետրոսյան, Տիգնիս ամրոցի դերը համալիր շինությունների եռյակում, ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնարկում, Գյումրի, 2000, էջ 30-32:

Ախուրյանի ավազանում բնակավայրերի երրորդ եռյակը, մեր կարծիքով, կազմել են Անին, Մաղազբերդը և Երեբունյքը: Երվանդունյաց դարաշրջանում իր գոյությունը պահպանած այս եռյակի նախորդը, ըստ երևույթին, ձևավորվել էր ավելի վաղ ժամանակներում՝ լինելով կրողը եռադասության հնդեվրոպական ավանդույթի: Անիի հին բնակավայր լինելու հանգամանքը կասկած չի հարուցում: Ն. Մառի կարծիքով այստեղ հայտնաբերված երկաթե կապերի հետքերով բազալտե զանգվածեղ և խորանարդաձև որմնաքարերը սերտ աղերս են բացահայտում տեղի և ուրարտական շինարվեստի միջև:<sup>25</sup> Ի նկատի առնելով այդպիսի քարերի առկայությունը Երվանդունյաց դարաշրջանի շինությունների որմնաշարվածքում՝ Հ. Մանանդյանը դրանք համարում է նույն այդ դարաշրջանում Անիում ծավալված շինարարական աշխատանքների վկաներ: Անիում ժամանակին գոյություն ունեցած շինություններին համաժամանակյա այլ շինությունները, ինչպես նա է գրում. «կարող են նոր լույս սփռել նաև Անիի Կամսարական կոչվող պարսպի հնագույն որմնաքար վրա: Այս վերջինը ևս, ինչպես և Արմավիրի վերահիշյալ պարսպներն ու աշտարակը, վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին, այսինքն՝ 3-րդ դարին կամ 2-րդ դարի սկզբներին մեր թվարկությունից առաջ... Բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից նույն այս հնագույն ժամանակաշրջանի ամրացված կենտրոնավայրեր են եղել նաև Գառնին և Անին»:<sup>26</sup> Անիի հին շինություններին համաժամանակյա հիշյալ բնակավայրերի հին շինությունների թվագրման վերաբերյալ ժամանակին իշխած այն թյուր կարծիքը, թե դրանք վերաբերում են Արշակունյաց դարաշրջանին, Հ. Մանանդյանը մերժում է՝ դա բացատրելով նրանով, որ այդ կարծիքն առաջադրած ուսումնասիրողները գտնվել են «ավանդական հայ պատմության ազդեցության տակ և համարելով Երվանդաշատի հիմնադիր Երվանդ Վերջինին Արշակունյաց ցեղից՝ թյուրիմացաբար կարծել են, որ Երվանդյան շրջանի հայկական հնությունները վերաբերում են մեր թվարկության առաջին դարին, այսինքն՝ Արշակունյաց ժամանակաշրջանին»:<sup>27</sup>

Արմավիրում, Անիում և Գառնիում շինարարություն ծավալած Երվանդունի թագավորը Երվանդ Վերջինը չի եղել, որովհետև Մովսես Խորենացին սրան վերագրում է միայն Երվանդաշատի, Բազարանի և Երվանդակերտի կառուցումը: Ուրեմն, այն կարող էր լինել նրա նախորդ Երվանդը՝ Հայաստանի նախկին սատրապը և մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո նրա անկախությունը վերականգնողը: Նա (և ոչ թե Երվանդ Վերջինը) պետք է լիներ իր անունը կրած Երվանդավանը կառուցապատողը: Մովսես Խորենացու հաղորդումներից պարզվում է, որ Երվանդավանը գտնվել է Ախուրյան գետի ափին, Մարաց մարզ հովտում:<sup>28</sup> Սատրապ-թագավոր Երվանդի կառուցապատումների առարկա դարձած երեք բնակավայրերից՝ Արմավիր, Գառնի, Անի, միայն վերջինիս է այն համապատասխանում: Մեր այս կարծիքը հիմնավորում ենք նրանով, որ Խորենացին, Ախուրյանի ափին՝ Երվանդաշատից հյուսիս, տեղադրելով թե՛ Բազարանը, թե՛ Երվանդավանը, սրանցից առաջինի համար նշում է Երվանդաշատից ունեցած 40 ասպարեզ հեռավորություն, իսկ երկրորդի համար՝ 300 ասպարեզ հեռավորություն:<sup>29</sup> Այսինքն՝ Երվանդավանը 7,5 անգամ ավելի հեռու է գտնվել Երվանդաշատից, քան Բազարանը: Իսկ այս հեռավորությունը համապատասխանում է Ախուրյանի արևմտյան ափին գտնվող Անիի Երվանդաշատից ունեցած հեռավորությանը: Ուրեմն, Անին նույն Երվանդավանն է: «Ի վերայ գետոյն Ախուրեան» գտնված Երվանդ Վերջինի բանակատեղին գրավելով, հաղթանակ տարած Արտաշեսը, ըստ Խորենացու, «անուանեաց զհովիտն... Մարաց մարզ, եւ գտեղի ճակատուն՝ Երուանդավան, որ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»:<sup>30</sup> XIII դարի մեզ հայտնի երեք արձանագարություններից մեկում է, որ հովտի անունը բերված է *Մարաց մարզ*

<sup>25</sup> H. M a p p, Ану, А., 1934, сmp. 15,49.

<sup>26</sup> Հ. Մ ա ն մ ան դ յ ա ն, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33-34:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>28</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, խզ:

<sup>29</sup> Նույնը:

<sup>30</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, խզ:



ձևով, մյուս երկուսում՝ *Մարանց մարգ* ձևով է: Ինչպես Գ.Սարգսյանն է գրում, սա «արդեն միանգամայն այլ ստուգաբանություն է պահանջում. այն է՝ «մայրերի մարգ» և ցույց է տալիս, որ մարերի հետ այս տեղանունը հազիվ թե կապ ունենա»<sup>31</sup>: Ըստ երևույթին, Երվանդավան // Անիի մերձակայքում գտնված Մարա(ն)ց մարգը Մայր դիցուհու պաշտամունքային արգելանցին է եղել՝ նման Երզնկայի դաշտի Անահիտ դիցուհու պաշտամունքային արգելանցին և Մարմետ-Երվանդակերտի մոտ գտնված Ծննդոց անտառին: Մրանցից առաջինի նկարագրությունից, որն անում է Պլուտարքոսը, պարզվում է, որ այնտեղ ազատության մեջ շրջել են Արտեմիս // Անահիտին ձուցված սրբազան կովերը (երինջները),<sup>32</sup> իսկ երկրորդում, ըստ Մովսես Խորենացու, կային «այծենմունս երազունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն»:<sup>33</sup>

Այս տեսանկյունից ուշագրավ են նաև հետևյալ իրողությունները: Անիում ևս գոյություն է ունեցել Անահիտ դիցուհուն ձուցված հեթանոսական տաճար, որն ավանդության համաձայն կործանել էր Գրիգոր Լուսավորիչը և տեղը քրիստոնեական եկեղեցի կառուցել:<sup>34</sup> Ընդ որում, ոչ միայն Անահիտի տաճար ունենալու հանգամանքով, այլև իր անվամբ ևս Անին բացահայտում է Մայր դիցուհու պաշտամունքի հետ իր ունեցած սերտ կապը: *Անի* տեղանվան հիմքում հ.-ե. \* an-// \* Han- արմատն է առկա նաև հայերեն *հան*, *հանի*, *հանիկ* «տատ, մեծ մայր» բառերում:<sup>35</sup> Այս առթիվ հիշենք, որ Դարանաղի գավառի Անի բնակավայրի անունը մեր պատմահայրը հիշում է նաև *Հանի* տարբերակով<sup>36</sup>: Այս ամենին կարելի է ավելացնել նաև Անիի արվարձաններից մեկի *Իզաձոր* անունը՝ \*եզ-ա-ձոր պարզ ստուգաբանությամբ<sup>37</sup> (հմմտ. *իզական*, *իզաբար*): Ուրեմն, կասկած չի կարող, որ Անի // Երվանդավանը եղել է Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոններից մեկը, իսկ որպես այդպիսին, Մարա (ն) ց մարգ հովտի հետ միասին, նա համարվելու էր նաև Մայր դիցուհու հովանավորյալ բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի:

Ինչպես *Անի*-ն, այնպես էլ *Մարմետ*-ը լինելու էին Մայր դիցուհու պաշտամունքի այդ վայրերի ավելի հին անունները, քան *Երուանդաս*-ն ու *Երուանդակերտ*-ը: Բնակավայրերի այս նոր պաշտոնական անունները մոռացության էին մատնվել Արտաշեսյան դարաշրջանում: Երվանդակերտի պաշտոնական անվան մոռացության պատճառը բացահայտված է Մովսես Խորենացու հետևյալ տողերում. «անուանեցաւ դաստակերտն Մարմետ, իբր ի կամաց Արտաշեսի՝ բառնալ զանուն Երուանդայ ի տեղոջէն»:<sup>38</sup> Այդ ճակատագրին էր արժանացել նաև Անիի պաշտոնական անվանումը՝ *Երուանդաս*-ը: Այդ ճակատագրից կարողացել էր խուսափել միայն Երվանդ Վերջինի մայրաքաղաքի *Երուանդաշատ* անունը:

Բնակավայրերի Անի-Մաղազբերդ-Երերույք եռյակի երկրորդ անդամը Մաղազբերդն էր: Մաղազբերդի միջնադարյան ամրոցը գտնվում է Անիի ավերակներից մոտ 5կմ հարավ, Ախուրյանի արևմտյան ափին, անդրդալտոր կիրճի եզրի ժայռին, որը երեք կողմից շրջապատված է Ախուրյանի ջրերով: «Բնականից անառիկ լինելով հանդերձ, ամբողջ պարագծով (ներառյալ կիրճի կողմից) շրջապատված է կրկնակի պարիսպներով, որոնցից արտաքինը ավելի բարձր էր, իսկ ներքինը՝ ցածր: Բրգավոր այդ նախապարսպի և կրկնապարսպի միջև գոյություն ունեւ ջրով լցվող խրամ»:<sup>39</sup> Որ միջնադարյան այս ամրոցը ունեցել է իր նախորդը, վկայում է նրա *Մաղազբերդ* անունը: Նրա

<sup>31</sup> Գ. Ս ա ռ ց ս յ ա ն, *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին*, Եր., 1966, էջ 226:

<sup>32</sup> *Plut. Lucull., XXIV (Плутарх, Избранные жизнеописания, т. II, М., 1987, стр. 134-135)*.

<sup>33</sup> *Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, խա:*

<sup>34</sup> *Լ. ե ռ, Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը*, Եր., 1963, էջ 267:

<sup>35</sup> *Լ. Պ ե տ ը ո ս յ ա ն, Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 100:*

<sup>36</sup> *Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, խք, Գ, խե:*

<sup>37</sup> *Լ. Պ ե տ ը ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 98-99:*

<sup>38</sup> *Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, խզ:*

<sup>39</sup> *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 377:*

նախատիպը *\*Մաղխազաբերդ, \*Մաղխազ-բերդ* է:<sup>40</sup> *Մաղխազ* տերմինը հայտնի է Արշակունյաց դարաշրջանից: Մովսես Խորենացին համապատասխան գործակալության հիմնադրումը վերագրում է ավանդական Վաղարշակին,<sup>41</sup> իսկ ավանդական «Վաղարշակը հավաքական անձ է, բաղկացած Արտաշես Ա-ի, Տրդատ Ա-ի և այլ հայ իշխողների առանձին գծերից», - գրում է Գ.Սարգսյանը:<sup>42</sup> «Այլ հայ իշխողներից» մեկը, եթե ոչ նրանցից ամենանշանավորը, եղել է Օրոնտես // Երվանդ սատրապը՝ Երվանդունյաց նոր թագավորության հիմնադիրը:<sup>43</sup> Պատահական չէ, որ Մովսես Խորենացին ավանդական Վաղարշակի հակառակորդներ համարում է մակեդոնացիներին՝ և միայն նրանց:<sup>44</sup> Բնակամարար, դրանք լինելու էին Ալեքսանդր Մակեդոնացու հետնորդ դիադոքոսները, որոնցից ոչ միայն Հայաստանի նորանկախ թագավորությունը, այլև հարևան Կասպադովկիան պաշտպանողը եղել է հենց այս Օրոնտես // Երվանդը:<sup>45</sup>

*Մաղխազ* տերմինը հնության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նրա հիմքում ընկած բառը կամ համարվում է ասորերենից՝ ասորեստանյան աքքադերենից, կատարված փոխառություն (<malxazu «տեր, իշխան, թագավոր»),<sup>46</sup> կամ ասորերեն (արամեերեն) բառաբարդ է՝ «հսկողություն անող, դիտող, հետևող» իմաստով: Վերջին կարծիքի հեղինակ Հ. Մելքոնյանը գրում է. «Եվ եթե դա այդպես է, ուրեմն հասկանալի կլինի, թե ինչու «թիկնապահական գործակալությունը» կոչվել է «մաղխազություն»:<sup>47</sup> Անկախ այն բանից, թե այս երկու կարծիքներից որն է համապատասխանում իրականությանը, մի բան պարզ է, երկու դեպքում էլ *մաղխազ* («թագավորական թիկնապահ գնդի հրամանատար») տերմինը նախաարշակունյան և, հավանաբար, նաև նախահելլենիստական ծագում ունի: Եթե միշտ են մեր արած դիտողություններն ու դատողությունները, ապա պետք է ընդունել, որ *մաղխազ* տերմինն իր հիմքում ունեցող *Մաղխազաբերդ* տեղանունը վկայությունն է այն կրած տարածքում հին բերդի, իսկ նրանում թագավորական թիկնապահ գնդի և նրա հրամանատարի առկայության: Ըստ երևույթին, թիկնապահ գունդը պատկանել է այն նույն Օրոնտես// Երվանդին, որը դիադոքոսների պայքարի ժամանակ անվտանգության նկատառումներով տեղափոխվել էր Այրարատ, կառուցապատել էր և մայրաքաղաք դարձրել Արմավիրը՝ զուգընթացաբար կառուցապատելով Անի // Երվանդավանը և ամրացնելով թագավորական ապաստարան Մաղխազբերդը: Այս դեպքում կասկած լինել չի կարող, որ Անի-Մաղազբերդ-Երեբունյք եռյակի երկրորդ անդամը՝ Մաղազբերդը, եղել է զինվոր-արքայի նստավայրերից և զինվորական դասի կենտրոնատեղիներից մեկը:

Բնակավայրերի այս նույն եռյակի երրորդ անդամը լինելու էր Ախուրյանի արևելյան ափին՝ Անիպենզա ավանի մոտ գտնված Երեբունյքը (Երեբունյք, Երեբունաց գիւղ): Վաղմիջնադարյան այս գյուղն հայտնի էր IV դարի բասիլիկ տաճարով, որը գտնվում է Գյումրի-Երևան երկաթուղու Անի կայարանից մոտ 2 կմ հարավ- արևմուտք: Պետք է ենթադրել, որ IV դարում Երեբունյքի տաճարի նման մեծ ու հոյակապ քրիստոնեական տաճար ունեցած հետագա գյուղը նախորդ դարերում ավելի մեծ բնակավայր էր լինելու և ունենալու էր համապատասխան հեթանոսական սրբավայր: Այս տեսանկյունից ուշադրություն են գրավում Գառնիի հոյակապ հեթանոսական տաճարը և գյուղի մոտակայքում գտնվող հինավուրց գյուղատեղիի *Երեբունք* անունը:<sup>48</sup> Դրանք նույնպիսի փոխադարձ կապի մեջ էին լինելու միմյանց հետ, ինչպիսի կապի մեջ էին լինելու *Երեբունյք* անունը և Երեբունյքի քրիստոնեական տաճարի նախորդ հեթանոսական սրբա-

<sup>40</sup> Ս.Երեմյան, «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.)» քարտեզը, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1979:

<sup>41</sup> Մ. Խորենացի, Բ, է:

<sup>42</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1971, էջ 674:

<sup>43</sup> Ըստ Լ. Պետրոսյանի բանավոր հաղորդման:

<sup>44</sup> Մ. Խորենացի, Բ, դ-է:

<sup>45</sup> *Diodori Bibl. Hist.*, XXXI, 19, 4-5 (Հ.Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Եր., 1944, էջ 96-97):

<sup>46</sup> Н. А г о н ц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 400.

<sup>47</sup> Հ. Մելքոնյան, Աղիաբենի պետությունը և Հայաստանը, Եր., 1980, էջ 137:

<sup>48</sup> Ա. Ասլյանյան, Հ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 69:

վայրը: *Երեր-ոյք* և *Երեր-ոնք* տեղանունների վերջին բաղադրիչները համարժեք են, որովհետև հոգնակի-հավաքականի իմաստ ունեն և նշում են մարդկանց ինչ-ինչ խմբեր: Մրանց *\*երեր-* հիմքը, մեր կարծիքով, բաղկացած է *\*երի-*արմատից և *-ար* վերջածանցից: Վերջինս առկա է հայերենի *արդար, կերպար, մղար* և այլ բառերում և հնդեվրոպական ծագումով վերջածանց է:<sup>49</sup> Ուրեմն, մնում է պարզել *\*երի-ար-ոյք* (>*Երեր-ոյք* հմմտ. *Կաղանկատ-ոյք*) տեղանվան առաջին բաղադրիչի ծագումն ու իմաստը:

Տեղանվան *երի-* բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *\*rē-/\*rei* - «գոչել, մոնչալ» արմատից, որի *\*rū-* տարբերակից է սերում մեր *ռոնալ* բառը. *\*rū-ո->* հայ. *\*որուն*, որից՝ *\*որունալ>\*որնալ>ռոնալ*:<sup>50</sup> Արմատի այլևայլ տարբերակներն են առկա ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հին. հնդ. *rāuti*, *ruvati* «ռոնալ, մոնչալ, աղաղակել», հուն. *ῥοῦμα* «ռոնալ, մոնչալ, ցավից կամ ուրախությունից աղաղակել», ռուս. *рвать* «հնչել», անգլ.-սաքս. *arian* «հնչյուն», *rēon* «ողբ», մրգ. *rienen* «ողբալ, զանգատվել», լատին. *ravus* «խռպոտ», *rūmor* «համբավ, հոչակ»:<sup>51</sup> Այսիմաստ արմատի քրմերի գործունեության ոլորտին առնչվող տերմինի վերածվելու տեսանկյունից հմմտ. հնդեվրոպական միևնույն արմատներից ծագած ռուսերեն *орать* «գոռալ, բղավել, աղաղակել» և լատիներեն *ōrāre* «խոսել, խնդրել, աստվածներին աղոթել», կամ լատիներեն *mugio* «բառաչել» և խեթերեն *mugai* «աղոթել», *mugayar* «աղոթք», կամ հայերեն *գոգել* «ասել»>*գոգելով* «գոչելով» և հին հնդկ. *vāghāt* «աղոթավոր, ուխտավոր, զոհարար» բառերը:<sup>52</sup> Հայերեն *ռոնալ* բառի հնդեվրոպական ազգակիցներից են նաև հրգ. *rūnen* «փախալ», գոթ.*rūna*, անգլ.-սաքս., հին իռլ. *rūn* «զաղոտիք» բառերը, որոնք ավել են քրմերի մտավոր գործունեության ոլորտին առնչվող և «ռոնական նշանագրեր» նշանակող նույնահունչ տերմինը:<sup>53</sup> Այսպիսով, բացառված չէ, որ *\*երեր <\*երի-ար* տերմինով հնագույն Շիրակի բնակիչները նշել են քրմերի ինչ-որ խավի, որոնց անունով է բնակավայրը կոչվել է *Երերոյք*: Մա լինելու էր Շիրակի տվյալ շրջանի քրմական դասի կենտրոնատեղին՝ եռյակ կազմելով բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի Անիի և զինվորական դասի կենտրոնատեղի Մաղազբերդի հետ: Ուշագրավ է այն հանգամանքը ևս, որ եթե Անին և Մաղազբերդը գտնվում էին Ախուրյանի արևմտյան ափին, ապա Երերոյքը գտնվում էր նրա *արևելյան* ափին՝ Անիից և Մաղազբերդից նույն հեռավորության վրա: Իսկ արևելյան ափ // արևելք // արևածագի վայր // աղոթքան:

Նույն *\*rē-/\*rei*- արմատից, բայց հ.-ե. *\*men* վերջածանցով է կազմված ուրարտական *Erimena* անունը, որը *Erimenahi* ձևով, որպես հայրանուն կամ տոհմանուն կրում էր Ռուսա III թագավորը (մ.թ.ա. 625-610թթ.):<sup>54</sup> «Այս անունը հնդեվրոպականում կազմում էր գերագանցապես գործողության անուններ՝ հազվադեպ, նաև գործողության առարկայի և արդյունքի նշումով. հանդիպում են նաև գործողության անձի անուններ», - գրում է Գ. Ջահուկյանը:<sup>55</sup> *Erimena* անվան տարբերակներն են ներկայացնելու միջմաղարյան հայկական *Երեմեն* և *Երեմինայ* անձնանունները, որոնք հնչյունական տեսքով մոտ լինելով հրեական ծագում ունեցող *Երեմիա* անվանը, բխեցվել են վերջինիցս:<sup>56</sup> Բայց այս դեպքում անբացատրելի է մնում «ավելորդ» *ը-*ի առկայություն նախորդ անձնանուններում: Պիտի ենթադրել, որ ընդհակառակը այդ անձնանունների գոյությամբ և ազդեցությամբ է պայմանավորված հրեական անվան ստացած հայկական տեսքը. եբրայերեն *Irāmāyā* (hu) > հուն. *Ιεζεμίας* > հայ. *Երեմիա*: *Erimena* // *Երեմեն* // *Երեմին* -այ < հ.-ե. *\*rei-men-/\*rē-men*, որն ավելի հավանական է (իսկ *Երեմին-*

<sup>49</sup> Գ. Ջահուկյան, *հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Եր., 1987, էջ 234-235, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. II, Եր., 1975, էջ 90:

<sup>50</sup> Հ. Աճառյան, *նշվ. աշխ.*, հ. III, Եր., 1977, էջ 565:

<sup>51</sup> Նույնը:

<sup>52</sup> Т. Г а м к р е л и г з е, В. И в а н о в, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, стр. 803, Հ. Աճառյան, *նշվ. աշխ.*, հ. I, Եր., 1971, էջ 570:

<sup>53</sup> Նույն տեղում, հ. III, էջ 565:

<sup>54</sup> Ըստ Հ. Կարազոյրյանի, Ռուսա III-ը զանակալել է մ.թ.ա. 620-610թթ. միջև [Յ. Կարազոյրյան, *Մեթազոյր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում)*, Եր., 1998, էջ 68]:

<sup>55</sup> Գ. Ջահուկյան, *նշվ. աշխ.*, էջ 239:

<sup>56</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. II, Եր., 1944, էջ 136:

այ հմնտ. *արք-այ, մոր-այ, յոր-այ* և այլ)։<sup>57</sup> Բացառված չէ, որ թագավոր դարձած Ռուսա III-ը եղել է քրմական վերնախավի ներկայացուցիչ կամ, մույնիսկ քրմապետի որդի։

Հիշյալ բնակավայրերի դասային եռյակներ կազմելու տեսանկյունից պակաս ուշագրավ չէ այն հանգամանքը, որ պատմական Շիրակի հին նախարարական տոհմերը և երեքն էին՝ գահերեց Կամսարականը, Դիմաքսյանը (Շիրակյա Դիմաքսեան) և Սահառունին։ Մրանք ևս ժամանակին դասային եռյակ են կազմել։<sup>58</sup> Պատմական և նախապատմական Շիրակի տարածքում դասային եռյակ կազմած բնակավայրերի գոյության հետ միասին այս հանգամանքը հնարավոր է դարձնում Շիրակի ուրարտական դարաշրջանի Eriahi անվան քննարկումը՝ մույն եռադասության տեսանկյունից։ Հայտնի, որ Eriahi կոչվել է ոչ միայն երկիրը, այլև նրա բնակչությունը,<sup>59</sup> ընդ որում, նախանական համարվում է սրանցից երկրորդի անվանումը։<sup>60</sup> Անվան հիմքում հնդեվրոպական ծագումով հայերեն *\*երի* «երեք» արմատն է։ *Երեք* բառը ածանցման մեջ է մտնում նաև *\*երի-* տեսքով. հմնտ. *երիցս, երիր, երրորդ* (<\*երիր-որդ) և այլն։<sup>61</sup> Eriahi // *Երիախես* անվան *-ahi* // *-ախես* բաղադրիչի վերաբերյալ Հ.Կարազոյազյանը գրում է, որ նրա «բառավերջի «Ե» հնչյունը եղել է կիսաձայն «Ը» կամ, թերևս, չի էլ ընթերցվել»։<sup>62</sup> Այս դեպքում Eriahi // *\*Երիախս(ը)* անվան երկրորդ բաղադրիչը մույնամուտ է Հայկական լեռնաշխարհի այնպիսի տեղանունների *-ախս* բաղադրիչների հետ, ինչպիսիք են *Արցախս-ը, Կարծախս-ը, Կամախս-ը, Քաշախս-ը* և այլն,<sup>63</sup> իսկ անունն ամբողջությամբ ստուգաբանվում է որպես «երեք դասերի (երկիր)» կամ «երեք դասերով (ցեղ)»։

Այսպիսով, Ախուրյանի ավազանի հիշյալ բնակավայրերի մասին մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները, դրանց անունների ստուգաբանությունների հետ միասին, ամբողջական պատկերացում են տալիս առ այն, որ Ախուրյանի ավազանի հնագույն բնակչությունը հնդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքից եկող ավանդույթի համաձայն էր կառուցել (կամ եղածներն այդ ավանդույթին հարմարեցրել) դասային եռյակների տեսքով հանդես եկած այնպիսի բնակավայրեր, ինչպիսիք էին միջնադարյան Շիրակավան, Երազգավորս, Տիգնիս և Անի, Երեբունյք, Մաղազբերդ բնակավայրերի նախորդները։ Այդ հնագույն բնակավայրերից առաջինները հանդիսացել են բարիքներ արտադրողների դասի, երկրորդները՝ քրմական դասի, իսկ երրորդները՝ զինվորական դասի կենտրոնատեղիներ։ Եռադասության հնդեվրոպական ավանդույթի հետևությանը է Երվանդ Վերջին թագավորը մ.թ.ա. III դարի վերջին Ախուրյանի և Արաքսի գետախառնի շրջանում կառուցել բնակավայրերի մի եռյակ և՛ արտադրողների դասի կենտրոնատեղի Երվանդակերտ դաստակերտը, քրմական դասի կենտրոնատեղի «Քաղաք կոռց» Բագարանը և երկրի նոր մայրաքաղաքը՝ զինվորական դասի կենտրոնատեղի Երվանդաշատը։

## СИСТЕМА ПОСЕЛЕНИЙ— ТРОИЦ В БАССЕЙНЕ РЕКИ АХУРЯН

Резюме

С. Петросян

*Трехсословность индоевропейского общества гала основу галеким предкам армян в бассейне реки Ахурян основать такие поселения—троицы, какими являлись предшественники средневековых поселений Ширакаван, Еразговорс, Тигнис и Ани, Ереруйк, Магазберг.*

<sup>57</sup> Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, էջ 88-89:

<sup>58</sup> Ս. Պ ե տ ը ն յ ա ն, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Գյումրի, 2001, էջ 47-49:

<sup>59</sup> Н. А р у т ю н я н, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 258.

<sup>60</sup> И. М е щ а н и н о в, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, стр. 365.

<sup>61</sup> Հ. Ա ճ ա ը յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 49-50:

<sup>62</sup> Յ. Կ ա ղ ա զ ե յ ա ն, Նշվ. աշխ., էջ 240:

<sup>63</sup> Гр. К а п а н ц я н, Историко—лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 435—436.

*Из них предшественники Ширакавана и Ани были центрами сословия производителей, Еразгаворс и Ереруйк—жрецов, а Тигнис и Магазберг—воинов. Исходя из этой традиции царь Ерванд Последний (конец III в. до н.э.) в районе слияния рек Ахурян и Аракс построил три поселения: центр сословия производителей—гастакерт Ервандакерт, центр сословия жрецов — “город идолов” Багаран, новая столица Армении и центр сословия воинов—город Ервандашат. Значит и в Ервандидскую эпоху социальная структура общества древних армян обнаруживает тесное соотношение с социальным делением общества их далеких индоевропейских предков.*

**ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԵՎ ԽՆԴՐԱՅԻՆ ՈՐՈՇԻՉԸ ԱՐԴԻ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Գոյականին վերաբերող այն լրացական բառերը, որոնք օժտված են պարագայական կամ խնդրային նշանակությամբ, առանձին ուսումնասիրման անհրաժեշտություն են զգում: Դրանք երկակի նշանակությամբ օժտված շարահյուսական իրակություններ են՝ առնչվելով և՛ գոյականական անդամի, և՛ բայական անդամի լրացումներին: Իրողությունը դիտարկենք մի երկու օրինակի վրա: Մեր *դեմ առ դեմ* հանդիպումը *սեղանի շուրջ* այնպես էլ տեղի չունեցավ: Լսում էր քեռու պատմությունները *Հեռավոր արևելքից*:

Առաջին օրինակում ընդգծված բառերն օժտված են պարագայական նշանակությամբ, երկրորդ օրինակում ընդգծվածը՝ խնդրային նշանակությամբ: Բայց իրապես դրանք գոյականների են վերաբերում /*հանդիպումը, պատմությունները*/, շարահյուսորեն դրանց հետ են կապված: Այդպիսի գործածություններում բառի, կապային կառույցի շարահյուսական պաշտոնի որոշման հարցում առկա են իրարամերձ, վիճահարույց կարծիքներ: Դա թերևս հետևանք է նաև այն բանի, որ երկակի նշանակությամբ օժտված այդպիսի շարահյուսական իրակությունները դեռևս չեն դարձել առանձին հանգամանակի քննության առարկա: Շարահյուսությանը վերաբերող աշխատություններից, բուհական դասագրքերից ու ձեռնարկներից շատերում որոշիչ քննության ժամանակ այդպիսի շարահյուսական իրակությունները հաճախ ուշադրությունից դուրս են մնում:

Որքանո՞վ է հիմնավոր հետևյալ նախադասություններում ընդգծված շարահյուսական իրակություններն անվերապահորեն որպես տեղի պարագա ներկայացնելը:<sup>1</sup>

Մի քանի կանաչկոտ բլրակներ անցնելուց հետո երևացին Չիբուխյուրի աղքատիկ ցանքերը՝ *հարուստ սևահողի վրա*: Նկարիչը տեսավ նրա աչքերը և մոխրի վոշիկն՝ *ունքերի վրա, մազերի վրա*: Երեխան տարված էր ձկների խաղով՝ *փոքրիկ կապուտակ լճակի մեջ*:

Ս. Գյուլբուդաղյանը ընդգծված կապային կառույցները դիտում է որպես տեղի պարագա: Ծիշտ է, այդ բոլոր կապակցություններն էլ օժտված են տեղի նշանակությամբ, բայց չէ՞ որ դրանք փաստացի դրսևորումներով վերաբերում են *ցանքերը, փոշիկն, խաղով* գոյականական ձևերին, այսինքն՝ գոյականին և ոչ թե ստորոգյալներին կամ բայական որևէ լրացյալի: Մեր համոզմամբ՝ գոյականով արտահայտված լրացյալին վերաբերող տեղի նշանակությամբ օժտված այդպիսի լրացումները տեղի պարագա համարելը խնդրի վիճահարույց լուծում է:

Վերն ակնարկվեց, որ գոյականին վերաբերող լրացումը կարող է օժտված լինել նաև խնդրային նշանակությամբ: Ուշադրության արժանացնենք համապատասխան մի երկու օրինակ՝ «Ոմանց հիասթափությունը *կյանքից* անճարակության հետևանք է»:  
«Այդպիսիների մեկուսացումը *հասարակությունից* կհեշտացնի երիտասարդության բարոյական դաստիարակության գործը»:  
«Այդ բողոքները *ճնշումների դեմ* անհիմն են» և այլն: Ընդգծված բառերը, կապակցությունները՝ որպես խնդրային նշանակությամբ շարահյուսական միավորներ, իհարկե, հոմանշային առնչություն ունեն այսպիսի ներգործող, անջատման, վերաբերության խնդիրների հետ՝ «հիասթափվել *կյանքից*», «մեկուսացնել *հասարակությունից*», «բողոքել *ճնշումների դեմ*»: Բայց դա հիմք չափտի հանդիսանա ընդգծվածները /և այդպիսիները/ որպես խնդիր ճանաչելու համար:<sup>2</sup>

Երբ խնդրին մոտենում ենք նախադասության անդամների որոշման /դասակարգման/ սկզբունքը նկատի ունենալով՝ ակնհայտ է դառնում, որ պարագայական և խնդրային նշանակությամբ օժտված շարահյուսական իրակությունները դիտվելու են

<sup>1</sup> Ս. Գյուլբուդաղյան, *Ժամանակակից հայոց լեզու*, 1988, էջ 231:

<sup>2</sup> Ս. Աբրահամյան, Ն. Պաննասյան, Խ. Բադիկյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 3, էջ 394-398; Հ. Հարությունյան, *Կառավարումը ժամանակակից հայերենում*, էջ 235, 244: Ս. Գյուլբուդաղյան, *նշվ. աշխ.*, էջ 152:

որպես գոյականական անդամի լրացում, այսինքն՝ որոշիչ, այն պարզ պատճառով, որ դրանք փաստացի դրսևորումով հանդես են գալիս որպես գոյականին վերաբերող լրացում: Իսկ գոյականի կամ ընդունված ձևով ասած՝ գոյականական անդամի լրացումները լինում են որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ և ոչ թե խնդիր կամ պարագա:

Իհարկե, բացարձակորեն իշխող չէ այն տեսակետը, թե գոյականին վերաբերող՝ պարագայական և խնդրային նշանակությամբ լրացումները պարագա և խնդիր են ճանաչվելու: Կա նաև այլ տեսակետ: Ռ. Իշխանյանը բայանուն գոյականների լրացումների այսպիսի ըմբռնում ունի: Նա դրանք լայն առումով խնդիր է համարում, նեղ առումով՝ որոշիչ: «Բայանունները,- գրում է Ռ. Իշխանյանը,- ունենում են լայն առումով խնդիրներ, որոնք նեղ առումով համարում ենք մականուն՝ որոշիչ: Օրինակ՝ ուղերձ *երիտասարդներին* բառակապակցության մեջ *երիտասարդներին*-ը ուղերձ գոյականի խնդիրն է լայն առումով, իսկ նեղ առումով համարում ենք որոշիչ, մտածելով՝ ինչպիսի՞ ուղերձ: Կամ՝ *փախուստ բանտից, բանտից*-ը *փախուստ* գոյականի խնդիրն է լայն առումով, իսկ նեղ առումով համարում ենք որոշիչ /ինչպիսի՞ փախուստ/»: <sup>3</sup> Ի՞նչ է նշանակում լայն առումով, նեղ առումով: Կոնկրետ որոշվելու է, թե ընդգծված այդ հոլովածները նախադասության ի՞նչ անդամ են: Նկատենք նաև, որ տարբերություն դրված չէ խնդրային նշանակությամբ օժտված *երիտասարդներին* և պարագայական նշանակությամբ օժտված *բանտից* հոլովածների միջև:

Բայանվան այդպիսի լրացումները ճանաչվում են նաև այլ ըմբռնումով և տերմինավորումով: Ձեռնարկված միավորով գոյականական բառակապակցությունների քննությանը վերաբերող հոդվածում, անդրադառնալով դրանց լրացական անդամների շարահյուսական պաշտոնի որոշմանը, հեղինակները նշում են, թե դրանք «պարագայական որոշիչ և խնդրային որոշիչ» <sup>4</sup> են: Օրինակ՝ հանդիպում *գյուղում* կապակցության մեջ *գյուղում*-ը պարագայական որոշիչ է դիտվում, իսկ հանդիպում *ընկերներին* կապակցության մեջ *ընկերներին*-ը՝ խնդրային որոշիչ: Կարծում ենք՝ միանգամայն իրավացի են հեղինակները, երբ նշում են, թե խնդրի նման լուծումը ոչ թե գոյություն ունեցող հակադիր տեսակետների «փոխզիջողական հաշտեցում է, առավել ևս ոչ թե քմահաճ տերմինավորում, այլ երկակի արժեք ունեցող երևույթն իր ամբողջության մեջ, իր բուն էությանը ճանաչելու արտահայտություն» /Էջեր 107-108/:

Ամբողջ վերը նշվածից բխող հետևությունն այն է, որ որոշիչի ըմբռնմանը, դրա արտահայտությանը վերաբերող որոշ հարցեր ճշգրտման անհրաժեշտություն ունեն, որոշիչն ուշադրության առարկա է դառնալու իր բազմազան դրսևորումների մեջ:

Նախ՝ որոշակի տարբերություն է դրվելու գոյականին վերաբերող այսպիսի լրացումների միջև. մի կողմից՝ *բարձր ծառ, երեք մատիտ, այսպիսի* աշակերտ, *գրելու* թուղթ ևն, իսկ մյուս կողմից՝ հանդիպում *փողոցում, բառ առ բառ* արտասանություն, *փաստերով* ասացուցում ևն: Այս երկու կարգի որոշիչների տարբերությունը նախ պայմանավորվում է նրանով, որ առաջինները վերաբերում են առարկայանուն գոյականների, իսկ երկրորդները՝ բայանունների: Բայանունն օժտված է գործողության իմաստով, դրանում առարկայացված ձևով գործողություն է դրսևորվում: Հանդիպում, արտասանություն, ասացուցում գոյականներն օժտված են «հանդիպել», «արտասանել», «ասացուցել» գործողությունների իմաստներով:

Ինչպես որ բայանուններն իմաստային առումով մի տեսակ միջին դիրքում են գտնվում գոյականների և բայերի միջև, այնպես էլ դրանց վերաբերող լրացումները որոշակի ընդհանրություն պիտի ունենային գոյականական անդամի լրացում որոշիչ և բայական անդամի լրացումներ խնդիրների ու պարագաների հետ:

Բուն և պարագայական ու խնդրային որոշիչների տարբերությունը պայմանավորող երկրորդ կարևոր հանգամանքը հետևյալն է: Վաղուց նկատված իրողություն է, որ գոյականական բառակապակցություններ կարող են առաջանալ զեղչման հետևանքով:

<sup>3</sup> Ռ. Իշխանյան, *Արդի հայերենի շարահյուսություն*, 1986, էջ 145-146:

<sup>4</sup> Ս. Մելքոնյան, Ս. Հայրապետյան, *Ձեռնարկված միավորով գոյականական բառակապակցություններ, Գյուլիհի մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», 1993, էջ 107:*

Ի՞նչ են շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի,

Ա՛խ, թե նորից գրտնեն ճամփան *դեպի էնտե՛ր, դեպի տու՛ն* /Հ. Թումանյան/:

Ի տարբերություն նախորդ օրինակների՝ սրանում լրացյալը /ճամփան/ գործողության իմաստով օժտված չէ, բայց և նրա ընդգծված լրացումները պարագայական նշանակությամբ են օժտված /«դեպի էնտեղ, դեպի տուն»/: Դա բացատրվում է նրանով, որ վերջիններս որպես *ճամփա* գոյականի լրացում են հանդես եկել այն բանի հետևանքով, որ դրանց և *ճամփա* բառով արտահայտված լրացյալի միջև ենթադրվում է մի զեղչված բայական միավոր՝ «...ճամփան, որ *տանում է...*» կամ՝ «դեպի էնտեղ, դեպի տուն *տանող* ճամփան...»: Այդպես էլ՝ կամովին ընտրություն – կամովին /կատարված/ ընտրություն, սեր դեպի մայրենին–սեր /ցուցաբերած/ դեպի մայրենին ևն: Ուրեմն՝ ենթադրվող, զեղչված շարահյուսական միավորը, որ ունակ է պարագա կամ խնդիր լրացում ընդունելու, առկա չէ, և նրա լրացումը փոխանցվել է գոյականին, հանդես է եկել որպես գոյականական անդամի լրացում:

Այսպիսով, որոշյալի՝ գործողության նշանակությամբ օժտված լինելը /բայանուն/ և զեղչումը այն հանգամանքներն են, որոնցով պայմանավորվում է պարագայական և խնդրային որոշիչների գոյությունը: Պետք է տարբերություն դնել ա՛յլ և մյուս կարգի որոշիչների միջև: Առաջինները պարագայական և խնդրային որոշիչներ են, մյուսները՝ բուն որոշիչներ: Առաջիններն առանձնապես լայն գործածություն ունեն խստակցական լեզվում, հրապարակախոսական խոսքում:<sup>5</sup>

*Պարագայական որոշիչը* գոյականով, մակբայով, կապով ու կապվող բառով արտահայտվող այն լրացումն է, որը ցույց է տալիս որոշյալի հատկանիշը՝ արտահայտելով պարագայական զանազան հանգամանքներ՝ տեղ, ժամանակ, չափ ևն:

Գոյականով պարագայական որոշիչն արտահայտվում է ուղղական և սեռական հոլովներից բացի մյուս բոլոր հոլովներով: Բացառապես պարագայական նշանակությամբ օժտված լինելու շնորհիվ ներգոյական հոլովը բավական կարևոր տեղ ունի շարահյուսական այդ պաշտոնի դրսևորման հարցում: Օրինակներ՝ Հաճելի էր այդ հանդիպումը *Փարիզում*: Նոր բույրը հայրենի գյուղի հակառակ *ծայրում* համագյուղացիների բնակարաններին նման չէր:

Տրական, հայցական հոլովներով արտահայտված պարագայական որոշիչներն հիմնականում արտահայտում են տեղի, ժամանակի գաղափար: Բերենք համապատասխան օրինակներ՝ Չեր հանդիպումները հարևանիս *տանը* բոլորին հայտնի են: Երեխաների զբոսանքը *գետակին* նրանց մեծ հաճույք պատճառեց: Մի հոյակապ շենքի պատի տակ, մայթին, նստել է մի հաշմանդամ, քաջության *մեղալները կրծքին*, երգում է /Ավ. Իսահակյան/: Ներսես Մեծի քարտումը *Պատմոս* նույն կայսեր հրամանով էր /Բաֆֆի/: Նրանց ժամանումը *Գյումրի* հարգելի պատճառով հետաձգվեց:

Տրական հոլովով պարագայական որոշիչ ունեցող շարահյուսական կառույցը հատկանշվում է կիրառական այն յուրահատկությամբ, որ հաճախ հանդես է գալիս վերնագրի դերով՝ Նվեր Վրաստանի բանաստեղծներին /Հ. Թումանյան/, Նամակ ռուսաց թագավորին /Ա. Բակունց/, Խոսք իմ որդուն /Ս. Կապուտիկյան/:

Բացառական, գործիական հոլովներով արտահայտված պարագայական որոշիչները հատկանշվում են իմաստային բազմազանությամբ՝ օժտված լինելով տեղի, ժամանակի, չափի, նպատակի և այլ իմաստներով: Օրինակներ՝ *Դրսից* առաքումները Գյումրի դեռևս շարունակվում են: *Տարիներով* թափառումների ընթացքում շատ դառնություններ է ճաշակել: Հարևան երկիր կարևոր *գործով* մեկնումը հետաձգվեց: Խանի *սպարանքը* շրջապատի փոքրիկ *գյուղով* ընկած էր լեռան լանջին /Գ. Սևունց/:

Պարագայական որոշիչների ձևավորման հարցում ակտիվ դեր ունեն կապերը: Հասկանալի է, որ սույն պարագայում դրանց այն գործածություններն են նկատի առնվում, երբ կապվող բառի հետ հանդես են գալիս որպես բայանվան լրացում կամ ընկալվում են որպես զեղչված, ենթադրվող բայական միավորին վերաբերող կապակցություն: Կասպային կառույցը ասենք Ջիվանու այս տողում բուն որոշիչ է /«Ժոխքում

<sup>5</sup> Գեղարվեստական գրականությունից քաղված օրինակների հեղինակը նշվում է, իսկ լրագրերից, ամսագրերից և այլ աղբյուրներից քաղված օրինակները տրվում են առանց որևէ նշումի:



էլ իմ ունեցած *կրակի պես* հուր չկա», իսկ հետևյալ օրինակներում՝ պարագայական որոշիչներ՝ Վերելքը *դեպի* լեռան հորդառատ *աղբյուրները* թեև դժվար, բայց շատ էր հաճելի: Ինչ կասկած, ամեն հայ արտով կամ գործով մասնակից է լինելու էս մեծ հանդեպին Վարագա բարձունքների վրա /Հ. Թումանյան/: *Տանտիրոջ ու մեր միջև* տարածայնությունն այնքան մեծ չէր /Շիրվանզադե/ և այլն:

Գալով մակբայով արտահայտվող պարագայական որոշիչներին՝ հետևյալը պետք է նշել: Արդի հայերենում մակբայի գործածությունը որպես բայանվան լրացում այնքան սովորական է, որ կասկածի տակ չպիտի առնվի: Առավել ևս հիմնավոր չի կարելի համարել այն կարծիքը, թե բայանվան հետ գործածված այդպիսի բառերը ոչ թե մակբայ են, այլ՝ ածական: Խոսքը վերաբերում է այսպիսի գործածությունների՝ «Նըրանց հաճախակի հանդիպումները այժմ էլ շարունակվում են», «Հազիվ էր լավում նրանց ցածրաձայն խոսակցությունը», «Մեքենայի այդպիսի արագ ընթացքը զարմացրել էր բոլորին»<sup>6</sup> Նկատի ունենալով այս գործածությունները՝ Մ. Ասատրյանը գրում է, թե «այսպիսի կիրառությունների դեպքում *հաճախակի, ցածրաձայն, արագ* և նման բառերը մեր կարծիքով ոչ թե մակբայներ, այլ ածականներ են» /ն.տ./: Չգտելով հիմնավորել իր այդ կարծիքը՝ հեղինակն ըստ էության այնպիսի միտք է զարգացնում, թե իբր առհասարակ բայանունները չեն կարող մակբայով լրացում ունենալ: Բայց նա ինչպե՞ս է հիմնավորում այդ միտքը: «Մեր այս մտքի օգտին է խոսում,- գրում է հեղինակը,- թեկուզ և այն, որ բայանուն գոյականների վրա չեն կարող դրվել, ասենք, *որեն* ածանցով կազմված մակբայները. «անսպասելիորեն հանդիպում», «արագորեն ընթացք» և նման տիպի կապակցություններ ժամանակակից հայերենում գոյություն չունեն» /ն.տ./: Ընդունենք, որ այդպիսի կապակցություններ արդի հայերենում գոյություն չունեն, բայց մի՞թե դա հիմնավոր կովան է, որ եզրակացվի, թե դա «ցույց է տալիս, որ *արագ ընթացք, արագ շարժում, հաճախակի հանդիպում, հանկարծակի վերադարձ* և նման կապակցությունները «ածական+գոյական» կապակցություններ են» /ն.տ./: Ինչ է նշանակում *որեն* ածանցով կազմվածները դարձնել մակբայի էտարն և իրապես մակբայները ներկայացնել որպես ածական:

Նկատելի է, որ պարագայական որոշիչի դերով առանձնապես ակտիվ են հանդես գալիս ձևի մակբայները: Օրինակներ՝ Նախադասության միավորների *բառ առ բառ* արտասանությունը նրա համար կարծես խոսելու սովորական եղանակ էր դարձել: Չարմանում են նրա *հանկարծակի* խոռվության վրա /Բաֆֆի/:

Նշենք նաև այլ տեսակի մակբայների գործածություններ պարագայական որոշիչի դերով՝ *Յման* բանտարկությունը գնդակահարությունից լա՞վ է: Երկու օր անց *կրկին* հանդիպումն ուղղակի անսպասելի էր: Լրագրի այդ համարի՝ քաղաքում և *այլուր* տարածումը խիստ անհրաժեշտ համարվեց:

*Խնդրային որոշիչը* գոյականով և կապով ու կապվող բառով արտահայտվող այն լրացումն է, որ ցույց է տալիս բայանունով, գործողության իմաստով օժտված այլ գոյականներով արտահայտված իրողության հետ կապ ունեցող առարկաներ, անձեր: Ուշագրավ է, որ գոյականը խնդրային որոշիչի ձևավորման հարցում ակնհայտ ակտիվություն է ցուցաբերում սեռական հոլովով, մի հոլովով, որ առհասարակ ասկավ է հանդես գալիս որպես խնդիր լրացում: Ահա սեռական հոլովով արտահայտված խնդրային որոշիչի մի քանի օրինակ՝ *Շենքի* վերանորոգումը ընդամենը մեկ շաբաթ տևեց: *Խնդրի* քննարկումը բավական հաջող էր նախապատրաստված: Այդպես էլ՝ *փողոցի* մաքրումը, *խոզերի* բտումը, *ծառերի* ծերատումը և այլն: Ինչպես հեշտ է նկատել, խնդրային որոշիչի հարցում սեռական հոլովը «նվաճողական» դիրք ունի հայցական հոլովի հանդեպ, բայանուն գոյականների հետ ենթադրելի հայցականի փոխարեն գոյականի սեռական հոլովն է հանդես գալիս:

Այսպիսի սեռականների շարահյուսական պաշտոնի հիմնավոր ճանաչումը կլինի դրանք խնդրային որոշիչ համարելը և ոչ թե՝ հատկացուցիչ կամ բուն որոշիչ: Նման սեռական հոլովաձևերը օժտված են խնդրային նշանակությամբ՝ ցույց տալով այն առարկան, որը բայանվամբ արտահայտված գործողության օբյեկտն է:

<sup>6</sup> Մ. Ա ս տ ր յ ա ն, *Ժամանակակից հայոց լեզու*, 1987, էջ 194:

Ընդունված կարծիք է, որ որոշի պաշտոնով կարող է գործածվել որոշ բառերի բացատրական հոլովը՝ *սատինից վզկաս, ոսկուց մատանի, մահուդից վերարկու* և այլն: Այսպիսի բացատրականները որպես խնդրային որոշիչ դիտելու առումով ուշագրավ է իրողության այսպիսի ըմբռնումը: Նկատի ունենալով այդպիսի կապակցությունները՝ Մ. Ասատրյանը նշում է, թե դրանք «որպես կանոն, բայական ձևերի գեղջման արդյունք են /սատինից թաշկինակ = սատինից կարված թաշկինակ/»: <sup>7</sup> Վերը նշվեց, որ բայական ձևերի գեղջման հետևանքով լրացումն օժտվում է խնդրային և պարագայական նշանակությամբ: Ուրեմն՝ նշված /և նման/ կապակցություններում բացատրական հոլովածները խնդրային որոշիչ են: Այդպիսի շարահյուսական պաշտոնով հաճախ են հանդես գալիս անջատման, ներգործման, վերաբերության բացատրականները: Օրինակներ՝ Փոխառությունները և փոխազդեցությունները հարևան *ազգերից* սովորական վիճակն է ամեն մի լեզվի /Հ. Թումանյան/: *Նժդեհից* մեջբերումները շատ են Ձեր խոսքում: Հեռվում երևում էր մի շինություն կարմիր *աղյուսից* /Շիրվանզադե/:

Հատկապես հրապարակախոսական խոսքում խնդրային որոշիչների ձևավորման գործում որոշակի է նաև կապային կառույցների դերը: Կապվող բառով մատնանշվում են առարկաներ, անձեր, որոնց նկատմամբ ունեցած զանազան հարաբերություններով բնութագրվում են լրացյալներով արտահայտված իրողությունները: Նշենք տարբեր հարաբերության կապերով մի քանի օրինակ՝ Ամեն զգացմունք *դեպի յուր ծնողը, դեպի յուր ազգն ու հայրենիքը* մեռած էր նրա սրտում /Բաֆֆի/: Փոս ընկած աչքերում միամիտ սեր կար *դեպի խոտը, կովը, ծաղկած սարերը* /Ա. Բակունց/: *Մարդու դեմ* թշնամանքը արատավոր հոգու արտահայտություն է: Զո հավատն *առ Աստված* քեզ կփրկի: Նա յուրաքանչյուրին յուր *հասկացողության համեմատ* պատասխաններով գոհացնում էր /Պոռչյան/:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում լայն գործածություն ունեն երկակի նշանակությամբ օժտված շարահյուսական իրողությունները: Դրանք գոյականական անդամի լրացում որոշիչի հետ առնչվում են նրանով, որ փաստացի դրսևորումով վերաբերում են գոյականների: Այդպիսի շարահյուսական իրողությունները նաև որոշակի առնչություն ունեն բայական անդամի լրացումների հետ նրանով, որ օժտված են պարագայական և խնդրային նշանակությամբ: Հիմնականում այդպիսի երկակի նշանակությամբ օժտված լինելու պատճառով նման լեզվական իրողությունների շարահյուսական պաշտոնի որոշման հարցում գոյություն ունեն տարակարծություններ, հակասական տեսակետներ: Հաշվի առնելով այդպիսի լրացումների նշված իմաստային յուրահատկությունը՝ դրանք ճանաչվելու են որպես պարագայական որոշիչ և խնդրային որոշիչ: Ավելորդ չի լինի ընդգծել, որ վերջիններս ոչ թե լրացման առանձին տեսակ են ճանաչվում, այլ՝ որոշիչ ենթատեսակներ: Խնդրի նման լուծումը կնպաստի ինչպես որոշիչի, այնպես էլ խնդիրների ու պարագաների ավելի հիմնավոր ըմբռնմանը:

## ОБСТОЯТЕЛЬСТВЕННОЕ И ДОПОЛНИТЕЛЬНОЕ ОПРЕДЕЛЕНИЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *В. Мелконян* \_\_\_\_\_

Второстепенные члены предложения, дополняющие существительные, которые имеют обстоятельное и дополнительное значение, требуют отдельного изучения - они представляют реалии, имеющие двойное синтаксическое значение, рассматривающиеся с одной стороны как поясняющие слова именного, а с другой стороны - глагольного члена. Их сходство с поясняющими словами именного члена выражается в том, что фактически они определяют существительное, а сходство с поясняющими словами глагольного члена в том, что они имеют обстоятельное и дополнительное значение.

В статье обосновывается та мысль, что для преодоления разногласий, возникающих при определении синтаксической роли этих реалий, нужно рассматривать их обстоятельные определения («Մեր դեմ առ դեմ հանդիպումը տեղի չունեցավ») и как дополнительные определения («Ունանց հիասրափությունը կյանքից անհաջողության հետևանք է»):

<sup>7</sup> Մ. Ասատրյան, *Նշված աշխ., էջ 199:*

ОБРАЗОВАНИЕ РЕДУПЛИЦИРОВАННЫХ ПРИЛАГАТЕЛЬНЫХ  
(на материале армянского, русского и английского языков)

Редупликация является одним из древнейших и распространенных словообразовательных способов.

Повторением прилагательных (прил. + прил.) образуются однородные прилагательные и усилительные наречия. Такие повторы усиливают значения прилагательных, а при употреблении в грамматическом значении наречия показывают признак действия, высшую степень признака.

Обычно повторяются однослоговые и двуслоговые прилагательные. Например, в армянском языке: զով-զով *теплый-теплый*, չոր-չոր *сухой-сухой*, երկար-երկար *длинный-длинный*, նեղ-նեղ *узкий-узкий*, փոքր-փոքր *маленький-маленький*, զեր-զեր *полный-полный*, վառ-վառ *яркий-яркий*, հին-հին *старый-старый*, թեթև-թեթև *легкий-легкий* и др.

В русском языке повторы данного типа широко представлены. Например: низкий-низкий, старый-старый, желтый-желтый, умный-умный и др.

В английском языке данный тип редупликативных образований также представлен. Например: fie-fie а. неприличный; hilly-billy II а. разг. деревенский; hurly-burly II а. беспорядочный, перепутанный; hush-hush а. разг. тайный, секретный; lardy-dardy а. разг. манерный, фатовый; ирон. 1. sentimentalный, жеманный; 2. сладко-красивый, слащавый (о стиле) и др.

Повторы, образованные по модели (прил. + прил.) выражают: а) усиление значения. Например: լայն-լայն *широкий-широкий*; բանկ-բանկ *дорогой-дорогой*; ճիգ-ճիգ *громкий-громкий*, զուտ-զուտ *густой-густой*; б) высшую степень признака: *зеленый-зеленый-презеленый*, *белый-белый-пребелый*, *высокий-превысокий*, *мягкий-премягкий*, *далекий-предалекий*, *малый-премалый*; в) значение множественности.

Парные прилагательные, выражающие значение усиления, образуются от качественных прилагательных. Например: մեծ-մեծ *большой-большой*, նեղ-նեղ *узкий-узкий*, լավ-լավ *хороший-хороший*, լայն-լայն *широкий-широкий*, բարձր-բարձր *высокий-высокий*, թեթև-թեթև *легкий-легкий*, հին-հին *старый-старый* и др.

Повторение качественных прилагательных характерно и для русского языка. В стилях разговорной речи и художественной литературы часто встречаются несколько структурных разновидностей повторения качественных прилагательных для выражения безотносительно предельно высокой степени качества или меры качества в оценке говорящего (субъективная оценка). Например: синий-синий, глубокий-глубокий, яркий-яркий и др.; злая-презлая, густой-прегустой, старый-престарый и др.; хороша-расхороша, худой-расхудой и др.; светлым-светла, красным-красна, седым-седые и др.; рад-радехонек, рад-радешенек, бел-белешенек, мал-малехонек, чище-чистого, слаще-сладкого, яснее-ясного, легче-легкого, глупее-глупого и др.<sup>1</sup>

Данный способ образования повторов выражает высшую степень признака срав. կանաչ-կանաչ *зеленый-зеленый*, կափ-կանաչ *зеленый-презеленый*, ճերմակ-ճերմակ *белый-белый* и ճիփ-ճերմակ или ճիփ-ճերմակ *белый-пребелый*, դեղին-դեղին *желтый-желтый* и դեփ-դեղին *желтый-прежелтый* и т.д.

Парные прилагательные, согласно их усилительному значению, часто произносятся особым тембром, который на письме обозначается восклицательным знаком, поставленным на обоих сегментах, например: մե՛ծ-մե՛ծ տներ *большие-большие дома*, հեռո՛ւ-հեռո՛ւ գյուղեր *далекие-далекие села*, կանա՛չ-կանա՛չ լիճեր *зеленые-зеленые долины* и др.

<sup>1</sup> А. К и с е л е в, *Лексическое повторение как грамматическое средство русского языка, автореферат канд. диссертации, М., 1954, стр 13.*

Прилагательные-повторы, имеющие значение множественности, требуют определяемого слова во множественном числе. Например: *ul-ul* (*աչբեր, հոբեր, ծաղեր*) *черные-черные глаза, брови, волосы*, *կլր-կլր* (*աչբեր*) *круглые- круглые глаза*, *տնաւի-տնաւի* (*ընտելիքներ*) *разнообразные напитки*, *բարձր-բարձր* (*աւեր, շէրեր*) *высокие-высокие горы, здания* и др.

Компоненты парных прилагательные обозначают:

1. Внешние признаки предметов. Например: *կլր-կլր* *круглый-круглый*, *նեղ-նեղ* *узкий-узкий*, *փոքր-փոքր* *маленький-маленький*, *չիտի-չիտի* *чистый-чистый*, *բարձր-բարձր* *высокий-высокий*, *մանր-մանր* *маленький-маленький*, *տոկոս-տոկոս* *тучный-тучный*, *քիչ-քիչ* *пухлый-пухлый*, *սրտաւոր-սրտաւոր* *П а. зигзагообразный* и т.д.

2. Внутренние признаки предметов. Например: *քաղցր-քաղցր* *сладкий-сладкий*, *սառ-սառ* *холодный-холодный* и др. В русском языке, например: *счастливый-счастливый*, *сытый-сытый*, *дерзкий-дерзкий*, *добрый-добрый*, *древний-древний*, *мягкий-мягкий*, *подлый-подлый*, *смелый-смелый*, *спелый-спелый* и т.д.

В английском языке удвоением прилагательных также выражаются внутренние признаки предметов, например: *chow-chow* *П а. разг. смешанный*; *goody-goody* *П а. амер. ханжеский*; *heart-to-heart* *а. интимный, сердечный, откровенный*; *higgledy-piggledy* *З. в грам. знач. прил. беспорядочный, хаотический, сумбурный*; *clever-clever* *а. ирон. считающий себя умнее всех; умный-преумный*; *fuddy-duddy* *П а. разг. 1. ворчливый, придирчивый; 2. отсталый, консервативный*; *loosey-goosey* *а. амер. разг. нескладный, неуклюжий*; *too-too* *І а. разг. Претенциозный, слезливо-сентиментальный*; *yo-yo* *П а. прост. неустойчивый, зыбкий, шаткий* и др.

3. Цветовые признаки, оттенки предметов. Например: *կանաչ-կանաչ* *зеленый-зеленый*, *սպիտակ-սպիտակ* *белый-белый*, *դեղին-դեղին* *желтый-желтый* и др.

Двойное нагромождение слов *կարծիր, կանաչ, սպիտակ, ul* и др. в качественном отношении ничего не дает. Н. Дмитриев отмечает: “Прием удвоения имеет в виду только количественную модификацию понятия или же привнесение некоего эмоционального оттенка в общий тон повествования”<sup>1</sup>.

Для этих целей словам типа *կարծիր, սպիտակ, կանաչ, ul* и др. придается некий сокращенный коэффициент, который развивается из основного слова способом его сокращения и сопровождается внешним звуковым изменением данного слова. “Этот коэффициент, – отмечает Н. Дмитриев, – фактически предшествует основной величине... Таким образом, коэффициент всегда односложен. Он возникает в результате двойного процесса: 1. сокращение слогов основы, если, конечно, основа имеет минимум 2 слога и 2. оформление коэффициента специфическим согласным, в результате чего образуется закрытый слог”<sup>2</sup>. Такими согласными в армянском языке в основном выступают *փ* и *ւ*.

Акад. Г. Джаукян повторы типа *կաւ-կարծիր, դեփ-դեղին* рассматривает как усеченный редуликат, который может как предшествовать, так и следовать за редулицируемым, причем в этом случае может быть только один редуликат<sup>3</sup>.

В «Лингвистическом словаре»<sup>4</sup> редупликационные образования данного типа определяются как ломаные или неполные повторы (*ընկալ կրկնափոխեր*). Первый сегмент повторов претерпевает фонетические изменения.

В русском языке удвоенные прилагательные, обозначающие цветовые оттенки, также многочисленны. Например: *белый-белый*, *красный-красный*, *синий-синий*, *черный-черный*, *розовый-розовый* и т.д.

<sup>1</sup> Н. Дмитриев, *Грамматика кумыкского языка*. – Л., 1940, стр. 85.

<sup>2</sup> Там же, стр. 86.

<sup>3</sup> Г. Джаукян. *Универсальная теория языка*, М., 1999, стр. 106.

<sup>4</sup> Г. Петросян, С. Галстян, Т. Карагулян. *Лингвистический словарь*, изд. АН Арм. ССР, Ер., 1975, стр. 160.

Прилагательные-повторы с добавлением приставки пре- выражают высокую или максимальную степень качества. Эти производные образуются по модели  $A_nA_1$ , где  $A$ – прилаг.,  $nA_1$ – прилаг., выражающие максимальную степень качества, например; белый-пребелый, зеленый-презеленый, синий-пресиний, черный-пречерный, желтый-прежелтый и т.д.

Если в русском языке для выражения максимальной степени качества к удвоенному прилагательному ко второму сегменту добавляется приставка пре-, то в армянском языке для выражения максимальной степени качества используется форма усеченного редуликата.

В некоторых языках, например, в индонезийском языке сложные прилагательные, образованные сочетанием прилагательного с прилагательным, выражают слабую степень качества у прилагательных (обычно обозначающих цвета). Эти производные образуются по следующим моделям<sup>5</sup>:

а) удвоенная корневая морфема + – an:

*biru-biru* “синеющий, синеватый”, *abu-abu* *сероватый, пепельный*.

б) ke – + удвоенная корневая морфема + – an:

*kerah-kerah* *черный*– *kehitam-hitaman* *чернеющий, черноватый*.

4. Свойства характера, особенности психологического склада человека, душевные состояния. Например: *ihupir-ihupir* *грустный-грустный*, *hupir-hupir* *гордый-прегордый* и др. Данная группа повторов немногочисленна и в русском языке. Например: *глупый-преглупый*, *жестокый-жестокый*, *твердый-претвердый*, *тихий-тихий*, *тупой-тупой*, *четкий-четкий* и др.

5. Большая часть вышеприведенных прилагательных показывает способ действия и обычно употребляется с глаголом, например: *hupir-hupir* *руж[ɨ] гордо-гордо ходить*, *ihupir-ihupir* *биш[ɨ] косо-косо, холодно-холодно смотреть*, *ihupir-ihupir* *р[ɨ] тяжело-тяжело, легко-легко ходить*, *ihupir-ihupir* *п[ɨ] весело-весело петь*. Повторы данного типа употребляются как наречие.

Парные прилагательные, образованные по модели прил. + прил., могут оставаться без изменений и могут подвергаться различным фонетическим изменениям в первом или во втором сегменте.

Парные прилагательные, образованные по модели прил. + прил. распространены и в других языках.

Например: в лаосском языке повтор прилагательных всегда выражает усиление степени качества или свойства, например: *моо* *близкий*, но *моо-моо* *очень близкий*, *дон* *давний*, *дон-дон* *давний-предавний*, *муа* *тусклый*, *муа-муа* *совсем тусклый*<sup>2</sup>. Сложные прилагательные с усилительным значением, полученные повторением одного и того же прилагательного способом сочинения, характерны и для карачаево-балкарского языка, например: *кьаты-кьаты* (кумык. *кьатты-кьатты*), *твердый-претвердый*, *кьыхса-кьыхса* (кумык. *кьыхсча*) *короткий-прекороткий*, *узун-узун* *длинный-преддлинный* и т.д.<sup>1</sup>.


Данное явление характерно и для башкирского языка. Прилагательные-повторы образуются прежде всего путем удвоения простых основ, например: *бэлкэй-бэлкэй* (йылгалар) – *маленькие-маленькие* (реки), *вак-вак* (таммар), *мелкие-мелкие* (камни), *якшы-якшы* (аттар) *хорошие-хорошие* лошади и т.п.

<sup>5</sup> Н. Алиева, В. Аракин, А. Оглобин, Ю. Сирк, *Грамматика индонезийского языка*, М., 1972, стр. 116.

<sup>2</sup> А. Морев, А. Москалов, Ю. Плаш, *Лаосский язык*, М., 1972, стр. 68.

<sup>1</sup> М. Хабичева, *Именное словообразование и формообразование в карачаево-балкарском языке (опыт сравнительно-исторического изучения) автореферат докторской диссертации*, Баку, 1972, стр. 51.

Удваиваются на таких же началах и аффиксальные прилагательные: амыгас-амыгас (эштэр) *срочные-срочные (работы)*, кесло-кесло (егеттер) *сильные*



-*сильные парни*, уткер-уткер (бысактор) *острые-острые* ножи и т.п.<sup>2</sup>

Парные прилагательные с усилительным значением характерны и для якутского языка, например: быстах-быстах (отрезанный-отрезанный), киэнг-киэнг *широкий-широкий* и т.д.<sup>3</sup>

Рассмотрим редупликативные образования имен прилагательных с точки зрения частеречного анализа, применяя гомогенные и гетерогенные модели.

Известно, что гомогенная модель применяется в случае, если лексема при всей деривации остается в пределах одной и той же части речи. Гетерогенная модель применяется в случае, если происходит транспозиция частей речи посредством соответствующих транспозиторов.

Рассмотрим применение каждой модели в исследуемых языках.


1. В русском языке парные прилагательные образуются по модели прил. + прил. → прил.. Например: низкий-низкий, далекий-далекий, маленький-маленький, пухлый-пухлый, толстый-толстый, дряхлый-дряхлый, добрый-добрый, подлый-подлый, смелый-смелый, теплый-теплый, счастливый-счастливый и т.д.

Таким образом, в модели оказываются однофункциональные единицы. Здесь мы имеем нетранспозитивное сложение, так как при словосложении сохраняется функциональное значение (частеречный) характер ядерного члена. Итак, в русском языке образование парных прилагательных происходит на базе единиц одного уровня – соуровневым словосложением.

2. В английском языке удвоенные прилагательные, образованные по гомогенной модели (прил. + прил. → удвоенное прилагательное) также имеет место. Например: *fie-fie* а. неприличный, *lardy-dardy* а. разг. манерный, фатовый, *fuddy-duddy* а. разг. 1. ворчливый, придирчивый; 2. отсталый, консервативный.

3. В армянском языке по гомогенной модели (прил. + прил. → удвоенное прилагательное) также образуются удвоенные прилагательные.

Например:




Парные прилагательные могут приобретать новое функциональное значение. А если сложение приобретает новое функциональное значение (переход в отличную от ядра часть речи), говорится о транспозитивном сложении.

<sup>2</sup> Грамматика современного башкирского литературного языка, М., 1981, стр. 192.


<sup>3</sup> Грамматика современного якутского литературного языка. Фонетика и морфология, М., 1982, стр. 168.

Например, в армянском применяется и гомогенная и гетерогенная модели.  
 Некоторые парные прилагательные выступают в функции прилагательного и в функции существительного по модели



В армянском языке удвоенные прилагательные, выступающие в функции существительного и прилагательного, немногочисленны.


Более многочисленную группу удвоенных прилагательных, имеющих новое функциональное значение (переход в отличную от ядра часть речи) имеем в английском языке.



Итак, в английском языке, данная группа парных прилагательных представлена в софункциональных значениях существительного и прилагательного.

Рассмотрим удвоенные прилагательные, образованные по модели прил. + прил., которые выступают и как прилагательные, и как наречия по модели:

Например:




Данная группа редуцированных прилагательных, имеющая софункциональные значения прилагательного и наречия широко представлена в армян-



ском языке. В английском языке представлена незначительно, а в русском языке вообще не представлена.

Рассмотрим редуцированные прилагательные, которые представлены в трех грамматических значениях и образованы по модели:




В английском языке данная группа представлена довольно широко.


Рассмотрим редуцированные образования, которые также представлены в трех грамматических значениях, но в значениях существительного, прилагательного и глагола по модели:

Например:



Например:







Рассмотрим редуцированные образования, представленные в четырех грамматических значениях, образованные по модели



Например:





Итак, в английском языке редуцированные имена прилагательные представлены даже в четырех грамматических значениях.

В русском языке представлено редуцированное прилагательное только в грамматическом значении самого прилагательного.

В армянском языке в роли грамматического значения прилагательного могут выступать междометия. Например:

Итак, в русском языке в редуцированных прилагательных мы имеем не-транспозитивное словосложение, в которых сохраняется функциональное значение ядерного члена, т.е. соуровневое словосложение.

В армянском и в английском языках мы имеем транспозитивное сложение, которое приобретает новое функциональное значение, т.е. межуровневое словосложение.

#### ԿՐԿՆԱՎՈՐ ԱԾԱԿԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

(հայերենի, ռուսերենի և անգլերենի տվյալների հիման վրա)

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Գ. Ամբարդարյան \_\_\_

Կրկնությունը, ըստ խոսքիմասային գործառության, կարող է լինել համագործառական և փոխգործառական (համակադապարային և փոխկադապարային): Ածականով առաջացած կրկնավորները, ըստ միջկադապարային կառուցվածքի, ռուսերենում առաջանում են համակադապարային եղանակով, իսկ հայերենում և անգլերենում՝ փոխկադապարային: Ուսումնասիրությունը կատարված է ըստ ակադ. Գ. Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական կադապարի:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գոյականական բառակապակցությունների՝ որպես բառակապակցության առանձին տեսակի ըմբռնման հարցում տարակարծություններ չկան: Սակայն տարբեր մտեցում է ցուցաբերվում գոյականական բառակապակցությունների դասակարգման և անվանման հարցերում: Որպես գոյականական բառակապակցությունների դասակարգման հիմնական սկզբունք նկատի է առնվում լրացման խոսքիմասային արտահայտությունը: Բայց սա տարբեր ուսումնասիրողների կողմից միատեսակ լուծում չի ստացել:

Գոյականական բառակապակցությունների տեսության, մասնավորապես դասակարգման հարցերը բազմակողմանի քննարկման առարկա են դարձել Գ. Ջահուկյանի կողմից<sup>1</sup>: Նա գոյական լրացում ունեցող գոյականական բառակապակցություններն առանձնացնում է այն գոյականական բառակապակցություններից, որոնց միայն գլխավոր անդամն է արտահայտված գոյականով: Առաջինները կոչում է երկեզր (բազմեզր), իսկ երկրորդները՝ մենեզր գոյականական բառակապակցություններ: Նկատի ունենալով, որ գոյականական բառակապակցության կազմում կարող է հանդես գալ «երկուսից ավելի գոյականական եզր», այդպիսի բառակապակցությունները նա կոչում է բազմեզր, որոնք էլ իրենց հերթին բաժանում է երկու ենթատեսակի՝ միատիպ և տարատիպ:

Գոյականական բառակապակցությունների այսպիսի դասակարգումով լեզվաբանն առանձնակիորեն կարևորում է գոյականական բառակապակցության լրացման դերում գոյականը և այլ խոսքի մասերը տարբեր պլանով ներկայացնելու անհրաժեշտությունը, մի մտեցում, որ ելակետային նշանակություն պիտի ունենա գոյականական բառակապակցությունների դասակարգման գործում:

Վ. Քոսյանը գոյականական բառակապակցությունները դասակարգում է *ըստ լրացման ձևի*՝ նկատի առնելով լրացում հանդիսացող բառի արտահայտությունը<sup>2</sup>: Բայց «ըստ լրացման ձևի» արտահայտությունը այստեղ շատ ընդհանուր բովանդակություն ունի՝ մի դեպքում ակնարկելով լրացման հոլովի մասին, մյուս դեպքում՝ այն մասին, թե լրացումն ինչ խոսքի մասով է արտահայտվում: Վ. Քոսյանը գոյականական բառակապակցության առանձին տեսակ չի համարում դերանուն լրացումով կապակցությունները:

Գոյական+գոյական կադայարով բառակապակցությունները Ն. Պառնասյանը և Ս. Գյուլբուրդյանը տարբեր մեկնություններով, բայց մույն նպատակադրումով բաժանում են երկու ենթախմբի՝ նկատի առնելով այն, թե բառակապակցության գերադաս անդամը հարաբերակցում է այլ խոսքի մասերի հետ, հատկապես բայի, երբեմն մաս ածականի, թե՞ ոչ<sup>3</sup>:

Բոլոր գոյականական բառակապակցությունները Մ. Ասատրյանը ներկայացնում է 2 խմբով՝ գոյական+գոյական և գոյական+հատկանշային իմաստ արտահայտող որևէ բառ (ածական, թվական, հատկանշային իմաստ արտահայտող դերանուն, հարակատար, ենթակայական և երկրորդ ապառնի դերբայներ)<sup>4</sup>: Գոյական+գոյական կապակցությունների ենթախմբավորման հարցում լեզվաբանը նկատի է առնում լրացում բաղադրիչի շարահյուսական դերը<sup>5</sup>: Որպես երկրորդ խումբ են ճանաչվել այն բառակապակցությունները, որոնց լրացում հանդիսացող բաղադրիչն արտահայտված է հոլովական ձևով ու կապով:

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 291-332, 553-562:

<sup>2</sup> Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 37:

<sup>3</sup> Ս. Արքայան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղդասարյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 24; Ս. Գյուլբուրդյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, էջ 37:

<sup>4</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, էջ 82:

<sup>5</sup> Նույնը:

Հարցի ուսումնասիրությունն այն համոզմանն է բերում, որ գոյականական բառակապակցությունների դասակարգման հարցում գոյություն ունեցող տարածայնությունները հնարավոր կլինի հաղթահարել այն դեպքում, եթե առաջնորդվենք երկու որոշակի սկզբունքով: Մի դեպքում պետք է նկատի ունենալ գոյականական բառակապակցությունների լրացում բաղադրիչի խոսքիմասային պատկանելիությունը, մյուս դեպքում այն, թե լրացումը բառակապակցության մեջ փաստացիորեն գոյություն ունեցող գերադաս բաղադրիչի<sup>6</sup> է վերաբերում, թե՞ մտածվում է որպես մի զեղչված միավորի վերաբերող լրացում:

Գոյականական բառակապակցությունների էությունն ընկալելու և մեկնաբանելու իմաստով ամենևին երկրորդական նշանակություն չունի այն հանգամանքը, թե այդ հարաբերությունը առարկաների միջև է դրսևորվում, թե՞ առարկայի և դրա հատկանիշի միջև: Առարկան՝ գերադաս անդամ գոյականի արտահայտությամբ, առկա է բոլոր գոյականական բառակապակցություններում: Լրացումն է պայմանավորում այն իրողությունը, թե այդ առարկան հարաբերվում է մեկ այլ առարկայի, թե որևէ հատկանիշի հետ է առնչվում: Հատկանիշ ենք ասում, որովհետև գոյականական բառակապակցության մյուս բոլոր լրացումները՝ ածականը, թվականը, համապատասխան դերանունները և դերբայները հատկանիշ արտահայտող բառեր են:

Ըստ լրացման խոսքիմասային արտահայտության գոյականական բառակապակցությունները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խումբը համասեռ բաղադրիչներով բառակապակցություններն են: Սրանց երկու բաղադրիչներն էլ արտահայտված են գոյականով: Լրացում հանդիսացող բաղադրիչը կարող է արտահայտված լինել ինչպես ուղղական, այնպես էլ թեք հոլովներով (*հեքիաթ* երագ, *քար* սիրտ, *ձեռքին* ասեղ, *մորուքով* մարդ, *քարից* տուն և այլն):

Տարասեռ բաղադրիչներով բառակապակցությունների լրացումն արտահայտվում է ածականով, թվականով, համապատասխան դերանուններով և դերբայներով, մակբայով՝ *բարձր շենք*, *երեք ծառ*, *այդպիսի վերաբերմունք*, *հանգստանալու վայր*, *վերստին հանդիպում* և այլն:

Բազմասեռ բաղադրիչներով գոյականական բառակապակցություն են դիտվում նրանք, որոնց լրացումն արտահայտված է՝ 1) կապով և կապվող բառով՝ անկախ այն բանից՝ կապվող բառը գոյական է, թե այլ խոսքի մաս՝ *նրանց պես ուսանողներ*, *առանց մտածելու պատասխան*, 2) նյութական իմաստ ունեցող տարբեր խոսքի մասերով՝ *աշակերտի լավ պատասխան*, *ազնիվ ու քաջարար պայքար* և այլն:

Անցնելով բառակապակցությունների՝ երկրորդ սկզբունքով դասակարգման հարցին՝ նշենք, որ հայ լեզվաբանության մեջ գոյականական բառակապակցությունների քննության կապակցությամբ, մասնավորապես գոյականի՝ խնդրային և պարագայական իմաստով օժտված լրացումներ ունենալու առիթով շատ լեզվաբաններ են անդրադարձել զեղչման հարցին:<sup>6</sup> Այդ կապակցությամբ Վ. Քոսյանը գրում է. «Կան որոշ կապակցություններ էլ, որոնցում կապն ու կապի խնդիրն ստանձնել են գոյականի լրացման պաշտոնը՝ իրենց բուն լրացյալ դերբայի զեղչման հետևանքով: Այսպես, երբ ասում ենք վիշտ որդիների վերաբերմամբ, վճիռ մեկի (մի բանի) մասին և այլն, ապա սրանցում որդիների վերաբերմամբ, մեկի (մի բանի) մասին լրացումները եղել են *ունեցած*, *առաջացած*, *հանած*, *տված* և այլ դերբայների լրացում, որոնց զեղչումով էլ անցել են վիշտ, վճիռ գոյականներին (եղել են՝ որդիների վերաբերմամբ ունեցած վիշտ, մեկի (մի բանի) մասին հանած վճիռ, ապա ստացել են տրված ձևերը)»:<sup>7</sup> Մինչև վերջերս էլ հիմնականում այսպիսի բովանդակությամբ է ներկայացված եղել գոյականական բառակապակցություններում զեղչման հարցը:

Այդ հարցը համեմատաբար ամբողջական քննությամբ է ներկայացված Ս. Մելքոնյանի, Ս. Հայրապետյանի «Ձեղչված միավորով բառակապակցություններ» հոդվա-

<sup>6</sup> Վ. Քոսյան, *նշվ. աշխ.*, էջ 99, 103, 110, 154; Ս. Աբրահամյան, Ն. Պատմայան, Հ. Օհանյան, Խ. Բաղդիկյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 3, Եր., 1976, էջ 87-88; Ս. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Եր., 1987, էջ 85:

<sup>7</sup> Վ. Քոսյան, *նշվ. աշխ.*, էջ 154:

ծում:<sup>8</sup> Համապատասխան փաստական նյութի քննության հիման վրա հեղինակների կողմից առաջին անգամ այն միտքն է առաջ քաշվում, որ զեղչումն այնքան հատկանշական է գոյականական բառակապակցությունների համար, որ դրվելու է դրանց դասակարգման հիմքում: «Գոյականական բառակապակցություններում, - կարողում ենք այդ հոդվածում, - գերադաս և ստորադաս անդամների կապակցման հարցում զեղչում – ոչ զեղչում հակադրությունն այնքան հատկանշական հանգամանք է, որ չի կարելի անտես առնել դրանց (այդ բառակապակցությունների) դասակարգման ժամանակ: Ըստ այդ հանգամանքի գոյականական բառակապակցությունները լինում են զեղչումով և առանց զեղչումի»:<sup>9</sup>

Անհրաժեշտ է նշել, որ եթե նախկինում զեղչմանն անդրադարձել են գերազանցապես այնպիսի բառակապակցությունների առիթով, որոնցում խնդիր ու պարագա համարված լրացումները հանդես են գալիս ոչ թե բայանունների, այլ առարկա ցույց տվող այլ գոյականների հետ, նշված հոդվածում այն միտքն է զարգացվում, որ զեղչումը բնորոշ է նաև բայանուններով գերադաս անդամ ունեցող բառակապակցություններին՝ *հանդիպում էրևանում, կամովին ընտրություն* և այլն:

Համապատասխան փաստական նյութի ուսումնասիրությունն էլ ցույց է տվել, որ զեղչումը այնքան հատկանշական է բառակապակցության այս տեսակի համար, որ դրանց դասակարգման ժամանակ այդ հանգամանքը պետք է հաշվի առնել: Եվ ըստ այդմ էլ գոյականական բառակապակցությունները բաժանում ենք երկու խմբի՝ զեղչումով (թերի) բառակապակցություններ և առանց զեղչումի (լրիվ): Առանց զեղչումի կապակցություններում բաղադրիչների կապն անմիջական է, առանց ենթադրվող միավորի միջնորդավորման՝ *եղնիկի պես աղջիկ, սարի կարոտ, ծով աչքեր, երկու տուն, հոգնած մարդ* և այլն:

Չեղչումով (թերի) բառակապակցություններում ենթադրվում է մի շարահյուսական միավորի զեղչում, որի հետևանքով գոյական գերադաս անդամը ստանում է խընդրային և պարագայական նշանակությամբ օժտված լրացում՝ *վաճառք փողոցում, հարձակում թշնամու վրա, պատգամ որդու* և այլն: Ինչպես զեղչված ենթակայով նախադասություններ, ստորոգյալի զեղչում և նման արտահայտությունների գործածության դեպքում, այնպես էլ զեղչումով գոյականական կապակցություններ արտահայտության պարագայում զեղչում, զեղչել բառերի բովանդակությունը որոշ պայմանականություն է պարունակում. նկատի է առնվում ելակետային, ավելի ընդհանուր նշանակություն ունեցող կադապարը և դրա համեմատությամբ նշվում է զեղչման մասին:

Ենթադրվող զեղչման հետևանքը բավական ցայտուն արտահայտություն ունի համապատասխան բառակապակցությունների լրացական բաղադրիչների վրա՝ ինչպես իմաստային, այնպես էլ շարահյուսական-կիրառական առումով: Քանի որ իբրև զեղչված միավոր բացառապես բայն է գիտակցվում, ուստի այդ լրացումները, փաստացիորեն գոյականին վերաբերելով հանդերձ, օժտված են բայական անդամի լրացումների իմաստով, այսինքն՝ պարագայական և խնդրային նշանակությամբ: Մա զեղչումով բառակապակցությունների ամենաբնորոշ յուրահատկությունն է:

Մեր բուն նպատակից դուրս է հանգամանորեն քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե այդպիսի լրացումները խնդի՞ր, պարագա՞ են, թե՞ գոյականական անդամի լրացում: Նշելով, որ մեր լեզվաբանության մեջ այդ երկու կարծիքներն էլ պաշտպաններ ունեն,<sup>10</sup> ավելացնենք, որ վերջերս երևան եկած կարծիքն ավելի հիմնավոր և ընդունելի է թվում, ըստ որի այդպիսի լրացումները խնդրային որոշիչ և պարագայական որոշիչ են՝ *հանդիպում գյուղում, դժգոհություն անարդարության դեմ* և այլն: Այդ-

<sup>8</sup> Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, Եր., 1993, էջ 98-109:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>10</sup> «Շարահյուսական տեսակետից, - գրում է Վ. Քոսյանը, - գոյականի տրական (ինչպես և հայցական, բացառական, գործիական, ներգոյական) հոլովով լրացումը դիտվում է իբրև որոշիչ» (նշվ.աշխ., էջ 154): Այդպիսի լրացումները խնդիր ու պարագա են դիտում շատ լեզվաբաններ (Մ. Աբրահամյան, Ն. Պառնսպյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 394-398; Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 235,244; Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, էջ 82,84 և այլն):

սխալ կապակցություններում լրացումները որոշիչ են այնքանով, որ փաստացիորեն գոյականների լրացումներ են: Բայց այդ լրացումները օժտված են պարագայական և խնդրային նշանակությամբ, որքանով մտածվում են որպես զեղչված բայական միավորների հետ առնչվող լրացում և վերաբերում են բայանվանը: Մա, իսկապես, երկակի արժեք ունեցող երևույթն իր ամբողջության մեջ, իր բուն էությանը ճանաչելու արտահայտություն է:<sup>11</sup>

Ուրեմն՝ ըստ լրացական բառերի շարահյուսական-ինաստային յուրահատկության՝ զեղչումով բառակապակցությունները լինում են երկու տեսակ՝ ա) խնդրային որոշիչ լրացում ունեցող կապակցություններ՝ *անեծք գիշերին, վարդը շրթունքներին, աչքը ճանկին* և այլն, և բ) պարագայական որոշիչ լրացում ունեցող կապակցություններ՝ *վերադարձ ծովերով, գողություն գիշերով* և այլն:

## ТИПЫ СУБСТАНТИВНЫХ СЛОВСОЧЕТАНИЙ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Н. Аветисян* \_\_\_

Деление субстантивных словосочетаний на подгруппы проводилось по двум принципам. В одном случае принималось во внимание соотношение их определяющего составляющего к той или иной части речи, а в другом случае то, относится ли определение к определяемому слову или же рассматривается как определение, относящееся к эллиптированной единице. По принципу соотношения субстантивных словосочетаний к той или иной части речи мы разделили их на три группы: 1) с однородными, 2) разнородными и многородными составляющими. Во втором случае, принимая во внимание, имеются ли в наличии все члены словосочетания или же в них подразумеваются эллиптические единицы; субстантивные словосочетания разделялись на два вида: эллиптические и полные словосочетания. Первые в свою очередь вывают двух видов: 1) словосочетания с определением, имеющим значение дополнения и 2) словосочетания с определением, имеющим значение обстоятельства.

<sup>11</sup> Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, Եր., 1993, էջ 107:

**Արմենուհի ՄՏԵՓԱՆՅԱՆ**  
**Համլետ ՄԱՐԳՍՅԱՆ**

**ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ**  
**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ – ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ**

Դարեր շարունակ գաղթ ու ավեր տեսած հայ ժողովրդի պատմության մեջ հայրենադարձությունը բացառիկ նշանակություն ունեցավ: Այդուհանդերձ, այն դեռևս չի ստացել իր արժանի պատմական գնահատականը: Ինչպես արդարացիորեն նշում է Հ. Մելիքսեթյանը, հայրենադարձության ամբողջական պատմությունը բավարար չափով չի ուսումնասիրվել<sup>1</sup>:

Հայոց հայրենադարձությունն իրականացվեց մի քանի փուլով՝ 1921-1927թթ., 1933-1936թթ., 1946-1949թթ. և 1962-1982թթ.: Վերջին փուլում հայրենիք ներգաղթեցին հիմնականում Իրանից, Իրաքից, Միդիայից:

Տասնամյակներ տևած հայրենադարձության բուրբ փուլերում Շիրակն իր ուստանով ներգաղթող հայոց վերաբնակության հիմնական վայրերից էր: Լենինականը, որպես հանրապետության երկրորդ քաղաք, Երևանին հավասար, կիսում էր ներգաղթողների տեղաբաշխման ծանրաբեռնվածությունը, քանի որ, հատկապես 1946-1949թթ. հայրենադարձների մեծամասնությունը, լինելով քաղաքաբնակ, ձգտում էին տեղավորվել քաղաքներում՝ հրաժարվելով մեկնել գյուղական շրջաններ:

Հայրենադարձությունը սկիզբ առավ 1921թ., Խորհրդային Հայաստանի կառավարության ջանքերով: Մակայն նախքան այդ արդեն հազարավոր արևմտահայեր բռնել էին ներգաղթի ուղին: 1914թ. վերջերին Կարսից Ալեքսանդրապոլ ու Շիրակի գյուղեր գաղթեց 100 ընտանիք կամ 587 մարդ: Ալեքսանդրապոլում հաստատվեցին նաև Մարիդամիշից, Կաղզվանից, Արդահանից, Արդվիհից ու Բաթումից գաղթած հայեր: Ընդհանուր առմամբ, 1914թ. վերջերին քաղաքում բնակություն էր հաստատել մոտ 2400 մարդ: 1915թ. սկզբներին Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից քաղաքում հաստատվեց 360 հայ, իսկ 1916-1919թթ. Ալեքսանդրապոլի ողջ գավառում տեղավորվել էր ավելի քան 34 հազար հայ:

Այդ տարիներին արևմտահայոց ներգաղթն Արևելյան Հայաստան, ըստ էության գաղթ էր, քանի որ հիմնականում բռնի տեղահանության էին ենթարկվում կամ, կոտորածից խուսափելով, մահանջող ռուսական բանակի հետ հեռանում էին հայրենի վայրերից՝ կամովին լքելով բնօրրանը:

Երկրում կուտակված արևմտահայ գաղթականության թիվը 200 հազար էր, ավելացրած 10 հազար որք ու անապատան երեխաների թիվը<sup>2</sup>: Հայաստանը, Հ. Մելիքսեթյանի բնորոշմամբ, վերածվել էր գաղթականների հանրապետության:

1921թ.-ից գաղթական արևմտահայերին միացան նաև Կ, Պոլսից, Բալկանյան և Մերձավոր Արևելքի երկրներից հայրենադարձները, որոնց տեղաբաշխման ու տեղավորման խնդիրները գրեթե անլուծելի էին Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում: 1921թ. վերջերին Մերձավոր Արևելքի երկրներից գաղթած 3000 հայերի մի զգալի մասը բնակեցվեց Ալեքսանդրապոլում: 1924-1925թթ. Կ. Պոլսից, Մերձավոր Արևելքից և Հունաստանից գաղթած 3000-ից ավելի հայեր հաստատվեցին Երևանում և Լենինականում<sup>3</sup>:

<sup>1</sup> Հ. Մելիքսեթյան, *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)*, Եր., 1985, էջ 9:

<sup>2</sup> Հ. Մելիքսեթյան, *Սովետական իշխանության առաջին քայլերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ (1921-1922թթ.)*, Տեղեկագիր հաս. գիտ., 1960, դ. 3, էջ 3-21:

<sup>3</sup> Այդ տարիների հայրենադարձների թվաքանակը մոտավոր է, քանի որ 1920-ականներից մինչև 1936թթ. տեղի ունեցած ներգաղթի մասին վիճակագրություն չի եղել, (Տե՛ս Մ. Բազարյան, *Նամակներ սովետական «դրախտից»*, Եր., 1997, էջ 43): Հ. Մելիքսեթյանը նույնպես նշում է, որ սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման վերաբերյալ արխիվային նյութեր չեն պահպանվել (Հ. Մելիքսեթյան, *նշվ. աշխ.*, էջ 23):



Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից 1926-1927թթ. Շիրակում հաստատվեց շուրջ 13810 հայրենադարձ<sup>4</sup>: Այս փուլում ներգաղթը ժամանակավորապես դադարեցվեց, քանի որ նոր քարավաններ ընդունելու և տեղավորելու հնարավորություն երկիրը չունե՛ր՝ վերն արդեն նշված պատճառներով:

1921-1927թթ. ներգաղթի հետևանքով սկսված ներթօնիկ գործընթացներում ձևավորվեցին երեք խմբեր. Արևմտահայաստանից գաղթածները, որոնք անվանվեցին «գաղթական», սփյուռքահայ ներգաղթողները՝ «պոլսեցի» (հավանաբար նկատի առնելով արևմտահայերենը, որն ընդհանուր էր բոլոր հայրենադարձների համար) և «տեղացի» տեղաբնիկ հայերը: Ընդհանուր պատկերից պարզ էր, որ գերակշռող արևմուտահայ տարրն էր, և ամենևին էլ պատահական չէր, որ այդ տարիներին հայ մտավորականության մեջ լուրջ քննարկման ու վեճերի տեղիք էր տալիս այն հարցը, թե ո՞րն է ի վերջո հայրենիքը՝ Ռուսահայաստանը, թե՞ Կիլիկիան: Դեռևս մինչև Հայաստանի խորհրդայնացումը, Ռուսահայաստանն իբրև ամենայն հայոց հայրենիք, միանշանակ ներժվում էր<sup>5</sup>:

Ներգաղթի հաջորդ փուլն ընդգրկում է 1933-1936թթ.: Հայրենիք է ներգաղթում մոտ 73300 մարդ: Թեպետև ստույգ թվեր հայտնի չեն, թե այդ տարիներին քանի մարդ է բնակություն հաստատել Լենինականում, բայց երևանաբնակ նախկին լենինականցիներից գրառած նյութերը վկայում են, որ ներգաղթողները հիմնականում ֆրանսահայեր էին, մասամբ նաև բալկանյան երկրներից: Այս տարիների հայրենադարձները, համալրելով արդեն ձևավորված ենթաթեմիկ խումբը, անվանվեցին ֆրանսիացիներ (ինչպես և բնորոշվում էին Երևանում) նաև նորեկներ՝ ի տարբերություն նախորդ փուլի հայրենադարձների:

1936թ. ներգաղթը կտրուկ ընդհատվում է երկրում ստեղծված անբարենպաստ քաղաքական պայմանների հետևանքով, երբ արևմտահայ լինելն իսկ կասկածի ու քաղաքական հետապնդումների առիթ էր տալիս: Այս առումով հիշատակելի է նշված ժամանակահատվածի համար մի շատ բնութագրական իրողություն: Պոլսից ներգաղթած անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանին պետավտանգության մարմինները մեղադրում են թուրքական լրտես լինելու մեջ: Ապշահար գիտնականը պատասխանում է. «Ռուսում լրտեսը կուզեք ըլլամ, բայց Թուրքիո լրտեսը չեմ կրնար ըլլալ»<sup>6</sup>:

Երկրորդ աշխարհամարտից հետո Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ է լինում նոր հայրենադարձություն կազմակերպելուն: Հայրենիքի տունդարձի կոչին արձագանքում է աշխարհի չորս ծագերում սփռված ավելի քան 800 հազար հայ: Թվաքանակն ապշեցուցիչ էր, և խորհրդային իշխանությունները հայտնվում են դժվարին կացության մեջ, քանի որ երկրի հետպատերազմյան շրջանի քայքայված տնտեսությունը, սահմանափակ նյութա-տեխնիկական ռեսուրսները չէին կարող հնարավորություն տալ այդքան մարդ ընդունելու:

Հայրենադարձության կազմակերպման ընթացքում թույլ տրված սխալների հետևանքով հազարավորները, որոնք նախօրոք ցուցակագրվել էին հայրենիք ներգաղթելու ցանկությանը, վաճառել ունեցվածք, տուն ու տեղ, այդպես էլ մնացին, սպասելով իրենց տեղափոխող շոգենավերին՝ զրկվելով ունեցվածքից և կորցնելով համակրանքն ու վստահությունը այն երկրներում, որտեղ ապաստան էին գտել, ապահով ապրուստ ստեղծել:

Եվ այնուամենայնիվ սկսվեց հայրենադարձության նոր փուլ (1946-1949թթ.), որի ընթացքում հայրենիքն ընդունեց մոտ 100 հազար մարդ, որոնք տեղաբաշխվեցին հան-

<sup>4</sup> Լ. Վ ա ռ դ ա ն յ ա ն, Հ. Մ ա ռ գ ո ս յ ա ն, Շիրակի՝ 1926-1927թթ. գաղթականության որոշ հարցեր (ըստ Ստ. Լիսիցյանի արխիվային նյութերի), ԵՀՀ կենտրոնի գիտական աշխատություններ, հ. 2, Գյումրի, 1999, էջ 208-217:

<sup>5</sup> 1922-1923թթ. Լոզանի կոնֆերանսում ազգային պատվիրակությունը Գ. Նորատունկյանի գլխավորությամբ նախագիծ է ներկայացնում Կիլիկիայում «ազգային օջախ» ստեղծելու մասին, (Տե՛ս Ջ. Թորոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923թթ., Եր., 1972):

<sup>6</sup> Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր (հետայսու՝ ԴԱՆ), Եր., 1990, ասացող՝ Հարություն Քյուրքչյան, պոլսահայ, ներգաղթած 1928թ.:

րապետության ողջ տարածքում<sup>7</sup>: Այսպես, 1946թ. ռումինահայերի առաջին քարավանը (թվով 1742 մարդ) հասավ Հայաստան: Նրանց մեջ կային շատ տեքստիլագործներ, տրիկոտաժագործներ, կոշկակարներ, դերձակներ, վարսավիրներ, փայտագործներ և այլ արհեստավորներ, ինչպես նաև մտավորականության ներկայացուցիչներ, որոնց տեղավորեցին Երևանում ու Լենինականում<sup>8</sup>:

Նույն թվականին Բուլղարիայից ներգաղթած 4383 մարդ ևս հանգրվանեց Լենինականում: Կարևոր է նշել, որ հայրենադարձության այս փուլում միայն Լենինական քաղաքում հաստատվեց 1278 ընտանիք կամ 5935 մարդ, որը կազմում է հայրենադարձների ընդհանուր թվի մոտ 20%: Սա վկայում է այն փաստը, որ Լենինականում տեղավորման ու աշխատանքի ապահովման հնարավորությունները, հանրապետության մյուս շրջանների համեմատությամբ, ավելի մեծ էին, ինչը հավաստվում է մեր դաշտային մյուսերով: Այս տարիների ներգաղթածները նախ Երևանում, ապա Լենինականում ու հանրապետության այլ վայրերում անվանվեցին «ախպար»<sup>9</sup>, գյուղերում (Ախուրյանի, Անիի շրջ.)՝ «թագա գալացող»: Այս անվանման համար հիմք ծառայեց հայրենադարձների միմյանց դիմելու տարածված ձևը (Հակոբ ախպար, Թորոս ախպար և այլն), ինչը և իբրև հեզմական մականուն, դարձավ հայրենադարձների սուրբնիկ խմբի նոր անվանումն առ այսօր:

Հայրենադարձների մի մասը, հատկապես Ֆրանսիայից, Կ. Պոլսից ու բալկանյան երկրներից ներգաղթածները մտավորականներ էին ու որակյալ արհեստավորներ, որոնք իրենց հետ բերել էին գործիքներ, սարքավորումներ, հաստոցներ՝ հայրենիքում անմիջապես աշխատանքի անցնելու համար: Նրանց զգալի մասը տեղավորվեց քաղաքի կենտրոնում, իսկ արվարձաններում հաստատվեց Սիրիայից, Իրաքից, Իրանից գաղթած գյուղական բնակչությունը, որին հողատարածք էր պետք՝ երկրագործությամբ զբաղվելու համար:

Մտավորականներից շատերը, հատկապես եվրոպական լեզուներին տիրապետողները, բանասացների հավաստմամբ<sup>10</sup>, հնարավորություն ունեցան դասավանդելու մանկավարժական հիմնարկներում:

Բուլղարիայի Պլովդիվ քաղաքից ներգաղթած քիթեղագործները Լենինականում արտել-ցելս էին կազմակերպել, վառարան, գոլա, դանակ-պատառաքաղ էին պատրաստում: Գիշեր-ցերեկ աշխատելով չնչին գումար էին ստանում: Գժգոհելու համար մի քանիսն աքսորվեցին: Լենինականում հայտնի կոշկակարներ էին Գրիգոր և Հակոբ Բյուրքյանները:

Հայրենադարձ կանայք, որ հիմնականում տնային տնտեսուհիներ էին, հմուտ էին ասեղնագործության և դերձակության մեջ և դրանով ընտանիքի հոգսն էին հոգում: Նրանք զբաղվում էին նաև մոմ թափելով ու սուրճի բաժակ մաշելով, ինչը նոր էր ու անսովոր լենինականցիների կենցաղում, սակայն կարճ ժամանակ անց լայն տարածում գտավ:

Վերստին անդրադառնալով հայրենադարձների տեղաբաշխման խնդիրներին՝ հարկ է նշել, որ թեպետև այն ընթացում էր վաղօրոք մշակված ծրագրով, այնուամենայնիվ սխալներ շատ կային, ինչը առիթ էր տալիս դժգոհությունների: Որակյալ արհեստավորներն ուղարկվում էին գյուղերը, իսկ մարդիկ, որոնք երկրագործությամբ էին զբաղվել, տեղավորվում էին Երևանում, Լենինականում և այլ քաղաքներում՝ տնամերձ հողամաս պահանջելով:

Բաթումիի ընդունման կայանում ներգաղթ կոմիտեի անդամները հիմնականում պատահական էին որոշում յուրաքանչյուր ընտանիքի բնակության վայրը: «Ներգաղթողն իր բնակավայրը ընտրելու կամ փոխելու մեջ ազատ չէր», — գրում է 1946-1948թթ. վերաբնակեցման վարչության անդամ Մովսես Բազարյանը<sup>11</sup>: Քաղաք տեղափոխվելու

<sup>7</sup> Գ. Ա վ ա գ յ ա ն, Հայկական ՄՍՀ բնակչությունը, Եր., 1975թ.:

<sup>8</sup> «Մովետական Հայաստան» (լրագիր), 1946, 11 օգոստոսի:

<sup>9</sup> Գրական երթայր բառի արևմտահայ բարբառային տարբերակը, (հմմտ. ախպար / ախպար):

<sup>10</sup> Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն, ԳՄՆ, ասացող՝ Ալեքսանդր Ստեփանյան, երևանաբնակ, նախկին լենինականցի, 78 տարեկան, Օֆիկ ժամակոչյան, երևանաբնակ, նախկին լենինականցի, 75 տարեկան:

<sup>11</sup> Մ. Բ ա գ ա ռ յ ա ն, նշվ.աշխ., էջ 45:

կամ քաղաքում տեղավորվելու համար կաշառք էին պահանջում, ինչը ոչ միայն դժգոհություններ էր առաջացնում հայրենադարձների մեջ, այլև անհասկանալի ու զարմանալի էր նրանց համար:

Խոսելով ներգաղթածների տեղաբաշխման խնդիրների մասին՝ հնարավոր չէ չանդրադառնալ նոր պայմաններին ու կենսակերպին նրանց հարմարվելու (ադապտացիա) հանգամանքին, ինչը հայրենադարձության պատմությունը լուսաբանող գրականության մեջ տարբեր պատճառներով շարունակաբար անտեսվել է: Հետպատերազմյան շրջանում, հանրապետության ծանր տնտեսական պայմանների ու բնակչության թվաքանակի հավելման (ի հաշիվ ներգաղթածների, քանի որ բնական աճը պատերազմի հետևանքով կտրուկ նվազել էր) արդյունքում ստեղծված պարենային, բնակարանային ճգնաժամը դժգոհությունների տեղիք էր տալիս: Կենցաղային պայմանները ծանր էին, մի քանի ընտանիք մեկ տան մեջ էին ապրում: Մարդիկ իրենց գույքն էին վաճառում պարեն գնելու համար: «Տեղացիները զարմացած կհարցունեն, - պատմում է բանասացը, - թե ինչու՞ եկած եք: Մի՞թե այստեղն Գեշ էր կեցած տեղերնիդ»<sup>12</sup>:

Հարկ է նշել, սակայն, որ կենսական անհրաժեշտ պայմանների ապահովմամբ Լենինականում վիճակն ավելի բարվոք էր՝ հանրապետության մյուս, հատկապես գյուղական շրջանների համեմատությամբ, որտեղից շարունակական հոսք էր տեղի ունենում դեպի Երևան, Լենինական և մյուս քաղաքներ:

Մեր գրառած նյութերը ցույց են տալիս, որ հայրենադարձները (հատկապես ներգաղթի առաջին փուլում) Լենինականում ավելի հեշտ են հարմարվել իրենց համար նոր պայմաններին, քան Երևանում, որը, մեր կարծիքով, պայմանավորված էր նաև արևմուտահայ լեզվի ու Շիրակի բարբառի նմանությամբ և լենինականցիների (գյումրեցիների) ավանդական հյուրընկալությամբ:

Հայրենադարձությունը դեռ շարունակվում էր, երբ 1948թ. կրկին անգամ ծայր առան քաղաքական հետապնդումները: Հայրենադարձները մեղադրվում էին ինպերիալիզմի լրտես լինելու մեջ, իսկ նրանց դժգոհությունները մեկնաբանվում էին վերջիններիս բուրժուական մտածողությամբ:

Ասացողներից շատերը պատմում էին, թե վերաբնակեցման վարչության անդամները «Էնվելդեի» ուղարկած մարդիկ էին, որոնց պարտականությունն էր ներգաղթածներին լրտեսել, ականջալուր լինել նրանց խոսակցություններին, շոշափել նրանց տրամադրությունները՝ այդ կերպ հայտնաբերելով դժգոհողներին: Արդյունքում, նոր կենսակերպին ու կարգերին դեռևս չհարմարված՝ հայրենադարձներից շատերը հայտնվում էին աքսորի ճանապարհին:

Երկրի ներքին քաղաքական իրավիճակի սրումն ընդհանուր կասկածի ու անհանդուրժողականության մթնոլորտ էր ստեղծում, որն էլ ավելի էր մեծացնում տեղացիների ու հայրենադարձների միջև եղած անջրպետը և բարդություններ ստեղծում փոխընկալման խնդրում: Նրանք դարձան օտարներ յուրայինների մեջ, հայ, բայց ոչ հայաստանցի:

Թողնելով տուն ու տեղ, անհամեմատ բարեկեցիկ կյանք մարդիկ գալիս էին հայրենիք՝ դրսևորելով իրենց նվիրվածությունը և հավատալով, որ այն պատշաճ գնահատականի կարժանանա: Սակայն, «հայրենիք վերադարձած հայ բազմություններն ազգային և քաղաքական վանողական և անառողջ մթնոլորտի մը դիմակայումով հոգեկան փլուզումներ և հավատքի տեղատվություն ունեցան»<sup>13</sup>:

1949թ. քաղաքական հետապնդումների հետևանքով դադարում է մեծ հայրենադարձությունը:

1960-ականներից սկսվում է հայրենադարձության նոր փուլ, որը, սակայն, չունենալով նախկին տեմպերը, գործընթացի մարման էր տանում: Այդ տարիներին Միքիայից և Պարսկաստանից 100-150 ընտանիք վերադարձավ հայրենիք՝ բնակություն հաստատելով Երևանում, Լենինականում, Ախուրյանի շրջանում:

<sup>12</sup> Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն, ԴԱՆ, Եր., 1998թ., ասացող Վերգինե Փափազյան, բուլղարահայ, ներգաղթած 1946թ.:

<sup>13</sup> Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն, ԴԱՆ, Եր., 1987թ., ասացող Անդրանիկ Թորոսյան, 76 տարեկան, բուլղարահայ, ներգաղթած 1946թ.:

1962-1963թթ. Միացյալ Արաբական Հանրապետությունից, Կիպրոսից, Իրանից հայրենիք վերադարձածները տեղավորվեցին Լենինականում, Կիրովականում, Իջևանում<sup>14</sup>:

1963-1980թթ. հազարավոր փերիացիներ (Իրան) բնակություն հաստատեցին Լենինականում, Կիրովականում և այլուր: Այս վերջին քաղաքացիների համար արդեն կային անհրաժեշտ պայմաններ (մշակելի հողատարածք, բնակարան և այլն):

Երկրի ներքին ու արտաքին քաղաքական մթնոլորտը նույնպես անհամեմատ ավելի բարենպաստ էր՝ նախորդ ժամանակների համեմատությամբ:

Այդ տարիների ներգաղթողները հիմնականում գյուղական բնակչություն էր, որոնք տեղավորվելով Հայաստանի գյուղական շրջաններում, հնարավորություն ունեցան երկրագործությամբ զբաղվելու: Նրանք՝ հատկապես Իրանից գաղթածները, չձուլվեցին արևմտահայ շերտին՝ «ախպար»-ների սուբէթնիկ խմբին: Թեպետև բարբառով ու կենցաղով նրանք մոտ էին արևելահայերին, այնուամենայնիվ, որպես եկվոր տարր, նույնպես առանձնացվեցին՝ ձևավորելով սուբէթնիկ նոր խումբ՝ «պարսկաստանցիներ» անվամբ:

Հայրենադարձության բոլոր փուլերում, չնայած օտարացմանը, մտածելակերպի ու վարքագծի տարբերություններին, այնուամենայնիվ սուբէթնիկ խմբերի միջև անխուսափելիորեն տեղի էր ունենում կենցաղամշակութային փոխներթափանցում:

## РАССЕЛЕНИЕ АРМЯН-РЕПАТРИАНТОВ В АЛЕКСАНДРОПОЛЕ-ЛЕНИНАКАНЕ

\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_ А. Степанян, Г. Саргсян \_\_\_\_\_

В статье рассматривается круг вопросов, связанных с особенностями расселения западных армян в Ленинакане за весь период многоэтапной репатриации, начавшейся в 1921 г.

О важной роли, которую играл второй город республики в процессе расселения на каждом этапе репатриации, говорят приведенные в статье цифры и процентные показатели. Только в 1946-1948 гг. 20% от общего числа репатриантов (100 тыс.) разместились в Ленинакане. Рассматриваются процесс формирования субэтнической группы репатриантов, а также их взаимоотношения с местными армянами.

Сложности адаптации, обусловленные значительной социально-культурной дистанцией между странами исхода и новым местом проживания зарубежных армян, тяжелые социально-экономические условия, а также неблагоприятный политический климат вызывали недовольство среди репатриантов, что послужило одной из причин их притеснений и гонений в 1937 и 1949 гг.

<sup>14</sup> Գ. Գ ա լ տ յ ա ն, Մփյոռքը հայրենիքի կողքին, «Լենինյան ուղիով» (ՀԿԿ կենտկոմի ամսագիր), Եր., 1963, դ 5, էջ 44:

**Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ**  
**Կարինե ԲԱԶԵՅԱՆ**

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ**

Ժամանակակից ազգաբանական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունները<sup>1</sup> ցույց են տալիս, որ անցումային շրջանում նշանակալիորեն մեծանում է տնային տնտեսությունների ինքնապահովող-ինքնաբավ գործառույթի կամ բնատնտեսական նշանակությունը: Եթե տնտեսության զարգացման տեսանկյունից ամբողջությամբ վերցրած այն բացասական նշանակություն ունի և անհամեմատ նվազ արդյունավետ է, քան հասարակական արտադրությունը, ապա գոյապահպանության իրավիճակում այն հնարավորություն է տալիս ապահովել ընտանիքի կենսական պահանջների նվազագույն մակարդակը: Շուկայական հարաբերությունների պայմաններում նման տնտեսական գործունեությունը կրում է թե՛ բնամթերային ապրանքափոխանակության և թե՛ ապրանքադրամային բնույթ: Տնային տնտեսությունների գործունեության ընդհանուր տնտեսական նշանակության համակողմանի ազգաբանական և տնտեսագիտական գնահատանքը բարդ խնդիր է: Այն ընդգրկում է գյուղատնտեսական մթերքների տարբեր տիպերի արտադրություն ընտանեկան սպառման, բնատնտեսական փոխանակման և ապրանքադրամային իրացման համար, այնուհետև ապրանքային արտադրություն և սպասարկում՝ ինչպես ձեռնարկատիրության, այնպես էլ անհատական աշխատանքային գործունեության շրջանակներում, և վերջապես՝ տնային տնտեսության ներքին սպասարկմանն ուղղված արտադրություն և սպառում:

Խորհրդային տարիներին ընտանիքի բարեկեցությունը որոշվում էր նրա անդամների՝ հասարակական արտադրության գործընթացում ունեցած մասնակցությամբ և շատ քիչ էր կախված տնային տնտեսության մեջ նրանց ներդրումից: Ներկա փուլում, անշուշտ, դրությունը նկատելիորեն փոխվել է: Հարմարվելով նոր պայմաններին, տնային տնտեսությունները ստիպված ակտիվացնում են իրենց գործունեությունը, ինտեսիֆիկացնելով առավելաբար աշխատանքային և տնտեսական գործառույթները:

Վերջին տարիներին կատարված փոփոխությունները ստիպեցին Հայաստանի Հանրապետության և, ի մասնավորի, Շիրակի բնակչությանը ինչ-որ չափով վերադառնալու ռդեայի ավանդական տնտեսաձևերը՝ անհատական տնտեսավարմանը, տնայնագործությանը, օժանդակ տնտեսական զբաղմունքներին և տնտեսության յուրացնող ձևերին: Գյուղական բնակավայրերի մեծ մասում այդ փոփոխությունները հանգեցրին ինքնաբավ բնատնտեսական համակարգի ձևավորմանը: Կտրտված, միսյանցից մեծ հեռավորությունների վրա գտնվող հողակտորներում ինտենսիվ գյուղատնտեսություն վարել, ըստ էության, հնարավոր չէ: Այն հնարավոր չէ նաև իրացման հնարավորությունների սահմանափակության պատճառով:<sup>2</sup> Այսպիսի իրավիճակում, երբ գյուղացիության ֆինանսական հնարավորությունները չափազանց սուղ են, փոխվում են տնտեսավարման ձևերն ու գործընթացները, որոնց հիմքում ընկած է «տնտեսական նպատակահարմարության»<sup>3</sup> սկզբունքը, երբ անհատական գյուղացիական տնտեսությունը կարևորում է այնպիսի մշակաբույսերը կամ անասնապահության այն ճյուղերը, որոնք տալիս են գյուղմթերքների ավելցուկը շուկայա-

<sup>1</sup> В. Ж е р е в и н, *Макроэкономическая оценка деятельности домашних хозяйств, Семья, гендер, культура, Материалы международных конференций 1994 и 1995гг.*, М., 1997, стр. 52-59. *Մ. Գարրիելյան, Հայաստանի հանրապետության արդի գյուղացիությունը*, Եր., 2001:

<sup>2</sup> Մ. Գ ա ր ր ի ե լ յ ա ն, *Նշվ. աշխ.*, էջ 50:

<sup>3</sup> Մ. Գ ա ր ր ի ե լ յ ա ն, *Գյուղատնտեսական զբաղմունքներում հողի սեփականացնողներից հետո կատարված որոշ փոփոխությունների մասին*, «Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում» հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1997, էջ 10-11:

կան հարաբերությունների ոլորտը ներգրավելու, վաճառքի կամ ապրանքափոխանակության ճանապարհով ընտանիքի կարիքները բավարարելու հնարավորություն:

Վերոհիշյալ տնտեսական գործընթացներում ընդգրկված է ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակչության մեծ մասը: Հայոց քաղաքային կենցաղում ավանդաբար արհեստների հետ զուգահեռ զբաղվել են նաև գյուղատնտեսությամբ: Այս առումով բացառություն չէր նաև այժմյան Գյումրին: Ալեքսյո-Լենինականի քաղաքային կենցաղում գյուղատնտեսական զբաղմունքները գրեթե մշտապես զուգորդվել են քաղաքին բնորոշ արհեստավորական արտադրական, առևտրի և այլ զբաղմունքների հետ:<sup>4</sup> Քաղաքի արդի կենցաղում դրա հարատևումը ապացուցում է ոչ միայն իր գյուղական շրջապատի և գյուղացիության հետ Գյումրու բնակչության և շուկայի սերտ կապի, այլև հողի և գյուղատնտեսության հետ նրա բնակչի ավանդական առնչությունների մասին: Ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ հետագայի Լենինականում, գյուղատնտեսական զբաղմունքների ծավալումը կամ նվազումը հիմնականում կապված է եղել պատմական իրադարձությունների, փոքրությունների, այլևայլ ալեքսյոյանների հետևանքով տնտեսական կյանքում առաջացած նպաստավոր կամ աննպաստ իրադարձությունների հետ:

Աղետալի երկրաշարժը, անցումը շուկայական հարաբերություններին և քաղաքական բարդ իրադրությունը խորացրեցին սոցիալական հակասությունները և ծանր հետևանքներ ունեցան ինչպես Շիրակի, այնպես էլ Գյումրու բնակչության վրա: Քաղաքներում աշխատավարձը զոյատևելու հիմնական միջոցն է բնակչության զգալի, սոցիալապես անապահով մասի համար: Մեփականաշնորհման գործընթացի արդյունքում արտադրական ձեռնարկությունների մասնավորեցումն ու դրան զուգընթաց զանգվածային գործազրկությունը ստիպեցին քաղաքաբնակների մեծ մասին վերադառնալու դեպի ավանդական տնտեսաձևերը:

Լայնորեն տարածվել են մտորային անասնապահությունը, տնամերձ հողամասերի մշակումը և բարձրացել է դրանց տնտեսական դերը: Տնամերձերից ստացվող գյուղմթերքները նույնպես հարմարեցվում են առտնին ընտանիքների առօրյա սննդի կարիքների բավարարմանը, ուստի մշակվում են առանձնապես բանջարաբոստանային կուլտուրաներ: Հատկանշական է, որ հողագործությամբ զբաղվում են ոչ միայն առանձնատուն ունեցողները, որոնք դրա համար ունեն որոշակի հարմարություններ (փակ բակ, տնամերձ հողակտոր), այլև բազմաբնակարան շենքերի բնակիչները, որոնք շենքերի բակերում, հարակից տարածքներում, անգամ մոտակա գյուղերում վարձակալած հողերում ստեղծում են իրենց տնտեսությունները, որոնց մշակման արդյունքներով ապահովում են իրենց ընտանիքների կենսական պահանջները ամռան-աշնան սեզոնին:<sup>5</sup>

Եթե տնամերձ հողակտորների մշակումը համամասնորեն տարածված է ողջ քաղաքում, ապա մտորային անասնապահությունը գերակշռում է քաղաքի ծայրամասային թաղերում: Քաղաքամերձ գոտում ընկած մոտակա արոտավայրերի առկայությունը հնարավորություն է տալիս մի քանի տասնյակ կենդանիներով նախիրներ ու հոտեր արածեցնել: Հարկ ենք համարում արձանագրել, որ այս գործընթացում ևս զբաղված են ոչ միայն առանձնատներին, այլև բազմաբնակ շենքերի բնակիչները, որոնք համապատասխան հարմարություններ (գոմեր, խոտանոցներ և այլ անասնապահական շինություններ) են ստեղծում մոտակայքում, հաճախ օգտագործելով ավտոտնակներն ու դատարկված ժամանակավոր կացարանները (տնակները):<sup>6</sup> Ցավոք, մարզի և քաղաքների պատկան մարմինները չեն տիրապետում ճշգրիտ տվյալների քաղաքներում առկա անասնազվաքանակի վերաբերյալ, սակայն կասկած չի հարուցում այն, որ շատ ընտանիքների համար անաս-

<sup>4</sup> Կ. Ս ե դ բ ո ս յ ա ն, Գյուղատնտեսական զբաղմունքները Ալեքսանդրապոլ-Լենինականի կենցաղում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական IV գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 39-40:

<sup>5</sup> Կ. Ք ա գ ե յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր (հետախու՝ ԴԱՄ), Գյումրի, 2001-2002թթ.:

<sup>6</sup> Նույնը:

նապահության արդյունքում ստացած կաթնամթերքը կենսապահովման գլխավոր միջոցն է: Կաթնամթերքն այդ ընտանիքներում օգտագործվում է ոչ միայն սեփական գործածության համար, այլև վաճառվում կամ վիճակվում է, դառնալով նրանց համար եկամտի լրացուցիչ աղբյուր: Անասնապահության մյուս կարևոր արդյունքը ձմռան վառելիքի (աթարի ձևով) նախապատրաստումն է, որն անհամատեղելի երևույթ է ավանդական քաղաքային կենցաղին:

Ավանդական տնտեսավարման այս ձևերի հետ միասին ուսումնասիրվող շրջանում մեծացել է նաև օժանդակ տնտեսաձևերի և տնտեսական զբաղմունքների այն խմբերի նշանակությունը, որոնք ուղղակի առնչվում են կենսապահովման մշակույթի հետ՝ հանդիսանալով սննդի հայթայթման լրացուցիչ միջոց: Այս առումով առանձնապես կարևորվում են թռչնաբուծությունը, ձկնորսությունը և մեղվաբուծությունը:

Թռչնաբուծությունն ավանդաբար կարևոր տնտեսական նշանակություն ունեցող զբաղմունք է եղել ինչպես գյուղաբնակների, այնպես էլ քաղաքային բնակչության այն հատվածի համար, որոնք տնամերձ հողատարածքներ ունեին: Սակայն վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը ստիպեց թռչուններ պահել նաև դրա համար համապատասխան պայմաններ չունեցողներին: Քաղաքներում, երկրաշարժից հետո, բնականաբար պակասեց բազմաբնակարանային շենքերի և մեծացավ տնակների թիվը, որոնք լրացուցիչ կառուցապատվեցին՝ իրենց մեջ ներառելով տնամերձ փոքրիկ հողակտորներ և օժանդակ շինություններ՝ հիմնականում հարմարեցված հատկապես թռչնաբուծությանը: Սրանց ավելանում են բազմաբնակարանների այն բնակիչները, որոնք դրա համար օգտագործում և հարմարեցնում են բոլոր հնարավոր օժանդակ տարածքները՝ պատշգամբները, ձեղնահարկերն ու նկուղները: Թռչնաբուծության լայն տարածվածությունը պայմանավորված է նրանով, որ այն չի պահանջում առանձնապես ընդարձակ տարածքներ և դրամական մեծ ներդրումներ:<sup>7</sup> Եթե Շիրակի գյուղական բնակավայրերում պահվող թռչնատեսակները աչքի են ընկնում բազմազանությամբ՝ հավ, հնդկահավ, լողացող թռչուններ, ապա քաղաքային պայմաններում, հատկապես վերջինները լայն տարածում չունեն՝ ջրային ավազանների, հոսող ջրերի և սազերի ու բաղերի համար արածելու տարածքների բացակայության պատճառով:

Ձկնորսությունը Շիրակի բնակչության օժանդակ տնտեսական զբաղմունքների մեջ ավանդաբար մեծ կշիռ չի ունեցել և պատահական չէ, որ համաձայն XIX դ. և XXդ. սկզբի աղբյուրների՝ ձկնեղենը նշվում է Ալեքսանդրապոլի գավառ ներմուծվող սննդամթերքների թվում:<sup>8</sup> Ձկնորսության թույլ զարգացածությունը բացատրվում էր բաց բնական ջրավազանների բացակայությամբ և գետային նոսր ցանցով: Սակայն Ախուրյան գետի հովտում գտնվող բնակավայրերում որոշ չափով տարածված էր ոռոգանային և ծովակ-կողովով («տուգախով») ձկնորսությունը: Ախուրյանում և նրա վտակներում բազմանում էին կարմրախայտ, կապույտ ձկնատեսակները, իսկ Կարս գետի հետ խառնարանում, ըստ մեր բանասացների՝ հանդիպում էր նաև լոբո:<sup>9</sup> Ալեքսանդրապոլում, ինչպես նաև Աշոցքի և Ամասիայի նախկին տարածաշրջանի որոշ գյուղերում կային անվանի ձկնորսներ, որոնց զբաղմունքից առաջացել էր ազգատոհմի մականունը՝ Թոռջոնք:<sup>10</sup> Խորհրդային շրջանում կառուցված արհեստական ջրամբարներում (Ազատանի, Կառնուտի, Սառնաղբյուրի, Մանթաշի, Ջաջուտի, Ախուրյանի, Արփի լճի) սկսեցին զբաղվել ձկնաբուծությամբ՝ ներմուծվեցին լճային կարպ, ծածան և կարաս ձկնատեսակները: Այս հանգամանքի շնորհիվ բավական մեծ տարածում ստացավ սիրողական՝ կարթով ձկնորսությունը: Վերջին տասնամյակի սոցիալ տնտեսական իրավիճակն իր կնիքը դրեց նաև ձկնորսական զբաղմունքների

<sup>7</sup> Կ. Բ ա գ ե յ ա ն, ԴԱՆ, Գյումրի, 2001-2002թթ.:

<sup>8</sup> Վ. Ա ր ր ա հ ա մ յ ա ն, Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Եր., 1971, էջ 53:

<sup>9</sup> Գ. Ա ղ ա ն յ ա ն, ԴԱՆ, Աշոցք-1986; Ախուրյան, Անի-2001-2002:

<sup>10</sup> Նույնը:

վրա՝ բարձրացնելով դրանց տնտեսական արժեքը, որը նախորդ շրջանում չնչին էր: Հատկապես Ախուրյանի ջրամբարի հարուստ ձկնային ռեսուրսները դարձան «հին» և «նորաթուխ» ձկնորսների ընտանիքների համար եկամտի զգալի աղբյուր: Շիրակի մարզի շուկաներում ներմուծվող սևանյան ծագում ունեցող ձկնատեսակների (հատկապես սիզի) կողքին վաճառվում է մարզի ջրամբարներից որսացած ծածան, կարպ, կարաս և այլ ձկներ: Մի կարևոր դիտարկում ևս անհրաժեշտ ենք համարում նշել, դա խեցգետինների որսն ու դրանց աշխույժ վաճառքն է շուկայում: Մինչև վերջին տարիները խեցգետինների օգտագործումը ավանդական ուտեստի համակարգում բացակայում էր, սակայն ներկայումս գարեջրի հետ մատուցվող չորացված և ծխահարված ձկների կողքին լայնորեն օգտագործվում է նաև եփված խեցգետին, որի պահանջարկը մեծ է հատկապես մարզում տեղակայված ռուսական կայագրի անձնակազմի շրջանում: Շիրակի ձկնորսների մի մասը մասնագիտացել է կոթավոր ոռոկաններով խեցգետինների որսի մեջ, որը պահանջում է յուրահատուկ հմտություններ ու հնարքներ:<sup>11</sup>

Մեզ հետաքրքրող շրջանում, երբ պետական ձկնատնտեսությունները մարզում փաստորեն քայքայվեցին, ի հայտ եկան ձկնաբուծական մասնավոր՝ հիմնականում ընտանեկան տիպի փոքր ձեռնարկություններ, որոնցում բուծվում են թանկարժեք և աղանդերային ձկնատեսակներ, մասնավորապես լճային ֆորել (կարմրախայտ) և թառափ: Այս բնագավառում հատկապես աչքի է ընկնում «Խայծ իշխան» ՍՊԸ-ն, որը ընտանեկան միջին ձեռնարկության հաջողված օրինակներից է մարզում:<sup>12</sup>

Մեղվապահությունը շիրակիների ավանդական օժանդակ տնտեսական զբաղմունքներից էր, որի զարգացման համար առկա էին բնակլիմայական բարենպաստ պայմաններ՝ ուղղահայաց բարձրությունների (հարթավայրային, նախալեռնային և լեռնային գոտիների) առկայությունը, մշակովի դաշտավայրական ծաղկող կերակրաբույսերի և տեխնիկական բույսերի (կորնզան, առվույտ, արևածաղիկ, կտավատ և այլք) լայնատարած մշակումը և ամենակարևորը՝ ալպիական մարգագետինների և վայրի մեղրատու բույսերի առատությունը: Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը վկայում են, որ Շիրակի պատմագագադրական շրջանի բոլոր բնակավայրերում բազմաթիվ ընտանիքներ զբաղվում էին մեղվապահությամբ, իսկ նրանցից մի մասը նույնիսկ մասնագիտացել էր նոր մեղվաընտանիքների բուծման և իրացման մեջ:<sup>13</sup> Մեղվապահության զարգացման արդի վիճակը և պայմանավորված է օժանդակ տնտեսական զբաղմունքների դերի բարձրացման պարագայով: Բարենպաստ կլիմայական պայմանների դեպքում մարզում արտադրվող մեղրը լիովին բավարարում է բնակչության պահանջարկը: Սրան պետք է ավելացնենք նաև Շիրակում մեծ ծավալներով «արտադրվող» էժանագին կեղծ մեղրի առկայությունը, որի «նշանավոր կենտրոնը» Ախուրյանի նախկին տարածաշրջանի Ջրառատ գյուղն է: Եփած շաքարի, շիբի և այլ կոմպոնենտների խառնուրդ համոքիսացող կեղծ մեղրի արտադրությունը և շրջիկ վաճառողների կողմից դրա սպառումը դուրս է եկել մարզի սահմաններից և ընդգրկում է ողջ հանրապետությունը: Համաձայն Շիրակի մարզպետարանի գյուղ-վարչության կողմից մեզ տրամադրված տեղեկանքի՝ մեղվաընտանիքների քանակը մարզ-կենտրոնում և նախկին վարչական շրջաններում հետևյալ պատկերն ունի. Գյումրի-295, Ախուրյան-2346, Ամասիա-623, Անի-1435, Աշոցք-468 և Արթիկ-2690:<sup>14</sup> Մեր ունեցած տվյալները ցույց են տալիս, որ հատկապես Գյումրիում պահվող մեղվաընտանիքների քանակն ավելի մեծ է, քան ներկայացվում է պաշտոնական աղբյուրներում: Մեղվապահությամբ զբաղվող շատ ընտանիքներ պաշտոնապես չեն զբաղված պատկան մարմիններում կամ մասնագիտացված կազմակերպություններում՝ խուսափելով գործ ունենալ պետական կառույցների հետ: Ի դեպ, նմանատիպ երևույթներ նկատվում է տնային տնտեսություն վարող

<sup>11</sup> Գ. Աղանյան, ԳԱՆ, Աշոցք-1986, Ախուրյան, Անի-2001-2002:

<sup>12</sup> Նույնը:

<sup>13</sup> Գ. Աղանյան, ԳԱՆ, Ամասիա, Աշոցք-1986:

<sup>14</sup> Տվյալներն ըստ ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության:



շատ մանր ձեռներեցների պարագայում, որոնք չեն ձգտում ժամանակ առաջ կամուրջ գրանցվել որևէ պետական կառույցում կամ ֆիսկալ մարմնում: Իրերի այսպիսի վիճակը ծնում է «ծայտյալ գործազրկություն» և բնակչության թաքնված եկամտի իրական չափերի կոծկում, որն ընդունվում է նաև պատկան մարմինների ղեկավարների կողմից:

Տնային տնտեսությունը չի սահմանափակվում միայն գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ, այլև այստեղ արտադրվում են զանազան մանր արդյունաբերական ապրանքներ և իրականացվում են սպասարկման աշխատանքներ՝ անհատական աշխատանքային գործունեության ձևով, որն առավելապես տարածված է Գյումրիում: Այստեղ արհեստավորական ավանդույթների պահպանումը հնարավորություն տվեց շատերին իրենց նախկին մասնագիտական հմտություններն օգտագործել անհատական ձեռնարկությունների կազմակերպման գործին: 1980-ական թթ. երկրորդ կեսին սկսված տնտեսության լիբերալականացման քաղաքականության արդյունքում ի հայտ եկան առաջին կոոպերատիվները, որոնք հիմք դրեցին մանր ու միջին ձեռնարկատիրությանը մարզում: Անկախության առաջին տարիներից ի վեր ազատական տնտեսության օրենսդրական ապահովումը և ՀՀ իշխանության կողմից հիշյալ գործունեության հովանավորումն ու խրախուսումը նպաստեցին մանր արտադրողների թվի աճին: Սրանց շարքում հատկապես մեծ թիվ են կազմում անհատ ձեռներեցներն ու արտադրողները, որոնք աշխատում են ընտանեկան կապալի սկզբունքով: Արտադրության գործընթացի մեջ որպես կանոն ներգրավված են բացի տվյալ ընտանիքի անդամներից նաև ազգական-բարեկամներն ու ընկեր-ծանոթները: Այսպիսի երևույթների առավել հաճախ հանդիպում ենք սննդի փոքր օբյեկտներում՝ հացի փուռ, հրուշակեղենի, աղանդերների արտադրություն, խորտկարաններ, ինչպես նաև սպասարկման ոլորտներում՝ բենզալցակայաններ, մանր կրպակներ ու խանութներ: Վերոհիշյալով չի ավարտվում ընտանեկան տնտեսական գործունեությունը: Շուկայական հարաբերությունների տարածման և զանգվածային գործազրկության պայմաններում ծնվում են նաև ընտանեկան տնտեսավարման նոր ձևեր՝ տարբեր կարգի միջնորդական գործունեություն, ընտանեկան բիզնես՝ հիմնված ըստ էության սպեկուլյատիվ գործարքների վրա (ուրիշի աշխատանքով ստեղծված ապրանքների առք ու վաճառք): Ներկայումս առավել տարածված է վերջինս՝ մաքրային առևտրի եղանակով: Մաքր առևտրականների մի զգալի մասը արդյունաբերական ապրանքներ ու սննդի որոշակի տեսակներ են ներմուծում «մոտակա արտասահմանից»՝ հիմնականում Վրաստանի հանրապետության Մադախուր և Լիլո բնակավայրերի մեծածախ շուկաներից, երկրորդները գյուղատնտեսական արտադրանք են ներկրում ՀՀ տարբեր մարզերից (հիմնականում Արարատյան դաշտավայրն ու հատկապես Արմավիրի մարզն ընդգրկող շրջաններից), իսկ երրորդները, որոնց թիվը զգալիորեն փոքր է, այս գործառույթներն իրականացնում են հանրապետության սահմաններից դուրս՝ «հեռավոր արտասահման» (Բուլղարիա, Լեհաստան, Հունաստան, Թուրքիա, Սիրիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Չինաստան և այլուր) այցելելու ճանապարհով:<sup>15</sup> Հատկանշական է, որ այս գործունեությամբ զբաղվողների տեսակարար կշռում մեծ թիվ են կազմում կանայք,<sup>16</sup> որը նոր ժամանակների սոցիալ-տնտեսական իրողությունների արդյունք է, քանի որ ավանդաբար առևտուրը տղամարդու մենաշնորհն էր համարվում,<sup>17</sup> և կինը չնչին մասնակցություն ուներ այդ գործընթացում: Բացի ավանդական սոցիալական, սեռային դերերի փոփոխության, տեղի է ունենում նաև

<sup>15</sup> Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Գյումրու բնակչության աշխատանքային տեղաշարժերը XX դ. վերջերին (ըստ էթնոժողովրդագրական նյութերի), «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական V գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 40-41:

<sup>16</sup> Մ. Գ ա լ ս ո յ ա ն, Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում, «Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, Եր., 2001, էջ 27:

<sup>17</sup> Մ. Պ ո ղ ո ս յ ա ն, Հայ կնոջ իղեայրը և սոցիալ-տնտեսական փոփոխությունն անցման փուլում, «Արդի էթնամշակութային գործընթացները Հայաստանում», Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1997, էջ 33-34:

առևտրի տարրեր ձևերում ընդգրկված կանանց տարիքային սահմանների ընդլայնում: Շիրակի գյուղական և քաղաքային բնակչության շրջանում տնտեսական գործունեության այս կամ այն բնագավառում ավանդաբար կիրառվող տարիքային սահմանափակումներն արդի փուլում այլևս դադարում են գործել և կենսապահովման ոլորտ ներքաշվում են նաև դեռահասները, երտասարդ հարսներն ու աղջիկները, որն ավանդական շրջանում անհամատեղելի էր իրենց սոցիալական կարգավիճակին: Ավանդական կանացիության որակները, որոնք դրվում են մանկության տարիներին, այսօր բախվում են հասարակական այնպիսի կենսապայմանների հետ, որտեղ հայ կանանց մեծ մասը գոյությունը պահպանելու համար ստիպված է աշխատել տղամարդու հետ հավասար:

Անհրաժեշտ է փաստել, որ տնտեսական վերափոխումները, անցման շրջանով պայմանավորված սոցիալական վայրիվերումներն ու անապահովվածությունը, տնային տնտեսության վարման խնդրում բերեցին կանանց ու տղամարդկանց ավանդական գործառույթների և դերերի փոփոխության: Տնից դուրս աշխատանքը, դրան վաստակելն ու տնտեսական անկախությունը հայ կնոջը տալիս են ավելի բարձր սոցիալ-ընտանեկան, տնտեսական կարգավիճակ և փոխում նրա սոցիալական ավանդական դերը: Ու թեև որոշ առումով բարձրանում է կնոջ տնտեսական դերը, այնուհանդերձ նրա վիճակը դառնում է երկակի՝ ինչը չի կարող գոհացնել ո՛չ իրեն և ո՛չ էլ շրջապատին:<sup>18</sup>

## РОЛЬ ДОМАШНИХ ХОЗЯЙСТВ В СОВРЕМЕННОМ БЫТУ НАСЕЛЕНИЯ ПИРАКА

*Резюме*

*Г. Аганян, К. Базеян*

В современном быту пиракцев значительно увеличивается значение самообеспечивающей функции домашних хозяйств или функции натурального хозяйствования, которые являются следствием социально-экономических перемен переходного периода. В статье сделана попытка исследовать основные формы современного домашнего хозяйствования пиракцев (подсобное земледелие, ясленное скотоводство, разведение домашних птиц, пчеловодство, рыболовство). Особым способом семейной хозяйственной деятельности в городском быту является также мелкая и челночная торговля.

<sup>18</sup> Կ. Ք ա զ ե յ ա ն, Գեներիի էթնոշակութային առումները, Հատուկ դասընթաց, Եր., 2002, էջ 69:

*Лилия ВАРДАНЯН*

**ИЗ ИСТОРИИ ИССЛЕДОВАНИЯ АРМЯНСКОГО  
ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА**

*(по полевым материалам С. Д. Лисициана)*

Среди заслуг видного армянского этнографа С. Лисициана в разработке основополагающих проблем армянской этнографии значительное место занимают исследования в области традиционного народного жилища. Его активная роль в этом направлении протекала в стенах бессменно руководимого акад. Н. Марром Кавказского историко-археологического института в Тифлисе (далее КИАИ), сыгравшего выдающуюся роль в деле развития отечественного кавказоведения тех лет<sup>1</sup>. Степан Лисициан был приглашен в этот крупнейший научный центр в самом начале 1920-х гг. уже вудучи зрелым и известным ученым. Его предшествующие арменоведческие исследования, доскональное знание первоисточников по различным периодам армянской истории, исторической и физической географии Армении и Армянского нагорья, историзм в трактовке исследуемых явлений послужили той фундаментальной базой, на основании которой он сразу сумел развернуть свою плодотворную деятельность на поприще этнографии<sup>2</sup>.

Учитывая специфику текущего момента: стремительную трансформацию всех областей традиционной культуры в период коренных социалистических преобразований в постреволюционное десятилетие, и, одновременно, массовое переселение армян из Турции на территорию Советской Армении после известных событий геноцида 1915г. и последствий I мировой войны, С. Лисициан считал сбор полевого материала везотлагательной и неотложной задачей. В кругу первоочередных проблем, по поручению КИАИ, он занялся изучением традиционного народного жилища армян во всем разнообразии региональных форм и одновременно-единстве историко-культурной общности армянского этноса в целом. В подобном аспекте проблема эта ставилась впервые.

Сохранившиеся архивные документы 1925-1928гг. (мандаты, командировочные удостоверения С. Лисициана, его квартальные и годовые отчеты), сообщения и доклады в "Бюллетенях КИАИ", а также собранный ученым обширный полевой материал свидетельствуют о весьма широком ареале данного исследования. С. Лисициан проводил его сразу в двух направлениях: как среди коренного населения - в Ленинакане (Гюмри), Аштараке, Егварде, Кешишкенде (Ехегналзоре), в Б. Караклисе (Ванадзоре), сел. Вардавлур, Дсех, Узунлар (Одзун), Барана (Ноемверян), Кохь, а также в Памваке, Зангезуре и Нагорном Карабахе, так и среди армянских беженцев. В его архиве сохранились подробные описания целого ряда традиционных жилищ гаваров Западной Армении-Алашкерта, Арчеша, Багеша, Баязета, Буланыха, Карчкана, Мокса, Сасуна, Шатаха, Шапин-Гарайсара, Харверда, Ршгуника и др. с обмерами, многочисленными набросками планов, чертежей, зарисовками<sup>3</sup>. Так, с целью сбора материала среди выходцев из Эрзинджана (Ерзнка), Эрзрума и Басена, С. Д. Лисициан летом 1925г. в качестве члена Ученого собрания КИАИ предпринял командировку в Ленинакан, поскольку переселившиеся туда после первой русско-турецкой войны, в 1829г., армяне "сплошными поселениями заняли в. Александропольский, Ахалкалакский и Ахалцихский уезды и возвели здесь новые жилища, сохраняя рабскую верность своим вековым традициям... Мне пришлось обследовать до двух десятков таких сооружений, и я был тут, как и в Карабахе, поражен постоянным точным повторением издревле усвоенных структурных форм и технических

<sup>1</sup> Л. В а р д а н я н, Степан Лисициан и Кавказский историко-археологический институт в Тифлисе.- *Этнографическое обозрение*, 2000, N 1, стр. 113-127.

<sup>2</sup> Подробнее о жизни и творческом пути ученого см.: Варданян Л., Степан Данилович Лисициан. 1865-1947гг., *Советская этнография*, 1986, N 6, стр. 59-69; Ее же\_ Степан Данилович Лисициан. *Материалы к библиографии ученых Армянской ССР*, N 41, Ер., 1987.

<sup>3</sup> ЦГИА РА, ф. 428, оп. 4, д. 91, ч. I, II; Лисициан С., *Альбомы этнографических рисунков (карандаш)- Фонд письменных источников этнографического отдела ГМИ*, оп. 1, д. 123, 124.

приемов, явлением, естественно, объяснимым общим консерватизмом местного хозяйственного уклада. Личные наблюдения были пополнены подробными опросами не только лиц, близко знающих район нового поселения армян Высокой Армении, но и уроженцев Эрзинджанской, Эрзерумской и Басенских равнин. Ценные данные были сообщены как сельскими учителями, так и беженцами... Таким путем выяснилось широкое распространение типа крестьянского жилища как на восток, в районе Ленинакана, Ахалкалаки Джавах етского и Ахалциха, так и на запад, в направлении Анатолийского полуострова, за Байбурт, Шапин-Гарайсар и Сивас<sup>4</sup>. Собранный С. Лисицианом обширный полевой материал, охватывающий большинство регионов Армении и оставшийся до сих пор в рукописи, сохранил бесценные подробности и детали одной из важнейших сфер традиционной культуры армян. По каждому из перечисленных регионов ученый дал скуруплезное, очень точное и обстоятельное описание всех основных частей жилого дома, хозяйственных построек, их конструктивных частей и особенностей, строительной техники, функционального назначения. Этот материал должен был стать основой монографического исследования, завершить которое С. Лисициан, к сожалению, не успел. О широком замысле готовящейся работы свидетельствует обнаруженный нами в архиве ученого рукописный план "Армянское народное жилище". Судя по содержанию, этот ценный документ был составлен в процессе подготовки им монографии. Работа предполагала "Введение" и два больших раздела: описательный и сравнительный. Описательный раздел включает: а/ историческую часть (жилище доисторической, халдской, ахеменидской и последующих эпох), в/ типы народных жилищ последних столетий, где перечислены традиционные жилища 12 регионов: 1. мегринское; 2. зангезурско-карабахский "каратак" и "карадам", 3. казахско-лорийский "глхатун", "зацатун"; 4. "зерзамби" садоводческого района Арагатской долины; 5. ванское "магаза"; 6. "гарнауз" Высокой Армении; 7. "азарашенк" и "оророцашенк" Буланыха и Тарона; 8. "калатун" Шатаха-Мокса; 9. "ашгаракавор" Сасуна; 10. жилища Харверда, Малатии, Аравкира; 11. "мец тнер" Шапин-Гарайсара и Сиваса (Сваза); 12. жилище средиземночерноморского района. Сравнительный раздел плана включает исследование двух важных проблем: 1. сравнение с типами народных жилищ соседних древних и современных народов, и вопрос о том, насколько типы армянских традиционных жилищ дают возможность прояснить происхождение армянского этноса; 2. связь армянской церковной архитектуры с типами народных жилищ: проблемы происхождения вазилики, купола, апсиды, притвора (жама-тун)<sup>5</sup>.

С. Лисициан первым в армянской этнографии подошел к изучению традиционного жилища с позиций его типологической классификации. В многообразии отличительных черт он сумел определить и обозначить конструктивно наиболее принципиальный и характерный признак для выделения того или иного конкретного типа-форму потолочного перекрытия в зависимости от способа укладывания валок (плафона), поскольку, как показали его исследования, в армянском традиционном жилище именно потолок и является наиболее характерной частью "туна" (дома) в сочетании с его световым решением. При всей вариативности и схожести отдельных форм, С. Лисициан выделил два наиболее распространенных и характерных типа (в свою очередь-с двумя подтипами каждого) традиционного крестьянского жилища у армян, обозначив при этом их условную границу по линии Армянского Тавра.

К северу от нее наиболее распространенным был квадратно-купольный тип одноэтажного жилища с единственным световым и дымовым отверстием "эртык" в центре потолка и врытым в пол очагом-тониром. Один его подтип или вариант-это "глхатун", "Сацатун" или "карадам" на четырех колоннах с перекладыванием потолочных валок параллельными суживающимися квадратами и куполообразным венцом. Жилища с подовой, по определению С. Лисициана, упрощенной разновидностью формы потолка "имели широкое распространение, в особенности, в восточной части Армянского на-

<sup>4</sup> С. Л и с и ц и а н, *Крестьянское жилище Высокой Армении. - Известия КИАИ, Тифлис, 1926, т. 4, стр. 56.*

<sup>5</sup> ЦГИА РА, ф. 428, оп. 4, л. 241. л. 2 и об.

горья (Лори, Зангезур, Карабах, Ганджа), включая также восточное и южное побережье Ванского озера и Мушскую равнину. Другой его подтип (вариант)-значительно более сложный "Сазарашенк", известный также под названием "карнаудж" или "карнакунч" и "согомашенк" с перерезыванием (пересечением) углов перекрытия, состоящего из многочисленных мелких брусьев. Это традиционное армянское жилище было более характерно для исторической области Высокой Армении (Басен, Эрзрум, Эрзинджан) и верховьев долин Западного Евфрата. При этом, С. Лисициан подчеркивал, что каждый вариант жилища в исследуемый им период не был абсолютно застывшим в своих традиционных формах и привязанным к той или иной местности. Он обратил внимание на существование ряда переходных форм, в особенности, в местах поселения беженцев и переселенцев, где, по его определению, "происходила своеобразная гибридизация, усвоение строителями-мастерами характерных особенностей обоих типов"<sup>6</sup>, их смешение и скрещивание.

Второй тип-это двухэтажное жилище с плоской крышей, воковыми световыми окнами в стенах и выходным дымовым отверстием очага-камина у края плоского потолка. Один его подтип преобладал к югу от Армянского Тавра, в южных армянских провинциях (Сасун, Шатах и др.) и проявлялся "особенно рельефно в Моксе": здесь нижний этаж отводился для скота, средний-для жилья с характерной верандой (балконом) с одной стороны и помещением для молотыбы "калатун" поверх второго этажа под плоскою крышею - с другой. В условиях иноэтнического турецкого и курдского враждебного окружения и необходимости с оружием в руках защищать свою свободу, нередко подовные жилища снавжались войницами в стенах верхнего этажа. Не даром традиционный сасунский комплекс "кошк" С. Лисициан характеризовал одновременно и как крепость, а аналогии и сходство с ним видел в домах-вашнях Горной Сванетии<sup>7</sup>.

Другой подтип двухэтажного дома с плоской крышей, верхним жилым этажом и окнами в стенах был характерен для садоводческих и винодельческих регионов Араратской долины и Нахичевана, а также ряда западноармянских городов -Вана, Муша, Багеша и др. Его характерной чертой были расположенные в нижнем этаже довольно высокие кладовые со сводчатым корововым потолком и узкими окошечками почти под самым потолком.

Примечательно, что С. Лисициан обратил внимание и на такой важный конструктивный принцип, как замкнутое под одной крышей или отдельная планировка собственно жилого дома и помещения для скота. "Бросается в глаза резкое различие между восточными и западными провинциями в этом отношении. По всему Малому Кавказу местное коренное армянское население сооружало хлев ("гом") отдельно от своего жилища. Переселенцы из турецких (западных) областей, согласно выработавшейся на прежней родине традиции, помещали хлев рядом с жильем, сливая их в один комплекс, и жили вместе со всей семьей под одним кровом со скотом...В западных провинциях и у переселенцев оттуда, как в Армении, так и в Грузии (Александрополь-Ахалкалаки-Ахалцих, бассейн озера Севан), особенно в сочетании с жильем типа Сазарашенк, "гом"-хлев поражает своим высокоразвитым архитектурным оформлением... Но самая интересная часть гома- это его отделение "ода", гоми ода-парадная комната, предназначенная для мужской, отчасти, и для почтенной женской половины семьи, в особенности для приема гостей<sup>8</sup>. Каждому из выделенных основных типов и подтипов (вариантов) традиционных жилищ С. Лисициан посвятил специальные подровные исследования, тогда же опубликованные в "Известиях" КИАИ, ставших в настоящее время раритетными изданиями<sup>9</sup> (позже в более сжатом виде-в соответствующем разделе "Жилище и

<sup>6</sup> С. Л и с и ц и а н, *Нор-Баязетский сазарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов-Памбакского и Даралагязского-Известия КИАИ, Тифлис, 1927, т. 6, стр. 140.*

<sup>7</sup> ЦГИА РА, ф. 428, оп. 4, д. 91, ч. 1, л. 43, 48-49.

<sup>8</sup> С. Л и с и ц и а н, *Очерки этнографии дореволюционной Армении. Кавказский этнографический сборник, I, М., 1955, стр. 209-210, 211, 212.*

<sup>9</sup> С. Л и с и ц и а н, *К изучению крестьянских жилищ. Карабахский карадам-Известия КИАИ, Тифлис, 1925, т. 3, стр. 97-108; Его же. Крестьянское жилище Высокой Армении... стр. 55-70;*

хозяйственные постройки” в своей обобщающей работе по дореволюционной армянской этнографии). На конкретных примерах С. Лисициан показал, каким образом планировка, архитектурные особенности и специфика определенного типа жилища и его интерьера обусловлены комплексом взаимосвязанных факторов-географической среды, рельефа местности, природно-климатическими и сейсмическими условиями, наличием (или отсутствием) строительного материала, основными хозяйственными занятиями населения, его традициями, а также спецификой иноэтнического окружения. Он отмечал также консервативность старых, дедовских форм с одной стороны, и нововведения нарождающегося нового социалистического быта с другой. Примечательно, что он настойчиво подчеркивал неотложность записи материала, т. к. “народную архитектуру западных и южных областей “Армянского нагорья” возможно восстановить лишь со слов беженцев и на основании построек, возведенных и возводимых на местах нового поселения на территории Советской Армении, конечно, постольку, поскольку они сами здесь не подчинились влиянию местных форм”<sup>10</sup>. С другой стороны, многие древние местные постройки северной и северо-восточной Армении, вольшею частью были превращены в амбары или же просто-напросто заброшены. “Население уже повсеместно отвыкло от того образа жизни, к которому были приспособлены старые дома, и потому едва ли можно сомневаться, что если не взяться теперь же за описание уцелевших немногих памятников народной архитектуры, то через несколько лет сделать это уже невыносимо, ... необходимо смешать с фиксацией архитектурных особенностей всех имеющихся налицо типов”<sup>11</sup>.

Другой не менее важной заслугой С. Лисициана в разработку данной проблематики явилось выявление им, также впервые, определенной генетической связи форм и планировки крестьянских жилищ с армянскими культовыми сооружениями. Ученый установил “ближайшую связь храмовых традиций с чисто местными народными архитектурными навыками” усмотрев уже при своре полевого материала сходство армянского народного жилища с древними армянскими церквями и монастырями. В своих работах он обратил внимание на непосредственную связь планов глхатуна и жаматуна (притвора), выяснил, что армянский тондратун “в основных чертах напоминает церковную апсиду” и что “именно в Армении мы встречаем в местных базиликах христианского времени свойственную им сравнительную узость воковых нефов, имеющую параллель в планировке гома (хлева)”, а что сама гоми ода “по своему плану до такой степени приближается к плану базилики, как тип последней выработавшийся в Малой Азии, что невольно напрашивается установление прямой генетической связи базиличного плана с планом гоми ода”<sup>12</sup>. Выяснению этнографических связей и переживаний С. Лисициан придавал особое значение, так как считал, что сохранившийся этнографический материал помог бы разобраться в проблемах местного искусства, в частности, и в вопросе происхождения своеобразных черт армянской архитектуры. Более того, проблему эту он видел значительно шире, в раскрытии этнических наслоений в составе населения той или иной области Армении. Он считал, что сопоставление характерных типов культовых и крестьянских построек соседних и отдаленных районов поможет разобраться в вопросе о движении этнических волн и культурных течений, выяснить процесс скрещения внешнего влияния с чисто местными переживаниями... для установления древних культурных связей и раскрытия тех этнических элементов, которые вошли в состав отдельных

*Его же. Из материалов по изучению жилищ Армении. 1. Крестьянское жилище Мегринского района, 2. Нор-Баязетский Сазарашенк..., стр. 119-133, 133-140, Его же. Сообщение о результатах командировки в Дсех и Узунлар для обследования крестьянских жилищ Лорийского района. – Бюллетень КИАИ, N 5, Л., 1929, стр. 10-11; Его же. О крестьянских жилищах Казахского района. – Там же, стр. 12; Его же. О постройках Мокского округа. – Там же, N 4, Тифлис, 1928, стр. 14-15.*

<sup>10</sup> С. Л и с и ц и а н, *К изучению крестьянских жилищ. Карабахский карадам...*, стр. 99.

<sup>11</sup> Там же; С. Лисициан. *Сообщение о результатах командировки в Дсех и Узунлар*, стр. 11.

<sup>12</sup> С. Л и с и ц и а н, *Очерки этнографии дореволюционной Армении...*, стр. 213; См. также: *Շարքնայան, Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն)՝ արքայանի, Հայոց արքայանի և արքայանիքը*, Եր., 2001, էջ 357-360:

провинциальных групп, охватываемых теперь общим понятием “армянской народности”<sup>13</sup>.

### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Ըստ Ս. Լիսիցյանի դաշտային նյութերի)

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Լ. Վարդանյան \_\_\_

Հայ ականավոր ազգագրագետ Ս. Լիսիցյանի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում հայկական ավանդական բնակարանի համալիրի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները: 1920-ական թ. աշխատակցելով Ն. Մառի գլխավորած Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտին Ս. Լիսիցյանը ձեռնամուխ եղավ դաշտային ազգագրական նյութերի հավաքմանը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տարրեր շրջաններում: 1915թ. Սեդ Եղեռնից հետո Արևելյան Հայաստան տեղափոխված գաղթականության տարաբնակեցման շրջաններում Ս. Լիսիցյանն ուսումնասիրել, նկարագրել և չափազրել է Պատմական Հայաստանի շուրջ 12 պատմագրական մարզերին հատուկ բնակարանի համալիրներ, որոնց վերաբերող նյութերը հրատարակվել են տարրեր գիտական պարբերականներում, իսկ մնացած մասը գտնվում է տարրեր արխիվներում, և առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում տողերիս հեղինակի կողմից:

Ս. Լիսիցյանն առաջին անգամ հայ ազգագրության մեջ տիպարանեց ավանդական բնակարանի համալիրները և դրանց առանձնահատկություններն ըստ տարրեր պատմագրական մարզերի:

<sup>13</sup> С. Л и с и ц и а н, *Крестьянское жилище Высокой Армении...*, стр. 69-70.

*Ирина ДОЛЖЕНКО*

## **СОЦИАЛЬНЫЙ СТАТУС РУССКИХ АРМЕНИИ** *(По материалам переписи населения 1989 г.)*

Под термином «социальный статус» подразумевается положение социальной (этнической) группы относительно других групп, которое определяется по социально значимым для данной общественной системы признакам или характеристикам. Основным статусным показателем этнической группы является специфичный для нее образ жизни, который отобразается в комплексе таких базисных характеристик, как численность и география расселения этноса, его социально-поселенческая структура (уровень урбанизации), языковая характеристика, уровень образования, профессиональная, квалификационная и отраслевая структура и т. д., то есть те показатели, которые обеспечивают жизнеспособность этноса в современных условиях<sup>1</sup>.

В основу сообщения положен анализ социальных характеристик русских Армении, основанный на данных переписи населения республики 1989 г. В этот период в республике проживало 51,6 тысяч русских, что составляло 1,6% от всего населения Армении. Невысокая численность русской диаспоры Армении объяснялась несколькими причинами: ограниченными территориальными ресурсами, высокой плотностью коренного населения, которая постоянно возрастала в результате концентрации армян на своей исторической родине. Кроме этого, социально-профессиональная структура армянского этноса позволяла удовлетворять потребности развивавшихся отраслей промышленности своими кадрами, без массового приглашения специалистов извне, среди которых вольшинство составляли русские.

Русское население, проживавшее в Армении, в вольшинстве своем являлось городским: в 1989 г. доля горожан достигла 85% русских, которые, как правило, проживали в наиболее крупных городах республики. Сельское население было сосредоточено преимущественно на севере республики и расселено небольшими территориальными анклавами.

Объективными условиями и предпосылками формирования определенного социального статуса этнической группы являются языковые характеристики. Реальные потребности русских в знании языка титульной национальности, а также общий характер этноязыковой ситуации значительно различались по республикам. Истоки русско-армянского двуязычия относятся к первой половине XIX в. - времени появления русских в Восточной Армении, однако в прошлом масштабы двуязычия были невысокими. Ситуация стала меняться во второй половине XX в., когда для русских Армении стала характерной тенденция к расширению двуязычия. За период 1970 – 1989 гг. доля русских со знанием армянского языка увеличилась с 17,1% до 32,2%, то есть к началу 1990-х гг. фактически каждый третий русский в Армении владел армянским языком, что позволяло волее полно реализовывать свои социальные возможности<sup>2</sup>. Языковая компетенция в виде двуязычия, расширяющая профессиональную, культурную и общественную деятельность человека, способствует росту уровня его образования, создает условия для социально-профессиональной мобильности, повышая в итоге социальный статус. Быстрые темпы прироста двуязычия явились объективным показателем наличия потребностей русских в знании второго языка. Столь широкое развитие русско-национального двуязычия было характерно не только для Армении, но и для Литвы (33,4%) и Украины (32,8). Необходимо отметить, что при высокой доле знающих в той или иной степени

<sup>1</sup> Т. Р у д н и ц к а я. Социальный статус русских на начальном этапе развития суверенной Украины, Русские в современном мире. М., 1998, стр. 125.

<sup>2</sup> Итоги Всесоюзной переписи населения 1970 г. по Армянской ССР. Ер., 1972, Табл. «Распределение населения Армянской ССР по национальности и родному языку». Итоги Всесоюзной переписи населения 1989 г. по Армянской ССР. Ер., 1991, Табл. 32 с «Распределение населения отдельных национальностей по возрасту, родному языку и второму языку народов СССР».



армянский язык свободно владела языком титульного этноса, то есть умела не только общаться, но и свободно читать и писать, незначительная часть русских.

По степени распространения русско-национального двуязычия, нормам его существования, жизненным сферам, где оно реализовывалось, имелись различия между городским и сельским населением, людьми различных возрастных групп и разного пола. В городах функциональная нагрузка армянского языка была высокой, и двуязычие русских было распространено в городах гораздо шире, чем в сельской местности-соответственно 34,9% и 16,8%.<sup>3</sup>

Армянский язык активно использовался в производственной сфере, которая создавала особо благоприятные условия для успешного развития процессов русско-национального двуязычия. Хорошее знание армянского языка для русских было тесно связано с трудовой деятельностью. Самый высокий процент владеющих армянским языком (44,3%) был характерен для русских в возрасте 40-44 года.

Русско-армянское двуязычие было характерно в большей степени для женщин, чем мужчин, что являлось особенностью языковой ситуации русских Армении. К концу 1980-х гг. доля женщин, владевших армянским языком, составляла 38,9% против 22,8% мужчин.

Перепись 1989г. зафиксировала увеличение численности русских, для которых родным являлся язык другой национальности с 0,5% в 1970 г. до 1,6%, из них 1,4% в качестве родного назвали армянский.

Одной из важнейших характеристик социального статуса этнической общности является присущий ей уровень образования, который играет существенную роль в совершенствовании социальной структуры населения, усилении ее однородности, росте культурного потенциала и служит одним из важнейших показателей социально-экономического развития народа.

Сравнение с уровнем образования представителей других народов, проживавших в Армении, показывает, что русские обладали значительным образовательным потенциалом. По этому показателю они опережали не только другие национальные меньшинства, но и коренной этнос. На 1000 человек русских (старше 6 лет) приходилось 394 специалиста с высшим, незаконченным высшим и средним специальным образованием, в то время как эта группа составляла у армян 279, греков 189, ассирийцев 157 человек. Группа лиц со средним общим образованием составляла у русских 278 человек (у армян 303).<sup>4</sup>

Уровень образования русского городского населения, естественно, был выше, чем сельского. Среди горожан наибольшую долю составляли лица с высшим, незаконченным высшим и средним специальным образованием - 421 человек (у армян 323, греков 251, ассирийцев 163 человек). Среди сельчан преобладала группа со средним общим образованием - 285 человек. В то же время на 1000 человек русских в сельской местности приходилось 236 человек, имеющих образование не ниже среднего, что превосходило аналогичный показатель у армян, греков, ассирийцев (соответственно 177, 185 и 151).

Несмотря на то, что в сельской местности русские продолжали первенствовать по доле специалистов, а также лиц со средним общим образованием, разница в образовательном уровне между ними и другими этническими группами сократилась. Причина этого заключалась в том, что более 70% русских сельчан составляли старожилы, в традиционной системе ценностей которых (в особенности сектантов) сельский образ жизни с ориентацией на физический труд имел приоритетное значение.

Высокий уровень образования русских Армении определялся несколькими причинами. Среди них особенности формирования русского городского населения, основу которого составили направленные на промышленные предприятия Армении в 1950-60-е гг. высококвалифицированные инженеры, техники и рабочие. К тому же социально-

<sup>3</sup> *Итоги Всесоюзной переписи населения 1989 г. по Армянской ССР. Здесь и далее подсчитано автором по табл. 32с.*

<sup>4</sup> *Там же. Здесь и далее подсчитано автором по табл. 33с «Распределение всего населения отдельных национальностей по уровню образования».*

поселенческая структура русских, характеризовавшаяся высокой долей городского населения, облегчала доступ представителей этой этнической группы к получению образования. Кроме этого, в Советском Союзе существовали объективные условия для достижения русскими высокого образовательного уровня: вся социально-значимая информация была представлена на русском языке, который являлся и основным языком образовательной системы.

Интересно, что русское население вне РСФСР отличалось более высоким образовательным уровнем по сравнению с русскими, проживающими в «своей» республике. Это явление, кстати, характерно для представителей всех титульных этносов, проживающих вне республик своей национальности.<sup>5</sup>

Одной из характерных черт русских Армении являлся достаточно высокий уровень занятости в общественном производстве - 44,4%. По этому показателю они опережали как титульный этнос (39,5%), так и другие национальные меньшинства - ассирийцев (43%), греков (35%), езидов (32,4%).<sup>6</sup> В целом доля русских в занятом населении составляла 1,8%, что несколько превышало их удельный вес в населении республики. К началу 1990-х гг. социально-профессиональный состав русских, занятых в общественном производстве, был представлен двумя основными группами - служащими и рабочими, соответственно 47,7% и 47,4%. Доля крестьян была незначительной - 1,5% (для сравнения приведем аналогичные данные состава армян - соответственно 27,5%, 64,9% и 6,2%).<sup>7</sup> Таким образом, для русских Армении была характерна высокая доля работников умственного труда, который превышал этот показатель даже среди коренного населения. Основой столь высокого статуса русских в сфере общественного производства являлся, без сомнения, уровень образования, который определял не только степень участия этноса в производстве, но и его социально-профессиональную структуру.

Динамика социально-профессионального состава русских Армении имела тенденцию увеличения численности работников интеллектуальной сферы, людей, занятых квалифицированным трудом. Среди русского городского населения доля работников умственного труда к 1989 г. увеличилась по сравнению с 1979 г. с 51,8% до 55,3%, из них 37,8% работало руководителями и специалистами высшего и среднего звена. За этот же период наблюдалось сокращение доли работников физического труда с 48,2% до 44,7%.<sup>8</sup>

Характер трудовой деятельности русского занятого населения был разнообразным: 33,7% русских работало в промышленности, 9,7% в сфере управления, 9,6% в просвещении, 7,2% в строительстве, 6% в здравоохранении, работники науки, культуры и искусства составляли 7,6% от числа всех занятых. Среди других отраслей хозяйства, где трудились русские, - сельское хозяйство (4,5%), транспорт (4,2%), торговля (3,4%), бытовое обслуживание (2,7%), связь (1,6%).<sup>9</sup>

42% русского городского населения, занятого физическим трудом, являлось промышленными рабочими, из них 35% работало в тяжелой промышленности, в том числе в машиностроении, металлообработке 28,7%.<sup>10</sup> Таким образом, для русских Армении было характерно высокое представительство в индустрии, в отдельных ведущих отраслях которой - машиностроении, металлообработке - они имели устойчивые позиции. (Заметим, что развитие экономической самостоятельности республики в рамках рыночной экономики привело к сокращению производства, а затем и свертыванию прежде всего отрас-

<sup>5</sup> С. Савоскул, *Рост образования, Русские, Этносоциологические очерки*, М., 1992, стр.242.

<sup>6</sup> *Итоги Всесоюзной переписи населения 1989 г. по Армянской ССР, Табл. 9 и 10 «Распределение населения по уровню занятости».*

<sup>7</sup> Там же, Табл. 34 в «*Распределение населения отдельных национальностей по источнику средств существования и общественным группам*».

<sup>8</sup> И. Сувотина, *Особенности трудовой занятости русского населения в прошлом и настоящем, Русские, Этносоциологические очерки*, стр.102-103, табл. 5.

<sup>9</sup> Там же, стр. 96, табл. 3.

<sup>10</sup> В. Кондратьев, *Динамика рабочих кадров, Русские. Этносоциологические очерки*, стр.106.

лей тяжелой индустрии, в результате чего в числе безработных оказались высококвалифицированные инженерно-технические и рабочие кадры).

Анализ комплекса значимых характеристик свидетельствует, что к началу 1990-х гг. русские являлись одной из наиболее социально-продвинутых этнических групп в республике. Тем не менее несоблюдение пропорций представительства русских на высоко-статусных профессиональных уровнях в определенной степени сдерживало продвину-тость группы по социально-профессиональной лестнице. По материалам Госкомстата СССР и Всесоюзной переписи населения на начало 1989г. в Армении процент титуль-ного этноса среди руководящего звена составлял 99,4%. На долю же представителей на-циональных групп, включая и русских,-руководителей предприятий и организаций ос-новных отраслей народного хозяйства приходилось всего 0,4%, что было значительно меньше их удельного веса в составе населения (6,7%)<sup>11</sup>.

После обретения Арменией государственной независимости кардинальные преоб-разования в политической, социальной и экономической жизни вызвали ухудшение ста-тусных позиций всех народов республики. В результате интенсивного оттока населения численность населения резко сократилась. К настоящему времени доля национальных групп в населении республики составляет менее 3%. Основываясь на социальных харак-теристиках, можно утверждать, что в результате миграции именно русские понесли наи-большие потери. К настоящему времени по приблизительным оценкам русское население сократилось до 10 тысяч человек, и дальнейшие перспективы существования русской диаспоры Армении не вызывают оптимизма. Столь резкое уменьшение численности рус-ских является показателем начавшегося процесса нарушения целостности и самостоя-тельности группы.

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (ըստ 1989թ. մարդահամարի նյութերի)

\_\_\_ *Ամփոփում* \_\_\_

\_\_\_ *Ի. Դոլժենկո* \_\_\_

1989թ. մարդահամարի տվյալների հիման վրա Հայաստանի ռուսների սոցիալա-կան բնութագրերի վերլուծությունը վկայում է, որ 1990-ական թթ. սկզբներին ռուսները հանրապետությունում սոցիալապես առավել առաջընթաց էթնիկական խմբերից էին: Հայաստանի անկախացմանանցման փուլում կյանքի տարբեր ոլորտներում կատար-ված վերափոխումները որակապես փոխեցին ռուս բնակչության իրական կարգավի-ճակը, և ռուսական սփյուռքի հետագա զոյության հեռանկարները լավատեսական չեն:

<sup>11</sup> Л. Рыбаковский, Н. Тарасова. Миграционные процессы в СССР: новые явления, Социологические исследования, 1990, N 7, стр. 40, табл. 3.

## Նագիկ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

### ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ\* ԲՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1988-1998թթ.:

Բնակչության տեղաբաշխումը որոշակի ժամանակահատվածում բնակչության աշխարհագրական տարածման և բնակավայրերի ցանցի ձևավորման գործընթացի արդյունք է<sup>1</sup>: Մինչ Աղետի գոտու բնակչության տեղաբաշխման առանձնահատկություններին անդրադառնալը, համառոտակի ներկայացնենք նրա բնակչության թվաքանակի, քաղաքի և գյուղի միջև բնակչության բաշխման, քաղաքային և գյուղական բնակչության բացարձակ թվի շարժընթացը 1988-1998թթ.: Ըստ ընթացիկ հաշվառման տվյալների, 1988թ. հունվարի 1-ի դրությամբ հետազայում որպես Աղետի գոտի ճանաչված տարածքում ընդգրկված վարչատարածքային միավորներում բնակվել է 958.200 մարդ, որից 62.2%-ը՝ քաղաքներում, 37.8%-ը գյուղերում<sup>2</sup>: Քաղաքային բնակչության տեսակարար կշռով այն զիջել, իսկ գյուղական բնակչության տեսակարար կշռով գերազանցել է հանրապետական ցուցանիշը (հանրապետությունում այն կազմել է համապատասխանաբար 68.4% և 31.6%): Ուրբանիզացման աստիճանը (1.65) 1.3 անգամ փոքր է եղել հանրապետության ցուցանիշից (2.16): Քաղաքային բնակչության ամենաբարձր տեսակարար կշիռն ունեցել է Շիրակի մարզը՝ 71.4%, որն ինչպես այս ցուցանիշով, այնպես էլ ուրբանիզացման աստիճանով՝ 2.50, գերազանցել է Աղետի գոտու և հանրապետության համապատասխան ցուցանիշները: Ուրբանիզացման մեծ մակարդակը բացատրվում է առաջին հերթին Գյումրի քաղաքի առկայությամբ, որը համարվում է խոշոր քաղաք և մարդաշատությամբ հանրապետությունում երկրորդն է: Քաղաքային բնակչության ամենացածր տեսակարար կշիռն Աղետի գոտուում ունեցել է Արագածոտնի մարզը (առանց Աշտարակի նախկին վարչական շրջանի), ինչը պայմանավորված է այստեղ մանր քաղաքային բնակավայրերի առկայությամբ (Թալին, Արագած, Ապարան քաղաքատիպ ավաններ): Ուրբանիզացման աստիճանը այստեղ ևս ցածր է եղել՝ 0.35:

1998թ. Աղետի գոտու բնակչությունը կազմել է 999.300 մարդ, որից 59.0%-ը բնակվել է քաղաքներում, 41.0%-ը՝ գյուղերում: Ուրբանիզացման աստիճանը կազմել է 1.44, ինչը 1.4 անգամ փոքր է հանրապետության ցուցանիշից (2.02): Այն ցածր է մաս Աղետի գոտու տարածքի 1988թ. համապատասխան ցուցանիշից: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ երկրաշարժի հետևանքով Աղետի գոտու քաղաքային բնակչությունն ավելի մեծ կորուստներ է կրել: Որպես պատճառներ կարող են դիտվել մաս քաղաքային և գյուղական բնակչության շրջանում արտագաղթի տարբեր ծավալներն ու ինտենսիվությունը, ներհանրապետական տեղաշարժերի հետ կապված որոշ գործոններ:

Չնայած 1988-1998թթ. Աղետի գոտու բնակչության աճին, այնուամենայնիվ, բնակչության միջին բացարձակ հավելանքը զգալիորեն զիջում է 1985-1988թթ. ցուցանի-

\* «Աղետի գոտի» հասկացության մեջ մենք ներառում ենք ներկայիս Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի մեջ մտնող նախկին վարչական շրջանները, ինչպես նաև Արագածոտնի մարզից Արագածի, Ապարանի և Թալինի շրջանները: Նշենք, որ այս սկզբունքով Աղետի գոտու առանձնացումը կատարվել է երկրաշարժից անմիջապես հետո, մաս այն նկատառումով, որ թեկուզ համեմատաբար քիչ տուժած բնակավայրերն օգտվեն միութենական ղեկավարության կողմից հատկացվող դրամական և այլ տեսակի օգնություններից ու փոխհատուցումներից: Համեմատության համար նշենք նաև, որ ՀՀ Վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարության կողմից հրատարակված «Շիրակարական-վերականգնողական աշխատանքներն Աղետի գոտուում 1989-1998թթ.» վիճակագրական ժողովածուում նույնպես տրվյալները ներկայացված են այս սկզբունքով: Այլ խնդիր է, որ վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում հատկապես Շիրակի և Լոռու մարզերին, կապված վերջիններում ավերածությունների մեծ ծավալների հետ:

<sup>1</sup> Географический Энциклопедический словарь, М., 1988, стр.255.

<sup>2</sup> Այս և հետագա հաշվարկների հիմքում ընկած են ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության տվյալները:

շին, ինչը բացատրվում է 1989թ. հունվարի 1-ի ընթացիկ հաշվառմամբ արդեն արձանագրված բնակչության թվաքանակի զգալի անկմամբ, որը, փաստորեն, սահմանափակեց տարածքի բնակչության բնականոն աճի հնարավորությունները: 1988-1998թթ. Աղետի գոտու քաղաքային բնակչության բացարձակ թիվը նախատերկրաշարժյան թվին (առ 01. 01. 1988թ.՝ 596.300) հասել է միայն 1992թ. (596.900), այն գերազանցելով 600 մարդով: 1997թ.-ից Աղետի գոտու քաղաքային բնակչության թիվը կրկին զիջել է նախատերկրաշարժյան ցուցանիշին (1997թ.՝ 588.800, 1998թ.՝ 589.800 մարդ): Սակայն, այս անգամ արդեն բազմաթիվ գործոններին ավելացել է նոր վարչատարածքային բաժանման արդյունքում քննարկվող տարածքի վեց քաղաքային բնակավայրերի (քաղաքատիպ ավանների) վերածումը գյուղական բնակավայրերի: 1989-1991թթ. դիտվել է գյուղական բնակչության նվազման միտում: 1992թ.-ից սկսած այն անընդհատ աճել է:

1998թ. քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունն ըստ առանձին վարչատարածքային միավորների փոխվել է: Ուրբանիզացման մակարդակով Շիրակի մարզն արդեն զիջել է Լոռու մարզին: Վերջինս քաղաքային բնակչության տեսակարար կշռով Աղետի գոտու մարզերից առաջինն է (67.5%): Մարզի գյուղերում բնակվում է բնակչության 32.5%-ը: Ուրբանիզացման աստիճանով Լոռու մարզը (2.08) գերազանցել է ինչպես Աղետի գոտու, այնպես էլ հանրապետության ցուցանիշը: Մարզի 1998թ. ուրբանիզացման աստիճանը բարձր է եղել նաև 1988թ. համապատասխան ցուցանիշից: Մա պայմանավորված է նրանով, որ 1988-1998թթ. քաղաքային բնակչությունն աճել է, իսկ գյուղականը՝ նվազել: Հակառակ պատկերն է Շիրակի մարզում, որտեղ քաղաքային բնակչությունը քննարկվող ժամանակահատվածում նվազել է, գյուղականն՝ աճել, ինչի արդյունքում այն ուրբանիզացման աստիճանով հայտնվել է երկրորդ տեղում (2.07), զիջելով նաև 1988թ. համապատասխան ցուցանիշին: Մա, ի թիվս բազմաթիվ այլ գործոնների, պայմանավորված է նաև նրանով, որ երկրաշարժի զոհերի զգալի մասը բաժին է ընկել Գյումրիում, և քննարկվող ժամանակահատվածում, փաստորեն չի վերականգնվել քաղաքի բնակչության նախատերկրաշարժյան թիվը:

Քաղաքային բնակչության ամենացածր տեսակարար կշիռը 1998թ. դարձյալ Արագածոտնի մարզում է, որի՝ Աղետի գոտու մեջ մտնող գյուղերում բնակվում է բնակչության ընդհանուր թվի 79.8%-ը: Բնականաբար, ուրբանիզացման աստիճանը ևս փոքր է՝ 0.25: Այն ցածր է նաև 1988թ. ցուցանիշից, ինչը հետևանք է քննարկվող ժամանակահատվածում Արագածոտնի մարզի՝ Աղետի գոտին ընդգրկող հատվածի քաղաքային բնակչության բացարձակ թվի նվազման (քաղաքատիպ ավան Արագածը վերածվել է գյուղական բնակավայրի) և գյուղական բնակչության բացարձակ թվի աճի:

Բնակչության տեղաբաշխումը բնութագրելու համար սովորաբար օգտվում են բնակչության միջին խտության ցուցանիշից, որն արտացոլելով միավոր տարածքում բնակվողների թիվը, ըստ էության ցույց է տալիս այդ տարածքի տնտեսական յուրացվածության աստիճանը<sup>3</sup>:

1988թ. Աղետի գոտին ընդգրկող տարածքի բնակչության միջին խտությունը կազմել է 86 մարդ/քկմ, ինչը շուրջ 1.3 անգամ փոքր է եղել միջին հանրապետական ցուցանիշից (116 մարդ/քկմ): Մարզային բաժանումը հիմք ընդունելով, կարելի է ասել, որ առավել խիտ բնակեցված է եղել Շիրակի մարզը, որն զբաղեցրել է հանրապետության տարածքի 8.9%-ը<sup>4</sup>, և որտեղ բնակվել է բնակչության 10.5%-ը: Այստեղ բնակչության միջին խտությունը կազմել է 138 մարդ/քկմ՝ 1.1 անգամ գերազանցելով հանրապետության միջին ցուցանիշը: Վերոհիշյալ ցուցանիշը պայմանավորված է եղել հիմնականում բնակչության թվով երկրորդ քաղաքի՝ Գյումրիու առկայությամբ: Առավել նոսր բնակչություն ունեցել է Արագածոտնի մարզը (34 մարդ/քկմ), որը զբաղեցրել է հանրապետության տարածքի 6.9%-ը: Այստեղ բնակվել է հանրապետության բնակչության ընդամենը 2%-ը, ինչը, զուգորդվելով մանր և փոքր գյուղական բնակավայրերի

<sup>3</sup> Լ. Վ ա լ ե ս յ ա ն, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 1988, էջ 126:

<sup>4</sup> Մարզերի տարածքի հաշվարկները կատարվել են ներկայումս նրանց կազմի մեջ մտնող նախկին վարչատարածքային միավորների 1988թ. տվյալների հանրագումարի հիման վրա: Արագածոտնի մարզի համար հաշվարկները կատարված են առանց Աշտարակի նախկին վարչական շրջանի:

համեմատաբար մեծ թվի հետ, հիմնականում պայմանավորել է բնակչության միջին խտության նշված ցուցանիշը: Աղետի գոտու բնակչության միջին խտությունը նախկին վարչատարածքային միավորներից գերազանցել է միայն Արթիկի շրջանը (Արթիկ քաղաքը ներառյալ)<sup>5</sup> 94 մարդ/քվմ: Առավել նոսր բնակչություն ունեցել է Աշոցքի նախկին վարչական շրջանը՝ 18 մարդ/քվմ, որտեղ հիմնականում գերակշռում են մամր ու փոքր գյուղերը:

1998թ. Աղետի գոտու բնակչության միջին խտությունը 90 մարդ/քվմ է, որը մոտ 1.4 անգամ փոքր է հանրապետության միջին խտությունից (127մարդ/քվմ): Զննարկվող ժամանակահատվածում Աղետի գոտու բնակչության միջին խտությունն ավելացել է ընդամենը 4մարդով (4.6%-ով), ինչը պայմանավորված է առաջին հերթին երկրաշարժի անմիջական հետևանքներով, որի արդյունքում 1989թ. Աղետի գոտու բնակչությունը նվազել է նախաերկրաշարժյան ցուցանիշին է մոտեցել միայն 1992թ.: Դարձյալ մարդկային բաժանումը որպես հիմք ընդունելով, կարելի է նշել, որ Աղետի գոտում 1998թ. ևս բնակչության ամենամեծ խտությունն արձանագրվել է Շիրակի մարզում (137 մարդ/քվմ), որը հանրապետության միջին խտության ցուցանիշը գերազանցել է 10 մարդով, սակայն ցածր է եղել 1988թ. ցուցանիշից: Բնակչության խտության ցուցանիշով մարզերից ամենամոտր բնակեցված է դարձյալ Արագածոտնի մարզը (43 մարդ/քվմ), սակայն 1988թ. համեմատաբար խտության ցուցանիշն աճել է, քանի որ մարզի բնակչության բնականոն աճը 1988-1998թթ Սպիտակի երկրաշարժի հետևանքով չի խաթարվել:

Աղետի գոտում ամենամեծ խտությամբ ևս 1998թ. աչքի է ընկել Արթիկի շրջանը: Ամենից նոսր բնակչություն ունյն թվականին արձանագրվել է Ամասիայի շրջանում՝ 14 մարդ /քվմ (1988թ.՝ 32 մարդ/քվմ): Այստեղ նշված ցուցանիշը նվազել է կապված աղբյուրեջանցիների զանգվածային արտագաղթի, հետևաբար նաև շրջանի բնակչության թվաքանակի կտրուկ նվազման հետ:

Աղետի գոտու մշտական բնակչություն ունեցող տարածքը ձգվում է 400մ-ից (Տավուշի մարզի Դեբետավան գյուղ) մինչև 2250մ (Շիրակի մարզի Սարազյուղ) բացարձակ բարձրությունների միջև: Ինչպես հայտնի է, լեռնային երկրներում բնակչության տեղաբաշխման տարբերությունները նկատելի են նաև ուղղաձիգ ուղղությամբ: 1988թ. դրությամբ բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների ունեցել է հետևյալ տեսքը. բնակչության 50.3%-ը կենտրոնացված է եղել երրորդ՝ 1500-2000մ բարձրության գոտում, որն զբաղեցնում է Աղետի գոտու տարածքի 36%-ը<sup>5</sup>: Նման բարձր տեսակարար կշիռը պայմանավորված է նրանով, որ այս գոտու ընդարձակ լեռնային հարթությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում մարդու կյանքի և հասարակական արտադրության կազմակերպման համար<sup>6</sup>: Երկրորդ՝ 1000-1500մ բարձրության գոտին զբաղեցնում է տարածքի 24%-ը և համեմատաբար ավելի թույլ է բնակեցված, քան երրորդը (բնակչության 35.2%-ը): Մինչև 1000մ բարձրություն ունեցող առաջին գոտում, որը տարածքով ամենափոքրն է (Աղետի գոտու տարածքի 9%-ը), կենտրոնացված է բնակչության ընդամենը 11.8%-ը: Բնակչության միայն 2.7%-ն է բնակվել չորրորդ՝ 2000-2500մ բարձրության գոտում, որը, սակայն ավելի մեծ տարածություն է զբաղեցնում (22%), քան առաջինը:

Փաստորեն, Աղետի գոտում 1988թ. բնակչության կենտրոնացվածությունը ըստ բարձրության գոտիների աճել է՝ առավելագույնին հասնելով երրորդ գոտում և միայն չորրորդում է դիտվել բնակչության առավել թույլ կենտրոնացվածություն:

Բնակչության միջին խտությունն ըստ բարձրության գոտիների փոփոխվում է այլ կերպ: Առավել խիտ է բնակեցված 1000-1500մ բարձրության գոտին՝ 124 մարդ/քվմ, առավել նոսր՝ 2000-2500մ բարձրության գոտին՝ ընդամենը 10մարդ/քվմ: 1500-2000մ բարձրության գոտին համեմատաբար ավելի խիտ է բնակեցված (114 մարդ/քվմ), քան մինչև 1000մ բարձրության գոտին (107 մարդ/քվմ):

1998թ. բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների ունի հետևյալ տեսքը. Աղետի գոտու բնակչության 49.3%-ը կենտրոնացված է բարձրության երրորդ

<sup>5</sup> Ըստ բարձրության գոտիների՝ տարածքների առանձնացումը կատարվել է ըստ *Լ. Վախյանի (տե՛ս Производственно—территориальный комплекс Армянской ССР), Եր., 1970, стр. 156.*

<sup>6</sup> *Լ. Վ ա լ ե ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 23:*

գոտում: Բնակչության 35.7%-ը կենտրոնացված է երկրորդ գոտում, որտեղ քաղաքային բնակչության տեսակարար կշիռն անհամեմատ մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշռից: Այս իրողությունը, ինչպես հանրապետությունում, այնպես էլ Աղետի գոտում, բացատրվում է տիրապետող թեք լանջերով, ինչը տարածքի գյուղատնտեսական յուրացվածության տեսանկյունից լրացուցիչ բարդություններ է ստեղծում: Համեմատաբար թույլ է բնակեցված մինչև 1000մ բարձրություն ունեցող գոտին (բնակչության 12.7%-ը) և ամենաթույլ բնակեցվածությունն ունի 2000-2500մ բարձրություն ունեցող գոտին (2.3%), որտեղ քաղաքային բնակչությունը բացակայում է:

Բնակչության միջին խտությունը ըստ բարձրության գոտիների փոփոխվում է հետևյալ կերպ. ամենամեծ խտությունը դիտվում է 1000-1500մ բարձրության գոտում՝ 128 մարդ/քկմ, ամենանոսրը դարձյալ 2000-2500մ բարձրության գոտում է՝ 9 մարդ/քկմ: Մինչև 1000մ բարձրության գոտին ավելի խիտ է բնակեցված (118մարդ/քկմ), քան 1500-2000մ (114մարդ/քկմ) բարձրության գոտին: Տասնամյա ժամանակահատվածում բնակչության թվաքանակի փոփոխությունն ըստ բարձրության գոտիների, պայմանավորել է նաև բնակչության խտության փոփոխությունը: 1000-1500մ բարձրության գոտում բնակչությունն ավելացել է 13.360 մարդով, ինչի արդյունքում այն գերազանցել է նախատերկրաշարժյան ցուցանիշը, շարունակելով համարվել ամենախիտ բնակեցված գոտին: Մինչև 1000մ բարձրության գոտում բնակչությունն ավելացել է 11.471 մարդով, արդյունքում 1998թ. այն համարվել է համեմատաբար ավելի խիտ բնակեցված, քան 1500-2000մ բարձրության գոտին: Ինչ վերաբերում է 1500-2000մ բարձրության գոտուն, ապա այստեղ բնակչությունն աճել է ընդամենը 1663 մարդով, ինչը պայմանավորող բազմաթիվ իրողություններից առաջին հերթին պետք է նշել Սպիտակի երկրաշարժի անմիջական հետևանքները, քանի որ մարդկային կորուստները մեծ եղան հատկապես Գյումրիի քաղաքում, որը հանդիսանում էր տվյալ բարձրության գոտու բնակչության աճն ապահովող հիմնական օջախը: Հատկանշական է, որ 1988-1998թ. բարձրության բոլոր գոտիներում բնակչության թվաքանակն աճել է և միայն չորրորդ գոտում է այն նվազել, ինչը հիմնականում բացատրվում է այդ գոտու որոշ բնակավայրերից, հատկապես Ամասիայի աղբբեջանաբնակ գյուղերից բնակչության անվերադարձ միգրացիայով, ինչի արդյունքում նվազել է նաև բնակչության խտության ցուցանիշը:

Փաստորեն, տասնամյա ժամանակահատվածում Աղետի գոտու բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել բազմաթիվ ցուցանիշներում. քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցություն, բնակչության հորիզոնական և ուղղահայաց տեղաբաշխման ցուցանիշներ, բնակչության միջին խտություն և այլն: Միաժամանակ, նշված փոփոխությունների պատճառների դիտարկումը հնարավորություն է տալիս արձանագրել, որ դրանց մի մասն ուղղակիորեն պայմանավորված է 1988թ. դեկտեմբերի երկրաշարժով: Մասնավորապես, որոշ բնակավայրեր, այդ թվում՝ Գյումրին, քննարկվող ժամանակահատվածում չեն վերականգնել բնակչության նախատերկրաշարժյան թիվը: Բնական է, որ այս իրողությունն ազդել է և՛ մարզի բնակչության միջին խտության, և՛ քաղաքային բնակչության տեսակարար կշռի ցուցանիշների վրա: Միաժամանակ, բացի այս հիմնական գործոնից, կարևոր են նաև քաղաքական, տնտեսական և բազմաթիվ այլ գործոններ: Այսպես, 1988թ. աղբբեջանցիների անվերադարձ միգրացիան ազդել է ինչպես Ամասիայի շրջանի բնակչության միջին խտության, այնպես էլ 2000-2500մ բարձրության գոտու բնակչության խտության ցուցանիշների վրա: Այսինքն, բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները և փոփոխությունները դիտարկելիս հարկավոր է հաշվի առնել, որ դրանք փոխկապակցված ու փոխապայմանավորված գործոնների ամբողջական համալիր են, և դրանցից նույնիսկ մեկի փոփոխությունը կարող է ազդել ողջ համալիրի վրա:

**ОСОБЕННОСТИ РАЗМЕЩЕНИЯ НАСЕЛЕНИЯ  
ЗОНЫ БЕДСТВИЯ В 1988-1998гг.***Резюме**Н. Габриелян*

Вследствии Спитакского землетрясения 1988 года по результатам текущего учета на 1 января 1989 года в Зоне Бедствия имел место резкий спад численности населения, который, сочетаясь с влиянием социально-экономических и политических преобразований, привел к изменениям динамики численности населения, удельного веса городского и сельского населения, показателей размещения населения, которые уже наводятся в Зоне Бедствия. В частности, в некоторых населенных пунктах, в том числе в Гюмри, в рассматриваемый период не была восстановлена численность населения до землетрясения. Это повлияло и на показатели средней плотности населения Ширака и удельного веса городского населения. В то же время в 1988г безвозвратная миграция азербайджанцев Амасийского района повлияла на показатели плотности населения как Амасии, так и высотного пояса от 2000 до 2500м над уровнем моря.



Степан ЕСАЯН

## УРАРТСКИЕ БРОНЗОВЫЕ ПОЯСА ШИРАКА И ИХ НОВЫЕ ПАРАЛЛЕЛИ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Среди высокохудожественных изделий урартского прикладного искусства важное место занимают бронзовые пояса. Они, являясь прекрасными образцами урартского графического искусства, одновременно служат ценным источником для изучения урартского военного искусства, религиозных представлений, одежды, мевели, утвари и т. д. Одновременно изображения, сохранившиеся на этих поясах, дают возможность изучения художественных приемов древних мастеров, передачи тех или иных образов, характерных не только для урартского, но и всего древневосточного искусства.

Кроме урартских поясов, найденных на территории нашей республики, в настоящее время на территории Турции, в результате гравительских раскопок, найдено большое количество подовных поясов, которые через антикварные рынки попали в различные музеи мира. Эти пояса по своим орнаментальным мотивам делятся на пять групп: I - с геометрическим орнаментом, II - ячейковидные, III - охотничье-ватальные, IV - культовые, и V - со смешанными сценами, в которых встречаются мотивы различных групп.

Бронзовые пояса, найденные на территории Ширака, по принятой классификации относятся к I, II, IV группам.

К числу поясов I группы относится фрагмент пояса из Ленинакана (Сохранившаяся длина - 49 см, ширина - 9 см.) Борта фрагмента сломаны. Лицевая поверхность украшена тремя парными рельефными линиями, образующими три горизонтальные полосы, проходящие по краям и центру пояса. Обе крайние полосы украшены двурядными точечными линиями, а центральная - гладкая (рис. 1).

Кроме старых находок поясов с подовным орнаментом из Игдира,<sup>1</sup> Кармир влугра,<sup>2</sup> Харатноца<sup>3</sup> и Тигракерда<sup>4</sup> в последние годы значительное количество найдено на территории Западной Армении. К их числу относится крупный пояс, хранящийся в мюнхенском музее<sup>5</sup> (длина 114 см, ширина 10 см). Он украшен пятью парными рельефными линиями, внутреннее пространство которого заполнено точечными полосами, которые, как и на игдирском, соединены вертикальными полосами. В левой части пояса сохранилось колечко для застегивания (рис. 2).

Пять небольших фрагментов поясов с аналогичными украшениями хранятся в токийском музее Восточного искусства.<sup>6</sup> Интересной находкой является фрагмент первой части бронзового пояса из мюнхенского музея.<sup>7</sup> Его лицевая поверхность покрыта 9 полосами с точечным заполнением. В крайней первой части в рамке из таких полос с точечным заполнением друг над другом помещены изображения трех крылатых фигур, одетых в длиннополые кафтаны с остроконечными шлемами на головах. У них крупные лица с миндалевидными глазами и прямыми, несколько вздернутыми, носами. Из под шлемов ниспадают длинные волнистые волосы. Их левые руки приподняты для приветствия, а приспущенные правые держат небольшие ведерки (рис. 3).

<sup>1</sup> Б. К у ф т и н, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Вестник Музея Грузии XIII в., Тбилиси, 1944, стр. 36, рис. 26.

<sup>2</sup> Б. П и о т р о в с к и й, Ванское царство, М., 1959, рис. 43; С. Е с а я н, Ов урартских бронзовых поясах, найденных на территории Советской Армении, в св. Средняя Азия, Кавказ и Зарубежный Восток в древности, М., 1988, стр. 32.

<sup>3</sup> А. М а р т и р о с я н, Раскопки в Головино, Ер., 1956, табл. IV.

<sup>4</sup> С. Е с а я н, Ук. соч., стр. 33, табл. VII, рис. 2.

<sup>5</sup> Louis Vanden Berghe en Leon De Meyer, Urartu een vergeten cultuur uit het bergland Armenie, Cent 1982-1983, рис. 91 (далее голландский каталог).

<sup>6</sup> К. T o l a b e, А. H o r i, Т. H a v a s h i, S. M i v a s h i t a, К. I s i d a, Studies in the urartian bronze: objects from japanese collections, IV, Tokyo, 1982, pue 59,60,61,62,63 (далее японский каталог)

<sup>7</sup> Голландский каталог, рис. 92.




Рис. 1




Рис 2




Рис. 3




Рис. 4




Рис. 5




Рис. 6

Вторую группу бронзовых поясов Ширака образуют пояса с ячейковидным орнаментом.

Ячейковидные пояса Урарту по своим стиливым особенностям делятся на две группы: с ячейками ромбовидной и овальной формы. Ячейки первой группы, в свою очередь, делятся на два варианта – ромбы с округлыми или заостренными вершинами. На всех поясах ячейки сводятся в один горизонтальный ряд, причем изображения расположены как в самих ромбах и овалах, так и между верхними и нижними выступами, образованными при соединении их вершин. Однако, в отличие от аналогичных изображений на поясах других групп, изображения людей и животных, заключенные в ячейки, отличаются большей схематичностью и лишены движения и экспрессии.

К числу ячейковидных поясов Ширака относятся фрагменты пояса из Ани-Пемзы,<sup>8</sup> который по своим иконографическим особенностям относится к числу поясов с ячейками первого варианта первой группы (рис. 4). Судя по сохранившимся частям пояса, его бордюр был образован из выпуклых точек и кружочков. Центральная часть лицевой поверхности украшена ячейками ромбовидной формы, образованными парными гравированными линиями. Внутри и по обе стороны ячеек расположены фигуры различных животных, а также розетки, образованные из пяти или семи кружочков. На самом левом фрагменте имеется стилизованное изображение грифона в виде крылатого льва с рыьим хвостом и птичьей головой, на следующем фрагменте под ячейкой изображен лев с поднятой лапой, на третьем-внутри ячейки сохранились изображения головы и передней ноги лошади. В первой части внутри ячейки сохранилось изображение фигуры льва (без головы), а над ячейкой-быка, рядом, под следующей ячейкой, изображен грифон, отличающийся от грифона левой части тем, что голова у него человеческая. На правом конце пояса изображено “древо жизни”, распавшееся на три отдельные ветви, возвышающиеся одна над другой.

Второй пояс из Ширака был найден в 1904г. в селе Заким Ольтинского округа Карской области.<sup>9</sup> Он иконографически близок к поясу из Ани-Пемзы (рис. 5). Судя по сохранившемуся фрагменту бордюр его был образован точечным узором с отходящими петлевыми пальметками. В центре лицевой поверхности проходят три ячейки, образующие полукружья в верхнем и нижнем концах. В центре первого ромба помещено изображение стоящего на одном колене лучника с натянутым луком, во втором-скачущий в направлении лучника крылатый конь, в третьем-стилизованное изображение “древа жизни”, и в четвертом-скачущий лев. В левом первом (верхнем) полукружье имеется отдельное изображение головы человека, во втором - “древо жизни”, в третьем-крылатый конь, в четвертом- крылатый лев, а в пятом -отдельное изображение головы льва.

В нижнем первом левом полукружье изображен скачущий бык, во втором-“древо жизни”, в третьем- крылатый конь, в четвертом- крылатый лев. В крайней правой части пояса в небольшой рамке помещено крупное стилизованное изображение “древа жизни”.

Среди найденных в последние годы в Западной Армении поясов этой группы выделяется крупный пояс, хранящийся в музее города Адана (рис. 6).<sup>10</sup> Он украшен бордюром, образованным из чередующихся ромбов и кружочков. Лицевая его часть, заключенная в бордюр, украшена 13 ячейками. В первых 8 левых ячейках движение направлено справа налево, а в остальных - наоборот, слева направо. В первой и третьей ячейках изображены скачущие львы. В пятой и седьмой – скачущие козы. Вторая, четвертая, шестая и восьмая ячейки заполнены розетками, образованными из пяти кружочков.

На первой стороне композиция несколько меняется. В девятой ячейке изображен скачущий лев с рыьим хвостом, в одиннадцатой-крылатый человек с рыьим хвостом, в тринадцатой – скачущий лев. В десятой и двенадцатой ячейках изображены розетки,

<sup>8</sup> Б. П и о т р о в с к и й, *Ванское царство*, стр. 249.

<sup>9</sup> Там же.

<sup>10</sup> О. Т а с в у г е к, *The urartian belts the Adana Regional Museum, Ankara, 1975, pue 3 (далее каталог Аданского музея).*

образованные из семи кружочков. В конце пояса в раме изображено “древо жизни”, а к борту прикреплено колечко для застегивания пояса.

В верхних и нижних полукружьях, образованных выступами ячеек, помещены изображения, аналогичные изображениям в ячейках. Так, между верхними 1и2, 3и 4, 5 и 6, 7и 8, 9и10, 11и12 помещены розетки, а между нижними 2 и 3, 12 и 13-скачущие львы, между 4 и 5, 6 и 7-kozy, 8 и 9 львы с рыбьими хвостами, 10 и 11-грифоны с рыбьим хвостом.

Несколько небольших фрагментов аналогичных поясов хранятся в токийском музее Восточного искусства.<sup>11</sup> Один из них имеет такие же ромбовидные ячейки. Внутри ячеек видны следы сильно стертых изображений различных животных-львов и выков (рис. 7).

Второй пояс этой коллекции представлен фрагментом центральной части.<sup>12</sup> В первой ячейке помещено изображение скачущего быка, в третьей- пальметки, а во второй и четвертой- многолепестковые розетки. Во всех верхних полукружьях помещены аналогичные розетки, лишь в крайне правом- скачущий козел. В нижних во всех верхних полукружьях также помещены розетки, а в правой- скачущий лев (рис. 8).

Третий пояс представлен фрагментом крайней левой части.<sup>13</sup> Здесь сохранилось изображение половины одной ячейки, внутри которой - изображение льва. Фигура хищника передана в редко встречаемой интерпретации. Лев изображен в позе крадущегося перед прыжком на свою жертву хищника. Хвост у него приспущен, пасть полуоткрыта, одна передняя лапа слегка приподнята. В крайне левом верхнем полукружье изображен стоящий на согнутом колене лучник с натянутым луком, а в нижнем-лучник, стоящий во весь рост (рис. 9).

Второй вариант поясов с ромбовидным орнаментом представлен фрагментами левой и центральной части пояса, хранящегося в мюнхенском музее<sup>14</sup>.

В отличие от вышеописанных поясов ячеек этого не однорядные, а двурядные. Все они составлены из чередующихся небольших ромбов и кружочков. Внутреннее пространство всех верхних и нижних полукружий украшено втунами раскрывшегося цветка. Изображения на фрагменте левой части двигаются справа налево, а на фрагменте центральной части - слева направо. В верхней первой ячейке левой части пояса изображен скачущий бык, а во второй и третьей-крылатые лучники с рыбьими хвостами с натянутыми луками в руках. У первого на голове гревенчатый шлем, у второго-мягкая шапочка. В первой верхней ячейке в центральной части изображен скачущий бык, а во второй и третьей- крылатые грифоны с рыбьими хвостами и вычьими копытами. В первой и второй ячейках нижнего ряда левой части пояса изображены скачущие быки, а в третьей и четвертой- крылатые лучники с рыбьими хвостами. В первой и второй ячейках помещены скачущие быки, а в третьей-крылатый грифон с рыбьим хвостом (рис.10).

Ячейковидные пояса второй группы с ячейками овальной формы представлены двумя экземплярами. Один из них, хранящийся в токийском музее, представляет собой фрагмент центральной части сильно обломанного по бортам пояса.<sup>15</sup> Сохранившиеся ячейки имеют форму вытянутого овала. Сохранившиеся изображения животных сильно стерты. В первой слева сохранившейся ячейке видна фигура какого-то животного (по-видимому, быка) без головы,двигающегося влево направо. Во второй-двигающегося справа налево фигуры льва, а в последней - двигающегося слева направо скачущего льва (рис. 11).

Ячейки этого пояса, как и ячейки поясов 65 (I) и 67 японского каталога в части соединения линий, образующих ячейки, украшены изображениями крылатых солнечных дисков, что впервые наблюдается в искусстве гравировки Урарту. Подовный одина

<sup>11</sup> Японский каталог, рис. 65 (I).

<sup>12</sup> Там же, рис. 66.

<sup>13</sup> Там же, рис. 67.

<sup>14</sup> Голландский каталог, рис. 102.

<sup>15</sup> Японский каталог, рис. 65 (2).




Рис. 7




Рис. 8




Рис. 9





Рис. 10




Рис. 11




Рис. 12

ковый декор позволяет предполагать, что эти пояса происходят из одного региона или, скорее, являются продукцией одной мастерской. Последний фрагмент поясов этой группы хранится в аданском музее.<sup>16</sup> В сохранившейся первой и третьей ячейках этого фрагмента изображены розетки из небольших кружков, а во второй – пальметка. Верхние и нижние полукружья окружены ромбом и четырьмя розетками, а в крайнем правом верхнем и нижнем полукружьях-изображения скачущей козы (рис. 12).

Завершая обзор находок ячeyковидных поясов, считаем необходимым остановиться на золотом поясе из Зивие. Знаменитое погребение, в котором был обнаружен этот пояс, случайно открыто кладонискателями в 1947г.. Оно находится южнее озера Урмия (Иран), в 40км к востоку от города Саккыз. Активная деятельность торговцев древностями привела к тому, что вещи из этого погребения при дележе разошлись в различные музеи США, Франции, Канады, Японии, Ирана и т. д.

Согласно изданному Р. Гиршманом списку изделий этого погребения известен 341 предмет, из которых 43-из золота, 71-из серебра и 141из слоновой кости.<sup>17</sup>

Андре Ровар,тогдашний генеральный инспектор Археологической службы Ирана, в 1950г. опубликовал часть этих предметов, датировав их IX в. до н. э. Однако Р. Барнет,<sup>18</sup> а в след за ним Б. Пиотровский<sup>19</sup> датируют эти изделия VII в. до н.э. В своей работе Р. Барнет убедительно доказал, что эти изделия происходят не из клада, как понимают многие исследователи, а из гробницы или могильника. Среди изделий из Зивие отчетливо выделяются три группы различных по стилю предметов: ассирийские, местные манейские, и предметы, сочетающие скифские и дальневосточные элементы.

Большей частью золотые и серебряные изделия этого памятника относятся к “смешанному стилю”, где несомненно ассирийские, урартские, малоазийские черты сочетаются с новыми, до Зивие, неизвестными чертами стиля.<sup>20</sup> Эти вещи представляют предметы престижного искусства-украшения, оружие, символы власти царя или вождя.<sup>21</sup>

Наиболее ярким примером “смешанного стиля”, отображающим влияние Урарту, являются обломки золотого пластинчатого пояса, попавшего в разные музеи (Тегеран, музей Метрополитен в Нью-Йорке и Музей Пенсильванского Университета). Система узора поверхности совпадает с вышеописанными урартскими поясами, однако сами изображения несколько отличаются по стилю. Однако изображения ячеек здесь слишком плотные. На вышеописанном цельном поясе из Аданы с изображением древа жизни имеется 13 горизонтально расположенных ячеек, в то время как на поясе из Зивие, учитывая изломы, около 32-33, а вместо одного, принятого в урартской иконографии, шесть вертикальных рядов. Столь плотное заполнение ячеек привело к уменьшению их размеров, вследствие чего размещение фигур имеется лишь внутри ячеек в отличие от урартских, на которых изображения имеются как внутри ячеек, так и в их верхних и нижних полукружьях. К тому же сами ячейки усложнены головками львов, размещенными в углах, соединяющих ячейки друг с другом. Несколько иное чередование и фигур внутри ячеек. Вместо чередования ячеек с изображениями людей, животных и геометрического орнамента, здесь внутри ячеек первого, третьего и пятого вертикальных рядов расположены изображения козлов с подогнутыми ногами, а в ячейках второго, четвертого и шестого рядов – оленей с рогами и подогнутыми ногами, типичными для скифского искусства. Несколько иной декор завершает правый конец пояса. Если пояса из Ани-Пемзы, Закима и Аданы завершаются изображением древа жизни, то на четырех сохранившихся ветвях “древа жизни” (нижний край обломан) имеются изображения львов, стоящих на ветвях древа. На трех нижних ветвях они стоят на задних лапах, спиной друг к другу, а на верхней они горизонтально лежат, обнюхивая

<sup>16</sup> *Каталог Аданского музея, рис. 20.*

<sup>17</sup> *R. Chirsmann, A propos du Tresor de Ziviye, journal of Near Eastern Studies Vole, 32,1973, стр. 445-452.*

<sup>18</sup> *R. Vagnon, The Treasure of Ziwiye, Iraq, XVIII, стр. 111-116.*

<sup>19</sup> *Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, стр. 79.*

<sup>20</sup> *М. Дандамасев, В. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980. стр. 93.*

<sup>21</sup> *В. Луконин, Искусство Древнего Ирана, М., 1977, стр. 20.*






Рис. 13




Рис. 14




Рис. 15




Рис. 16

друг друга. Хотя подобное размещение животных на ветвях “древа жизни” не встречается в искусстве оформления урартских поясов, однако на многих урартских поясах часто в конечных рамках вместо “древа жизни” встречаются изображения львов, стоящих друг над другом (Ехегнадзор, Малишка, ереванская гравница, пояса из токийского музея и т. д.).

Таким образом, пояс из Ширака относится к группе поясов с культовыми сценами. Он представлен фрагментом левой части пояса из Ленинакана.<sup>22</sup> Длина сохранившегося фрагмента 14,5 см, ширина 12,5 см. По его верхнему краю проходит бордюр в виде витого жгута, а нижний украшен гирляндой из пальметок и плодов. В центральной части фрагмента находится изображение вепущего грифона в виде крылатого льва с головой хищной птицы. Тщательно прорисованы перья крыльев передних и задних лап и торчащий хвост. Особенно хорошо прорисована шея и грудь, где мелкими штрихами подчеркнуты мелкие пуховые перья. Четко отмечены круглый глаз и крупный изогнутый клюв. Перед грифоном находится изображение ветви дерева, увенчанного солнечным диском с вписанным в него крестом (рис. 13). Подовная трактовка увенчанного солнечным диском дерева с обращенными вверх ветвями и остроконечными плодами находят аналогии в ассирийском искусстве. Орнамент в виде витого жгута, гирлянды из пальметок и остроконечных плодов известен по изображениям на золотых ножнах акинаков Копермеского и Литого курганов.<sup>23</sup> Пальметки ленинаканского пояса имеют определенное сходство с пальметками из перистильного дворца и храма Халди в Эревуни.<sup>24</sup> Жгутовый орнамент характерен и для щитов Аргишти I и Сардури II из Кармир Блура и Русы III из Топрах Кале. Изображение грифона на поясе из Ленинакана сливается с изображениями грифонов на поясах из погребения № 40 Тлийского могильника,<sup>25</sup> музея Аданы, где они снабжены головами коней, коз и львов.<sup>26</sup>

Для приблизительной реконструкции декора Ленинаканского пояса с изображениями грифона приведем описание нескольких поясов, где их центральную часть, наряду с прочими изображениями, занимают одна или несколько чередующихся крупных фигур, которые имеют абсолютно отличные друг от друга изображения. К числу подовных поясов относится фрагмент левой части пояса из мюнхенского музея.<sup>27</sup> Здесь изображена крупная птица с раскрытыми крыльями. Небольшая голова на невысокой шее передана схематически, четко отмечен миндалевидный глаз и крупный полуоткрытый клюв (рис. 14).

На менее интересен фрагмент первой части пояса, также хранящийся в Мюнхенском музее.<sup>28</sup> Здесь изображен один из редко встречаемых в урартском изобразительном искусстве декор – изображение урартской крепости с высокими зубчатыми ваяниями, войницами и воротами (рис. 15).

Совершенно другая сцена имеется на фрагменте пояса из Лувра.<sup>29</sup> Здесь, наряду с другими изображениями, вся центральная полоса правой части покрыта крупным изображением вепущего льва, которого преследует всадник. Лев с широко раскрытой пастью, овернувшись во время бега, смотрит на охотника, который изображен сидящим на коне с копьём в правой руке. Подробно описаны детали головы, одежда всадника, снаряжение коня и т. д. Между всадником и хищником помещено изображение крыла-

<sup>22</sup> Б. П и о т р о в с к и й, *История и культура Урарту*, Ер., 1944, стр. 317; Т. Х а ч а т р я н, *Древняя культура Ширака*, Ер., 1975, стр. 19; С. Е с а я н, *Об урартских бронзовых поясах, найденных на территории Советской Армении*, стр. 35.

<sup>23</sup> Б. П и о т р о в с к и й, *Ванское царство*, стр. 251.

<sup>24</sup> К. О г а н е с я н, *Раскопки Эревуни*, Ер., 1973, стр. 46.

<sup>25</sup> Б. Т е х о в, *Об одном погребальном комплексе в ТЛИ (Юго-Осетия)*, *Советская Археология*, 1961, стр. 133.

<sup>26</sup> *Каталог Аданского музея*, рис.

<sup>27</sup> *Голландский каталог*, рис. 106.

<sup>28</sup> *Там же*, рис. 105.

<sup>29</sup> *Там же*, рис. 99.

того солнечного диска, а над крупом коня – восьмиконечная звезда (рис. 16). Как видим, рассматриваемый пояс из Ленинакана относится к числу урартских поясов с редко встречаемыми изображениями, аналогии которому несколько пополнились новыми находками из Западной Армении.

Несмотря на малочисленность, коллекция поясов Ширака имеет большое значение для изучения урартского прикладного и графического искусства. Эти пояса, как и пояса из Игдира, Кармир Блура, обнаруженные в начале и середине 20-го столетия, вошли во все издания по урартскому искусству и являются эталонными образцами для классификации новых находок.

## ՇԻՐԱԿԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆՁԵ ԳՈՏԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՈՐ ՁՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Ս. Եսայան \_\_\_

Ուրարտական բարձրարվեստ իրերի շարքում կարևոր տեղ են գրավում բրոնզե գոտիները: Նրանց վրա եղած գրաֆիկական պատկերները արժեքավոր աղբյուր են ուրարտական ռազմարվեստի, կրոնական պատկերացումների, զգեստի, կահույքի, սպասքի ուսումնասիրության համար:

Իրենց ոճական առանձնահատկություններով Շիրական գտնված գոտիները (Անի, Պենգա, Չաքիմ, Լենինական, Իգդիր և այլն) բաժանվում են երեք խմբի՝ երկրաչափական նախշերով, բջջավոր և պաշտամունքային սյուժեներով գոտիների: Վերջին տարիներին մեծ զոտիներ գտնվել են Արևմտյան Հայաստանի տարածքից և այսօր պահվում են Ադանայի, Սյունիսենի, Տոկիոյի, Լուվրի, Թեհրանի, Պենսիլվանիայի, Նյու-Յորքի և աշխարհի այլ թանգարաններում:

## Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԽՈՀԱՆՈՅԱՅԻՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՉ

Անտիկ ժամանակաշրջանի հարուստ խեցեղենի մեջ զգալի թիվ է կազմում խոհանոցային խեցեղենը: Չուրկ լինելով գունազարդումից և նախշազարդից, ձևերով ավելի պահպանողական խոհանոցային խեցեղենը ուսումնասիրողների կողմից հիմնականում չի արժանանում մեծ ուշադրության, սակայն, մեր կարծիքով, այն զգալի տեղեկատվություն է պարունակում ժամանակաշրջանի պաշտամունքի, տնտեսական իրավիճակի, կենցաղի, ուտեստի համալիրի՝ սննդամթերքի և կերակրատեսակների բազմազանության մասին:

Նպատակ չհետապնդելով անդրադառնալ խոհանոցային խեցեղենի ամբողջ տեսականուն, փակ և բաց ամանների տարատեսակ ձևերին և գործառական կիրառությանը, հողվածի սահմաններում կարևորում ենք շարադրել մի շարք դիտարկումներ, որոնք կատարվել են Բենիամինի անտիկ դաստակերտի 1-ին տեղամասի (մ. թ.ա. 1 - մ.թ. 1-ին դարեր) և Բենիամին-2-ի (մ.թ.ա. 7-6-րդ դարեր) պեղումների և պեղումներով հայտնաբերված նյութերի ուսումնասիրության ընթացքում:


Խոհանոցային խեցեղենը, որի մեջ ընդգրվել են նաև կենցաղում օգտագործվող կավե պիտույքները (ճրագները, շարժական օջախները, հաց թխելու հարմարանքները<sup>1</sup>) կարելի է բաժանել երկու խոշոր խմբերի.

1. սննդամթերքների պահպանման ու մշակման համար նախատեսված անոթներ,
2. եփ ու թափի համար օգտագործված, կրակի վրա գործածված ամաններ:

Եթե առաջին խմբի անոթները, բացառությամբ խոշոր կարասների, պատրաստված են դուրգով, խնամքով կոկված և փայլեցված են, ապա կրակի վրա օգտագործված, մրտոված ամանների գերակշռող մասը պատրաստված են ձեռքով, հաճախ ունեն անհամաչափ իրան և ծուռումուռ շուրթ: Ակնառու է, որ դրանք պատրաստվել են տանը, առօրյա կարիքների և անհրաժեշտության համապատասխան, հավանաբար հենց խոհանոցում զբաղված կանանց ձեռքով: Հարկ է նշել, որ կրակում եղած ամանների մեջ հանդիպում են նաև ինչպես փակ, այնպես էլ բաց ամանների գունազարդ օրինակներ: Սա կարող է պայմանավորված լինել տվյալ ամանների երկարատև օգտագործման հետևանքով գունազարդի քայքայման, որակը կորցնելու հանգամանքով, կամ հնարավոր է, որ հասարակական կամ կրոնական տոների ժամանակ որոշ ծիսական կերակրատեսակներ քիչ քանակությամբ պատրաստվել և սեղանին են մատուցվել սեղանի սպասք համարվող գունազարդ ամանեղենով:

Ինչպես ցույց են տալիս կրակի վրա գործածված բաց և փակ ամանների թվի վիճակագրական համեմատության տվյալները, դրանք համարյա հավասարաքանակ են: Ընդունված կարծիքի համաձայն՝ հիմնականում փակ ամանները՝ միջին և փոքր չափի կճուճները և պուլիկներն են հանդիսացել կերակուր եփելու կաթսաներ, իսկ բաց ամանները գերազանցապես համարվում են սեղանի սպասք: Բենիամինի 1-ին տեղամասի տասներկուամյա պեղումների ընթացքում հայտնաբերված խեցեղենի հազարավոր բեկորների մեջ չկան խուփեր: Խուփի համար ակոսածև իջվածք ունեցող շուրթով ընդամենը մեկ, ամբողջական, կարմիր գունազարդ փոքր կարասիկ, նաև նման շուրթ ունեցող մի քանի այլ անոթների բեկորներ կան, այն էլ՝ մ.թ.ա. 1-ին դարի վերջի և մ.թ. 1-ին դարի առաջին կեսի շերտից (նկ.1): Եթե սննդամթերքի պահպանման համար օգտագործված մեծ և միջին չափերի կարասների համար հիմնականում որպես խուփ են օգտագործվել տարբեր մեծության հարթ, սկավառակաձև գետաքարերը, որոնք բազմաթիվ են՝ հայտնաբերված բնակավայրի տարբեր հատվածներում մեծ կամ միջին չափերի կարասների, կամ դրանց բեկորների հետ, ապա սենյակներում՝ օջախների մոտ հայտնաբերված խեցեղենին դրանք չեն ուղեկցում:

<sup>1</sup> Փ. Тер-Мартirosов, *Керамика эллинистической Армении как исторический источник, диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Ер., 1984, стр. 95.*



Նկ. 1

Մեր կարծիքով կերակրի պատրաստման համար օգտագործված կավե կաթսաները ծածկվել են բաց ամաններով՝ թասերով և քրեղաններով, որոնց մեջ հանդիպում են նաև խողովակաձև ծորակով օրինակներ: Մրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ արտաքին կողմում կրակի ակնհայտ հետքեր ունեցող թասերի մի մասը ներսի կողմից, առանձնապես նստուկի մասում խիստ քայքայված է, ինչը կարող էր գուրոշու երկարատև ազդեցության հետևանք լինել: Որպես խուփեր թասերի օգտագործումը հաստատվում է նաև Բենիամինի անտիկ դամբարանադաշտի կարասային թաղումների ձևով, ուր թաղման կարասների բերանները, որպես կանոն, ծածկված են հակառակ դիրքով դրված թասերով կամ քրեղաններով: Նույն երևույթը դիտվում է նաև հիմնահողային և սալարկղային թաղումներին ուղեկցող խեցեղենի փոխադարձ դիրքում, ուր նույնիսկ միջին և փոքր պուլիկները ծածկված են թասով կամ ափսեով<sup>2</sup>: Բերված օրինակները փաստում են կենցաղում բաց ամանները որպես խուփ օգտագործելու բավականին հաստատուն սովորույթ, ինչը ինքնաբերաբար արտահայտվել է նաև տվյալ ժամանակաշրջանի թաղման ծեսում:

Խուփերի փոխարեն ծորակավոր և առանց ծորակի թասերի զուգահեռ օգտագործումը կարող է պայմանավորված լինել նաև կոնկրետ ճաշատեսակի պատրաստման առանձնահատկությամբ, կապված եփվելու ընթացքում գուրոշու հեռացման հետ: Բացի այս, կրակի հետքեր ունեցող, մրոտված բազմաթիվ միջին չափի և փոքր թասերի, քրեղանների, պուլիկների առկայությունը հնարավորություն է տալիս մոտավորությամբ վերականգնել կերակրատեսակների պատրաստման, հացկերույթի, որոշակի ճաշատեսակի մատուցման, սեղանի ձևավորման և այլ կենցաղային սովորույթներ: Մասնավորապես ակնառու է, որ որոշ կերակրատեսակներ պատրաստվել են համեմատաբար մեծ անոթներով, մատուցվել սեղանին և հետո միայն բաժանվել, իսկ որոշ կերակուրներ պատրաստվել են առանձին բաժիններով և նույն ամաններով էլ մատուցվել են: Հայկական խոհանոցում մինչ այժմ էլ պահպանվել են մման կերակրատեսակներ՝ օրինակ չանախը, փիթին և այլն, որոնք ավանդաբար եփվում են կավե խորը թասերով կամ պուլիկներով, առանձին բաժիններով և այդպես մատուցվում: Երևույթն այնքան խոր արմատներ ունի, որ ամանի և նրա մեջ պատրաստվող ճաշի անունները նույնացվել են:

Առանձին բաժիններով կերակուրներ կարող էին պատրաստվել նաև երեխաների, ծերերի, հիվանդների, կամ կանանց համար: Վերջիններիս նկատմամբ ընտանեկան կենցաղում կիրառվել են տարբեր արգելանքներ: Կանանց նկատմամբ տնտեսական, ընտանեկան և հասարակական կենցաղում կիրառված ծիսարգելքների «մեծ մասը վավերացվել են դեռևս միջնադարյան հայոց կանոնագրքերում և հետագայում դարեր շարունակ կիրարկվել որպես օրենքի ուժ ստացած կանոններ, որոնք պահպանվել էին տակավին 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին<sup>3</sup>»: Այս ծիսարգելքների ակունքները, ուսումնասիրողները տեսնում են նախնադարից եկող հավատալիքների համակարգում,<sup>4</sup> և, բնականաբար, անտիկ ժամանակաշրջանում դրանք ավելի ցայտուն դրսևորումներ պետք է ունենային:

Խոհանոցային խեցեղենի անբաժանելի մասն են հաց թխելու հարմարանքները՝ սաջերը, որոնք որպես խեցեղենի տեսակ, լինելով բավականին կոպիտ և ձևով միօրինակ, հանիրավի դուրս են մնում ուսումնասիրողների տեսադաշտից: Շատ դեպքերում այդ պայտածև, ցածր կողերով, մի կողմը բաց ամանները անվանվում են նաև շարժական օջախներ, ինչը, իհարկե, սխալ է:

<sup>2</sup> Լ. Ե զ ա ն յ ա ն, *Շիրակի անտիկ թաղման ձևերը, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.3, Գյումրի, 2000, էջ 50, նկ. 4:*

<sup>3</sup> Ա. Մ ա ր զ ա յ ա ն, *Կանանց վերաբերող ավանդական արգելքները հայոց մեջ, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002, էջ 11:*

<sup>4</sup> Նույնը:

Բենիամինի պեղումների ընթացքում շարժական օջախներ չեն հայտնաբերվել, սակայն կոպիտ, ձեռքով պատրաստված և մասամբ քայքայված որոշ կճուճների մեջ հայտնաբերվել են փայտածխի կտորներ և մոխիր, ինչը ցույց է տալիս, որ երկրորդական օգտագործմամբ դրանք ծառայել են կրակի պահպանման և տեղափոխման համար: Կան նաև նման կճուճների և կարասիկների՝ ներքին աստառը այրված բեկորներ, որոնք լրացնում են ընդհանուր պատկերը:

Մաջերը, որպես հացի թխման հիմնական ամաններ կարող են աղբյուր հանդիսանալ անտիկ Հայաստանում հացի մշակույթի ուսումնասիրման համար: Այս խնդրում



Նկ. 2

կարևորվում են նաև հաստատուն կրակարանների՝ օջախների և թոնիրների գուգահեռ գոյությունը՝ իրենց տարբեր ձևերով:

Բենիամինի անտիկ դաստակերտի երեք տեղամասերի պեղված կառույցներից որևէ մեկում, չնայած դրանց ժամանակագրական բավականին երկարատև ընդգրկմանը (մ.թ.ա. 5-մ.թ. 1-2-րդ դարեր), թոնիրներ չեն հայտնաբերվել, սակայն համարյա բոլոր կառույցներում, սենյակների անկյուններում կան ուղղանկյունաձև, քարաշար օջախներ: Դրանք հիմնականում ունեն միջինը 0,5մ-0,7մ լայնություն և 0,7մ-1մ երկարություն: Օջախների պատերը ցածր են, շարված առավելագույնը 2 շարք՝ փոքր և միջին մեծության քարերով: Օջախների առջև կողմը միշտ ավելի ցածր է կամ բաց, ինչը արված է ավելորդ մոխրի հեռացումը հեշտացնելու նպատակով: Չնայած օջախները տեղա-

դրված են անկյուններում, ուր որպես օջախի պատ կարող էին ծառայել կառույցի պատերը, բոլոր դեպքերում կառույցի պատին կից հավելված է օջախի պատը, որը նաև հենարան է ծառայել օջախի վրա դրված անոթների համար:

Նկարագրված օջախներից իրենց ձևով տարբերվում են միայն երկուսը: Սրանցից առաջինը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարի առաջին կեսին, ունի կիսաշրջանաձև հատակագիծ և մոտ 0,8մ բարձրությամբ պատեր (նկ.2), երկրորդը հայտնաբերվել է մ.թ.ա. 1-ին դարի երկրորդ կեսի մի կառույցի հարավային պատի կենտրոնական մասում և ունի հատակին հենված հավասարասրուն եռանկյան տեսք<sup>5</sup> (նկ.3):

Շիրակի անտիկ հուշարձաններում թոնիրների բացակայությունը (որքան մեզ հայտնի է Հողմիկում և անտիկ Շիրակավանում մույնպես թոնիրներ չեն հայտնաբերվել) հնարավոր է պայմանավորված լինի բնակլիմայական պայմաններով կամ մշակութային որոշակի ազդեցության բացակայությամբ: Նկատենք, որ նախորդող շրջանի թոնիրներ կան հայտնաբերված Արարատյան դաշտավայրի ուրարտական հուշարձաններում,<sup>6</sup> իսկ անտիկ շրջանի թոնիրներով հիմնականում հայտնի է Արտաշատը<sup>7</sup>:

Թոնիրների և օջախների խնդիրը հաց թխելու հարմարանքների դիտարկման ենթատեքստում կարևորվում է այն հանգամանքով, որ թոնիրը ժամանակի ընթացքում հայ ժողովրդի համար լինելով հիմնական կրակարան և ջերմության աղբյուր, դառնում է նաև հաց թխելու գլխավոր հարմարանք:

Հելլենիստական ժամանակաշրջանի լայն տարածում ունեցող պայտածև սաջերի ամենավաղ օրինակները մեզ հայտնի են մ.թ.ա. 7-6-րդ դարերից: Շիրակում նման

<sup>5</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը, մասն 2-րդ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի, 2000, էջ 31, նկ. 4:

<sup>6</sup> Б. П и о т р о в с к и й, Кармир Блур, 1, Ер., 1950, стр. 24, А. Мартиросян, Город Тейшеванни, Ер., 1961, стр. 114.

<sup>7</sup> Ф. Т е р – М а р т и р о с о в, Античные печи из Арташата, Вестник общественных наук, Ер., 1975, стр. 70-72.






Նկ. 3

քում բնականաբար ենթադրում է թխվող հացի ձևի փոփոխություն, որը իր հիմքում պիտի ունենա տնտեսական և մշակութային իրողություններ:

1997թ. Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախմբի կողմից Բենիամին-2 հուշարձանի պեղումների ընթացքում<sup>9</sup> մ.թ.ա. 7-6-րդ դարերի բնակավայրի կառույցում, սաջերի բազմաթիվ բեկորներից բացի հայտնաբերվեց նաև մեկ ամբողջական սաջ (նկ.4): Այն ուղղահայաց դիրքով դրված էր սենյակի անկյունում, արևմտյան պատի տակ: Սաջի հայտնաբերման տեղը և դիրքը ցույց են տալիս, որ այն մշտապես չի եղել կրակի վրա, կամ հենց օջախի կողքին: Սրանից կարելի է ենթադրել, որ այս շրջանում հացը ամեն օր չի թխվել, այլ՝ որոշակի պարբերությամբ:

Սաջը պայտածն է, սակայն ի տարբերություն հելլենիստական շրջանի երկարավուն սաջերի, ավելի կլորավուն է: Երկարությունը 55սմ է, կենտրոնական հատվածում լայնությունը հասնում է 60սմ.-ի, առջևի մասում փոքր ինչ նեղանում է: Կողերը բարձր են՝ 13սմ, գոգավոր, վերին մասում փոքր ինչ ներճկված և դեպի առաջ աստիճանաբար ցածրանում են: Չնայած սաջի խոշոր չափերին, խեցին համեմատաբար բարակ է՝ 1,4սմ: Սաջը անգործապատ չէ, կոկված, փայլեցված է միայն ներքին մակերեսը:



Նկ. 4

Շուրթը ամբողջ երկարությամբ զարդարված է մատնասեղմամբ արված թեք փոսիկներով: Սաջի ներքին մակերեսը մոտ 1250<sup>2</sup> սմ է, որը պետք է լինի թխվող հացի մոտավոր չափը:

Անտիկ շրջանում Հայաստանում օգտագործված հացի տեսականու, առավել ևս դրանց պատրաստման առանձնահատկությունների մասին մենք կարող ենք դատել միայն հայտնաբերված հացահատիկային մշակաբույսերի մնացորդների, գրավոր աղբյուրների կցկր-

տուր տեղեկությունների, հնագիտական տվյալների և ազգագրական նյութերի համակարգված համադրությամբ, ինչը առանձին, խորը ուսումնասիրության առարկա է:

Տվյալ ժամանակաշրջանի կենցաղի մասին տեղեկություններ հաղորդող ամենավաղ գրավոր աղբյուրներից Քսենոփոնը հայկական գյուղերում հույների տեղավորման և հացկերույթի դրվագներում հիշատակում է 2 տեսակի՝ գարու և ցորենի հացի


<sup>8</sup> Л. Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска, Ер., 1989, стр. 28, табл. 19, рис. 8,9.  
<sup>9</sup> Հ. Խ ա չ ա տ ռ յ ա ն, Նորահայտ հուշարձան Շիրակում, ՀՀ-ում 1993-1995 թ.թ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական մատաշրջանի զեկուցումների թեզիսներ, Եր., 1996, էջ 31:



օգտագործում<sup>10</sup>, իսկ Տիրիբազի ճամբարը գրավելու և գերի վերցված մարդկանց մասին հատվածում, ասում է, որ «նրանք հացարարներ են և մատուկակներ»<sup>11</sup>: Հացարարները ամենայն հավանականությամբ խոհարարներ պետք է լինեին, որոնց համար հաց-թուխությունը նաև մասնագիտացում էր: Բանակում տղամարդ հացարարների առկայության փաստը հետքերը է այն առումով, որ հայ իրականության մեջ խոհանոցը և ուտեստի պատրաստումը առավելապես կանանց է վերապահվել: Պետք է նկատի ունենալ նաև, որ բանակի մշտական տեղաշարժերի պայմաններում հաց թխելու միակ հարմար պիտույքը սաջը պետք է լիներ: Ճիշտ է, սաջը խեցեղենի համեմատաբար փխրուն, շուտ քայքայվող և շարքից դուրս եկող տեսակ է, սակայն ունի այն առավելությունը, որ դրա պատրաստումը հեշտ էր նաև դաշտային պայմաններում: Ամենայն հավանականությամբ, պատրաստվել է նույն հացարարների ձեռքով:

Մաջերի մեջ թխվող հացը պետք է լիներ բարակ և մեծ մակերեսով, քանի որ թխման համար անհրաժեշտ ջերմությունը ստացվում էր միայն տակից և մի փոքր էլ, կողերից: Մեր կարծիքով, Բենիամին-2-ից հայտնաբերված սաջի կողերի գոգավոր, վերևի մասում փոքր-ինչ ներճկված ձևը արված է թխվող հացի վերին մակերեսի վրա որոշակի ջերմություն ապահովելու նպատակով: Մաջով թխված այս հացերը հայոց ավանդական լավաշի կամ նրա ավելի հաստ տեսակի (Շիրակում՝ թափթափա) նախատիպն են և ձևով շատ քիչ են փոխվել:

Մ.թ.ա. 5-րդ դարից սկսած՝ սաջերը, պահպանելով պայտի ձևը, դառնում են ավելի նեղ, ուղիղ, ցածր և առանց զարդափոսերի կողերով: Խեցին ավելի հաստ է և զանգվածեղ, հաճախ հարդի հետքերով, ինչը կարող էր պարզապես պատրաստման համար ընտրված տեղի հետևանքով լինել: Հայտնաբերված բազմաթիվ բեկորների, առանձնապես հարթ հատվածների տակի կողմում դրոշմված են հարդի հետքեր: Սա խոսում է այն մասին,



Նկ. 5

որ դրանք պատրաստվել են հատակին կամ գետնին հատուկ փռված հարդի վրա և մինչև թրծվելը նույն տեղում էլ չորացվել, ինչից հետո քաց կավին կպած հարդերը չեն հեռացվել և այդպես էլ թրծել են:

Հելլենիստական շրջանի սաջերը, բացառությամբ տակի մասի, պատված են մուգ կամ քաց շագանակագույն անգորով: Նույնպիսի անգոր է օգտագործված նաև տեղում պատրաստված խոհանոցային խեցեղենի հարդարման համար:

Մ.թ.ա. 1-ին դարում Բենիամինում ի հայտ է գալիս սաջերի պատրաստման տեխնոլոգիական մի նոր հնարք, որին զուգահեռներ մեզ չհաջողվեց գտնել: Մ.թ.ա. 1-ին դարի առաջին կեսով թվագրվող մի կիսաամբողջական, հարթ մասում մոտ 3սմ հաստության սաջի (Տախտակ 1, նկ.1) ներքին մակերեսից 0,7 սմ հաստությամբ մի հատված անջատված էր, և բացված մասում հստակորեն ընթերցվում է կտորի դրոշմվածք (նկ. 5): Կտորը պարզ պարկազործ է՝ բավականին խիտ: Թելերի հաստությունը մոտ 1մմ է: Կավի վրա դիտվում են նաև թելերի մազմազակների հետքերը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դա բրդյա կամ կանեփաթել գործվածք է: Առաջին հայացքից թվում էր, որ գործվածքից վերև և ներքև խեցու շերտերը տարբեր կավերից պետք է լինեին, սակայն խեցու միջուկի ուշադիր զննությամբ տարբերություններ չբացահայտվեցին: Քանի որ սաջի կողերը բացակայում են, գործվածքի զիծը տեսանելի է հարթ, հորիզոնական մարմնի ամբողջ երկարությամբ, իսկ թե շարունակվել է այն նաև կողերի մեջ և ինչ բարձրությամբ, այս հարցը մնում է անպատասխան:


Այս գտածոյով փաստվեց, որ հելլենիստական Բենիամինում սաջերի պատրաստման համար մ.թ.ա. 1-ին դարում սկսել են օգտագործել գործվածք: Հետագա պեղումներով հայտնաբերվեցին նույն տեխնոլոգիայով պատրաստված այլ սաջերի մասեր նույնպես: Մյուս բեկորները կողեր են (տխտ.1, նկ.2-4): Դրանք հայտնաբերվել են

<sup>10</sup> Զսենովոն, Անաբասիս, Եր.. 1970, էջ 97:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 94:

մ.թ.ա. 1-ին դարի վերջի-մ.թ.1-ին դարի շերտից: Մեկը կողի ամբողջական հատված է (նկ. 6), որը լայնակի ճեղքված լինելով, ձեռքի մեջ հեշտությամբ բաժանվեց երկու մասի:

Տախտակ 1



սերի (տխտ.1, նկ.2): Առանձնացված մասերի ներքին կողմերում պարզ տեսանելի է կտորի դրոշմվածքը, որը հասնում է մինչև կողի վերին, արդեն կլորացող մասի հիմքը: Այս գործվածքը, առաջինի հետ համեմատած, խիտ չէ:

Մյուս երկու բեկորները թերի են, գործվածքի տեղից արդեն բաժանված մասերի: Առաջինից բացակայում է ներքին (տխտ.1, նկ. 3), երկրորդից՝ արտաքին շերտերը (տխտ. 1, նկ. 4): Առաջինի դրոշմվածքում հստակ երևում է, որ, հավանաբար կտորի փոքր չափերի պատճառով, դեպի սաջի շուրթը բարձրացնելու համար կտորը ձգել են, որի հետևանքով թույլ և ցանցկեն գործվածքի կանոնավոր քառակուսիները վեր են ածվել ուղղանկյունիների և շեղանկյունիների:

Ընդհանրապես սաջերը կառուցվածքով շատ թույլ և փխրուն են: Կավե այդ մեծ, երկարության ու լայնության հետ համեմատ բարակ, սպերին միակ ամրություն հաղորդողը անկյունակի դեր կատարող կողն է: Մեր կարծիքով, կտորը ամրանացանցի դեր է կատարել և ավելի ամուր է կապակցել սաջերի սալը կողերին:



Նկ. 6

Կտորված սաջերը ունեցել են մակ երկրորդային օգտագործում: Կտորված սաջերի մեծ բեկորները օգտագործվել են օջախների հարդարման համար: Դրանք հորիզոնական դիրքով դրվել են օջախների մեջ որպես հատակ, կամ ուղղահայաց դիրքով լրացրել են օջախի պատը (նկ. 6):

Ինչպես նշվեց Արտաշատի օրինակով, մ.թ.ա. 2-1-ին դարերում զուգահեռ գոյություն են ունեցել կրակարանների երկու հիմնական տեսակներ՝ օջախներ և թոնիրներ:

Պետք է նկատել, որ այս թոնիրները ի տարբերություն միջնադարյանների, վերգետնյա են և հատակի մեջ են իջած ընդամենը 5-20 սմ<sup>12</sup>: Ուշագրավ է, որ Արտաշատում հայտնաբերված թոնիրներին զուգահեռ գոյություն ունեն օջախները և սաջերը,



Նկ.7

քրդերի մոտ հացի մշակույթի ձևավորման բնագավառում:

Երբ համեմատում ենք անտիկ շրջանի թոնիրների փոքր չափերը և բերանի լայն բացվածքը, անհավանական է դրանցում մման հաց թխելու գործնական հնարավորությունը: Եթե նույնիսկ այդ թոնիրները, կրակարան լինելուց բացի, եղել են մասնաճախման հարմարանք, ապա դրանցում թխվող հացը պետք է ունենար այլ ձև և որակական հատկանիշներ:

Թոնիրներում հացի թխելը պետք է տեղի ունենար ավելի ուշ շրջանում, երբ դրանք արդեն ընդունում են ավանդական ձև: Բացի սրանից, որպես պարտադիր պայման է դառնում հացի՝ թթխմանը հունցած խմորի պատրաստումը, քանի որ անեկ (խմորը) հացը, հաճախ դեռ չեփված, պոկվում ընկնում է, իսկ եփվելուց հետո թոնրաշուրթից դժվար է պոկվում և փշրվում է: Այս դժվարությունները կան մասնաճախման թխման ընթացքում: Սաջով թխելու դեպքում մման խնդիրներ չկան, և առայսօր անեկ խմորով պատրաստվող ծխական հացը՝ նշխարքը, թխվում է նույն եղանակով: Գուցե մասնաճախման հանգամանքներով է պայմանավորված եղել թոնիրներին զուգահեռ սաջերի կիրառությունը մասնաճախման հետագայում:

Մեզ անհայտ է, թե մ.թ.ա. 7-6-րդ դարերից առաջ ինչպիսի ձև և չափեր են ունեցել Հայաստանում թխվող հացերը (միակ գյուտը Թեյշերաինիից գտնված կորեկհացի մնացորդն է):<sup>14</sup> Նկատենք, որ այս ժամանակաշրջանում պայտաձև սաջերի հետ ի հայտ են գալիս սկյուտեղներ անվանվող, թասանման, շատ լայն և ցածր կողերով, երկու կամ մի քանի խուլ, հորիզոնական կանթերով անոթներ<sup>15</sup>: Դրանց՝ Շիրակի երկրագիտական թանգարանում պահպանվող մի քանի օրինակները (Հոռոմ, Սարատակ) օգտագործվել են կրակի վրա: Հնարավոր է՝ սրանք ևս օգտագործված լինեն հաց թխելու

<sup>12</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, *նույն տեղում*:

<sup>13</sup> Ս. Արտյուხო, *Этнография питания народов стран зарубежной Азии, М., 1981, стр. 18.*

<sup>14</sup> Н. Артюнян, *земледелие и скотоводство Урарту, Ер., 1964, стр. 92, рис. 10.*

<sup>15</sup> А. Мартirosyan, *Армения в эпоху бронзы и раннего железа, Ер. 1964, табл. XXXVI (II) рис. 7.*

համար: Ինչևէ, այս անոթները որոշ ժամանակ անց որպես խեցեղենի տեսակ անհետանում են, իսկ սաջերը, կորցնելով իրենց նախկին կտրավուն ձևը, դառնալով ավելի մեղ և երկարավուն, շարունակում են գոյատևել:

Հասը նույնպես, կրկնելով անոթի ձևը, մ.թ.ա. 7- 6-րդ դարերում պետք է լիներ կտրավուն պայտածև, մ.թ.ա. 5- 1-ին դարերում՝ ձգված պայտածև: Հետագայում, երբ սկսվում է այն թխվել թոնրում, և վերանում է նրա մի կողմում ուղիղ կտրվածքի անհրաժեշտությունը, այն ստանում է օվալի՝ ավանդական լավաշի ձևը:

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ФУНКЦИОНАЛЬНОГО УПОТРЕБЛЕНИЯ АНТИЧНОЙ КУХОННОЙ КЕРАМИКИ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Хачатрян* \_\_\_

В статье рассматриваются некоторые аспекты функциональных особенностей части кухонной керамики античного периода. Наблюдения сделаны по материалам эллинистического поселения Бениамина (1в. до н.э.-1в. н.э.) и Бениамина-2 (7-6 в.в. до н. э.). Кухонная керамика нами разделена на 2 группы : сосуды для хранения и сосуды для приготовления на огне. В эту же группу включены приспособления для выпечки хлеба-подковообразные противни-саджы.

В одном из помещений поселения Бениамин-2 был обнаружен один целый садж кругловато-подковообразной формы. Садж имеет высокие вортики с вдавленным орнаментом в верхней части. В течении 5-1-ых в.в. до н.э. форма саджев несколько меняется, становясь более узкой и удлиненной. В некоторых экземплярах внутри, в средней части черепка, были обнаружены отпечатки грубой ткани, которая по всей площади подымается до верхней части вортов. Этот новый технологический прием уникален. По всей видимости ткань являлась своеобразной арматурной сеткой. Она более крепко связывала большую глиняную плиту с вертикальными вортами, тем самым способствовала усилению хрупкой конструкции саджей.

Мы не имеем данных о формах армянского хлеба этой времени, но по форме найденных саджей можно предположить, что в 7-6 в.в. до н. э. хлеб был тонким и имел округло-подковообразную форму, в последующие века эта форма становится более удлиненной. В средние века, когда основным приспособлением для выпечки хлеба становится тондыр, хлеб, сохраняя свою тонкость, принимает овальную форму, которая сохраняется до сегодняшнего дня и известна как армянский национальный хлеб -лаваш.

## Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

### ԲԵՆԻԱՍԻՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ մ.թ.ա. 1 - մ.թ. 1-2-րդ ԴԱՐԵՐԻ ԽԵՑԵՂԵՆԸ

Բենիամինի անտիկ դամբարանադաշտի նյութերի մեջ խեցեղենը մեծ թիվ չի կազմում: Դրանք հիմնականում թաղման կարասներ են և թաղումների ուղեկից տարատեսակ և տարաբնույթ անոթներ:

Թաղման համար օգտագործել են ինչպես ամբողջական, այնպես էլ կտրված և թերի կարասներ: Ելնելով մնջեցյալի չափերից, շատ հաճախ կարասներն ուսերի հատվածում կտրել են, հանգուցյալին տեղավորել, ապա բեկորները վերաշարել իրենց տեղում<sup>1</sup>: Կան նաև թաղման ժամանակ լայնակի ժապավենների բաժանված կարասներ: Վերջինները, եթե վերականգնելուց հետո չեն էլ ամբողջանում, ապա ձևի և չափերի մասին մոտավոր պատկեր տալիս են: Մանկական թաղումների համար, բացի կարասից, օգտագործել են նաև այլ կավանոթներ, որոնք մեծ մասամբ ամբողջական են:

Կարասների մեջ կրկնվող ձևեր չկան, կան ընդհանրություններ, և յուրաքանչյուր կարաս ներկայանում է որպես որոշակի ձև:

Այսպես, թիվ 9 դամբարանի կարասը դեղնավարդագույն, քիչ ավազախառն կավից է՝ վատ թրծված, արտաքուստ շփոթով պատված և փայլեցված: Իրանը քայքայված է և նստուկից մինչև իրան կարկատանի համար արված բազմաթիվ անցքեր ունի: Անոթն ուղիղ դիրքով եղել է կրակի մեջ, և կրակի լեզվակների հետքերն հասնում են մինչև իրանի փքուն հատվածը: Կարասն ունի տափակ նստուկ, աստիճանաբար լայնացող իրան, որն ամենաբարձր հատվածում բավականին լայն է, ապա սահուն անցումով նվազում է և ավարտվում նույնպես լայն բերանով: Վիզը կարճ է, շուրթը՝ ետ ճկված (բարձր՝ 50սմ, նստուկի տրամ.՝ 19սմ, իրանը՝ 46սմ, վիզը՝ 22սմ, բերանը՝ 27սմ): Նստուկը կենտրոնում ունի միջանցիկ անցք:

Թիվ 17 դամբարանի կարասն ամենաանոթակն է, պատրաստված է վատ հունցված կավից և շատ վատ է թրծված (տախտակ II, նկ. 4): Հետևանքը՝ սպիտակից կարմրավունի խառը երանգներ և ճաքճքված մակերես: Մանկական թաղման համար օգտագործված այս անոթն ամբողջական է, ունի տափակ նստուկ, կենտրոնում քիչ ուռուցիկ, համարյա երկկոնիկ իրան, կարճ վիզ, լայն բերան (բարձր՝ 27սմ, նստուկի տրամ.՝ 14, 5սմ, իրանի տրամ.՝ 26 սմ, վիզը՝ 15 սմ, բերանի տրամ.՝ 17, 5սմ): Ամանը ձեռածեփ է, անհամաչափ իրանով, նույնիսկ շուրթերն են բարձր ու ցածր, որից էլ բերանը ձվածիր տեսք է ստացել:

Թիվ 43ա թաղման կարասը դեղնավարդազուգույն, խոշորահատիկ, ավազախառն կավից է և վատ է թրծված: Այն թերի է, պահպանվել է շուրթից իրանի լայն հատվածը: Իրանը ձգված է, արդեն լայնացող հատվածից 22սմ երկարությամբ բարձրանում է նույն տրամագծով, ապա թեթև անցումով ձևավորում պարանոցը և թեթևակի ճկումով ավարտվում է լայն բերանով (պահպանված մասի բարձրությունը 50սմ է, իրանի տրամ.՝ 37սմ, վզի տրամ.՝ 25սմ, բերանի տրամ.՝ 31սմ):

Թիվ 43գ թաղման կարասն ավազախառն կավից է, ունի տափակ նստուկ, ոչ շատ փքուն իրան, կարճ վիզ, լայն բերան և բարակ, անկանոն եզրերով ետ ճկված շուրթեր: Միջին մեծության, ձեռածեփ կարասը կտրված է. (բարձր՝ 43սմ, իրանի տրամ.՝ 43սմ, նստուկից՝ 22սմ. վիզը՝ 22սմ, բերանը՝ 28սմ): Բերանը քիչ ձվածիր է, նրստուկի կենտրոնում միջանցիկ անցք ունի:

Թիվ 39 դամբարանի կարասը դեղնավուն մանրահատիկ կավից է, ունի փոքր նստուկ, փքուն իրան, կլորավուն ուսեր, որը և կարասի վերին մասին գնդաձևություն է տալիս: Վիզը կարճ է, շուրթն աստիճանաբար լայնանում է և ետ ճկվում: Կարասը եղել

<sup>1</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Դրասխանակերտի անտիկ դամբարանադաշտի կարասային թաղումները, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 22: Լ. Եգանյան, Անտիկ Շիրակի թաղման ձևերը, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի, 2000, էջ 50:

է կրակի մեջ և մինչև շուրթերը տեղ-տեղ սևացած է: Վատ թրծվելու, նաև կրակի մեջ լինելու հետևանքով իրանի վրա դեղինից կարմիր երանգների բազմազանություն է (բարձր՝ 61սմ, իրանը՝ 50սմ, վիզը՝ 18սմ, նստուկը՝ 21, 5սմ):

Թիվ 28 թաղման կարասը կոտրվել է արարողակարգի ժամանակ: Անոթը դեղնավուն ավազախառն կավից է, ձեռածեփ է, կոպիտ և անհամաչափ թրծված: Տափակ նստուկից իրան անցումը հստակ է, ուտերը՝ բարձր: Վիզը կարճ է, շուրթերը՝ հաստ և ետ ճկված, ամբողջ մակերեսը ճաքճքված է (բարձր՝ 49սմ, հիմքը՝ 13սմ, իրանը՝ 49սմ, բերանը՝ 31սմ):

Թիվ 105 թաղման կարասը բաց դեղնավուն ավազախառն կավից է, ունի տափակ նստուկ, որից դեպի իրան անցումը մեծանում է փոքր թեքությամբ, ապա միանգամից լայնանում՝ ավելի շեշտելով ուտերի լայնությունն ու բարձրությունը: Ուտերից վիզ անցումը շատ կարճ է, շուրթը՝ քիչ ետ ճկված: Բերանի բացվածքը քիչ ձվածիր է: Կարասը միջին մեծության է. (բարձր՝ 46սմ, իրանի տրամ.՝ 46սմ, բերանի տրամ.՝ 26սմ, նստուկինը՝ 15սմ):

Կարասների մեջ առանձնանում են երկուսը՝ թիվ 150 և թիվ 183: Երկուսն էլ բարձր են, ունեն սլացիկ իրան: Թիվ 150 թաղման կարասը դեղնավուն ավազախառն կավից է և ձեռածեփ: Ունի տափակ նստուկ, նստուկից իրան անցումը 16սմ բարձրությամբ, նստուկի տրամագծին հավասար, ապա իրանը փքվում է և ստանում գնդի ձև: Իրանից վիզ անցումն աննշան է: Կարասը (բարձր՝ 58սմ) տնտեսության մեջ օգտագործված է եղել. իրանի վրա ոչ միայն օրգանական մնացորդներ են՝ սև կետերի ձևով, այլ նաև վերանորոգման համար արված անցքեր: Ամանը եղել է կրակի մեջ, որի հետքերը պահպանվել են իրանից շուրթ հատվածում: Կարասի նստուկը բացակայում է և վերականգնելուց հետո էլ իրական բարձրությունը մոտավոր է (բարձր՝ մոտ 75սմ, իրանը՝ 46սմ, վիզը՝ 28սմ, բերանը՝ 30սմ):

Մյուս կարասը (թիվ 183) նույնպես ձգված իրան ունի, ևս դեղնավուն կավից է: Թաղման համար կարասի իրանը բաժանվել է լայնակի (մոտ 20սմ) ժապավենների: Թաղումը կատարվել է կարասի բեկորների նավածև շարվածքի վրա:

Թիվ 209 դամբարանի թաղման կարասը դեղնակարմրավուն, փայլեցման ընդգծված հետքերով կճուճ է (բարձր. 36սմ, իրանը՝ 30սմ, բերանը՝ 26սմ, նստուկը՝ 14, 5սմ): Նստուկը տափակ է, իրանը՝ քիչ լայնացող: Իրանից վիզ անցումը կարճ է, բերանը՝ լայն, շուրթը՝ քիչ ետ ճկված, մի կողմում ուսից շուրթ հատվածը կոտրված է: Նստուկի կենտրոնում միջանցիկ անցք ունի: Ամանը մի կողմով պառկած է եղել կրակի մեջ:


Կան նաև թաղումներ (թիվ 58, 123, 124), որտեղ օգտագործել են արդեն իսկ կոտրված կամ բեկորային կարասներ: Նշված թաղումներում օգտագործված անոթները միջին չափի (40 - 50սմ բարձրությամբ), հարթ նստուկով, փքուն իրանով, լայն բերանով և ետ ճկված շուրթով ամաններ են, որոնք, իրարից քիչ են տարբեր:

Թիվ 40 դամբարանում (տախտակ II, նկ. 6) թաղման համար օգտագործված կարասը նույնպես բեկորային է: Այս դեպքում պարզ չէ, կարասի կոտրվելը ծխակարգի, թե դեռևս հնում դամբարանը թալանելու արդյունք է (վերին շերտում դամբարանի ուղեկցող նյութերի բեկորների հետ կարասի բեկորների առկայությունը վերջինիս վկայությունն է):

Որոշ դեպքերում, առավելապես մանկական թաղումների համար, օգտագործել են փոքր, անկանթ անոթներ, որոնք դրվել են ուղղահայաց դիրքով և ի տարբերություն կարասների, նստուկին անցք չունեն:

Սալարկղը դրված է բնակավայրից պահպանված սալահատակի մեջ, իսկ կարասային թաղումը բացվել է սալահատակի տակ: Թաղումը կատարվել է մ թ. ա. 1-ին դարի երկրորդ կեսին, բնակավայրում տեղի ունեցած հրդեհից հետո այս ժամանակաշրջանով թվագրվող շինարարական երրորդ հորիզոնին վերաբերող սալահատակի տակ: Թաղման կարաս է ծառայել մի կճուճ (տախտակ II, նկ. 5), որը դրվել է ուղղահայաց դիրքով: Անոթը բաց վարդագույն է, մանրահատիկ կավից, լավ հունցված: Իրանը, բերանը, ինչպես նաև շուրթերը զգալի անհամաչափություններ ունեն: Ամանն ունի տափակ նստուկ, գնդաձև իրան, կարճ վիզ, լայն բերան և հետ ճկված շուրթեր (բարձր՝ 27սմ, նստուկը՝ 13,5սմ, բերանը՝ 24,5սմ): Մի կողմում պահպանվել են կրակի հետքեր, ինչը պառկած դիրքով կրակի մեջ լինելու արդյունք է:

Տախտակ I



Թիվ 206 մանկական թաղումը նույնպես կատարվել է կճուճի մեջ, որը փքուն իրանով, կարճ վզով, լայն բերանով և ետ ճկված շուրթով անոթ է: Անոթը նույնպես ձեռածեփ է, բերանը քիչ անկանոն շրջանի ձև ունի: Կճուճը եղել է կրակի վրա, իրանի վրա մրի հետքեր ունի, իսկ ներսում՝ օրգանական մնացորդներ: Կճուճը նախապես տնտեսության մեջ օգտագործվել է և ճաքված է (բարձր՝ 28սմ, նստուկի տրամ. 14սմ, իրանի տրամ. 30սմ, վզի տրամ. 18,5սմ, բերանը՝ 22,8սմ):

Ուղղահայաց դիրքով դրված, մանկական կարասային թաղման մեկ այլ կճուճ (թիվ 36) պատրաստված է դեղնավուն, ավազախառն կավից, ունի տափակ նստուկ, որն ամբողջությամբ քայքայված է: Իրանը թեքությամբ կտրուկ բարձրանում է դեպի

ուսերը և շատ կարճ անցումով ձևավորում վզից շուրթ հատվածը: Ամանը նախապես տնտեսության մեջ օգտագործված է եղել: Այն փոքր է. (բարձր՝ 41սմ, իրանի տրամ՝ 37սմ, նստուկի տրամ՝ 15սմ):

Բենիամինի թաղման կարասների քննությունը ցույց է տալիս, որ դրանք տեղական, խոշորահատիկ ավազախառն կավից պատրաստված ամաններ են (հիմնականում ձեռածեփ), որոնք բոլորն էլ ձգված իրանով են, թեև ունեն տարբեր չափեր և իրանից դեպի ուսեր, ապա դեպի վիզ և շուրթեր տարբեր ձևի անցումներ: Բացի այն, որ բոլոր այս կարասներն էլ նախապես տնտեսության մեջ օգտագործվել են, հիմնականում նաև վերանորոգված են եղել: Վերջինիս վկայությունն են պահպանված բազմաթիվ անցքերը: Իսկ մանկական թաղումների համար օգտագործված անոթները փոքր կճուճներ են՝ ամենօրյա օգտագործման ամաններ, հաճախ կրակի վրա լինելու հետևանքով նաև մրի հետքերով:

Բենիամինի կարասները, որ վերաբերում են մ.թ.ա. 1 – մ.թ. 1-ին դարերին, իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում և հայտնի են Արտաշատից,<sup>2</sup> Արմավիրից, Գառնիից<sup>3</sup>:

Խեցեղենի մեջ կան նաև թասեր, որոնք հինգն են: Թիվ 195 դամբարանի գտածոն (տախտակ I, նկ. 3) բաց դարչնագույն է, ձեռածեփ, ունի փոքրիկ նստուկ, ձագարած և վեր բարձրացող կողեր, որոնք շուրթի մոտ դառնում են ուղիղ և ներսից խորակոս գծով շրջագծված են: Շրթերիզը քիչ անկանոն է: Թասը փոքր է (բարձր՝ 4,5սմ, նրստուկը՝ 3,5սմ, բերանը՝ 11սմ): Թասի մեջ օրգանական մնացորդներ են, իսկ նստուկի մի անկյունում՝ կրակի հետք: Թասը հարակից նյութերով թվագրվում է մ. թ. ա. 1-ին դարով: Այսօրինակ թաս հայտնի է Արմավիրից<sup>4</sup>:

Երկրորդ թասիկը (թիվ 127) դեղնավուն կավից է, լայն, տափակ նստուկով, ցածր պատերով, որոնք շուրթի մոտ քիչ ներս են հակված: Շուրթի տակ, ներսի կողմից, խորակոս գծանախշ է արված, որն ավելի է ընդգծում շուրթի ներս հակված լինելը: Թասն ամբողջությամբ, բացի նստուկի արտաքին երեսից, կարմիր անգորբապատ է (տախտակ III, նկ. 3) և թվագրվում է մ.թ. 1–2-րդ դարերով: Թասերի նման օրինակներ հայտնի են Գառնիից<sup>5</sup>:

Թիվ 209 դամբարանից գտնված թասը կիսաձվաձև է, դեղնադարչնագույն կավից, շուրթն արտաքուստ մոտ 2,5սմ, իսկ ներսից 4–5սմ լայնությամբ անգորբապատ ժայավենով է երիզված: Շուրթն ուղիղ է, եզրերը՝ տեղ-տեղ կտրված: Թասը փոքր է. բարձր. 8սմ է, բերանը՝ 14սմ (տախտակ III, նկ.1) և ներսի կողմում՝ նստուկից դեպի շուրթը, օրգանական մնացորդների հետքեր ունի: Մի կողմը սևացած է, որը մինչև դամբարանի մեջ դրվելը պատկած դիրքով կրակի մեջ լինելու ծխակարգի արդյունք է:

Թիվ 183 դամբարանի գտածոն տրամագծով կիսված թասի մի կեսն է, որ գտնվել է ննջեցյալի գլխավերևում՝ բերանքսիվայր դիրքով: Պահպանված կես մասից պարզ է, որ թասն ունի տափակ նստուկ և ներս հակված շուրթ (տախտակ III, նկ. 2): Նույն դամբարանից գտնվել է նաև մի կիսագնդաձև թաս, որը դեղնավուն ավազախառն կավից է (բարձր. 8սմ, բերանը՝ 16սմ): Դրսից նստուկի կենտրոնում 0, 5սմ խորությամբ փոսիկ է արված (տախտակ III, նկ. 4): Շրթերից (ներսի և դրսի կողմից) անցնում է կարմիր անգորբապատ ժայավենը, որը ներսի կողմում ավելի լայն է: Շուրթը քիչ ներս է հակված, և ներսից քիչ զանգվածեղ շրթերիզն ավարտվում է ուղիղ կտրվածքով: Թասի մի կողմում՝ նստուկից մինչև շուրթը, պահպանվել են կրակի հետքեր:

Կիսագնդաձև թասերը, հանդես գալով վաղ հելլենիստական ժամանակաշրջանում, զոյատևում են մինչև մ. թ. առաջին դարեր: Բենիամինի այսօրինակ թասերի զուգահեռներ հայտնի են բազմաթիվ հուշարձաններից: Վրաստանից գտնված մմանօրինակ թասերը թվագրվում են մ. թ. ա. 3–2-րդ դարերով<sup>6</sup>: Հայաստանում նման թասեր

<sup>2</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Արտաշատ 2, Եր., 1981, էջ 95:

<sup>3</sup> Ж. Х а ч а т р я н, Гарни V, Античный некрополь, Ер., 1976, рис. 7, 8, 9:

<sup>4</sup> Г. Т и р а ц я н, Древняя культура Армении, Ер., 1988, рис. 25 -26/10:


<sup>5</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 15/2:

<sup>6</sup> Д. Х а х у т а й ш в и л и, Упелицихе II, Тбилиси, 1970, табл. XV/1.



հայտնի են Արմավիրից, Արտաշատից, Գառնիից<sup>7</sup>: Գնդաձև թասերը բնորոշ են Արմավիրի խեցեղենին, կիսագնդաձև թաս հայտնի է Արտաշատից և թվագրվում է մ. ք. ա. 1-ին դարով<sup>8</sup>: Նման մի քանի թասեր հայտնի են նաև Արտաշատի բլուրների մ. ք. ա. 2-1-ին դարերի շերտից (նույն տեղում): Նույն թասերի բազմաբնույթ նախշազարդումով, գունազարդ օրինակները<sup>9</sup> հայտնի են Բենիամինի բնակավայրի ստորին շերտից: Աղերսներ ունենալով այլ հնավայրերից գտնվածների հետ՝ Բենիամինի դամբարաններից հայտնաբերված թասերը նախշազարդ չեն, երևույթ, որ ավելի բնորոշ է մ. ք. ա. 1-ին դարին:

Տախտակ II



<sup>7</sup> Г. Т р а ц я н, Древнеармянская керамика из раскопок Армавира (опыт классификации и датировки) ИФЖ, 1974, ном. 4; նույնի, Древняя культура Армении, Ер., 1988, рис. 25 -26/7; Б. Аракелян 1982, табл. 4а:

<sup>8</sup> Շ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 99:

<sup>9</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի հելլենիստական բնակավայրը, ՀՀ 1989 - 1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 91:

Մեկ այլ սափոր գտնվել է թիվ 195 դամբարանից (տախտակ III, նկ. 5): Ի տարբերություն նախորդի, վերջինս դեղնադարչնագույն ավազախառն կավից է, ձեռածեփ, պատերը հաստ են, նստուկը՝ առավել: Սափորը տափակ նստուկ ունի, ձգված իրան, կարճ վիզ, ուղիղ, քիչ լայնացող բերան (բարձր՝ 13սմ, իրանը՝ 8,5սմ, նստուկը՝ 6,5սմ, բերանը՝ 5սմ): Շուրթն իրանին է միացել մեկ ունկով, որի հիմքերն են պահպանվել: Իրանի վրա կրակի հետք է, ինչը պատկած դիրքով կրակի մեջ լինելու հետևանք է: Շուրթի և վզի վրա ներսից ու դրսից պահպանվել են օրգանական մնացորդների հետքեր: Նման սափորները բնորոշ են հելլենիստական ժամանակաշրջանին և թվագրվում են մ.թ.ա. 1-ին դարով:

Թիվ 40 դամբարանից գտնված գավաթը դեղնավուն, մանրահատիկ կավից է և վզից մինչև նստուկը կարմիր անգորպապատ է: Այն ունի լայն, տափակ նստուկ, դեպի նստուկը տանձածև լայնացող իրան, որը հասնելով վզին, աստիճանաբար նեղանում է: Վիզը կարճ է, շատ բարակ և հետ ճկված: Իրանի մի կողմում պահպանվել է ունկի հիմքը: Գավաթն ունի 10սմ բարձր. նստուկը՝ 7սմ է, բերանը՝ 9սմ (տախտակ I, նկ. 6): Անոթը պատկած է եղել կրակի մեջ, որի հետևանքով մի կողմում նստուկից շուրթը սևացած է: Դեղնավուն մանրահատիկ կավից նման մի գավաթ հայտնի է նաև Վարդաբաղի թիվ 6 դամբարանից: Բենիամինի գավաթն իր ձևով առնչվում է մ.թ.ա. 1 - մ.թ. 1-ին դարերի անոթներին, որոնք հայտնի են Հայաստանի համաժամանակյա բազմաթիվ հուշարձաններից<sup>10</sup> և թվագրվում է մ. թ. 1-2-րդ դարերով:

Խեցեղենի մեջ առանձնանում է թիվ 183 դամբարանից գտնված սափորը: Նստուկը տափակ է, իրանը՝ զնդածև, դեպի վիզը քիչ ձգված, շուրթն իրանին է միանում մեկ աղեղնավոր ունկով, որը շուրթից բարձր դիրք ունի (բարձր. 16սմ, իրանի տրամ.՝ 10սմ, նստուկը՝ 7,2սմ, բերանը՝ 6, 5սմ): Բարձրորակ, սև անոթի (տախտակ III, նկ. 6) վզի տակից սկսվում և մինչև նստուկ են հասնում երկայնակի անկանոն փայլագծերը: Իսկ թեթև փայլեցումը հելլենիստական ավանդույթների աստիճանական նվազման հետևանք է<sup>11</sup>: Դամբարանից գտնված հարակից նյութերով անոթը թվագրվում է մ.թ.ա. 1-ին դար:

Սափորի մեկ այլ տարբերակ է թիվ 43գ դամբարանի գտածոն՝ պատրաստված բաց դեղնավուն մանրահատիկ կավից, կարմիր անգորպապատ: Անոթն ունի տափակ նստուկ, զնդածև իրան, երկար վիզ, ուղիղ շուրթ (տախտակ I, նկ. 1): Իրանը շուրթին է միանում աղեղնածև ունկով՝ շուրթից քիչ բարձր դիրքով: Սափորի վիզը և շուրթը մատնասեղմումով ուղղանկյան ձև են ստացել (բարձր՝ 8սմ, իրանը՝ 6,5սմ, նստուկը՝ 4սմ, բերանի ուղղանկյուն բացվածքը՝ 3 x 2սմ: Անոթը պատկած դիրքով եղել է կրակի մեջ, և իրանի մի մասը սևացած է, ունկի և շուրթի մասում՝ անգորը թափված: Գավաթը կարող է վերաբերել է մ.թ.1-ին դարին:

Դամբարաններից հայտնաբերված խեցեղենը, չնայած փոքր քանակին, բազմազան է ձևերի մեջ: Բաց գույնի ավազախառն կավից ձեռածեփ մի պուլիկ գտնվել է թիվ 127 դամբարանից: Մակերեսը բաց դեղնավուն է՝ տեղ-տեղ վարդագույնի երանգներով (տախտակ III, նկ.7): Վատ է հունցված և վատ է թրծված, որի արդյունքում մակերեսին ակոսավոր ճաքերն են: Պուլիկը զնդածև իրան ունի, թեթև անցումով սեղմված կարճ վիզ, տեղ-տեղ վնասված, բարակ և ետ ճկված շուրթեր: Ամանը փոքր է (բարձր՝ 10սմ, նստուկը՝ 6,5սմ, իրանը՝ 8,5սմ, բերանը՝ 6,2սմ, պատերի հաստությունը՝ 1,2սմ): Պուլիկի ձևը հիշեցնում է մ.թ.ա. 2 - մ.թ.ա. 1-ին դարերի խոհանոցային տարբեր չափերի ամանները, որոնք մեծ թվով գտնվել են Գառնիից, Արտաշատից և Արմավիրից<sup>12</sup>: Իսկ անոթի այս ձևը գալիս է վաղ հայկական ժամանակաշրջանից և փոփոխություններ չկրելով՝ շարունակվում է նաև հետագայում: Բենիամինի գտածոն թվագրվում է մ.թ. 1-ին դարով:

Ծորակավոր երկու թասեր՝ լյութերիաներ, գտնվել են թիվ 28 և թիվ 150 դամբարաններից: Մրանք բերանքսիվայր դիրքով փակել են թաղման կարասների բերանները:

<sup>10</sup> Ж. Х а ч а т р я н, *նշվ. աշխ., աղ. VIII/4; Г.Тирацян, Древняя культура Армении, Ер.,1988, рис. 45:*

<sup>11</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, *նշվ. աշխ., էջ 99:*

<sup>12</sup> Ж. Х а ч а т р я н, *նշվ. աշխ., էջ 35, աղ. XXII/1:*

<sup>13</sup> Գ. Զ ը Ն ա ը յ ա ն, *Դվինը անտիկ ժամանակաշրջանում, Եր., 1991, էջ 44:*

Առաջինը (թիվ 28 դամբարան) դեղնագորշ, տափակ ստուկով, փքուն իրանով, բարձր և ներս հակված շուրթով անոթ է՝ ուղիղ կտրված շրթերիզով: Շուրթի տակ լայնացող բերանով ծորակ ունի (երկ. 3սմ, բացվածքի տրամ. 4սմ): Լյութերիան բավականին մեծ է. բարձր՝ 15սմ, ստուկը՝ 14սմ. բերանը՝ 30սմ (տախտակ II, նկ.1): Երկրորդը (թիվ 150 դամբարան) դեղնավուն կավից, վատ թրծված, տափակ ստուկով, աստիճանաբար վեր լայնացող կողերով, ներս հակված շուրթով աման է (տախտակ II, նկ.3): Շուրթից 1սմ խորությամբ դրված է հորիզոնական կտրվածքով լայն ծորակը: Ամանը թերի է, իրանի մի մասը շուրթի հետ բացակայում են (բարձր՝ 22սմ, ստուկը՝ 14սմ, իրանը՝ 42սմ, բերանը՝ 39սմ, ծորակի երկար՝ 6սմ, տրամ. 4սմ): Այս անոթները ևս իրենց զուգահեռներն ունեն Արտաշատում, Գլինում, Կարճաղբյուրում, Մոխրաբլուրում, Ջրառատում և թվագրվում են մ.թ. 1–2-րդ դարերով<sup>13</sup>: Լյութերիաներ գտնվել են նաև Շիրակավանի դամբարաններից և թվագրվում են մ.թ. 2-3-րդ դարերով<sup>14</sup>: Բենիամինի լյութերիաները թվագրվում են մ.թ. 1-2-րդ դարերով:

Թիվ 40 դամբարանից գտնվել է գլանաձև, ձեռածեփ մի անոթ՝ քիչ սեղմված իրանով (տախտակ III, նկ. 8): Շուրթն ուղիղ կտրվածքով է՝ քիչ անհամաչափ եզրերով: Անոթն ունի 15սմ բարձրություն, ստուկը 14սմ է, բերանը՝ 13,5սմ: Այն իր զուգահեռներն ունի Բենիամինի բնակավայրի նյութերի մեջ և թվագրվում է մ.թ.ա. 1-ին - մ.թ. 1-ին դարերով:

Մի քրեղան գտնվել է Բենիամինի թիվ 105 դամբարանից (տախտակ II, նկ 2): Ամանը վատ թրծումից դարչնագույնի և շագանակագույնի խառը երանգներ է ստացել: Ձեռածեփ է, պատերը հաստ են և կոպիտ (բարձր՝ 17սմ, ստուկը՝ 15սմ, իրանը՝ 34սմ, բերանը՝ 30,5սմ): Նստուկը տափակ է, կողերն աստիճանական թեքությամբ բարձրանում են և, վերածվելով շուրթի, ներս հակվում: Շուրթի ներս հակված լինելը զգալի է նաև ներսից, որտեղ սեղմումով ակոսված է: Ամանի վրա, միայն մի կողմում, պահպանվել են կրակի հետքեր: Իրանի վրա մինչ թրծելը բարակ խազերով քսան վանդակներ են արված՝ 4x5: Քրեղանը կրկնում է ժամանակակից ձևերը, որոնք հանդիպում են բազմաթիվ հուշարձաններում: Հայտնի են Օշակահից,<sup>15</sup> Արտաշատից:<sup>16</sup> Այսօրինակ քրեղանները թվագրվում են մ.թ. 1-2-րդ դարերով: Բենիամինի գտածոն ևս վերաբերում է նույն ժամանակաշրջանին:

Բենիամինի դամբարանադաշտի խեցեղենի մեջ կան երեք փոքրիկ կավանոթներ, որոնք ունեն փոքր ստուկ, քիչ փքուն իրան և լայն բերան: Թիվ 157 սալարկղային թաղումից զանգի աջ կողմում գտնված անոթը փոքր է (բարձր՝ 4սմ, ստուկը՝ 4սմ, իրանը՝ 4,5սմ, բերանը՝ 3,7սմ), ձեռածեփ է, կոպիտ և անհամաչափ (տախտակ I, նկ. 2): Նմանատիպ մյուս երկու փոքր անոթները գտնվել են թիվ 17 կարասային թաղումից (տախտակ I, նկ. 5), նաև ավերված դամբարանից (տախտակ I, նկ.4) և մոտավորապես նույն չափերն ունեն: Երեք անոթներն էլ կարող են թվագրվել մ.թ. 1–2-րդ դարերով:


Այսպիսով, Շիրակի անտիկ դամբարանադաշտերից գտնված խեցեղենը դիտարկելիս հստակ տարբերակվում է երկու խումբ: Առաջինը կոպիտ, դեղնավուն կամ դեղնադարչնագույն անոթներն են, հիմնականում կարասներ և կճուճներ, ինչպես նաև ամենօրյա օգտագործման ձեռածեփ ամաններ: Մրանք չունեն որևէ նախազարդում, հիմնականում ավազախառն կավից են և վատ թրծված, որի արդյունքում խառը երանգավորումն է: Առաջին խումբը ներկայանում է համեմատաբար սահմանափակ ձևերով: Անոթներն ունեն հարթ ստուկ, երկարավուն, քիչ տանձաձև իրան, բարձր վիզ և ուղիղ շուրթեր: Թաղման համար ծառայած այս կարասները նույնատիպ են և իրարից տարբերվում են իրանի ու շրթերիզի լայնությամբ, ինչպես նաև բարձրությամբ: Կարասների տարբերության այսպիսի դրսևորումները բնորոշ են անդրկովկասյան խեցեղենին և կապված են հնագույն ավանդույթների հետ<sup>17</sup>: Նույնպիսի տարբերակում ունեն նաև որպես թաղման անոթ ծառայած մյուս կավանոթները, որոնք կարաս որակվելու համար փոքր են, ունեն կճուճի չափեր, սակայն անկանթ են: Չներով իրար մոտ անոթներ հանդիպում են դամբարանադաշտի ողջ տարածքում և թաղման միանման կա-

<sup>14</sup> Փ. Т е р—М а р т и р о с о в, Г. К а р а х а н я н, *Раскопки поселения и некрополя античного Шуракавана, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 27:*

րասներ հանդիպում են ինչպես վաղ, այնպես էլ ավելի ուշ թաղումներում: Իսկ Բենիամինի կարասային թաղումները վերաբերում են մ.թ.ա. 1 - մ.թ. 1-ին դարերին:

Երկրորդ խմբում այն անոթներն են, որոնք պատված են բաց գույնի անգորով: Այս խմբի անոթների կավն, ի տարբերություն մախորդների, մաքուր է, լավ հունցված: Անոթներից մի քանիսը մասնավորապես փայլեցված են: Կան մասնավորապես երանգով անոթներ, առավելապես գավաթներ կամ սափորներ, որոնք ունկով են կամ առանց ունկի: Գա-

**Տախտակ III**



0 3 6

վաթների մի մասը պատրաստված է դուրգով, մյուսները՝ ձեռածեփ են: Մեծ ու փոքր թասերը երկու տիպի են: Դեղնավուն, անգորբապատ, տափակ մատուկով և թեթոթյամբ բարձրացող ցածր կողերով և կիսագնդաձև, առանց մատուկի կամ մատուկի տակ մատնաչափ փոսիկով, որոնք ներսից ամբողջապես են կարմիր անգորբապատ, իսկ դրսից՝ միայն լայն շրթերիզը: Ինչպես Հայաստանի, այնպես էլ Շիրակի մ.թ. 1-ին դարերի խեցեղենի մեջ բավականին հստակ առանձնանում են կավանոթներ, որոնք իրենց յուրահատուկ գծերով տարբերվում են ավելի վաղ և ավելի ուշ օրինակներից:

Ինչպես ցույց է տալիս Բենիամինի դամբարանադաշտից հայտնաբերված խեցեղենի վերլուծությունը, դրանք մ.ք.ա. 1- մ.ք. 1-2-րդ դարերով թվագրվող, մեծ մասամբ տեղական շեկ կավից պատրաստված, տարաբնույթ և ամենօրյա կենցաղային -կիրառական նշանակության հասարակ անոթներ են: Այսպես կոչված՝ խոհանոցային խեցեղենն ամենատարբեր կիրառություններ կարող էր ունենալ տնտեսության մեջ: Համեմատաբար փոքր ամանները հավանաբար ծառայել են ինչպես կերակուր պատրաստելու, այնպես էլ պահելու համար, իսկ կանթավոր և անկանթ գավաթները՝ ջրի, գինու կամ կաթի համար:

Բենիամինի դամբարանադաշտի նյութերը սերտորեն առնչվում են նաև բնակավայրից հայտնաբերված նյութերին և շատ հաճախ նույնն են: Մ.ք.ա. 1 - մ.ք. 1-ին դարերում բնակավայրի կենսագործունեության ժամանակ հատակների տակ կատարված հիմնահողային քաղումների ուղեկից նյութերը և նույն ժամանակաշրջանի քաղման կարասները (նաև քաղման կարաս ծառայած մյուս անոթները) իրենց զուգահեռներն ունեն բնակավայրի նյութերում: Իսկ բնակավայրի և դամբարանադաշտի նյութերի նմանությունը արդյունք է խեցեղենի արտադրության հեղինիստական ավանդույթների շարունակման:

КЕРАМИКА БЕНИАМИНСКОГО НЕКРОПОЛЯ 1в. до н. э. – 1-2 вв. н.э.

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *Л. Еганян* \_\_\_\_\_

В сопровождающем материале античных захоронений некрополя Бениамина керамика представлена разнообразными формами. Часть предназначена и использована для карасных захоронений. Это карасы разных величин и форм. Другая часть керамики, которая более разнообразна, это сопровождающий материал, найденный в разных по форме захоронениях. В основном-это чаши, пиалы, лютерии и т. д.

Керамика, датируемая 1в до н.э.-1в н.э., выявляет отличительные черты и сходство с материалами синхронных памятников соседних стран и Армении.

## Հրաչյա ՄՄՐՅԱՆ

### ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՁԱՆՆԵՐԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հյուսիս-արևմտյան Հայաստանում և հատկապես Շիրակում, երկրագործությունը զարգացել է հնուց ի վեր: Այդ մասին է վկայում դեռևս Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ. «Դու,-ասում են,- Շարայի որկորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չունենք»<sup>1</sup>: Մակայն այս խնդրի ուսումնասիրության համար անվիտխարհնելի աղբյուր է հանդիսանում ուշ բրոնզի և երկաթի դարաշրջանների դամբարաններից ու բնակավայրերից հայտնաբերված հնագիտական նյութը:

*Մանգաղներ.* Երկրագործական գործիքների մեջ ամենատարածվածը հնձող գործիքներն են, որոնք հիմնականում կրկնելով պղնձի քարի դարյան հուշարձաններից հայտնի բաղադրովի քարե ներդիրներով մանգաղների ձևերը, կատարելագործվում են ուշ բրոնզի և երկաթի դարաշրջաններում: Հարկ է նշել, որ հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանում դեռևս կենցաղավարում էին քարե ներդիրով մանգաղները: Այդպիսիք հայտնաբերվել են Գառնիի և Դվինի ուշ բրոնզի դարյան բնակավայրերից<sup>2</sup>, Նոյեմբերյանի մ. ք. ա. 9-8-րդ դարերով թվագրվող համալիրից և այլ հնավայրերից<sup>3</sup>: Հայաստանից հայտնի մետաղյա մանգաղների ուսումնասիրությամբ զբաղվել են հնագետներ Թ. Խաչատրյանը, Հ. Մարտիրոսյանը: Նրանք այս աշխատանքային գործիքները ներկայացնում են երկու հիմնական տիպերով՝ հիմք ընդունելով մեջքի, աշխատաբերանի կառուցվածքային որոշ տարբերություններ<sup>4</sup>: Իսկ Գ. Արեշյանը, խոսելով Արթիկից հայտնաբերված բրոնզե և երկաթե մանգաղների մասին, չի խորանում նրանց տիպաբանության մեջ, այլ նշում է երկաթե մանգաղների գործածությամբ արտադրողականության բարձրացման փաստի մասին<sup>5</sup>: Արթիկի դամբարանադաշտից, Լենինականից, Քեթիկից, Անիից, Շիրակավանից և Կիրովականից հայտնաբերվել են բրոնզե և երկաթե մանգաղներ: Հնձող գործիքների մասն լայն տարածումը պայմանավորված է և՛ երկրագործության, և՛ անասնապահության զարգացմամբ:

Մեր կողմից ներկայացվող բրոնզե մանգաղները տիպաբանորեն նույնն են: Դրանց ընդհանրությունն այն է, որ բոլորի շեղերն էլ հարթ են, ունեն լայն, երբեմն էլ նեղ կտրող մաս: Մեջքի մասում շատ քիչ հաստանում և բարակում են դեպի սայրը: Կոթառի լայնացող մասում, եզրերին արված են անցքեր՝ բռնակն ամրացնելու համար: Բայց ընդհանրություններից զատ՝ սրանք ունեն արտաքին նշանների որոշ տարբերություններ, որից ելնելով՝ մենք բաժանել ենք տեսակների. ա) մանգաղներ, որոնց բռնակն ամրացվող հատվածը թեք է և ունի երկու անցք՝ բռնակն ամրացնելու համար: Այդպիսիք են Արթիկի թիվ 434, 633 դամբարաններից (աղ. 1, նկ 1,3), Շիրակավանից՝ պատահականորեն (աղ. 1, նկ. 2) և Լենինականից հայտնաբերված մանգաղները, որոնք թվագրվում են մ. ք. ա. 12-11-րդ դարերով<sup>6</sup>: Արթիկի թիվ 633 դամբարանից գտնված

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 114:

<sup>2</sup> Э. Ханзадян, Гарни, выпуск 4, стр. 127, табл. 35.

<sup>3</sup> Г. Арешян, Новые археологические находки в бассейне р. Девед, Պատմաարևադարձային հանդես (հետախույժ. ՊԲՀ), 1969, էջ 172, նկ. 25:

<sup>4</sup> Т. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, Աշխատություններ Հայաստանի պատմական պեղումների և պահպանման հարցերի, հ. 5, Եր., 1959, էջ 214; А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 130-131, 133:


<sup>5</sup> Г. Арешян, Орудия труда Армянского могильника, ՊԲՀ, Եր., 1970, 3, էջ 257-258:

<sup>6</sup> Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975, стр. 206; Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզի զեդարյան բնակավայրերն ու դամբարանադաշտերը, Հայաստանի հնագիտական հուշարձաններ (հետախույժ. ՀՀՀ), 2, սրակ 2, Եր., 1969, աղ. 4, նկ. 6:

մանգաղը թերի է, չկա վերին հատվածը, որը և դժվարացնում է դրա տարբերակումը: Մանգաղը թվագրվում է մ. թ. ա. 12-11-րդ դարերով<sup>7</sup>:

բ) մանգաղներ, որոնց բռնակին ամրացվող հատվածը կտրավուն է, սայրը՝ նեղ, իսկ անցքերը՝ արված են խիստ թեքությամբ, գրեթե ուղղահայաց: Նման մանգաղներ հայտնաբերվել են Քեթիի թիվ 36 դամբարանից (աղ.1, նկ.4) և Անիից (աղ.1, նկ.5): Քեթիի մանգաղը թվագրվում է մ. թ. ա. 10-9-րդ դարերով<sup>8</sup>, իսկ Անիինը՝ մ. թ. ա. 9-8-րդ դարերով<sup>9</sup>:

## ՏԱԽՏԱԿ 1



<sup>7</sup> Թ. Խաչատրյան, *Դրեւնյա կուլտուրա...*, ժր. 206.

<sup>8</sup> Լ. Քերոսյան, *Րակոքի քանդակո՞ւն Կեթի ու Վոսքեակա, Եր., 1989, ժր. 65, տա՞ւ. 60 ժր. 7.*

<sup>9</sup> Թ. Խաչատրյան, *Նշվ. աշխ., էջ 212-213:*

Նմանատիպ մանգաղներ հայտնաբերվել են Թաքիայից<sup>10</sup>, Խաշտարակից<sup>11</sup>, Լուսաձորից<sup>12</sup>, Նոր Բայազետից<sup>13</sup> Բոլորն էլ թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով:

Վերը ներկայացված մանգաղներն իրենց զուգահեռներն ունեն Անդրկովկասի համաժամանակյա հուշարձաններում՝ Վրաստանում հայտնաբերվել են Բեշտաշեն-Սաֆար-Խարաբա թիվ 4 և թիվ 13 դամբարաններից, Ադրբեջանում՝ Գետաբեկից<sup>14</sup>:

Բացի բրոնզե մանգաղներից Հայաստանում մ.թ.ա. 1-ին հազարամյակից սկսած հանդես են գալիս երկաթե մանգաղները, որոնք ի տարբերություն բրոնզից պատրաստվածների ունեն բավական նեղ շեղք, որի մեջքի մասը հաստ էր և բարակում էր դեպի սայրը, օժտված էր պոչուկով՝ բռնակն ամրացնելու համար:

Հայտնաբերվել են Արթիկի թիվ 209 և 539 դամբարաններից և թվագրվում են մ. թ. ա. 10-9-րդ դդ.<sup>15</sup> (աղ.1, նկ 6,7): Երկաթե մանգաղներն իրենց զուգահեռներն ունեն Նոր Բայազետում, Բասարգեչարում,<sup>16</sup> Բակուրցիխեում, Մելամուհում,<sup>17</sup> Վարդանիում<sup>18</sup>:

Տ. Խաչատրյանը, հիմք ընդունելով Վ. Լևաշևայի մանգաղների ուսումնասիրության մեթոդը, Հայաստանից հայտնաբերվածները առանձնացնում է երեք հիմնական տարբերակիչ հատկանիշներով (հիմքի նկատմամբ սայրի աղեղի բարձրությունը, սայրի աղեղի զագաթի դիրքը և շեղքի առջևի և վերջին մասերում սայրի կորության թեքությունը), ցույց է տալիս դրանց զարգացումը և արտադրողականության բարձրացումը<sup>19</sup>:

Այս տեսանկյունից դիտարկելիս մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված մանգաղները աչքի են ընկնում իրենց կատարելությանը և բարձր արտադրողականությանը: Ինչ վերաբերում է երկաթե մանգաղներին, հավանաբար երկրագործության մեջ դրանց աշխատանքի արդյունավետությունը կապված էր այն բանի հետ, որ համեմատած բրոնզի հետ, երկաթն ավելի երկար էր դիմանում և հեշտ էր սրվում: Ընդհանրացնելով նշենք, որ հնձող գործիքների կատարելագործումը փաստում է տնտեսության զարգացածության մասին, որն առաջին հերթին արտահայտվում է երկրագործական գործիքների վրա կատարված փոփոխություններով:

*Երկժանիներ.* Երկրագործության մեջ կիրառված մյուս աշխատանքային գործիքը կարելի է համարել երկժանին: Չնայած մեզ հետաքրքրող տարածաշրջանից չեն հայտնաբերվել, բայց նշենք, որ Լճաշենից հայտնաբերվել են նաև մ.թ.ա. 14-13-րդ դարերով թվագրվող<sup>20</sup> եռաժանիներ: Մ.թ.ա. 12-11-րդ դարերով թվագրվող հուշարձանների համար բնորոշ են երկժանիները: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերվել են միայն բրոնզե երկժանիներ, որոնք ներկայացնում ենք երկու խմբով. ա) երկժանիներ որոնք ունեն երկար, ամբողջական միաձույլ խողովակաձև կոթառ, որը ներքևում խիստ հաստանում է՝ առաջացնելով խողովակաձև ժապավեն և տպավորություն ստեղծում, թե կոթառի վրա լրացուցիչ խողովակ է հագցված: Նմանօրինակ երկժանիներ հայտնաբերվել են Լենինականից (աղ.1, նկ.8) ու Լոռի Բերդից (աղ.1, նկ.9) և թվագրվում են մ. թ. ա. 12-11-րդ դարերով<sup>21</sup>: Հայտնաբերվել են նաև Ներքին Ադիանանից,

<sup>10</sup> Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան..., աղ. 4 նկ. 7-8:

<sup>11</sup> Ս. Եսայան, *Культура племен северо-восточной Армении*, Ер., 1976, стр. 105, табл. 85 рис. 7-10.

<sup>12</sup> Ս. Եսայան, *նշվ. աշխ.*, էջ 106-107, աղ. 90 նկ. 5:

<sup>13</sup> Թ. Խաչատրյան, *նշվ. աշխ.*, էջ 212-213:

<sup>14</sup> Թ. Բунятов, *Земледелие и скотоводство в Азербайджане в эпоху бронзы*, Баку, 1957, стр. 42.

<sup>15</sup> Թ. Խաչատրյան, *Древняя культура...*, стр. 237.

<sup>16</sup> Թ. Խաչատրյան, *նշվ. աշխ.*, էջ 215, նկ. 50 (6-7):

<sup>17</sup> Կ. Լևաշևայի, *Древняя культура племен населяющих территорию Иоро-Алазанского бассейна*, Тбилиси, 1965, стр. 121.

<sup>18</sup> Օ. Դանիելյան, *Культура раннего железа на территории Азербайджана*, Баку, 1969, табл. 2.

<sup>19</sup> Թ. Խաչատրյան, *նշվ. աշխ.*, էջ 213:

<sup>20</sup> Հ. Մարտիրոսյան, *Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր ու դամբարանադաշտեր*, ՀՀՀ, պրակ 2, Եր., 1969, աղ. 6, նկ. 3, 4:

<sup>21</sup> Ա. Մարտիրոսյան, *Армения в эпоху бронзы и раннего железа*, стр. 122.: Մ. Գևորգյան, *Լոռի Բերդի քրմի դամբարանը*, ՊԲՀ, Եր. 1986, թիվ 3, էջ 116, աղ. 3, նկ. 1:



Մուխաննաթ-Թափայից, Արջածորից<sup>22</sup>, Մինգեչաուրից<sup>23</sup>: Ս. Եսայանը ենթադրում է, որ երկժանիների այս խումբը բնորոշ է Հյուսիսային Հայաստանին<sup>24</sup>: ք) երկժանիներ, որոնց կոթառը ոչ թե գլանաձև, այլ լայնաբերան է: Սրանց կոթառների վրա արված են ցայտուն երևացող գլանիկ-թմբիկներ: Այս խումբը կազմող երկժանիներ հայտնաբերվել են Վարդաքարից (աղ.1, նկ.10), Մուսիերիից (աղ.1, նկ. 11) և Կիրովականից (աղ.1, նկ.12): Վարդաքարի գտածոն քվազրվում է մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներով, իսկ Կիրովականի և Մուսիերիի օրինակները մ.թ.ա. 11-10-րդ դարերով<sup>25</sup>: Նմանօրինակ երկժանիներ հայտնաբերվել են Մուխաննաթ-Թափայից, Թաք-Կիլիսիից, Բաղիարիից<sup>26</sup>: Ի դեպ, Կ. Պիցխելաուրին ևս գտնում է, որ դրանք ներմուծված են Հայաստանի հյուսիսային շրջաններից<sup>27</sup>:

Երկժանիների կիրառման ոլորտի հետ կապված՝ կան տարբեր կարծիքներ: Այսպես, Մորգանը բրոնզե երկժանիները կապում է կենդանու պաշտամունքի հետ<sup>28</sup>: Կուշնարյովան գտնում է, որ Անդրկովկասից հայտնաբերված բրոնզե երկժանիների մեծ մասը զենքեր են<sup>29</sup>: Հ. Մնացականյանը դրանք դիտարկում է որպես իշխանության խորհրդանիշներ<sup>30</sup>: Մինգեչաուրի հետազոտողները, Բ. Պիտոբովսկին երկժանիները ներկայացնում են որպես աշխատանքային գործիք<sup>31</sup>: Ջաֆարզադեն, հենվելով Գոբուստանի մի քանի ժայռապատկերների վրա, ուր հեծյալի ձևերում կա երկժանի, գտնում է, որ դրանք հեծյալ որսորդների զենք են եղել<sup>32</sup>: Իսկ Մակկայը գտնում է, որ դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ իշխանության խորհրդանիշներ<sup>33</sup>: Ս. Եսայանը Հայաստանից հայտնաբերված նմանօրինակ երկժանիները համարում է իշխանության խորհրդանիշ<sup>34</sup>: Հ. Մարտիրոսյանը Վարդաքարի և Կիրովականի օրինակները դիտարկում է որպես զենքեր<sup>35</sup>: Վարդաքարի երկժանու հետ կապված՝ այլ է Թ. Խաչատրյանի կարծիքը: Նա գտնում է, որ այն օգտագործվել է տնտեսության մեջ<sup>36</sup>:

Նկատի ունենալով վերը նշված կարծիքները, նշենք, որ մեր կողմից ներկայացված երկժանիները չէին կարող օգտագործվել ոչ որպես աշխատանքային գործիք, ոչ էլ որպես զենք: Դրանց ժանիները շատ բարակ են ու երկար, բայց միաժամանակ սրածայր: Վերջին հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ դրանցով միգուցե կրակի վրա շուռումուռ են սվել զոհաբերված կենդանուն: Բայց ամենահավանականը Ս. Խաչատրյանի հայտնած կարծիքն է, նա գտնում է, որ դրանք օգտագործ-

<sup>22</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, Գամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931, նկ. 134; Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան դամբարաններն ..., աղ. 6, նկ. 5: К. Кушнарєва, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, 27, М., 1957, рис. 7.

<sup>23</sup> С. К а з и е в, Археологические раскопки в Мингечауре, МКА, I, Баку, 1949, рис. 17.

<sup>24</sup> С. Е с а я н, Символы власти родо-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа, Բանբեր ԵՊՀ, Եր., 1989, 2, էջ 26:

<sup>25</sup> Т. Х а ч а т р я н, Комплекс бронзовых предметов из селения Вардакар, Стիլիկազիր, ՀՍՍՌ Ա, Եր., 1961, 3, էջ 69: А. Мартросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 144-145.

<sup>26</sup> К. К у ш н а р е в а, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, 27, М., 1957, стр. 10; С. Есаян, Символы власти родо-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа, твл. 3, рис. 4; Б. Куфтин, Археологические раскопки в Триаleti, табл. 30; К. Пицхелаури, Древняя культура племен ..., табл. 15.

<sup>27</sup> К. П и ц х е л а у р и, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, стр. 49.

<sup>28</sup> J-de M o r g a n, Mission Scientifique au Caucase, Paris, 1989, p. 134.

<sup>29</sup> К. К у ш н а р е в а, նշվ. աշխ., էջ 168:

<sup>30</sup> А. М н а ц а к а н я н, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956г, СА, вып. 2, 1957, стр. 101.

<sup>31</sup> Т. А с л а н о в, Р. В а и д о в, Г. И о н е, Древний Мингечаур, Баку, 1973, стр. 286, табл. 46.

<sup>32</sup> И. Д ж а ф а р з а д е, Гобустан (Наскальные изображения), Баку, 1973, стр. 286, табл. 46 рис. на камнях 9, 38-40.

<sup>33</sup> J. M a k k a y, Metal Forks as simvols of power and religion. Acta arckeologica academiae Schentiarum Hungaricae 35 (3-4), Budapest 1983, p. 313-344.

<sup>34</sup> С. Е с а я н, Символы власти родо-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа, стр. 25-29.

<sup>35</sup> А. М а р т и р о с я н, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 144.

<sup>36</sup> Т. Х а ч а т р я н, Комплекс бронзовых предметов из селения Вардакар, стр. 66.

վել են տնտեսության մեջ կամ կապված են եղել երկրագործական սովորույթների հետ<sup>37</sup>: Վ. Բդոյանը գտնում է, որ այս եղանները ծառայել են հավաքչության այնպիսի բնագավառներին, որպիսիք էին վառելանյութերի, ցանկապատերի, ծածկերի և այլ նպատակների ծառայող փշաբույսերի հավաքումը: Դրանք ըստ նրա հավաքչության տնտեսության մեջ իրենց ունեցած դերի շնորհիվ վերածվել էին խորհրդանիշի: Կամ դրանցով կայուն աշան էին անում և շրջում առաջին 3-4 երեսները: Այս եղանակով հավաքում էին գերանդու քաղած խտոր և երբեմն փոցխում խտուի մնացորդը<sup>38</sup>:

Այնուամենայնիվ չի ժխտվում նաև երկժանու տնտեսական գործիք լինելու հանգամանքը: Հենց նրա սրբազան կամ իշխանական պատկանելիք հանդիսանալու տեսակետը բխում է այդ առարկայի տնտեսական նշանակությունից: Երկժանին կամ եռաժանին իր գուտ երկրագործական նշանակությամբ տվյալ ժամանակահատվածում առարկայացել է որպես սրբազան-քրմական կամ իշխանական խորհրդանշան: Վերջինիս գաղափարը ծագել է նրանից, որ երկժանին կամ եռաժանին գյուղատնտեսական -երկրագործական աշխատանքների ժամանակ հավանաբար եղել է գերդաստանի հոր՝ նահապետի ձեռքին: Իսկ վերջինս, հանդիսանալով գերդաստանի իրավական տերը, իր ձեռքին է կենտրոնացրել իշխանությունը թե հասարակական կյանքում և թե սոցիալ-տնտեսական հարաբերությունների ու հոգևոր պաշտամունքային ծիսակատարությունների մեջ: Այնուհետև տոհմային նահապետի նշանակությունը անցնում է ցեղային իշխանի տիրապետության գաղափարի մեջ և դա այլաբանորեն կարող էր արտահայտվել երկժանիով, որպես նախկինի ձեռքին եղած սովորական գործիք, որի գյուղատնտեսական նշանակությունը արդեն խորհրդանշանի ձևով շարունակում է պահպանել իր դերը, իբրև ցեղապետի կամ իշխանի իրավագործության խորհրդանշանային արտահայտություն: Տնտեսության մեջ երկժանիների օգտագործումը փաստում է երկրագործական գործիքների զարգացած ձևերի առկայությունը:

Այսպիսով, գործիքների կատարելագործումը փաստում է տնտեսության զարգացածության մասին, որն առաջին հերթին արտահայտվում է երկրագործական գործիքների վրա կատարված փոփոխություններով:

## ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКИЕ ОРУДИЯ ТРУДА ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА СЕВЕРО–ЗАПАДНОЙ АРМЕНИИ

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Г. Мсрян \_\_\_\_\_

Из памятников и могильников эпохи поздней бронзы и железа северо-западной Армении раскопано много земледельческих орудий труда, в том числе серпы и вилы. Делается попытка типологии и классификации этих орудий. Отмечается усовершенствование серпов и вил, которое документирует развитие хозяйства, а это, в первую очередь, отразилось на изменениях, происходящих с земледельческими орудиями труда.

<sup>37</sup> Թ. Խ ա չ ա ր յ ա ն, *Комплекс бронзовых предметов из селения Вардакар*, стр. 66.

<sup>38</sup> Վ. Բ ղ ո յ ա ն, *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Եր., 1972, էջ 51-53, 361:

## Արմեն ՆԱԽՇՔԱՐՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ԾԱՂԿԱՇՐՋԱՅԱԶԵՎ ԶԱՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ծաղկաշրթայածև զարդապատկերները Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի ամենատարածված բուսական զարդամոտիվներն են: Վերջինները հանդես են գալիս բավականին հարուստ բազմազանությամբ: Ծաղկաշրթանների պարզ խմբավորման պարագայում սրանք կարելի է բաժանել երկու առանձին խմբերի.

պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաններ,  
օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշրթաններ:

Պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթանները տարբերակման պարագայում բաժանվում են երեք առանձին մասերի.

- 1) առանձին ծաղկաշրթաններ,
- 2) միմյանց զուգահեռ երկու ծաղկաշրթաններ,
- 3) միմյանց զուգահեռ երեք ծաղկաշրթաններ:

Օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշրթանների հորինվածքային լուծումների հիմքում ընկած են պարզ գծային պատկերագրությամբ առանձին և միմյանց զուգահեռ ծաղկաշրթանները, որոնք տարբերակման պարագայում կարելի է բաժանել չորս առանձին մասերի.

1) Բույսերի վեգետացիոն պրոցեսը մասամբ արտահայտող ծաղկաշրթաններ, որոնց դեպի վար և վեր ուղղված կորերի անկյունները զարդարված են էլիպսաձև, եռանկյունաձև, զույգ կիսաշրջանաձև պտղաման զարդամոտիվներով:

2) Միմյանց զուգահեռ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաններ, որոնք ներգծված են կիսաշրջանաձև, թեք գծերից կազմված, շրջանաձև, ինչպես նաև կորերից կազմված և վերջիններիս հետ համադրվող գծերից կազմված ճյուղաման զարդապատկերներով:

3) Միմյանց զուգահեռ և գծերի հետ հատվող ծաղկաշրթաններ, որոնք ներգծված են կիսաշրջանաձև զարդապատկերներով:

4) Ծաղկաշրթաններ, որոնց կորերի անկյունները զարդարված են դեպի ներքև ուղղված ճյուղ կամ ծիլ հիշեցնող զարդամոտիվներով:

Պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթայածև զարդապատկերները, ինչպես ուսումնասիրողների կողմից վաղուց նկատվել է<sup>1</sup>, գուտ ֆորմալ տեսանկյունից բաղդատվում են առաջավորասիական հնագույն (հիմնականում բրոնզի դարաշրջանի՝ փոքրասիական, հյուսիսմիջագետքյան, իրանական) գունազարդ խեցեղենի համանման զարդապատկերների հետ<sup>2</sup>:

Հայկական լեռնաշխարհի երկրորդ հազարամյակի համաժամանակյա գունազարդ խեցեղենը ևս զերծ չի մնացել պարզ գծային ծաղկաշրթայածև զարդապատկերների պատկերագրությունից: Ք.ծ.ա. երկրորդ հազարամյակում Հյուսիսային Միջագետքում և վերջինիս հարող Հայկական լեռնաշխարհի տարածքներում լայն տարածում է ստանում խաբուրյան տիպի գունազարդ խեցեղենը<sup>3</sup>, որի հյուսիսային սահմանը հասնում էր մինչև Վանա լիճ: Խաբուրյան տիպի գունազարդ խեցեղենին ևս հատուկ էր պարզ գծային ծաղկաշրթայածև զարդապատկերների պատկերագրությունը:

<sup>1</sup> Г. Т и р а ц я н, О расписной керамике древней Армении, Ер., 1965, 3, стр. 272

<sup>2</sup> H e l m u t h N e u b a u r, Die Griechische Schwarzmeerkolonization in der sowjetischen Geschesschreibung, Saeculum, 11, 1960, H. 1-2, 132-155.

<sup>3</sup> H r o u d a B a r t h e l, Die bemarte Keramik des zweiten Jahrtausends in Nordmesopotamien und Nordsyrien, Belrin, 1957.

Ուսումնասիրողների կարծիքով Օստենի կողմից պեղված<sup>4</sup> Ք.ծ.ա. IX-VIII դդ. թվագրվող և «ուրարտական» համարվող գունազարդ խեցեղենը վերաբերվում է վերոհիշյալ խաբուրյան տիպին և հանդիսանում է վերջինիս ավելի ուշ տարատեսակներից մեկը՝ գոյատևելով մինչև Ք.ծ.ա. I հազարամյակի սկզբները<sup>5</sup>: Օստենի կողմից պեղված Վանի գունազարդ խեցեղենին ևս հատուկ են պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշղթայաձև զարդապատկերները: Վերջիններս թե՛ պատկերագրությամբ (առանձին և միմյանց զուգահեռ, ինչպես նաև՝ օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշղթաներ) և թե՛ անոթների ձևերով՝ բաց անոթներ (թասեր, փիալաներ), ինչպես նաև զարդամոտիվների տեղադրման առանձնահատկություններով (պսակներից ներքև պատկերագրում<sup>6</sup>), զարմանալիորեն աղերսվում են Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի համանման զարդապատկերների հետ:

Հարկ ենք համարում անդրադառնալ այսպես կոչված «ուրարտական» գունազարդ խեցեղենի խնդրին: Այս հարցում ուսումնասիրողների տեսակետները էապես տարբերվում են միմյանցից: Առաջին տեսակետի համաձայն, վերջինիս գոյության ժամանակաշրջանը համընկնում է ուրարտական պետության կազմավորման սկզբնական փուլի հետ, որից հետո այն փոխարինվում է կարմիր փայլեցված խեցեղենով<sup>7</sup>: Երկրորդ տեսակետի համաձայն, ուրարտական գունազարդ խեցեղենը գոյություն է ունեցել նաև ուշ ուրարտական ժամանակաշրջանում: Սույն տեսակետի համար հիմնական կովան է Կարմիր-բլուրից հայտնաբերված գունազարդ ասկը<sup>8</sup>, ասկայն, ըստ երևույթի վերջինս փռյուզիական ներմուծման արդյունք է<sup>9</sup>:

Երրորդ տեսակետի համաձայն, որն էականորեն տարբերվում է վերոհիշյալ երկու տեսակետներից, Վանի՝ Օստենի կողմից հայտնաբերված, «ուրարտական» կոչվող գունազարդ խեցեղենը պատկանում է խաբուրյան տիպի գունազարդ խեցեղենին, որի ակունքները զալիս են Ք.ծ.ա. II հազարամյակից և ծագումով ոչ թե ուրարտական է, այլ պատկանում է տեղական էթնիկ տարրերին<sup>10</sup>: Այս տեսակետը փաստվում է Հասանլուում գոյություն ունեցող շերտագրական իրավիճակով, որտեղ առավել վաղ ավանդույթներ ունեցող խաբուրյան տիպի գունազարդ խեցեղենի կողքին հայտնաբերվել է ուրարտական կարմիր փայլեցված խեցեղեն<sup>11</sup>, ինչպես նաև Բաստամում տիրող իրավիճակով, որտեղ ուրարտական ամրոցում առկա է կարմիր փայլեցված խեցեղեն, իսկ նրա կողքին՝ տեղական մշակույթին պատկանող դամբարանում հայտնաբերվել է գունազարդ խեցեղեն<sup>12</sup>: Սույն տեսակետի համաձայն, ուրարտական նվաճումների հետևանքով տեղական գունազարդ խեցեղենը մղվում է երկրորդ պլան՝ իր տեղը զիջելով ուրարտական կարմիր փայլեցված խեցեղենին: Ուրարտուի անկումից հետո այստեղ գերիշխող դերն անցնում է տեղական էթնիկական տարրերին<sup>13</sup>, որոնք վաղուց գունազարդ խեցեղենի կրողներն էին հանդիսանում: Այս տարրերի տեղաշարժերի հետևանքով գունազարդ խեցեղենը լայն տարածում է ստանում Հայկական լեռնաշխարհի մնացյալ տարածքներում: Այս տեսակետի օգտին, որպես համոզիչ կովան, բերվում է Ալթին-Թեփեի,<sup>14</sup> Թեյշեբայի,<sup>15</sup> Թոփրաք-կալեի<sup>16</sup> վաղ հայկական շերտերից հայտ-

<sup>4</sup> H. Von der Osten, *Die urartaische Töpferei aus Van und die MÖglichkeit ihrer Einordnung in die anatolische Keramik, Orientalia, N.S. b. 21, fasc. 3, 1952, p.p.307-328.*

<sup>5</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, *О происхождении расписной керамики античной Армении, ИФЖ, 1, 1974, стр 55.*

<sup>6</sup> H. Von der Osten, նշվ. աշխ.:

<sup>7</sup> Б. Пиотровский, *Ванское царство, М., 1959, стр 108.*

<sup>8</sup> Г. Тирацян, նշվ. աշխ, էջ 271-272:

<sup>9</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, նշվ. աշխ., էջ 65:

<sup>10</sup> Նույնը:

<sup>11</sup> R. Dyson, *Digging in Iran: Hassnalu 1959: Expedition the Bulletin of the University Museum of the univ. of Pennsylvania. Spring, 1959, vol.1.3:*

<sup>12</sup> Stephan Kroll, *Die Keramik aus Bastam. Archeologische Mitteilungen aus Iran, Berlin, 1970, 31-34.*

<sup>13</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, նշվ. աշխ., էջ 71:

<sup>14</sup> K. Emre, *The Urartian pottery from Altintepe, "Belleten" gitt. 33, Sayi131, Angara, p.p. 134-135.*

<sup>15</sup> А. Мартиросян, *Город Тейшеванни, Ер., 1961, стр. 137-150:*

նաբերված գունագարդ խեցեղեն գտածոների առկայությունը: Ըստ երևույթին, ահա այս ճանապարհով է, որ Վանի գունագարդ խեցեղենն իր ազդեցությունն է գործել Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենի վրա և վերջինիս ավանդույթները շարունակվել են նաև հելլենիստական ժամանակաշրջանում:

Ծաղկաշրթայան գարդապատկերների խմբավորման պարագայում հիմք են ընդունվել դրանց պատկերագրական առանձնահատկությունները: Ելնելով սույն սկզբունքից՝ վերոհիշյալ գարդամոտիվները քննության կենթարկվեն ըստ ձևակազմական, ժամանակագրական, հորինվածքային և գունագարդման առանձնահատկությունների:

*Պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաներ.*

ա) Առանձին ծաղկաշրթաներ (տխտ. I, նկ. 1) ձևակազմական առումով հատուկ են թե՛ բաց և թե՛ փակ տիպի անոթների տարբեր մասերի հարդարանքին: Բաց տիպի անոթներում (կիսագնդաձև թասեր) վերոհիշյալ գարդապատկերները զարդարում են վերջիններիս ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հատվածները: Սույն կիսագնդաձև թասերը հայտնաբերվել են Արտաշատի առաջին բլուրի<sup>16</sup> և Հողմիկի<sup>18</sup> Բ.ժ.ա. II-I դարերի շերտերից: Ելնելով կիսագնդաձև թասերի ձևաբանական (նուրբ պատերի առկայություն), ինչպես նաև գունագարդման առանձնահատկություններից (անփութորեն արված գարդապատկերներ, թեթև փայլեցված մակերեսի առկայություն, չներկված աստառի վրա գունագարդում), որոնք հատուկ են Բ.ժ.ա. I դարի գունագարդ խեցեղենին<sup>19</sup>, սույն կիսագնդաձև թասերը կարելի է թվագրել Բ.ժ.ա. I դարով: Փակ տիպի անոթը (սափոր), որտեղ ծաղկաշրթայան գարդապատկերը հարդարում է վերջինիս ուսամասի հատվածը, հայտնաբերվել է Արտաշատի VII բլրի II-III շերտերից:<sup>20</sup> Ելնելով սրա հետ հայտնաբերված և Բ.ժ.ա. I դարով թվագրվող թռչնազարդ պնակի<sup>21</sup> ժամանակագրությունից, ինչպես նաև սափորի բեկորի գունագարդման առանձնահատկություններից (անփութորեն արված գարդապատկերներ և անփայլ մակերեսի առկայություն)՝ սա պետք է թվագրել Բ.ժ.ա. I դարով: Հորինվածքային առումով վերոհիշյալ գարդապատկերներն ուղեկցվում են գտնեման և օժանդակ գարդամոտիվներով հարստացված ծաղկաշրթայան գարդապատկերներով: Ինչ վերաբերում է սույն գարդապատկերների գունագարդման առանձնահատկություններին, ապա վերջիններս ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունագարդում: Միագույն օրինակների դեպքում կարմիր դաշտը գունագարդվել է սևով, իսկ դեղնականաչավունը՝ մուգ կարմիրով: Բազմագույն օրինակի պարագայում դարչնագույն դաշտը գունագարդվել է սևով և կարմիրով, առանձին ծաղկաշրթան գունագարդվել է սևով: Ինչպես վերը նկատեցինք, պարզ գծային պատկերագրությամբ առանձին ծաղկաշրթաներ հանդիպում են Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունագարդ խեցեղենում: Զննվող ծաղկաշրթայան գարդապատկերները թե՛ պատկերագրությամբ և թե՛ անոթների ձևերով զարմանալիորեն բաղդատվում են Վանի ավելի վաղ օրինակների հետ: Ըստ երևույթին, արդեն վերը հիշատակված ճանապարհով Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունագարդ խեցեղենի ավանդույթները շարունակվել են Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենում:

բ) *Միմյանց զուգահեռ երկու ծաղկաշրթաներ (տխտ. I, նկ. 2)* ձևակազմական առումով հատուկ են թե՛ փակ (փոքր կնուճ և ծորակավոր ջրաման) և թե՛ բաց տիպի (կիսագնդաձև թասեր, փիալա) անոթների տարբեր մասերի հարդարանքին: Բեկորային օ-

<sup>16</sup> *Lehmann – Haupt, Materialien zur altern Geschichte Armeniens and Mesopotamiens, Göttingen, 1907, Taf. 8, 1:*

<sup>17</sup> *Կոլեկցիոն համարը՝ 73/284:*

<sup>18</sup> *Հ. Հ ա կ ո բյ ա ն, Ռ. Վ ա ռ դ ա ն յ ա ն, Վ. Ջ հ ն ջ ի ը ջ յ ա ն, Մխուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նայանական արդյունքները (Ջրածոր և Հողմիկ գյուղերի տարածքում), հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987թթ. պեղումների արդյունքները), Եր., 1992, էջ 113-114, աղ. CXXII:*

<sup>19</sup> *Մ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Արտաշատ II, Եր., 1981, էջ 100:*

<sup>20</sup> *Կոլեկցիոն համարը՝ 73-26:*

<sup>21</sup> *Ա. Ն ա ի շ ք ա ը յ ա ն, Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենի կենդանական գարդապատկերները, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 32, ՏԽՏ. 1, նկ. 11:*

րինակի վերին մասի բացակայության պատճառով վերջինիս ձևը չի վերականգնվում<sup>22</sup>: Փակ տիպի անոթներում՝ փոքր կճուճ<sup>23</sup>, ծորակավոր ջրաման<sup>24</sup>, վերոհիշյալ զարդապատկերները զարդարում են վերջիններիս ուսամասի հատվածները: Ծորակավոր ջրամանը թվագրված է Ք.ծ.ա. I դարով: Փոքր կճուճը հայտնաբերվել է Արտաշատի VII բլրի Ք.ծ.ա. II-I դդ. թվագրվող շերտից: Ելնելով վերջինիս գունագարդման առանձնահատկություններից (անփութորեն արված զարդապատկերներ, անփայլ մակերես), որը հատուկ է Արտաշատի Ք.ծ.ա. I դարի<sup>25</sup> գունագարդ խեցեղենին սույն կճուճը կարելի է թվագրել կոնկրետ Ք.ծ.ա. I դարով: Բաց տիպի անոթներում (կիսագնդաձև թասեր, փիալա) միմյանց զուգահեռ երկուական ծաղկաշղթաները հատուկ են սրանց թե՛ արտաքին և թե՛ ներքին հատվածների հարդարանքին: Կիսագնդաձև թասերի ներքին մասերում պատկերագրված ծաղկաշղթաները<sup>26</sup> արդարել են վերջիններիս պատկերից ներքև ընկած հատվածները, իսկ արտաքին հատվածում պատկերված ծաղկաշղթաները զարդարել են սրանց միջին մասից մինչև ստորին սահմանն ընկած տարածքները<sup>27</sup>: Վերոհիշյալ կիսագնդաձև թասերն իրենց ձևաբանական հատկություններով (ներճկված պատկեր և նուրբ պատեր) բաղդատվում են Ք.ծ.ա. I դարի կիսագնդաձև թասերի հետ, այս թվագրման օգտին են խոսում սույն թասերի անփութորեն արված զարդապատկերները: Փիալայի պարագայում ծաղկաշղթաները զարդարում են վերջինիս արտաքին հատվածի ելուստավոր մասից մինչև ներճկված վիզն ընկած տարածքները: Սույն փիալան հայտնաբերվել է Հողմիկի Ք.ծ.ա. II-I թվագրվող շերտից<sup>28</sup>: Այս անոթի ձևաբանական և գունագարդման առանձնահատկությունների համեմատություններից ելնելով՝ այն ևս կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դարով<sup>29</sup>: Բեկորային օրինակի ձևը չի վերականգնվում<sup>30</sup>, սակայն ուղեկցվող գունագարդ ավսեի օգնությամբ, որը թվագրված է Ք.ծ.ա. I դարով, այն ևս կարելի է թվագրել նույն դարով: Հորինվածքային առումով վերոհիշյալ զարդապատկերներն ուղեկցվում են գոտեման, շղթայաձև ալիքաձև, կետագարդ ալիքաձև գծերից կազմված, օժանդակ զարդանոտիվներով հարթստացված ծաղկաշղթայաձև, ինչպես նաև կենդանական (այծ) զարդանոտիվներով: Ինչ վերաբերում է վերոհիշյալ զարդապատկերների գունագարդմանը, ապա վերջիններս ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունագարդում: Միագույն օրինակների դեպքում վարդագույն և դարչնագույն դաշտերը գունագարդվել են կարմիրով, կարմիր դաշտը սևով: Բազմագույն օրինակների պարագայում դարչնագույն դաշտը գունագարդվել է կարմիրով և սևով (վերինը՝ սև, ստորինը՝ կարմիր), մարմնագույն դաշտի դեպքում՝ կարմիրով և շագանակագույնով: Չուգահեռ ծաղկաշղթայաձև զարդապատկերների գունագարդման առանձնահատկություններից մեկն այն է, որ թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակների դեպքում գունագարդվել են սև և կարմիր կայուն երանգներով: Հանդիպում է բազմագույն օրինակ, որտեղ ծաղկաշղթաներից մեկը սև է, իսկ մյուսը՝ կարմիր: Ըստ երևույթին, բազմագույն օրինակի պարագայում միավորվել են ծաղկաշղթաների այս երկու տարածված գույները: Չնայած հանդիպում են շերտման նաև գունագարդման ընդունված կանոններից, որտեղ ծաղկաշղթաները գունագարդվել են շագանակագույնով: Ինչպես վերը նկատեցինք, զուգահեռ ծաղկաշղթայաձև զարդապատկերներ հանդիպում են Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունագարդ խեցեղենում և, ըստ երևույթին, հելլենիստական ժամանակաշրջանում առկա նմանատիպ զարդապատկերները վերը բերված օրինակների ավանդույթների շարունակությունն են:

<sup>22</sup> Կոլեկցիոն համարը՝ 5/73:

<sup>23</sup> Կոլեկցիոն համարը՝ 75/73:

<sup>24</sup> Կոլեկցիոն համարը՝ 79/73:

<sup>25</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 100:

<sup>26</sup> Հ. Հ ա կ ո ր յ ա ն, Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն, Վ. Զ ի ն ջ ի ր ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 113-114, աղ. CXXII:

<sup>27</sup> Կոլեկցիոն համարը՝ 74/73:

<sup>28</sup> Հ. Հ ա կ ո ր յ ա ն, Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն, Վ. Զ ի ն ջ ի ր ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 113-114, աղ. CXXII:

<sup>29</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 82:

<sup>30</sup> Կոլեկցիոն համարը՝ 74/73:

զ) Միմյանց գուգահեռ երեք ծաղկաշրթաներ (տխտ. I, նկ. 3-4). ձևակազմական առումով հատուկ են թե՛ փակ (ծորակավոր ջրաման, կարաս, տափաշիշ) և թե՛ բաց տիպի (միայն կիսագնդաձև թասեր) տարբեր մասերի հարդարանքին: Փակ տիպի անոթներում սույն ծաղկաշրթաները զարդարում են վերջիններիս ուսամասի (կարաս<sup>31</sup>, ծորակավոր ջրաման<sup>32</sup>) և եզրամասի (տափաշիշ<sup>33</sup>) հատվածները: Ծորակավոր ջրամանը բաղդատվում է Զ.ծ.ա. I դարով թվագրված Արտաշատի VIII բլրից հայտնաբերված ջրամանի հետ<sup>34</sup>, իսկ ինչ վերաբերում է Դվինից հայտնաբերված կարասի և տափաշի ժամանակագրությանը, ապա սրանք թվագրված են Զ.ծ.ա. II-I դարերով, բայց իրենց գունագարդման առանձնահատկություններով<sup>35</sup> (թեթև փայլեցված մակերես, անփութորեն արված զարդապատկերներ) բաղդատվում են Զ.ծ.ա. I դարով թվագրված գունագարդ խեցեղենի հետ<sup>36</sup>: Հավանաբար սրանք ևս պատկանում են Զ.ծ.ա. I դարի գունագարդ խեցեղենին: Բաց տիպի անոթներում (կիսագնդաձև թասեր) սույն ծաղկաշրթաները զարդարում են վերջիններիս արտաքին հատվածները<sup>37</sup>: Մի դեպքում զարդարում են սրանց պասկներից ներքև ընկած հատվածները<sup>38</sup>, իսկ մյուս դեպքում՝ միջին հատվածից ստորին հատվածն ընկած սահմանները: Ներճկված պսակով վերոհիշյալ կիսագնդաձև թասերը թվագրված են Զ.ծ.ա. I դարով<sup>39</sup>: Սույն ժամանակագրությանը չեն հակասում նաև կիսագնդաձև թասերի գունագարդման առանձնահատկությունները (թեթև փայլեցված մակերես, անփութորեն արված զարդապատկերներ): Բեկորային օրինակի ձևը չի վերականգնվում<sup>40</sup>, բայց ուղեկցվող ներճկված պսակով Զ.ծ.ա. I դարով թվագրված<sup>41</sup> գունագարդ կիսագնդաձև թասի օգնությամբ կարելի է թվագրել Զ.ծ.ա. I դարով: Հորինվածքային առումով սույն ծաղկաշրթաներն ուղեկցվում են գտնման շրթայան, ցանցաձև, կետագարդ ալիքաձև, զիզգազաձև զարդապատկերներով: Միմյանց գուգահեռ երեք ծաղկաշրթաներն ունեցել են միայն բազմագույն գունագարդում: Դարչնագույն դաշտը գունագարդվել է կարմիրով, շագանակագույնով, սպիտակով (ծաղկաշրթաները սպիտակ), կարմիրով և շագանակագույնով (ծաղկաշրթաները շագանակագույն), իսկ մյուս դեպքում դարչնագույն դաշտը գունագարդվել է սև և կարմիր երանգներով (ծաղկաշրթաները երկգույն՝ եզրագծերը սև, մեջը՝ կարմիր): Դեղնավուն դաշտը գունագարդվել է դարչնագույնով և շագանակագույնով (ծաղկաշրթաները շագանակագույն), նարնջագույն դաշտը գունագարդվել է սևով և կարմիրով (ծաղկաշրթաները՝ սև): Միմյանց գուգահեռ երեք ծաղկաշրթաների գունագարդման առանձնահատկությունն այն է, որ վերջիններս հիմնականում գունագարդվել են շագանակագույն և սև երանգներով: Սև գույնով պատկերված ծաղկաշրթաների մի մասի գունագարդման առանձնահատկությունն այն է, որ սրանց՝ միմյանց գուգահեռ կորերը ներգծվել են կարմիր երանգով: Ընդունված կանոններից միակ շեղումը սպիտակ երանգով գունագարդված ծաղկաշրթան է: Ավելացնենք, որ միմյանց գուգահեռ երեքական ծաղկաշրթաները, զոնե մեզ հայտնի նյութերում, չունեն իրենց համաժամանակյա գուգահեռները Հայաստանի հարակից երկրների և հելլենիստական աշխարհի գունագարդ խեցեղենի այլ նյութերում: Մակայն, պատկերագրական առումով իրենց հիմքում ունենալով պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաները, որոնց երկու օրինակները, ինչպես վերը նկատեցինք, առկա են Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունագարդ խեցեղենում, հարստացվել են ևս մեկ ծաղկաշրթայով և ստեղծել յուրօրինակ պարզ հորինվածքային լուծում:

<sup>31</sup> Գ. Զնչաբյան, Դվինը անտիկ դարաշրջանում, Եր., 1974, էջ 41, ՏԽՏ XV, 13:

<sup>32</sup> А. Мартыросян, Археологические Ер., 1974, рис. 23.

<sup>33</sup> Գ. Զնչաբյան, նշվ. աշխ., էջ 41, տխտ. XV, 13:

<sup>34</sup> Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, 10, տխտ. I, նկ. 1:

<sup>35</sup> Գ. Զնչաբյան, նշվ. աշխ., էջ 41, տխտ. XV, 13:

<sup>36</sup> Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 82-100:

<sup>37</sup> Կոլեկցիոն համարը՝ 24/73, 44/73, 55/73:

<sup>38</sup> Կոլեկցիոն համարը՝ 44/73:

<sup>39</sup> Կոլեկցիոն համարը՝ 55/73:

<sup>40</sup> Կոլեկցիոն համարը՝ 24/73:

<sup>41</sup> Կոլեկցիոն համարը՝ 25/73:

*Օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշրթաներ*։ Սրանց հորինվածքային լուծումների հիմքում ընկած են պարզ գծային պատկերագրությամբ առանձին և միմյանց զուգահեռ ծաղկաշրթաները, որոնք իրենց ծագումով լինելով ավանդական զարդամոտիվներ՝ հելլենիստական ժամանակաշրջանում, հավանաբար ելնելով տվյալ ժամանակաշրջանի ճաշակից և պատկերացումներից, հարստացվել են օժանդակ զարդամոտիվներով:

ա) *Բույսերի վեզետացիոն պրոցեսը մասամբ արտահայտող ծաղկաշրթայածև զարդապատկերներ*։ Սրանք ձևակազմական առումով հատուկ են զուտ բաց անոթների (կիսագնդաձև թասեր, ափսե, պնակ) տարբեր մասերի հարդարանքին: Կիսագնդաձև թասերին բնորոշ են դեպի վար ուղղված կորերով և վերջիններիս անկյուններում էլիպսաձև (պտղանման) զարդամոտիվներով (տխտ.1 նկ.5.) զարդարված ծաղկաշրթաները: Դրանցից մեկի միմյանց զուգահեռ կորերը ներգծված են նաև թեք գծերից կազմված զարդամոտիվներով<sup>42</sup>: Սույն ծաղկաշրթաները հատուկ են կիսագնդաձև թասերի արտաքին մասերի հարդարանքին և զարդարում են վերջիններիս միջին հատվածները: Վերոհիշյալ կիսագնդաձև թասերն իրենց ձևաբանական (ներճկված պսակով թաս<sup>43</sup>, բարակ պատերով թասեր)<sup>44</sup> և գունազարդման (թեթև փայլեցված մակերես) առանձնահատկություններով բաղդատվում են Ք.ժ.ա. I դարով թվագրված գունազարդ խեցեղենի հետ: Սրանք հայտնաբերվել են Արտաշատի I բլուրի II-I դդ. թվագրվող շերտից, սակայն վերոհիշյալ համեմատությունների հաշվառմամբ, կարող են թվագրվել կոնկրետ Ք.ժ.ա. I դարով: Ծաղկաշրթաների մի մասի պատկերագրությունը հետևյալն է. դեպի վար ուղղված, միմյանց զուգահեռ կամ առանձին ծաղկաշրթաների կորերի անկյունները զարդարված են կիսաշրջանաձև (տխտ.1, նկ.7), եռանկյունաձև (տխտ.1, նկ.8), էլիպսաձև (տխտ.1, նկ.9)՝ պտղանման զարդամոտիվներով, ինչպես նաև սրանց՝ միմյանց զուգահեռ կորերը ներգծված են էլիպսաձև (հատիկ կամ սերմ հիշեցնող) զարդամոտիվներով (տխտ.1, նկ.7,8): Այս ծաղկաշրթաները ձևակազմական առումով հատուկ են բաց անոթների (թասեր) պսակների հարդարանքին<sup>45</sup>: Վերոհիշյալ ներճկված թասերը ձևաբանական և գունազարդման առանձնահատկություններով (սնկմաշերտի արված զարդեր, թեթև փայլեցված մակերես) առնչվում են Արտաշատի դամբարաններից հայտնաբերված՝ Ք.ժ.ա. I դարով թվագրված մնանատիպ թասերի հետ<sup>46</sup>: Հորինվածքային առումով սույն զարդամոտիվներն ուղեկցվում են գոտեման, ալիքաձև, պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթայածև զարդապատկերներով: Սույն զարդամոտիվներն ունեցել են բազմազույն գունազարդում: Դարչնազույն դաշտի պարագայում գունազարդվել են սևով և կարմիրով: Սևով գունազարդվել են ծաղկաշրթաների կորերը, իսկ կարմիրով՝ օժանդակ զարդամոտիվները և կորերի միջև ընկած տարածքները: Դեղնականաչավուն դաշտը գունազարդվել է կարմիրով և մուգ շագանակագույնով: Կորերի եզրագծերը՝ մուգ շագանակագույնով, նրանց միջև ընկած տարածքները՝ կարմիրով: Դեղին դաշտը գունազարդվել է կարմիրով և շագանակագույնով: Ծաղկաշրթաների կորերը գունազարդվել են շագանակագույնով, իսկ օժանդակ զարդապատկերները՝ կարմիրով: Սույն ծաղկաշրթաների գունազարդման առանձնահատկությունն այն է, որ սրանք ունեցել են երկզույն գունազարդում: Ինչպես պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաները, այնպես էլ վերջիններիս հետ պատկերագրական առնչություններ ունեցող այս ծաղկաշրթաների կորերն ունեցել են կայուն պատկերագրական գունավորում: Այն է՝ գունազարդվել են սև և շագանակագույն երանգներով, իսկ օժանդակ զարդամոտիվները բոլոր դեպքերում գունազարդվել են կայուն հանդիսացող կարմիր գույնով: Քննվող ծաղկաշրթաների առանձնահատկություններից մեկն այն է, որ սրանք հանդիպում են Արտաշատի I բլուրում, և բոլոր նյութերը թվագրված են Ք.ժ.ա. I դարով:

<sup>42</sup> Կոլեկցիոն համարը՝ 72/177:

<sup>43</sup> Կոլեկցիոն համարը՝ 72/284:

<sup>44</sup> Կոլեկցիոն համարը՝ 72/272:

<sup>45</sup> Կոլեկցիոն համարը՝ 72/229, 73/44:

<sup>46</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 81:



բ) *Միսյանց զուգահեռ օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշրթաներ*: Սրանք պատկերագրության բնույթով աղերսվում են վերը նկարագրված ծաղկաշրթանների հետ: Սույն ծաղկաշրթանները ներգծված են կիսաշրջաններով (տխտ. 1, նկ. 10.), փոքր շրջաններով (տխտ. 1, նկ. 11.), թեք զծերով (տխտ. 1, նկ. 18.): Հանդիպում են ծաղկաշրթաներ, որոնց կորերը հարդարվել են փոքր կորերից կազմված (տխտ. 1, նկ. 12.), ինչպես նաև կարճ կորերի և թեք զծերի համադրումից ստացված ճյուղանման զարդապատկերներով (տխտ. 1, նկ. 13.): Չևակազմական առումով սույն ծաղկաշրթանները հատուկ են միայն բաց անոթների (կիսազնդած քասեր, փիալաներ) տարբեր մասերի հարդարանքին: Կիսազնդած քասերի պարագայում սույն զարդամոտիվները զարդարում են վերջիններիս ներքին հատվածները (պսակից ներքև, ինչպես նաև միջին հատվածից մինչև կենտրոնական մասն ընկնող սահմանները<sup>47</sup>): Կիսազնդած քասերից մեկը թվագրված է Ք.ծ.ա. I դարի II կեսով<sup>48</sup>, իսկ մյուսը հայտնաբերվել է Արտաշատի I բլուրի Ք.ծ.ա. II-I դդ. շերտերից, սակայն իր ձևաբանական (նուրբ պատերի առկայություն) և գունագարդման (անփայլ մակերես, անփութորեն արված զարդապատկերներ) առանձնահատկություններով բաղդատվում է Ք.ծ.ա. I դարով թվագրված կիսազնդած քասերի հետ<sup>49</sup>: Փիալաների դեպքում այս ծաղկաշրթանները զարդարում են վերջիններիս ներքին հատվածները և հատուկ են սրանց պսակներից ներքև ընկած տարածքներին: Քննվող փիալաներից<sup>50</sup> երեքը հայտնաբերվել են Արտաշատի դամբարանադաշտից և թվագրված են Ք.ծ.ա. I դարով, իսկ երկուսը՝ Արմավիրից, որոնք իրենց ձևաբանական (նուրբ պատերի առկայություն) և գունագարդման (անփայլ մակերես) առանձնահատկություններով աղերսվում են Ք.ծ.ա. I դարով թվագրված վերոհիշյալ փիալաների հետ: Սրանք ևս, ըստ երևույթին, պատկանում են Ք.ծ.ա. I դարի գունագարդ խեցեղենին: Վերոհիշյալ զարդապատկերները հորինվածքային առումով չեն ուղեկցվում որևէ այլ զարդապատկերով: Այս ծաղկաշրթաններն ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունագարդում: Միագույն օրինակների պարագայում կարմիր դաշտը գունագարդվել է սևով, իսկ դարչնագույն դաշտը՝ կարմիրով և շագանակագույնով, (ծաղկաշրթան՝ շագանակագույնով) ինչպես նաև կարմիրով և սևով (ծաղկաշրթանների կորերը գունագարդվել են սևով, օժանդակ զարդամոտիվները՝ կարմիրով): Սույն ծաղկաշրթանների գունագարդման առանձնահատկությունն այն է, որ ծաղկաշրթանների և օժանդակ զարդամոտիվների համար կայուն սև, կարմիր և շագանակագույն երանգները կայուն դեր են ունեցել:

գ) *Կիսաշրջաններով ներգծված առանձին և միսյանց զուգահեռ ծաղկաշրթաներ* (տխտ. 1, նկ. 14, 15). Դիշտ է մնանատիպ զարդամոտիվներով հարդարված գունագարդ խեցեղենը սակավ է (ներկայացված է ընդամենը երկու օրինակով), սակայն աղբյուրագիտական առումով՝ շատ արժեքավոր, քանզի նույն պատկերագրությամբ ծաղկաշրթաններ առկա են Վանի ուրարտական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենում<sup>51</sup>: Այստեղ մնանատիպ ծաղկաշրթան հարդարում է բաց անոթի (փիալա) ներքին մասը (պսակից ներքև ընկած մասը): Չևակազմական առումով սույն ծաղկաշրթանները հատուկ են թե՛ բաց անոթի (կիսազնդած քաս)<sup>52</sup> և թե՛ փակ անոթի (փոքր կճուճ) տարբեր մասերի հարդարանքին: Կիսազնդած քասի պարագայում ծաղկաշրթան հարդարում է վերջինիս արտաքին մասը (պսակից ներքև ընկած տարածք): Իր ձևաբանական (նուրբ պատեր) և գունագարդման (անփութորեն արված զարդապատկերներ, թեթև փայլեցված մակերես) առանձնահատկություններով բաղդատվում է Ք.ծ.ա. I դարով թվա-

<sup>47</sup> Կոլեկցիոն համարը՝ 8/73:

<sup>48</sup> Հ. Խ ա չ ա տ ը յ ա ն, *Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը, II մաս, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. 3, Գյումրի, 200, էջ 33-35:*

<sup>49</sup> Բ. Խ ա չ ա տ ը յ ա ն, *նշվ. աշխ., էջ 100:*

<sup>50</sup> Բ. Խ ա չ ա տ ը յ ա ն, *նույնը, Գ. Тирация, Культура древней Армении, Ер., 1988, рис. 36.*

<sup>51</sup> H. Von der Osten,

<sup>52</sup> Б. А р а к е л я н, *О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ИФЖ, 4, рис. 3.*

գրված նմանատիպ գունագարդ խեցեղենի հետ<sup>53</sup> և, ըստ երևույթին, կարող է թվագրվել նույն դարով: Փոքր կճուճի<sup>54</sup> պարագայում սույն զարդամոտիվը հարդարում է վերջինիս փորամասի հատվածը: Այս կճուճը հայտնաբերվել է Արտաշատի I բլուրի Ք.ժ.ա. II-I դդ. թվագրվող շերտից, սակայն իր գունագարդման առանձնահատկություններով (անփութորեն արված զարդեր, անփայլ մակերես) կարելի է թվագրվել կոնկրետ Ք. ժ.ա. I դարով: Հորինվածքային առումով այս ծաղկաշրթաններն ուղեկցվում են գոտենման, ալիքաձև, թեք գծերից կազմված, ճառագայթաձև և պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթանաձև զարդապատկերներով: Ինչ վերաբերվում է ծաղկաշրթանների գունագարդմանը, ապա վերջիններս ներկայացված են թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակներով: Միագույն օրինակի դեպքում դեղին ֆոնը գունագարդվել է կարմիրով, իսկ բազմագույն օրինակի պարագայում դարչնագույն դաշտը՝ կարմիրով և սևով: Սևով գունագարդվել են ծաղկաշրթանների կորերը, իսկ կարմիրով՝ կիսաշրջանները: Այս, ինչպես նաև վերը բերված ծաղկաշրթանների գունագարդման առանձնահատկությունն այն է, որ վերջիններիս գունագարդման պարագայում պահպանվել են ծաղկաշրթանների գունավորման ընդունված կանոնները, այն է՝ ծաղկաշրթանները գունագարդվել են կայուն համդիսացող սև և կարմիր երանգներով: Ուշագրավն այն է, որ Վանի նմանատիպ ծաղկաշրթան ունեցել է երկգույն գունագարդում (ծաղկաշրթանի եզրագծերը դարչնագույն գունավորում են ունեցել, իսկ օժանդակ կիսաշրջանաձև զարդապատկերները՝ կարմիր երանգավորում): Տարբեր ժամանակաշրջանների պատկանող երկգույն գունավորում ունեցող այս ծաղկաշրթանները գունագարդման եղանակով ևս բաղդատվում են միմյանց հետ: Այսպիսով, կարող ենք փաստել, որ կիսաշրջաններով ներգծված ծաղկաշրթանները, լինելով ավանդական և իրենց նախատիպերն ունենալով Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունագարդ խեցեղենում, թե՛ իրենց ձևերով (բաց անոթներ), թե՛ պատկերագրության տեղով (պսակից ներքև պատկերագրություն) և թե՛ գունագարդման (երկգույն գունագարդում) առանձնահատկություններով շարունակվել են նաև հելլենիստական ժամանակաշրջանում:

դ) *Ծաղկաշրթաններ, որոնց կորերի անկյունները զարդարված են դեպի ներքև ուղղված ճյուղ կամ ծիլ հիշեցնող զարդամոտիվներով*: Սրանք ձևակազմական առումով հատուկ են թե՛ բաց (ափսե, փիսյա) և թե՛ փակ (կճուճ) անոթների տարբեր մասերի հարդարանքին: Բաց տիպի անոթներում սույն զարդամոտիվները (ափսե, փիսյա) հատուկ են վերջիններիս ներքին մասերի հարդարանքին (պսակից ներքև ընկած տարածք): Ուշագրավն այն է, որ այս երկու անոթների ծաղկաշրթանները ներգծված են ցանցաձև զարդամոտիվներով<sup>55</sup> (տխտ. 1, նկ. 16), ինչպես նաև ուղեկցվում են գոտենման և վերջիններիս հետ հատվող ալիքաձև զարդամոտիվներով ներգծված պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաններով: Փաստորեն, այստեղ, չնայած որոշ տարբերություններին, առկա է նաև հորինվածքային լուծումների որոշակի ընդհանրություն: Ափսեն հայտնաբերվել է Արտաշատի VIII բլրից և թվագրված է Ք.ժ.ա. I դարով<sup>56</sup>, իսկ ինչ վերաբերվում է գունագարդ փիսյային, ապա վերջինս իր ձևաբանական (նուրբ պատերի առկայություն) և գունագարդման (թեթև փայլեցված մակերես, անփութորեն արված զարդապատկերներ) առանձնահատկություններով բաղդատվում է Ք.ժ.ա. I դարի գունագարդ խեցեղենի նմանատիպ օրինակների հետ<sup>57</sup>: Այս փիսյան և, ըստ երևույթին, պետք է թվագրել նույն դարով: Փակ տիպի անոթում (կճուճ), (տխտ. 1, նկ. 17) սույն ծաղկաշրթան հարդարում է վերջինիս ուսամասի հատվածը<sup>58</sup>: Վերջինս իր ձևաբանական և գունագարդման առանձնահատկություններով (անփութորեն արված զարդապատկերներ, թեթև փայլեցված մակերես) հորինվածքային առումով վերոհիշյալ զարդապատկերներն ուղեկցվում են գոտենման, ալիքաձև, էլիպսաձև և կորերից կազմված զարդապատկերներով:

<sup>53</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 82:

<sup>54</sup> Կողեկցիոն համարը՝ 9/73:


<sup>55</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Կ ա ն ե գ յ ա ն, նշվ. աշխ., աղ. 1, նկ.; Б. Аракелян, Арташат I, Ер., 1981, рис. 5.

<sup>56</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Կ ա ն ե գ յ ա ն, նշվ. աշխ., աղ. 1, նկ. 14:

<sup>57</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 56:

<sup>58</sup> А. Мартыросян, Аргиптихинили, Ер., 1974, рис. 23, в:

Տախտակ 1



Սույն ծաղկաշրթաններն ունեցել են թե՛ միագույն և թե՛ բազմագույն գունազարդում: Միագույն օրինակի դեպքում դարչնագույն ֆոնը գունազարդվել է կարմիրով: Բազմագույն օրինակների պարագայում նույն դաշտը գունազարդվել է կարմիրով և շագանակագույնով (ծաղկաշրթան շագանակագույն), կարմիրով և սևով (ծաղկաշրթան սև): Այսպիսով, կարող ենք փաստել, որ սույն ծաղկաշրթանները հելլենիստական աշխարհի մյուս երկրների՝ մեզ հայտնի գունազարդ խեցեղենում չունեն իրենց գուգահեռները, բայց իրենց հորինվածքային լուծումների հիմքում ունենալով ավանդական պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթանները, ըստ ժամանակի ճաշակի և պատկերացումների՝ հարստացել են այլ զարդամոտիվներով: Այս, ինչպես նաև վերը բերված ծաղկաշրթանների առանձնահատկություններից մեկն այն է, որ վերջիններս սկզբնավորվել և գոյատևել են հիմնականում Զ.ծ.ա. I դարում:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի ծաղկաշրթայած կարդասպատկերները, իրենց պատկերագրությամբ լինելով ավանդական, և հորինվածքային լուծումների հիմքում ունենալով Հայկական լեռնաշխարհում վկայված մնանատիպ պատկերագրությամբ առավել վաղ օրինակները (Կաբուրյան տիպի գունազարդ խեցեղեն և վերջինիս ավանդույթների շարունակությունը հանդիսացող Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղեն), շարունակվել են նաև քննվող ժամանակաշրջանում: Ժառանգորդություն նկատվում է նաև ծաղկաշրթայած կարդասպատկերներով հարդարված անոթների ձևերում: Վանի ուրարտական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենում ծաղկաշրթանները հատուկ են միայն բաց անոթների (թասեր, փիալա) հարդարանքին: Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի ծաղկաշրթայած կարդասպատկերները մեծամասնությամբ հատուկ են եղել բաց անոթների (թասեր, փիալաներ, պնակ, կիսագնդած թասեր) տարբեր մասերի հարդարանքին: Ուշագրավն այն է, որ ժառանգորդությունը նկատվում է նաև կարդասպատկերների տեղադրման մեջ: Վանի ուրարտական ժամանակաշրջանի տեղական գունազարդ խեցեղենում ծաղկաշրթայած կարդասպատկերները կարդարել են բաց անոթների ներքին մասերը և հատուկ են եղել վերջիններիս՝ պսակից ներքև ընկած հատվածների հարդարանքին: Նույն երևույթը նկատվում է նաև Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենում: Ծաղկաշրթաններով կարդարված բաց անոթների (կիսագնդած թասեր, փիալաներ, թասեր, պնակներ) մեծամասնությամբ ևս հատուկ է կարդասպատկերների մնանատիպ տեղադրությունը: Ժառանգորդություն նկատվում է նաև գունազարդման ոլորտում: Վանում վկայված ծաղկաշրթաններն ունեցել են թե՛ միագույն (կարմիր) և թե՛ բազմագույն գունազարդում (կարմիրով և դարչնագույնով): Այստեղ պարզ գծային պատկերագրությամբ առանձին կամ միմյանց գուգահեռ ծաղկաշրթանները գունազարդվել են կարմիր երանգներով, իսկ օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշրթանները ունեցել են երկգույն գունազարդում (ծաղկաշրթանների կորերը՝ դարչնագույն, օժանդակ զարդամոտիվները՝ կարմիր): Նույն երևույթը նկատվում է նաև քննվող ժամանակաշրջանի ծաղկաշրթանների գունազարդման ոլորտում: Այստեղ պարզ գծային պատկերագրությամբ ծաղկաշրթաններն ունեն միագույն գունազարդում (հանդիպում են օրինակներ, որոնք գունավորվել են կարմիրով), իսկ օժանդակ զարդամոտիվներով ծաղկաշրթաններն ունեցել են երկգույն գունազարդում (օժանդակ զարդամոտիվներին հիմնականում բնորոշ է Վանում վկայված կարմիր երանգավորումը): Հելլենիստական ժամանակաշրջանում, ի թիվս ավանդական բաց անոթների, ծաղկաշրթայած կարդասպատկերներով կարդարված են եղել նաև փակ անոթները (կճուճ, սափոր, կարաս, ծորակավոր ջրաման, տափաշիշ): Այստեղ, որպես կանոն, ծաղկաշրթանները հարդարել են վերջիններիս ուսամասի հատվածները: Չնայած հանդիպում են շեղումներ նաև փակ անոթներում կարդասպատկերների տեղադրման ընդհանուր կանոններից, որտեղ ծաղկաշրթան հարդարել է վերջիններիս եզրամասերը (տափաշիշ) և փորամասի հատվածները (կճուճ): Ծաղկաշրթանների մյուս ձևակազմական առանձնահատկությունն այն է, որ ներքին գունազարդում ունեցող բաց անոթների կողքին ի հայտ են գալիս նաև արտաքին գունազարդում ունեցող բաց անոթներ (կիսագնդած թասեր, փիալաներ), որտեղ ծաղկաշրթայած կարդասպատկերները տեղադրված են վերջիններիս միջին և ստորին հատվածներում: Ծաղկաշրթայած կարդասպատկեր-

ների գունազարդման առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ սրանք թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակների պարագայում ունեցել են երեք կայուն երանգավորումներ՝ կարմիր, սև, շագանակագույն: Ծաղկաշրթանների գունազարդման կանոններից միակ շեղումը ծաղկաշրթանների սպիտակ երանգավորումն է: Որպես կանոն՝ օժանդակ զարդամոտիվներով հարստացված ծաղկաշրթայածն զարդապատկերների կորերը երանգավորվել են վերը հիշատակված՝ սև, կարմիր, շագանակագույն երանգներով, իսկ օժանդակ զարդամոտիվները, առանց բացառությունների երանգավորվել են կարմիր գույնով: Ծաղկաշրթայածն զարդապատկերներով հարդարված գունազարդ անոթների ժամանակագրական տվյալներից ելնելով՝ կարող ենք փաստել, որ վերջիններս ի հայտ են գալիս Ք.ծ.ա. I դարի սկզբից և գոյատևում մինչև նույն դարի վերջերը:

## ГИРЛЯНДОВЫЕ ОРНАМЕНТЫ РАСПИСНОЙ КЕРАМИКИ ЭЛЛИНИСТИЧЕСКОЙ АРМЕНИИ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Нахшкарян* \_\_\_

Гирляндовые узоры растительного орнамента расписной керамики эллинистической Армении практически не были изучены. В статье впервые дана попытка группировки гирляндовых узоров расписной керамики эллинистической Армении. Рассмотрены формологические, композиционные и расписные особенности сосудов с гирляндовыми узорами, а также хронологические данные, которые по нашему мнению были распространены в основном в I веке д.н.э. Выявлены прототипы гирляндовых узоров расписной керамики эллинистической Армении, которые присутствуют в местной расписной керамике Вана урартского периода. Приемственность замечена не только в орнаментации, но и в области форм и росписи. Эти орнаменты по нашему мнению важны и ценны не только в художественном отношении, но и могут быть источником исследования материальной и духовной культуры данного периода.

## Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԱՎԱՆԴԱԿԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ՎԻՊԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայագիտության մեջ իշխող տեսակետի համաձայն՝ Մովսես Խորենացուն՝ *Վաղարշակ*, իսկ Անանուն պատմիչին՝ *Արշակ* անունով հայտնի Հայոց արքային պատմական նախատիպ է ծառայել Տրդատ I-ը (54-80 թթ.)<sup>1</sup>: Այսուհանդերձ, կան ուրիշ տեսակետներ ևս: Ըստ Մ. Աբեղյանի՝ այդ նախատիպը պարթևական արքայից արքա և Տրդատ I-ի եղբայր Վաղարշ I-ն է<sup>2</sup>, ըստ Ս.Երեմյանի՝ և՛ Տրդատ I-ն է, և՛ նրա եղբայրը<sup>3</sup>, ըստ Հ.Մանանդյանի՝ ո՛չ մեկն է, ո՛չ էլ մյուսը, այլ Հայոց արքա Վաղարշ II-ը (186-198 թթ.)<sup>4</sup>: Այս առթիվ Ս. Երեմյանը գրում է. «Թերևս «Վաղարշակի մեջ կան և Վաղարշ Բ-ի գծերը, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ նա հիմնականում, այնուամենայնիվ, կապվում է Տրդատ Ա-ի և նրա եղբոր՝ պարթևական թագավոր Վաղարշ Ա-ի հետ»<sup>5</sup>: Ըստ Գ. Մարգարյանի՝ «Վաղարշակը հավաքական անձ է, բաղկացած Արտաշես Ա-ի, Տրդատ Ա-ի և այլ հայ իշխողների առանձին գծերից»<sup>6</sup>: Այսպիսով, «ավանդական» Վաղարշակի կերպարի ձևավորման սկիզբը, եթե համատեղելու լինենք հայագիտության մեջ գոյություն ունեցող կարծիքները, կդրվի մ.թ.ա. II դարի առաջին կես, իսկ ավարտը՝ մ.թ. II դարի վերջ:

Բայց կասկածից վեր է, որ նրա կերպարում առկա են նաև ավելի վաղ շրջանից եկող գծեր: Այս առթիվ Գ.Մարգարյանը գրում է. «Արտաշես Ա-ի Միսիանում գտնված արամեերեն արձանագրության մեջ հանդիպում ենք «թագադիր» տիտղոսով մի անձնավորության... Ուրեմն, «թագակապի» պաշտոնը գոյություն է ունեցել դեռևս Արտաշիսյանների դինաստիայի սկզբում, զուցե ավելի վաղ»<sup>7</sup>:

Չնայած Մովսես Խորենացին և Անանուն պատմիչը իրենց սկզբնաղբյուր ծառայած Մար Աբասի մատյանի<sup>8</sup> հիման վրա «թագադիր»-ի գործակալության հիմնադիր Հայաստանի առաջին Արշակունի գահակալին են համարում,<sup>9</sup> բայց բանից պարզվում է, որ Հայաստանում նա (Վաղարշակ // Արշակ Փոքրը) ունեցել է իր հարազատ նախորդները, որովհետև թագադրվել էր «ի թագ հայրենի»<sup>10</sup>: Ուշադրություն դարձնենք Գ. Մարգարյանի վերոհիշյալ մեջբերման հետևյալ նախադասությանը. «Ուրեմն, «թագակապի» պաշտոնը գոյություն է ունեցել դեռևս Արտաշիսյան դինաստիայի սկզբում, զուցե և ավելի վաղ»: Իսկ այդ «ավելի վաղ»-ը կարող էր լինել մինչև Արտաշես I-ը (189-160թթ.

1 Н. А. Д о н ц, *Армения в эпоху Юстиниана*, Ер. 1971, стр. 432-433. Կ.Բասմաճեան, *Իսկական պատմություն Հայոց*, Կ.Պոլիս, 1914, էջ 100-102; Խ.Մամուկյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, հ. I, Եր., 1939, էջ 181, 264, 328; Է.Գանիեյան, *Պարթևական պետության պատմության որոշ դրվագներ Մովսես Խորենացու լուսարանությանը*, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, թիվ 3, էջ 168-169; Ս. Պետրոսյան, *Մեծ Հայքի հյուսիսարևմտյան և հյուսիսային հարևանները հայ-հռոմեական փոխհարաբերությունների շրջանում (I դարի երրորդ քառորդ)*, Լրագրեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1979, թիվ 4, էջ 61-64: Հ.Մելքոնյան, *Արևիկյան պետությունը և Հայաստանը*, Եր., 1980, էջ 136-137:

2 Մ. Ա բ ե ղ յ ա ն, *Հայ ժողովրդական առասպելները Մ.Խորենացու Հայոց պատմության մեջ*, Վաղարշապատ, 1899, էջ 489, ծան. 1:

3 Н. А. Д о н ц, *նշվ. աշխ.*, էջ 432: «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 746-747:

4 Հ. Մ ա ն մ ա ն ղ յ ա ն, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Բ, մասն Ա, Եր., 1957, էջ 58:

5 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. I, էջ 791, ծան. 103:

6 Նույն տեղում, էջ 674:

7 Նույնը:

8 Գ. Մ ա բ գ ս յ ա ն, *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին*, Եր., 1963, էջ 82-83, 103, 109-111:

9 Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Քննական բնագիրը, Մ.Աբեղյանի և Ս.Հարությունյանի, Եր., 1981, Բ, գ, է, Մերեոսի եպիսկոպոսի պատմություն, Բաղդատություններ ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանօթագրությունները ի ձեռն Ստ.Մալխասեանց, Եր., 1939, գլ. Բ, էջ 9:

10 Մելքոն, գլ. Բ, էջ 9:



մ.թ.ա.) գոյություն ունեցած Երվանդունի երկրորդ արքայատոհմի օրոք՝ հավանաբար, նրա հիմնադիր Օրոնտես // Երվանդի (մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակներ)<sup>11</sup> ժամանակներից սկսած:

Այս տեսանկյունից ուշագրավ է, որ ինչպես Վաղարշակին, այնպես էլ «թագադիր» առաջին գործակալին՝ Բագրատունիների մախնուն, ինչպես Խորենացին, այնպես էլ Անանունը համարում են մակեդոնական նվաճողների՝ դիադոքոսների ժամանակակիցները<sup>12</sup>: Խորենացին գրում է. «Քանզի յետ սանձահարելոյ զՄակեդոնացիս եւ դադարեալ պատերազմացն՝ սկիզբն առնէ բարեգործութեանց Պարթեւն քաջ (Վաղարշակը) մախ եւ առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի եւ իմաստնոյ, որ ի Հրէիցն Շամբատայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց, եւ որ ի նմանէ ծնեալ ազգ լինել կոչմամբ յանուն նորա Բագրատունի...»<sup>13</sup>: Այսպիսով, «թագադիր» գործակալության հիմնադիր Վաղարշակը նույնանուն է Երվանդունիների երկրորդ թագավորության հիմնադիր Օրոնտես-Երվանդի հետ: Տեսանք, որ միևնույն անձնավորությանը Խորենացին՝ *Վաղարշակ*, իսկ Անանունը՝ *Արշակ Փոքր* է կոչում: Ինչպե՞ս կարելի է բացատրել այս տարբերությունը: Մեր կարծիքով, Մար Աբասի մատյանի Խորենացուն և Անանունին հասած տարբերակները արդեն կրած են եղել նույնպիսի անուններով գահակալ եղբայրների մասին ավանդագրույցի ազդեցությունը: Այն ցայտուն կերպով դրսևորված է Անանունի հետևյալ հաղորդման մեջ. «*Արք թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հարիւրերորդի քսան եւ իններորդի թագաւորութեանն Արշակայ հար իւրով ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին քաղաքի, եղբարք իւրով Վաղարշակաւ՝ գոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս՝ ամս ԽԲ*»<sup>14</sup>:

Հայաստանում Արշակ և Վաղարշակ եղբայրների համատեղ գահակալման մասին Անանունի հաղորդումը ժամանակին համարել են հետագայի հավելում, իբր թե արված՝ նրա և Խորենացու հաղորդումների միջև առկա տարբերությունը վերացնելու համար<sup>15</sup>: Լ.Շահինյանը փորձում է գտնել հակասության բանալին: Նա գրում է. «Այսպիսով, ըստ Անանունի, Արշակ Փոքրն ու Վաղարշակը համատեղ թագավոր են նշանակվել Հայաստանում, ապա ինչ-որ ժամանակ թագավորելուց հետո... երբ մահացել է Արշակ Մեծը՝ երկու եղբայրների հայրը, Արշակ Փոքրը վերադարձել է հոր գահը գրավելու՝ թերևս որպես ավագ որդի, իր եղբորը՝ Վաղարշակին, վերահաստատելով Հայաստանի թագավոր»<sup>16</sup>: Այսուհանդերձ, մի տարբերություն ևս մնում էր երկու պատմիչների հաղորդումների միջև՝ կապված Արշակ Մեծի և Վաղարշակի հետ. «թե ինչու՞ է միևնույն սկզբնաղբյուրի հիման վրա Անանունը Վաղարշակին որդի համարել, իսկ Խորենացին՝ եղբայր, որը, թերևս, միակ անլուծելի հակասությունն է նրանց միջև, առայժմ մնում է բացատրության կարոտ», -գրում է Լ.Շահինյանը<sup>17</sup>:

Մեր խորին համոզմամբ, պատմիչների երկերում ինչ-որ տեղ շփոթված են Արշակ Մեծն ու Արշակ Փոքրը, և պատճառը երկվորյակների մասին առասպել-ավանդագրույցի ազդեցությունն է: *Արշակ* և *Վաղարշակ* «երկվորյակային» անուններով անձանց Հայաստանում համատեղ գահակալելու մասին ավանդությունը այստեղ պահպանվել էր երկար դարեր: Պատահական չէ, որ նրանց անունները նույնական են Պապ թագավորի (370-374թթ.) որդիների անունների հետ: Փավստոս Բուզանդը վերջիններիս մասին գրում է. «անուանք պատանեկացն Արշակունեացն. անուն երիցուն Արշակ, եւ կրտսերուն Վաղարշակ»<sup>18</sup>: Մովսես Խորենացին իր հերթին գրում է. «Ապա փոխանակ Վարազդատայ թագաւորեցոյց Հայոց Թժոդոս մեծ (կայսրը) որդիսն Պապայ, զԱրշակ

11 ՀԺՊ, հ.1, էջ 504-505:

12 Մ. Խ ռ ե ն ա գ ի, Բ, գ-ե, Սեբեոս, գլ. Բ, էջ 9-10:

13 Մ. Խ ռ ե ն ա գ ի, Բ, գ:

14 Մ ե բ է ո ս, գլ. Բ, էջ 10:

15 Հայկական աշխատասիրութիւնը հայագէտ Պ.Յեթթերի, Վիեննա, 1895, էջ 38-39, H. Март, Хитон Господень, С. Пб., 1897, стр. 282, пр. 1:

16 Լ. Շ ա հ ի ն յ ա ն, Հայ Արշակունիների թագավորության հիմնադրումը ըստ Անանունի և Մովսես Խորենացու, ԼՀԳ, 1976, թիվ 6, էջ 102:

17 Նույն տեղում, էջ 106:

18 Փաւստոսի Բիւզանդացոյ պատմութիւն Հայոց, Բնագիրը Զ. Պատկանյանի, Եր., 1987, Ե, լէ:

եւ զՎաղարշակ»<sup>19</sup>: Ըստ Փավստոս Բուզանդի՝ «Եւ ետ թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ եւ պատմունան, եւ զվառ թագաւորացն տիկնոջն Չարմանդխտոյ, եւ *թագս մանկացն որդոցն երկոցունց* Արշակայ եւ Վաղարշակայ»<sup>20</sup> Եթէ սրանք երկվորյակներ չլինեին «զնոսս ի տեղի թագաւորի կալեալ» չէր լինի, ոչ էլ Շապուհ II-ը նրանց համար «թագս» կոչարկեր: Որպէս երկվորյակներ էլ նրանց հարսանիքները միաժամանակ են արել: «Եւ տայր (Կարինում) սպարապետն Մանուէլ գդուստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունոյ, եւ փեսայ իւր առնէր զնա: Առնէր հարսանիս եւ եղբոր նորին Վաղարշակայ, եւ տայր նմա գդուստր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գավառէ... եւ մեծապէս արարեալ զհարսանիսն ամենայն երկիրն Հայոց, ցնծացեալք, խնդացեալք էին ընդ մեծ խնդութիւն ուրախութեանն»<sup>21</sup>: Այսուհանդերձ, երկվորյակների մեջ էլ մեծի և փոքրի տարբերություն կար: Միշտ առաջինն հիշված է և ավագ (երեց) համարվել է Արշակը, իսկ կրտսեր՝ Վաղարշակը: Ուստի Մանվել Մամիկոնյանը՝ նրանց խնամակալը, «թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկրին Հայոց, եւ զՎաղարշակ երկրորդ միին»<sup>22</sup>: Անկասկած, ինչպէս Պապ թագավորի Արշակ և Վաղարշակ որդիների, այնպէս էլ առաջին Արշակի ու Վաղարշակի դեպքում առկա է հնդեվրոպական հեռավոր անցյալից եկող ու Հայաստանում խոր արմատներ ունեցած երկու գահակալների համատեղ կառավարելու ավանդույթի ազդեցությունը: Մի ավանդույթ, որը հնդեվրոպական մյուս ժողովուրդների կյանքում ևս ունեցել է իր տարբեր դրսևորումները<sup>23</sup>:

Հայաստանում Արշակունի թագավոր եղբայրների համատեղ գահակալման մասին խոսում է նաև Պրոկոպիոս Կեսարացին. Հայաստանում ոմն «Արշակ թագավոր ունենում է երկու որդի, որոնց անուններն էին Տիգրան և Արշակ: Իր կյանքի վերջում նա կտակ թողեց, որի համաձայն երկու որդիներն էլ դառնում էին իշխանության ժառանգորդներ: Բայց նա պետությունը հավասար կերպով չբաժանեց նրանց միջև: Նա Տիգրանին թողեց քառասպատիկ ավելի բաժին»<sup>24</sup>: Հռոմեացի պատմիչը շփոթել է մի կողմից Պապի «գահակալած» որդիներին՝ Արշակին ու Վաղարշակին, մյուս կողմից՝ Արշակ III-ին, և Խոսրով IV-ին: Ոչ Վաղարշակը, ոչ Խոսրով IV-ը *Տիգրան* չեն կոչվել: Խոսրով IV-ը և Արշակ III-ը եղբայրներ չէին, իսկ նրանց հայրն համարված Հայոց թագավորը միայն Արշակ III-ի (ոչ թե նաև Խոսրով IV-ի) հայրն էր և ոչ թե *Արշակ*, այլ *Պապ* էր կոչվում: Կարծում ենք, որ այս խառնաշփոթի պատճառը դարձյալ Հայոց գահակալ եղբայրների մասին ավանդազրույցն է եղել: Պրոկոպիոսի հիշատակած որդի Արշակը՝ պատմական Արշակ III-ը, որին, ըստ նրա, բաժին էր հասել Հայաստանի փոքր մասը, իսկայն էլ Հայաստանի 387թ. բաժանումից հետո իշխում էր նրա հռոմեական *փոքր մասում*, երբ Խոսրով IV-ը՝ Պրոկոպիոսի հիշատակած Տիգրանի պատմական նախատիպը, իշխում էր նրա պարսկական *մեծ մասում*<sup>25</sup>:

Գահակալ զույգ եղբայրների առասպել- ավանդազրույցի բացահայտ կնիքն է կրում նաև Խորենացու բերած հետևյալ զրույցը: Երվանդունի արքայատոհմի Մեծ Հայքի ճյուղի վերջին ներկայացուցիչ Երվանդ Վերջինի և նրա եղբոր վերաբերյալ պատմըվել է հետևյալը. «Կին ոմն յագգէ Արշակունեաց... ծնանի երկուս մանուկս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄիմոսավրոս: Եւ ի զարգանալ մանկանցն կոչեն անուանս Երուանդ եւ Երուագ»: Ընդ որում, մեծանալով Երվանդը դարձել էր թագավոր, իսկ Երվագը՝ քրմապետ (գերագույն քուրմ)<sup>26</sup>: Եղբայրների այս զույգի պատմական նախատիպերի վերաբերյալ հետաքրքիր եզրակացությունների են հանգել մեր հայագետները: Գ. Տիրացյանը գրում է. «Փաստերը ցույց են տալիս, որ Խորենացու հիշատակած

19 Մ. Խ ռ Ե ն Գ ի, Գ, խա:

20 Փ. Բ ն Ի գ ա ն ղ, Ե, ԼԻ:

21 Նույն տեղում, Ե, խդ:

22 Նույնը:

23 Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, стр. 776-777.

24 Պրոկոպիոս Կեսարացի, *Կառուցումների մասին, զիրք երրորդ, զլուխ 1 (թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1967, էջ 189-190)*:

25 Փ. Բ ն Ի գ ա ն ղ, Զ, ա, Մ. Խորենացի, Գ, խբ:

26 Մ. Խ ռ Ե ն Գ ի, Բ, լե, Բ, խ, Բ, խբ:



Երվանդը մարմնավորում է ինչպես վերջին Դարեհի (այսինքն՝ Դարեհ Գ Կողոմանոսի) թագավորության VIII տարում գահակալած Երվանդին, որը մախատիպն որպես Հայաստանի սատրապ մասնակցել էր Գավգամելայի ճակատամարտին, այնպես էլ մ.թ.ա. III դարի վերջին թագավորած և Արտաշես Ա-ի կողմից տապալված Երվանդին»<sup>27</sup>: Իսկ վերջինիս ի նկատի առնելով նա շարունակում է. «Երվանդի արքունիքը կազմված էր հեյլենիստական մյուս պետությունների օրինակով: Նրա եղբայր Երվազը գերագույն քրմապետ էր»<sup>28</sup>:

Երվանդ ու Երվազ երկվորյակ եղբայրների մասին պատմվածքը, ըստ այսմ, Երվանդունի մախտիպերի և նրանց ծագումնաբանության առասպել-ավանդազրույցն է: Խորենացին ինքը, Երվանդի մասին խոսելիս նշում է, որ նա «թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ», ապա ավելացնում է. «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս»<sup>29</sup>: Իրավացի է Գ. Տիրացյանը ինչպես այն դեպքում, երբ առաջին մախատիպային մեջ ակնարկված Երվանդի մեջ տեսնում է Դարեհ Վերջինի, այսինքն՝ Արեւմտյան Դարեհ III-ի (մ.թ.ա. 336-330թթ.), ժամանակակից Հայոց սատրապի գծերը, այնպես էլ այն դեպքում, երբ նրա պատմական մախատիպերից մեկն էլ համարում է Երվանդ Վերջինին (մ.թ.ա. III դարի վերջին տասնամյակներ)<sup>30</sup>: Կարծում են, որ այս Երվանդի եղբայր Երվազը Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկում (թիվ 4) «իբրև գերագույն քուրմ և թագավոր» հիշատակված Միթրասն է: Նա իրեն էլ, Էբրոնտես // Երվանդին էլ *բասիլևս* // «թագավոր» է կոչում<sup>31</sup>: Իսկ դա խոսում է Միթրաս // Երվազի շատ ավելի բարձր կարգավիճակ ունենալու մասին, քան քրմապետինն էր: Ինչպես Ս.Կրդկյաշարյանն է նշում «քրմապետը Հայաստանում ևս, ինչպես և Կասպաղովկիայում և հարևան մյուս երկրներում, երկրորդ դեմքն էր թագավորից հետո»<sup>32</sup>, բայց Հայաստանում նրա հեղինակությունը ավելի բարձր էր, քանի որ նրա ձեռքին էր մեծ դատավարության գործակալությունը, նա ուներ իր զինված ջոկատները և կայազորներ տաճարային ամրոց-բնակավայրերում»<sup>33</sup>:

Երվանդունի արքայատոհմի մասին գոյություն ունեցած պատմական ավանդություններում երկվորյակ եղբայրների (զույգ եղբայրների) առասպել-ավանդազրույցի ազդեցությունը զգացվում է նաև Երվանդ Վերջինին և Արտաշես I-ին եղբայրներ համարելու հարցում: Անանուն պատմիչի բերած արքայացանկում կարդում ենք. «Երուանդ որդի Արշակայ՝ ամս ԻԱ: Ապա Արտաշէս եղբայր նորին՝ ամս ԾԲ»<sup>34</sup>: Բայց այս «եղբայրներն» իրար թշնամի են: Թշնամանքն ավարտվում է Երվանդի մայրաքաղաք Երվանդաշատի գրավումով և Երվանդ Վերջինի սպանությամբ. «Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերք զգլխն Երուանդայ... եւ այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագավորութիւն ամս քսան: Բայց Արտաշէսի հիշեալ, թէ խառնուած Արշակունոյ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք»<sup>35</sup>: Ակնհայտ է, որ այս դեպքում մենք գործ ունենք հակոտնյա երկվորյակների առասպելի ազդեցության հետ: Այն ինչ-որ չափով հիշեցնում է «Սասնա ծռերի» Սանասարի ու Բաղդասարի մեհամարտի դրվագը, բայց եղբայրներից մեկի ողբերգական վախճանի տեսանկյունից ավելի շատ հիշեցնում է Հռոմի առասպելական հիմնադիրների՝ երկվորյակ եղբայրներ Հռոմուլսի և Հռեմոսի մեհամարտը<sup>36</sup>:

27 ՀԺՊ, հ. I, էջ 506:

28 Նույն տեղում, էջ 514:

29 Մ. Խ ռ ք Ե ն ց Ի, Բ, լէ:

30 ՀԺՊ, հ. I, էջ 506:

31 Հ. Մ ա ն ն ղ յ ա ն, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946, էջ 19, 29, 47-79: Նույնի, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 22-23:

32 Մ. Կ ր կ յ ա շ ա ր յ ա ն, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 139:

33 Նույն տեղում, էջ 152, 153, 155:

34 Մ Ե ք է ն ս, զլ. Բ, էջ 11:

35 Մ. Խ ռ ք Ե ն ց Ի, Բ, խզ:

36 Ե. Ս Տ Ե Ր Մ Ե Ն, Բոմուլ, Միֆы народов мира, т. II, М., 1988, стр. 387.

Երվազի և Երվանդի, Երվանդի ու Արտաշեսի եղբայրներ համարվելու առթիվ նշենք, որ հին հայերենում *եղբայր* բառը ավելի լայն հասկացություն էր բովանդակում: Օրինակ, Փավստոս Բուզանդի վկայությամբ, Հայոց Խոսրով Կոտակ թագավորը (330-338թթ.) իր թշնամի և հեռավոր ազգական մագքթաց Սանեսան թագավորի հատված գլուխը տեսնելով սկսել էր ողբալ՝ ասելով. «Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի»<sup>37</sup>: Ուրեմն, Երվանդ-Երվազ եղբայրներ ընկալված Հայոց գույզ գահակալները կարող էին իրականում պարզապես ազգականներ, տոհմակիցներ լինել: Զննարկվող հարցի տեսանկյունից է հասկանալի դառնում խորենացիական Երվազ քրմապետի վարքագիծը Երվանդ Վերջինի և Արտաշեսի հակամարտության ժամանակ: Քանի որ Անանունի բերած արքայացանկում վերջիններս համարվում են եղբայրներ, ուրեմն, եղբայրներ էին համարվելու նաև Արտաշես I-ն ու քրմապետ Երվազը: Ըստ երևույթին, երկու դեպքում էլ խոսքը ազգակցության մասին է: Այս դեպքում է հասկանալի դառնում, թե ինչու է Երվազը չեզոքություն պահպանել, երբ Արտաշեսը հարձակվել էր Երվանդի վրա, պարտության մատնել նրան Երվանդավանում,<sup>38</sup> ապա գրավել Երվանդի մայրաքաղաք Երվանդաշատը, որի ժամանակ էլ սպանվել էր Երվանդը<sup>39</sup>: Դրանից հետո Արտաշես I-ը թագավոր էր օժվել,<sup>40</sup> իսկ Երվազը շարունակել էր քրմապետական գործունեությունը մինչև Արտաշես I-ի հրամանով սպանվելը<sup>41</sup>:

Էբրոնտես // Երվանդի և Միթրաս // Երվազի օրինակը ցույց է տալիս, որ Երվանդունի թագավորներից յուրաքանչյուրը կարող էր կոչվել *Երվանդ*, իսկ քրմապետներից յուրաքանչյուրը՝ *Երվազ*: Ըստ երևույթին, ժողովրդին հայտնի իրենց այս անուններից բացի, նրանք տեղական ինչ-որ ավանդույթում հանդես են եկել *Արշակ* և *Վաղարշակ* անունների տակ: Մար Աբասի հետևությամբ՝ Մովսես Խորենացին Վաղարշակի որդուն *Արշակ*, իսկ թոռանը *Արտաշես* է կոչում: Նա գրում է. «Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան, եւ զնորին ուստր, զոր անուանաց Արտաշէս»,<sup>42</sup> իսկ «Արշակ որդի Վաղարշակայ թագաւորէ ի վերայ Հայոց ամս երեքտասան»:<sup>43</sup> Խորենացու մտան Անանունը ևս Վաղարշակին հաջորդած է համարում նրա Արշակ որդուն, իսկ վերջինիս հաջորդ է համարում իր որդի Արտաշեսին<sup>44</sup>: Չնայած «Արտաշես Առաջինի» կերպարը կերտելիս Խորենացին նրան է վերագրել Աբեմեդյան արքայից արքաների գործունեության առանձին դրվագներ ևս, բայց նրա պատմական նախատիպը Արտաշես I-ն է (մ.թ.ա. 189-160 թթ.), որովհետև համարվում է «Տիգրան Միջինի» նախորդը, իսկ վերջինս էլ՝ Արտավազդի նախորդը<sup>45</sup>: Որևէ կասկած լինել չի կարող, որ «Տիգրան Միջինը» Տիգրան Մեծն է,<sup>46</sup> իսկ «Տիգրան Միջինի» որդի Արտավազդը՝ Տիգրան Մեծի որդի Արտավազդ II-ն է: Ըստ այսմ, «Արտաշես Առաջինի» նախորդ Արշակը որպես պատմական նախատիպ ունենալու էր Արտաշես I-ի նախորդ Երվանդ Վերջինին կամ ինչպես նրան, այնպես էլ նրա նախորդներին: Վերջիններիս առթիվ հիշարժան է, որ Անանուն պատմիչը Երվանդ Վերջինի հորը ևս կոչում է *Արշակ անունով*:<sup>47</sup>

Էբրոնտես-Երվանդ և Միթրաս-Երվազի օրինակը ցույց է տալիս, որ Երվանդունի յուրաքանչյուր թագավոր և քրմապետ իր կրած՝ ժողովրդին քիչ հայտնի կամ անհայտ, անվան հետ միասին ունեցել է այլ՝ ժողովրդին հայտնի, անուններ: Թագավորի դեպքում դա եղել է *Երուանդ* -ը, քրմապետի դեպքում՝ *Երուազ*-ը: Նույն կերպ Մար Աբասին հանգող տեղական ինչ-որ ավանդույթում, գույզ գահակալները հանդես են եկել *Արշակ*

37 Փ. Բ ն 1 գ ա ն ղ, Գ, է:

38 Մ. Խ ն ր ե ն ա գ ի, Բ, խզ:

39 Նույնը:

40 Նույն տեղում, Բ, խէ:

41 Նույն տեղում, Բ, խը:

42 Նույն տեղում, Բ, ը:

43 Նույն տեղում, Բ, ք:

44 Մ ե ք է ն ս, գլ. Բ, էջ 10:

45 Մ. Խ ն ր ե ն ա գ ի, Բ, ժդ-իգ:

46 Հ. Մ ա ն ա ն ղ յ ա ն, *Տիգրան երկրորդը և Հոմեր, Եր., 1940, էջ 92; Мовсес Хоренаци, История Армении, Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ер., 1990, стр. 249.*

47 Մ ե ք է ն ս, գլ. Բ, էջ 11:

և Վաղարշակ անուններով: Որ այս անունները հայերին ծանոթ էին Արշակունիների Հայաստանում հաստատվելուց շատ առաջ, և հենց Երվանդունիների օրոք, վկայում է Երվանդունիների երկրորդ թագավորության հիմնադիր Օրոնտես-Երվանդի նախնիների շարքում Արշակ անվամբ անձի առկայությունը: Իսկ Վաղարշակ-ը կազմված է նույն Արշակ անունից \*վաղ- «արքա» բառի հավելումով. \*վաղ-Արշակ> Վաղարշակ<sup>48</sup>:

Արշակ անունով էր մինչև գահ բարձրանալն հայտնի Արեմենյան արքայից արքա Արտաքսերքսես II Մնեմոնը (մ.թ.ա. 404-359թթ.)<sup>49</sup>: Կոմագենեի թագավոր Անտիոքոս Երվանդունու (մ.թ.ա. I դար) Նեմրոթ լեռան սրբավայրի սալաքարերից մեկը ձոնված էր նրա նախնի Արտանդես-Երվանդին, որը մ.թ.ա. V-IV դդ. սահմանազլխին Հայաստանի սատրապ եղած և Քսենոփոնի «Անաբասիսում» հիշատակված Օրոնտես-Երվանդն է՝<sup>50</sup> Արտաքսերքսես II-ի Հռոդոզոմոն դստեր ամուսինը<sup>51</sup>: Կոմագենեի Երվանդունիների նման Արտաքսերքսես-Արշակին իրենց նախնին էին համարելու նաև Մեծ Հայքի Երվանդունիները: Երվանդունիների երկրորդ թագավորությունը և նրա հիմնադիր Օրոնտես-Երվանդի քաղաքական վարքագիծն ի նկատի առնելով՝ Գ. Տիրացյանը գրում է. «Նոր թագավորության իրավական հիմքերի տեսակետից մեծ նշանակություն ունեն իշխող դինաստիայի ազգակցական կապը Արեմենյան տոհմի հետ, որ կարևոր պայման էր հելլենիստական Առաջավոր Ասիայի թագավորական դինաստիաների իշխանության օրինակաչությունը շեշտելու համար»<sup>52</sup>:

Եթե պարթև Արշակունիներին հայտնի էր դարձել Արտաքսերքսես II-ի բուն Արշակ անունը, որի հիման վրա էլ նրանք իրենց համարում էին նրա (մտացածին) սերունդները,<sup>53</sup> ապա շատ ավելի վաղ այդ անունը հայտնի էր լինելու նաև հայ Երվանդունիներին, որոնց իրական նախնիներից մեկն էր Արտաքսերքսես II // Արշակը: Որ Հայաստանում որպես թագավորական նախնի Արեմենյան այս արքայից արքան հիշվել է դարեր շարունակ, վկայում է նաև իրեն Երվանդունի // Երվանդական (արամեական արձանագրություններում՝ rwndqn)<sup>54</sup> հռչակած Արտաշես I-ի անունը, որը հայացած ձևն է Արեմենյան այս արքայի գահանվան: Նրա անվան վերաբերյալ Ի. Դյակոնովը և Կ. Մտարկովյանը գրում են. «Չնայած այդ անունը ծագումով իրանական է, բայց պարթևական չէ... Միայն հին պարսկերենում է Artaxšasa: Հենց այդ ձևից էլ օրինաչափ կերպով ծագում է ... հայկական ավանդական Արտաշես ձևը»<sup>55</sup> Արտաշես անվան վերաբերյալ Գ. Մարգարյանը ավելացնում է. «Այն թափանցել է հայերի մեջ որպես Արեմենյան արքայական անուն (մանավանդ եթե հիշենք, որ Արտաքսերքսես Բ Մնեմոնը համարվում էր Երվանդյանների նախնի) և որպես այդպիսի էլ սկզբնապես պատվաստվել է հայկական օճումատիկային»<sup>56</sup> Հիշարժան է, որ Մովսես Խորենացին Արշակի և Վաղարշակի հորը հենց Արտաշես է կոչում:<sup>57</sup>

Այսպիսով, մենք կասկած չունենք, որ Երվանդունիների երկրորդ թագավորության (մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակներ- մ.թ.ա. III դարի վերջ) հիմնադիր Օրոնտես // Երվանդը գահ բարձրանալով, որպես Արեմենյան Արշակի (Արտաքսերքսես II-ի) սերունդ, կրել է Վաղարշակ (<վաղ-Արշակ) գահանունը: Սա էլ հետագայում առիթ է

48 Մ. Պ. Ե. և Մ. Պ. Ն. Ս. Մերձսևանյան գեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-V դդ.), ՊԲՀ, 1976, թիվ 1, էջ 194, ծան. 43:

49 Ctes., Pers., XV, 55; М. Дандмаев, Политическая история Ахеменидской державы, М., 1985, стр. 206-207, 275 пр. 71.

50 Xen., Anabasis, III, 4, 13; Քսենոփոն, Անաբասիս, Թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 75:

51 Գ. Մ. Ս. Պ. Ն. Ս. Մերձսևանյան դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 30, 116, ՀԺՊ, հ. I, էջ 506:

52 ՀԺՊ, հ. I, էջ 504:

53 Р. Ф р а й, Наследие Ирана. Материалы и исследования, М., 1972, стр. 245; Мери Бойс, Зороастрийцы. Верования и обычаи, М., 1988, стр. 131, 153.

54 А. П е р и х а н я н, Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, թիվ 4, էջ 108, 121, 128: Գ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 70, 205, 211:

55 И. Дьяконов, К. Старкова, Надписи Артаксия (Арташеса I) царя Армении, ВДИ, 1955, N2, стр. 169.

56 Գ. Մ. Ս. Պ. Ն. Ս. Մերձսևանյան, նշվ. աշխ., էջ 116:

57 Մ. Խ. Ն. Ս. Մերձսևանյան, Բ, ք:

ծառայել նրան Արշակունի համարելու և նրա գործունեությունը Հայոց գահին հաստատված առաջին Արշակունի թագավորին վերագրելու համար:

## ВОКРУГ ИСТОРИЧЕСКИХ И ФОЛЬКЛОРНЫХ ПРОТОТИПОВ ЛЕГЕНДАРНОГО ВАЛАРШАКА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Л. Петросян \_\_\_

В “Истории Армении” М. Хоренаци Валаршак считается основателем династии армянских Аршакидов. Являясь легендарной личностью, он все-таки сохранил характерные черты некоторых армянских царей, в том числе своего первого исторического прототипа-Оронт-Ерванда (конец IV в. до н.э.). По М. Хоренаци Валаршак является современником диадохов.

Тронное имя *Валаршак* (<\**Вал-Аршак* “царь Аршак”), которое, как потомок Ахеменида Аршака (т.е. Артаксерса II-го), носил Оронт-Ерванд, послужило поводом к тому, что его деятельность была приписана первому Аршакиду на армянском троне. Вероятно, исходя из этого, его потомки- царь Ерванд и верховный жрец Ерваз (конец III в. до н.э.), которые в Армавирской греческой надписи названы *василевс*-ами, в армянских источниках также считаются Аршакидами.

Сыновья царя Папа (370-374гг.) -близнецы Аршак и Валаршак, своими именами напоминают легендарного Валаршака и его брата Аршака. Значит, подобно именам Ерванда и Ерваза, эти имена тоже веками воспринимали как “близнечные”. В этом случае, надо полагать, что в формировании образов легендарного Валаршака и его брата Аршака свою роль играла как легенда о братьях-близнецах, так и воспоминания об индоевропейском социальном институте двух вождей-соправителей.

**XVII ԴԱՐԱՍԿԶԲԻ ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

Թուրք-իրանական հարաբերությունների և երկարատև պատերազմների պատմությունը, որն ընդգրկում է ամբողջ XVI դարը և XVII դարի առաջին կեսը, զգալի գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Արևելքի պատմությունն ուսումնասիրողների համար:

Այդ երկու երկրների պատմության առանցքային նշանակություն ունեցող հիմնահարցերը իրենց արտացոլումն են գտել նաև հայ պատմիչների երկերում: Հետևաբար կարելի է առանց վարանելու արձանագրել, որ հայկական աղբյուրների պատմագիտական մտքի ներդրումը իրանագիտության և թուրքագիտության ուսումնասիրության ոլորտում խիստ մեծ է և անուրանալի:

Իրանի և Թուրքիայի հարաբերությունների լուսաբանման ասպարեզում հայկական աղբյուրների ներդրումը իսկապես ծանրակշիռ է, քանզի հայկական աղբյուրները օտարալեզու աղբյուրների հետ միասին անվիճելիորեն զբաղեցնում են իր պատվավոր առաջնային դերը: Նշենք, որ հայ պատմագրությանն ընդհանրապես բնորոշ են հետաքրքրության ծավալուն շրջանակներ, հարցադրումների խորությունը և դրանց պատասխանների անաչառությունը:

XVII դարում հանդես եկան այնպիսի նշանավոր պատմիչներ ինչպիսիք են՝ Առաքել Դավրիժեցին, Գրիգոր Դարանաղցին, Ջաքարիա Քանաքեռցին և ուրիշներ: Իրենց առջև խնդիր դնելով շարադրելու հիմնականում հայոց պատմությունը, հայ պատմիչները սակայն իրենց թողած հարուստ ժառանգության մեջ գետեղում են նաև տարբեր ժողովուրդներին ու ազգերին վերաբերող բազմաբնույթ նյութեր, անում այլոց պատմական անցքերին վերաբերող ուշագրավ գնահատականներ ու եզրահանգումներ: Ուստի պատահական չէ օտար ուսումնասիրողների հետաքրքրությունը հայկական աղբյուրների նկատմամբ: Նման մոտեցումը թերևս օրինաչափ է և պայմանավորված է իրատեսական առարկայական գործոններով: Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի պատմության հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրության միտումը սերտորեն առնչվում է հայ պատմագրության զարգացման հետ: Նման պայմաններում հայկական աղբյուրները ձեռք են բերում նոր ձև ու բովանդակություն: Հայ պատմագրության հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն երկու հարևան ժողովուրդների հետ ունեցած դարավոր պատմական կապերով, այլև նրանց միջև հաստատված քաղաքական հարաբերությունների զարգացման հանգամանքով: Հայ պատմագրությունը ելնում է հայոց պատմության մեջ Թուրքիային ու Իրանին հատկացված նշանակալի դերից, նրանց ռազմաքաղաքական դիրքորոշման վճռորոշ պարագայից, որն անշուշտ ոչ պակաս կարևոր խթանիչ գործոն է թուրք-իրանական հարաբերությունները լուսաբանելու ուղղությամբ: Նման ոլորտում խիստ կարևոր է հայկական աղբյուրների նշանակությունը, որոնց բնորոշ հատկանիշներից է այլ երկրներին ու ժողովուրդներին վերաբերող հարուստ նյութի ընդգրկումը: Դ. Ալիշանի արտահայտությամբ՝ «Օտարք ոչ միայն նոր ծանօթութիւններ գտնեն մերայոց քով, այլ և իրենց արդէն ունեցածին լրումն և ուղղագրութիւն սխալանաց»:<sup>1</sup> Հայկական աղբյուրները գերծ են պալատական ներքողական պատմագրությանը բնորոշ թերություններից ու կողմնակալությունից:

XVI դարասկզբին ասիական մայրցամաքում տանելով մի շարք խոշոր ռազմական հաղթանակներ՝ Օսմանյան կայսրությունը նվաճեց հսկայական տարածքներ և վերածվեց Մերձավոր Արևելքի հզոր տերության: Մակայն սուլթանին լուրջ անհանգրստություն էր պատճառում իր անմիջական հարևանի՝ Սեֆյան Իրանի հզորացումը և քաղաքական կշռի մեծացումը Մերձավոր ու Միջին Արևելքում ու Անդրկովկասում:

Այդ ժամանակաշրջանից սկսած՝ երկու հարևան երկրների միջև սկսում է ընթանալ լարված ռազմաքաղաքական պայքար՝ Մերձավոր և Միջին Արևելքում գերիշխանություն ձեռք բերելու նպատակով:

<sup>1</sup> Դ. Ալիշան, Հայաստանում, Վենետիկ, 1901, մաս Ա, էջ 14:

XVII դարում թուրք-իրանական պատերազմների երկար շարանը միառժամանակ դադարեց 1639թ. կնքված հաշտության պայմանագրով, որն ըստ էության միակողմանի ակտ էր՝ թելադրված շահ Սեֆիին հաղթանակած սուլթան Մուրադ IV-ի կողմից:<sup>2</sup>

Այդ խաղաղությունը նվազ նպաստավոր եղավ Թուրքիայի և մասնավորապես Արևմտյան Հայաստանի համար, որի տնտեսական կյանքի հիմքերը խախտվել էին ոչ միայն տևական արտաքին պատերազմների, այլև 1595-1628թթ. ընթացքում պարբերաբար կրկնված ու ծավալված ջալալիների ապստամբությունների պատճառով:<sup>3</sup>

Գրիգոր Գարանաղցին վշտով է գրում այդ ապստամբությունների հետևանքների մասին, նշում է, որ երկրում վերացել էր դատն ու դատաստանը, տիրում էր կատարյալ անիշխանություն. «Չորս պատուհաս մի գմիոյ կնի եղեն ի վերայ ամենայն աշխարհացն, սով եւ մահ եւ սուր եւ զազանակերություն, որ շատ մարդակերութիւն եղեն»:<sup>4</sup>

Գարանաղցին նշում է, որ սուլթան Մուհամմադի անգործության պատճառով պարսից Շահ Աբաս Ա-ն մեկ տարում բազում քաղաքներ ու գյուղեր գրավեց, որից տուժեցին հասարակության բոլոր խավերը: Պատմագիրը խոսում է նաև 1599 երաշտի և 1600թ սովի մասին. «Բազումք մեռանէին ի սաստկութենէ սովոյն, անկեալ լինէին դիակունք թէ ի գիւղս, թէ քաղաքս, թէ յանցս ճանապարհաց եւ ոչ որ էր որ թաղեր գնոսա»:<sup>5</sup>

Նրա «Ժամանակագրությունը» հարուստ ու արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև XVII դարում թուրքական պետականության հիմքերը խարխլող ջալալիների շարժման վերաբերյալ, այն կարևոր աղբյուր է Թուրքիայի XVII դարի առաջին կեսի և հատկապես 30-ական թվականների իրադարձությունների՝ ենիչերիների ապստամբության, սուլթան Մուրադի դեմ դավադրության ու դրա ճնշման, կառավարման արատավոր բարքերի, արքունիքի հարաբերությունների և այլնի մասին:

1639թ. Հայաստանը հերթական անգամ բաժանվեց երկու բռնակալական պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև: Նրանցից յուրաքանչյուրն իր զավթած հատվածում հաստատել էր իր վարչատնտեսական ու սոցիալ-քաղաքական հարաբերությունները, որոնք իրենց բնույթով ըստ էության շատ չէին տարբերվում միմյանցից:<sup>6</sup> Երկուսում էլ իշխում էին ռազմաֆեոդալական անիշխանությունն ու անօրինականությունը, կամայականությունն ու բռնությունը:

XVII դարը նշանակալից քաղաքական աղետալի անցքերի և խոշոր տեղաշարժերի փոթորկահույժ մի ժամանակաշրջան էր: Միաժամանակ այն նաև տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացման շրջան էր: Այդ իմաստով այն անվանվում է հարաբերական վերականգնման, վերակենդանացման դար, որին նախորդել էր ավերածությունների, սովի, գերեվարության մի հարյուրամյակ: Պատմաբան էին դուրս եկել երկու ասիական հզոր տերություններ՝ Սեֆյան Իրանն ու Օսմանյան Թուրքիան, որոնց միջև տասնամյակներ շարունակվող ռազմական գործողությունների ընթացքում ավերակվում էին Հայաստանի և հարևան երկրների ընդարձակ շրջաններ, իսկ բնակչությունը ենթարկվում կոտորածի և գերեվարության:<sup>7</sup>

Սեֆյանների և օսմանցիների բախումը նոր ուժով բռնկվեց XVII դարի սկզբին, երբ Իրանը, հասնելով տնտեսական ու քաղաքական որոշակի վերելքի, նոր թափ հաղորդեց իր պայքարին ընդդեմ վաղեմի թշնամու: Ռազմական գործողությունների թատերաբեմը կրկին Հայաստանն էր: Քաղաքական ու տնտեսական ծանր կացությունն իր կնիքն էր դնում կյանքի բոլոր բնագավառների վրա: Հայաստանում տիրում էր համատարած անկումային վիճակ, ոչ միայն նյութական, այլև մտավոր ոլորտներում: XVII դարի առաջին տասնամյակներից այդ պատկերը որոշ չափով փոխվում է, վերակենդանանում է հայ պատմագրությունը՝ ի դեմս Առաքել Գավրիիժեցու: Նման պայմաններում Գավրիիժեցի պատմագրի ծնունդը օրինաչափ ու անհրա-

<sup>2</sup> Վ. Բ ա յ բ ու ը յ ա ն, Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ., Եր. 1974, էջ 67:

<sup>3</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, Գրվագներ Հայաստանի XIV-XVIII դդ. պատմագրության, Եր., 1984, էջ 60:

<sup>4</sup> Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Գարանաղցույ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղեմ, 1915, էջ 13 (այսուհետև՝ Գարանաղցի):

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 35-36:

<sup>6</sup> Հ. Մ ի բ գ ո յ ա ն, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 13-14:

<sup>7</sup> Լ. Գ ա ն ե ղ յ ա ն, Առաքել Գավրիիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Եր. 1978, էջ 9:

ժեշտ երևույթ էր և նրա «Պատմությունը» օրգանական շարունակությունն էր սկսված նորոգության:<sup>8</sup> Նշված ժամանակաշրջանում հանդես եկան նաև այլ պատմիչներ ու ժամանակագիրներ, սակայն նրանց երկերը ո՛չ բովանդակությամբ և ո՛չ մանավանդ իրենց պատմագրական արժանիքով չունեցան Դավրիժեցու երկի մեծությունը: Դավրիժեցին եղավ հայ միջնադարյան հարուստ պատմագրության վերջին խոշոր երախտավորը: Պատմիչը հարուստ տեղեկություններ է հաղորդում մասնավորապես Իրանի պատմության վերաբերյալ: Պատահական չէ, որ որոշ ձեռագրերում այս երկն անվանվում է «Պատմութիւն Պարսից թագավորացն»:<sup>9</sup>

Դավրիժեցու աշխատությունը հիմնականում նվիրված է Հայաստանի և հարևան երկրների /հատկապես Իրանի և Թուրքիայի/ քաղաքական պատմությանը: Հեղինակը մանրամասն տեղեկություններ է հաղորդում թուրք-իրանական ռազմական գործողությունների մասին: Այն կարևոր աղբյուր է նաև Պարսկաստանի և Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման, ինչպես նաև հասարակական-քաղաքական հիմնահարցերի հետազոտման համար: Դավրիժեցու երկը ստուգապատում աղբյուր է հատկապես նշված երկրների այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների ուսումնասիրության համար: Հանգամանորեն են ներկայացված պատերազմական գործողությունները և դրանց կործանարար հետևանքները Անդրկովկասյան ժողովուրդների համար:

XVII դարի պատմագիրներից է նաև Չաքարիա Քանաքեռցին, որն իր երեք մասից բաղկացած «Պատմագրությունը» սկսում է Արշակունիների իշխանության հաստատումից և հասցնում մինչև 1699թվականը: Շարադրված նյութը հավասարաբեռ է: Առաջին գլուխը բովանդակությամբ խիստ աղքատ է և պարունակում է բազմաթիվ փաստական սխալներ: Նրա գրքի հիմնական և արժեքավոր մասը XVII դարի պատմությունն է, որն այդ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար ուշագրավ նյութեր է պարունակում:

Նշված ժամանակաշրջանի Թուրքիայի և Իրանի պատմության ուսումնասիրության ոլորտում իր ուրույն տեղն ունի XVIII պատմագիր Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» երկը, որի էջերում հավաքվել ու շարադրվել են հարևան երկրների պատմության վերաբերյալ հայկական պատմագրական հուշարձաններում ամբարված բոլոր տեղեկությունները:<sup>10</sup>

XVII դարի արևմտահայ ազգային և հասարակական կյանքում մեծ դեր է կատարել հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան և գրող Երեմիա Չելերի Քյոմուրճյանը:<sup>11</sup> Քյոմուրճյանի պատմական երկերից ժամանակագրական առումով առաջինը «Պատմութիւն համառոտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն» աշխատությունն է, որտեղ տրված է Օսմանյան կայսրության 400 տարվա պատմությունը՝ սկսած հիմնադրումից, մինչև պատմագրի ապրած օրերը: Այն գրված է չափածո: Երկում շարադրված է Օսմանյան կայսրության կարևոր իրադարձությունների պատմությունը, նկարագրված են կայսրության վարած պատերազմները Արևմուտքում և Արևելքում: Արժեքավոր ու արժանահավատ նյութ է պարունակում XVI-XVII դարերում Թուրքիայում գոյություն ունեցող վարչակարգի, հարկային համակարգի, սուլթանների վարած ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ: Առանձնապես ընդգծված ձևով են տրված պարբերաբար կրկնվող զինվորական խռովություններն ու ապստամբությունները, բացահայտված են նաև դրանց պատճառները: Քյոմուրճյանը ցույց է տվել կայսրության ներքին քաղաքականության, արտաքին պատերազմների, քաղաքական, սոցիալ-տնտեսական ու պետական ամբողջ համակարգի ճգնաժամային վիճակը:

XVI դարի վերջին և XVII դարի սկզբին Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական հիմնական ուղղությունները, որ երևան էին եկել դեռևս Սուլեյման Ա-ի օ-

<sup>8</sup> Լ. Դ ա ն ե ղ յ ա ն, *Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր*, Եր. 1978, էջ 11:

<sup>9</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, *ձեռ. N 2271 էջ 214ա: /այսուհետև՝ Մատենադարան/*

<sup>10</sup> Ա. Գ ա ս պ ա ը յ ա ն, *Խաչատուր Ջուղայեցու աշխատությունը որպես Պարսկաստանի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր*, ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001, էջ 102-103:

<sup>11</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, *Նշվ.աշխ.*, էջ 210:

րոք, մնացել էին նույնը: Դրա հետևանքներն էին մինչև 1639թ. տևած գրեթե անընդմեջ պատերազմները Իրանի դեմ՝ առևտրական ճանապարհների, Անդրկովկասի, այդ թվում նաև Իրանի վրա վերահսկողություն սահմանելու համար:<sup>12</sup>

Շահ Արաս Ա-ն համբերությամբ սպասում էր քաղաքական հանգամանքների փոփոխությանը: Թուրքիայում սկսվել էր անիշխանության շրջան: Նման դրությունը փայտուն կերպով պարզաբանում է ականատես ժամանակագիրներից մեկը՝ Գրիգոր Դարբանդջին, «Եւ այդ ի վերանալ թուականութեան ազգիս մերոյ հայկազնի՝ ՌԽԴ (1595) մեռաւ սուլթան Մուրատն, որ քսան և մի տարի թագաւորեաց և նստաւ որդին իւր՝ Սուլթան Մուհամմատն, որ է այժմ ի մերում ժամանակի, որ իբրև զհայրն իւր չունի փոյթ և հոգ վասն աշխարհի շինութեան»:<sup>13</sup>

Ինչ վերաբերում է Իրանի արտաքին դրությանը, ապա այն հիմնականում առանձնանում էր նրանով, որ Շահ Արասը Թուրքիայի դեմ պատրաստվում էր պատերազմի նաև դիվանագիտական ճանապարհով և ամեն ջանք գործադրում էր դաշնակիցներ գտնելու և հակաթուրքական ռազմա-քաղաքական միություն ստեղծելու համար: Նշված ժամանակաշրջանում Սեֆյան պետության միջազգային դրությունը բարվոք էր, և նրա հարաբերությունները եվրոպական երկրների հետ բարեկամական էին:

Դեսպաններ փոխանակելով ուզբեկների, Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների (Իսպանիա, Պորտուգալիա, Գերմանիա, Իտալիա և այլն) հետ Շահ Արասը ձգտում էր նաև զարկ տալ արտաքին առևտրին: Այդ ասպարեզում Շահ Արասը առաջնորդվում էր եվրոպական երկրներին սիրաշահելու սկզբունքով՝ անվարան զիջումներ անելով և արտոնություններ շնորհելով այդ երկրների ներկայացուցիչներին:<sup>14</sup>

Եվրոպական պետություններն էլ ձգտում էին նման բարյացական վերաբերմունքն օգտագործել իրենց հեռագնա նպատակների իրականացման համար, մասնավորապես առևտրի և Իրանում կաթոլիկություն տարածելու ասպարեզում: Այսուհանդերձ, եթե առևտրի զարգացման ուղղությամբ Շահ Արաս Ա-ն հասավ որոշակի հաջողությունների, ապա հակաթուրքական միություն ստեղծելու ուղղությամբ նրա ջանքերն անցան ապարդյուն:

Շահ Արաս Ա-ի օրոք (1587-1629թթ.) Սեֆյան տերությունը մտավ զարգացման նոր փուլ և հասավ իր հզորության գագաթնակետին: Մակայն կենտրոնացված պետություն ստեղծելու և ֆեոդալական տրոհվածությունը վերացնելու խնդիրը Սեֆյան կառավարությանը չհաջողվեց լիովին իրագործել: Չնայած այս ամենին՝ Թուրքիայի դեմ պատերազմի նախօրյակին Շահ Արասը դեռևս հույսեր էր կապում Եվրոպայի հետ: Նա զգալի հաջողություններ ունեցավ հատկապես Անդրկովկասում, որի ժողովուրդները դժգոհ էին օսմանցիների վարած քաղաքականությունից և ապավինում էին պարսիկների աջակցությանը: Շահը սիրով օգտագործում էր նրանց դժգոհությունները իր ծրագրերի իրականացման համար, քանզի ընտրված պահը խիստ նպաստավոր էր:

Անշուշտ, պատերազմի հաջող ելքը կախված էր Թուրքիայի վիճակից, որն արդեն կանգնած էր քաղաքական ու տնտեսական ճգնաժամի շեմին:<sup>15</sup> Թուրքիայի ներքին ճգնաժամը հետևանքն էր նրա ռազմաավատական համակարգի քայքայման, որի նախանշանները երևան էին եկել դեռևս XVI դարի առաջին կեսին: Թուրքիան աստիճանաբար կորցնում էր նաև երբեմնի ռազմական հզորությունը և ռազմական գործողություններում սկսեց պարտություններ կրել: Օսմանյան կայսրությունը ծվատվում էր ներքին երկպառակությունների, կենտրոնախույս շարժումների, պալատական հեղաշրջումների, բանակում տեղի ունեցող խռովությունների պատճառով: Փաստորեն XVII դարի սկզբին, երբ Իրանը պատրաստվում էր Օսմանյան կայսրությունից վերստին հետգրավել իր զիջած տարածքները, վերջինս բարդ իրավիճակ էր սպրում և՛ ներքին և՛ արտաքին բնագավառներում:

Լուրջ նախապատրաստություններից հետո Շահ Արասն առանց սպասելու այլ պետությունների հետ դիվանագիտական բանակցությունների ընթացքին ու արդ-

<sup>12</sup> Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, *Թուրքիայի պատմության ուրվագծեր*, Եր., 1986, էջ 100:

<sup>13</sup> Դ ա ր ա ն ա ղ ց ի, էջ 13-14:

<sup>14</sup> Լ. Դ ա ն ե ղ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 52:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 53:



յունքներին, օգտվելով Թուրքիայի ներքին ու արտաքին ծանր վիճակից, չեղյալ հայտարարեց 1590թ պայմանագիրը և սկսեց պատերազմը:<sup>16</sup>

Երեմիա Քյոմուրճյանը խոսելով Շահ Աբասի արշավանքների մասին գրում է.  
 Հույ կըլայի Միհրիպանի  
 գայ Շահ Ապաս՝ զգօրս առաքեալ,  
 Երկու հազար անձինք Պարսից  
 յայն վայր ի մարտըն կոտորեալ:<sup>17</sup>

Դեռ մինչ 1590թ հաշտությունը թուրք-իրանական պատերազմների ընթացքում քայքայվել էր անդրկովկասյան երկրների տնտեսությունը, կասեցվել արտադրողական ուժերի զարգացումը և հասարակական կյանքի առաջընթացը: Ներխուժելով Անդրկովկաս և Ատրպատական, թուրք զավթիչները մեծ վնասներ էին պատճառում խաղաղ բնակչությանը...«Սուլթան Մուրատս առաքեաց բազում գօրս ի վերայ Պարսից աշխարհին և էառ զԹարվեզ և զԵրևան, զԳանջայ, և զԱրշար, և զՇամախի, մինչ ի դուռն Ալանաց...է, /30/ ատուր ճանապարհ զլայնութիւնն և զերկայնութիւն տիրեաց աշխարհացն, ժե /15/ ամ հեծելակոխ եղեալ ի սովու և ի սրոյ բազումք երկիր ատերեցան...» հաղորդում է Դավրիժեցին:<sup>18</sup>

Ժամը հասունացել էր Իրանի համար՝ իրագործելու իր վաղեմի ծրագիրը, Թուրքիայից ետ խլելու իր զիջած տարածքները՝ Անդրկովկասյան երկրներն ու Ատրպատականը, կամ ինչպես պարսիկներն էին արտահայտվում՝ «ժառանգական հողերը».  
 «...Ինքնակալ թագաւոր բազում գօրօք եկեալ զհայրենի աշխարհն իւր խնդրէ...»:<sup>19</sup>

Իրանական պատմագրության պաշտպանած այս տեսակետը միտում ունի արդարացնելու Շահ Աբասի արշավանքների նվաճողական բնույթը:<sup>20</sup> Սակայն «ժառանգական հողերի» դրույթը միակը չէր այդ արշավանքներն արդարացնելու հարցում: Առաջ է քաշվում նաև իրանաթուրքական հակամարտությունների գործոնը և փորձեր են արվում այդ արշավանքները ներկայացնել իբրև «փրկություն» տեղի ժողովուրդների համար: Դավրիժեցու տվյալները հնարավորություն են ընձեռում հերքելու նման միտումները՝ ընդգծելով այդ արշավանքների զավթողական բնույթը և ավերիչ դերը: Մեր կարծիքով հիմնականը և էականը այդ երկրների բախման մեջ Անդրկովկասում և Ատրպատականում տնտեսական ու քաղաքական գերիշխանության հասնելու ճգնաժամն էր:

Շահ Աբասը 1603թ. նոր պատերազմ սկսեց: Ամենից առաջ հարձակման անցավ Ատրպատականի վրա՝ ունենալով համապատասխան պատրվակներ, ինչպես օրինակ՝ թուրքերի կողմից շրջակա բնակավայրերը ասպատակության ու կողոպուտի ենթարկելը և այլն: Իրանական բանակի անակնկալ հարձակումն ասպահովեց նրա հաջողությունը: Այս հարձակումով սկսվեց թուրք-իրանական պատերազմների երրորդ շրջանը.« ...Բնավ ոչ զիտացեալ զօրքացն Օսմանցոց զգալն Պարսից, քանզի ոչ թէ ի բազում, այլ ի սակաւ ատուրս եհաս ի Թարվեզ»:<sup>21</sup> Իրոք արշավանքն իրականացվել է խիստ գաղտնի.«Իհարկե, այս հարցում պետք է զգույշ լինել, որպեսզի... այս բոլորը խիստ գաղտնի պահվի, և հաղթական դրոշների առաջանալու մասին օսմանցիք տեղեկություն չունենան»:<sup>22</sup>

Ինչպես նշում է Դավրիժեցին, շահի բանակը սկզբում արշավեց Թավրիզի վրա, բայց տեսնելով, որ քաղաքի կայազորը Ալի փաշայի զլխավորությամբ հարձակվել է Սալմաստի վրա, թողեց Թավրիզը և ուղղվեց դեպի Սալմաստ: Տեղեկանալով պարսից զորքի հարձակման մասին, օսմանցիներն իսկույն « ...թողեալ զպատերազմն բերդին,

<sup>16</sup> Հ. Ն ա ջ ա ռ յ ա ն, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Եր., 1961, էջ 199:

<sup>17</sup> Երեմիա Քյոմուրճյան, Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, Եր., 1982, էջ 212:

<sup>18</sup> Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 568 (այսուհետև՝ Դավրիժեցի)

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>20</sup> Լ. Դ ա ն ն ղ յ ա ն, նշվ.աշխ., էջ 65:

<sup>21</sup> Դ ա վ ի ժ ե ջ ի, էջ 18:

<sup>22</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, կազմեց՝ Հ. Փափագյան, պր.2, Եր. 1959, էջ 80:

դարձան և եկին մերձ ի գիւղն Սօֆիան».<sup>23</sup> Դա իհարկե, չի նշանակում, թե շահն ազատ թողեց քաղաքը: Հիշենք, որ շահի առաջնահերթ խնդիրը Թավրիզի գրավումն էր:

Սոֆիանի դաշտում՝ Թավրիզից ոչ շատ հեռու, իրանական բանակը թուրքերին պարտության մատնեց: Այի փաշան անձնատուր եղավ: Սոֆիանի ճակատամարտը, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 29-ին, մանրամասնությամբ նկարագրված է ինչպես Դավրիժեցու մոտ, այնպես էլ պարսկական ու թուրքական աղբյուրներում:<sup>24</sup>

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ այս ճակատամարտը, որտեղ «յանդուզն բախմամբ» իրար դեմ ելան թշնամի բանակները<sup>25</sup> կարևոր նշանակություն ունեցավ ռազմական հետագա գործողությունների ծավալման ուղղությամբ: Այս հաղթանակը կտրուկ բարձրացրեց Շահ Աբասի հեղինակությունը: Այնուհետև շահը կրկին շարժվեց Թավրիզ և կարճատև պաշարումից հետո 1603թ. հոկտեմբերի 21-ին գրավեց այն: Սակայն աղբյուրների տվյալների համեմատությունից այժի է գարնուն այն, որ միևնույն իրադարձությունները նկարագրված են տարբեր լույսի տակ՝ պայմանավորված աղբյուրի հեղինակի դիրքորոշմամբ:<sup>26</sup> Միայն Դավրիժեցին է, որ անկողմնակալ կերպով նկարագրում է տիրող մթնոլորտը և տալիս իրադարձությունների առավել կարևոր դրվագները:

Վիճահարույց է այն հարցը, թե Թավրիզի գրավումը նախորդե՞լ է Սոֆիանի ճակատամարտին, թե՞ հաջորդել: Իրականում Թավրիզի գրավումն ընդմիջվել է Սոֆիանի ճակատամարտով, որը հաջորդել է քաղաքի և նախորդել նրա բերդի գրավմանը: Դավրիժեցին նշում է, որ շահը Թավրիզ գալով. «եթող զքաղաքն» և զնաց օսմանցիների դեմ պատերազմելու Սոֆիանում:<sup>27</sup> Դա իհարկե չի նշանակում թե շահն ազատ թողեց քաղաքը, քանի որ շահի առաջնահերթ խնդիրը Թավրիզի գրավումն էր: Քաղաքն անցնում է պարսիկների ձեռքը, որոնք տնօրինում էին քաղաքի անցուդարձը: Պարսիկները փայլուն ընդունելություն են գտնում Թավրիզի բնակչության կողմից, «ոչինչ դժվարութիւն ել ընդ առաջ նոյն արշաւանացն նորա,- գրում է Հ. Տեր-Հովհանյանը, հենվելով Դավրիժեցու տվյալների վրա. «...մտեալ Շահ-Աբասայ ի Դարեժ յետ հնազանդեցուցանելոյ զքաղաքն, փութացաւ յօգնութիւն Դազիխան ամիրայիս, և ի դաշտին Սոֆիանու պատերազմաւ հանդիպեալ Ալիփաշային՝ յաղթեաց նմա»<sup>28</sup>

Թավրիզում եղած ժամանակ շահն Ամիր-Գունա խանին ուղարկում է Գանձակ՝ կանխելու համար այնտեղից սպասվող ամեն մի վտանգ: Խանն այդ շրջանը հրո ճարակ դարձրեց և մեծ թվով մարդկանց կոտորեց: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Չաքարիա Քանաքեռցին դրվատանքով է խոսում Ամիր-Գունա խանի մասին, ներկայացնում նրան դրական գծերով: Ըստ նրա խանը քաջ և անվեհեր մի մարդ էր, պատերազմների մեջ արի և անահ, եռանդուն շինարար էր և հայ ժողովրդի բարեկամ: Արարատյան երկրի բնակչության (հայերի-Ա.Գ.) թիվը ավելացնելու համար այս խանը արշավանքներ էր կազմակերպում Հայաստանի թուրքահայատակ գավառներ և այդտեղից մեծ քանակությամբ բնակիչներ բերում ու բնակեցնում այստեղ:<sup>29</sup>

Ամիր-Գունա խանին հանձնարարված էր կազմակերպել Երևանի նահանգի բնակչության գաղթը: Խանը շահագրգռված չէր ամայացնելու իր իշխանության ներքո գտնվող երկիրը, որն իր հայ բնակչությամբ մեծ եկամուտներ էր բերում:

Հայկական վաճառաշահ քաղաք Ջուղայի բնակիչները, որոնք իրենց տնտեսական ու այլ շահերով կապված էին Սեֆյան տերության հետ, ապստամբեցին օսմանցիների դեմ, վճռեցին թուրքական կայսրոսին և չտեսնված հանդիսավորությամբ ու հյուրասիրությամբ ընդունեցին Իրանի շահին՝ նրան հանձնելով քաղաքի արծաթյա բանալիները: Շահ Աբասը տնտեսական ու քաղաքական նկատառումներով շատ բարյացկամ վերաբերվեց ջուղայեցիներին և հովանավորեց նրանց: Խոջաների կողմից

<sup>23</sup> Դ ավրի ժեցի, էջ 19:

<sup>24</sup> Լ. Դ անեղյանն, նշվ. աշխ., էջ 69-70:

<sup>25</sup> Դ ավրի ժեցի, էջ 19:

<sup>26</sup> Լ. Դ անեղյանն, նշվ. աշխ., էջ 70-71:

<sup>27</sup> Նույնը:

<sup>28</sup> Հ. Տեր-Հովհանյանի «Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, էջ 12:

<sup>29</sup> Չ աքարիա Ս աբասի Պատմագրութիւն, հ. 1, Վաղարշապատ, 1870, էջ 45-47 (այսուհետև՝ ՉաքարիաՍաբկավագ)

Շահ Աբասին ցույց տված նման ընդունելությունը պատահական չէր: Աբասի հովտի Ջուղա, Ագուլիս, Մեղրի, Շոռոթ և այլ ավաններ ու գյուղեր, իբրև «խաս» (արտոնյալ, չհարկվող - Ա. Գ.) վայրեր, ազատվում էին այն տուրքերից, որ հարկադրաբար վճարում էին թուրքական իշխանություններին: Թուրքերի օրոք հայ ծնողները պարտքերի հատուցման համար հարկադրված էին վաճառել նաև իրենց զավակներին:<sup>30</sup> Պատահական չէ, որ Մատենադարանի ձեռագրերից մեկում շահի անունը հիշատակող մի հեղինակ նշում էր. «Երանի թե թագաւորեալ ի վերա մեր գնա տեսանէինք»<sup>31</sup>: Շահը մեկն էր այն արևելյան բռնակալներից, որոնք մեծ ժողովրդականություն էր վայելում նրանով, որ նվաճումները միաձուլում էին շինարարական աշխատանքների հետ. կարգի էր բերում հարողակցության ուղիները, կառուցում էր կամուրջներ և հովանավորում էր արհեստն ու առևտուրը:<sup>32</sup>

Նախքան Թավրիզից մեկնելը Շահ Աբասը Ջիլֆիդար խանին մեծ զորքով ուղարկեց Նախիջևանը գրավելու: Օսմանցիները սկզբում փորձեցին դիմադրել, սակայն, երբ իմացան, որ շահը արդեն հասել է Ջուղա, թողեցին քաղաքն ու հեռացան: Թուրքերը դարձյալ մահանջեցին, այս անգամ դեպի Երևան: Քաղաքի տեղական բնակիչները, նաև կայազորի զինվորները, հայատակվեցին պարսիկներին և պատրաստակամություն հայտնեցին ծառայելու շահին:<sup>33</sup>

Մի շարք աղբյուրներ պնդում են, որ շահը, Նախիջևանը գրավելով, կոտորածի ու կողոպուտի է ենթարկում այն:<sup>34</sup> Նման տեղեկությունը չի հաստատվում Դավրիժեցու կողմից և հավանաբար միակողմանի բնույթ է կրում: Նախիջևանը խաղաղ կերպով հանձնելու փաստին հանդիպում ենք նաև Իսքանդար Մունշու մոտ և թուրքական աղբյուրներում:<sup>35</sup>

Նախիջևանից հեռացած թուրքական զինվորները կենտրոնացան Երևանում, որը օսմանցիների գլխավոր ռազմական հենարանն էր և պատրաստվեցին լուրջ դիմադրության: Ինչպես նշում է Առաքել Դավրիժեցին, շահը Երևան հասնելուն պես պաշարում է բերդը: Այստեղ նա ձեռնամուխ է լինում զորքի համախմբմանը՝ Արարատյան երկրի գյուղերից մեծ քանակությամբ բնակիչների միացնելով իր բանակին: «Ե ի ժամ պատերազմին, յորժամ երիշ (յարձակումն) առնէին և կամ զսիրայն ի վեր քշէին, զքրիստոնեայն յառաջ խաղաղուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն հայոց յերկուց կողմանց՝ յառաջուստ յօսմանցուց և յետուստ ի Պարսից»:<sup>36</sup> Շահ Աբասը նախապես հոգացել էր բանակի կարիքները և մերթ մերթ փորձում էր նաև բանակցություններ վարել օսմանցիների հետ, բերդին խաղաղ կերպով տիրելու համար:<sup>37</sup> Իսկ Երևանի բնակչությունը բարյացակամ էր տրամադրված (ինչպես և պետք էր սպասել) և հանդիսավոր ընդունելություն է ցուցաբերում շահին:

Երևանում գտնվող թուրքական զորքը ամիսներ շարունակ համառ դիմադրություն էր ցույց տալիս: Բերդի պաշարման ժամկետների հարցում նկատելի են տարածայնություններ տարբեր աղբյուրների հաղորդումների մեջ: Ըստ Դավրիժեցու՝ պաշարումը տևել է ութ ամիս և միայն իններորդում է բերդը հանձնվել: Նույնի մասին է վկայում նաև մի անանուն ժամանակագրությունը, որի համաձայն՝ շահը մեծ բանակով եկավ Արարատյան երկիր, «պաշարեաց զղղեակն մոցա ութ ամիս և էառ զնայ»:<sup>38</sup> Օտարալեզու աղբյուրներում նշվում է նաև վեց կամ յոթ ամիս տևած պաշարման մասին:<sup>39</sup> Աղբյուրների նման տվյալների տարբերությունների հետևանքով հետազոտություններում ևս այս հարցի կապակցությամբ տարբեր ժամկետներ են նշվում՝ 6-9 ամիս:

<sup>30</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Եր., 1972, էջ 95:

<sup>31</sup> Մատենադարան, ձեռ. N 2845, էջ 267 ր:

<sup>32</sup> Լ և ո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 1, Եր., 1969, էջ 224-225:

<sup>33</sup> Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 21:

<sup>34</sup> Հ. Ն ա ջ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 202:

<sup>35</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց՝ Ա. Մաֆրաստյան, հ. Ա, Եր., 1981, էջ 71:

<sup>36</sup> Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 26:

<sup>37</sup> Ա. Մ ա ֆ ր ա ս տ յ ա ն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 87-89:

<sup>38</sup> Վ. Հ ա կ ո ր յ ա ն, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 1 Եր., 1954, էջ 179:

<sup>39</sup> Ա. Մ ա ֆ ր ա ս տ յ ա ն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 89:

Ռազմական գործողությունները գնալով ավելի լայն չափեր էին ընդունում և ընդգրկում էին հսկայական տերիտորիա: Թուրքական զորքերը, սակավաթիվ լինելով, գրեթե ամենուրեք անցան պաշտպանության և փակվեցին բերդերում: Նման վիճակը պայմանավորված էր Թուրքիայի ներքին ու արտաքին ծանր դրությանը: Նրա զորքերի մի մասը զբաղված էր ջալալիների ապստամբությունները և երբեմն ծագող զինվորական խռովությունները ճնշելու գործով: Այս մասին Գրիգոր Դարանաղցին գրում է. « Եւ այս սուլթան Մուհամմատիս անհոգութենէն երեկ Շահ Ապասն՝ պարսից թագաւորն, բազում աշխարհի բերդունայք եւ քաղաքունայք եւ բազում գաւառք ի մէկ տարոյն միջումն զամենքէ էառ՝ վասն անտէրունչ լինելով աշխարհացն, որ էր թվ. ՌՃԲ (1604)»: <sup>40</sup> Այժմ արդեն իրանական զորքերը վարժվել էին հաղթել թուրքերին և նրանցից չէին փախչում, ինչպէս առաջ: Թուրքական զորքն այնքան էր բարոյաբար, որ նրա առանձին զորամասեր ծառայության էին մտնում Շահ Աբասի մոտ:

9 ամիս համառորեն դիմադրելով պարսիկներին՝ Երևանի օսմանյան կայսրը 1604թ ամռանը ստիպված եղավ անձնատուր լինել: Դրանից հետո Շահ Աբասի հրամանով բերդը ավերվեց, հրկիզվեց ու հողին հավասարվեց: Երևանի գրավումը բավականին դժվարություններ է պատճառել պարսիկներին, հարկ է եղել համարել բանակը և անգամ ուժեղացնել հրետանին: Երևանը գրավելուց հետո շահը հնարավորություն տվեց քաղաքի բնակիչներին ու զինվորներին՝ որոշելու իրենց բախտը. ով կցանկանար կարող էր մնալ քաղաքում՝ շահի տիրապետության տակ, իսկ ով չէր ցանկանա, կարող էր հեռանալ: Թուրքական զինվորների մի մեծ խումբ (մոտ 5000 մարդ), շահի թույլտվությամբ, Մուհամմեդ փաշայի գլխավորությամբ, հեռացավ իր հայրենիքը: <sup>41</sup> Այս փաստը հաստատում է նաև Չաքարիա Սարկավազը և նշում թե հետո ինչպիսի նենգությամբ են վարվում պարսիկները թուրքերի նկատմամբ. « Եւ նոքա առին ցգէշն Նուրթուզայ փաշային, և ելին ի գնալ: Իբրև գնացին կէս ատուր ճանապարհ, նենգատուր ազգն Պարսից գնացին զկնի նոցա, և կոտորեցին զնոսա, և յափշտակեցին զինչսն: <sup>42</sup>

Հակառակ Սեֆյան Իրանի հաջողությունների՝ Բարձր Դուռը ծանր ճգնաժամի մեջ էր: Այդ օրերին մահացած սուլթան Մուհամմադին (1595-1604) փոխարինել էր նրա մանկահասակ որդին՝ Ահմեդը: Երկրում շարունակվում էին երկպառակությունները, մի շարք նահանգներում իշխանությունը փաստորեն գտնվում էր ջալալիների ձեռքում: Այս ամենը, անշուշտ, խանգարում էր հակառակորդի դեմ անհրաժեշտ ուժեր կենտրոնացնելուն, նաև Երևանի բերդում պաշարված թուրքական զորքերին որևէ օգնություն ցուցաբերելուն:

Խոսելով բերդի հանձնման գործում վերոհիշյալ հանգամանքների խաղացած դերի մասին, Առ. Դավրիժեցին նշում է նաև օսմանյան զորքի պարտության օրյեկտիվ պատճառները, կապելով դրանք երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին դրության հետ: <sup>43</sup> Պարսիկների հաղթանակների մեջ, անտարակույս, իր զգալի դերն է ունեցել նաև Կախեթի Ալեքսանդր Բ և Քարթլիի Գեորգի Ժ թագավորների ցույց տված օգնությունը: <sup>44</sup>

Երևանի գրավմամբ ապահովելով իր թիկունքը՝ Շահ Աբասը շարժվեց դեպի Կարս և պաշարելով բերդը, շատ չանցած գրավեց այն: <sup>45</sup> Այսպիսով Շահ Աբաս Ա-ի արշավանքի առաջին փուլն արդեն ցույց տվեց, որ «փրկարար» շահն իր հեռագնա ծրագրերն ունի: Անշուշտ, Երևանի գրավումով չի ավարտվում «Ժառանգական հողերի» խնդիրը, քանզի դեռ շատ շրջաններ՝ խոշոր քաղաքներով (Գանձակ, Շամախի և այլն) շարունակում էին մնալ թուրքական իշխանության ներքո:

<sup>40</sup> Դ ա ղ ա ն ա ղ ց ի, էջ 14:

<sup>41</sup> Ա. Մ ա Ֆ ռ ա ս տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 75: Դավրիժեցի, էջ 24-25; Միայն ի տարբերություն Փեչկիի՝ Դավրիժեցին գրում է, որ հեռացող զինվորների հետևից պարսկական ջոկատներ գնացին, որոնք ճանապարհին հարձակվելով նրանց վրա, մի մասին սպանեցին, իսկ մյուս մասին ցրելով՝ մեծ ավար բերեցին:

<sup>42</sup> Չ ա ք ա ղ ի ա Ս ա ղ կ ա վ ա գ, հ. Բ, էջ 12:

<sup>43</sup> Դ ա վ ը ի ժ յ ց ի, էջ 99-100:

<sup>44</sup> Լ. Մ ե լ ի ք ա ն ք - Բ ե կ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Եր., 1936, էջ 112, 139:

<sup>45</sup> В. Б а й у р т я н, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ер., 1969, стр. 10-11:

Մուրթան Ահմեդի գահ բարձրանալուց հետո առժամանակ հնարավոր եղավ դարեցնել արքունական երկպառակությունները և բանակ ուղարկել Իրանի դեմ՝ Սինան փաշա Ջոլայի-գադեի /Չիկալա/ գլխավորությամբ: Մա, շարժվելով դեպի արևելք, հասնում է Էրզրում, որտեղ համալրում ու կարգի է բերում բանակը և արշավում է ընդդեմ Շահ Աբասի:<sup>46</sup> Վերջինս իմանալով թուրքական մեծ բանակի առաջխաղացման մասին և հաշվի առնելով, որ ինքը չի կարող բաց ճակատամարտ տալ օսմանցիների հետ, որոշում է նահանջել:<sup>47</sup> Ահա այդ ժամանակ Շահ Աբասը հղանում է մի սարսափելի միտք: Նա որոշում է ամայացնել ու անապատի վերածել Իրանի և Թուրքիայի միջև ընկած Հայաստանի մի շարք նահանգներ ու շրջաններ, տեղահան անել ու Իրան գաղթեցնել նրանց բոլոր բնակիչներին: Այս միջոցառումը հետապնդում էր և՛ ռազմական, և՛ տնտեսական նպատակներ. ամայի ընդարձակ տարածություն ստեղծել արշավող թուրքական բանակի առջև ու դրանով դժվարացնել նրա պարենավորումը, իսկ հայ գաղթականությանը Իրան տեղափոխելով՝ նպաստել Իրանի տնտեսական կյանքի զարգացմանը:<sup>48</sup> Չնայած այս աննախընթաց ձեռնարկման շատ մեծ մասշտաբին և պարսիկների տրամադրության տակ եղած շատ կարճ ժամանակին, այնուամենայնիվ Շահ Աբասի նման արևելյան բռնակալին հաջողվեց իրականացնել իր հրեշավոր ծրագիրը:

Շուտով լուր ստացվեց, որ թուրքական բանակը հասել է Կարս: Շահ Աբասը հրամայեց արագացնել բռնագաղթը: Ջուղայի բնակիչներին ևս հավաքեցին Արաքսի ափը՝ դեպի Իրան բռնագաղթեցնելու համար: Ստեղծվեց լուրջ ու ծանր դրություն: Երբ իրանական բանակն արդեն Արաքսի ափին էր, օսմանյան բանակը հասավ Նախիջևան: Շահ Աբասը հրամայեց ոչ մի միջոցի առջև կանգ չառնելով գաղթականությանն անցկացնել Արաքսի հարավային ափ, քանի դեռ օսմանցիները չէին հասել: Այսպիսով, սկսվում է թուրք-իրանական պատերազմում հայության համար ամենաաղբերգական ու հրեշավոր միջադեպը, որպիսին երբևիցե տեղի է ունեցել պատմության մեջ:

Երբ թուրքական բանակը Սինան փաշայի գլխավորությամբ հասավ Արաքսի ափը, ժողովուրդը և իրանական բանակն անցել էին գետը և բավականին հեռացել, իսկ Շահ Աբասը մեկնել էր Թավրիզ: Սինան փաշան չհամարձակվեց հետապնդել իրանական բանակին:<sup>49</sup> ՌԻստի թուրքերը շարժվեցին Վան՝ այնտեղ ձմեռելու: Սինան փաշան դիմում է ջալալիների օգնությանը: Դարանաղցին նշում է, որ ջալալիների առաջնորդները համաձայնվում են Սինան փաշայի առաջարկին և դաշինք են կնքում նրա հետ պարսկական պատերազմին մասնակցելու համար:<sup>50</sup> Այստեղից պարզ երևում էր, որ թուրքական կառավարությունը լավ վիճակից չէ, որ դիմում էր ջալալիների օգնությանը:

Մակայն Թուրքիան չէր հրաժարվել իր նվաճողական ծրագրերից և մտադիր չէր անպատասխան թողնելու Իրանից կրած պարտությունը: 1606թ Ավստրիայի հետ համաձայնագիր կնքելով և նշանակալից ուժեր հավաքելով՝ նա փորձեց 1608-1612թթ. ընթացքում վերականգնել մինչև վերջին պատերազմը եղած դրությունը: 1610թ. օսմանյան մի մեծ բանակ ջալալիներին հաղթող մեծ վեզիր Մուրադ փաշայի հրամանատարությամբ կրկին արշավում է Սեֆյան տերության դեմ և հասնում Թավրիզ: Մուրադ փաշան հեշտությամբ մտնում է Թավրիզ, որովհետև իրանական բանակը հեռացել էր այդտեղից: Թուրքական աղբյուրների վկայությամբ՝ օսմանցիները ավերում ու հրդեհում են քաղաքը:<sup>51</sup> Իրականում, ըստ հայկական աղբյուրների, թուրքերը հեռանում են Թավրիզից և վերադառնում են Ամիդ (Դիարբեքիր)՝ ձմեռելու: Դրանից հետո, չցանկանալով շարունակել պատերազմը, Մուրադ փաշան և Շահ Աբասը սկսում են հաշտության բանակցությունները: 1612թ Իրանի և Թուրքիայի միջև, հօգուտ Սեֆյանների,

<sup>46</sup> Ղ. Փ ի ղ ա լ ե մ յ ա ն, Նշխարք պատմութեան հայոց, հ, 2, էջ 363, Մատենադարան, ձեռ. N 4515:

<sup>47</sup> Մատենադարան, ձեռ. N 510, էջ 74բ:

<sup>48</sup> Ա. Ա թ ղ ա հ ա մ յ ա ն, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Եր., 1964, էջ 251:

<sup>49</sup> Դ ա վ ղ ի ժ ե գ ի, էջ 56:

<sup>50</sup> Դ ա ղ ա ն ա ղ ղ ի, էջ 13:

<sup>51</sup> Ա. Ս ա Ֆ ղ ա ս տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 114:

կնքվեց հաշտության պայմանագիր:<sup>52</sup> Երկու երկրների միջև վերականգնվում են սուլթան Սուլեյմանի և շահ Թահմազի միջև որոշված սահմանները: Այլ կերպ ասած Բարձրը Գուռը ստիպված էր զիջել և տարածքային հարցերում համաձայնություն տալ 1555թ հաշտության պայմանագրի վերականգնմանը:

Այս անգամ պայքարն ավարտվեց Իրանի հաղթանակով, և չնայած 1612թ. հաշտությունը միառժամանակ վերջ տվեց արյունահեղությանը, բայց հիմնովին չլուծեց Թուրքիայի և Իրանի միջև գոյություն ունեցող հակասությունները: 1603-1612թթ պատերազմը (ինչպես և թուրք-իրանական մյուս պատերազմները) անսահման աղետներ պատճառեցին հայ ժողովրդին: Այսուհանդերձ վերոհիշյալ հաշտությունը նաև բարեբախտություն էր նրա համար, որովհետև հնարավորություն էր տալիս թեկուզև մասամբ ապաքինելու իր խոր վերքերը:

## ОСВЕЩЕНИЕ ТУРЕЦКО-ИРАНСКИХ ОТНОШЕНИЙ В НАЧАЛЕ XVII В АРМЯНСКИМИ ИСТОЧНИКАМИ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Гаспарян* \_\_\_

Основные вопросы истории Османской Турции и Сефевидского Ирана нашли свое отражение исключительно в трудах армянских историков. Эти первоисточники отличаются не только тем, что включают очень объемный материал по истории двух соседствующих государств, но и тем, что содержат достоверную и объективную информацию.

В XVI-XVII веках между Турцией, возглавляемой султаном, и Ираном, под предводительством шаха, шла напряженная военно-политическая борьба за гегемонию на Ближнем и Среднем Востоке.

Аракел Даврижеци, Григор Даранагеци, Закариа Канакерци и другие армянские историки приводят достоверные данные касательно этой эпохи. Армянские историки относились к приводимым фактам с осторожностью, проверяя их достоверность в сравнении с иноязычными источниками и даже подвергая их определенной критике.

-

<sup>52</sup> Վ. Բալրուրդյան, *Իրանն այսօր*, Եր., 1999, էջ 121:

ԱՐԵՎՏՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ  
ՇՈՐԱԳՅԱԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ (ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿ) 1829-1831թթ.

Թուրքմենչայի (1828թ. փետրվարի 10/22) և Ադրիանապոլսի (1829թ. սեպտեմբերի 2/14) հաշտության պայմանագրերը լայն իրավունք ընձեռեցին քրիստոնյաներին արտագաղթելու Պարսկաստանից և Թուրքիայից: Չանգվածային այդ գաղթերը հիմնովին փոխեցին ոչ վաղ անցյալում Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը և իրենց կազմակերպման և իրականացման լուրջ թերություններով հանդերձ, մեծապես նպաստեցին Արևելյան Հայաստանի տարածքի վրա հայահավաքման գործին:

Հայ և ռուս պատմագիտական գրականության մեջ ինչպես պարսկահպատակ հայության, այնպես էլ արևմտահայության 1828-1831թթ. ներգաղթերի հարցերը ուսումնասիրված են բավականին խորը: Դեռևս մինչխորհրդային շրջանում այդ իրադարձությունների նկատմամբ իրենց վերաբերմունքն են դրսևորել Ե. Գեղամյանցը, Գ. Աղանյանը, Ալ. Երիցյանը, Եփրեմ Մեթր, Վ. Պոտտոն, Ս. Գլինկան, Կ.Բորոզդինը, Ն. Ֆլորովսկին<sup>1</sup>, խորհրդային և հետխորհրդային շրջաններում՝ Ա. Մելքոնյանը, Հ. Մուրադյանը, Ե. Մանուկյանը, Կ. Հովհաննիսյանը, Ն. Թավակալյանը և հատկապես Մ. Դարբինյանը<sup>2</sup>: Եվ այդուհանդերձ որոշ հարցեր և այդ թվում Արևելյան Հայաստանի տարածքում ըստ զավատների և առանձին բնակավայրերի գաղթականների տեղաբաշխման խնդիրները բավարար ուսումնասիրված համարել չի կարելի: Հատկապես գոհացուցիչ չէ Հայաստանի հյուսիսային շրջաններում և մասնավորապես Շորագյալի գավառի (Արևելյան Շիրակ) տարածքում գաղթականության տեղաբաշխման անչափ հետաքրքիր ու կարևոր խնդրի քննության մակարդակը, ինչին էլ փորձ ենք անում հնարավորին չափ մանրամասնորեն անդրադառնալ սույն հոդվածի սահմաններում՝ փորձելով բացահայտել ու մեկնաբանել նաև այն բացթողումներն ու թերությունները, որոնք ի հայտ եկան գաղթականությանը գավառում տեղաբաշխելու գործընթացի մեջ:

<sup>1</sup> Ե.Գ. Ե ղ ա մ յ ա ն ց, *Կարասյետ արքեպիսկոպոս*, «Փորձ», Տիֆլիս, 1876, N 1; Նույնի, *Պատմական քաղվածքներ*, պրակ 3, մաս 1, Բարսո, 1909; Գ.ք.Աղանյանց, *Կարևո գաղթը (1829-1830)*, Թիֆլիս, 1891; Նույնի, *Կարևո գաղթը*, «Արձագանք», Թիֆլիս, 1899, N 11; Ալ. Երիցյան, *Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում*, հ. Ա, Թիֆլիս, 1894; Մ.Կարասյետյան, *Եփրեմ Մեթր արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին*, «Պատմա-բանասիրական հանդես»(այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1974, N 2; В.Потто, *Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях*, т.3, выпуск 4, СПб., 1887; С. Глинка, *Описание переселения армян в пределах России*, М., 1831; Նկարագիր գաղթականության հայոց ի Պարսկաստանի ի Ռուսաստան, Մոսկվա, 1832; К. Бороздин, *Переселенцы в Закавказье*, СПб., 1891; *Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении*, ч. 2, СПб., 1836.

<sup>2</sup> Ա. Մ Ե լ թ ո ն յ ա ն, *Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին*, պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Եր., 1994; Հ. Մուրադյան, *Կարսի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի առաջին երեսնամյակին*, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 2001; Ե. Մանուկյան, *Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թթ.-ի սկզբներին*, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991; Կ.Հովհաննիսյան, *Պարսկահայերի գաղթը և Ներսես Աշտարակեցին*, *Աշխատություններ Հայաստանի պատմության Պետական բանգարանի*, Եր., 1975, N 4; Н. Тавакаляна, *Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России*, ՊԲՀ, Եր., 1976, N 3; Մ.Դարբինյան, *Արևմտահայերի 1829-1830 թթ.-ի գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ*, ՊԲՀ, Եր., 1974, N 2; Նույնի, *Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1829-30թթ. գաղթի պատմությունից*, «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), Եր., 1973, N 2; Նույնի, *Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830թթ. գաղթի վերաբերյալ*, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1973, N 2; Նույնի, *Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг.*, ԲՀԱ, Եր., 1977, N 3:

1828-1831թթ. ընթացքում ռուս-պարսկական, ապա նաև ռուս-թուրքական սահման անցան և Ռուսաստանի հովանավորության տակ թուրք-պարսկական բռնակալների լծից ազատվեցին ընդհանուր առմամբ ավելի քան 20606 ընտանիքներ (8249 ընտանիք պարսկահայատակ հայեր և 12357 ընտանիք արևմտահայեր) կամ շուրջ 125000 մարդ, որոնց որոշակի քանակություն հաստատվեց Արևելյան Շիրակում:

Սակայն գավառի բնակավայրերում գաղթականների տեղաբաշխման խնդրին վերաբերող պատմական աղբյուրները, ցավոք, սակավ ու թերի են: Եղածն էլ պայմանականորեն բաժանել ենք երկու խմբերի: Առաջին խմբին պատկանող աղբյուրներում («Արևելյան մամուլ»<sup>3</sup>, Ս. Ջալալյան<sup>4</sup>, Հ. Էփրիկյան<sup>5</sup>, Ղ. Ալիշան<sup>6</sup>, «XIX դարակեսի եկեղեցական չափաբերական մատյաններ»<sup>7</sup>, մասամբ նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»<sup>8</sup>) կան միայն աշխարհագրական տեղեկություններ, այսինքն նշվում է գաղթականների որտեղից լինելն ու Շորագյալի գավառի որ գյուղում հաստատվելը. այսպես օրինակ՝ Կարսի փաշայության Ինճե-Սու գյուղից Շորագյալի գավառի Դութնի-Դըշլաղ գյուղ կամ Էրզրումի փաշայության Ներքին Բասենի Պատիճվան գյուղից Շորագյալի գավառի Իլիսիաբի գյուղ<sup>9</sup> և այլն: Բայց նմանօրինակ կոնկրետ նշումներ կան Շորագյալի գավառի 76 գյուղերից միայն 34-ում հաստատված գաղթականների մասին: Եվս 32 գյուղերում տեղավորվածներին անդրադառնալիս այդ նույն աղբյուրները բաց են թողնում գաղթականների որտեղից լինելու մասին մանրամասները և ուղղակի նշում՝ Արևմտյան Հայաստանի այս կամ այն փաշայությունից Շորագյալի գավառի այս կամ այն գյուղ. օրինակ՝ Էրզրումի ու Կարսի գյուղերից Շորագյալի գավառի Օրթա-քիլիսա գյուղ<sup>10</sup> և այլն: Իսկ ինչ վերաբերում է գավառի մնացած 10 գյուղերին, ապա սրանցից միայն մեկը՝ Թաթարական Գոլգաղարան, չի համարվել գաղթականներով, մինչդեռ մնացած ինը՝ Դուլիջանը, Եսաուլը, Փալուքլին, Մեծ Քեթին, Շիշթափան, Դարբանդը, Դըրխ-Դագիրմանը, Թափառլին և Երրորդ Արդիվալին ունեցել են գաղթականների իրենց բաժինը, բայց նույն աղբյուրների թերության պատճառով անհնարին է պարզել, թե Արևմտյան Հայաստանի որ շրջաններից էին սրանք:

Երկրորդ խմբին պատկանող աղբյուրներն արխիվային նյութեր են կամ այսպես կոչված՝ «*О турецких переселенцах*»<sup>11</sup> սովորածավալ աշխատությունը, որն ի հակադրություն վերը նշվածների՝ շրջանցում է արևմտահայ գաղթականների որտեղից լինելու և Շորագյալի գավառի որևէ գյուղում հաստատվելու կարևորագույն հարցը՝ ներկայացնելով միայն թվային տվյալներ, այն էլ՝ ոչ միշտ և ոչ լրիվ: Բանն այն է, որ պետական-պաշտոնական փաստաթուղթ ճանաչվող այս աշխատության մեջ («*О турецких переселенцах*») տեղ գտած բացթողումների պատճառով է, որ չենք կարող կոնկրետ նշել, թե Արևմտյան Հայաստանի որ շրջաններից և մանավանդ որ գյուղերից կամ քաղաքներից ինչ թվով գաղթականներ են տեղավորվել Շորագյալի գավառի այս կամ այն բնակավայրում: Այսպես, ըստ առաջին խմբի աղբյուրների, Պարսկաստանից 1828թ.-ին Արևելյան Հայաստան անցած գաղթականների մի խումբ՝ շուրջ 660 ընտանիք, գաղթելով առանց պետական օգնություն ու փաստաթղթեր ստանալու, հաստատվեց ոչ թե գաղթականական կոմիտեի կողմից նախօրոք ընտրված վայրերում՝ Երևանի ու Նախի-

<sup>3</sup> Տեղեկագրական պատասխիկներ. Արևելյան մասն Շիրակայ, «Արևելյան մամուլ», Չմիտնիա, 1898-1899:

<sup>4</sup> Ս. Ջ ա լ ա լ յ ա ն, Գանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տիֆլիս, 1842-1858:

<sup>5</sup> Հ. Է փ ը ի կ յ ա ն, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա-Բ, Վենետիկ 1903-1907:

<sup>6</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Վենետիկ, Ս. Ղազար, 1881:

<sup>7</sup> ՀՀ ՊԿՊԱ ֆոնդ 47, ցուցակ 1, գործ 659-663, 859, 860, 863, 865, 920-923, ցուցակ 2, գործ 1, 18, 20-23, 37, 39, 46-48, 69, 70, 73-75, 79, 81-83, 89-92, 98, 102, 103, 107-115, 120, 121, 128-135, 138-140, 146-150, 153-158, 195, 201, 225, 237, 415, 516, 530, 621, 626, 630, ցուցակ 3, գործ 199, ցուցակ 6, գործ 37, 59, 119, 152, 167, 179, 248:

<sup>8</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Հակոբյան, Ստ. Մեղիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 1-4, Եր. 1986-1991:

<sup>9</sup> Հ. Է փ ը ի կ յ ա ն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 68:

<sup>10</sup> «Արևելյան մամուլ», թիւ 6, 15 մարտի, Չմիտնիա, 1899, 29-րդ տարի, էջ 239:

<sup>11</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86:



ջլանի նախկին խանությունների ու Ղարաբաղի տարածքում, այլ հասան մինչև Վրաստան, իսկ նրանց ոչ մեծ մասը<sup>12</sup> հաստատվեց նաև Շորագյալի գավառի երեք գյուղերում՝ Փոքր Ղարաքիլիսայում<sup>13</sup>, Մեչխոլիում<sup>14</sup> և Աղքիլիսայում<sup>15</sup>: Բայց թե կոնկրետ քանի ընտանիք տեղավորվեց նշված երեք գյուղերում, պարզելն անհնար է: Պատճառն հետևյալն է. նշված դեպքերից ընդամենը մեկ-երկու տարի անց սկսվում է թուրքահայերի գաղթը, որի հետևանքով Շորագյալի գավառի նաև վերոհիշյալ երեք գյուղերում, հաստատվում են մեծ թվով կարսեցիներ, էրզրումցիներ, բայազետցիներ: Եվ նորից առաջ է գալիս նույն հարցը՝ քանի ընտանիք կամ քանի շունչ էին նորեկները: Պետական պաշտոնյաները, որոնք կարգված էին հսկելու արևմտահայ գաղթականների տեղավորման և հաշվառման գործընթացը, և որոնց ներկայացրած նյութերի հիման վրա հետագայում կազմվել են «*О турецких переселенцах*» մատյանները, փաստորեն մեծապես թերացել են իրենց պարտականությունների կատարման մեջ և Թուրքիայից գաղթած ու Շորագյալի գավառի գյուղերում բնիկ շորագյալցիների և պարսկահպատակ հայ գաղթականների հետ հաստատվածներին տարբերակված (առանձին-առանձին) հաշվելու փոխարեն տվել են մեկ ընդհանուր թվային տվյալ: Այսպես, օրինակ՝ վերոհիշյալ փաստաթուղթն իրագրելում է, որ 1828-1830թթ. գաղթերի արդյունքում Շորագյալի գավառի Փոքր Ղարաքիլիսա է գաղթել 100 ընտանիք կամ 537 մարդ (293-ը արական, 244-ը իգական սեռի), Մեչխոլի՝ 17 ընտանիք կամ 159 մարդ (97-ը՝ արական, 62-ը՝ իգական սեռի) և Աղքիլիսա՝ 37 ընտանիք կամ 217 մարդ (117-ը՝ արական, 100-ը՝ իգական սեռի):<sup>16</sup> Բայց թե դրանցից կոնկրետ որքանն էին պարսկահպատակներ և որքանը արևմտահայեր, ինչ վայրերից էին գաղթել, այս մասին փաստաթուղթը ուղղակի լռում է:

Այդ թերություններն ու բացթողումները ավելի ակնառու են դառնում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից գաղթած և Շորագյալի գավառի միևնույն գյուղում հաստատված գաղթականներին ըստ գաղթած վայրերի գատ-գատ հաշվառելիս: Գաղթականների ընդհանուր թվից ոչ միայն չեն առանձնացվել ավելի վաղ տեղավորված պարսկահայերն ու Երևանի, Ապարանի, Սարղարապատի, Լոռու և Վրաստանի գյուղերից Շորագյալի գավառի գյուղերում հաստատվածները, այլ թույլ է տրվել մեկ այլ խոշոր սխալ ևս. նկատի ունենք գավառի գյուղերում գաղթականներին տեղաբաշխելիս ու հաշվառում անցկացնելիս Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից գաղթածներին առանձին-առանձին չհաշվարկելը: Պաշտոնատար անձանց կողմից ժամանակին թույլ տրված նման թերացումները հիմք հանդիսացան նոր բարդությունների:

Այսպես, Շորագյալի գավառում գաղթականների տեղաբաշխումը նկարագրելիս առաջին խմբի աղբյուրները Արևմտյան Հայաստանի այս կամ այն փաշայությունը (շրջանը, վիճակը) նշելուց բացի հիշում են նաև 51 կոնկրետ բնակավայրեր՝ գյուղեր, ագարակներ կամ քաղաքներ, որոնց քրիստոնյա բնակչությունը գաղթելով հաստատվել էր Շորագյալի գավառի 34 գյուղերում: Դրանցից 21-ում գաղթականները տեղավորվեցին համաձայն գյուղից գյուղ օրենքի, այսինքն՝ ամբողջական գյուղերով, առանց միջանցից անջատվելու, ինչպես բնակվել են մինչև գաղթը: Օրինակ՝ Կարսի փաշայության Վալի գյուղից Շորագյալի գավառի Սարիբաշ գյուղ է գաղթել 8 ընտանիք կամ 42 մարդ<sup>17</sup> կամ Այաշկերտի Պատոնայ գյուղից Շորագյալի Դոլղաթ գյուղ՝ 23 ընտանիք կամ 122 մարդ<sup>18</sup>: Եվս 14 գյուղերում միաժամանակորեն հաստատվել են կամ Թուրքիայի նույն փաշայության տարբեր գյուղերից կամ էլ տարբեր փաշայություններից գաղթածներ, և ինչպես առաջին դեպքում՝ նշվում է գաղթականների նախկին բնակության վայրը, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի այս կամ այն գյուղը կամ քաղաքը: Օրինակ՝ Կարսի փաշայության Ջոնուշլու, Շահնալար, Փալդրվան և Քյուրուկդարա գյուղերից գաղթել և Շորագյալի գավառի Դուզքենտ գյուղում են հաստատվել 46 ըն-

<sup>12</sup> «Сборник газеты Кавказ», изд. О. Константиновым, первое полугодие, Тифлис, 1847, стр. 62.

<sup>13</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 3, գործ 920:

<sup>14</sup> Նույն տեղում, ցուցակ 2, գործ 128:

<sup>15</sup> Նույն տեղում, գործ 18; Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 5, 479:

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 339-361, 197-206, գործ 85, էջ 215-223:

<sup>17</sup> ՀՀ ՊԿՊԱ, գործ 85, էջ 106-108:

<sup>18</sup> Նույն տեղում, գործ 86, էջ 163-168:

տանիքներ՝ 378 մարդ<sup>19</sup> կամ Կարսի Պենկլի-Ահմեդ և Կանի գյուղերից ու Կարնո Կան գյուղից Շորագյալի գավառի Արթիկ գյուղ են գաղթել 100 ընտանիքներ՝ 643 մարդ<sup>20</sup>: Շորագյալի գավառի մնացած 32 գյուղերի մասին (չհաշված Թաթարական Գյոզադարան և այն ինը գյուղերը, որոնցում տեղավորվածների աշխարհագրության մասին որևիցե տեղեկություն գոյություն չունի), ինչպես արդեն նշել ենք, չկա որևէ մանրամասն տվյալ, բացի առաջին խմբի աղբյուրներում եղած նշումներից և դրանց ավելացրած թվային տվյալներից: Այսպես՝ Դերջանից ու Կարսի վիճակից 31 ընտանիք (174 մարդ) է տեղավորվել Շորագյալի գավառի Դիրաքլար գյուղում<sup>21</sup> կամ Կարսի գյուղերից ու Ալաշկերտից 17 ընտանիք (94 մարդ) է տեղավորվել Շորագյալի Սոնգյուռլի գյուղում<sup>22</sup>:

Այժմ տեսնենք, թե գավառի գյուղերում տեղավորված տարբեր վայրերի գաղթականներին առանձին-առանձին չհաշվելն ինչ բարդություններ առաջացրեց: Գաղթածներին ըստ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանների չհաշվառելու պաշտոնատար անձանց անհետատես քաղաքականության պատճառով՝ մենք միայն մասնավոր ճշտությամբ կարող ենք դատողություն անել, թե Շորագյալի գավառի գյուղերում հաստատված գաղթականների ընդհանուր թվի մեջ որքանն էին, ասենք, կարսեցիները, բայազետցիները կամ էրզրումցիները: Բանն այն է, որ գաղթը, ինչպես հայտնի է, ընթացավ երեք փուլերով. նախ գաղթեցին կարսեցիները, ապա բայազետցիները, և վերջինը՝ էրզրումցիները: Բնականաբար նույնախիսի փուլերով անցկացվեց նաև գաղթականների տեղավորման գործընթացը, այնպես որ կար իրական հնարավորություն տարբեր փաշայություններից գաղթածներին թե՛ մինչև տեղավորվելը և թե՛ տեղավորվելուց հետո հաշվառել առանձին-առանձին: Ցավոք, պետական պաշտոնյաները չեն օգտագործել այդ հնարավորությունը: Ավելին, երբ ավարտվեց գաղթականների տեղավորման գործընթացը, պարզվեց, որ Շորագյալի գավառի՝ գաղթականներով համարված 75 գյուղերից (բացառությամբ էր կազմում միայն մահմեդականներով բնակեցված Թաթարական Գյոզադարան) 32-ում Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից գաղթածները տեղավորված են խառը: Այսպես՝ Կարսից, Ալաշկերտից, Խնուսից և Սեբաստիայից գաղթած 28 ընտանիքներ (141 մարդ) հաստատվել էին Շորագյալի գավառի Աղին գյուղում<sup>23</sup> կամ 27 ընտանիքներ (158 մարդ), Բասենից ու Ալաշկերտից գաղթելով, հաստատվել էին Թափադոլլակ գյուղում<sup>24</sup>: Եվս 9 գյուղերում հաստատվածների մասին, ինչպես արդեն նշել ենք, բացի թվային տվյալներից, որևէ այլ տեղեկություն չկա: Մնացած 34 գյուղերից յուրաքանչյուրում հաստատվեցին Արևմտյան Հայաստանի միայն այս կամ այն շրջանից գաղթածները: Օրինակ՝ Կարսի վիճակից Շորագյալի գավառի Բայանդուր գյուղ են գաղթել 52 ընտանիքներ ( 303 մարդ),<sup>25</sup> կամ Կարնո վիճակից Շորագյալի գավառի Դլով-խանլի գյուղ՝ 19 ընտանիք (125 մարդ)<sup>26</sup> և կամ Բայազետից Շորագյալի գավառի Կապս գյուղ՝ 26 ընտանիք (156 մարդ)<sup>27</sup>: Ստացվում է, որ ճշտիվ պարզել, թե գավառի տարածք գաղթածների ընդհանուր թվից՝ 2341 ընտանիքից (13465 մարդուց) քանիսն էին կարսեցիներ, քանիսը բայազետցիներ և քանիսը էրզրումցիներ՝ դառնում է անհնար, քանի որ այդպիսիք առանձին-առանձին էին տեղավորված միայն 31 գյուղերում, ընդ որում, հետևյալ կերպ. 19 գյուղերում՝ միայն կարսեցիներ, 5-ում՝ բայազետցիներ, 7-ում՝ էրզրումցիներ: Այս ամենը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ Շորագյալի գավառի տարածքում գաղթականների տեղաբաշխումը հնարավորին չափ ամբողջական կարելի է նկարագրել միայն վերոհիշյալ երկու խմբերի աղբյուրների տվյալների մանրագնին համադրման ճանապարհով:

<sup>19</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, էջ 362-378:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 311-338:

<sup>21</sup> Նույն տեղում, գործ 86, էջ 379-386:

<sup>22</sup> Նույն տեղում, գործ 85, էջ 98-105:

<sup>23</sup> Նույն տեղում, գործ 86, էջ 60-66:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 125-133:

<sup>25</sup> Նույն տեղում, գործ 85, էջ 13-21:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 240-244:

<sup>27</sup> Նույն տեղում, գործ 86, էջ 280-288:

1829թ. սեպտեմբերի 2-ին ավարտվեց ռուս-թուրքական պատերազմը, իսկ նոյեմբերին սկսվեց և մեկ-երկու ամսից զանգվածային բնույթ ստացավ թուրքահպատակ քրիստոնյաների՝ Արևմտահայաստանի հաշտության պայմանագրով նախատեսված գաղթը դեպի ռուսական տարածքներ, մասնավորապես Արևելյան Շիրակ, որտեղ ժողովրդագրական իրավիճակը գաղթի նախօրեին այսպիսի պատկեր էր ներկայացնում:

XIX դարի 20-ական թթ.-ի սկզբից, կապված տարածաշրջանում ստեղծված կայուն ռազմաքաղաքական իրադրության, ռուսական կառավարության կողմից ընտրված ճիշտ հարկային քաղաքականության (հարկերի ծայրաստիճան նվազեցման) և Փամբակի ու Շորագյալի գավառների սահմանագլխին ամրոցի կառուցման հետ Շորագյալի գավառի ազգաբնակչության թիվը, թեև բավականին դանդաղ տեմպերով, սկսեց վերելք ապրել և արդեն 1824-25թթ. կեսերին հասավ մինչև 705 ընտանիքի (529-ը հայկական, իսկ 176-ը թաթարական): Ցավոք, գավառի ազգաբնակչության թվի այս թեկուզև դանդաղ վերելքը երկար չտևեց: Արդեն 1826թ. սկզբներին, կապված ռուս-պարսկական փոխհարաբերությունների ծայրաստիճան սրման հետ, գավառի տարածքը քրեցին կամ որ ավելի ճիշտ կլիներ ասել՝ Շորագյալից փախան գրեթե բոլոր մահմեդականները, ինչի հետևանքով գավառի 25 գյուղերում ազգաբնակչության թիվը 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի նախօրեին իջավ մինչև 496 ընտանիքի կամ 3040 մարդու (1617-ը արական, 1423-ը իգական սեռի)<sup>28</sup>: Ազգաբնակչության թվաքանակի նվազումը շարունակվեց մինչև 1826թ. կեսերը՝ մեր կարծիքով այդ պահին հասնելով ընդամենը 175 ընտանիքի կամ 980 մարդու (540-ը արական, 440-ը իգական սեռի): Ռուս-պարսկական պատերազմի արդեն առաջին երկու ամիսների ընթացքում Երևանի Հասան խանի թալանչիական արշավանքի ու գերեվարումների պատճառով լրիվ մարդաթափ եղան Շորագյալի համեմատաբար մարդաշատ գյուղերից հինգը՝ Հոռոմը, Փոքր Դարաքիլիսան, Բայանդուրը, Թավշան-Դշլաղը և Վերին (Փոքր) Դանլիջան, թեև «Արևելյան մամուլ»-ի (թիվ 22, 15 նոյեմբերի, 1898) հավաստմամբ<sup>29</sup> դրանցից մեկում՝ Հոռոմում մինչև գաղթը մոտ 30 ընտանիքներ դեռ մնում էին: Սակայն հակված ենք կարծելու, որ թուրքահայերի գաղթի նախօրեին Հոռոմը ևս մյուս չորս գյուղերի նման լրիվ ամայացած պիտի լիներ, որովհետև «Արևելյան մամուլի» վերոհիշյալ հաղորդման ճշմարտացիությունը որևէ արխիվային փաստաթղթով չի հիմնավորվում:

Դրությունը սկսեց շտկվել միայն 1826թ. վերջերից՝ կապված ռուսական զորքերի հաջողված հակահարձակման, Փամբակ-Շորագյալի դիստանցիայի ազատագրման և ռազմական գործողությունների՝ երևանյան թատերաբեմ տեղափոխվելու հետ: Մինչև պատերազմի ավարտը Արևելյան Հայաստանի և Վրաստանի տարածքներից Շորագյալում հաստատվեցին շուրջ 50-60 ընտանիքներ: Եվս 40-50 ընտանիքներ տեղավորվեցին այստեղ արդեն պատերազմից հետո՝ ռուսական տարածքներ գաղթած պարսկահայերից, այնպես որ արդեն 1828-29թթ.-ին Շորագյալի գավառում կար հին ու նոր հիմնադրված 26 գյուղ՝ մոտ 280-300 ընտանիք ազգաբնակչությամբ:

Այսպիսին էր ժողովրդագրական դրությունը Շորագյալի գավառում մինչև թուրքահայերի գաղթը, որ պաշտոնապես սկսվեց արդեն 1829թ. նոյեմբերի 10-ից: Առաջինը Արաքսն անցան և ռուսական տարածքներում հաստատվեցին Կարսի փաշայության քրիստոնյաները: Սկսվելով նպաստ չպահանջող 400 ընտանիքների Գյումրիում հաստատվելու համար գեներալ-մայոր Բերգմանի կողմից անցագրեր տալու պահից (1829թ. դեկտեմբերի սկիզբ) կարսեցիների ներգաղթը շարունակվեց մեկ-երկու ամիս և համարյա ավարտվեց արդեն 1830թ. հունվարի վերջերին: Շուրջ 2464 ընտանիք կարսեցիներ, գաղթելով երեք փուլերով (նախ 400, ապա 1840 և վերջապես 224 ընտանիքներ) 1829թ. հունվարի 5-ին ցարի կողմից հաստատված նախագծով տեղավորվեցին Փամբակ-Շորագյալի դիստանցիայում, Հայկական մարզում և Թալինի մահալում: Ընդ որում, կարսեցիների մեծագույն մասը՝ ըստ պաշտոնական փաստաթղթերի ավելի քան

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գրք 87, էջ 1-157:

<sup>29</sup> «Արևելյան մամուլ», թիվ 15, 1 օգոստոսի, Չմիտնիա, 1898, 28-րդ տարի, էջ 584, թիվ 22, 15 նոյեմբերի, էջ 758:

2264 ընտանիք (փաստաթղթերում թիվը տատանվում է 2263-2267-ի միջև), հաստատվեց հենց Փամբակ-Շորագյալում<sup>30</sup>:

Փորձենք պարզություն մտցնել այն հարցում, թե Փամբակ-Շորագյալի դիստանցիա գաղթած կարսեցիների ընդհանուր թվից որ մասը հաստատվեց միայն Շորագյալի գավառում: Ինչպես ասվեց, արևմտահայերի գաղթի նախօրեին Շորագյալի գավառում բացի Գյումրուց կար 26 գյուղ, որից 8-ում կամ առանձին-առանձին, կամ էլ բնիկ շորագյալցիների հետ միասին բնակվում էին Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի տարածքներից նախկինում գաղթածներ, իսկ մնացած 18 գյուղերում՝ միայն շորագյալցիներ: Արևմտահայերի գաղթի առաջին փուլի ավարտին, երբ գաղթել ու ռուսական տարածքներում հաստատվել էին դեռևս միայն կարսեցիները, գավառում գյուղերի թիվը հասավ 56-ի: Այսինքն, Շորագյալի գավառում գոյություն ունեցող 26 գյուղերից բացի կարսեցիների գաղթի հետևանքով հիմնվեցին կամ «վերակենդանացան» ևս 30 գյուղեր: Կարսեցիների տեղաբաշխումը Շորագյալի գավառում ավելի մանրամասն նկարագրելու նպատակով տարբերակում ենք նրանց երեք խմբեր՝ ա/Գյումրիում հաստատված կարսեցիներ, բ/ գավառի արդեն գոյություն ունեցող գյուղերում հաստատված կարսեցիներ և գ/ սեփական ուժերով գյուղեր հիմնած կարսեցիներ: Ի դեպ, նույնպիսի տարբերակում կանենք Արևմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններից գաղթած և Շորագյալի գավառի գյուղերում հաստատված գաղթականների համար:

1829-30թթ. ներգաղթը Գյումրի բերեց Կարս քաղաքի գրեթե ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը, որն ըստ Կրպեի՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանի առաջնորդությամբ գաղթել էր միանգամից ու կազմել էր 693 ընտանիք կամ մոտ 5000-5500 մարդ<sup>31</sup>: Սա մեր կողմից պայմանականորեն նշվում է որպես Շորագյալ գաղթած կարսեցիների առաջին խումբ: Բայց ոչ բոլոր հեղինակներն են կարսեցիների այս թվաքանակի ու նրանց՝ ամբողջությամբ Գյումրի գյուղում հաստատվելու հարցում համաձայն Կրպեին հետ: Հայ պատմագրության մեջ այս հարցի վերաբերյալ ընդունված կարծիքի համաձայն, որ առաջ է քաշվել Գ. քահանա Աղանյանցի և Եփրեմ Մեթի կողմից, կարսեցիները կազմել են ոչ ավելի քան 600 տուն և գաղթել են ոչ միանգամից, այլ նախապես բաժանվելով երեք մասերի<sup>32</sup>: Ավելին, Եփրեմ Մեթի վկայությամբ՝ Գյումրիում հաստատվել էին միայն Կանցի Մարտիրոսի առաջնորդությամբ գաղթածները, իսկ կարսեցիների երկու այլ խմբեր Մխտեսի Ակոյի և Ստեփանոս արքեպիսկոպոսի զխավորությամբ տեղավորվել էին առաջինը Փամբակի Ղարաքիլիսայում, իսկ երկրորդը՝ Շորագյալի Ղիչաղ գյուղում<sup>33</sup>, այնպես, որ արդեն 1830թ. օգոստոսին Կարս քաղաքում, մատենադարանի մի վավերագրի համաձայն՝ մնացել էին ընդամենը 10<sup>34</sup>, իսկ ըստ մեկ այլ վավերագրի՝ մինչև 50-60 տուն հայեր<sup>35</sup>: Վերոհիշյալ խնդրում համակարծիք լինելով Կրպեին՝ մենք միաժամանակ ամբողջապես չենք մերժում նաև Գ. Աղանյանցի ու Եփրեմ Մեթի վկայությունների ճշմարտացիությունը: Ճիշտ համարելով Կրպեի հայտարարությունն այն մասին, թե Կարսից գաղթածների ընդհանուր թիվը 693 ընտանիք էր կամ մոտ 5000-5500 մարդ, չենք կարող համամիտ չլինել նաև Գ. Աղանյանցի և Եփրեմ Մեթի հետ այն հարցում, որ կարսեցիները գաղթի նախօրեին բաժանվել էին երեք խմբերի, որոնք սակայն տեղավորվեցին ոչ թե Ղարաքիլիսայում, Գյումրիում և Ղիչաղում, ինչպես նրանք են նշում, այլ՝ Ղարաքիլիսայում, Գյումրիում և Սոգոթիլիում, ինչպես համոզված ենք մենք: Այսպիսով, Գ. Աղանյանցի ու Եփրեմ Մեթի հետ մեր տարաձայնությունը ոչ այնքան կարսեցիների թվի հարցում է, որքան Ստեփանոս արքեպիսկոպոսի և կարսեցիների՝ Սոգոթիլի փոխարեն Ղիչաղում հայտնվել-

<sup>30</sup> *Документы и материалы по истории Армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870)*, Ер., 1993, док. 16, стр. 76; *Акты собранные Кавказскою Археологическою Коммиссиею (АКАК), т. 7, Тифлис, 1876, стр. 847.*

<sup>31</sup> *Կրպեի, Կարս քաղաքը, Մոսկվա, 1893, էջ 56, 97:*

<sup>32</sup> Գ. ք. Աղանեանց, *նշվ. աշխ.*, էջ 24-25; Մ. Կարապետյան, *Եփրեմ Մեթը արևմտահայության 1829-30թթ.-ի գաղթի մասին, ՊԲՀ, N 2, Եր., 1997, էջ 292:*

<sup>33</sup> Մ. Կրպեի *ե տ յ ա ն*, *նշվ. աշխ.*, էջ 292:

<sup>34</sup> *Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 246, էջ 1:*

<sup>35</sup> *Նույն տեղում, թղթ. 66, վավ. 54:*

լու փաստի մեջ: Մեր կարծիքով Ստեփանոս արքեպիսկոպոսն իր կարսեցիների հետ Ղևիչաղ չի մտել: Հաստատվել է Գյումրիում և մինչև 1837թ. մարտի 27-ը կաթողիկոսի հրամանով եղել տեղի գաղթականների առաջին հոգևոր առաջնորդը<sup>36</sup>, ինչի մասին էլ հենց ինքը՝ արքեպիսկոպոսը տեղեկացնում էր 1834թ. հուլիսի 3-ին իր մի մամակով:<sup>37</sup> Ինչ վերաբերում է կարսեցիների՝ Ղևիչաղ գյուղում հաստատվելուն, ապա մեր ունեցած տվյալներով՝ բուրքահայերի գաղթի ողջ ընթացքում (1829-31թթ.) Շորագյալի գավառի այս գյուղում որևէ կարսեցի չի հաստատվել: Գյուղը վերակենդանացել է միայն ի հաշիվ Բասենի Մծնկերտ ավանից գաղթածների:<sup>38</sup> Հետևաբար կարսեցիների երրորդ խումբը, տեղավորվել է ոչ թե Ղևիչաղում, այլ Սոգոթիում<sup>39</sup>:

Այսպիսով, 1829-30թթ. ընթացքում Կարս քաղաքից գաղթել ու Փամբակի Ղարաքիլիսա և Շորագյալի Գյումրի ու Սոգոթի գյուղերում են հաստատվել 693 ընտանիքներ, որոնցից մոտ 600-ը (այդ թվում մաս 150 ընտանիք հույներ)<sup>40</sup>, Գյումրիում, 40 ընտանիքներ՝ Սոգոթիում, իսկ մնացած 53-ը՝ Ղարաքիլիսայում:

Կարսեցիների երկրորդ խումբը Շորագյալում հաստատվեց գոյություն ունեցող 26 գյուղերից 16-ում: «Արևելյան մամուլ», Հ. Էփրիկյանի և 1829-32թթ. կամերալ ցուցակագրման տվյալների մեր համադրությամբ պարզվեց (տե՛ս աղ. 1), որ նշված գյուղերից միայն հինգում են կարսեցիները հաստատվել բնիկ շորագյալցիների հետ և կազմում էին ընդամենը 99 ընտանիք ( 749 մարդ):

Աղ. 1

գյուղերը	ընտանիք	ար.	իգ.	ընդամենը	գաղթած վայրերը
1. Բանդևան	25	103	93	196	Կիկոռ գյուղից
2. Ղասմալի	14	46	37	83	Քեչե-Պօա գյուղից
3. Թայիբօղլի	17	59	53	112	Մյուլվերան գյուղից
4. Դութնի-Ղոչյաղ	5	22	9	31	Ինճե-Սու գյուղից
5. Դուզքենտ	38	158	169	327	Ջոնուշլու, Շահնալար, Քյուրուկդարա և Փաղղվան գյուղերից
Ընդամենը	99	388	361	749	

Ինչ վերաբերում է մնացած 11 գյուղերին՝ Թաքմալի, Չրախլի, Փոքր Բեքանտ, Քյավթառլի, Մեծ Քյավթանակ, Իլլի-Քիլիսա, Արթիկ, Ղզլլ-Քիլիսա, Մահմուդջուղ, Չոռլի և Սոգոթի, ապա սրանցում բնիկ շորագյալցիների ու կարսեցիների հետ ներգաղթի հաջորդ փուլերի ընթացքում հաստատվել են որոշ թվով գաղթականներ Արևմտյան Հայաստանի մասն ալ շրջաններից, և դրա հետևանքով էլ այս գյուղերում հաստատված կարսեցիների ստույգ թիվը պարզելն անհնար է:

Շորագյալի գավառ գաղթած կարսեցիների երրորդ և վերջին խումբն այսպես կոչված՝ նոր գյուղեր հիմնողներն էին: Սրանք ռուս-բուրքական սահմանն անցնելուց հետո Շորագյալի արդեն գոյություն ունեցող գյուղերում հաստատվելու փոխարեն նախընտրեցին հիմնել նորերը կամ վերականգնել իսպառ ավերակվածները (կարսեցիների այս խմբի կողմից գավառի տարածքում հիմնվեցին ու վերականգնվեցին ավելի քան 30 գյուղեր): Հետագայում՝ մինչև 1831թ., միայն կարսեցիներով բնակեցված մնացին այդ գյուղերից 15-ը<sup>41</sup> (տե՛ս աղ. 2), որոնցից մեկում գրանցվեց այդ ժամանակների համար իր նախադեպը չունեցող մի իրադարձություն:

<sup>36</sup> Կ ը պ ե, նշվ. աշխ., էջ 79:

<sup>37</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Գիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163դ, վավ. 1407:

<sup>38</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 2, գործ 108; «Արևելյան մամուլ», թիւ 24, 15 դեկտեմբերի, Չմիտնիս, 1898, 28-րդ տարի, էջ 934:

<sup>39</sup> «Արևելյան մամուլ», թիւ 18, 15 սեպտեմբերի, 1898, 28-րդ տարի, էջ 737:

<sup>40</sup> Орест Евницкий, Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи: Политическое состояние Закавказского края в исходе XVIII века и сравнение оного с нынешним, СПб., 1835, стр. 152.

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, էջ 1-12, 27-30, 70-73, 81-83, 106-108, 167-176, 259-265, 283-291, գործ 86, էջ 28-36, 45-47, 91-106, 108-114, 218-227, 306-309:

Աղ. 2

գյուղերը	ընտանիք	ար.	իգ.	ընդամ.	գաղթած վայրերը
1. Շիրվաջուղ	56	169	152	331	Քաջբերունյաց Ղըզըլ-Ղարա գյուղից
2. Դահարլի	64	183	160	343	Արևմտյան Շիրակից
3. Քյալալի	12	42	32	74	Կարսի վիճակից
4. Բոզրողան	13	34	36	70	Փոքր Քեղիկներ
5. Մարիբաշ	8	21	21	42	Վալի գյուղից
6. Եզանյար	34	112	93	205	Ջոնուշուից ու Բուխից
7. Բողազ-Քեսան	35	101	82	183	ՈՒՂուզլու գյուղից
8. Թոմարտաշ	32	112	90	202	Բերնա և Ղարաքիլիսե գյուղերից
9. Ճզխար	24	102	82	174	Քեղիկներ գյուղից
10. Փոքր Քեյթի	18	39	64	103	Ղըզըլ-Չախչախից
11. Բայանդուր	52	165	138	303	Կարսի վիճակից
12. Դոնախդան	40	130	95	225	Ենի-Գեոյ, Ջային-Մազիբա և Ղարազան գյուղերից
13. Մեծ (Ներքին) Դանիջա	23	66	45	111	Ինճեղեր գյուղից
14. Չիրալի	17	68	48	116	Անիից և հարևան ճալար գյուղից
15. Ալլահ-Քիլիսա	7	22	6	28	Գյուլեյրանից
Ընդամենը	435	1366	1134	2500	

Թուրքիայի տարածքից քրիստոնյաների զանգվածային գաղթի եռու շրջանում Կարսի փաշայության Գյուլեյրան գյուղից գաղթեցին և վերականգնելով Շորագյալի գավառի Ալլահ-Քիլիսա գյուղը՝ նրանում հաստատվեցին 7 ընտանիք թաթարներ (28 մարդ)<sup>42</sup>։ Ամենայն հավանականությամբ, սրանք ոչ վաղ անցյալում Շորագյալի մահմեդական գյուղերից որևէ մեկի նախկին բնակիչներից էին, որ ռուս-պարսկական հարաբերությունների սրման պատճառով 1825թ. Շորագյալի գավառից մահմեդականների զանգվածային արտագաղթի արդյունքում հայտնվել էին Կարսի փաշայության տարածքում և չհամակերպվելով տեղի պայմաններին՝ կրկին հետ էին վերադարձել՝ տեղավորվելով Ալլահ-Քիլիսայում։

Նոր հիմնադրված կամ վերականգնված մյուս 15 գյուղերում (Ղազարաբադ, Սոնգուռլի, Սվան-Վերդի, Ադին, Ղեղաչ, Մարիբաշ, Ղազանչի, Մոլլա-Գյուլչա, Փոքր Քյափանակ, Նորաշեն, Օրթաքիլիսա, Դիրաքլար, Թավշան-Ղշլադ, Հոռոն և Փոքր Դանիլչա) հետագա գործողությունները ընթացան արդեն ծանոթ սցենարով։ Մինչև 1831թ., այսինքն մինչև գաղթի ժամկետի պաշտոնական ավարտը սրանցում կարսեցիներից բացի տեղավորվեցին նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ։ Ցավոք, մեր ձեռքի տակ եղած արդյունքների սակավությունը թույլ չի տալիս հստակություն մտցնել այդ գյուղերում հաստատված ինչպես կարսեցիների, այնպես էլ այլ շրջաններից գաղթածների թվաքանակի հարցում։

Կարսեցիների հետ միաժամանակ գաղթեցին նաև Բայազետի փաշայության քրիստոնյաները։ Սրանց գաղթը ևս ընթացավ համեմատաբար արագ և առանց դժվարությունների։ Ընդամենը երկու-երեք ամիսների ընթացքում, ըստ բայազետցի գաղթականների թվի ու տեղաբաշխման շրջանների վերաբերյալ պաշտոնական մեկնաբանության, որ ձևավորվել է Հայկական մարզի կառավարիչ Վ. Բեհբութովի և գաղթականներին ուղեկցող ենթասպա Արդուֆինսկու ներկայացրած տվյալների հիման վրա,<sup>43</sup> 4215 ընտանիք բայազետցիներ գաղթեցին ու հաստատվեցին Հայկական մարզում՝ Գյուլչայի, Ապարանի, Դարաչիչակի և Սուրմալուի գավառներում<sup>44</sup>։ Մակայն ռուս-թուրքական սահմանն անցած բայազետցիների թվի և նրանց տեղավորման վայրերի վերաբերյալ իրականությունն այլ է. գաղթել են ընդամենը 2528 ընտանիք (14948 մարդ),<sup>45</sup>

<sup>42</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Եր., 1986, էջ 70:

<sup>43</sup> Ա. Մեյրնանյան, նշվ. աշխ., էջ 142:

<sup>44</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 44, էջ 336-337:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 144:

իսկ նրանց մի բավականին մեծ զանգված սահմանն անցնելուց հետո Հայկական մարզում հաստատվելու փոխարեն նախընտրեց տեղավորվել Փամբակի և Շորագյալի գավառներում: Մինչդեռ պաշտոնական փաստաթղթերն այդ մասին ոչինչ չեն ասում:

Բայազետցիների գաղթի նախօրեին Շորագյալի գավառում կար տեղաբնակներով, արևելահայերով, պարսկահայերով ու թուրքահայերով (առաջին միայն կարսեցիներով) բնակեցված 56 գյուղ: Գաղթելով այս գավառ՝ բայազետցիները, մասնավորապես ալաշկերտցիները, տեղավորվեցին Գյումրուց բացի ևս 21 գյուղերում, որոնցից երկուսը հիմնեցին սեփական ուժերով, այնպես որ նրանց գաղթից հետո գավառում գյուղերի թիվը հասավ 58-ի: Շորագյալի գավառում տեղավորված բայազետցիների առաջին խումբը՝ հենց Բայազետ քաղաքից գաղթածները, հաստատվեցին Գյումրիում, նաև հիմնեցին Կապս գյուղը<sup>46</sup>: Ընդ որում, եթե Կապսը հիմնադրած բայազետցիների թիվը ստույգ հայտնի է՝ 31 ընտանիք կամ 118 մարդ<sup>47</sup>, ապա նույնը չի կարելի ասել Գյումրիում տեղավորվածների վերաբերյալ, քանզի որևէ թվային տվյալ գոյություն չունի: 1829-32թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով արևմտահայերի գաղթի արդյունքում Գյումրու բնակչության թիվը հասավ 1350 ընտանիքի ( մոտ 7250 մարդու)<sup>48</sup>, որից 100-ը, Կարնո գաղթականների հավաստմամբ, բնիկ գյումրեցիներն էին՝ «տեղավորված Չերկեզի ձորի» գլխին<sup>49</sup> (Արևմտահայերի գաղթի նախօրեին Գյումրու բնակչության թիվը տարբեր հեղինակների մոտ տատանվում է. 50-ից<sup>50</sup> մինչև 300 ընտանիք<sup>51</sup>: Մենք առավել ստույգ ենք համարում Ն. Նիկողոսյանի վարկածը՝ 100 ընտանիք): Եվս 800 ընտանիք կարսեցիներ ու կարինցիներ էլ այստեղ հաստատվեցին մինչև 1832 թ.<sup>52</sup>: Այսպիսով, Գյումրու բնակչության ընդհանուր թվից՝ 1350 ընտանիքից փոքրիշատե տեղեկություններ կան միայն 900-ի մասին: Մնացած 450 ընտանիքների մասին ոչինչ: Մինչդեռ մեր կարծիքով հնարավոր է զոմե մոտավոր ճշտությամբ պարզություն մտցնել այս հարցի մեջ: Այսպես, Կ. Մատինյանի հաղորդմամբ գաղթից հետո Գյումրու բնակչության մեջ բայազետցիները թվով երկրորդն էին՝ կարսեցիներից (600 ընտանիք) հետո և երզրումցիներից (200 ընտանիք) առաջ և կազմում էին Գյումրիում տեղավորված կարսեցիների քանակի կեսը<sup>53</sup>: Նշանակում է՝ Գյումրի գաղթած բայազետցի ընտանիքների մոտավոր թիվը պիտի լիներ 300-ից ոչ ավելի և 200-ից ոչ պակաս:

Շորագյալի գավառում բայազետցիների հիմնադրած երկրորդ գյուղը Ղուղաթն էր, որ հիմնեցին Ալաշկերտի Պատոնայ գյուղից գաղթած 23 ընտանիքները<sup>54</sup>: Ի դեպ, Ղուղաթում ևս Ալլահ-Քիլիսայի օրինակով գրանցվեց մահմեդականների ներգաղթ. 122 գաղթականներից ութը (երկու ընտանիք) մահմեդականներ էին,<sup>55</sup> որոնք հավանաբար ալլահ-քիլիսեցիների պես նախկին շորագյալցիներ էին և գաղթի պաշտոնական թույլտվությունից հետո վերադառնալով՝ կրկին հաստատվել էին իրենց հայրենի գավառում: Մնացած 19 գյուղերում՝ Փոքր Ղարաքիլիսա, Ղափլի, Հոռոմ, Չրախլի, Փոքր Բեքանտ, Քյավթառլի, Մեծ Քյավթանակ, Հաջի-Նազար-Ղուլի, Ղազարաբաղ, Սվան-Վերդի, Աղին, Ղեղաչ, Մոնգուռլի, Արմութի, Մահմուդջուղ, Մոլլա-Գյուլչա, Բողազ-Քեսան, Սոգութլի, Նորաշեն, Թափաղոլյակ, բայազետցիները տեղավորվել էին բնիկ շորագյալցիների, պարսկահայերի ու կարսեցիների հետ համատեղ, այդ պատճառով էլ նրանց իրական թիվն այդ գյուղերում պարզելն անհնար է: Ի դեպ, արդեն բայազետցիների

<sup>46</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Բ, Եր., 1988, էջ 951:

<sup>47</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 280-288:

<sup>48</sup> Նույն տեղում, գործ 83, 84:

<sup>49</sup> Ն. Նիկողոսյան, Գյումրի-Լեռնականի անցյալը (1935թ.), ձեռագիր, ՊՀԱ, գործ 103, ներածություն:

<sup>50</sup> Մ. Թ ա մ ռ ա գ յ ա ն, Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը, (1938թ.), ձեռագիր, ՊՀԱ, գործ 103, Թամրագյանի նյութերը, տետր 1:

<sup>51</sup> Ատրպետ, Ալեքսանդրապոլի ասպզան, «Ախուրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 30 հունվարի, թիվ 3, էջ 1:

<sup>52</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 227, էջ 2:

<sup>53</sup> Կ. Մ ա տ ի ն ա ն ը, Ալեքսանդրապոլի վաճառականները, «Մեղու Հայաստանի», 2 փետրվարի, N 5, Թիֆլիս, 1874, էջ 3:

<sup>54</sup> «Արևելյան մամուլ», թիվ 3, 1 փետրվարի, Չմիտնիա, 1899, 29-րդ տարի, էջ 109:

<sup>55</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 163-168:

գաղթից հետո Շորագյալի գավառում այն գյուղերի թիվը, որոնցում անհնար է Արևմտյան Հայաստանի այս կամ այն շրջանից գաղթածներին առանձին-առանձին հաշվառելը, հասավ մինչև երեք տասնյակի: Եվ քանի որ հետայսու ևս, ինչպես պարզվեց բնության ընթացքում, նման դեպքերը կրկնվում են, իսկ մանավանդ էրզրումցիների պարագայում ընդունում են բավականին մեծ ծավալներ, մեր կարծիքով ավելորդ չի լինի ևս մեկ անգամ անդրադառնալ այս հարցին, մանավանդ, որ աղբյուրների թերիությունը միակ խանգարող հանգամանքը չէ, կա նաև մեկ այլ, ոչ պակաս կարևոր գործոն: Նկատի ունենք գաղթականների տեղաբաշխման կանոնների կոպիտ խախտումները: Որպես պարսկահայերի գաղթի տրամաբանական շարունակություն, թուրքահայերի տեղահանումն ու վերաբնակեցումն անդրկովկասյան երկրամասում ըստ էության ընթացավ համաձայն արդեն նախօրոք մշակված ու կիրառված ծրագրի: Նորից, այս անգամ արդեն Թիֆլիսում, Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Ջավիդեյսկու նախագահությամբ ստեղծվեց Գաղթականական կոմիտե, որի պարտականությունն էր գաղթականների ընդունման ու տեղավորման հետ կապված բոլոր հարցերի լուծումը: Կոմիտեն մինչև 1830թ. գարունը պարտավոր էր մանրամասն տեղեկություններ հավաքել Վրաստանի և Արևելյան Հայաստանի տարածքներում պետական ամայի հողատարածությունների վերաբերյալ, նաև մշակել Թուրքիայից քրիստոնյաներին գաղթեցնելու և ռուսական տարածքներում վերաբնակեցնելու կանոնադրությունը:

Աղ. 3

գյուղեր	ընտանիք	ար.	իգ.	ընդամ.	գաղթած վայրերը
1. Բանդևան	25	103	93	196	Կարսի Տիկոռ Գյուղից
2. Դասմալի	14	46	37	83	Կարսի Պեչե-Պոս գյուղից
3. Թայիբօղլի	17	59	53	112	Կարսի Զյուվերանից
4. Դուբնի-Դրշլաղ	5	22	9	31	Կարսի Ինճե-Սու գյուղից
5. Բոզդողան	13	34	36	70	Կարսի Փոքր Քեաղիկներից
6. Մարիբաշ	8	21	21	42	Կարսի Վալի գյուղից
7. Կիչաղ	13	37	46	83	Բասենի Մծնկերտ ավանից
8. Բաշգյուղ	18	87	62	149	Մուշից
9. Իմիթխանլի	30	104	86	190	Բասենի Քեոփրի-Քեոբեից
10. Գյուրջի-Յոլ	27	104	76	180	Բասենից
11. Բողագ-քեսան	35	101	82	183	Կարսի Ուրդուգլու գյուղից
12. Ճգլիպար	24	102	72	174	Կարսի Մեծ Քեաղիկներ գյուղից
13. Այլահ-Քիլիսա	7	22	6	28	Կարսի Գյուլեյրան գյուղից
14. Ջելար-կեչուտ	33	110	97	207	Բասենից
15. Մարիար	42	115	101	216	Բասենի Նուրիման-Ագրակից
16. Շիբվանցուղ	56	169	152	321	Քաջբերունյաց Դգու-Լարալից
17. Իլիխարի	69	203	131	334	Ներքին Բասենի Պատիճվան գյուղից
18. Դողաթ	23	64	58	122	Այաշկերտի Պատոնայ գյուղից
19. Ջաջուտ	72	236	148	384	Խնուսի Խողլու գյուղից
20. Կապս	31	64	54	118	Բայազետից
Ընդամենը	562	1803	1420	3223	

Խնդիր ունենալով պարզել Շորագյալում գաղթականների տեղաբաշխման ընթացքում թույլ տրված սխալները՝ հարկ ենք համարում խոսել այդ կանոններից մի քանիսի մասին: Դրանցից մեկը կոմիտեին ցուցում էր տալիս եկվորներին բնակության նոր տեղեր հատկացնելու ժամանակ անպայման նկատի առնել նրանց նախկին բնակավայրերի բնակչության կազմակերպչական պայմանները, նաև հրահանգված էր, որ գաղթականները բնակվելին ամբողջական գյուղերով, առանց միմյանցից անջատվելու, այնպես, ինչպես բնակվելիս են եղել մինչև գաղթը»<sup>56</sup>: Այս և այլ կանոնների հավուր պատշաճի գործադրումը մեծ բարդությունների հետ կապված չէր: Սակայն իրականում կիրառվեց Շորագյալի գավառի՝ գաղթականներով համալրված 75 գյուղերից միայն 36-ում, ընդ որում ամբողջությամբ ու անթերի՝ միայն 20-ում<sup>57</sup>: Վերջիններիս վերաբերյալ կարելի է

<sup>56</sup> Ալ. Երիցյան, *նշվ. աշխ., հ. Ա, էջ 328*:  
<sup>57</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 2, գործ 46, 82, 107, 112, 138, ինչպես նաև «Արևելյան մամուլ», թիվ 17, 1 սեպտեմբերի, Չմիտնիս, 1898, 28-րդ տարի, էջ 659, թիվ 19, 1 հոկտեմբերի, էջ 738, թիվ 22, 15 նոյեմբերի, էջ 855-858, թիվ 23, 1 դեկտեմբերի, էջ 889-890, թիվ 24, 15 դեկտեմբերի, էջ



առանց վարանելու ճշտիվ նշել, թե Արևմտյան Հայաստանի որ փաշայության որ գյուղից քանի ընտանիք է գաղթել և Շորագյալի որ գյուղում է հաստատվել (տե՛ս աղ. 3):

Գավառի մնացած 16 գյուղերում գաղթը կարգավորող վերոհիշյալ կանոնները կիրառվել են միայն մասնակիորեն: Այսպես, ութ գյուղերում արևմտահայերը տեղավորվել էին ոչ թե համաձայն ընդունված գյուղից գյուղ կարգի, այլ դեռևս գաղթի ճանապարհին կամ արդեն տեղավորվելու պահին կիսվել էին ու հաստատվել տարբեր գյուղերում: Իսկ քանի որ գաղթի հետագա փուլերի ընթացքում, այդ գյուղերից մի քանիսում հաստատվել էին նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ, ապա պարզել, թե առաջին եկվորները քանիսն էին, հնարավոր է միայն մասամբ: Օրինակ Կարսի փաշայության Ինճեղեր գյուղից գաղթածները, բաժանվելով երկու մասերի, հաստատվել էին Շորագյալի գավառի Մեծ ու Փոքր (Վերին և Ներքին) Դանլիջաներում, ընդ որում, վերջինում՝ նույն փաշայության Պեշքիլիսու ազարակից, Դերջանից և Մուշից գաղթածների հետ համատեղ<sup>58</sup>: Այդ պատճառով էլ հայտնի է միայն Մեծ Դանլիջայում հաստատված ինճեղերցիների թիվը՝ 23 ընտանիք (111 մարդ)<sup>59</sup>: Նույնը կրկնվեց նաև ղզըլ-չախչախցիների հետ: Սրանք հաստատվել էին Մուլա-Գյուլչայում և Փոքր Քեթիում, ընդ որում, առաջինում խնուսցիների, բասենցիների ու ալաշկերտցիների հետ<sup>60</sup>: Այդ պատճառով էլ Շորագյալի գավառ գաղթած ղզըլ-չախչախցիներից կարող ենք ստուգապես հայտնի համարել միայն Փոքր Քեթիում հաստատվածների թիվը՝ 18 ընտանիք (103 մարդ)<sup>61</sup>: Եթե ինճեղերցիների և ղզըլ-չախչախցիների թիվը գոնե մասամբ հայտնի է, ապա նույնը չի կարելի ասել Ջոնուշուից գաղթածների մասին, քանզի սրանք հաստատվել էին Շորագյալի գավառի Դուզբենու և Եզանլար գյուղերում, առաջինում՝ Կարսի փաշայության Շահնալարից, Փալըրվանից, Բյուրուկդարայից, երկրորդում՝ Բուիկից գաղթածների հետ համատեղ<sup>62</sup>: Մեր ունեցած վերջին տեղեկությունը վերաբերում է Շորագյալի գավառի Մեծ ու Փոքր Արղիսվալիներում Էրզրումի փաշայության Խնուսի գավառի Չևյուրմե գյուղից գաղթածների հաստատվելուն<sup>63</sup>: Սա միակ դեպքն է, երբ հայտնի է և՛ գաղթածների ընդհանուր թիվը, և՛ Շորագյալի գավառի երկու տարբեր գյուղերից յուրաքանչյուրում հաստատվածների թիվը: Այսպես, Չևյուրմեից գաղթած 52 ընտանիքներից (287 մարդ) 39 ընտանիքը (215 մարդ) հաստատվեց Մեծ Արղիսվալիում<sup>64</sup>, իսկ մնացած 13-ը (72 մարդ)՝ Փոքր Արղիսվալիում<sup>65</sup>:

Նշված 16 գյուղերից ութում՝ Բայանդուր, Դահարլի, Քեալալի, Չիրայիլի, Գլովխանլի, Թոմարտաշ, Հայկական կամ Վարին Գյուզաղարա, Դոնախոռան մեր կողմից արձանագրվեց կոմիտեի ընդունած գաղթականների տեղաբաշխման կարգի խախտման մեկ այլ ձև<sup>66</sup>, որն ի դեպ, առկա է նաև վերևում հիշված առաջին ութ գյուղերից երկուսում՝ Դուզբենուում և Եզանլարում: Խոսքն այն մասին է, որ եթե առաջին դեպքում միևնույն գյուղից ելածները, դեռևս գաղթի ճանապարհին բաժանվելով մասերի, Շորագյալի գավառում հաստատվել են տարբեր գյուղերում, ապա այս անգամ տեղի է ունեցել ուղղակի հակառակը՝ Շորագյալի գավառի միևնույն գյուղ են գաղթել նույն փաշայության միանգամից մի քանի գյուղերից (տե՛ս աղ. 4):

934-935, թիւ 3, Չմիւռնիա 1899, 29-րդ տարի, 1 փետրվարի, էջ 109-112, թիւ 5, 1 մարտի, էջ 196-198, թիւ 6, 15 մարտի, էջ 235-236:

<sup>58</sup> Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, Շիրակի գյուղական կյանքից, «Արարատ», թիւ Է-Ը, Էջմիածին, 1904, էջ 692; Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 10, 43:

<sup>59</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 299-305:

<sup>60</sup> «Արևելյան մամուլ», թիւ 19, 1 հոկտեմբերի, Չմիւռնիա, 1898, 28-րդ տարի, էջ 738, թիւ 5, 1 մարտի, էջ 198:

<sup>61</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 108-114:

<sup>62</sup> Քաջբերունի, Հիշողություններ, «Լուսն», Թիֆլիս, 1903, N 3, մայիս-հունիս, էջ 107; Քաջբերունի, Ալեքսանդրապոլից դեսպի Կարին, «Փորձ», N 5, մայիս, Տիֆլիս, 1879, էջ 180-182:

<sup>63</sup> Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 301; ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 2, գործ 21:

<sup>64</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, էջ 148-154:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 155-165:

<sup>66</sup> «Արևելյան մամուլ», թիւ 15, 1 օգոստոսի, 1898, 28-րդ տարի, էջ 585, 586, թիւ 17, 1 սեպտեմբերի, էջ 657-658, թիւ 22, 15 նոյեմբերի, էջ 757-758, թիւ 24, 15 դեկտեմբերի, էջ 935-936, թիւ 5, 1 մարտի, Չմիւռնիա, 1899, 29-րդ տարի, էջ 196: Մասամբ նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 2, գործ 37, 70, 121, 153:

Աղ. 4

գյուղերը	ընտան.	ար.	իգ.	ընդամ.	գաղթած վայրերը
1. Բայանդուր	52	165	138	303	Կարսի փաշայության գյուղերից
2. Դահարյի	64	183	160	343	Արևմտյան Շիրակից
3. Քեպայի	12	42	32	74	Կարսի վիճակից
4. Չիրայի	17	68	48	116	Անիից և հարևան ճալար գյուղից
5. Ճլովխանի	19	74	51	125	Կարնո գյուղերից
6. Թումարտաշ	32	112	90	202	Կարսի Բերնա և Ղարաքիլիսա գյուղերից
7. Հայկական Գյոզադարա	16	56	45	101	Բասենի շրջանի Հաջիխալի և Ղոլդաթ գյուղերից
8. Ղոնախդրան	40	130	95	225	Կարսի Ենի-Գեոյ, Ջային-Մազիրա և Ղարազան գյուղերից
9. Դուզբենո	38	158	169	327	Կարսի Ջոնուշլու, Շահմալար, Փայդրվան և Քյուրուկդարա գյուղերից
10. Եզանլար	34	112	93	205	Կարսի Ջոնուշլու և Բուխլ գյուղերից
Ընդամենը	324	1100	921	2021	

Այդ պատճառով էլ վերջնական հաշվառման ժամանակ նշվել է Շորագյալի տվյալ գյուղերում հաստատվածների միայն ընդհանուր թիվը: Բայց և այնպես, անկախ այն քանից, որ միևնույն գյուղից գաղթածները գավառի տարածքում հաստատվելիս բաժանվել են մասերի, կամ թե մի քանի գյուղերից եկածները գումարվել ու տեղավորվել են միևնույն գյուղում, այնուամենայնիվ նշված 36 գյուղերում հնարավոր է հաշվել, թե Արևմտյան Հայաստանի որ փաշայությունից քանի ընտանիք է գաղթել, ինչը մեզ համար առաջնահերթ կարևորության խնդիր է: Այլ է դրությունը գավառի՝ գաղթականներով համայնքի մնացած գյուղերում, այդ թվում՝ նաև արդեն հիշված Վերին կամ Փոքր Ղանիջայում և Մոլլա-Գյոլչայում: Սրանցից յուրաքանչյուրում միանգամից հաստատվեցին Արևմտյան Հայաստանի մի քանի շրջաններից գաղթածներ, ընդ որում, առանց նախնական հաշվառման:<sup>67</sup> Այդ պատճառով էլ անհնար է Շորագյալի տվյալ գյուղերում հաստատվածների ընդհանուր թվի մեջ ցույց տալ, թե այդ գյուղերից յուրաքանչյուրում Արևմտյան Հայաստանի որ շրջանից քանի ընտանիք է տեղավորվել:

Աղ. 5

գյուղերը	ընտանիք	ար.	իգ.	ընդամենը	գաղթած վայրերը
1. Փոքր Ղարաքիլիսա	100	293	244	537	Պարսկաստանի Ղըլլի գյուղից, Այաշկերտից, Մուշից
2. Թաքնալի	17	51	56	107	Կարսի ու Կարինի փաշայությունից
3. Ղափլի	8	22	17	39	Այաշկերտի ու Մուշի գյուղերից
4. Թավյան-Ղշաղ	27	78	64	142	Կարսի ու Բասենի գյուղերից
5. Հոռոն	59	167	145	312	Կարսից, Կարինից, Բայազետից, կամ նաև 4 ընտանիք բոշաներ
6. Չրախլի	14	58	37	95	Կարսի Փարգիտ գյուղից, Բասենից, Այաշկերտից
7. Փոքր Բեքանո	12	49	39	88	Երևանի, Կարսի, Մուշի, Այաշկերտի գյուղերից
8. Քյավթառլի	15	52	40	92	Կարսից, Կարինից, Այաշկերտից
9. Մեչխլի	17	97	62	159	Պարսկաստանից և Խնուսից
10. Մեծ Քյավիանակ	51	167	96	263	Կարսից և Այաշկերտից
11. Հաջի-Նազար-Ղուլի	12	31	8	39	Մշո Բուվանդրից ու Այաշկերտից

<sup>67</sup> «Արևելյան մամուլ», թիւ 15,1 օգոստոսի, Չմիտնիա, 1898, 28-րդ տարի, էջ 584, 586-587, թիւ 16, 15 օգոստոսի, էջ 623-626, թիւ 19,1 հոկտեմբերի, էջ 737-738, թիւ 22,15 նոյեմբերի, էջ 855-858, թիւ 23, 1 դեկտեմբերի, էջ 889-892, թիւ 24,15 դեկտեմբերի, էջ 934-936, թիւ 3,1 փետրվարի, Չմիտնիա, 1899, 9-րդ տարի, էջ 109-112, թիւ 6,15 մարտի, էջ 236- 237,239; Հ. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 5, 293,320,444, 479, 500, 518, հ. Բ, էջ 33, 67; Ս. Ջալալյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 217; Ս. Գալոյան, Շիրակից հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս-Անջելես, 1950, էջ 69-70, 72:

12. Իլլի-Քիլիսա	31	89	71	160	Կարսից, Կարինից
13. Փոքր Դանլիջա	14	44	40	84	Կարսի Պեշքիլիսայից, Մուշից
14. Արթիկ	100	334	305	639	Կարսի Պեշքիլի Մեմեդ և Կանի գյուղերից, Կարնո Կան գյուղից
15. Դազարաբադ	54	194	28	322	Կարսից, Ալաշկերտից
16. Սվան-Վերդի	42	138	119	257	Կարսից, Ալաշկերտից, Բասենից և Իլանլուից
17. Աղին	28	79	62	141	Կարսից, Ալաշկերտից, Խնուսից և Սեբաստիայից
18. Դեղաչ	17	50	44	94	Կարսից, Կարինից, Ալաշկերտից
9. Դըզլլ-Քիլիսա	26	86	68	54	Խոշավանքից, Պողոտաշենից և Ապարանի Հաջի-գալիլից
20. Սոնգուալի	17	63	31	95	Կարսից և Ալաշկերտից
21. Արմուքի	23	62	52	14	Կարսի Թեքնիզ, Վաղի, Ալաշկերտի Տուֆագ, Բասենի Եավան գյուղերից
22. Մահնուդջուղ	60	212	137	349	Լոռուց, Կարսից, Բասենից և Ալաշկերտից
23. Դազանչի	52	168	113	281	Կարսի Բաշ-Շորագյալ և Բասենի Պղոստոն գյուղերից
24. Մոլլա-Գյոկչա	59	225	146	371	Կարսի Դըլլ-Չախչախից, Բասենից, Խնուսից, Ալաշկերտից
25. Սոգուքի	74	229	193	422	Մարդարաբադից 18 տուն, Կարսից 40 տուն, Ալաշկերտից, Մուշից, Բասենից
26. Փոքր Քյափանակ	17	68	50	118	Կարսի և Կարինի վիճակներից
27. Չոռլի	5	19	8	27	Վրաստանից, Բասենից, Կարսից
28. Նորաշեն	33	93	70	163	Կարսի Քեափանի, Ջերմուկ գյուղերից, Ալաշկերտից, Դեղջանից
29. Թափարդլակ	27	92	66	158	Բասենից ու Ալաշկերտից
30. Աղ-Քիլիսա	37	117	100	217	Կարնո Պրզոլի-Դասալ գյուղից և Պարսկաստանից
31. Օրթաքիլիսա	35	109	78	187	Կարսից և Էրզրումից
32. Դիրաքլար	31	99	75	174	Դեղջանից և Կարսից
Ընդամենը	1114	3635	2764	6399	

Շորագյալի գավառում տեղավորված գաղթականների վերջնական հաշվառում անցկացնելիս (տե՛ս աղ. 5) նույն այդ պատճառով չենք կարող նաև նշել, թե ընդհանուր առմամբ գավառի գյուղերում տեղաբաշխվածների որ մասը Արևմտյան Հայաստանի որ շրջանից է գաղթել և ինչ տոկոս է կազմում Փամբակ-Շորագյալի դիստանցիա գաղթածների ընդհանուր թվի մեջ:

Արևմտահայերի գաղթը կարգավորելու գործում երկրորդ և ոչ պակաս կոպիտ թերացումը վերաբերում է գաղթող քաղաքային դասի՝ Շորագյալի գավառում տեղավորվելուն: Այսպես, Գաղթականական կոմիտեի որոշմամբ բոլոր գաղթողները բաժանվում էին երեք խմբերի՝ «*ա. վաճառականներ կամ առևտրով զբաղվողներ, բ. արհեստավորներ կամ որևէ արհեստով զբաղվողներ և գ. հողագործներ կամ գյուղացիներ*»<sup>68</sup>: Կոմիտեն գաղթականներին տեղաբաշխելիս պարտավոր էր խստիվ ղեկավարվել այս դասակարգմամբ, որի համաձայն՝ առաջին երկու խմբերը, որոնք մեծամասամբ քաղաքաբնակներ էին, գաղթելուց հետո տեղավորվելու էին քաղաքներում, իսկ երրորդ խմբի գաղթականները՝ գյուղերում: Մինչդեռ գաղթականների վերոհիշյալ տարբերակումը հակասում էր 1829թ. հունվարի 5-ին Պասկևիչի՝ ցարին ներկայացրած նախագծին, որի համաձայն Փամբակ-Շորագյալի դիստանցիայում հաստատվելու էին Կարսի փաշայության քրիստոնյա ազգաբնակչությունը, այդ թվում՝ նաև քաղաքաբնակները Կարսից

<sup>68</sup> В. Потто, Кавказская война..., т. 4, стр. 474 - 475.



ներ էլ պատրաստվում էին գաղթել Էրզրումի փաշայությունից: Ահա այս ժամանակ էլ կոմիտեն որոշեց Էրզրումցի գաղթականների մի փոքր մասին տեղավորել Փամբակ-Շորագյալի դիստանցիայում՝ կարսեցիների հետ համատեղ:<sup>75</sup> Եվ երևի թե այստեղ գաղթականների տեղավորումը սրանով էլ կավարտվեր, եթե չլինեին Էրզրումցիների գաղթի և նրանց տեղավորման ժամանակ առաջացած դժվարությունները: Բանն այն է, որ Էրզրումցի գաղթականների վերջին խումբը (1800 ընտանիք, այդ թվում՝ նաև 150 հայ-կաթոլիկներ) հասնելով Կարս, գաղթի վատ կազմակերպված լինելու պատճառով չկարողացավ շարունակել իր ճանապարհը դեպի Ախալցխայի գավառ և ստիպված եղավ, սայլերի սպասելով, ամիսներ շարունակ մնալ բաց երկնքի տակ: Ուստի ձմռան մոտենալու վտանգից դրված՝ գաղթերի վերակացու Անոսովի առաջարկով սրանք անցան Արաքսն ու բնակության վայրեր ընտրեցին ըստ իրենց ցանկության. մոտ 200 ընտանիք մեկնեց Փամբակի Մեծ Դարաքիլիսա գյուղը, մյուսները ցրվեցին Շորագյալի գավառում: Բարդություններ առաջացրեց նաև Էրզրումցի գաղթականների տեղավորումը: Կոմիտեի մշակած գաղթի կանոններից մեկը պարտավորեցնում էր քրիստոնյաներին տեղավորվել միայն պետական հողերի վրա: Արդեն գաղթականներին տեղավորելու ժամանակ պարզվեց, որ շատ հողեր, որ Գաղթականական կոմիտեի կողմից հաշվառվել էին որպես պետական ու ամայի, տերեր ունեն: Բանն այն է, որ տեղի մահմեդականների մի մասն իր հողերը վաճառել էր մինչև պատերազմը, մյուս մասը վաճառեց պատերազմից հետո: Նոր հողատերերն էլ իրենց հերթին ցանկանում էին դրանք նորեկներին տալ միայն մշակության համար: Օրինակ՝ Ախալցխայում գաղթականների 1600 ընտանիքներ տեղավորվել էին իբր թե պետական հողերի վրա, բայց պարզվեց, որ այդ հողերը տերեր ունեն: Վեճը հանգուցալուծվեց միայն Ի. Պասկևիչի միջնորդությամբ, երբ վերջինս ստիպված եղավ պետական գումարներով կրկնակի թանկ գնով գնել այս հողերը տերերից և տալ գաղթականներին<sup>76</sup>:

Շորագյալի գավառում Էրզրումցիները տեղավորվեցին հետևյալ կերպ. առաջին խումբը (ինչպես արդեն նշել ենք, սույն բաժանումը պայմանական է և կատարվել է մեր կողմից), մոտ 200 հայ-կաթոլիկ ընտանիքներ՝ գաղթած հենց Կարին քաղաքից<sup>77</sup>, տեղավորվեցին Գյումրիում՝ հիմնելով «Ֆրանգների մահլեն»<sup>78</sup>: Գյումրուց բացի Էրզրումցիները տեղավորվեցին նաև Շորագյալի գավառի և 35 գյուղերում, հետևյալ հարաբերությամբ: Գավառի տարածք գաղթածների երկրորդ խումբը տեղավորվեց արդեն զոյություն ունեցող 56 գյուղերից 24-ում՝ Թաքնալի, Թավշան-Ղշաղ, Հոռոմ, Չրախլի, Զյալթառլի, Մեչիտլի, Իլի-Զիլիսա, Փոքր Դանլիջա, Արթիկ, Սվան-Վերդի, Ադին, Ղեղաչ, Արմութլի, Մահմուդոզուղ, Դազանչի, Մոլլա-Գյոկչա, Մոգութլի, Փոքր Զյափանակ, Չոռլի, Նորաշեն, Թափաղոլյակ, Աղ-Զիլիսա, Օրթաքիլիսա, Դիրաքլար: Եվ քանի որ նշված բոլոր գյուղերում Էրզրումցիները տեղավորվել էին բնիկ շորագյալցիների, պարսկահայերի կամ էլ Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածների հետ, ապա պարզել, թե այդ 24 գյուղերից յուրաքանչյուրում առանձին-առանձին կամ բոլորում միասին քանի ընտանիք էին նրանք, անհնար է: Էրզրումցի գաղթականների երրորդ խումբը՝ թվով 373 ընտանիք (2107 մարդ),<sup>79</sup> հիմնականում գաղթած Բասենի, Խնուսի և Դերջանի գավառներից, Շորագյալում հիմնեց 11 գյուղ (տե՛ս աղ. 7): Ի դեպ, դրանցից մեկում գրանցվեց գավառում նախադեպը չունեցող իրադարձություն, ինչի մասին Սրբազան Սինոդին հայտնում էր գաղթականների հոգևոր առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը 1837թ. փետրվարի 7-ի իր նամակով «... քրիստոնյաների համատարած գաղթի պայմաններում, Էրզրումի փաշայության Խնուսի գավառի Չևյուրմեն գյուղից ի թիվս այլոց գաղթել և Շորագյալի գավառի Մեծ Արդիսլալի գյուղում են հաստատվել նաև 25 ընտանիք բողոքականներ»<sup>80</sup>: Նամակին ի պատասխան, Սինոդը

<sup>75</sup> Մ. Գ ա ռ ք ի ն յ ա ն, *նշվ. աշխ.*, ԲՀԱ, N 3, Եր., 1977, էջ 8:

<sup>76</sup> Ե. Գ ե ղ ա մ յ ա ն ց, *Պատմական քաղվածքներ, պրակ 4, մաս 2, Բաքու, 1909, էջ 385-386:*

<sup>77</sup> *Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 227, էջ 2:*

<sup>78</sup> Գ. Տ ե ռ -Գ ա վ թ ե ա ն ց, *Ալեքսանդրասյոյ, «Մերո չայաստանի», 24 փետր., N 7, Թիֆլիս, 1873, էջ 3:*

<sup>79</sup> ՀՀ ՊԿՊԱ, *ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, էջ 131-138, 148-154, 155-165, 226-233, 240-244, գործ 86, էջ 13-21, 58-69, 79-90, 134-152, 169-171, 172-196:*

<sup>80</sup> *Մաշտոցի անվան Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 28, էջ 1:*

պարտավորեցնում էր նրան և Ալեքսանդրապոլի Ղուկաս արքեպիսկոպոսին՝ համագործակցելով արմատախիլ անել աղանդը: Մինողի հրահանգն իրագործել վերջիններիս հավանաբար չի հաջողվել, քանզի արդեն 1837թ. դեկտեմբերին Գյումրու հոգևոր կառավարությունը Երևանի կոնսիստորիայի միջոցով Մինողին տեղեկացնում էր աղանդի՝ արդեն Գյումրիում հայտնվելու մասին և նույնիսկ նշում առանձին քաղաքացիների անուններ, իսկ 1838թ. փետրվարի 4-ին վերոհիշյալի մասին տեղեկացվում է նաև Կովկասի գլխավոր կառավարիչը<sup>81</sup>: Այնուամենայնիվ, չնայած բոլոր միջոցների գործադրմանը, աղանդն արմատախիլ անել չի հաջողվում: Պաշտոնական փաստաթղթերից երևում է, որ այն գոյություն է ունեցել և 1841թ.-ին և դրանից հետո<sup>82</sup>:

Աղ. 7

գյուղերը	ընտանիք	ար.	իգ.	ընդամենը	գաղթած վայրերը
1. Դիչաղ	13	37	46	83	Բասենի Մծնկերտ ավանից
2. Մեծ Արրիսվայի	39	127	88	215	Խնուսի Չեյուրմե գյուղից
3. Փոքր Արրիսվայի	13	41	31	72	Խնուսի Չեյուրմե գյուղից
4. Իմիրխանի	30	104	86	190	Բասենի Քեռվորի-Քեռերից
5. Ճովխանի	19	74	51	125	Կարնո գյուղերից
6. Գյուրջի-Յոլ	27	104	76	180	Բասենից
7. Ջելար-Կեչուտ	33	110	97	207	Բասենից
8. Մարիսար	42	115	101	216	Բասենի Նուրիման-Ագրակից
9. Իվիսիսի	69	203	131	334	Ներքին Բասենի Պատիճվան գյուղից
10. Հայկ. Գյոզարարա	16	56	45	101	Վերին Բասենի Հաջի-Խալի և Դոլոթ գյուղերից
11. Ջաջուտ	72	236	148	380	Խնուսի Խողլու գյուղից
Ընդամենը	373	1207	900	2107	

Այսպիսով, 1829-31թթ. ընթացքում Թուրքիայի տարածքներից գաղթելով՝ Շորագյալի գավառում տեղավորվեցին գաղթականների ավելի քան 3590 ընտանիքներ (մոտ 20000 մարդ), որից 1250 ընտանիք կամ 6600-6800 մարդ (600 ընտանիք կարսեցիներ, 200 ընտանիք էրզրումցիներ, մոտ 300 ընտանիք բայազետցիներ, 30-40 ընտանիք բոշաներ և մոտ 100-120 ընտանիք բասենցիներ ու մշեցիներ) հաստատվեց միայն Գյումրիում և դարձավ Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչության կորիզը: Մնացած 2341 ընտանիքը (13465 մարդ), այդ թվում նաև 4 ընտանիք բոշաներ, 25 ընտանիք բողոքականներ և 9 ընտանիք մահմեդականներ տեղավորվեցին գավառի գյուղերում՝ դրանց թիվը 1829-31թթ.-ին 20-ից հասցնելով 76-ի:

РАССЕЛЕНИЕ ЗАПАДНОАРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В УЕЗДЕ ШОРАГЯЛ (ВОСТОЧНЫЙ ПИРАК) В 1829-1831ГГ.

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Айрапетян \_\_\_

Проблема репатриации западноармянских беженцев изучена в историографии многоаспектно. Но вопросы расселения в Восточной Армении западноармянских беженцев остаются открытыми и все еще требуют глубокого научного исследования. Всестороннее исследование архивных и иных материалов позволяет установить особенности подготовки и проведения властями расселения западных армян на территории уезда. Выявлены также ошибки и упущения российских властей в период этого многоэтапного процесса.

Результаты исследования фиксируют, что Шорагяльский уезд с 1829 по 1831гг. принял 3590 западноармянских семей (около 20.0000 человек). Из данного количества 1250 семьи (600-карсцы, 200-эрзрумцы, 300-вазетцы, 100-120-басенцы и мушцы, 30-40- воша) обосновались в деревне Гюмри, постепенно формируя ядро его городского населения. Остальная часть переселенцев – 2340 семей были размещены в сельских поселениях, за три года доведя количество сел на территории уезда от 20-и до 76-и.

<sup>81</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, քրթ. 154, վավ. 28, էջ 2:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 3:

## Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ

### ԺԱՄԱՆԱԿԻ ԳԻԾԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՀԻՆ

Մարդու հոգեկարգավորման գործընթացն ապահովող կարևոր գործոններից է ժամանակը: Այս ոլորտում անձի հոգեբանական ժամանակն ունի երեք չափում՝ անցյալի, ներկայի և ապագայի ուղղվածությամբ: Անցյալն այլևս չկա, ապագան դեռևս չկա: Նրանք գոյություն չունեն այնպես, ինչպես ներկան, որն իր ձևերով շրջապատում է մեզ, որի մեջ մենք ապրում ենք և որը զգում ենք իբրև ապրված փորձ: Սակայն ո՛չ անցյալը, ո՛չ ապագան զուտ անգոյություններ չեն, քանի որ մենք կարող ենք պատմել անցյալի իրադարձությունների մասին, որոնք մեկընդմիջտ կորսված չեն, այնպես, ինչպես մենք կարող ենք կանխատեսել ապագան, որից բացարձակապես կտրված չենք: Անցյալը և ապագան միաժամանակ գոյություն ունեն և գոյություն չունեն: Անշուշտ, անցյալի որոշ հետք մնում է հիշողության մեջ, որն երբեմն կարիք ունենք վերակենդանացնելու: Բոլոր դեպքերում ժամանակը մենք քննում ենք այն ընկալողի հոգեբանական առանձնահատկությունների հայեցակետով, տվյալ դեպքում ժամանակի ընկալումը աղետի պահին, այսինքն՝ աղետն իբրև ժամանակային սահմանագիծ ինչպես է ընկալվում անձի կողմից: Սահմանային իրավիճակներում մարդու կյանքի ընթացքը պայմանավորում է ժամանակի հոգեբանական ընկալման երկփեղկվածությունը:

Հոգեկարգավորման գործընթացում *ժամանակի գիծ* հասկացությունը դիտարկում ենք նախատեսության և հետատեսության կտրվածքներով: Ստրեսի պահին ժամանակի ընկալումը դրսևորվում է որոշակի մասնահատկություններով: Ժողովրդագրական հարցումներից և բնակչության՝ աղետի մասին ստացած տպավորություններից ու վերապատումներից պարզել ենք, որ անձը բուն աղետի պահը զգում է ժամանակային լայն ընդգրկման մեջ՝ անցյալի, ներկայի և ապագայի խախտումով: Ստրեսի մասին շարունակական վերապատումները թույլ են տալիս ենթադրել, որ աֆեկտիվ հոգեվիճակում ժամանակը անվերջանալի է թվում: Ճգնաժամի պահին այն կարծես կանգ է առնում ենթագիտակցական մակարդակում, անձը սևեղծվում է ստրեսոգեն ժամանակային փուլին: Վերբալ հաղորդակցման ընթացքում շարունակաբար անդրադառնում է իր կյանքի այդ ժամանակահատվածին՝ հաճախ դրսևորելով ժամանակի ընկալման հոգեբանական նահանջ (ռեգրեսիա): Երբեմն էլ անսովոր ուժի ստրեսները կարող են մարդու մտապատկերների դաշտում ժամանակի ընկալումը հանգեցնել առասպելականացման (թվում է՝ սուտ է, եղել է-չի եղել, կար-չկար): Ստրեսի պահին հաճախ է տեղի ունենում հոգևոր ուժերի համակենտրոնացում: Մարդը նախապատրաստվում է հարմարվողական վիճակի՝ ժխտելով իրական ժամանակը: Ժամանակի գիծը մտովի տանելով դեպի անցյալ՝ հետահայացությամբ (ռետրոսպեկցիայի միջոցով) նա ենթագիտակցությունից արտանդում է անցանկալի ժամանակը: Արտանդված տպավորությունները իրականում չեն մոռացվում: Բոլոր դեպքերում մարդու հուզազգացմունքային վիճակը, տարիքային, տիպաբանական առանձնահատկությունները կարող են ազդել ժամանակի գնահատման վրա: Կարևորն այն է, թե ինչպես մարդուն դուրս բերել տվյալ ժամանակին սևեղծված մնալու զգացողությունից, ինչպես մողելավորել այն իրադրությունները, որոնցում կառաջանան տիպական զգայություններ և անձին բավարարվածություն պատճառող վիճակներ:

Մեզ հետաքրքրում է *անձի հոգեբանական ժամանակ* հասկացությունը, նաև՝ ժամանակի այն զգացողությունը, թե ինչ է կորցրել մարդը՝ նյութակա՞ն, թե՞ հոգևոր արժեք: Ամեն ինչ վերականգնելի է, եթե նյութական արժեքների կորստին է առնչվում: Անդառնալի են միայն մարդկային կորուստները, այսպես՝ պատմական Հայաստանը չի վերականգնվի, քանի որ մարդկային կորուստներն անվերականգնելի են, բայց հույսը, որ աշխարհը կճանաչի ցեղասպանությունը, արժեք է, որը կարևորվում է առավել ևս ազգի բարոյահոգեբանական նկարագրի ամբողջացման առումով: Ընդհանուր առմամբ ժողովրդի համար արժեքավորված են ազգային արժեքների՝ տարածքի, էթնիկական-բարոյական կերպարի կորուստները, ուժացումն ու ձուլումը:

Ամեն ինչ դիտարկելով ժամանակի գծի մեջ՝ կարելի է ասել, որ աղետը արագացված ժամանակի մեջ է, իսկ բարոյահոգեբանական կորուստը՝ դանդաղորդ: Ծգնաժամը կարող է տևել կարճ կամ երկար՝ պայմանավորված մարդու և ազգի ընկալունակությամբ: Կորստի չափի ընկալումը ժամանակային առումով որոշվում է դրա տևողությամբ: Հոգեբանական ճգնաժամը սկսվում է այն ժամանակ, երբ ազգը աստիճանաբար կորցնում է հավատը: Հոգևոր ուժերի անկումը կարող է երկար տևել: Աղետից անմիջապես հետո բնակչության հույսն ավելի մեծ էր, ուշադրությունը դեպի իրեն՝ ավելի բևեռացված, կորուստի զգացողությունը ցայժմ էլ շարունակվում է: Բնակչության 20%-ը ինտրոյեկտիվ կարող է հավատալ, որ ինչ-որ վերականգնման կհասնի նյութական արժեքների իմաստով: Ստվար մասի համար, որոնց անձնային կորուստներն անդառնալի են, անհուսության զգացողությունը դժվար հաղթահարելի գործընթաց է: Ըստ էության ճգնաժամը ոչ թե որոշակի ժամկետ է, այլ մեծ ժամանակահատված՝ հետադեպի շրջանում:

Այն ընտանիքներում, որտեղ ճգնաժամն ավելի է խորացել, այդ զգացողությունը փոխանցվել է երեխաներին: Կորուստների մասին անընդհատ վերապատմումները ճնշում են նրանց: Անշուշտ, ամենաբարդը բարոյահոգեբանական ճգնաժամի հաղթահարումն է, որի համար պահանջվում է մեծ ժամանակ: Ժամանակը ճգնաժամի պահին միայն տվյալ պահի ընկալումը չէ, այլ կարող է բավական երկար տևել: Հետևաբար հակաճգնաժամային արժեքների ստեղծումը առաջնահերթ խնդիր է. արժեքը փոխակերպել, նոր իմաստ հաղորդել, որպեսզի ճգնաժամի ընկալունակությունը փոխվի: Սոցիալական, բարոյական, անձնային նոր արժեքների ստեղծումով կարելի է ճգնաժամի խորությունը թուլացնել: Ըստ էության, ոչ թե ժամանակն է բուժում, այլ նոր արժեքային կողմնորոշումները փոխում են մարդուն և նրա վերաբերմունքը աշխարհի հանդեպ:

Համեմատաբար դժվար հաղթահարելի է այն ճգնաժամը, որը դարձել է նախնական տպավորություն՝ իմպրիտինգ: Շատ կարևոր է այն, թե ինչպիսին է մարդու կյանքի վաղ շրջանի փուլը, որն համընկնում է նրա գերզգայուն շրջանի հետ: Մարդու հոգեբանության և նրա ենթագիտակցականի հիմնախնդրի լուծման տեսակետից հաստուկ հետաքրքրություն է ներկայացնում, թե նա ինչ մտապատկերներ է ժառանգում, ինչը հետագայում՝ որպես նախնական տպավորություն, ուղեկցում է նրան ամբողջ կյանքում:

Ժամանակը դիտելով իբրև անընդհատ չխզվող գիծ՝ կարելի է եզրակացնել, որ այն ունի վերընթաց, վայրընթաց և ուղղընթաց ենթազմեր: Կյանքի լավագույն շրջանը միշտ վերընթաց է, միապաղաղությունը՝ ուղիղ գիծ, իսկ ճգնաժամը՝ վայրէջք: Աղետ տեսած մարդը՝ իբրև վերընթաց գիծ, ընտրում է նախաաղետյան շրջանը: Այսպիսով, *ժամանակի գիծ* կառուցելիս անհրաժեշտ է, որ անձն իր կյանքը հարաբերականորեն բաժանի անցյալի, ներկայի և ապագայի:

Հիշողությունը դիտելով *ժամանակի գծի* մեջ՝ կարող ենք ասել, որ այն սոսկ անցյալի վերակենդանացում չէ, քանզի այս պարագայում անցյալը զգայապատրանքային ներկայությամբ կխառնվեր ներկա ժամանակին: Եթե անցյալն իսկապես վերապրվեր հիշողության մեջ, մենք չէինք ըմբռնի, որ այն արդեն անցել է, նման այն մարդուն, որը շարունակաբար վերադառնում է մանկություն՝ չըմբռնելով, որ ինքն այլևս երեխա չէ:

Անցյալի առանձնահատկությունն այն է, որ տևական շարունակություն է ստանում ներկայի մեջ: Երբևէ ներկա չէր լինի, եթե անցյալն անհետանար ոչնչի մեջ: Այն բանից հետո, երբ ինքը ոչինչ չի դառնում, նա կհաջորդեր մի գուտ անցյալ չունեցող ներկայի: Հետևաբար հիշողությունն անցյալի գետեղարան չէ, այն պատմելու, համահաղորդվելու գործառույթ ունի: Հիշողությունը մեր անցյալն է իր ամբողջությամբ, որը պահպանվում և չի դադարում կուտակվել ինքն իր վրա: Մեր կյանքի յուրաքանչյուր դրվագ ամեն անգամ հարստացվում է փորձով և երբեք նույնական չէ նախորդի հետ: Մեր ինքնության փոփոխությունը պայմանավորված է մեզանով: Մենք մեր հիշողությունն ենք, որը չի կուտակվում մեր ենթագիտակցության մեջ, ինչպես գումարը գումարի վրա: Այն կազմում է մի ամբողջականություն, որն ամեն անգամ որակապես նոր է:

Հոգեբերապիայի միջոցով կարելի է պարզել անձի ժամանակային զգացողությունը. արդյոք ապրում է ժամանակների հերթափոխման կարգով, թե՞ սևեռված է մեկ փուլի: Որտեղի՞ց է սկսվում նրա կյանքի ժամանակը, ո՞րն համարել հաշվարկային



սկիզբ, նրան վերագրել սուբմոդալ հատկություններ (տաքություն, ջերմություն, սառնություն, թեթևություն, համ, հոտ):

Հոգեկարգավորման գործընթացում պետք է կիրառել մարդու ներքին պաշարների և հնարավորությունների անսահմանափակության սկզբունքը: Կամ իրավիճակներ, որոնք օբյեկտիվորեն հնարավոր չէ փոխել, բայց շնորհիվ այս սկզբունքի, մենք փոխում ենք իրադրության սուբյեկտիվ պատկերացումները, մարդու վերաբերմունքը այդ ամենի նկատմամբ: Ըստ էության մեր նպատակն է անձին տեղավորել ներկայի մեջ՝ առաջադրելով գերակշռող բազմակերպության սկզբունքը կամ մարդկային յուրաքանչյուր փորձի հակադարձելիության և ամենակարևորը՝ դրական մտադրություններ ստեղծելու սկզբունքը, որի համաձայն՝ ամեն ինչ անձի մեջ է, իրականում չկան զգայական փակուղիներ:

Մեր ազգի հոգեկերտվածքի առանձնահատկություններից է անցյալին դիմելը, նրա դրվագները վկայակոչելը: Համանման փորձի զգացողությամբ տարիքային բարձր խմբերը հետահայացությամբ գնում են դեպի մանկություն: Թերևս սա ճգնաժամի լուծման ելուղիներից մեկն է, քանի որ անցյալը սրբազրված չէ:

Մարդու հոգեկան աշխարհին ավելի հայեցողական է, դանդաղ է անցում կատարում դեպի նոր վիճակը, նոր ժամանակին անցումը դարձյալ ժամանակ է պահանջում: Հետաքրքրական է, որ մարդը ձգտում է բացասական մտքերը, տհաճ զգացողությունները թաքցնել: Իրադրական զգացումների մեջ բացահայտվում է մարդու հոգեկան աշխարհը, այսինքն՝ թաքնված հույզի բացահայտումը համանման իրադրության մեջ է լինում: Աշխարհի աղետն ընկալվում է սեփական աղետի ոսպնյակով:

Այսպես, աղետի ժամանակային ընկալումը տարիներ անց այսպիսին է՝ ըստ հարցվողներից մեկի անմիջական պատմումի. «Հետերկրաշարժյան տարիների մասին ոչ մի հիշողություն չունեմ, ես մնացել եմ աղետից առաջ: Այն, որ պիտի ապրեի, չսպրեցի, չվայելեցի. մենք հոգու թելերով կապված ենք մեծ ակնթարթին... Այդ օրը շատ երկար տևեց, անվերջանալի: Սպասողի համար ահավոր երկար է թվում ժամանակը: Այն, ինչ հետք չի թողնում, արագ է անցնում. անցյալը տպավորիչ է: Հիշում եմ՝ աղետի օրը կապտագույն հաց էին բաժանում ժողովրդին: Մա ինձ հիշեցրեց տատիս թխած հացը, ցավոտ եմ հիշում հացի հոտը. անդարձ զնաց այդ հոտը:

Մորաքույրս գռիվեց երկրաշարժին, բայց ես փոխանակ նրան փնտրելու աշխատակալում, անընդհատ ժամացույցիս էի նայում ու մտածում՝ եթե ժամանակն անցնի, կգա: Ես զբաղվում էի ժամանակի գումարմամբ՝ 5, 6, 7 ... Ինձ թվում էր՝ պետք է հաղթահարեի ժամանակը, որ նա գար»:

Այն ժամանակային իրավիճակը, որ աղետով պայմանավորված ընդհատվեց, դեռ շարունակվում է հարցվող անձի մեջ: Կարևորն այն է, թե մարդ ինչի է սպասում և արժեքի հիմնախնդիրն ինչպես է լուծում, քանի որ ժամանակը ևս ինչ-որ արժեքավոր բանի սոցիալական սպասում է: Չուր ապրած ժամանակը չի արժեքավորվում, քանի որ այն օրացուցային պահ չէ, այլ անձի զգացողություն: Եականը մարդկային սպասումները ժամանակի մեջ իրար միացնելն է: Մարդկային հարաբերություններից անձը միշտ ակնկալիք ունի, միանգամայն այլ խնդիր է, թե ինչ չափով է այն իրականանում:

Պայմանականորեն գոյություն ունի բացասական և դրական ժամանակ: Մեխանիկորեն կարելի է բացասականը մասնատել, ջնջել, հանել, այս դեպքում անձը գործի է դնում պաշտպանական մեխանիզմներ, առավելապես արտամղման և ճնշման գործընթացում: Այս երկու պաշտպանական հիմնական մեխանիզմներն ընկած են անձի հոգեբանական ինքնապաշտպանության հիմքում: Երկուսի խնդիրն էլ անձի գիտակցության ոլորտից տհաճ, ֆրոստրացնող տպավորությունների հեռացումն է, որ կատարվում է ինքնարբերաբար, ենթագիտակցորեն: Այս հեռացման ընթացքն սպասելի էլու համար ժամանակային մեծ գործոն է պետք: Դրանք միանգամայն բնական հարմարվողական մեխանիզմներ են, թեև որոշ չափով աղճատում են իրականությունը՝ հանգեցնելով ինքնախաբեության: Պաշտպանական մեխանիզմների օգտագործումը անձին թույլ է տալիս ժամանակ շահել նոր խնդրի լուծման ճանապարհին:

«Ճգնաժամի տեսությունը աղետից տարիներ անց» ծրագրի շրջանակներում հարցումներ ենք կատարել պարզելու համար աղետի պահին անձի ժամանակի ընկալման հոգեբանական առանձնահատկությունները:

Հարցվողը երկրաշարժին կորցրել է 2 երեխաներին: «Առաջին պահին ուզեցի ճշտել, թե որտեղ եմ: Մի պահ թվաց, թե ուրախ եմ, որ կամ: Հետո ուզեցի ճշտել, թե որտեղ եմ երեխաներս, տեսա, որ միասին փրկված չենքի տակ ենք: Ինձ ժամանակը շատ երկար թվաց, բղավում էի, ճշում, ժամանակը չէր անցնում: Երբ ամուսինս եկավ, ես զարմացա, մոռացել էի նրա գոյության մասին, բայց ջղայնացա, թե ինչու՞ ուշացավ: Ես մեղադրում էի մյուսներին, ովքեր չէին գալիս օգնելու ինձ: 14 տարին՝ աղետից հետո եղած ժամանակը, ես ապրեցի իներցիայով, միակ լուսավոր կետը նոր գավակիս ծրուհուն է: Երեխայիս ծնունդն ինձ ստիպեց ապրել ներկայով: Ես տեսա, որ չմեռա: Կյանքը շարունակվում է: Ինչու համար եմ ես միշտ անցյալ վերադառնում, որովհետև իմ արժեքներն այնտեղ են: Կորցրած գավակներիս միշտ համեմատում եմ նորի հետ: Նրանց գիտեմ էս երեխայիս տարիքի չափով, դրանից հետո չգիտեմ՝ ում հետ բաղդատեմ: Համոզված եմ, որ ժամանակը երբեք չի բուժում»:

Այսպիսով, հոգեբանական մույնականացումը բավական խորն է, ստիպում է սոցիալական շրջանառության մեջ դնել սեփական անձը: Իդենտիֆիկացիան անձի զարգացման կարևոր մեխանիզմներից է, որ երբեմն ախտաբանական է դառնում:

Ստրեսների դեպքում դրսևորվում է նաև հոգեբանական մահանց, որը ներկայից փախչելու ձևերից մեկն է: Ահա թե ինչու ինքնաբերական վերադարձը դեպի անցյալ հաճախակի է հանդիպում ստրեսների ու ճգնաժամների պահին: Այդ դեպքում անցյալի մոտիվացիայով պատկերներն ավելի հաճախ են երևակվում երազային մտածողության մեջ, քանի որ ներկան ճգնաժամ է:

Հոգեկարգավորման գործընթացում կարևորվում է մարդու ապրած կյանքի բովանդակության, մանրամասնի ու էական պահերի վերլուծումը, որն հնարավորություն կտա ամբողջական պատկերացում ունենալ նրա հոգեկան աշխարհի մասին: Մարդու կյանքի ամբողջականությունը և ապրած ժամանակի անընդհատականությունն օգնում են առաջադրելու հաղորդակցման այնպիսի մոդելներ, որոնք նրան դուրս են բերում անտարբերության և անհանգստության ոլորտից:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրահանգել, որ մեր նպատակամիտումն է հոգեկարգավորման գործընթացում աղետյալ մարդուն դուրս բերել գերճշված իրավիճակից՝ առաջադրելով նոր և դրական մոտիվներ:

Ժամանակը ճիշտ գնահատելու ընդունակությունը նպաստում է մարդու վարքի ինքնակարգավորման ու արդյունավետության խթանմանը:

## ВРЕМЯ В КРИЗИСНОЙ СИТУАЦИИ

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *К. Саакян* \_\_\_\_\_

Время-один из важнейших факторов при восстановлении психики человека, попавшего в экстремальную ситуацию. При этом уделяется внимание трем временным направлениям: настоящему, прошедшему и будущему.

Более пристально рассматривается восприятие личностью времени в кризисной ситуации, то есть, когда в жизни человека наступает спад. В момент стресса в человеке происходит мобилизация всех сил. Он как бы подготавливается к социальной адаптации. Ретроспективно личность подсознательно отвергает нежелательное настоящее, пугающую ее реальность.

Уход в прошлое как бы защищает человека от всяких потрясений.

Наша цель-вывести личность из состояния при помощи новых положительных зарядов, эмоций, создавая при этом ситуации, способные откорректировать, восстановить пошатнувшуюся психику человека.

*Հասմիկ ՄՏԵՓՄԱՆՅԱՆ  
Սյուզան ՄԱԼԽԱՍՅԱՆ*

*ԿԱՆՈՆԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ  
ՈՒՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՇՏՈՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Հայ հոգևոր երգարվեստի վերընթաց զարգացումն իր գագաթնակետին հասավ կիլիկյան մշակույթի արվեստաշատ մթնոլորտում, որտեղ երգատեսակներն իրենց բազմաձև և բազմաբովանդակ բնութագրով միջնադարյան մշակույթում մնացին իբրև անգերազանցելի կոթողներ: Իր խմբագրած մի Գանձարանի հիշատակարանում Գրիգոր Խլաթեցին (XV դար) գրում է. «Ես՝ տրուպս ի կարգատրաց և յետինս ի բանասիրաց՝ անուամբս Գրիգոր պիտակաբար, ... մեծաւ տաժանմամբ ի հոգս անկեալ ժողովեցի զպիտանի գանձերս և եղի կարգաւ ի միում տըփի զասացեալս ի հոգեկիր արանց յառաջնոցն և յետնոցս, որք արժանի եղեն պարզեաց հոգոյն սրբոյ և ասացին զանազան ոճով ի կերպ և ի գոյնս ձայնի, ի կարգս և ի շարս բանի՝ զանազան եղանակաւ, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ և ի զուարճութիւն մանկանց նոր Միովնի, որ արդատաւրէ գեղգեղեալ փոփոխին ի փառս աստուծոյ և ի պատիւ սրբոց նորս»:<sup>1</sup>

Ուշ միջնադարը մթագնեց կիլիկյան մշակույթի ապագան: XVI դարում տրոհվելով երկու գերտերությունների՝ Մեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև, Հայաստանը կորցրեց ոչ միայն անկախությունը, այլև հայտնվեց պատմամշակութային բարդ իրավիճակում: Արևելաքրիստոնեական արժեքներ կրող և զարգացնող հայ մշակույթը աշխարհաքաղաքական նշանակալի գործընթացների պատճառով ընդգրկվեց այնպիսի քաղաքական, տնտեսական և էթնոմշակութային գործընթացների մեջ, որտեղ տիրապետող մահմեդական-ավատատիրական գործոնն էր: «Հոգևոր արվեստը, - գրում է Ն. Թահմիզյանը, - սույն պատմաշրջանում անցավ որոշ շրջափոխության բովից, հարստացավ հին ձևերի նմանողությամբ հորինված մի շարք ստեղծագործություններով: Այս կամ այն չափով շարունակվեց դեռևս նախորդ ժամանակաշրջանում (XIII-XIVդդ.) ծաղկած այն փորձը, որով որոշ հին երգերի եղանակներ վերանայվում էին՝ նոր ժամանակների ու ճաշակի համապատասխան: Այդ ճաշակն այժմ ոճականորեն նոր ու բարձր մի ուղղության հետ չէ, որ կապվում էր (ինչպես նախորդ շրջանում), այլ միջավայրի փոփոխության, նրա, եթե կարելի է ասել, մահմեդական տիպի արևելականացման: Արդյունքն այն եղավ, որ մի շարք դեպքերում հոգևոր արտապաշտամունքային տաղերը զուգորդվեցին արևելյան եղանակների հետ, փոքր-ինչ ընդգծվեցին որոշ «ծանր» երգերի զարդուղումները, «միջակ» երգերը, քիչ ավելի հաճախ, քան դա լինում էր առաջներում, տարբերակվեցին «ծանրացումով», և կատարման առումով տուրք տրվեց «արևելյան» կոչված ճաշակին...»:<sup>2</sup>

Հոգևոր երաժշտության ոլորտում անկումային վիճակն էլ ավելի սրվեց՝ խազային նոտագրության գործնական կիրառության աստիճանական նվազումով և, ի վերջո, Շարականի երգերի՝ հիմնականում բանավոր ավանդման կարգի հաստատումով: Միևնույն ժամանակ, ուշ միջնադարի բավական բարդ բնութագրի մեջ կարևորվում են նաև հոգևոր երգի հարուստ ժառանգության պահպանմանն ուղղված քայլերը: Արդեն XV դարում Գրիգոր Տաթևացին գրում էր. «Այսքան շարականս ընդունելի է յեկեղեցի և ավելին քան զայս՝ խոտելի է և անպիտան»:<sup>3</sup> Նրա հորդորը հիմնավորված էր Թովմա Մեծովեցու և Գրիգոր Խլաթեցու ջանքերով կատարված կարևոր ծիսամատյանների՝ Ժամագրքի, Շարակնոցի, Պատարագամատույցի լավագույն խմբագրությունների առկայությամբ:

Հետագայում ծայր առած վայրընթացը կանխարգելող կարևորագույն քայլերից էին հայոց հոգևոր հայրերի աննկուն ջանքերը՝ ուղղված հոգևոր երգերի անաղարտության պահպանմանն ու դրանք այլևայլ ազդեցություններից զերծ պահելուն: Այս շարժումը զարգացում ապրեց Միմեոն Երևանցու և հատկապես Գևորգ Գ կաթողիկոսի

<sup>1</sup> ԺԵ դարի հիշատակարաններ, մաս Ա, Եր., 1955, էջ 90-91:

<sup>2</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ.4, Եր., 1972, էջ 574:

<sup>3</sup> Գր. Տ ա թ և ա ց ի, Գիրք հարցմանց. Կ. Պոլիս, 1729, էջ 638

գործունեության շրջանակներում՝ իրականացնելով կարևորագույն ծիսամատյանների հրատարակումը հայկական նոր ձայնագրության համակարգով: Այդ ձեռնարկումը կարևոր մի հանգրվանի բերեց հայոց տոհմիկ ծխերգը, որի ուշմիջնադարյան գոյակերպը՝ հենված բանավոր ավանդման վրա, այսօր էլ առաջ է բերում բարդ ու հետաքրքիր խնդիրներ՝ հայ երաժշտական միջնադարագիտության տարբեր ոլորտներում:

Ուշ միջնադարում սկսված բարենորոգչական շարժման մեջ կարևոր մասնակցություն է ունեցել նաև Մովսես Տաթևացի կաթողիկոսը (1629-1630): Նրա հատուկ հոգածությանն է արժանացել նաև հայոց պաշտոներգության բարեկարգումը: Միմեոն Երևանցին նրան այսպես է բնութագրել. «Մա էր այր հոգեղնկալ, առաքինագարդ, ... ի հիմանէ նորոգեաց զուրբ Աթոռս՝ և պայծառացոյց հոգեւորական կարգոք, և մարմնական պիտոյիք: ... զարդարեաց և այլովք բազմօք եղանակօք զուրբ աթոռս՝ որպէս ասացաք»:<sup>4</sup> Հատուկ կարգադրությամբ Մովսես Տաթևացին հայոց պաշտոներգության մեջ նուրբ օրհնություններ քաղելու ավանդույթը:<sup>5</sup> Ինչպես հայտնի է, *օրհնությունը* քրիստոնեական հնագույն ժանրերից մեկն է, նաև՝ VIII դարում Ստեփանոս Մյունեցու կողմից հաստատված եկեղեցական կանոնի ժանրի առաջին շարականը: Մյունեցին հեղինակել է նաև Ավագ Օրհնությունները, որոնք հատուկ ծիսական նշանակություն են ունեցել: Դրանց տասը թիվը ուշ միջնադարում ներկայացել է իբրև ինքնատիպ չափա մնուշ, որի օրհնակով յուրաքանչյուր օրվա կանոնի օրհնության շարականը տասը պատկեր է ընդգրկել: Այսպես պաշտոներգության մեջ մուտք է գործել օրհնություն քաղելու ավանդույթը: Վերջինս, ամենայն հավանականությամբ, մերձավորարևելյան ճաշակին և ժամանակի երաժշտաոճական շրջանակներին հարմարվելու միտում է եղել, քանի որ ձևի և բովանդակության հստակ և լակոնիկ արտահայտչաձևեր կրող հայոց քրիստոնեական հոգևոր երգը հայտնվել էր երկարաբան, քաղցրահնչյուն, բազմուրումն արևելյան արտահայտչամիջոցների, գեղագիտական, զգայական մթնոլորտում:

Օրհնության շարականների քանակի մեծացումը նպաստում էր տվյալ օրվա կանոնի արհեստական ընդլայնմանը և ուռճացմանը: Այս երևույթը ժամանակին արժանացել է Կոմիտասի խիստ քննադատությանը: 1910 թվականին Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանին ուղարկած նամակում նա գրել է. «Շարականի երգեցողության անկմանը նպաստել են երկար ու ձիգ անմիտ ձգձգումները (անյարիր նախատօնակները, հանգստեան շարը, քաղուածոյ շարը, անտեղի ճոխացումները), որոնք փոխանակ ոգևորութիւն առաջ բերելու, խեղդել են մաքուրն ու պարզը, հասարակութիւնն այլև ձանձրացել է երկարաբանութիւններից, որոնք միայն և միայն վերջին տարիների անճաշակ նորամուծութիւններն են»:<sup>6</sup>

Պետք է նկատի ունենալ այն, որ կոմիտասյան խստաշունչ խոսքը ուղղված էր առհասարակ հայոց քրիստոնեական պաշտոներգության ավանդակարգի ցանկացած շեղման դեմ (այդ թվում նաև՝ ուշմիջնադարյան) և կոչ էր՝ հետայսու անխաթար պահելու եկեղեցական բազմադարյա երգեցողությունը: Երևույթի պատմաքննական դիտարկումը պայմանավորում է արժեքավորման այլ չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու կանոնի ժանրի ընդլայնման յուրօրինակ կերպերից մեկը: Մ.Օրմանյանի ծիսական բառարանում նշված է նաև, որ այլ կանոններից քաղված շարականների ընտրությունը եղել է ազատ: Պարտադիր պայմանն այն էր, որ ընտրված հավելյալ շարականները իրենց բովանդակությամբ պետք է համապատասխանեին տվյալ օրվա ծիսական խորհրդին: Այսպես. Ստեփանոս Նախավկայի կանոնում որպես *քաղուածք* ընտրված են հետևյալ շարականները.

- |                         |                               |
|-------------------------|-------------------------------|
| 1. Որ էնն յէութեան      | - Կանոն Որդոյն Որոտման        |
| 2. Իմաստութիւն երկնային | - Կանոն 12 աշակերտաց Քրիստոսի |
| 3. Երրորդութիւն սիրող   | - Կանոն Մարտիրոսաց            |
| 4. Աղբիւր կենաց բաշխօղ  | - Կանոն Պէնտէկոստէի Դ ատուրն  |
| 5. Ես ասացի Տէր ողորմես | - Կանոն Համօրէն ննջեցելոց     |
| 6. Որ անտես և անքնին    | - Կանոն Ծննդեան Գ ատուրն      |

<sup>4</sup> Մ ի մ ե ն ճ Եր ե վ ա ն ց ի, *Չամբք համաժողովեալ եւ շարադրեալ ի Միմեոնէ կաթողիկոսի Երևանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 21:*

<sup>5</sup> Մ. Օրմանյան, *Ծիսական բառարան, Եր., 1992, էջ 163:*

<sup>6</sup> Կոմիտաս, *Նամակներ, Եր., 2000, էջ 62:*

## 7. Խաչի քո Քրիստոս - Կանոն Վերացման սրբոյ Խաչին Բ ատուրն

Քաղված շարականները մեկ միասնական ժողովածուի մեջ ընդգրկումը կարևոր փաստ է, որի ուսումնասիրումը ակնկալում է միջնադարյան ձեռագիր ու տպագիր մատյանների բաղադատական վերլուծություն: Վերջինս դուրս է ներկա աշխատանքի շրջանակներից: Իբրև չափանմուշ ընտրել ենք 1882 թվականին Էջմիածնում հրատարակված «Չայնագրեալ քաղուածք Օրհնութեանց» ծիսամատյանը:<sup>7</sup> Այն ստեղծվել է Գևորգ Դ կաթողիկոսի բարենորոգչական գործունեության շրջանակներում: Հեղինակները Ն. Թաշճյանի ղեկավարած աշխատանքային խմբի անդամներից են եղել, որոնք ժողովածուն կազմել են նրա Կ. Պոլիս վերադառնալուց հետո: Հետևաբար այս ժողովածուն համալրում է XIX դարի երկրորդ կեսին հայկական նոր ձայնանիշերով գրառված հայոց պաշտոներգության հիմնական ժողովածուները: «Քաղուածք» ժողովածուի ընդհանուր բնութագիրը այսպիսին է.

*Քովանդակությունը* – ժողովածուն ընդգրկում է շարականների քաղածո շարքեր Ծարակնոցի բոլոր կանոնների համար, ինչը կարևորում է նրա գործառույթը հայոց պաշտոներգության մեջ: Մի փոքր այլ է կանոնների դասավորությունը: «Քաղուածք» ժողովածուն սկսվում է Պահոց, Համօրեն Ննջեցեյոց, Մարտիրոսաց և Ավագ օրհնութեանց շարքերով, որից հետո միայն սկսվում է Ծարակնոցի կանոնաշարը՝ սկսած Աստվածածնի ծննդյան կանոնից: Քաղված շարականները քանակով 1450 են: Որոշ նմուշներ կրկնվում են մի քանի շարքերում: Այսպես. Պենտեկոստեի առաջին օրվա «Առաքելոյ աղանոյ» շարականը կրկնվում է յոթ շարքում,<sup>8</sup> Մուրթ խաչի վերացման երկրորդ օրվա «Խաչի քո Քրիստոս» շարականը՝ հինգ շարքում:<sup>9</sup> Ըստ ավանդույթի, քաղածո շարքերում չեն ընդգրկվել միայն բուն կանոնների հարցերն ու գործառույթը:<sup>10</sup>

*Տեսնալի նշումը* – Ժողովածուում գերակշռում են *միջակ* տեսնալ ունեցող երգերը: Հանդիպում են նաև *հորդոր*, *չափավոր*, *միջակ չափավոր* նշումներ: Առաջ անցնելով նշենք, որ *միջակ* տեսնալի գերակայությունը ծիսամատյանի գործառույթի կարևորագույն բնորոշիչներից մեկն է:

*Չայնեղանակային համակարգը* – Համալրելով հայոց պաշտոներգության կանոնները՝ «Քաղուածք» ժողովածուն ներառել է համարժեք ձայնեղանակային համակարգ: Ավանդական ՈՒԹձայն համակարգը այստեղ դրսևորվել է հետևյալ կառուցվածքով. ԱՁ, ԱՁ դարձվածք, ԲՁ, ԲԿ, ԳՁ, ԳՁ դարձվածք, ԴՁ, ԴՁ դարձվածք 1, ԴԿ: Բացակայում են ստեղծի ձայնեղանակները: Յուրաքանչյուր շարքին համապատասխանում է ձայնեղանակի մեկ, այն է՝ հիմնական նշում: Դարձվածք ձայնեղանակները համապատասխան նշումները բացակայում են: Ժողովածուում գետեղված չէ ձայնեղանակների սկավադքների համակարգը, ինչը, անտարակույս, պայմանավորված է ծիսամատյանի հավելյալ գործառույթով: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև 1975թ. հրատարակված «Չայնագրեալ Ծարակնոց հոգևոր երգոց» (այսուհետ՝ Չայնագրյալ Ծարակնոց) ծիսամատյանի չափանմուշային գործառույթը հայ երաժշտագիտության մեջ, մենք ևս հիմնվել ենք այդ ծիսամատյանի վրա՝ «Քաղուածք Օրհնութեանց» ժողովածուի ձայնեղանակային մտածողության առանձնահատկությունների վերլուծության մեջ: Կատարված դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ ժողովածուի երաժշտաճանակային հատկանիշներին բնորոշ են. ա) յուրաքանչյուր շարքի առանձին երգերին հորինվածքային ամբողջականություն հաղորդող կիսահանգամանակների և հանգամանակների տարբերվող, բայց փոխարացնող հարաբերակցությունները, բ) չնայած ձայնեղանակային բնորոշ դարձվածքների պատշաճ ընդգրկումներին, յուրաքանչյուր երգ կրում է անհատական-տիպական մեղեդային կառույցներ, որոնք անմիջականորեն բխում են տվյալ շարականի գրական տեքստի կառույցից, գ) շարականների տներից յուրաքանչյուրը հաճախ տարբերակված է և՛ սկզբնային, և՛ ընթացիկ դարձվածքներում, ինչը ևս նպաստում է հոգևոր տեքստի պատշաճ եղանակավորմանը:

<sup>7</sup> Չայնագրեալ քաղուածք Օրհնութեանց, հետեսակք Օրհնութեանց Տէրունական տօնից, այլև կարգ Հանգստեան եւ Անդաստանի շարականաց ի լրումն Չայնքաղի, Վաղարշապատ, 1882:

<sup>8</sup> Չայնագրեալ քաղուածք... էջ 101, 185, 321, 329, 353, 397, 470:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 145, 210, 235, 320, 374:

<sup>10</sup> Մ. Օրմա մյան, նշվ. աշխ., էջ 165 (Յուրաքանչյուր շարքում շարականների թիվը 5-10 է):

*Շարականների երաժշտական տեքստի տրոհությունը և չափակշռությամբ բնորոշիչները*։ Քանի որ «Քաղվածք» ժողովածուում երգերի հիմնական մասը ծավալվում է միջակ տեմպում, ուստի երաժշտաձևական հատկանիշների էական մասը պայմանավորում են այդ երգերը։ Հայոց պաշտոներգության մեջ միջակ տեմպում եղանակավորված շարականները վանկային են։ Դրանց երաժշտաշարահյուսական կառույցները գրական տեքստի նմանատիպ կառույցների համարժեքն են։ Վանկային կամ սիլլաբիկ շարականների ոճական հատկանիշներին անդրադարձել է միջնադարագետ Ն. Թահմիզյանը:<sup>11</sup> Անշուշտ, շարականների գրական և երաժշտական տեքստերի տրոհության հիմքում տաղաչափության օրինաչափություններն են։ Հիմնվելով Ա.Բահաբըրյանի բնորոշումների վրա՝ նշենք, որ ժողովածուում ընդգրկված են և՛ անհամաչափ կանոնավոր և՛ անհամաչափ անկանոն, հավասար և խառը տողերով քերթվածքներ։ Այստեղ տեքստի շարահյուսական տրոհությունը արտահայտված է ստորակետի միջոցով։ Հաճախ նույն ստորակետը կրկնապատկված է երաժշտական տեքստում, որը չափական կես միավորին համարժեք ձայնահատ է նշում և, հետևաբար, տրոհում է նաև երաժշտական տեքստը նախադասությունների և դասույթների։

Այսպիսով, «Քաղվածք» ժողովածուի երաժշտաձևական հատկանիշների բնութագրի մեջ արտահայտչամիջոցների զգալի ընդհանրությունները անհրաժեշտ է արժեքավորել ծիսամատյանի գործառույթի համատեքստում։ Որպես կանոնի ժանրի հավելյալ բաղադրիչների ժողովածու, այս ծիսամատյանը ուշ միջնադարում կոչված էր առավել նշանակալի դարձնելու տվյալ օրվա կանոնի ծիսական խորհուրդը։ Ավանդական կանոնին հաղորդելով ավելորդ ծանրություն և ծավալներ՝ միևնույն ժամանակ ծիսամատյանը աչքի է ընկնում կառուցվածքային և ոճական ամբողջականությամբ, հղկվածությամբ՝ լրացնելով XIX դարի երկրորդ կեսին հրատարակված ձայնագրյալ ժողովածուների շարքը։ 1822թ. հրատարակված այս ծիսամատյանի հեղինակները Գևորգ Դ կաթողիկոսի ծավալած բարենորոգչական աշխատանքների մասնակիցներն էին և ձեռքի տակ ունեին 1875թ. հրատարակված Ձայնագրյալ Շարակնոցը։ Հավանական է քվում վերջինիս ընդունումը որպես աղբյուր՝ քաղված շարականների շարքերը ձևավորելու համար։ Մակայն, ինչպես ցույց տվեց բաղադրական ուսումնասիրությունը, միևնույն շարականի երաժշտական բաղադրիչը հաճախ երկու ծիսամատյաններում զգալիորեն տարբերվում է։ Այս երևույթը մեծ հետաքրքրություն է առաջացնում հատկապես այն պատճառով, որ Ձայնագրյալ Շարակնոցի որոշ շարականներ նույնությամբ կրկնվում են «Քաղվածք»-ում։ Հետևաբար խնդիր է առաջանում դիտարկելու միևնույն շարականի տարբերակային առանձնահատկությունները՝ համեմատելով գույզ ծիսամատյանները։ Անշուշտ, ներկա աշխատանքի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ երկու ծիսամատյանների տարբերակային առանձնահատկությունների ողջ սպեկտրին։ Մենք դիտարկել ենք մասնահատուկ խնդիրներ։

Նախ՝ անդրադառնանք նույնություններին։ Կրկնվող շարականները այստեղ մեծաքանակ չեն։ Երգերի ընտրության որևէ սկզբունք դժվար է որոշել։ Հատուկ ուշադրություն են գրավում հոգեզալստյան շարականները։ «Քաղվածք» ժողովածուում հաճախ այդ երգերի տեմպի անվանումների կողքին կրճատ նշված է «Հոգ.» (իմա՝ Հոգեզալստյան, տես՝ էջեր 168, 171, 175, 179, 185, 189 և այլն)։ Այս շարականների ուղղակի կրկնության հավանական պատճառներից մեկը կարող է համարվել դրանց ոչ մեծ քանակը։ Մ. Օրմանյանը նշում է, որ «հոգեզալստյան շարականները բազմաթիվ չլինելով նրանց քաղվածքները վերցվում են ուրիշ տնօրինականներից, որոնց մեջ Հոգույն Սրբոյ անունն է հիշվում»:<sup>12</sup> Որպես նմուշ նշենք «Առաքելոյ աղանոյ» շարականը, որի չափավոր տարբերակը նույնությամբ կրկնվում է քաղածո հինգ շարքերում,<sup>13</sup> Վերացման Ս. Խաչի VIII օրվա «Խաչի քո Քրիստոս» շարականը՝ դարձյալ հինգ շարքերում:<sup>14</sup>

Անդրադառնալով երկու ծիսամատյաններում միևնույն շարականի ընդգրկումներին՝ նշենք, որ այդ փոփոխությունները դրսևորվում են տարբեր ոլորտներում և, անտարակույս, նպատակային են (թեև որոշ դեպքերում չպետք է բացառել նաև հնարավոր

<sup>11</sup> *Н. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ер., 1977, стр. 242-266.*

<sup>12</sup> *Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 165:*

<sup>13</sup> *Ձայնագրեալ Քաղվածք ..., էջ 185, 321, 329, 379, 470:*

<sup>14</sup> *Նույն տեղում, էջ 146, 210, 235, 326, 374:*

վրիպակների առկայությունը): Այստեղ, անտարակույս, էական նշանակություն ունի տվյալ շարականի «սովորական» կատարման որոշիչ հատկանիշը, որով պետք է տարբերվեր բուն օրվա պատշաճ կատարումը: Տարբերակված ամենացայտուն տարրը տեմայի անվանումն է: «Քաղվածք» ժողովածուի ոճական բնորոշիչներից մեկն այն է, որ այստեղ ընդգրկված երգերի հիմնական մասը *միջակ* տեմայում է ծավալվում: Այս երգերին հատուկ են վանկային տիպը, կշռույթային պարզ պատկերները, տների ոչ մեծ քանակը (3-5), ձայնագարդերի չափազանց զուսպ կերպը և, իհարկե, համեմատաբար արագ տեմայը: Սրանց մեջ մեծ թիվ են կազմում Չայնագրյալ Շարակնոցի տարբեր կանոնների *ծանր* կամ *չափավոր* երգերի *միջակ* տարբերակները, որոնք այդ (Չայնագրյալ) Շարակնոցում բացակայում են: Այստեղ առկա են տեքստի եղանակավորման տարբեր (*չափավոր* և *միջակ*) կերպերից բխող ոճական առանձնահատկություններ: Քանի որ «Քաղվածք»-ում բացակայում են *ծանր*, *ծանր չափավոր* տեմայերում ծավալվող շարականները, հետևաբար, համեմատելու համար նախընտրել ենք Չայնագրյալ Շարակնոցի համանուն տեմայեր ունեցող շարականները: Համեմատության արդյունքում երևակվում են շարականների տարբերակումների հետևյալ մակարդակները.

ա.) Չայնագրյալ Շարակնոցի *չափավոր* շարականների երաժշտական տեքստի փոփոխությունները «Քաղվածք» ժողովածուի *միջակ* շարականներում (միևնույն շարականի համատեքստում): բ.) Միևնույն տեմայի նշում ունեցող շարականների երաժշտական տեքստի տարբերությունները Չայնագրյալ և «Քաղվածք» ծիսամատյաններում: Ինչպես բնութագրվել է երաժշտագիտության մեջ, *միջակ* և *չափավոր* տեմայերում եղանակավորված շարականները ոճական զգալի հակադրություններ չունեն: *Չափավոր* եղանակները ունեն առավել հանդարտ ընթացք և, ի տարբերություն վանկային *միջակ* մեղեդիների, աչքի են ընկնում կշռույթային առավել հարափոփոխ պատկերների հաջորդումով: Երկու տեմայի համար էլ հատկանշական է գրական և երաժշտական տեքստերի միասնական տրոհությունը: Միևնույն շարականի *չափավոր* և *միջակ* տարբերակների համեմատությունը երբեմն ստեղծում է այնպիսի տպավորություն, կարծես երկրորդը առաջինի կրճատված տարբերակն է: Առավել մանրազնին դիտարկումը, սակայն, բացահայտում է կարևոր այլ տարբերանիշեր:

Հայոց եկեղեցու ծիսական արարողակարգում հնուց ի վեր մշակվել են ծիսերգերի պատշաճ կատարումներ: Այս մասին Ն. Թահմիզյանը նշում է. «Պետք է ասել՝ եկեղեցական շրջաններում վաղուց ի վեր գոյություն է ունեցել տոնական օրերի արարողություններին համապատասխան շուք ու փայլ տալու գիտակցական ձգտումը: Այդ հիման վրա ծագել ու զարգացել է ոչ միայն հավուր պատշաճի հատուկ երգեր որոշելու (կամ ի հարկին հորինելու) այլև ընթացիկ երգերի եղանակներն ըստ եկեղեցական տվյալ օրի նշանակության տարածելու հիմնավորը ավանդույթը»:<sup>15</sup> Տարածման ցայտուն դրսևորումներ ենք հաղիպում Չայնագրյալ և «Քաղվածք» ծիսամատյանների *չափավոր* և *միջակ* տարբերակներում: Գրական տեքստի եղանակավորման այս երկու տարբերակները բնորոշ են հասարակ օրերի ժամերգություններին: Ինչպես նշված է XIX դարասկզբի եկեղեցական կոնդակներից մեկում. «Ամենայն ժամերգութիւնք պարտին ըստ պատուոյ ատուրն և ըստ վայելչութեան բանին երգել. այսինքն՝ ի հասարակ ատուրս միջակ ձայնի, յորդոր ասացուածովք. յապաշխարութեան ատուրս պահոց՝ ողորմագին մեղմ եղանակաւ, և յերեւելի ատուրս՝ բարձր և ծանր եղանակելով»:<sup>16</sup>

Թե՛ չափավոր և թե՛ միջակ շարականները հիմնականում վանկային տիպի են, երկրորդը՝ առավել սաղմոսատիպ: Երկուսին էլ հատուկ է գրական և երաժշտական տեքստերի համարժեք կառուցվածքը: Դրանց տարբերությունները ակնառու են երևում հատկապես ելևէջային կառույցներում, այն է՝ խոսքի մեկ վանկին համարժեք երաժշտական հնչյունների քանակի փոփոխություններով: Նշենք նաև, որ Չայնագրյալ Շարակնոցում երգերից շատերը ունեն տեմայի զույգ նշումներ՝ *չափավոր* կամ *միջակ*, ինչը այդ նշումներին տալիս է համարժեք նշանակություն: Այս ծիսամատյանում եղանակներից շատերն հանդիպում են *ծանր* և *չափավոր* տարբերակներով: *Միջակ* տեմայի նշումը գերիշխում է Պահոց, Համօրեն Ննջեցելոց, Մարտիրոսաց, Հարութեան շարքե-

<sup>15</sup> Ն. Թահմիզյան, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*:

<sup>16</sup> Ե. Տ մ տ ե ս յ ա ն, *Նկարագիր երգոց Հայաստանեայց ս. եկեղեցոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 129:*

րում: Այսպիսով, Չայնագրյալ Շարակնոցում միևնույն տեքստի թե՛ *չափավոր* և թե՛ *միջակ* տարբերակները առանձին նմուշներով չեն ներկայացված: Այս հանգամանքը հատուկ հետաքրքրություն է առաջացնում «Քաղվածք» ժողովածուի բաղադրության ընթացքում: Այստեղ բավական մեծ թիվ են կազմում Չայնագրյալ Շարակնոցի *չափավոր* շարականների *միջակ* եղանակավորումները, որոնք երբեմն զգալի տարբերություններ են ընդգրկում: Դրանցից առավել աչքի է ընկնում նախ՝ ձայնագարդերի և ապա՝ գրական մեկ վանկին համարժեք հնչյունների կրճատումը և սահմանափակումը հիմնականում՝ մեկով: Պատճառը, ամենայն հավանականությամբ *միջակ* տեմայի ավելի արագ ընթացքն է, որի շնորհիվ սակավ են առանձին վանկերի կոտորակված կշռույթները, և գերիշխում է ասերգային տարրը:

Ընդհանրացնելով միևնույն շարականի *չափավոր* և *միջակ* նմուշներում նկատվող տարբերակային առանձնահատկությունները՝ ընդգծենք. ա) Չայնեղանակի պահպանման պայմաններում *միջակ* տարբերակներում գերակշռում է խիստ վանկային տարրը՝ գրական տեքստի մեկ վանկին համարժեք մեկ հնչյունի հարաբերությամբ: Բացառություն են կազմում միայն որոշ հանգամանքներ: Մինչդեռ *չափավոր* եղանակներում հաճախ վանկի կշռույթը կոտորակված է, ինչը նպաստում է երգային տարրի ակտիվացմանը: բ) «Քաղվածք» ժողովածուում երգերի մեծ մասը բաղկացած է երեք տնից, թեև առանձին նմուշներում դրանց թիվը 2-5 է, ինչը, անշուշտ, պայմանավորված է ծիսամատյանի գործառույթով: Չայնագրյալ Շարակնոցում տների քանակը երբեմն շատ ավելին է: Ի տարբերություն վերջինի, «Քաղվածք»-ում չեն հանդիպում անավարտ տներ, կան «և այլն» նշումով անավարտ երգեր: գ) Միևնույն շարականի տարբեր տների ելևէջային տարբերակները *միջակ* եղանակներում ավելի շատ են, քան *չափավոր* նմուշներում: դ) Միջակ շարականներում երբեմն տարբերակված է թե՛ գրական խոսքի, թե՛ համարժեք երաժշտական բաղադրիչի տրոհությունը: ե) Միջակ եղանակները հաճախ տարբերվում են տվյալ ձայնեղանակի դիմող ձայնի առավել ցայտուն դրսևորմամբ՝ հատկապես կիսահանգամանքում, ինչը *չափավոր* տարբերակներում փոխարինված է վերջավորող ձայնով:

Վերոհիշյալ տարբերակային առանձնահատկությունները հիմնականում վերագրելի են տեմայի տարբեր նշումներ ունեցող շարականներին: Առավել հետաքրքիր է գույգ ծիսամատյանների միևնույն տեմայի նշում ունեցող նմուշների դիտարկումը: Այստեղ դարձյալ ակնկալելի էր տարբերությունների բացակայությունը: Սակայն, համեմատությունը բերեց այլ եզրահանգումների: Նշենք դրանցից առավել նշանակալի դիտարկումները. ա) Նախ՝ պետք է կարևորել *միջակ* տեմայի պայմաններում մեղեդու ելևէջային միավորների և կշռույթի պարզեցման, հաճախ՝ կրճատման, առաջնորդող ձայների ընդգրկման շնորհիվ չափակշռության կառուցվածքների արտաբերումը՝ համապատասխան առոգանության միջոցով: բ) Քաղված տարբերակներում առավել հաճախ հանգչող ձայները և դիմող ձայնը ներկայացված են միևնույն հնչյունով: գ) Քաղված տարբերակների տների առանձին տողերի հանգամանքում ծանրակշիռ է դիմող ձայնի գործառույթը: դ) Քաղված տարբերակներում բացակայում է ձայնադարձի նշանը, քանի որ նույնիսկ կրկնակի առկայության դեպքում սկզբնական տների կիսահանգամանքը տարբերվում են վերջին տան հանգամանք, նաև՝ հանգչող ձայների կրկնության դեպքում: Ասվածից կարելի է եզրակացնել, որ միջակ տեմայի գերակայության պայմաններում, «Քաղվածք» ժողովածուի շարքերի վանկային երգերը բնորոշվում են երաժշտաարտահայտչական ուրույն հատկանիշներով, ձայնեղանակային մտածողության շրջանակներում նորովի եղանակավորելով կամ «տարածելով» (Ն.Թահմիզյան) Չայնագրյալ Շարակնոցի համանուն նմուշները:

Այսպիսով, փորձենք ընդհանրացնել. Կանոնը հայոց քրիստոնեական պաշտոներգության ամենացայտուն ժանրն է: «Այնուամենայնիվ, - գրել է Կոմիտասը, - շարականի յեղանակները ըստ ետքյան անփոփոխ հասել են մեզ»:<sup>17</sup> Խազերի գործնական կիրառության դուրս մղումից հետո, անցնելով բանավոր ավանդման երկարատև ժամանակաշրջան, այս ժանրը, անշուշտ, ավանդակաճանության պահպանմանը զուգընթաց, պետք է կրեր նաև ժամանակի ազդեցությունը: «Չայնագրեալ Քաղումը Օրհնու-

<sup>17</sup> Կ ո մ ի տ ա ս, Հողվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 112:



թեանց» ծիսամատյանը, որը կանոնակարգվել է Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսի օրոք, լավագույնս անդրադարձրել է կանոնի յուրօրինակ ընդլայնման ուշմիջնադարյան ավանդույթը: Գործառույթի կարևոր նշանակությամբ է պայմանավորվել Գևորգ Դ կաթողիկոսի բարենորոգչական գործունեության մեջ այս ժողովածուի ընդգրկման և ձայնագրյալ տարբերակով 1882թ. հրատարակման փաստը: Ծիսամատյանի կառուցվածքային և երաժշտատնական ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմելու ոչ միայն ուշմիջնադարյան կանոնի կրած կառուցվածքային փոփոխության, այլև այն սկզբունքի մասին, որի միջոցով կատարվել է այդ փոփոխությունը:

Ուշմիջնադարյան կանոնի ներսում կատարված կառուցվածքային փոփոխությունը ընդլայնումը կամ ուռճացումն է: Վերջինս նպաստել է տվյալ օրվա խորհրդի առավել նշանակալիության կարևորմանը: Ընդլայնումը կատարվել է այլ կանոններից տվյալ օրվա խորհրդին պատշաճ բովանդակություն և ձայնեղանակ կրող այլ շարականների ներմուծմամբ, որով այդ օրվա կանոնի Օրհնության շարականն ընդգրկել է շուրջ տասը պատկեր: Ըստ ավանդույթի ընտրված կանոններից քաղվել են բոլոր երգերը, բացի Հարցից և Գործատնից:

Քաղված շարքերի մանրագնին վերլուծությունը ցույց տվեց, որ դրանց մեջ գերակշռում են *միջակ* տեմպի նշում ունեցող երգերը (հանդիպում են նաև չափավոր, միջակ չափավոր և հորդոր տեմպի նշում ունեցող երգեր): Դրանց բաղդատությունը Չայնագրյալ Շարակնոցի համանուն երգերի հետ թույլ է տալիս եզրակացնելու, որ կանոնն ընդլայնելու ավանդույթը հիմնվել է քաղված այս կամ այն շարականի միջակ տեմպում վերաեղանակավորման կամ «տարածման» վրա: Արդյունքում նկատեցինք նաև, որ «Քաղվածք» ժողովածուի միջակ երգերը բնութագրվում են ինքնատիպ ոճական հատկանիշներով, որոնք հաճախ տարբերվում են Շարակնոցի համանուն շարականներից: Բացի մեղեդային գծի որոշ պտույտների տարբերակումներից, «Քաղվածք» ծիսամատյանի երգերին մեծամասամբ հատուկ են կիսահանգածների և հանգածների տարբեր դարձվածքները, նույնիսկ՝ միևնույն հանգչող ձայնի առկայությամբ:

Երկու ծիսամատյանների համեմատության ընթացքում նկատված տարբերությունները լիովին համապատասխանում են միջնադարյան ձայնեղանակային երաժշտամտածողության առանձնահատկություններին: Նկատված տարբերակումները հնարավոր է դիտարկել իբրև «Քաղվածք» ժողովածուի երաժշտատնական բնորոշիչներ: Անշուշտ, ներկա աշխատանքի նպատակը ոչ թե խնդրի ամբողջական և համակողմանի քննությունն էր, այլ «Քաղվածք» ժողովածուի մեջ արտացոլված և ուշմիջնադարյան կանոնակարգով պայմանավորված երաժշտաարտահայտչական ինքնատիպ մտածողության, այն է՝ ավանդական երկեր հավելելու կամ քաղելու կերպի արժեքավորումը: Կատարված դիտարկումները թույլ են տալիս պնդելու, որ Օրհնություն քաղելու ավանդույթի հիմքում ընկած պատշաճ վերաեղանակավորումը ներկայանում է իբրև մի երևույթ, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու և վեր հանելու հայոց պաշտոներգության մեջ կանոնի ժանրի զարգացման և նորովի դրսևորման որոշ խնդիրներ:

## РАСПИРЕНИЕ КАНОНА В ПОЗДНЕСРЕДНЕВЕКОВОМ АРМЯНСКОМ БОГОСЛУЖЕНИИ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Степанян, С. Малхасян \_\_\_

Одним из носителей живительных традиций в позднесредневековом армянском богослужении является Шараконоц «Քաղվածք օրհնութեանց» - Сборник избранных благословений. Его внес католикос Мовсес Татеваци (1629-1632) с целью дополнения шараканов благословения – т.е. первой песни канона. Отбор эквивалентных шараканов происходил по общим признакам. Например, в каноне Пятидесятицы отобраны те благословения, в которых упоминается имя Святого Духа. Количество отобранных шараканов колеблется от двух до девяти. Наиболее часто встречаются группы в составе восьми шараканов. В эпоху позднего средневековья с одной стороны происходит расширение канонических рамок богослужения, с другой стороны это происходит не за счет чуждых нововведений, а за счет введения традиционных песнопений.

## Հասմիկ ԱՓԻՆՅԱՆ

### ՇԻՐԱԿԻ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ՄԻ ԾԻՍԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Հարսանիքը մարդու կյանքում նոր փուլ, նոր սկիզբ խորհրդանշող ծիսական բարդ արարողակարգ է, որի մշտական և կարևոր բաղադրիչներից մեկը երաժշտությունն է: Առանց երգ ու նվագի կատարվող հարսանիքը ժողովրդական պատկերացումներում նոր ամուսնական գույգի համար անուրախ ապագայի գուշակություն է: Մինչդեռ՝ բացականչություններով, կրակոցներով, նվագարանների զիլ կանչերով, ձայնային այլևայլ ազդանշաններով թափորն ուղեկցելու, ողջ հարսանեկան ճանապարհն ավանդականորեն դափ ու գուռնայի նվագով անցնելու սովորությունը համարվում է անհրաժեշտություն: Այս ամենն, անշուշտ, հավատալիքային վաղեմի հիմքեր ունի և, անգամ, նորասպակների երջանիկ ապագան ապահովող դյուրիչ, մոգական գործողություն է:<sup>1</sup>

Դեռևս հնագույն ժամանակներից մարդը խոր հավատ է տածել ձայնի գերբնական ուժի ազդեցության նկատմամբ՝ վերագրելով նրան նախազգուշացնելու, կանխագուշակելու, չարը խափանելու և մի շարք այլ կարևոր հատկանիշներ:<sup>2</sup>

Մակայն երաժշտությունը ժողովրդական հավատալիքների ու պատկերացումների արտահայտման միջոց չէ միայն: Ներդաշնակորեն հյուսվելով հարսանեկան բովանդակությանը՝ այն արարողակարգում խորհրդանշում է որոշակի ծիսական փուլերի սկիզբ կամ ավարտ (օրինակ՝ հարսանքականչի կամ ավարտի եղանակները), անցումային տարբեր հատվածներ (հարսին դուրս բերելու, նորասպակների դիմավորելու երգերն ու մեղեդիները), գլխավոր հերոսների՝ հարս ու փեսայի կերպարների հետ կապված ինչ-ինչ գործողություններ (թագվորին ու թագուհուն ուղղված գովերգեր, օրհներգեր և այլն), այլ խոսքով՝ երաժշտությունը ծիսակառույցում ձևակազմական գործոնի դեր է կատարում, ունի մակ խորհրդապաշտական իմաստ:

Հարսանիքը համաժողովրդական տոնախմբություն է, և նրանում գործող ծիսակարգերը մեծամասամբ համընդհանուր բնույթ են կրում:<sup>3</sup> Այդուհանդերձ Հայաստանի տարբեր շրջանների հարսանեկան սովորույթներում նկատվող առանձնահատկությունները առաջ են բերում արարողակարգի կատարման զանազանություններ, ինչի հետևանքով և զգալի փոփոխություններ է կրում մակ ծիսական երգաշարը: Շիրակում, հատկապես Գյումրիում, հարսանեկան արարողակարգի ավանդական պահպանման հիմքով է պայմանավորված երգերի ու նվագների շարքի համեմատական կայունությունը:<sup>4</sup>

Չհավակնելով հարսանեկան ողջ երգաշարի վերլուծությանը սույն հոդվածի սահմաններում՝ նշենք միայն, որ ծիսական երգերից ու նվագարանային եղանակներից շատերի հեղինակները ալեքսանդրապոլցի աշուղները, սազանդարներն ու գուռնաչիներն էին, որոնք ոչ միայն տեղի ու հարակից գյուղերի, այլև Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող ուրիշ շատ քաղաքների տոնախմբություններում պատվավոր և ցանկալի մասնակիցներ էին: Իռլանդացի ճանապարհորդ և հայագետ Հենրի Լինչը 1893թ. Հայաստան կատարած ճամփորդության մասին իր նոթերում գրում է, որ ալեքսանդրապոլցի սազանդարների հաճելի նվագը կարելի է լսել ոչ միայն իրենց քաղաքում, այլև Վաղարշապատում, Թիֆլիսում և այլուր:<sup>5</sup> Անհնարին է պատկերացնել հարսանիք, որտեղ հարսին դուրս բերելիս չի երգվում

<sup>1</sup> С. Л и с и ц и а н, *Армянские старинные пляски*, Ер., 1983, стр. 157.

<sup>2</sup> Р. П и к и ч я н, *Зурна в быту армян*, в кн. «Традиции и современность, Вопросы армянской музыки», т.2, Ер., 1966, стр. 157.

<sup>3</sup> Վ. Բ ղ յ ա ն, *Հայ ազգագրություն*, Եր., 1974, էջ 154:

<sup>4</sup> Հ. Ա փ ի ն յ ա ն, *Գյումրիի ավանդական հարսանիքի ծիսական երաժշտության համակարգման փորձ*, «Շիրակի պատմաշակութային ժառանգությունը», հանրապետական առաջին գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1994թ., էջ 59:

<sup>5</sup> Ф. Л и н ч, *Армения, Путевые очерки и этюды*, Тифлис, 1910, стр. 178.

Շերամի «Պարտեզում վարդ է բացվել» երգը, Ջիվանու «Արի՛, հայրիկ» ծիսականացված երգ-հրաժեշտը, կույր աշուղ Համբոյի «Ձուռնի տրնգին» որպես ազայնների ծիսական պար և այլն: Վերը բերված օրինակները հայ ազգային երաժշտության տարբեր ճյուղեր ու ժանրեր են ներկայացնում: Մական նկատի առնելով արարողակարգի համատեքստում մեղեդիների ունեցած գործառնությունը, ինչի շնորհիվ այս եղանակները ծիսականացվել և ձեռք են բերել «խորհրդանիշ մեղեդիների» նշանակություն, պարզ է դառնում դրանք նույն խմբի մեջ դիտարկելու միտումը:

Ժողովրդական և աշուղական երգերի, ինչպես նաև դրանց նվագարանային տարրերակների ծիսականացումը արտառոց երևույթ չէ ծիսատոնական համակարգում: Առանձին սիրված երգեր ու եղանակներ, պարբերաբար կատարվելով կենցաղային զանազան տոնախմբությունների և արարողությունների ժամանակ, վեր են ածվում սովորույթի և ժողովրդի գեղարվեստական մկուն մտածելակերպի շնորհիվ, ավանդաբար փոխանցվելով՝ աստիճանաբար ձեռք են բերում ծիսական գծեր:<sup>6</sup>

Մեր դիտարկումների համար ընտրված երգը<sup>7</sup> Ալեքսանդրապոլ-Գյումրիի հարսանեկան արարողակարգում ավանդաբար կատարվող ծիսերգի տիպական օրինակ է: Դրա վկայությունն են նաև 20-րդ դարի սկզբներին թողարկված հնատիպ ձայնապնակները ալեքսանդրապոլցի գուռնաչիների ու սազանդարների ձայնագրություններով:<sup>8</sup>

Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում արարողակարգի բարձրակետը հարսին պարի քաշելու սովորույթն է, որ միաժամանակ ծեսի առանցքն է, որոշ տեղերում էլ՝ պարզապես վերջաբանը: Ըստ այդմ էլ տարբեր են պարերգի կատարման թե՛ պարաքայլերը (երկու գնալ՝ մեկ դառնալ, երկու գնալ՝ երկու դառնալ և այլն), թե՛ մեղեդիները («Շորոր», «Ճոշ պար», «Ծանդր պար» և այլն) և թե՛ անվանումները (Թագուհու ու թագվորի, հարս ու փեսի, գույգ ծաղիկների, նորահարսի մոմերով պար, հարսնապար և այլն): Ընդհանուրը՝ ծիսապաշտամունքային խորհրդապաշտական բովանդակությունն է, որն, անշուշտ, հնագույն մաքրագործական ու հմայական հավատալիքներին է առնչվում, ինչպես նաև ենթադրում է չարխափան միջոցառումների իրականացում:<sup>9</sup>

Շիրակի ավանդական հարսնապարի հիմքում «Ծաղիկ՛մ ունիմ» ժողովրդական ջանգլույումի երգն է, որի կատարումն անմեղության ու մաքրության խորհուրդ ունի: Ծաղիկը՝ իբրև հավերժ երիտասարդության խորհրդանշան, նույնպես, ինչպես և ծառը, կապվում է բեղմնավորման ու սերնդաշարունակման գաղափարին:<sup>10</sup> Չույգ ծաղիկի մոտիվը զարդարվեստում Ա. Մնացականյանը իրավամբ դիտում է իբրև ծնող գույգի իմաստակիր:<sup>11</sup> Հավանաբար այս նույն խորհրդով էլ ջանգլույումի երգը վերահմաստավորվել և վերածվել է հարսանեկան ծիսական պարերգի: Պրոֆեսոր Մ. Բրուտյանի հավաստմամբ՝ բուն ժողովրդական գեղջկական այս երգը վաղուց ի վեր լայն տարածում ունի: Համարյա չկա ժողովրդական երգերի ժողովածու, որտեղ այն զետեղված չլինի:<sup>12</sup> Միայն Կոմիտասի ձայնագրություններում այս հանրածանոթ երգը առկա է 12 տարբերակով:

<sup>6</sup> Ռ. Պիկիչյան, Լ. Երնջակյան, նշվ. աշխ., էջ 7:

<sup>7</sup> Հ. Ափիսյան, Գաշտային հետազոտությունների օրագրեր, Լենինական, 1983-87թթ. անձնական արխիվ

<sup>8</sup> Дискोगрафия армянской монодической музыки, записи 1916-1989 гг, сост. А. Апинян, Ж. Бадалян, А. Киракосян, в. кн. "Фольклор и фольклоризм, Традиционный фольклор и современные хоры и ансамбли", вып. 2, Л., 1989, стр. 216, 219.

<sup>9</sup> Ժ. Խաչատրյան, Ջավախքի ժողովրդական պարերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ, Եր., 1975, հ.7, էջ 47

<sup>10</sup> Ա. Մանուկյան, Բուսաշխարհը Շիրակ-Կարինի կանանց տարազային համալիրում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.2, Գյումրի, 1999, էջ 180:

<sup>11</sup> Ա. Մանուկյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1959, էջ 454:

<sup>12</sup> Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Եր., 1983, էջ 213:

Ժողովրդական երաժշտական տեսակետից այս մեղեդիները, ինչպես և ջան գյուլումը, հետաքրքրական են ու տարբեր: Դա ցույց է տալիս, թե ժողովրդի մեջ տարածված, «շարլոնացած» և սխեմատիկ դարձած մեղեդիում ինչպես է Կոմիտասը հետաքրքրական ինտոնացիաներ գտնում:<sup>13</sup> Նշենք, որ երգը կենսունակ է մալ մեր օրերում և բազմաթիվ տարբերակներով հնչում է ամենատարբեր տոնախմբություններում:

Մեր հոդվածում վերլուծությունը կատարել ենք հրատարակված նմուշների և անտիպ ձայնագրությունների թվով 10 օրինակների համեմատությամբ, որոնք ձայնագրվել են Շիրակի գյուղերում և Գյումրի քաղաքում:<sup>14</sup> Ալեքսանդրապոլի հարսանիքներում ավանդաբար հնչող գեղջկական երգի այս հնավանդ նմուշը կատարվում է մեներգի ձևով, երբեմն փոխնիփոխ երգեցողությամբ, հաճախ նվագարանային՝ դուդուկների կամ զուռնայի եռյակի մեկնաբանությամբ (մենանվագ գործիք, դամ, հարվածային՝ դափ կամ դհոլ), սակավ լարավոր նվագարանների ուղեկցությամբ (թառ կամ քամանչա և որևէ հարվածային), դանդաղ ու հանդիսավոր: Ծիսապարհին մասնակցում էին 7 ամուսնացած երջանիկ համարվող զույգեր՝ ձեռք ձեռքի բռնած: Պարը պարտադիր կատարվում է շրջանի երեք պտույտով, վառվող մոմերի ուղեկցությամբ, որոնք պահվում էին և հետագայում վառվում առանձնահատուկ իրադրությունների՝ ծանր ծննդաբերության, հիվանդությունների կամ ընտանեկան նեղությունների դեպքում միայն:

Վերը բերված նմուշների դիտարկումից պարզվում է, բոլոր երգերում առկա է նույն կրկնակը, և բովանդակությունն էլ հիմնականում նույն է, տարբեր են տների կառուցման ձևերը: Ա. Բրուտյանի գրառած երգի ա, բ, գ տարբերակների համար բերվող բանաստեղծական բնագիրը 4 տողից կազմված քառյակն է:<sup>15</sup> Նույն ժողովածուի ծանոթագրություններում պրոֆ. Մ. Բրուտյանը Կ. Սահակյան-Գրիգորյանցի անտիպ ժողովածուից մեջ բերում է ևս 4 քառյակ, որոնք չկան Ա. Բրուտյանի մոտ:<sup>16</sup> «Շիրակի երգերում» բերվում է մեկ տուն քառյակի կառուցվածքով: Ընդհակառակը, մեր գրառած օրինակներում բանաստեղծական կառույցի հիմքում մեծամասամբ երկտող խաղիկն է, հազվադեպ հանդիպում են և քառյակներ:

Բոլոր օրինակներում, երգի տների քանակից ու կառուցման ձևից անկախ, պահպանված է բանաստեղծական ընդհանուր չափը. յուրաքանչյուր տողում միևնույն վանկաքանակը՝ 7 վանկ: Տողնդմեջ կատարվող 5 վանկանի կրկնակի հավելումը, որը նպաստում է պարերգի ձևակազմավորմանը, հայ ժողովրդական երգարվեստում հաճախ հանդիպող բնորոշ երևույթ է:<sup>17</sup> Հարսանեկան արարողակարգում հնչող երգի կատարումներում բանաստեղծական բնագիրը մասնակի փոփոխություններ է կրում՝ հարմարեցվելով բուն ծիսական բովանդակությանը: Խոսքային բովանդակության ընդլայնումը իր հերթին հանգեցնում է երաժշտական բնավորությունների բազմազանության: Բոլոր տարբերակների համար ընդհանուր է երաժշտատարանաստեղծական երկտող կառուցվածքը.

երաժշտական տող	ԱԲ,ԳԴ	11 (6 + 5) + 9 (3+6) ամանակ
բանաստեղծական տող	ԱԲ,ԳԲ	7+5                      7 + 5    վանկ

Երգի տաղաչափական տիպական առանձնահատկությունը երկանդամ անհավասար տողերի պարբերական համադրումն է հետևյալ տրոհմամբ.

<sup>13</sup> Կ ո մ ի տ ա ս, *Երկերի ժողովածու*, Եր., 1969, հ.3, էջ 272:  
<sup>14</sup> Ա. Բրուտյան, *Ռամկական մրմունջներ*, Եր., 1983, էջ 102, ա,բ,գ տարբերակներ; Կ.Սահակյան-Գրիգորյանց, *Անտիպ ժողովածու*, էջ 45; Մպ. Մելիքյան և Անուշավան Տեր-Ղևոնդյան, *Շիրակի երգեր*, Թիֆլիս, 1917, էջ 23; Արխիվային ձայնագրություններ, «Կոմսայրի» արգելոց թանգարան, *Ժողովրդական երաժշտության ֆոնդ*, 1983-87թթ.:  
 ՇՀՀ Կենտրոնի ձայնադարան 2000-2001թթ.:  
<sup>15</sup> Ա. Բրուտյան, *նշվ. աշխ.*, էջ 102:  
<sup>16</sup> Նույն տեղում., էջ 214:  
<sup>17</sup> Ա. Բրուտյան, *Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն*, Եր., 1983, էջ 216:

«□□խ» Մ □ Մ □ Մ □ □ .. ամ. □ Մ □ □  
 7(4+3) վ. 5(3+2) վ. 12վ.

Բերված վանկաչափական կադապարում յուրաքանչյուր ոտքին համապատասխանում է չորսով ավելի երաժշտական կշռությային միավոր: Անհավասար տողերը ընդհանրացվում են ամանակադրության օրենքով, հավասարատևության սկզբունքով: Վերջինս կայուն կրկնվող, տիպական և բնութագրական պարային կշռությապատկերի ապացույցն է: Բնորոշ ոտքերն են՝ մեծասար-մեծավերջ, մեծասար-անգայթ, համբույր-մեծավերջ:

Մեղեդու պարզ և անպաճույճ շարադրանքը բնորոշ է գրեթե բոլոր տարբերակներին: Վանկի եղանակավորումը նվազագույն է (երկու կամ երեք հնչյուն մեկ վանկի համար): Անցողիկ և օժանդակ հնչյունների կիրառումը, մեղեդային ուրվագծում քիչ թե շատ ընդլայնելով հնչյունաձայնավալը, մեղեդիներին հաղորդում է երգայնություն և քնարականություն: Նվազարանային տարբերակներում մեղեդիներն առավել զարդոլորում են:

Չայնակարգի կառուցվածքի քննությունը նույնպես ներկայացված տարբերակներում որոշակի հետաքրքրություն է առաջ բերում: Պարերգի եղանակները ծավալվում են բացառապես միմյուր ձայնակարգերի հենքով: Ստորև ներկայացնում ենք դիտարկված երգերի հնչյունաշարերը.


օր 1 Ա. Բրուսյան, Ռամկական մրմունջներ, N 89, ա)




օր 2 p)



օր 3 գ)



օր 4 Սպ. Մելիքյան, Ան. Տեր-Ղևոնդյան, Շիրակի երգեր, N57



օր 5 Կ. Մահակյան-Գրիբգորյանց, Անտիպ ժողովածու, էջ 62



օր 6 «Կումայրի» արգելոց-թանգարան, ժող. երժշտ. ֆոնդ, 1983, 4/12



օր 7 Նույնի, 1984, 3/45



օր 8 Նույնի, 1984, 4/10



օր 9 ԼՀԿ կենտրոնի ձայնադարան, Մարմաշեն 2000, 2/5



օր 10 Չայնապակ, Ալեքսյուցի գուռնաչիներ



Դուրս բերված գծապատկերները ցույց են տալիս, որ բոլոր տարբերակներում հնչածավալները տարբեր են: Երկու նմուշ միևնույն քառալարում գոտևորված (опеваемая) 7-րդ աստիճանով (օրինակ՝ թիվ 1, 2) մեկ նմուշ միևնույն հնգալարում զադորոշող  $d^2, b^1, g^1$  վայրընթաց քայլով (օրինակ՝ թիվ 3), հիպոմիևնորային ութնյակի սահմաններում ծավալվող երկու նմուշ, որոնցում երգի ծավալումը սկսվում է ձայնակարգի ստորին քառալարի ոլորտից (օրինակ՝ թիվ 4,5):

Մյուս նմուշների համար հատկանշական է 6-րդ աստիճանի բացակայությամբ միևնույն վեցալար հնչյունաշարը (հեքսատոնիկա): Ի դեպ, ձայնաշարային այս կառուցվածքը հանդիպում է հատկապես հարսանեկան արարողակարգերի ժամանակ հնչող երգերում, դրանց նվագարանային տարբերակներում: Մա վկայում է զոհաբերության ծիսական արարողություններում կատարվող երգերի հետ դրանց ունեցած առնչակցության մասին:<sup>18</sup>

Այսպիսով, վերոբերյալից կարելի է եզրակացնել, որ երգի հարսանեկան ծիսականացումը ոչ միայն արտաքին բովանդակային գործոնների մնացորդային արդյունք է, այլև երաժշտական կառուցվածքային ընդհանուր առանձնահատկությունների հետևանք:

## ОБ ОДНОЙ СВАДЕБНОЙ ОБРЯДОВОЙ ПЕСНЕ ШИРАКА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Апинян \_\_\_

В армянском традиционном свадебном обряде музыка имеет огромное значение и, по народным повериям, пресекает зло. Некоторые примеры из народной, ашугской и духовной музыки, периодически прозвучав во время свадебной церемонии, приобрели обрядовый характер и стали неотъемлимой частью всей свадьбы.

Бытовавшая в Ширакском регионе старинная песня „У меня есть цветок,, -пример вышесказанного. Анализ многочисленных вариантов доказывает, что черты обрядовости связаны не только с содержанием, но и некоторыми музыкальными средствами.

<sup>18</sup> Կ. Խ ո յ ա թ ա յ ա ն, «Կարոս խաչ» վիպերգի կրոնաառասպելական արմատները, Կարոս խաչ, ուսումնասիրություններ և քննարկեր, Եր., 2000, էջ 31:

*Сильва ВАРДАНЯН*

## *ХОРОВОЕ ИСКУССТВО В СИСТЕМЕ ДУХОВНЫХ ЦЕННОСТЕЙ В УСЛОВИЯХ ТРАНСФОРМИРУЮЩЕГОСЯ ОБЩЕСТВА.*

Социально-экономические и политические трансформации общества требуют теоретического обоснования и восприятия гражданами новых жизненных ценностей и позиций. Переоценка духовных приоритетов возможна при условии сочетания традиционных ценностей с вновь приобретенными возможностями. Однако способы и методы общественных преобразований не всегда учитывают культурные традиции и возможности армянского народа и общества в целом.

Либериализация общественных отношений, воспринятая обществом несколько односторонне, привела к тому, что представления о роли и месте человека в обществе свелись к односторонней трактовке одной из главных идей либерализма – прав человека. Складывающийся индивидуалистский тип мышления неоправданно отстраняет современного человека от важнейшей формы его жизнедеятельности – общения и коммуникации. Осознанно или нет - это проникло и в современную систему образования, которая, не имея четкой концепции развития, все чаще грешит отторжением поколения от понимания значимости и места общения в жизни человека. Это можно наблюдать и на явном снижении внимания к таким важным дисциплинам как пение, физическое воспитание. Во многих школах, отдающих приоритет различным специализациям, основанным на интеллектуальных качествах детей, уроки эти исключены. Наиболее неприемлемым является повсеместное исключение из учебных планов уроков пения, музыки, сформировавшихся в предшествующий период традиций музыкального воспитания детей в детских музыкальных школах, художественных коллективах. Именно в этом аспекте предлагается рассмотреть возможности музыкальной культуры и, в частности, хорового искусства для решения проблем современной социализации граждан в условиях нашей республики.

В обосновании потребностей общества в музыкальном воспитании и, в частности, в возрождении традиций хорового пения, хорового искусства, мы исходим из подхода к хоровому искусству как части материальных и духовных ценностей, созданных человеком в процессе жизнедеятельности, что позволяет увидеть невероятно широкий аспект возможностей и последствий этой деятельности. Главным в ней является выбор и становление новых поколений в современной Армении. Он происходит под влиянием и позитивных факторов – богатейших культурных традиций и ценностей, имеющих в культуре армянского народа, и негативных – последствий влияния на культуру ограничительных тенденций периода отсутствия государственности, социалистического реализма и переустройства общества. В этих условиях, как замечает Фромм, человек, личность, общество, как и во все времена, “занят поисками “прозрения”, “спасения”, “гармонии” и “единства...” Эти поиски в культурном пространстве приводят к актуализации проблемы общения и общительности, без разрешения которой невозможно становление новых отношений в обществе. Также актуальным становится замечание М.Хайдеггера о том, что человек есть не только бытие в мире, но что он, по сути, бытие с другими. Та же идея выражена самой этимологией слова общество (societas - товарищество, socius – товарищ, друг, приятель).

Эти проблемы особо актуализируются в конце XX века, когда постижение и выбор человека происходят в кризисной ситуации. Исходя из этой особенности немецкий философ К.Ясперс вводит понятие “коммуникация”, которое возводится им в ранг критерия философской истины и отождествляется с разумом. Суть этого положения состоит в том, что отдельный человек сам по себе не может стать человеком и только в коммуникации с другим самобытием, с другим сознанием его сознание действительно. Смысл философии, по Ясперсу, в создании путей общечеловеческой “коммуникации” между странами, веками поверх всех культурных кругов. И поскольку

овщительность является существенным атрибутом человеческого существования, постольку необходимо использование всех возможностей и технологий ее формирования.

Такой подход позволяет рассматривать культурные ценности и принципы их развития и трансляции как важнейшие факторы влияния на процесс формирования современного человека, его отношения к смыслу жизни, добру и злу, достоинству и ответственности. Однако, наиболее важным признается критерий готовности человека к самоотдаче и саморазвитию. Не случайно в трансформирующемся обществе на первое место наряду с проблемой “Какой человек нужен обществу?” выдвигается проблема “Какое общество в полной мере соответствует возможностям человека, его представлениям о справедливости, не наносит урона его человеческому достоинству, чувству свободы, красоты, нравственной удовлетворенности?”

Приведенные принципы приобретают своеобразное проявление в соприкосновении одной из древнейших ветвей культуры - музыки - с проблемой современной социализации личности. Это позволяет говорить об актуальности исследования традиций и возможностей музыкального образования, хорового пения, как продукта культурной жизнедеятельности, для влияния на современные общественные процессы, совершенствования музыкального образования как части современной культуры.

Подход этот имеет традиции всеобщего значения и основан на том, что еще классический эллинский курс состоял, как известно, из геометрии, арифметики, астрономии и музыки. В то же время в греческом мирозерцании господствовали представления о гармонии как главном принципе мироздания....

Древняя Греция, которая является основателем демократии, продемонстрировала и способ разрешения проблемы взаимоотношений индивида и общества, отведя им определенные места и функции. Проблема места человека в обществе, да и в самой жизни, рассматривалась в аспекте решения вопроса “участия” и “встречи”. Хейзинга сравнивает такие античные термины как агон и агора и отмечает, что первоначально, вероятно, это было определение встречи. Встреча и состязательность имеют глупое смысловое содержание, но наиболее значимым можно считать то, что они содержат проблему общения граждан. На качественном уровне здесь прослеживается связь между гражданским участием и системой образования древних греков, ибо они говорили “не умеющий петь в хоре” о не умеющих общаться, о необразованных людях. Именно музыкальные высказывания, пение и т.д. были древнейшими способами общения и выражения своего отношения к нему. Как эту часть культурного “кода” использовать сегодня в процессе музыкального воспитания – одна из проблем жизнедеятельности современной системы образования.

В музыкальной культуре вопрос общительности и общения имеет наиболее зримое воплощение и наиболее практическое звучание. Зависимость результата действия от общения в наибольшей степени проявляется в хоровом искусстве. Это и позволяет считать хоровое искусство наиболее демократичной формой музыкальной культуры. И речь идет не только о том, что оно - как коллективное действие - является как бы выразителем идеи демократизма. Суть вопроса значительно глубже: она кроется в качестве этой массовости, а еще точнее, в характере и формах отношений и взаимоотношений участников. Хоровому пению присуща формула: солист – одноголосье – двухголосье – многоголосье. Эта формула сочетания одного из принципов демократии – от прав и интересов личности до всеобщего благосостояния, основанного на этом праве.

Принцип общения в хоровом пении и в социуме можно рассматривать и в аспекте технологии его реализации. На уровне социального общения принято говорить о взаимосвязи культуры и игры как упорядоченной деятельности группы, сообщества. Например Йохан Хейзинга рассматривает эти игровые элементы как процесс культурной эволюции, говоря о том, что “культура возникает в форме игры, культура первоначально разыгрывается”. Игровой элемент в поступательном движении культуры присутствует в учении и в поэзии, в правосознании и в формах политической жизни, и всегда может вновь проявиться и вовлечь и отдельных людей, и массу в свой круговорот участия и состязатель-



ности с социальными процессами. “С точки зрения культуры сольная игра для самого себя плодотворна лишь в малой степени”. Коллективная игра носит, по преимуществу, антитетический характер. Она чаще всего разыгрывается “между” двумя сторонами. Причем антитетическое не должно означать только обязательно состязательное.

С понятием игра связано понятие выигрыша. Выиграть - значит взять верх в результате игры... Но выигран может быть почет, заслужена - честь. И эта честь, и этот почет постоянно идут непосредственно на пользу целой группе, из которой вышел победитель. Тут мы снова сталкиваемся с весьма важным качеством игры: завоеванный успех легко переходит с отдельного человека на целую группу. Но еще более важен следующий показатель: первичным является не жажда власти, либо воля к господству, но стремление превзойти других, быть первым и, на правах первого, удостоиться почестей.

Попробуем представить все это в приложении к музыкальной культуре, культуре пения и хорового пения в частности. Изначальная состязательность получает наиболее яркое выражение посредством пения. В древнейших культурах это были перепевы противоборствующих группировок, которые затем нашли отражение в полухориях. Исполнение музыкальных произведений в качестве предмета состязания имеет свои традиции в средневековой культуре разных народов (турниры и состязания поэтов и певцов), и часто ее традиции сохраняются и сейчас.

Важной стороной хорового пения являются сами методы овладения и те взаимоотношения, которые при этом действуют. Это такой творческий процесс, в котором почти всегда присутствует элемент игры и каждый непосредственно ощущает свою причастность и сотрудничество так же, как и состязательность процесса. У каждого исполнителя, будь это солист или член хорового коллектива, действует осознанный подход к делу, от которого зависит и его личный успех и успех всех участников. Этот подход в свою очередь формирует ответственность. Причем с социальной точки зрения здесь наиболее важным является как раз осознание единства индивидуального и коллективного права. Одно дело, когда учащиеся получают эти представления на уроке правоведения, и другое, когда подход формируется на уровне эмоций, причем связанных с его непосредственным участием, с его реакцией на знание, умение и пр. Таким образом, сформировавшиеся чувства более четко формируют помыслы, усилия человека для реализации каких-то конкретных целей. Среди видов общения между субъектами к наиболее эффективному можно отнести именно общение между воображаемыми партнерами, которое и представляет общение в хоре.

Эмоциональная сторона общения в процессе хорового пения имеет и еще один весьма значимый ракурс – это исполняемые музыкальные произведения. Смысловое содержание произведений, их хоровые партии, отдельные хоровые голоса, интонации влияют на настроение, на методы работы, а, главное, на возможность достижения гармонии при исполнении произведения. В этом ракурсе наиболее четко прослеживается возможность не просто создания внутреннего мира хора, но возможность формирования единого мира данного общества, состоящего при этом из индивидуальностей с самыми разными интересами и функциями.

Исходя из указанных подходов можно определить и возможности, предназначение и необходимость развития хорового искусства в современной культуре. При этом вопрос может рассматриваться в разнообразных аспектах:

- потребности развития хорового искусства как части музыкальной культуры,
- место хорового искусства в системе музыкального образования,
- методические и педагогические возможности хорового исполнения в системе общего образования.

Реформирование общества и поиски путей формирования нового образования часто приводит к исключению не просто традиционных, но незаменимых и непреходящих условий воспитания, к каковым можно отнести музыкальное воспитание. При этом музыкальное воспитание и, в частности, восстановление традиции существования хоровых коллективов не только в музыкальных, но, в первую очередь, в общеобразовательных

школах, могут и должны рассматриваться не только как составная всестороннего и гармоничного воспитания личности, но и ее политической и гражданской социализации.

*Использованная литература:*

1. Глобальные проблемы и общечеловеческие ценности. *Пер. с англ. и франц.*, М., 1990.
2. Грувер Р.И., История мировой музыкальной культуры, М., 1994.
3. Немировский А.И., История древнего мира. Античность. М., 2000.
4. Философия XX века. М., 1997.
5. Ясперс К., Смысл и назначение истории. *Пер. с нем.*, М., 1991.

ԵՐԳՉԱԽՍԹԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ ՎԵՐԱՓՈԽՎՈՂ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ

\_\_\_ Անփոփում \_\_\_

\_\_\_ Ս. Վարդանյան \_\_\_

Կրթական համակարգի բարեփոխման տեսակետից դիտարկվում են հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների պայմաններում երգչախմբային արվեստի և խմբական երգեցողության ժամանակակից հիմնախնդիրները:

Խմբական երգեցողության բովանդակությունը, բնույթը և մեթոդները հնարավորություն են տալիս այն համադրել սոցիալապես նշանակալի կենսագործունեության հետ, դիտարկել որպես անհատի կայացման, հաղորդակցության, փոխշփումների ձևավորման տեխնոլոգիաներից մեկը: Ելնելով այսպիսի մոտեցումից՝ հիմնավորվում է խմբական երգեցողության և երգչախմբային կրթության, որպես անհատի ներդաշնակ դաստիարակության և քաղաքացիական սոցիալականացման միջոցի, անհրաժեշտությունը:

## Էրեզի ԵՄԱՅԱՆ

### ԱՆԳԼՈՍԱՔՐՈՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՆԱՔԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ X-XI դարերում

Անգլոսաքսոնական բնագիր իրավական բանաքաղությունները որոշակի տեղ են գտնում անգլոսաքսոնական իրավունքի աղբյուրների շարքում: Այդ բնագիր իրավական բանաքաղությունները կամ իրավական քաղվածքները (the original legal compilations or legal extracts) գործնականում կիրառվել են անգլոսաքսոնական թագավորությունների դատական համակարգում: Դրանք նախկին օրենքներից գրառված բնագիր իրավական նորմերը են (original legal rules): Անգլոսաքսոնական օրենքներից ու դատաստանագրքերից քաղվածքված իրավանորմերը մեկնաբանող հեղինակները պատմաիրավական գիտությանը մինչև այսօր անհայտ են: Սակայն պետք է ենթադրել, որ այդ իրավական քաղվածքագրերը կազմել ու խմբագրել են անգլոսաքսոնական սովորույթների և օրենքների գիտակ իրավագետ իմաստասերները, որոնք գրառել են մեծ խորագիտականությամբ (the erudite lawyer philosophers of the Anglo-Saxon customs and laws who wrote with much erudition):

Հիշատակված վերտառության ներքո գիտական հետազոտության ու քննախտության ենթակա են «Երգելիների մասին (About the Wergilds)», «Հյուսիսային մարդկանց օրենքները (The laws of the Northerners men's), «Օրենքի և աշխարհիկ տարբերությունների մասին (About laws and secular (wordly) distinctions)» բնագիր իրավական բանաքաղությունները<sup>1</sup>:

Անգլոսաքսոնական թագավորությունների դատարաններում քրեական և քաղաքացիական-իրավական գործեր քննելիս ու արդարացի դատավճիռ, վճիռ և որոշում կայացնելիս դատավորները հատկապես իրավական հիմք էին ընդունում վերն ընդունված բնագիր իրավական բանաքաղությունները: Իսկ ըստ ժամանակագրության, այդ բանաքաղություններն իրավական ուժ են ստացել X-XI դարերի միջև ընկած ժամանակաշրջանում, որոնց համար իրավունքի աղբյուր են եղել առանձնապես Էտելբերտի, Ինեի, Ալֆրեդ Մեծի, Էդուարդ Ավագի, Էտելսանի, Էդմունդի, Էտելբերդ Երկրորդի, Կնուտի օրենքները, ինչպես նաև 991 թ. անգլիացիների ու սկանդինավցիների միջև կնքված պայմանագիրը<sup>2</sup>:

Վերգելիների հատուցման ու փոխհատուցման (payment and compensation) վերաբերյալ բնագիր իրավական բանաքաղությունների իսկական-գիտական բովանդակությունը և էությունը բացահայտելու, պարզաբանելու և բացատրելու համար համառոտ կանգ առնենք անգլոսաքսոնական իրավունքի այն աղբյուրների ուսումնասիրության վրա, որոնցում իսկույն և ստույգ հիշատակվում են վերգելիները, նրանց տառաչափը, քվաչափը, ինչպես նաև իրավախախտման մասնակիցների շրջանակները: Իբրև իրավական հասկացություն, վերգելիներն առաջին անգամ հաստատագրված և ի լուր հայտարարագրված են ավատատիրական Անգլիայի առաջին թագավոր, օրենսդետ և օրենսդիր Էտելբերդի օրենքներում, (պրավդայում) (in the Right laws of King legislator and lawyer Athelbert of the feudal England), 7, 21-23, 26, 86-87-րդ հոդվածներում: Իսկ վերգելին իրավախախտման հետևանքով տուժող կողմի օրենքով սահմանված պետական գինն էր: Այսպես, Էտելբերդի օրենքների (պրավդայի) 7-րդ հոդվածի համաձայն, եթե սպանվել էր թագավորի դարբինը կամ հանձնակատարը, ապա փոխհատուցվում էր միջին վերգելի, իսկ 21-րդ հոդվածի իրավական ուժով միջին վերգելի կազմում էր

<sup>1</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H. G. and Sayles G. *O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия по истории средних веков*. Т.1, М., 1961, стр. 627-630.

<sup>2</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H. G. and Sayles G. *O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия по истории средних веков*. Т.1, М., 1961, стр. 590-591, 600-608, 609-614, 615-617, 620-621, 624, 626; *Хрестоматия памятников феодального государства и права стран Европы*. М., 1961, стр. 61-90.

100 շիլլինգ (shilling): Այստեղ խոսքը վերաբերում է թագավորական ծառայի սպանությանը, որը հնարավոր է, եղել է անազատ, սակայն թագավորին բարեխղճորեն ծառայելու շնորհիվ ստացել է միջին վերգելիի իրավունք: Ընդ որում, այդ ժամանակաշրջանում առավել տարածված է եղել ազատ մարդու վերգելի: Թագավորի դարբնի և հանձնակատարի սպանությունից բացի, եթե այլ մարդ էր սպանվել, ապա մարդասպանը բաց գերեզմանի առաջ սպանվածի հարազատներին հատուցում էր 20 շիլլինգ և հետագա 40 օրերում փոխհատուցում էր մնացած ամբողջ վերգելի: Իսկ եթե մարդասպանը լքել էր երկիրը, դիմել էր փախուստի, ապա այդ դեպքում նրա հարազատները հատուցում էին վերգելի կես թվաչափը (հոդվ. հոդվ 22-23-րդ)<sup>3</sup>:

Էտեբերտի օրենքները (պրավդան) հիշատակում են լետի սպանությունը, էսնի (ensue) կողմից մյուս էսնի անմեղ սպանությունը, էսնին ծանր մարմնական վնասվածք հասցնելու հետևանքները:

Լետերի վերաբերյալ նրա օրենքների 26-րդ հոդվածը եզակի ու միակ հիշատակություն է: Եթե սպանում էին առաջին կարգի լետին, ապա փոխհատուցումը կազմում էր 80 շիլլինգ, երկրորդ կարգի լետի սպանությունը՝ 60 շիլլինգ, երրորդ կարգինը՝ 40 շիլլինգ: Իսկ Սաքսոնական պրավդայի (Lex Saxonum) 16-րդ հոդվածի համաձայն՝ լետի սպանության դեպքում հատուցում էին 120 սոլիդ, որը լետի վերգելիի թվաչափն էր<sup>4</sup>: Սակայն դատողություն անելով ըստ լետի վերգելիների չափերի ու ելնելով մայրացամաքային լետերի վերգելիների համամասնությունից, ապա կարելի է ենթադրել, որ անգլոսաքսոնական լետերն, ըստ էության, կիսազատ մարդիկ էին: Իսկ վերոնշյալ էսները՝ պատկանում էին Քենտի հասարակության անազատ մարդկանց թվին: Եթե էսնն առանց մեղքի սպանում էր այլ էսնին, ապա սպանողը պարտավոր էր հատուցել նրա ամբողջական գինը՝ վերգելի: Եթե հանում էին էսնի աչքը և ջարդում նրա ոտքը, ապա մեղավոր մարդը պարտավոր էր փոխհատուցել նրա ամբողջ գինը՝ վերգելի<sup>5</sup>:

Վիտրեդ թագավորի օրենքներում վերգելիի իրավական հասկացությանն են վերաբերում 25-26 –րդ հոդվածները և 26-րդ հոդվածի 1 դրվագը (26.1): Այդ հոդվածներն ուղղակի հիշատակում են, որ եթե որևէ մեկը գողության համար սպանում է գողին, ապա սպանված գողի տոհմը զրկվում է հատուցման իրավունքից: Իսկ եթե որևէ մեկն ազատ մարդուն բռնում էր գողության կատարման վայրում գողության ժամանակ, ապա թագավորը կարող էր և իրավունք ուներ կայացնել երեք հնարավոր դատավճիռներից որևէ մեկը կամ նրան գլխատել, կամ անդրծովյան ստրկության վաճառել կամ նրան (գողին) թույլատրել փրկագնվելու իր վերգելիով: Եթե որևէ մեկը գողին բռնում և ներկայացնում էր դատարան, ապա նրան ստրկության վաճառելուց հետո գողին բռնողը ստանում էր գողի վերգելիի կամ նրա համար սահմանվում գնի կեսը: Իսկ եթե գողին սպանում էին, ապա սպանողին հատուցվում էր 70 շիլլինգ<sup>6</sup>:

Անգլոսաքսոնական իրավունքում վերգելի էր սահմանվում ոչ միայն սպանության, գողության և վերոնշյալ հանցագործությունների համար, այլև զինված ավազակային հարձակման (Ինեի օրենքների 6-րդ հոդված), Ալֆրեդի օրենքների (5 –րդ հոդված), ամուսնական անհավատարմության համար (Ալֆրեդի օրենքների 10,18-րդ հոդվածներ) և այլն<sup>7</sup>:

Անգլոսաքսոնական օրենքներում և դատաստանագրքերում հիշատակվում է, որ յուրաքանչյուր մարդ, սկսած թագավորից մինչև ստրուկը, գնահատվում էր որպես որո-

<sup>3</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H. G. and Sayles G. *O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия памятников феодального государства и права стран Европы*, М., 1961, стр. 62; *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 590-591.

<sup>4</sup> *Хрестоматия памятников феодального государства и права стран Европы*. М., 1961, стр. 28:

<sup>5</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H. G. and Sayles G. *O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 592-593.

<sup>6</sup> *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 598£

<sup>7</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H. G. and Sayles G. *O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 698-714.

շակի նյութական արժողություն: Իսկ այդ արժողությունը դրսևորվում էր օրենքով սահմանված գնի կամ վերգելդի արտահայտությամբ: Իսկ վերգելդը վերջին հաշվով մարդու գնի հատուցումն էր, որից բխում էր մարդու փոխահատուցման իրավական ձևը:

«Վերգելդների մասին (About the Wergilds)» բնագիր իրավական քաղվածքագրի 1 հոդվածը սահմանում է, որ հազար երկու հարյուր (twelfyndes) շիլլինգ բառային արտահայտությամբ գնահատված մարդու փողային արժողությունը թվաչափային ձևակերպմամբ նույնպես հավասար է 1200 շիլլինգ վերգելդի: Իսկ երկու հարյուր (twyhyndes menses) արժողության մարդը թվաչափային փողով դարձյալ հավասար է 200 շիլլինգ վերգելդի: Սակայն հիշատակյալ բնագիր իրավական քաղվածքագրի 2 հոդվածը որոշակիորեն ընդգծում է, որ երբ որևէ մեկը սպանվում է, ապա նրա համար հատուցումը (վերգելդը կամ գինը) պետք է տալ նրա ծագմանը համապատասխան<sup>8</sup>: Այդ իրավական տեսական շարադրանքից անհրաժեշտ է եզրակացնել, որ հիշյալ 1-ին և 2-րդ հոդվածները իրականում ունեին դասային բնույթ և բովանդակություն:

Վերգելդների հատուցման բնագիր իրավական քաղվածքագրի 3-րդ հոդվածում սահմանված և թույլատրված կարգի համաձայն՝ մարդասպան հանցագործը խոստանում էր օրենքով նախատեսված ժամանակում անպայմանորեն հատուցել վերգելդը (սպանված մարդու գինը): Այդպիսի դեպքերում նա պարտավոր էր դատարան ներկայացնել 12 մարդու երաշխավորություն այն հանգամանքներում և այն պարագաներում, երբ վերգելդը, հատուցման գինը որոշակիորեն կազմում էր 1200 շիլլինգ: Ընդ որում, 12 երաշխավորված մարդկանցից ութը պետք է լինեին հանցագործի հոր տոհմից, իսկ մյուս չորսը՝ մոր տոհմից: Բացառապես օրենքի այս պահանջը կատարելուց հետո էր թույլատրվում, այսպես կոչված, թագավորական հաշտությունը, այսինքն՝ սպանողի և սպանվողի կողմերը միասին ու միաժամանակ խոնարհվում էին աջ և ձախ դրված զենքերի միջև: Նրանք խոստանում էին պահպանել թագավորական հաշտությունը, որով խստագույնս արգելվում էր արյան վրեժի իրականացումը (հոդվ. 4-րդ): Մույն հոդվածի երկրորդ մասը հանցագործ կողմին ուղղակիորեն և որոշակիորեն իսկույն պարտավորեցնում էր, որ թագավորական հաշտություն կնքելու պահից սկսած 21 օրում տուժող կողմին պարտադիր հատուցել 120 շիլլինգ նախահատուցում կամ կանխահատուցում (Healsfange), իբրև 1200 շիլլինգ վերգելդի նախնական երաշխիքային հատուցում: Իսկ վերգելդների իրավական տեսության համաձայն (հոդվ. 5-րդ) դա տրվում էր սպանվածի երեխաներին, եղբայրներին և հորեղբայրներին: Ընդ որում, բացի մերձավոր արյունակից հարազատներից, ոչ ոք իրավունք չուներ ստանալու այդ փողից: Իսկ Էտելբերտի օրենքների 22-րդ հոդվածը սահմանում էր, որ եթե որևէ մեկը սպանում է մարդու, ապա նա պարտավոր է բաց գերեզմանի առաջ վճարել 20 շիլլինգ և 40 գիշերների ընթացքում փոխահատուցել ամբողջ (մնացած) վերգելդը<sup>9</sup>:

Այդ Healsfange (նախահատուցում կամ կանխատահում<sup>10</sup>) իրավական ինստիտուտն իր արտահայտությունն ու տեղն է գտնում Վիտրեդի օրենքների 11-12-րդ և 14-րդ հոդվածներում: Նրա օրենքների 11-րդ հոդվածը որոշակիորեն և հստակորեն ասում է, որ եթե ազատ մարդն (ազատը) աշխատում է արգելված ժամանակ, ապա նա մեղադրվում և նախահատուցում է որոշակի գումար, իսկ նրան մեղադրողը ստանում է տուգանքի կեսը և այդ օրվա աշխատանքի արդյունքը: Իսկ եթե կեռն առանց իր կնոջ համաձայնության կուռքերին երկրպագելու համար զոհաբերություն էր կատարում, ապա նա զրկվում էր ամբողջ գույքից և մուծում կամ վճարում էր կանխահատուցում

<sup>8</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 627-628.

<sup>9</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 621, 628.

<sup>10</sup> Healsfange այս անհասկանալի միջնադարյան անգլերեն բարբառային տերմինը (term) լատինական բնագրերում և բառարաններում թարգմանվում է *opprehensio onis*, որը նշանակում է ընդգրկում: Իսկ հայերեն ստուգաբանական տառադարձությամբ այն փոխակերպում է իբրև նախահատուցում կամ նախնական երաշխիքային հատուցում (կանխահատուցում): Дворецкий И.Х. *Латинско-Русский словарь*. М., 1980, стр. 597.

(healsfange): Իսկ եթե նրանք երկուսն էլ խոնարհվում էին կուռքերի առաջ, ապա նրանք վճարում էին healsfange և զրկվում էին իրենց ամբողջ գույքից: Եթե որևէ մեկը պահակալետում (պահակատեղում) միս էր տալիս տոնեցիներին, ապա միս տվողը պարտավոր էր վճարել (մուծել) healsfange ինչպես ազատների, այնպես էլ ստրուկների համար<sup>11</sup>:

Վերգելդների հատուցման իրավական տեսության համաձայն, բնագիր իրավական բանաբաղության 6-րդ հոդվածը պարտադիր ցուցում էր տալիս, որ այն օրվանից, երբ մուծված կամ վճարված էր համարվում healsfange-ը, 21 գիշերների ժամանակամիջոցում մարդասպան հանցագործը պարտավոր էր սպանված մարդու հողատիրոջը (landlord) կամ կալվածատիրոջը (hlaforde) վճարել փոխհատուցում (compensate)<sup>12</sup>: Իսկ Ինչի օրենքների իրավական տեսության 70-րդ հոդվածի համաձայն՝ հլաֆորդին պատկանող կախյալ մարդու սպանության համար, եթե վերգելդը գնահատված էր 200 շիլլինգ, ապա healsfange-ը (կանխահատուցումը) կազմում էր 30 շիլլինգ և համապատասխանաբար 600 շիլլինգի դեպքում՝ 80 շիլլինգ, 1200 շիլլինգ վերգելդի դեպքում՝ 120 շիլլինգ նախահատուցում<sup>13</sup>:

Վերգելդների մասին բնագիր իրավական բանաբաղության հիշատակված 6-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում էր, որ հետայսու զինված բախման, ընդհարման համար 2 (գիշերների) ժամանակամիջոցում պետք է մուծել կամ վճարել տուգանք, իսկ մյուս 21օրերում անհրաժեշտ է մուծել վերգելդի առաջին հատուցումը և այսպես շարունակ այնքան ժամանակ, քանի դեռ չի հատուցվել ամբողջ վերգելդը: Իսկ դրանից հետո, եթե մարդասպան հանցագործը կամենում էր սպանված մարդու հարազատների հետ վերջնական հաշտություն կնքել, ապա նա կարող էր ապրել խաղաղությամբ: Ճիշտ այդ կարգով ու իրավաչափությամբ հատուցվում էր կեռի վերգելդը՝ զինը, ինչպիսին սահմանված էր հազար երկու հարյուր շիլլինգ գնահատված մարդու սպանության դեպքում (հոդվ. 7-րդ)<sup>14</sup>: Նախահատուցում էր սահմանվում նաև սուտ կամ կեղծ ցուցմունք տալու համար: Կնուտի օրենքների 37-րդ հոդվածը իրավականորեն հաստատագրում էր, որ «ակնհայտ կեղծ վկայություն տալու համար մեղադրվողի (մերկացվողի) ցուցմունքները թող այտուհետև առավել ուժ չունենան, իսկ նա պարտավոր է մուծել այդ հանցանքի նախահատուցումը (healsfange): Սակայն պետք է ենթադրել, որ հանցագործության կատարման համար այդ նախահատուցումը սահմանված էր կալանքի, խափանման միջոցի (ազատագրկման պատժի) փոխարեն: Իսկ XII դարի բնագիր իրավական բանաբաղություն-քաղվածքագրերում, մասնավորապես Հենրի I-ի թագավորի օրենքներում healsfange-ը եղել էր վերգելդի այն մասը, որը տրվում էր սպանվածի ամենամոտ հարազատներին, իսկ վերգելդի մյուս մնացած մասը հանձնվում էր տոհմի անդամներին: Մինչդեռ այս պարագայում Հենրի I-ի օրենքներում չի հիշատակվում վերգելդի նախահատուցման (healsfange) թվաչափը: Սակայն պետք է կարծել, որ այս հանգամանքներում նախահատուցումը կազմում էր սպանվածի վերգելդի կեսից ավելին:

Այսպիսով, վերգելդների վերաբերյալ բնագիր իրավական բանաբաղություն-քաղվածքագրերը, ըստ էության, դասային բովանդակություն ու բնույթ ունեին: Ընդ որում, վերգելդն օրենքով սահմանված մարդու պետական զինն էր: Այն հատկապես սահմանվում էր տվյալ պատմական դարաշրջանի ամենաբարդ և խստագույնս արգվելված իրավախախտումների կատարման համար: Վերգելդի նախահատուցումը, հատուցումը և փոխհատուցումն իսկապես ոչ միայն քրեաիրավական, այլև սոցիալական խստագույն պատժատեսակ էր անգլոսաքսոնական բոլոր թագավորություններում: Ըստ երեվույթին և մեր կարծիքով՝ քրեաիրավական տեսության, անգլոսաքսոնական քրեաիրավական ուսմունքի համաձայն վերգելդը հանցագործի կատարման մեղքի հատուցման

<sup>11</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 697.

<sup>12</sup> *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 628:

<sup>13</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 607.

<sup>14</sup> *Хрестоматия по истории средних веков*. Т. 1, М., 1961, стр. 628.

նյութական-փողային քրեաիրավական պատժի իրավական ձև էր: Մակայն փոխհատուցումը բխում էր մարդու հանցագործության կատարման հետևանքով վնաս պատճառելու համար հատուցման փողային իրավական ձևից: Իսկ նախահատուցումը (healsfange) ամբողջ վերգելդի հատուցման նախնական իրավական երաշխիքն էր, նրա նախահատուցումը:

Անգլոսաքսոնական բնագիր իրավական բանաբաղադրություն է «Հյուսիսային մարդկանց օրենքները (The laws of the Northerners)»: Այդ բնագիր իրավական բանաբաղադրություն-քաղվածքագիրը քաղաքական աշխարհագրության տեսակետից բացառապես տարածված է եղել արևելյան և հյուսիս-արևելյան Անգլիայի, այսպես կոչված, «Դանիական իրավունքի մարզի (of the Region Danish Law)» բնակչության վրա: Սկանդինավցիներն այդ տարածքները նվաճել էին դեռևս IX դարում՝ Ալֆրեդ Մեծի թագավորական իշխանության կառավարման ժամանակաշրջանում:

Հյուսիսային մարդկանց օրենքների I հոդվածը սահմանում և ժողովրդական իրավունքի (սովորույթների) սանկցավորման հիման վրա որոշակիորեն հաստատագրում էր, որ հյուսիսային մարդկանց թագավորի վերգելդի հատուցումը կազմում է 30 հազար թրինս (trim),<sup>15</sup> որից 15 հազար թրինսն օրենքով որոշված կարգով թագավորի պետական (թագավորական) գինն էր, նրա վերգելդը: Իսկ մյուս 15 հազար թրինսը՝ թագավորության արժանապատվության (հեղինակության – ընդգծումը մերն է-Է.Ե.) համար սահմանված ու նախատեսված փոխհատուցումն էր: Այս հոդվածի իրավական բովանդակությունից, բնույթից ու էությունից պետք է եզրակացնել, որ վերոնշյալ քաղաքական տարածքում տեղի էին ունեցել թագավորների չարամիտ սպանություններ, որոնց համար Հյուսիսային մարդկանց օրենքները սահմանել են բարձրագույն թվաչափերի հասնող վերգելդի հատուցում և փոխհատուցում: Ընդամին՝ հատուցումը տրվում էր թագավորական տոհմի անդամներին, իսկ փոխհատուցումը՝ երկրի, տվյալ պարագայում «դանիական իրավունքի մարզի» բնակչությանը: Մակայն առանց փոխհատուցման այդպիսի իրավական կարգ են հիշատակում այդ օրենքի 2-6-րդ հոդվածները: Այսպես, օրինակ՝ արքեպիսկոպոսի, կեռլի, թագավորական պաշտոնյայի՝ կոմնի վերգելդը հավասար էր 8 հազար թրինսի: Իսկ նորվեգական ազատը, այսինքն՝ ազատ մարդը (holds-ը), որը ժառանգության իրավունքի համաձայն ուներ տիրույթ, ապա նրա վերգելդը կազմում էր 4 հազար թրինս: Հոլդեսին (holds) հավասարազոր թրինս էր նախատեսվում նաև թագավորության պաշտոնյայի՝ կոմսության (shire) փոխարքայի (gerefe) համար՝ դարձյալ 4 հազար: Հոգևորականի և տեղի համար առանձին-առանձին՝ յուրաքանչյուրին նախատեսվում էր 2 հազար թրինս վերգելդ: Ըստ դանիական իրավունքի, կեռլի վերգելդը հավասար էր 266 թրինսի, իսկ մերսիական իրավունքի համաձայն՝ 200 շիլլինգի<sup>16</sup>:

Հիշատակված օրենքների 7-8-րդ հոդվածներն առանձնապես վերաբերում էին ուելսցիների համար սահմանված հարկերին, (assessment) վերգելդներին ու փոխհատուցումներին, որոնք բխում էին հողային սեփականության թվաքանակից: Այդ օրենքի 7-րդ հոդվածում որոշակիորեն ընդգծվում է, որ եթե ուելսցին հասնում է բարձր դիրքի և տիրում է 1 հայդա (hade) հողամասի և կարող է թագավորին հարկ տալ, ապա նրա պետական գինը կազմում է 120 շիլլինգ: Իսկ եթե ուելսցին տիրում էր միայն հայդայի կեսին, ապա այդպիսի հողային ռեժիմի պայմաններում նրա վերգելդը հավասար էր 80 շիլլինգ: Այդ ընդհանուր կանոնից օրենքը նախատեսում էր մեկ բացառություն, այսինքն՝ եթե ուելսցին ընդհանրապես հող չուներ, բայց անձնապես ազատ էր, ապա փոխհատուցումը կազմում էր 70 շիլլինգ<sup>17</sup>: Իսկ Ինգլի օրենքների 32-րդ հոդվածը պայ-

<sup>15</sup> Թրինսը (trim) Հյուսիսային Անգլիայի. «Դանիական իրավունքի մարզի» դանիական փողային միավորն էր: Մեկ թրինսը Հյուսիսային Անգլիայում հավասար էր մեկ ամբողջ 80 հարյուրերորդական ֆունտ ստեռլինգի:

<sup>16</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 628-629.

<sup>17</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 629.

մանականորեն պատվիրագրում էր, որ եթե ուիրը՝ Բրիտանիայի տեղական բնակչության ներկայացուցիչը՝ անգլոսաքսերի հպատակը, տիրապետում էր 1 հայրա հողամասի, ապա նրա վերգելը կազմում է 120 շիլլինգ, իսկ կես հայրա հողամասի իրավական ռեժիմի պայմաններում նրա վերգելը հավասար էր 80 շիլլինգի: Եթե ուիրը հողամաս չուներ, ապա նրա վերգելի փողային գումարի թվաչափը 60 շիլլինգ էր<sup>18</sup>:

Հյուսիսային մարդկանց օրենքների իրավական տեսության համաձայն 9-12-րդ հողվածները նվիրված են կեռլի, նրա որդու և թոռի համար սահմանված վերգելների գումարային (փողային) թվաչափերին: Այդ օրենքների 9-րդ հոդվածը վկայակոչում էր, որ եթե կեռլը զբաղեցնում էր որոշակի բարձր դիրք և թագավորությանը զինվորական ծառայություն մատուցելու համար անհրաժեշտաբար տիրապետում էր հինգ հայրա հողային սեփականության, և նրան սպանում էին, ապա նրա վերգելի հատուցումը կազմում էր 2 հազար թրինս, այսինքն՝ այնքան, որքան տեղի վերգելի թրինսային գումարի թվաչափն էր, որն արդեն հիշատակված է վերևում: Եթե կեռլն ավելի բարձր դիրք էր զբաղում, ապա նա պարտավոր էր ձեռք բերել և ունենալ մետաղե սաղավարտ (կորդակի), օղակազրահ (վերտազրահ) և շրջանակաձև ոսկյա վահան, սակայն, եթե նա չէր տիրապետում հինգ հայրա հողային սեփականության, ապա նա, համեմայն դեպս, մնում էր կեռլի իրավական վիճակում: Իսկ վերջինս արդեն հանդես էր գալիս իբրև կեռլ, զգեստավորվում և դառնում էր գուգազ (combatant), ձեռք էր բերում գուգազի անճանական արտոնություններ: Եվ եթե կեռլի որդին ու թոռն այնքան բարձր հասարակական ու պետական բարձր դիրք (բարձրագույն պաշտոն - ընդգծումը մերն է - Է.Ե.) էին զբաղվում ու տիրապետում էին մեծ թվաքանակի հասնող հողային սեփականության, ապա այդպիսի հանգամանքներում ու պայմաններում նրանց հետագա սերունդները պատկանելու էին գուգազների տոհմին՝ 2 հազար թրինս վերգելի թվաչափով: Իսկ եթե նրանք բարձր դիրք էին զբաղում, սակայն չունեին այդքան հողային սեփականություն, ապա նրանց հատուցվում էր կեռլի վերգելի թվաչափով<sup>19</sup>, այսինքն՝ հատուցվում էր այնքան վերգելի, որքան հատուցում էին կեռլի սպանության համար:

Այսպիսով, Հյուսիսային մարդկանց օրենքները թագավորի սպանության դեպքում սահմանում էր ոչ միայն վերգելի հատուցում, այլև փոխհատուցում: Իսկ թագավորության հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաների, այդ թվում՝ արքեպիսկոպոսի, եռլի, եպիսկոպոսի, էլդորմենի, նորվեգիական ազատի (holdes), փոխարքայի, հոգևորական քահանայի, տեղի և կեռլի վերգելիներին համապատասխանաբար սահմանվում էր հատուցում: Ընդ որում՝ ուելսցիների, հասարակական կամ պետական բարձր դիրք զբաղած կեռլի և վերջինիս որդու և թոռի համար սահմանված վերգելի հատուցման թվաչափը պայմանավորված էր հայրաների հողային սեփականության տիրապետման թվաքանակից, այսինքն՝ հողատիրության սեփականության ոչ պակաս հինգ հայրաների իրավական ռեժիմի չափանիշներից: Սակայն հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաների վերգելի թվաչափը մեկընդմիջտ սահմանված էր ստույգ, իսկ աշխարհիկ ստորին խավերի վերգելիների չափը բխում էր հողային սեփականության բարձր թվաքանակից:

Անգլոսաքսոնական բնագիր իրավական բանաբաղությունների շարքին է պատկանում «Օրենքի և աշխարհիկ տարբերությունների մասին (About laws and secular (wordily) distinctions) քաղվածքագիրը: Իրավական ձևի և բովանդակության տեսակետից՝ այդ օրենք բանաբաղություն-քաղվածքագիրն առանձնապես վերաբերում էր կեռլի, տեղի և վաճառականի իրավունքների ու պարտականությունների անշեղ ու պատշաճ կատարմանը: Նշյալ օրենքը, մեր կարծիքով, Հյուսիսային մարդկանց օրենքների տրամաբանական և իրավական շարունակությունն էր: Այս իմաստասիրությամբ՝ այդ բնագիր իրավական քաղվածքագրի 2-րդ հոդվածն ուղղակի և որոշակի հիշատակում է, որ եթե կեռլն այնպիսի բարձր դիրքի էր հասնում, որ նա սեփականատիրության իրավունքով տիրապետում էր հինգ հայրա հողատարածության և նրա վրա կառուցված ե-

<sup>18</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 603.

<sup>19</sup> Attenborough. *The Laws of Earliest English Kings*, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. *Law and Legislation from Ethelbert to Magna Carta*. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 629.



կեղեցին, խոհանոցը, զանգակատունը գտնվում էր բուրգի (քաղաքի) դարպասի մոտ, ապա այդպիսի իրավական հանգամանքներում և պայմաններում կեռվում օժտված էր քաղաք մուտք գործող վաճառականներից մաքսատուրք գանձելու իրավունքով: Բացի այդ, նա իրավունք ուներ թագավորական դահլիճում կատարելու հատուկ ծառայություն: Եվ այդպիսի իրավական հանգամանքների դեպքում նույն հողվածի եզրափակիչ տողում հիշատակվում է, որ նա (կեռվն) այսուհետև պարտավոր է օգտվել տեղի համար սահմանված ու հաստատված իրավունքներից: Եթե տեղի իրավունքով օժտված կեռվը զբաղեցնում էր այդպիսի բարձր դիրք, ծառայում էր թագավորին, մեկնում էր նրա տնտեսություն, իր իշխանության ներքո տեղն (the genes) ուներ ավատառու, թագավորությանը զինվորական ծառայություն կատարելու համար շնորհվում էր հինգ հայրա հողային սեփականություն, իր հլաֆորդի (կալվածատիրոջ) հանձնարարությամբ եռակի անգամ այցելել էր թագավորին, ապա համանման իրավական ուժով բարձր դիրք զբաղված տեղը կարող էր հետայսու դատարան ներկայացնել հլաֆորդի զանգատները, եթե այդ էին պահանջում վերջինիս նյութական և՛ իրավական շահերը: Բացի այդ, այդպիսի տեղը կարող էր և իրավունք ուներ դատարան ներկայացնել թագավորի շահերի պաշտպանությունը ևս (հողվ. 3-րդ): Այդ օրենքի 6-րդ հոդվածի իրավական տեսության համաձայն, եթե վաճառականը երեք անգամ անընդմեջ իր սեփական միջոցներով ուղևորություն էր կատարել մեծ ծովում, ապա այդ հողվածի երկրորդ մասը հստակ ու պատշաճ սահմանում էր, որ նա հետագայում պարտավոր էր օգտվել տեղի համար նախատեսված իրավունքներից<sup>20</sup>:

Անգլոսաքսոնական իրավունքի աղբյուրներում՝ մասնավորապես Ալֆրեդ Մեծի օրենքների (դատաստանագրքի) 34-րդ հոդվածում, են միայն հիշատակվում վաճառականների իրավունքները և պարտավորությունները: Այդ հողվածի իրավական տեսության համաձայն վաճառականներն իրավունք ունեին իրենց սեփական փոխադրամիջոցներով (նավերով) ուղևորներ տեղափոխել: Սակայն իրենց վերապահված այդ իրավունքի համապատասխան՝ նրանք միաժամանակ պարտավոր էին ժողովրդական ժողովին և թագավորության գործերի կառավարիչին (business manager) ներկայացնել այլ երկրներ մեկնող մարդկանց թվաքանակը: Ընդ որում, վաճառականներն իրավունք ունեին տեղափոխելու այնքան այցելու, որքան մարդ հետագայում կարող էին հայտնել ժողովրդական ժողովին: Իսկ այս պարագայում՝ ժողովրդական ժողովը դիտվում էր իբրև արդարադատության մարմին, իբրև դատարան: Եվ եթե վաճառականներն ուղևորության համար անհրաժեշտ էին համարում ավելի շատ մարդ տեղափոխել, ապա նրանք ամեն անգամ, ըստ պատշաճության, պարտավոր էին այդ մասին անմիջականորեն տեղեկացնել թագավորական գործերի կառավարիչին, իսկ վերջինս ծանուցում և զեկուցում էր ժողովրդական ժողովին<sup>21</sup>: Սակայն այդ օրենքում չեն հիշատակվում ուղևորներ տեղափոխող վաճառականների իրավական պատասխանատվության հիմքերը: Մինչդեռ պետք է ենթադրել, որ ժողովրդական ժողովը հավանություն էր տալիս թագավորության կառավարիչի հաշվետվությանը կամ այն մերժում էր: Վերջինիս դեպքում, իբրև դատարան, ժողովրդական ժողովն իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում էր ըստ էության և նրա որոշումը վերջնական էր ու զանգատարկման ենթակա չէր:

Այսպիսով, հողային սեփականության հարստացման, թագավորության ապարատում իր պարտականությունները պատշաճ ու բարեխիղճ կատարելու և հլաֆորդին հավատարմորեն ծառայելու համար կեռվը ձեռք էր բերում տեղի իրավունք, մի իրավունք, որով դատարան էր ներկայացնում ոչ միայն իր կալվածատիրոջ զանգատները, այլ նույնիսկ դատարանում պաշտպանում էր թագավորի համար պահանջվող օրինական շահերը: Իսկ օրինավոր վաճառականներին իրենց պարտականությունները գործնականում իրականացնելու համար շնորհվում էր տեղի իրավունք: Իրենց անդրժովյան

<sup>20</sup> *Attenborough. The Laws of Earliest English Kings, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 629-630.*

<sup>21</sup> *Attenborough. The Laws of Earliest English Kings, London, 1922; Richardson H.G. and Sayles G.O. Law and Legislation from Ethelbert to Magna Carta. Edinburgh, 1966; Хрестоматия по истории средних веков. Т. 1, М., 1961, стр. 613.*

առևտրական գործառնությունների և այլ երկրներ ուղևորներ տեղափոխելու համար վաճառականները հաշվետու և պատասխանատու էին ժողովրդական ժողովի, որպես բարձրագույն դատական ատյանի առջև:

## АНГЛОСАКСОНСКИЕ ОРИГИНАЛЬНЫЕ ПРАВОВЫЕ КОМПИЛЯЦИИ КАК ИСТОЧНИК ПРАВА В X-XI ВЕКОВ.

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Э. Есаян* \_\_\_

Оригинальные правовые компиляции и отрывки о вергельдах, по сути, имели классовое содержание и характер. Причем, вергельд был государственной ценой, установленной государством. Он особенно устанавливался для строго запрещенных правонарушений определенной исторической эры. Предварительная уплата, компенсация и возмещение были по настоящему не только уголовно-правовым, но и строжайшей социальной карой во всех англосаксонских королевствах. По всей видимости, и, по нашему мнению, согласно уголовно-правовой теории и англосаксонской уголовно-правовой доктрине вергельд был материально-правовой формой уголовно-правового наказания за вину преступника.

Для обеспечения земельной собственности, для адекватного и добросовестного осуществления своих обязанностей в королевском аппарате и для верной службы помещику, кэрл приобретал право тэна, право, с помощью которого он представлял в суд не только жалобы помещика, но и защищал законные права короля в суде. А для практического осуществления своих обязанностей порядочные купцы приобретали право тэна. За свою заморскую деятельность и перевозку пассажиров в другие страны купцы были подотчетны и ответственны перед национальной Ассамблей как перед высшей судебной инстанцией.

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ- ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՇԱՐ-  
ԺԸ 1900-1970 թթ.**

1900-1970 թթ. դիտվել է Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության քվաքանակի կտրուկ աճ, ինչը պայմանավորված է ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործոններով: Նշված ժամանակահատվածում քաղաքի բնակչության էթնոժողովրդագրական իրավիճակը ներկայացնելու համար օգտվել ենք 1902, 1914, 1916 թթ. «Кавказский календарь»-ի, 1926, 1939, 1959 և 1970 թվականների համամիութենական մարդահամարների և ընթացիկ հաշվառումների տվյալներից: Քանի որ, ուսումնասիրվող ժամանակահատվածը բավականին մեծ է, նպատակահարմար ենք գտել այն բաժանել երեք փուլերի՝ 1900-1926թթ, 1926-1959թթ, 1959-1970թթ.: Բաժանումը կատարել ենք այն տրամաբանությամբ, որ պատմականորեն սրանք էսպես տարբեր ժամանակային փուլեր են և ընդգրկում են համամիութենական մարդահամարների միջև ընկած տարիները:

1902թ. Ալեքսանդրապոլում ուներ 33897բնակիչ, որից 17366-ը՝ արական սեռի, իսկ 16531-ը՝ իգական<sup>1</sup>, և այդ թիվը 4966 մարդով գերազանցել է նահանգի կենտրոն Երևանի բնակչության թվին:<sup>2</sup> Ալեքսանդրապոլում՝ 1896-1914թթ. բնակչության միջին տարեկան հավելանքը կազմել է 5.5%, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Ալեքսանդրապոլում բնակվել է համաճում գավառի բնակչության 22,6%, այսինքն՝ Երևանի նահանգի բնակչության՝ 5,1%-ը<sup>3</sup>:

Աղյուսակ 1-ից երևում է, որ 1897-1970թթ. Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության թիվն ավելացել է 134350 մարդով կամ աճել է 5.4 անգամ: Դա բացատրվում է ոչ միայն բնական աճի բարձր տեմպերով, այլև 1914-1918թթ.՝ Արևմտյան Հայաստանից հայերի զանգվածային ներգաղթով, 1921-1937թթ. և 1946-1970թթ.՝ հայրենադարձության, գյուղական բնակավայրերից ու հանրապետության հարակից շրջաններից՝ հիմնականում Վրաստանից և Ադրբեյջանից հայ բնակչության ներգաղթի հաշվին: 1926թ. մարդահամարի տվյալներով Լենինականն ուներ 42313 բնակիչ:<sup>4</sup> 1926-ից մինչև 1939 թիվը քաղաքի բնակչությունը ավելացել է 25,4 հազարով, այսինքն աճել է 1.6 անգամ: Այդ տարիներին 1000 մարդու հաշվով բնակչության տարեկան միջին աճը կազմել է մոտ 32.0 պրոմիլե: 1959թ. անցկացված համամիութենական մարդահամարի տվյալներով Լենինականն ուներ 108440 բնակիչ<sup>5</sup>, մոտ 66 հազարով ավելի 1926թ.-ին և 40,7 հազարով՝ 1939թ.-ին ունեցած բնակչության քվաքանակից: 1939-1959թթ. Լենինականում յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով բնակչության տարեկան միջին աճը կազմել է 22.0 պրոմիլե, ինչը համեմատած 1926-1939թթ. հետ՝ համեմատաբար ցածր ցուցանիշ է: 1959-ից մինչև 1970 թիվը Լենինականի բնակչությունը 108,4 հազարից հասել է 164,9 հազարի, այսինքն ավելացել է 55.6 հազարով:

Աղյուսակ 1-ից երևում է նաև, որ 1914-1926թթ. Ալեքսանդրապոլ-Լենինականում դիտվել է բնակչության թվի կտրուկ նվազում, ինչի արդյունքում 1926 թվականին քաղաքի բնակչության թիվը 1914 թվականի համեմատությամբ նվազել է 9 հազարով: Դա բացատրվում է պատերազմական դրությամբ, երբ հազարավոր ալեքսանդրապոլցիներ զոհվեցին կամ սպանվեցին, շատերն էլ գաղթեցին Հյուսիսային Կովկաս և այլուր: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ամբողջ հանրապետությունում այդ թվում՝ նաև Լենինականում դիտվում է բնակչության թվի կայուն ավելացում՝ բնական աճի և ներգաղթերի հաշվին: 1930 թ.-ին Լենինականն ուներ մոտավորապես այնքան բնակիչ,

<sup>1</sup> Կ. Կ ո զ մ յ ա ն, Լենինական, Եր., 1957, էջ 102:

<sup>2</sup> Բանբեր Երևանի արխիվների 1(80), Եր., 1988, էջ 94:

<sup>3</sup> Պ. Ա բ ե լ յ ա ն, Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում, Եր., 1931, էջ 37:

<sup>4</sup> Մ. Մ ո լ կ և ի չ, ԽՍՀՄ բնակչությունը, Եր., 1940, էջ 38:

<sup>5</sup> «ИВПН», М. 1960, стр. 33.

որքան 1915-ին: Այսինքն՝ 15 տարիներ պետք եղան, որպեսզի վերականգնվեր բնակչության նախապատերազմյան թիվը:

Աղ. 1 Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության թվի շարժը 1897-1970թթ.\*

Տարեթվեր	բնակչ. թիվը (հազ. մարդ)	1897 %	1914 %	1926 %	1939 %	1959 %	1970 %
1897	30616	100					
1902	33879	109.6					
1914	51316	140.3	100				
1926	42313	127.6	82	100			
1930	52420	141.5	102	124			
1939	67729	154.8	132	160	100		
1959	108446	174.0	211	256	160	100	
1960	110889	362	216	262	164	102	
1966	129841	424	253	307	192	120	
1970	164966	539	321	390	244	152	100

Բնակչության թվի փոփոխության առաջնահերթ գործոններից է ծնելիությունը: Ծնելիության վիճակը 1926-1970թթ.

Աղ. 2 Լենինականի բնակչության ծնելիության ցուցանիշները 1926-1939թթ. (ըստ Գյումրու ԲԿԱԳ-ի արխիվի նյութերի)

Տարեթվեր	Ծնվածների թիվը	Տարբերությունը նախորդ տարվա համեմատությամբ	Բնակչության միջին թիվը (հազ.)	Ծնելիության գործակիցը (պրոմիլե)	Ամուսնու թյունների թիվը
1926	2018		42,3	47,7	-
1927	2061	+43	44,3	46,5	-
1928	2279	+218	46,5	49,0	-
1929	2323	+44	48,2	48,2	-
1930	2481	+158	51,3	48,3	505
1931	2520	+39	54,8	45,9	510
1932	2540	+20	57,6	44,0	488
1933	2077	- 463	59,4	34,9	349
1934	2244	+167	61,5	36,4	357
1935	2655	+411	62,6	42,4	300
1936	2484	- 171	62,8	39,5	401
1937	4001	+1517	63,9	62,6	339
1938	3033	- 968	65,1	46,5	465
1939	3060	+27	67,7	45,1	300

Աղյուսակ 2-ից երևում է, որ մինչև 1939թ. ծնունդների ամենաբարձր ցուցանիշը դիտվել 1937 թվականին՝ 4001 երեխա: 1926-1939 թթ. Լենինականում ծնելիության ամենաբարձր գործակիցը դիտվել է նույն 1937թվականին՝ 62.5 պրոմիլե, ամենացածրը՝ 1933 թվականին՝ 34.9 պրոմիլե: Ընդհանուր առմամբ նշված ժամանակահատվածում ծնելիության գործակիցի ցուցանիշներում կտրուկ տատանումներ չեն դիտվում:

1940-1959թթ. Լենինականի բնակչության ծնելիության աճի ցուցանիշների վրա բացասական ազդեցություն է ունեցել հիմնականում երկրորդ համաշխարհային պատերազմը, իսկ դրական՝ ամուսնությունների թվի աճը, հայրենադարձությունը և գյուղական բնակավայրերից հիմնականում ամուսնական տարիքի բնակչության ներհոսքը և այլն: 1940-1959 թթ. Լենինականում ծնելիության գործակիցի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1940 թվականին՝ 41.9 պրոմիլե, իսկ ամենացածրը 1944 թվին՝ 13.1 պրոմիլե (տե՛ս աղ. 3):

1941-1959թթ. ծնելիության գործակցի միջին ցուցանիշը կազմել է 33.7 պրոմիլե, ինչը 1926-1939 թթ. համեմատությամբ պակասել է 14.5 պրոմիլով: Պատերազմից հետո Լենինականում անընդհատ դիտվել է ծնունդների կայուն աճ:

Քաղաքում ծնունդների տատանումները պետք է բացատրել երկու հանգամանքով. մախ՝ ժողովրդագրական երևույթներով, օրինակ՝ ամուսնական տարիքի բնակչության թվաքանակի աճով, երկրորդ՝ բնակչության պարզ վերարտադրությամբ, այսինքն՝ կենսակերպի պահանջով ծնունդների կարգավորված ռեժիմին անցումով:

Աղ. 3 Լենինականի բնակչության ծնելիության և նրա գործակցի շարժընթացը

Տարեթիվը	Ծնվածների թիվը	Տարբ. մախտրդ տարվա համեմատությամբ	Բնակչ. թիվը (հազ. մարդ)	Ծնելիության գործակիցը (պրոմիլե)	Ամուսնությունների թիվը
1940	2964		69.2	42.9	301
1941	2771	- 193	71.4	38.8	411
1942	2883	+112	73.2	39.3	278
1943	1162	- 1721	70.6	16.5	162
1944	978	- 184	68.5	14.2	207
1945	1677	+699	70.2	23.8	472
1946	2062	+385	74.5	27.7	911
1947	2832	+770	75.8	37.4	1700
1948	2333	-499	77.5	30.1	1030
1949	2762	+429	80.9	34.1	1351
1950	2680	-82	83.4	32.1	1273
1951	3002	+322	86.7	34.6	1393
1952	3311	+309	88.6	37.4	1100
1953	3353	+42	91.5	36.6	1021
1954	3410	+57	94.2	36.2	1227
1955	3616	+206	97.8	36.9	1221
1956	3720	+104	101.9	36.5	1208
1957	3510	-210	104.8	33.5	1288
1958	3320	-190	106.6	31.1	1280
1959	3570	+250	108.4	32.9	1207

1940թ., 1000 մարդու հաշվով Լենինականում ծնելիության գործակիցը գերազանցել է հանրապետության համապատասխան ցուցանիշին, իսկ 1950 և 1955 թվականներին՝ զիջել:<sup>6</sup> Աղյուսակ 3-ից երևում է, որ սկսած 1957 թվականից Լենինականում դիտվում է ծնունդների թվի նվազում: Դա կարելի է բացատրել ոչ միայն ժողովրդագրական իրավիճակով: 1956 թվականին ԽՍՀՄ-ում չեղյալ համարվեց 1936 թվականին ընդունված օրենքը արհեստական վիժումը արգելելու և այն քրեորեն պատժելի իրողություն համարելու մասին: Դա անմիջապես հանգեցրեց ողջ երկրում ծնունդների թվի կտրուկ նվազման՝ մոտ մեկ ու կես անգամ<sup>7</sup>:

1926-1959թթ., ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Լենինականում, ծնունդների թվի աճի վրա ազդող գործոններ են եղել՝ աղջիկների վաղ ամուսնությունը, կրթական մակարդակը, ընտանեկան կենցաղը, տնտեսությունում կանանց զբաղվածության աստիճանը և այլն: Չունենալով համապատասխան վիճակագրական տվյալներ, մենք չենք կարող ներկայացնել այդ շրջանում Լենինականում ամուսնությունների

<sup>6</sup> Խ. Ավետիսյան, Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Եր., 1987, էջ 30:

<sup>7</sup> Воспроизводство населения СССР, под ред. А. Витневского и А. Волкого, М., 1983, стр. 174

բաշխվածությունը ըստ տարիքային խմբերի: Սակայն գտնելով, որ այն չէր կարող էապես տարբերվել հանրապետությունում ամուսնությունների տարիքային բաշխման միջին ցուցանիշներից, ներկայացնում ենք այդ տարիների վերաբերյալ հանրապետական տվյալները՝ ըստ տարիների և տարիքային խմբերի ամուսնությունների բաշխվածության մասին (տե՛ս աղ. 4):

Աղ. 4 Հայկական ՄՍՀ-ում ամուսնացածների բաշխվածությունն ըստ տարիների և տարիքային խմբերի <sup>8</sup>:

տարին	ամուսնությունների թիվը	տղամարդիկ (ըստ տարիքային խմբերի)						
		18 տարեկանից փոքր	18-19	20-24	25-29	30-34	35-39	39-ից բարձր
1939	3332	4	93	1012	1473	359	153	238
1959	21775	71	363	7164	8807	2749	605	2016

տարին	ամուսնությունների թիվը	կանայք (ըստ տարիքային խմբերի)						
		18 տարեկանից փոքր	18-19	20-24	25-29	30-34	35-39	39-ից բարձր
1939	3332	1171	752	708	366	133	64	138
1959	21775	944	3111	9687	4486	1609	626	1312

Աղյուսակ 4-ից երևում է, որ հանրապետությունում 1939 թվականին 3332 ամուսնացածներից 1171-ը կամ 38,1%-ը մինչև 18 տարեկան կանայք են, իսկ 1959 թվականին՝ 21775 ամուսնացածներից՝ 944-ը կամ 4,3 %-ը: Այսինքն նշված ժամանակահատվածում դիտվել է վաղ ամուսնությունների թվի կտրուկ նվազում:

1959-1970թթ. Հայաստանում արտադրողական ուժերի բուռն զարգացումը արմատապես փոխեց քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքը: Կարճ ժամանակահատվածում քաղաքային բնակչության թվի սրնթաց աճն իր գործուն ազդեցությունն ունեցավ քաղաքներում ծնունդների աճի վրա: Լենինականի օրինակով նշենք, որ 1926-1936թթ. ծնվածների գումարային թիվը կազմել է 25.7 հազար, 1946-1956 թթ.՝ 33,1 հազար, իսկ 1960-1970թթ.՝ 37,1 հազար: Այսինքն 1960-1970 թթ. ծնունդների թիվը 1.4 անգամ ավելի է 1926-1936թթ. ծնունդների թվից և 1.1 անգամ՝ 1946-1956թթ. ծնունդների թվից: Սակայն նշենք, որ 1960-1970 թթ. ծնելիության գործակիցն իր մեծությամբ զիջել է 1926-1956 թթ. ծնելիության գործակիցին:

Աղյուսակով ներկայացնենք Լենինականի բնակչության ծնելիության շարժընթացը 1960-1970 թթ.: Աղյուսակ 5-ից երևում է, որ ծնունդների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1961 թ-ին՝ 4013, իսկ ամենացածրը՝ 1966-ին՝ 3151( տե՛ս աղ. 5): 1961-1970թթ.-ին ծնելիության գործակիցի մեծության նվազումը պայմանավորված չի եղել ամուսնությունների թվի կրճատմամբ, այլ ամուսնական զույգերի համեմատաբար քիչ երեխաներ ունենալու հանգամանքով: Բացի դրանից՝ նկատելիորեն փոխվել էր նաև կնոջ դերը լենինականցու ընտանիքում: Նա ավելի ակտիվորեն սկսեց ներգրավվել արտադրության մեջ և հասարակական կյանքի այլ ոլորտներում:

Ամփոփելով Լենինականում 1926-1970թթ. ծնելիության շարժընթացի մասին վերևում ասվածը՝ կարելի է նշել նրա հետևյալ առանձնահատկությունները.

1. Ծնունդների թվի աճին զուգընթաց՝ նշված ժամանակահատվածում անընդհատ նվազել է ծնելիության գործակիցը :
2. Վաղ տարիքում ամուսնությունների թիվը, ինչպես ողջ հանրապետության տարածքում, այնպես էլ Լենինականում, նվազել է բավականին նկատելի չափով :
3. Աստիճանաբար փոքրանում է ընտանիքի անդամների միջին մեծությունը՝ 5.7 մարդուց նվազելով մինչև 4.5-ի, դրան զուգահեռ՝ դիտվում է ընտանիքներ թվաքանակի ավելացում: Նկատվում է մեծ ընտանիքների տրոհում և անցում հիմնականում միջին և փոքր մեծության ընտանիքների կազմավորման:

<sup>8</sup> ԻՎ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Նշվ. աշխ., էջ 72-73:*

Աղ. 5 Լենինականի բնակչության ծնելիության և նրա գործակցի շարժմից

Տարիները	Ծնվածների թիվը	Տարբերությունը նախորդ տարվա համեմատությամբ	Բնակչության թիվը (հազար մարդ)	Ծնելիության գործակիցը (պրոմիլե)	Ամուսնությունների թիվը
1960	3116		110.8	28.1	1224
1961	4013	+897	113.2	35.3	1186
1962	3833	-180	116.4	32.9	1211
1963	3540	-293	117.9	29.6	1135
1964	3475	-65	123.3	27.5	1090
1965	3223	-252	126.9	25.2	1455
1966	3151	-72	129.8	23.8	1478
1967	3059	-92	132.9	23.3	1324
1968	3228	+169	135.4	23.6	1390
1969	3259	+31	139.6	22.9	1282
1970	3214	-45	164.9	19.4	1240

Մահացությունը Լենինականում 1926-1970թթ. Մահացությունը բնակչության վերարտադրության գործընթացում երկրորդ կարևոր չափանիշն է: Մահացության գործակիցների բացակայության դեպքում բնակչության բնական աճի հավաստի տվյալներ հնարավոր չէ ստանալ:

Աղ. 6 Լենինականի բնակչության մահացության ցուցանիշները.

Տարեթիվ	Մահացածների թիվը	Տարբերությունը նախորդ տարիների համեմատությամբ	Բնակչության միջին թիվն այդ տարիներին (հազ.)	Մահացածության միջին գործակիցը (պրոմիլե)
1926-30	4492		46.5	19.3
1931-35	5977	+1485	59.1	20.2
1936-40	6285	+308	65.4	19.2
1941-45	5429	-856	70.7	15.3
1946-50	4557	-872	78.4	11.6
1951-55	4871	+314	91.7	10.6
1956-60	4872	+1	106.5	9.1
1961-65	4448	-424	119.5	7.4
1966-70	4702	+254	140.5	6.7

Ինչպես կարելի է եզրահանգել վերոբերյալ տվյալների հիման վրա՝ 1926-1970թթ. Լենինականում գրանցվել է մահացության թվի աննշան աճ, սակայն մահացության միջին գործակիցը նվազել է: Մահացության ամենաբարձր ցուցանիշը դիտվել է 1931-1935թթ., իսկ ամենացածրը՝ 1966-1970թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Լենինականի բնակչության մահացության գործակցի մեծությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում գրեթե միշտ համընկել է միջին հանրապետական համապատասխան ցուցանիշի հետ և միայն 1939-1959թթ.-ի ընթացքում է մի փոքր տարբերվել հանրապետական միջինից՝ կազմելով Լենինականում 11.6 պրոմիլե, միջին հանրապետ-

տական 11,0 պրոմիլեի դիմաց:<sup>9</sup> 1966-1970թթ. Լենինականում մահացությունների թվի աճը կարելի է բացատրել, ի թիվս այլ իրողությունների, նաև տարեցների թվաքանակի աճով: Իսկ քննվող ամբողջ ժամանակահատվածում մահացությունների աճը քաղաքում պայմանավորված է եղել արտաքին և ներքին բնույթի մի քանի հիմնական գործոններով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զոհվեցին նաև հազարավոր այլազանողորակներ: Թուրք օկուպանտների ձեռքով 1920 թ. Ալեքսանդրապոլի գավառում սպանվեցին մոտ 30 հազար տղամարդ, 25 հազար կին ու երեխա, հարկադրական աշխատանքի քշվեց մոտ 15 հազար մարդ, սովից մահացավ 32 հազարը:<sup>10</sup> Մեծաթիվ զոհեր եղան նաև 1926 թ. հոկտեմբերի 26-ի աղետալի երկրաշարժին: Հետագայում զոհվեցին նաև Հայրենական մեծ պատերազմին մասնակցած ութ հազար լենինականցիներից 4500-ը:<sup>11</sup> Մեր կարծիքով, ժողովրդագրական բնականոն զարգացման պայմաններում 1970 թվականին Լենինականը մոտավոր հաշվումներով կունենար մինչև 190 հազար բնակիչ:

*Բնական աճը 1926-70 թթ.* Ինչպես հայտնի է, բնական աճը բնակչության վերարտադրությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից է: 1926-1970թթ. Լենինականի բնակչության բնական աճին վերաբերող ցուցանիշները ներկայացնենք աղյուսակով.

Աղյուսակ 7

Տարեթվեր	Ծնվածների թիվը	մահացածների թիվը	բնական աճը	Բնական աճի միջին գործակից (պրոմիլե)	Բնակչության միջին թիվը (հազար մարդ)
1926-30	11162	4492	6670	28.5	46.2
1931-35	12136	7557	4579	15.9	59.1
1936-40	15542	6285	9257	28.1	65.4
1941-45	9471	5420	4051	11.3	70.7
1946-50	12669	4557	8112	22.9	78.4
1951-55	16692	3948	12744	27.7	91.7
1956-60	17236	4872	12364	23.2	106.5
1961-65	18084	4448	13636	22.7	119.8
1966-70	15911	4702	11209	15.9	140.5

Ինչպես տեսնում ենք՝ նշված ժամանակահատվածում Լենինականի բնակչության բնական աճի գործակիցներն ունեցել են հաստատուն նվազման միտում: Եթե քաղաքի բնակչության բնական աճի շարժընթացը դիտարկենք՝ ելնելով 1926-1930 թթ. և 1966-1970 թթ. տվյալներից, կստանանք հետևյալ պատկերը. 1926-1930 թթ. բնական աճի թիվը կազմել է 6670 մարդ՝ միջին տարեկան ցուցանիշը՝ 1660 մարդ, 1966-1970թթ.՝ 11209 մարդ՝ միջին տարեկան ցուցանիշը՝ 2802 մարդ: Բնական աճի գործակիցը նշված ժամանակահատվածներում կազմել է համապատասխանաբար 28,5 և 15,9 պրոմիլե, այլ կերպ ասած՝ 1926-1970 թթ. բնակչության բնական աճի գործակիցը նվազել է ավելի քան 1,8 անգամ:

Բնակչության թվի փոփոխության գործընթացներում կարևոր չափանիշներից մեկն էլ միգրացիան է, կամ բնակչության մեխանիկական շարժը: Բնակչության ժողովրդագրական պատկերը թերի կլիներ առանց մեխանիկական շարժի ցուցանիշների հաշվառման: Մեխանիկական շարժի թվային տվյալների բացակայության դեպքում

<sup>9</sup> Խ. Ավետիսյան, *նշվ. աշխ.*, էջ 30:

<sup>10</sup> Գ. Ղարիբջյան, *Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917-1920 թթ.*, Եր., 1953, էջ 15:

<sup>11</sup> Լենինական, *Ուղեցույց*, Եր., 1984, էջ 20:



բնակչության աճի ցուցանիշները հավաստի լինել չեն կարող: Բնակչության մեխանիկական շարժը ներկայացնում է եկածների և մեկնածների թվի հարաբերակցությունը:

1900-1970թթ. ընթացքում Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության միգրացիայի ինչպես ուղղվածությունը, այնպես էլ ինտենսիվությունը բազմիցս փոփոխվել են՝ կախված սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակների փոփոխության հետ:

1921 թվականի կեսերին Բաքում ժամանեց առաջին շոգենավը 3000 գաղթականով, որոնք հիմնականում տեղավորվեցին Ալեքսանդրապոլի, Բասարգեչարի (Վարդենիս) և Ղանարուի շրջաններում: 1925 թվականին Հունաստանից, Թուրքիայից, Միջագետքից գաղթած 5018 սփյուռքահայեր բնակություն հաստատեցին Երևանում, Լենինականում և Արագոյանում:<sup>12</sup> 1924թվականին Կոստանդնուպոլսից Լենինական գաղթած 205 ընտանիքներ (862 շունչ), որոնք հիմնականում արհեստավորներ էին:<sup>13</sup> Շիրակի 1926-27թթ. գաղթականության հարցերի իրենց մանրագին քննության մեջ Լ. Վարդանյանը և Հ. Սարգսյանը արձանագրում են, որ 1926 թ. վերջերին Լենինականի յոթ գավառներում բնակություն են հաստատել 13.8 հազ գաղթական հայեր:<sup>14</sup>

Աղ. 8 Բնակչության մեխանիկական աճի ցուցանիշները Լենինականում 1960-1970թթ. (Տվյալները վերցվել են ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալությունից)

Տարեթվեր	Եկածներ	Մեկնածներ	Միգրացիայի տեսակարարար կշիռը (տոկոս)	Բնակչության թիվը
1960	3583	4203	-0.5	110889
1961	3549	3136	0.3	113237
1962	3849	3195	0.5	116464
1963	3784	2719	0.9	117954
1964	3719	2704	0.8	123362
1965	3129	2486	0.5	126915
1966	3341	2485	0.6	129841
1967	3081	2482	0.4	132941
1968	3475	2585	0.6	135442
1969	3883	2587	0.9	139645
1970	3880	2560	0.7	164966

1930-ական թվականներին Լենինականի գավառում իրականացված գյուղատնտեսության տարածքային կազմակերպական փոփոխությունները հանգեցրին այն բանին, որ հարակից գյուղերի բազմաթիվ բնակիչներ բնակություն հաստատեցին Լենինականում, ինչը իր հետևից բերեց գյուղական բնակչության թվաքանակի զգալի նվազում<sup>15</sup> և խթանեց քաղաքի բնակչության մեխանիկական աճին: Հայրենական պատերազմից հետո վերսկսված կանոնավոր ներգաղթը Խորհրդային Հայաստան և, մասնավորապես, Երևան և Լենինական քաղաքներ բերեց մեծաթիվ սփյուռքահայերի: Մկսած 1946 թվականից՝ հայրենադարձների համար Լենինականում սկսեցին կառուցվել լրացուցիչ բնակարաններ և ստեղծվեցին նոր աշխատատեղեր: 1946-1949թթ. Հայաստան տեղափոխված 20646 սփյուռքահայ ընտանիքների (89750 մարդ) մի զգալի մասը բնակություն հաստատեց Լենինականում: Հայրենադարձությունը շարունակվեց

<sup>12</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Եր., 1967, էջ 551:  
<sup>13</sup> Հ. Մե լ ի ք ս ե թ յ ա ն, Հայրենիք - Սպյուռք ասոցիությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 96:  
<sup>14</sup> Լ. Վ ա ռ դ ա ն յ ա ն, Հ. Ս ա ռ գ ս յ ա ն, Շիրակի 1926-1927 թթ. գաղթականության որոշ հարցեր (ըստ Մտ. Լիսիցյանի արխիվային նյութերի), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999, էջ 209:  
<sup>15</sup> Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Լենինականի գավառի սոցիալ-տնտեսական տարածքային կազմակերպումը 1920-1940թթ., ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.2, Գյումրի, 1999, էջ 222:

նաև 1960-1970 թվականներին՝ հիմնականում Եզիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և Իրանից: Շուրջ 1900 մարդ 1962-1967թթ. հաստատվեց Լենինականում:<sup>16</sup>

1926 թվականի միութենական մարդահամարի տվյալներով Լենինականն ուներ 42313 բնակիչ, իսկ 1939 թվականին՝ 67729: Այսինքն, նշված ժամանակահատվածում քաղաքի բնակչությունն ավելացել է ընդամենը 25416 մարդով, ընդ որում, միայն բնական աճը կազմել է 18922 մարդ, որը ավելացածների 74,4%-ն է, իսկ եկածները գերազանցել են մեկնածներին 6494 մարդով: Ինչպես տեսնում ենք, 1926-1939թթ. Լենինականի բնակչության աճի հիմնական աղբյուրը բնական աճն է: 1939-1959թթ. Լենինականի բնակչությունն ավելացավ ևս 40717 մարդով, որից 36575-ը կամ 89,9%-ը նրա բնական աճի, իսկ 4142-ը՝ մեխանիկական աճի հաշվին: 1960-1970 թթ. քաղաքի բնակչությունն ավելացավ ևս 56520 մարդով, որից 27125-ը կամ 47,9%-ը՝ բնական աճի հաշվին, իսկ 29395-ը՝ մեխանիկականի: Այսինքն՝ 1960-1970թթ. բնակչության մեխանիկական աճը գերազանցել է բնական աճի ցուցանիշին:

Այսպիսով, 1926, 1959 և 1970թթ. միութենական մարդահամարների տվյալներով քաղաքի բնակչության աճի շարժընթացը ունի հետևյալ պատկերը. 1926 թ. Լենինականի բնակչության թիվը 42,3 հազար էր, 1959թ.՝ 108,4 հազար և 1970թ.՝ 164,9 հազար: Ծնունդների և մահացությունների թիվը 1926թ. եղել է համապատասխանաբար 2018 և 849, որից հետևում է, որ բնական աճը կազմել է 1169 մարդ, 1959թ.-ին՝ համապատասխանաբար 3570 և 1053, և բնական աճը կազմել է 2517, 1970թ.-ին՝ 3214 և 1034, և բնական աճը կազմել է 2180 մարդ: Բնական աճի գործակիցը եղել է՝ 1926թ.-ին՝ 27,6, 1959թ.-ին՝ 23,2, 1970թ.-ին՝ 13,2 պրոմիլե, այլ խոսքով՝ 1926-1970թթ. ընթացքում բնակչության բնական աճի գործակիցը նվազել է ավելի քան 2-անգամ: Ծնելիության գործակիցի՝ 2,4 անգամ և մահացության գործակիցի՝ 2,8 անգամ նվազման պայմաններում 1926-1970թթ. Լենինականի բնակչությունն աճել է 3,9 անգամ:

#### ДИНАМИКА НАСЕЛЕНИЯ г. АЛЕКСАНДРАПОЛЯ-ЛЕНИНАКАНА С 1900 ПО 1970ГГ.

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Бояджян \_\_\_

С 1900 по 1970гг. в Александрополе-Ленинакане в численности населения замечено тенденции стабильного роста (кроме 1918-1920гг. и 1941-1945гг). Это объясняется демографической политикой государства, социально - экономическими, нетрадиционными и этнокультурными факторами. Для сравнения отметим, что в 1926г. коэффициенты естественного прироста составил 27,6 промиле, то 1959г. 23,2 и 1970г. 13,2 промиле. Иначе говоря, с 1926-1970гг. естественный прирост населения уменьшился более чем на 2 раза.

С 1926-1970гг. численность населения повысился в 3,9 раза, при том коэффициент рождаемости уменьшился в 2,4 раза, смертность в 2,8 раза.

<sup>16</sup> Հ. Մե լի ք ու ե ք յ ա ն, նշվ. աշխ., էջ 265-279:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ  
ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

XVII-XVIII դարերը հայ ժողովրդի պատմության մեջ խոշոր իրադարձությունների ու վերափոխումների, միջնադարից նոր ժամանակներին անցնելու ժամանակաշրջան են և շրջադարձային եղանակով նաև հայ գեղանկարչության համար:

XVII-XVIII դարերի գեղանկարչությունը, նոր իմաստավորում ստանալով, մոտեցավ հաստոցային նկարչության սկզբունքներին, կտրվեց մանրանկարչությունից: Չնայած նրան որ ժանրեր (բնանկար, դիմանկար), ի հայտ են գալիս նոր թեմաներ, իսկ ավանդականներն էլ (մասնավորաբար կրոնական թեմատիկան) նոր մեկնաբանություն են ստանում: Այս շրջանից աշխարհիկ բովանդակությամբ նկարներ համարյա չեն դիմացել ժամանակի փորձությանը: Հիմնականում պահպանվել են այն աշխատանքները, որոնք կապված են այս կամ այն ձևերով հուշարձանի հետ (եկեղեցիներ, վանքեր): Այս է պատճառը, որ պահպանված և մեզ հասած աշխատանքների (հիմնականում որմնանկարներ) գերակշիռ մասն ունի կրոնական բովանդակություն, արված է աստվածաշնչյան թեմաներով: Եվ այս հաղորդումն էլ նպատակ չունի թվարկել XVII-XVIII դարերի գեղանկարչական ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները, այլ՝ ներկայացնել նրանցում կրոնական թեմատիկայի ինքնատիպ մեկնաբանությունները ժամանակի նկարիչների կողմից:

Պատմաքաղաքական պայմանների բերումով XVII-XVIII դարերի հայ մշակույթը զարգացել է ոչ միայն բուն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս՝ հայկական գաղթօջախներում (Իրան, Թուրքիա, Հնդկաստան և այլուր): Ավելին, Նոր Ջուղայի (Իրան) նկարչական արվեստի ծաղկումը կապված է հենց XVII-XVIII դարերի հետ: Նոր Ջուղայի այդ շրջանի նկարչությունից պահպանվել են բավական թվով աշխատանքներ Ամենափրկչի եկեղեցում, Քանգարանում, նաև մասնավոր հավաքածուներում: Այս շրջանում է այստեղ ապրել ու ստեղծագործել տաղանդավոր նկարիչ Մինասը, որը հայտնի է մեզ Մինաս Ջուղայեցի անունով: Ա.Դավրիժեցին, խոսելով Մինասի մասին, թվում է. «Եվ որովհետև խիստ հմուտ էր արվեստի վայելչակերտ, գեղեցկատիպ, չքնադատես հորինվածքին, ջուղայեցի մեծամեծերը նրան տանում էին նախշելու և պատկերազարդելու իրենց ապարանքներն ու տները»<sup>1</sup>: Դավրիժեցու նկարագրությունից պարզ է դառնում, որ Մինասն իր ժամանակակիցների մեջ գերակշիռ դեր է ունեցել: Նկարչի վրձնին են պատկանում Նոր Ջուղայի Ամենափրկչի վանքի մատենադարան-թանգարանում եղած գործերը՝ «Տիրամայրը և մանուկ Հիսուսը», «Տիրամայրը, երեք հովիվներն ու մի կին» փոքրածավալ նկարները: Սակայն, ի տարբերություն Մինասի, որը ստեղծագործել է հիմնականում աշխարհիկ թեմաներով, Նոր Ջուղայում ապրել է նաև մեկ այլ նկարիչ՝ Հովհաննես Մրքուզը, որը բացառապես ստեղծագործել է կրոնական թեմաներով: Խ.Ջուղայեցին Հ.Մրքուզին անվանում է «տիեզերալույս վարդապետ»<sup>2</sup>: Նոր Ջուղայի պատմության հեղինակը վկայում է այն մասին, որ Ամենափրկչի նկարազարդման աշխատանքներին մասնակցել է նաև Հ. Մրքուզը: Նրա որմնանկարները տեղավորված են գմբեթի թմբուկի վրա և ութ լուսամուտների մեջտեղում: Ամենափրկչի բեմի աջ կողմի պատին նկարիչը պատկերել է խաչին պատկած մանուկ Քրիստոսին, իսկ նրա կողքին Մարիամն է: Մայիտակաթույր ամպերի միջից երևացող Տերը օրհնում է նրանց: Նկարիչը զգալի տեղ է հատկացրել նաև իրերին (խաչելության գամեր, գեղարդ, մոմակալ և այլն), որոնցով հետո տանջելու էին Միածնին: Ուշագրավ են նաև Նոր Ջուղայի Աստվածածնի եկեղեցու երկու այլ աշխատանքներ, որոնց հեղինակը, Հ. Տեր-Հովհանյանցի կարծիքով, նույնպես Մրքուզն է: Դրանցից

<sup>1</sup> Խ. արեղայի Ջուղայեցույ Պատմություն Պարսից, Վաղարշապատ, էջ 156, տե՛ս նաև Ա. Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1884, էջ 410:

<sup>2</sup> Հ. Տ եր- Հ ո վ հ ա ն յ ա ն ց, Պատմություն Նոր Ջուղայո, հ 2, 1880, էջ 192:

մեկը պատկերում է Հովհաննես Սկրտչի գլխատումը, իսկ մյուսում Տեղը մանուկ Քրիստոսին հանձնում է Աստվածամորը:

XVII դ. սրբանկարչությունը ծաղկում էր ոչ միայն գաղթօջախներում, այլև բուն Հայաստանում՝ հատկապես Էջմիածնում: Այս դարի սրբանկարիչներից շատ քիչ աշխատանքներ են մեզ հասել: Դրանք հիմնականում փոքրածավալ սրբապատկերներ են («Աստվածամայր», «Քրիստոսը», «Ավետում», «Խաչելություն» և այլն): Ցավոք, այդ գործերի հեղինակների անունները չեն պահպանվել: Բացառություն է կազմում Ստեփանոս Լեհացին, որի անունը կապված է Էջմիածնի տաճարի նկարագարողումների հետ: Էջմիածնի տաճարի նկարագարողումներում Լեհացու մասնակցության մասին հիշատակում է Հ.Շահխաթունյանը. «Յանենեսին ի սոսա քաջապետ փայլեն շնորհք ձեռաց մեծանուն վարպետին Ստեփանոսի Լեհացույ և քաջ նկարչին հոր Յովնաթանու»<sup>3</sup>: Ս. Լեհացուց մեզ հասած շատ քիչ քանակությամբ (ուր-Հ.Ալիևյան)<sup>4</sup> աշխատանքներից անգամ զգացվում է, որ նա եղել է ժամանակի զարգացած ու տաղանդավոր նկարիչներից մեկը: Լեհացուն են վերագրվում Հովհաննես Սկրտչի՝ Խորանի մեջ տեղավորված առաքյալների դիմանկարներն ու «Թովմայի թերահավատությունը» պատկերները (Գ.Հովսեփյան)<sup>5</sup>: Աշխատանքները պահպանվել են մինչև մեր օրերը: Նկարների մտահղացումներն ու կոմպոզիցիաները կրում են իտալական ու Վերածննդի նկարիչների ազդեցությունը. միայն թե Լեհացու առաքյալները հայկականացված են, հատուկ ուշադրություն է դարձված նրանց դիմանկարների կառուցմանը: Նկարչին հաջողվել է ստեղծել մարդկային տարբեր խառնվածքներ: Նրանք բոլորն էլ մեծահասակ են, պատկառելի տեսքով: Առաքյալները պատկերված են իրենց տարբերակիչ նշանակներով (գիրք, թուր, գավազան, բանալիներ), նման չեն վաղ միջնադարի անմարմին ու անարյուն սրբերին: Սրանք կոնկրետ անհատականություններ են՝ օժտված մարդկային հատկանիշներով:

Հատուկ ուշադրության է արժանի «Թովմայի թերահավատությունը» ստեղծագործությունը: Քրիստոսին պատկերելով լուսավոր սպիտակներով՝ նրան հակադրել է մուգ տոներով լուծված Թովմայի ֆիգուրը: Կարմիր թավշյա թիկնոցը ավելի հնչեղություն է հաղորդում Քրիստոսի կերպարին: Լեհացին մեծ ուշադրություն է դարձրել մաև նրանց դիմանկարներին: Քրիստոսը գեղեցիկ է, ազնիվ դիմագծերով, մինչդեռ Թովման խիստ հայկական դիմագծեր ունի՝ թերահավատ և հայտնության փաստից վախվորած հայացքով:

Սակայն XVII-XVIII դարերում բուն Հայաստանում սրբանկարչությունը հիմնականում կապված է Հովնաթանյան նկարիչների հետ: Նրանցից ավագին՝ Նաղաշ Հովնաթանին, վիճակված էր կարևոր դեր խաղալ ոչ միայն կրոնական, այլև ընդհանրապես հայ գեղանկարչության զարգացման գործում: Նրա որդու՝ Հակոբի բանաստեղծությունից երևում է, որ Ն.Հովնաթանը «գիտուն բանի էր», «յոյժ պիտանի», «շնորհալից վարպետ իմաստուն», և Հայաստանում բազում «սրբոց տունք է զարդարել» այդ «շնորհալի ձեռն նկարող սրբոց»: Ե. Մարտիկյանի կարծիքով, Նաղաշի ամենաբեղմնավոր ստեղծագործական շրջանը Էջմիածնում աշխատած տարիներն են՝ 1715-1720 թթ.<sup>6</sup>

Ն. Հովնաթանին է վերագրվում Էջմիածնի տաճարի Ավագ սեղանի ճակատային մասի ձևավորումը, որն ունի պարզ կոմպոզիցիա. կենտրոնում, ինչպես միշտ, Աստվածամայրն է՝ շրջապատված առաքյալներով: Նկարիչը ստեղծել է տասներկու տարբեր բնավորություններ, որոնք թեև հողածիններ են, բայց միաժամանակ տարբերվում են սովորական մահկանացուներից՝ սրբին բնորոշ առինքնող բարեսպաշտությամբ ու կեցվածքով:

<sup>3</sup> Հ. Շահխաթունյան, *Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ զուստացն Արարատայ, հ. Ա, Վաղարշապատ, 1842, էջ 45:*


<sup>4</sup> Հ. Ալիևյան, *Ստեփանոս վարդապետ Լեհացի, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1912, էջ 65:*

<sup>5</sup> Գ. Հովսեփյան, *Անթիլիաս, 1851, Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII-XVIII դդ., Եր., 1974, էջ 142:*

<sup>6</sup> Ե. Մարտիկյան, *Հայ կերպարվեստի պատմություն, հ. Ա, Եր., 1971, էջ 62:*

Նաղաշը Աստվածամորն ու առաքյալներին պատկերել է բնանկարի ֆոնի վրա, որը նկարին հաղորդել է նուրբ քնարականություն: Հետաքրքիր է նկարի կոմպոզիցիոն մտահղացումը: Նկարիչը առաքյալներին այնպես է դասավորել, որ Աստվածամայրը ընկալվում է որպես կենտրոնական կերպար: Նկարչի սահուն գունային անցումները, ուժեղ կարմրի և կապույտի համադրումը վարդագույնի և մանուշակագույնի հետ, վկայում են նրա պրոֆեսիոնալ գունային մտածելակերպի մասին: Էջմիածնի Աստվածամոր գեղարվեստական կերպարի ստեղծման մեջ նկարչի համար ստեղծագործական սկզբնաղբյուր է հանդիսացել իտալական Վերածննդի Աստվածամայրը: Բոլորովին այլ է նրա՝ Թեհրանում պահպանվող Աստվածամայրը, որը Մ. Ղազարյանի կարծիքով, զուտ տեղական հայ նկարչի ստեղծագործական ինքնուրույնությունն արտահայտող կանացի գեղարվեստական կերպար է<sup>7</sup>:

Նաղաշի գործը շարունակողի և հայ կրոնական գեղանկարչությունը մի նոր աստիճանի բարձրացնողի դերը վիճակված էր Հակոբ ու Հովնաթան Հովնաթանյաններին: Հակոբին վերագրվող բազմաթիվ սրբանկարներից («Մանդուխտ կույսը», «Թաղևուս Առաքյալը», «Ղազարոսի հարությունը») նախապատվությունը տրվում է «Մարիամի յոթ վերքը» կտավին:



Նկ. 1 Հակոբ Հովնաթան, «Տիրամոր յոթ վերքը»

Այսպիսի մեկնաբանությունը, ամենայն հավանականությամբ, նպատակ ունի ավելի հասկանալի, մատչելի դարձնելու որդու տանջանքների պատճառած անապի վշտի, կսկծի չափը: Նկարիչը նշանակները պատկերել է այնպես նրբորեն, որ դրանք ամենևին չեն խանգարում նկարի առանցքը հանդիսացող Մարիամի և Քրիստոսի կերպարներին, այլև ավելի են ամբողջացնում նկարչի մտահղացումը:

Վերածնության նկարիչների օրինակով (Միքելանջելո, «Պիետա»)՝ Հակոբը նույնպես Մարիամին պատկերել է շատ ավելի երիտասարդ՝ բարետես ու նուրբ, գեղեցիկ ու քնքուշ դիմագծերով: Նա նստած է՝ որդուն առած իր ծնկներին և ձախ ձեռքով պահում է խաչից իջած Քրիստոսի անկենդան մարմինը: Նրա ծալքավոր զգեստը՝ շնորհիվ ձախ ոտքի թեթևակի բարձր վիճակի, ստեղծում է մահճի տպա-

տրվում է «Մարիամի յոթ վերքը» կտավին: Այս սյուժետային պատկերը, որ եվրոպական արվեստում ընդունված է անվանել «ողբ», Հակոբի կրոնական թեմայով արված աշխատանքների գլուխգործոցն է:

«Ողբը» Վերածնության դարաշրջանի նկարիչների ամենապիրված ու ամենադրամատիկական թեմաներից է: Շատ արվեստագետներ (Միքելանջելո, Ռաֆայել, Տիցիան, Կարավաջո) իրենց ստեղծագործություններում անդրադարձել են այս թեմային, որը հետագայում հայ նկարիչների մոտ ստացել է բոլորովին անսովոր, ոչ ավանդական մեկնաբանություն: Կոմպոզիցիայի նմանատիպ լուծման մեքս հանդիպում ենք միայն հայ կերպարվեստում:

Հակոբը Տիրամորը պատկերել է նստած՝ Քրիստոսի մարմինը ծնկներին, կրծքի մեջ՝ յոթ սրեր: Նկարի վերևում՝ շրջանագծերի մեջ, ամփոփված են Քրիստոսի կրած չարչարանքներից յոթ դրվագներ, որոնք պարզաբանում են մտցնում սրերի նշանակության մեջ:

Այսպիսի մեկնաբանությունը, ամենայն

<sup>7</sup> Մ. Ղ ա զ ա ռ յ ա ն, Հայ կերպարվեստը XVII – XVIII դդ., Եր., 1974, էջ 165:

վորություն, որի վրա հանգչում է որդու մարմինը: Վերջինիս գլուխը հետ է ընկած, իսկ ձեռքերն հանգչում են մոր զգեստի ծայքերի վրա: Հակոբը ստեղծել է արվեստի իսկական գործ: Նա չի որոնել նատուրալիստական էֆեկտներ, այլ ձգտել է տպավորություն ստեղծել ներքին ներդաշնակության և գունային կոլորիտի միջոցով: «Ողորդ» մայրական համր վշտի արտահայտման լավագույն դրսևորումներից է, և նույնիսկ կարելի է գուգահեռներ տանել XII դ. բյուզանդական «Վլադիմիրյան Տիրամայրը» սրբանկարի հետ: Կարելի է միայն ենթադրել, թե ինչպիսի անհուն կսկիծ է համակել Աստվածամորը, այնքան հուսահատական աղերս կա նրա հայացքում, այնքան քնքշությամբ է գրկել նա որդու անշնչացած մարմինը: Այս գործը իրավամբ որդեկորույս մոր հուսահատ սրտի անսփոփ սգերգ է: Հայկական կրոնական գեղանկարչությունը բոլորովին նոր որակ է ստանում հաջորդ Հովնաթանյանի՝ Հովնաթանի ստեղծագործությունների մեջ: Վերջինս, որպես կանոն, իր կերպարներին օժտում է խիստ առանձնահատուկ ազգային ինքնատիպությամբ, հայկական բնորոշ դիմագծերով՝ ստեղծելով պատկերների տիպիկ արևելյան կոլորիտ: Հատուկ ուշադրության են արժանի Հովնաթանի աստվածամայրերը. «Ավետումը» այդ թեմայով արված նրա լավագույն գործերից է: Նա ավետման թեման բաժանել է երկու մասի, որ հազվադեպ երևույթ է թե՛ հայ և թե՛ եվրոպական կերպարվեստում. նա հրեշտակին ու Մարիամին պատկերել է առանձին կտավների վրա: Նկարչի ավետաբեր հրեշտակն էլ հեռու է կերպարվեստում ընդունված իր ավանդական պատկերացումից: Հովնաթանի հրեշտակն ավելի աշխույժ է, տիրական: Նա նոր է միայն իջել երկրի վրա և պատրաստվում է ներկայանալ Մարիամին՝ ծաղկաշուշանը ձեռքին: Նա հայտնվել է Կույսին՝ աստվածային խորհուրդն ավետելու: Չարմանալի վարպետությամբ են նկարված հրեշտակի ոտքերն ու ձեռքերը, զգեստը, ինչը վկայում է Հովնաթան նկարչի մասնագիտական գրագիտության և ստեղծագործական մեծ փորձի և հմտության մասին: Այս նկարի անմիջական շարունակությունը հանդիսացող «Ավետընկալ Մարիամը» ստացել է առանձին կոմպոզիցիոն լուծում, բայց դա չի խանգարել, որ այն ծավալվի որպես նախորդի շարունակություն: Այս գործի



Նկ.2 Հովն. Հովնաթանյան, «Աստվածամոր փառքը»

Աստվածամայրը շրջապատված է այլաբանական իմաստավորում ունեցող առարկաներով, որոնցով նկարիչն ամենայն հավանականությամբ նպատակ է ունեցել լցնելու կտավի դատարկ տարածությունը: Հովնաթանյանը դրսևորում է

ստեղծման մեջ զգալի է իտալացի անհայտ նկարչի՝ Աստվածամոր փորագիր նկարի ազդեցությունը: Սակայն ավետման պահի մեկնաբանումը, նկարի քնարական տրամադրությունը, Մարիամի կերպարի գեղարվեստական ուրույն իմաստավորումը և առանձին այլ մանրամասները հայ վարպետի սեփական բարձր կարողությունների վկայություններն են: Մարիամի ձեռքերի ու դեմքի նրբագեղ վերարտադրությունը, նրան համակած ներքին անհանգստության գեղարվեստական բարձրարժեք մարմնավորումը այս աշխատանքը դարձնում է իր ժամանակի նշանավոր ստեղծագործություններից մեկը: Վեհություն ու ներքին բանաստեղծականություն է իշխում «Աստվածամոր փառքը» կտավում: Տիրամայրը պատկերված է հատուկ ռճավորմամբ՝ բոլորածև սպիտակ ամպերով արված շրջանակի մեջ, կապույտ թիկնոցով, վարդագույն զգեստով, լուսնեղջյուրի վրա կանգնած, ձեռքերը սեղմած կրծքին:

Աստվածամոր իր ուրույն ցկարելաձևը, որի շնորհիվ նրա Աստվածամայրն անչափ հողեղեն է՝ միաժամանակ օժտված աստվածային առաքինություններով: «Աստվածամոր փառքը» կտավն իր գեղարվեստական կատարելությամբ և կերպարի ինքնատիպ իմաստավորումով ոչ միայն Հովնաթան գեղանկարչի ստեղծագործական բարձր կարողությունների արտահայտությունն է, այլև XVIII դ. հայ հոգևոր գեղանկարչության գլուխգործոցներից մեկը:

Նշանակալից են նաև Հովնաթան Հովնաթանյանի բազմաֆիգուր կոմպոզիցիաները, որոնցում նա մեծ վարպետությամբ է ստեղծում գործողության ծավալման կենտրոն, դեպի ուր ձգվում է մնացած ամեն ինչ. հիմնական շեշտը դրվում է կենտրոնական ֆիգուրի վրա, որին հետո ցկարիչը շրջապատում է նաև այլ պերսոնաժներով ու բնանկարով: Այդպիսի տպավորություն է թողնում «Ոտնվա՛ն»: Ընթրիքից հետո կանխազգալով, որ աշակերտներից մեկը մատնելու է իրեն, և սա իր վերջին հանդիպումն է նրանց հետ, Քրիստոսը աշակերտներին համեստության ու խոնարհության օրինակ տալու նպատակով լվանում է նրանց ոտքերը: Նկարը կոմպոզիցիոն տեսակետից ստացել է շատ պարզ լուծում: Կարևորը ցկարչի համար աշակերտն է ու նրա ոտքերը լվացող Քրիստոսը, որոնց վրա և կենտրոնացված է ողջ ուշադրությունը: Նկարիչը Քրիստոսին ու Պետրոսին անջատել է ընդհանուր խմբից, առաջ բերել և պատկերել խոշոր չափերի մեջ՝ նպատակ հետապնդելով իրողությանը ավելի մեծ հանդիսավորություն հաղորդել:



Նկ. 3 «Խորհրդավոր ընթրիք»



Նկ. 4 «Ոտնվա՛ն»

Հովնաթանը անդրադարձել է նաև Աստվածաշնչի ամենատարածված և ամենադրամատիկ դրվագներից մեկին՝ Խորհրդավոր ընթրիքին: Այս թեման ստեղծագործական ոգեշնչման աղբյուր է հանդիսացել եվրոպական շատ նկարիչների համար՝ Ջոտտո, Լեոնարդո դա Վինչի, Գիրլանդայո: Հովնաթանը ավանդական այդ թեման լուծել է յուրովի: Ի տարբերություն եվրոպական նկարիչների՝ Հ. Հովնաթանյանը ընտրել է շրջանաձև կոմպոզիցիա, սեղանը դրել է առջևից դեպի խորքը, իսկ աշակերտներին նստեցրել է սեղանի շուրջը: Ավանդական կանոնից շեղում է նաև Հուդային աշակերտների մեջ պատկերելը: Նկարիչը ընտրում է կտավի այնպիսի կառուցում, որտեղ սեղանի շուրջը հավաքված տասներկու աշակերտների կոորդինատները դասավորության շնորհիվ մի կողմից ուշադրության կենտրոն է դառնում:

շրջանագծի վերին մասում բազմած Քրիստոսը, մյուս կողմից էլ՝ դիտողի ուշադրությունը բեկվում է Տիրոջ ուղիղ դիմացը՝ սեղանի ստվերոտ մասում պատկերված Հուդայի վրա: Կերպարները դիմամիկ են, լի շարժումով, որը զուսպ է, ավելի շատ՝ ներքին: Տեսարանում չկան անբնական վիճակներ, կերպարների աֆեկտիվ կեցվածք, և նկարիչը դրան հասել է բացառիկ ժխտ միջոցով՝ ընդամենը կոնյուրիցիայի հնարամիտ կառուցումով: Հեղինակին հաջողվել է բացառիկ անմիջականությամբ ներկայացնել մարդկային զգացմունքների խորությունն ու մարդու հոգեկան աշխարհի հարստությունը, նրա բազմադեմ էությունը: Ըստ էության նույնատիպ նպատակ է հետապնդում նաև նկարչի «Քրիստոսի հայտնվելը աշակերտներին» դրամատիկ պատկերը: Քրիստոսը հայտնվել է աշակերտներին իր հարությունից հետո: Նկարիչը ընտրել է այն պահը, երբ աշակերտները լեռան վրա են, իսկ Քրիստոսը երկնքից իջնում է ներքև: Այստեղ ևս Հովնաթանը օգտագործել է եվրոպական վերածնության ավանդական մեթոդը՝ նկարի երկհարկ կոնյուրիցիան (Տիցիան, Էլ Գրեկո, Տինտորետտո), բայց պատկերը բաժանելով երկու մասի՝ երկնքի և երկրի, այնուամենայնիվ պահպանել է նկարի կոնյուրիցիոն ամբողջականությունը: Պատկերի վերևում՝ սպիտակ ամպերի մեջ, բազկատարած թևածում է Քրիստոսը: Ներքևում աշակերտներն են՝ ինչ-որ անակնկալի, հրաշքի սպասման մեջ: Նրանցից ոմանք երկյուղածությամբ նայում են դեպի երկինք, ոմանք աղոթում են, ոմանց դեմքերին տանջող կասկած կա: Պահի խորհրդավորությունը վարակել է բոլորին: Հովնաթանին այստեղ ևս հաջողվել է ստեղծել մարդկային բարդ և, միևնույն ժամանակ, միմյանցից շատ տարբեր բնավորություններ: Տեղավորելով հրեշտակներին Քրիստոսի երկու կողմերում՝ նկարիչը ավելի է ընդգծել Քրիստոսի հայտնության հանդիսավորությունը: Տեղին է օգտագործված մեկ այլ հնարք ևս. գործընկերները համար Հիսուսի ընթացքի տպավորությունը, նա մեծ վարպետությամբ է պատկերել օդում փողփողացող նրա թիկնոցը: Ի դեպ, Հովնաթանի գործերում զգեստի օգտագործումը միշտ նպատակային է. այն հիմնականում ուժեղացնում է պատկերի գեղարվեստական արտահայտչականությունը:

Հովնաթանի վրձնին են պատկանում նաև «Մոզերի երկրպագությունը», «Քրիստոսի մկրտությունը», «Մուրբ հոգու գալուստը» աշխատանքները, որոնք կատարման վարպետությամբ, գաղափարական բովանդակությամբ նույնքան արժեքավոր են:

Տեղի տղության պատճառով անդրադարձ չեղավ XVII-XVIIIդդ. հայտնի (Ասովաձատուր Մալթանյան, Տիրացու Հովհաննես) և անհայտ այլ նկարիչների կրոնական թեմայով աշխատանքներին, որոնց մի մասը բարձրարժեք գործեր են և իրավամբ կարող են համարել հայ հոգևոր գեղանկարչության պատկերասրահը:

## ИНТЕРПРЕТАЦИИ БИБЛИИ В РАБОТАХ АРМЯНСКИХ ХУДОЖНИКОВ XVII-XVIII ВВ.

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *Л. Атанесян* \_\_\_\_\_

Оторвавшись от миниатюры, живопись данных веков не только пополнилась новым содержанием, но и обогатилась интересной тематикой и новой интерпретацией традиционных тем.

В историко-политических условиях этого периода армянская живопись, как и вся армянская культура, развивается не только в Армении, но и далеко за ее пределами (Иран, Турция, Индия и т. д.).

Тем не менее армянская духовная живопись XVII-XVIII вв. проявила такие тематические, стилистические и композиционные обобщения, которые однозначно отличались от соответствующих произведений европейского Возрождения.



## Մանուշակ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

### ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի դպրոցն ու դաստիարակությունը հազարամյակների պատմություն ունեն՝ հարուստ բազմաբնույթ կրթօջախների առկայությամբ և բազմաթիվ իմաստասեր մանկավարժների գործունեությամբ: Հայ մանկավարժության պատմության մեջ ուրույն լույսով են փայլում միջնադարյան համալսարանները, որոնք 9-15-րդ դարերում Հայաստանում կրթական գործի բուռն խթանման արդյունք եղան: Ամբողջ միջնադարում՝ սկսած 5-րդ դարից, Հայաստանում գործել են բարձր տիպի դպրոցներ, որոնք մյուսներից տարբերվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման բարձր մակարդակով: 9-րդ դարավերջին՝ Բագրատունյաց թագավորության հաստատումից հետո, ստեղծվում են բարենպաստ պայմաններ դպրոցական ցանցի ընդլայնման, կրթական գործի զարգացման համար: Ջգալի փոփոխության է ենթարկվում կրթության բովանդակությունը. ներքին գիտությունների հետ մեկտեղ մեծ տեղ է հատկացվում նաև արտաքին գիտություններին՝ հումառևմենտական անտիկ դասական գրականությանը, փիլիսոփայությանը, տրամաբանությանը, քերականությանը, հասարակագիտական տարրեր առարկաներին, բնագիտությանը, բժշկագիտությանը, մաթեմատիկային, տոմարագիտությանը և այլն: Այս նպատակով սկսում են ծնունդ առնել տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ ճեմարաններ, վարդապետարաններ, իմաստասիրական դպրոցներ, համալսարաններ: Այդ բարձրագույն ուսումնական հաստատություններից են Տաթևի դպրոցը (9-րդ դար), Ռշտունյաց Նարեկա վանքի դպրոցը (10-րդ դար), Սանահինի դպրոցը կամ ճեմարանը (11-րդ դար), Հաղպատի, Բջնիի դպրոցները, Անիի իմաստասիրական դպրոցը (10-11-րդ դդ.): Մեծ համբավ էին վայելում Կիլիկիայի Սիս քաղաքի ճեմարանը, Սև լեռան դպրոց-վարդապետարանը, Գլաձորի (13-րդ դար), Երզնկայի, Կապուսի (15-րդ դար) և բազմաթիվ այլ դպրատներ, ուսումնարաններ, վարդապետարաններ, ճեմարաններ:

Վերոհիշյալ բարձր տիպի ուսումնական հաստատություններից Անիինը, Գլաձորինը, Սիսինը, Տաթևինը, Կապուսինը համարվել են կատարյալ համալսարաններ, որոնք, բնականաբար, ունեին իրենց ներքին սահմանադրությունը, ավարտաճառերն իրենց պաշտպանությամբ, ուսումնական աստիճանավորումը, առանձին ֆակուլտետները, քաղաքական մեծ կշիռը հասարակական կյանքում և այլն:

Միջնադարյան հայ համալսարաններից յուրաքանչյուրի տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ հավուր պատշաճի է զնահատվել մանկավարժության պատմաբանների կողմից: Նպատակ չունենալով անդրադառնալ դրանց պատմությանը, կրթության բովանդակությանը, հայ մշակույթի ու գիտության զարգացման գործում այդ դպրոցների ունեցած անզնահատելի դերին՝ կվորձենք ներկայացնել այդ համալսարանների ուսումնագիտական աստիճանավորման հիմնահարցը:

Ուսումնագիտական կաճառը համալսարան հռչակվելու համար, ինչպես գիտենք, պետք է բավարարի որոշակի պահանջների, որոնցից մեկն է ուսումնագիտական աստիճանավորում ունենալը: Անկասկած, միջնադարյան հայկական համալսարանները ունեցել են ուսումնագիտական աստիճանավորման որոշակի կարգ: Իսկ թե դա իրենից ինչ է ներկայացրել միջնադարյան համալսարաններում, կներկայացնենք ստորև: Այստեղ հարկ է նշել, որ չնայած ուսումնագիտական աստիճանավորման կարգը տարբեր համալսարաններում ունեցել է իր յուրահատկությունները, սակայն ընդհանուր առմամբ և ըստ էության գրեթե նույնական է եղել:

Երկար տարիների ուսումնառությունը համալսարանում (6-8 տարի, չհաշված քահանայական կրթության 3 տարին, որն անհրաժեշտ էր համալսարան ընդունվելու համար), բնականաբար, պետք է հավաստվեր ինչ-որ պաշտոնական հաստատումով: Մեր դպրոցյան մեջ նման դրության պաշտոնական ձևակերպումը «վարդապետական հրամանի» շնորհումն էր թեկնածուին, որով հավաստվում էր նրա բարձրագույն կրթությունը: «Վարդապետական աստիճանը» («վարդապետական հրաման», «վարդապե-

տական գավազան», «րաբունական գավազան») բարձրագույն կրթության առհավատչյան էր՝ պաշտոնատար անձանց համապատասխան վկայությամբ և ամբողջապես տարբերվում էր եկեղեցական նվիրապետությունից:

Միջնադարյան հայկական համալսարաններում «վարդապետական աստիճան» շնորհելու համար սահմանված է եղել որոշակի կարգ, որն արտահայտվել է հետևյալ պահանջներով.

1. Պարտադիր պայման է եղել քննությունների հանձնումը, որն հավանաբար տեղի է ունեցել դասախոսական առանձնացված հանձնաժողովի առաջ:
2. Նշանավոր և հանրաճանաչ ուսուցչապետերի առանձին երկերի սերտումն ու անգիր արտասանումը:
3. Ավարտաճառերի ընթերցումը կամ «ատենախոսության» պաշտպանությունը:

Իսկ ի՞նչ էին իրենցից ներկայացնում միջնադարյան համալսարանների ուսանողների ատենախոսությունները: Դրանք 8-10 էջանոց գրավոր ելույթներ էին «աստվածահավաք ատենանի» կամ «ստաղիոնի» առաջ՝ ուսուցչապետների, դասախոսների, ուսանողության, եկեղեցական բարձր դասի, աշխարհիկ ընտրանու ներկայությամբ: Այդ ելույթները նույնպես ստուգման բնույթ են կրել և վկայել են այն մասին, որ ուսանողներն արդեն ավարտել են բոլոր դասընթացները, հանձնել քննությունները, սերտել հանրաճանաչ նախկին ուսուցչապետերից մեկի մեկնաբանությունը, որով համոզել են ուսումնական խորհրդի անդամներին, որ իրենք բանասերներ են դարձել և կարող են հմտորեն վերարտադրել նշանավոր մեկնիչների գործերը՝ մեկնաբանական արվեստի բոլոր նրբություններով: Այն ծիսակատարության ժամանակ, երբ համալսարանականներին պետք է շնորհվեր «վարդապետական աստիճանի» հրամանը, իբրև վերջին արարողություն, «վարդապետական աստիճան» հայցողները կարողում էին իրենց ավարտաճառերը, որոնցում նախ արտահայտում էին իրենց երախտագիտությունը ուսուցչապետերին և իրենց ուսուցիչներին այն վաստակի համար, որ նրանք ունեցել են իրենց մտավոր և հոգեկան զարգացման գործում և սպա իբրև հանձնարարություն տրված տեսական բնույթի «առաջավոր» պրոբլեմների շուրջ ծավալում էին իրենց հայացքներն ու խորհրդածությունները՝ համապատասխան փաստարկներով և հիմնավորումներով:

Ատենախոսությունները արտաքննապես նման են եղել քարոզների, սակայն, ըստ էության, տարբերվել են դրանցից իրենց ուսումնագիտական բնույթով, ճոխ շարադրանքով: Դրանք կազմված են եղել հիմնականում 3 մասից: Առաջին մասում դավանաբանական բնույթի ընդհանուր դատողություններ են արվում, երկրորդ մասում կոնկրետացվում են առաջադիր խնդիրը, հարցադրումների լրջությունն ու կարևորությունը: Ատենախոսության ամենակարևոր և հիմնական մասը երրորդն էր, որում հայցողը մեկնաբանում և տեսականորեն հիմնավորում էր թեմատիկ հարցադրումները, որոնք, հավանաբար, քննող հանձնաժողովն էր առաջադրում ատենախոսին:

Ատենախոսությունները ոչ թե հանպատրաստի, այլ նախապատրաստված ելույթներ էին. որոշակի ժամանակ է տրամադրվել շրջանավարտներին ատենախոսությունը գրելու համար: Շրջանավարտը իր ատենախոսությունը պատրաստելիս ուսումնասիրել է մեկնիչների երկերը, տարբեր աշխատություններից համապատասխան քաղվածքներ բերելով՝ հիմնավորել է առաջադիր դրույթներն ու բնաբանները: Փաստորեն ատենախոսությունները գիտավերլուծական բնույթի լուրջ ուսումնասիրություններ են եղել:

Գլածորի համալսարանը աստիճաններ շնորհելու գործում ունեցել է յուրահատկություն, որն է՝ իր կողմից մշակված «պսակադրության հանդեսը»: «Շրջանավարտները հանդիսավոր պայմաններում կարդացել են ատենախոսությունները, որից հետո դպրապետ Ե.Նչեցին «պսակադրել» է նրանց»:<sup>1</sup> Պսակադրության արարողությունները կատարվել են եկեղեցում, իսկ թե որ եկեղեցում, հիշատակություններ չկան: «Մակայն այդ եկեղեցին բնականաբար երկրորդական կամ անշուք եկեղեցի չէր կարող լինել, հավանաբար դա Սյունյաց աթոռանիստ մայր եկեղեցին՝ Նորավանքը պիտի լիներ,

<sup>1</sup> Լ. Խ ա չ ե թ յ ա ն, *Գլածորի համալսարանը*, Եր., 1973, էջ 182:

որը կհամապատասխաներ այն կշիռին, որ վերագրվել է ժամանակին վարդապետական աստիճանին»:<sup>2</sup>

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ միջնադարի եվրոպական համալսարաններում էլ էին հանդիսավորությամբ պսակադրում ուսումնականներին, սակայն այն տարբերությամբ, որ պսակադրվում էին Եվրոպայի այն ուսումնականները, որոնք ավարտել էին «Յոթն ազատ արվեստներից» գոնե եռյակի դասընթացները, և նրանց իրավունք էր տրվում իրենց շնորհված աստիճանով ուսուցանելու այդ առարկաները (քերականություն, ճարտասանություն և տրամաբանություն կամ դիալեկտիկա): Նրանք կոչվում էին «պսակավոր արվեստից»: Եվրոպական համալսարաններում նույնպես շրջանավարտների հանդիսավոր պսակադրումը եղել է ոչ թե ուսումնառության վայրում, այլ եպիսկոպոսարանում, եկեղեցական ուսուցչապետերի, բարձրագույն ուսուցիչների և ուսանողության մասնակցությամբ: Հետևաբար, պսակադրման ծիսակատարության երևույթը ընդհանրական բնույթ է ունեցել ժամանակի ուսումնագիտական կյանքում և չի եղել գուտ հայկական երևույթ:

## УЧЕБНО-НАУЧНАЯ ГРАДАЦИЯ В СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ УНИВЕРСИТЕТАХ.

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *М. Карапетян* \_\_\_

В средние века армянский народ имел множество школ высшего типа, некоторые из которых (в Ани, Гладзоре, Сисе, Татеве, Капосе) считались совершенными университетами, и, которые, естественно, имели определённый порядок учебно-научной градации. Порядок присвоения степени, в сущности, был один и тот же во всех средневековых армянских университетах (и не только в армянских, но и в европейских). Выпускникам университетов давали степень «доктора». Чтобы получить степень доктора обязательным условием было сдать экзамены комиссии лекторов, выучить и продемонстрировать сочинения выдающихся профессоров и, наконец, прочитать выпускные речи или защитить «диссертацию».

Также отметим, что диссертация в средневековых армянских университетах была серьёзным научно - аналитическим исследованием, состоящим из 3 частей.

<sup>2</sup> *Լ. Խ ա չ ե թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 182:*